Ճալեթուն Դայ Աղվանից աթոռի հիմնավորմանը պատմագիտության մեջ տրվել է տարբեր որակումներ: Մասնավորապես, ուսումնասիրողներից Բ. Ուլուբաբյանը չի արդարացնում քննարկվող ժամանակահատվածում Դայ Աղվանից հոգևոր առաջնորդների ճալեթուն հաստատվելու հանգամանքը. «...հայրենի հողը, թողել, փախել են Կովկասյան լեռնաշղթայի ծերպերը...», իսկ հետո էլ ավելացրել, թե «այս ավելի քան մեկ դարը բուն երկրում եկեղեցին ապրում էր այնպես, իբր ոչ մի կաթողիկոսություն ու կաթողիկոս էլ գոյություն չունի»¹:

Մ. Բարխուտարյանը ճալեթուն հաստատված կաթողիկոսների հոգևոր գործունեության մասին ընդհանրապես տեղեկություն չի հաղորդում, բացառությամբ նրանց տապանագրերի արձանագրությունների և ս. Աստվածածին եկեղեցու կառուցման մասին պահպանված արձանագրության մեջբերման: Գոգևորական պատմիչը հավանաբար ևս բացասական դիրքորոշում ուներ կաթողիկոսական աթոռի վերոհիշյալ տեղափոխության առնչությամբ. «չգիտեմք թե սա ինչ դիպուածով հայրապետական աթոռը Գանձասարից փոխադրում է ճալեթ գիւղի կողմն...»²: Իսկ այնուհետև ուղղակիորեն թվարկում է 1406-1442 թթ. գահակալած Դայ Աղվանից կաթողիկոսների անունները հաջորդաբար³:

Մ. Բարխուտարյանցի կարծիքով ճալեթի վանքը իր գոյության սկզբից, այսինքն տեր Կարապետի այստեղ հաստատվելուց սկսած մինչև 1510 թվականը եղել է Դայ Աղվանից կաթողիկոսների նստավայրը: Դիշյալ տեսակետը հաստատում է նաև Դ. Կարապետյանը⁴, որպես ապացույց նշելով Եղունդի գյուղում ընդօրինակված մի ավետարանում տեղ գտած հետևյալ արտահայտությունը. «յառաջնորդութեան տեառն Մատթոսի Աղուանից կաթողիկոսի... ի մենաստանիս ճալեթոյ»⁵: Սույն տեսակետի հիմնավորման հաջորդ ապացույցը հեղինակը համարում է ճալեթի ս. Աստվածածին եկեղեցու բակում թաղված երեք կաթողիկոսների (Կարապետի, Թովմայի, Առաքելի) տապանաքարերը: Ավելաց-

Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 249: Մ. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիճագրերը, Երևան, 1997, էջ 89:

¹ Նույն տեղում, էջ 203:

² Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 210:

³ Նույն տեղում, էջ 212:

⁴ Դ. Վ. Կարապետյան, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1982, հ. 2, էջ 158:

⁵ Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա., էջ 241:

մենք նաև, որ ս. Կարապետյանի ուսումնասիրություններում այս երեքի հետ միասին նշված է նաև Հայ Աղվանից Արիստակես կաթողիկոսի (հշվ. 1511-1516 թթ.) խաչաքանդակներով տապանաքարը, որը գտնվում է Ճալեթի գյուղամիջի գերեզմանոցում. «ԹՎ...ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՒՍԱԽԵ Ե ԸՐՍՏԱԿԵՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ Է»¹:

Մեր կարծիքով, այնուամենայնիվ, այստեղ որոշակի թյուրիմացություն կա այն իմաստով, որ քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող պատմական աղբյուրները միաժամանակ մատնանշում են երկու հայրապետական աթոռների առկայություն, ընդ որում, երկուսն էլ «Աղվանից կաթողիկոսություն» անվան տակ:

Հիշյալ տեսակետի հիմնավորման տեսանկյունից կարևոր է ստույգ փաստերի հիման վրա ներկայացնել մասնավորապես 15-րդ դարում Հայ Աղվանից կաթողիկոսների աթոռակալության ժամանակահատվածներն ու նրանց հոգևոր գործունեության վայրը:

Ինչպես նշվել է, ուսումնասիրողներից Ս. Բարխուտարյանը պարզապես հիշատակել է Տեր Կարապետին հաջորդած կաթողիկոսների անունները²: Նույն կերպ է վարվել նաև Հովհ. Շահխաթունյանը³: Երկու հեղինակներն էլ Տեր Կարապետից հետո հիշատակել են Դավիթ անունով կաթողիկոսին, որպես փաստ ընդունելով նրա տապանագիրը, սակայն առանց ուշադրություն դարձնելու նրա աթոռակալության ժամանակին ու վայրին: Մեր կարծիքով սա որպես թյուրիմացություն պետք է ընդունել, քանի որ պահպանված ձեռագրերը մատնանշում են, որ 1402-1423 թթ. Հայ Աղվանից կաթողիկոսական աթոռը առաջնորդել է տեր Կարապետը⁴, որին էլ հաջորդել է Տեր Մատթեոսը, որի մասին պահպանված ձեռագիր հիշատակությունները թվագրված են 1423, 1432, 1434, 1436⁵: Մասնավորապես, այս մասին պարզորոշ հիշատակված է 1423 թվագրությամբ ձեռագիր-ավետարանում. «...Եւ ի հայրապետութեան տեառն Կարապետի և յաջորդի նորին տեառն Մատթեոսի... Եւ ես հողոյ հաւասար Մովսէս եպիսկոպոս, որ զգիրս գրեցի

¹ Ս. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 93:

² Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 212:

³ Հովհ. Շահխաթունյանց, էջ 343:

⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 24, 122, 194, 240,

307:

⁵ Նույն տեղում, էջ 732:

առաջի տեառն Մատթնոսի կաթողիկոսի Հայոց և Աղւանից, վկա են այս բանիս. ի թվաբերութեանս Հայոց ՊՅԲ.(1423), ի փառս աստուծոյ, ամէն»¹: Տեր Մատթնոսի անվան հիշատակությամբ հաջորդ ձեռագիրը, թվագրված 1432 և կրկին մատնանշում է նրա աթոռակալությունը ճալեթում. «յառաջնորդութեան տեառն Մատթնոսի Աղուանից կաթողիկոսի ...ի մենաստանիս ճալեթոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստվածածնի և սուրբ աջերուն Գրիգորի և Աթանագինի, և նոցին սպասաւորի տէր Կարապետի փակակալի, որ զաւրիմակն շնորհեաց...»²: Ինչ վերաբերում է կաթողիկոսաշարքում հիշատակված Տեր Դավիթին, ապա նույն ժամանակահատվածում նա աթոռակալել է Գանձասարում:

Այսպիսով, Տեր Մատթնոսի աթոռակալության սկիզբը պետք է ընդունել 1423 թվականը և, հավանաբար, ավարտն էլ 1436 թվականը, քանի որ հիշյալ թվականից հետո նրա մասին ձեռագրերում այլևս հիշատակություն չկա: Ձուգահեռաբար Գանձասարում Հովհաննես կաթողիկոսի առաջնորդությունը փաստող առաջին վկայությունը թվագրված է 1428՝ «Արդ, գրեցավ աստուածագիծ սուրբ ավետարանս ... ի թուականութեանս Հայոց ՊՅԷ. (1428), ի յաշխարհիս Աղուանից, ի վիճակս Ամրասայ, ի գեղս Շուշու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ի կաթողիկոսութեան տէր Յոհանիսի...»³:

Տարակարծությունները դրանով սակայն չեն ավարտված. Մ. Բարխուտարյանը և Հովհ. Շահխաթունյանը Մատթնոսից հետո հիշատակում են ևս երկու կաթողիկոսների՝ Աթանաս Գ և Գրիգոր Ա⁴:

Այսպիսով, Աղվանից Կարապետ կաթողիկոսի անվան հիշատակությամբ պահպանված աղբյուրները թույլ են տալիս եզրակացնելու, որ նա աթոռակալել է մինչև 1423 թվականը: Բայց և նույն ժամանակաշրջանի այլ վավերագրեր փաստում են Գանձասարում Աղվանից Դավիթ կաթողիկոսի աթոռակալության մասին: Գանձասարի ս. Հովհաննես եկեղեցու մուտքի առջև, գավթի ներսում պահպանվել է տապանաքար հետևյալ արձանագրությամբ. «Այս է հա/ն/զ/ի/ստ Դա/ւ/ի/թ կ/ա/թ/ո/ղ/ի/կո/սին, որդի՝ Բաղտա/սա/ր/ի/, ՊԿԷ /1418/»: Տարաբախտաբար Դավիթ կաթողիկոսի հիշատակությամբ այլ փաստեր տակավին չեն հանդիպել

¹ Նույն տեղում, էջ 307:

² Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 425:

³ Նույն տեղում, մաս Ա, էջ 384:

⁴ Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Ա, էջ 213:

և նշյալ արձանագրությունն էլ վկայում է, որ աթոռակալել է մինչև 1418 թ.: Նկատենք, քանի որ տեր Կարապետը աթոռակալել է 1402-1423 թթ., ուրեմն ճալեթում հաստատված կաթողիկոսին զուգահեռաբար բուն Արցախում, որպես Աղվանից կաթողիկոս, հիշատակված է տեր Դավիթը: Նրանից հետո հաջորդ հիշատակությունը վերաբերում է նույնպես Գանձասարում աթոռակալած Յովհաննես Աղվանից կաթողիկոսին, որն էլ հիմք է տալիս եզրակացնելու, որ տեր Դավթին հաջորդել է տեր Յովհաննեսը:

Համաձայն Մ. Բարխուտարյանցի մի ձեռագրի, որ հրապարակել է Հայկունին, 1441-1470 թթ., Հայ Աղվանից կաթողիկոս է հիշատակված նույնպես Յովհաննես անունով հոգևոր գործիչը, որը շարունակաբար աթոռակալել է Գանձասարում. «Յովհաննես՝ որդի Ջալալի. ՊՂ (1441)»¹: Այստեղ հատկանշական է այն հանգամանքը, որ հատկապես հիշյալ Տեր Յովհաննեսի Աղվանից կաթողիկոս լինելու փաստի մասին վկայությունները բազմաթիվ են, վերաբերում են բուն Արցախին և թվագրված են 1456, 1462, 1464, 1466, 1468, 1470 թվականներով: Անդրադառմանը միայն ամենակարևորներին. 1456 թվականին վերագրվող Ծարի Գետամիջո վանքում կատարված ձեռագրում մասնավորապես նշված է. «...ի հայրապետութեան Աղուանից նահանգի տեառն Յոհանիսի որդոյ մեծի իշխանին Հայոց պարոն Ջալալին»²:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների շարքում պահպանվել է կարա-կոյունլու Սուլթան Ջհանշահի կնոջ՝ Բեգում Խաթունի 1462 թվականի հրովարտակը, տրված Գանձասարի Յովհաննես է կաթողիկոսին, որով հաստատում է նրա կաթողիկոսական իրավունքները³:

Մեծիրանից Ս.Հակոբա վանքի պատին գրված է. «Կամաւն Աստուծոյ ես տէր Յոհանէս կաթողիկոս, որդի Ջալալին մեծ իշխանի, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ, որք երկրպագեք աղաթս յիշեցեք»⁴: Նույն վանքի հարավային պատի տակ գտնվող տապանաքարի վրա արձանագրված է. «ԱՅՍ Ե ՀԱՆԳԻՍՏ ՏՐ ՈՎՀԱՆԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

¹ **Հայկունի**, Ուղեգնացական ակնարկներ, «Մեղու Հայաստանի», 1885, № 80, էջ 3:

² Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժե դար, մաս Բ, էջ 66:

³ Նույն տեղում, էջ 473:

⁴ Դիվան հայ վիճագրության, Պրակ V, կազմեց Մ. Բարխուդարյան, Եր., 1982, էջ 18: Տե՛ս նաև՝ «Բանասեր», 1901, հ. 3, պրակ Բ և Գ, էջ 138:

ԱՂՎԱՆԻՑ. ԹՎ: Ձ ԺԹ: (1470)¹, ինչն էլ բնականաբար վկայում է բուն Արցախում նրա աթոռակալության և հուղարկավորման մասին:

Ս. Հակոբա վանքի հիշյալ երկու վիմագրերը, մեր կարծիքով, առաջադրված տեսակետը հիմնավորող լուրջ փաստեր են, և պետք է հաշվի առնվի այն հանգամանքը, որ վանքը գտնվում է Գանձասարի հարևանությամբ, ճալեթը՝ համեմատաբար ավելի հեռու, իսկ Հովհաննես կաթողիկոսին շնորհված հրովարտակը լուրջ վկայություն պետք է ընդունել այն իրողության, որ իշխողների կողմից որպես Աղվանից եկեղեցու առաջնորդ արդեն ընդունվում ու ճանաչվում էր Գանձասարում նստող կաթողիկոսը:

Հայտնի է, որ 1441 թվականին Հայոց կաթողիկոսական աթոռը, դարավոր դեգերումներից հետո, վերահաստատվեց Հայաստանի կենտրոնում՝ Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում: Հայրապետական աթոռը Հռոմկլայից Հայաստան տեղափոխելու նպատակով որոշակի քայլեր են կատարվում դեռևս Հովհան Ռրոտնեցու կողմից, որը «Գրիգոր Տաթևացու հաղորդմամբ, ծրագրել էր Գանձասարը դարձնել հայոց կաթողիկոսության կենտրոն, հաշվի առնելով, անշուշտ, այն հանգամանքը, որ վանքը հնավանդ կաթողիկոսական իր աթոռով, համեմատաբար ապահով պայմանների մեջ էր Հասան-Ջալալյան գերդաստանի իշխանության ներքո»²: Բնականաբար եթե ընդունելու լինեմք Բ. Ուլուբաբյանի և մյուսների տեսակետը Աղվանից կաթողիկոսական աթոռը տվյալ ժամանակաշրջանում ճալեթում գտնվելու մասին և բուն Արցախում, ինչպես Բ. Ուլուբաբյանն է նշել. «այս ավելի քան մեկ դարը բուն երկրում եկեղեցին ապրում էր այնպես, իբր ոչ մի կաթողիկոսություն ու կաթողիկոս էլ գոյություն չունի», ապա թեկուզ և միայն վերոնշյալ առաջարկությունը, կապված Հայոց մայր աթոռը Գանձասարում հաստատելուն հետ, կդառնա անհիմն ու անտրամաբանական:

Ուրեմն մինչև 1440-ական թվականները Գանձասարը հիշատակված է որպես «հնավանդ կաթողիկոսական կենտրոն»³ և 1440-ականներից հետո էլ շարունակում էր մնալ այդպիսին: Հիշյալ տեսակետը հիմ-

¹ Դիվան հայ վիմագրության, Պրակ V, էջ 17:

² Տես՝ ՀԺՊ, հ. IV, Եր., 1972, էջ 39: Տես նաև՝ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ XXXIV:

³ Տես՝ Գր. Տաթևացի, Բանք գեղեցիկ և յոյժ պիտանի աթոռոյն Աղթամարայ, Մատենադարան, ձեռագիր № 4669, էջ 199բ-200բ:

նավորող փաստարկներից պետք է ընդունել նաև աղ-կոյունլու Յաղուբ Փաղիշահի 1487 թ. հրովարտակը՝ տրված Գանձասարի Շմավոն կաթողիկոսին, որով հաստատում է վերջինիս կաթողիկոսական իրավունքները և նրան ենթակա հայ հոգևորականությանը ազատում զանազան հարկերից¹:

Մ. Բարխուտարյանցը մի ավետարանից հետևյալ մեջբերումն է գրառել. «Ի թուականութեան Հայոց ՋՂ=1455 ի կաթողիկոսութեան տեան Գրիգորի (Աղուանից) ի դանութեան Տաճկաց (Պարսից) Ջիհան Շահի...»²: Ըստ Մ. Բարխուտարյանցի, նրան էլ հաջորդել և 1481-1482 թթ. աթոռակալել է Շմավոն Ա Գանձասարի առաջնորդը³: Սակայն պահպանված Յաղուբ Փաղիշահի հրովարտակը, որի մասին մշվել է, և որով հաստատվում է Շմավոն Ա-ի կաթողիկոսական իրավունքները, ինչպես նաև ձեռագիր ավետարանները, ինքնըստինքյան, վերոհիշյալ տեսակետը հերքող փաստարկներ են հանդիսանում: Այսպես, ըստ Ա. Հախումյանի, Տեր Շմավոնի կաթողիկոսական իրավունքների ընդունումը և հաստատումը պարսկական արքունիքի կողմից տեղի է ունեցել 1476 թ.⁴ և նա էլ հաջորդն է եղել իր հորեղբայր Տեր Մատթեոսի (1470-1476 թթ.)⁵:

Շմավոն Ա-ի աթոռակալությունը փաստող առաջին ձեռագիրը թվագրված է 1486՝ «... ի թագաւորութեանս Եաղուբ պեկին, ի կաթողիկոսութիւնն տէր Շմաւոնին, ի թվականիս Հայոց ՋԼԵ» (1486)⁶: Ձեռագրից դժվար չէ նկատել, որ Հայ Աղվանից կաթողիկոսի հաստատման հրովարտակը նրան աթոռակալության սկզբում չի շնորհվել: Շմավոն Ա կաթողիկոսի անվան հիշատակությամբ հաջորդ ձեռագիրը թվագրված է 1498 թվականով⁷:

Քննարկվող ժամանակահատվածին վերագրվող վիճաբանության ու ձեռագիր աղբյուրներում զետեղված տեղեկությունները տարակարծիքների տեղիք են տվել. ճալեթում մինչև վերջին ժամանակներս պահպանված

¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, եր., 1967, էջ 236-237:

² Նույն տեղում:

³ Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 18:

⁴ Հախումյան Աշոտ, Ուրվագծեր Ղարաբաղի անցեալից. «Արարատ», 1915, էջ 642:

⁵ Նույն տեղում:

⁶ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 84:

⁷ Նույն տեղում, էջ 261:

տապանաքարերից մեկը ունի հետևյալ արձանագրությունը. «Ի ԹՎ ՋԻԴ (1475) հանգիստ Թովմայ կաթողիկոսին»¹:

Մ. Բարխուտարյանը սույն տապանագիրը ներկայացրել է աղավաղված թվականով` ՋԽԴ (1495)²: Ուրեմն, 1475 թ. ճալեթում իր մահկանացուն է կնքել Թովմա անունով կաթողիկոսը, որի մասին միակ վկայությունը հիշյալ տապանաքարն է, իսկ նույն ժամանակահատվածում, ինչպես նշվել է, Գանձասարում Չայ Աղվանից կաթողիկոսությունը առաջնորդում էր Տեր Մատթեոսը, 1476 թվականից` Շնավոն Ա-ն: Վերջինիս մահվան ժամանակի վերաբերյալ առայսօր ստույգ տեղեկություն չի հայտնաբերված, սակայն նրա անվան հիշատակությամբ 1498 թվագրությամբ ձեռագիրը փաստում է, թեկուզ մինչև հիշյալ թվականը, տակավին նրա աթոռակալության մասին, իսկ ճալեթում պահպանված համաժամանակյա աղբյուրները վկայակոչում են Առաքել կաթողիկոսին` «տեր Առաքեալ` ևս սօկութլուեցի. յիշատակի սա ի յիշատակարանի աւետարանի միոյ եղելոյ ի թուին ԻՋՈ (1479 թ.), ՃԾԳ (1504 թ.). իսկ արձանագրութիւն տապանին` որ ի վանս ճալեթու, հասուցանէ ցՁԿ (1511 թ.)»³:

Այսպիսով, ևս անառարկելի փաստ առ այն, որ նույն ժամանակահատվածում ճալեթում շարունակում էր իր առաքելությունը նաև համանուն կաթողիկոսությունը: Վիմագիր ու ձեռագիր աղբյուրների հաղորդման համաձայն 1497-1511 թթ. այստեղ աթոռակալել է Առաքել կաթողիկոսը⁴: ճալեթում. «Տէր Առաքել կաթուղիկոս Աղուանից... ետ գրել զԱւետարանս ի հալալ ընչից իւրոց, յիշատակ հոգւոյ իւր և ծնողաց իւր... ի յաթոռն ճալեթոյ, ի յաշխարհն Աղուանից, ... ի թվականիս Չայոց ՋԽԸ (1499)»⁵: Մինչև 1980-ական թվականները ճալեթում պահպանվում էին Առաքել կաթողիկոսի գործունեության մասին վկայող նաև վիմագիր արձանագրությունները, որոնք արձանագրվել ու նկարահանվել են Սամվել Կարապետյանի կողմից⁶: Ըստ Չովի. Շահխաթունյանցի, ճալե-

¹ Մ. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 90:

² Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 18:

³ Չովի. Շահխաթունյանց, էջ 344:

⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Գ, էջ 236, 237, 281:

⁵ Նույն տեղում, էջ 281:

⁶ Մ. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 90:

թի Առաքել կաթողիկոսին հաջորդել է Արիստակեսը (1511-1516 թթ.)¹: Ի դեպ, հիշյալ Արիստակես կաթողիկոսի անվան շուրջը ևս սխալ տեսակետներ կան, մասնավորապես այն, որ նա կաթողիկոսական աթոռը տեղափոխել և աթոռակալել է Գանձասարում: Սակայն այստեղ նույնպես հարկ է նկատել, որ Մ. Բարխուտարյանը ժամանակին տեսել և արձանագրել է նրա տապանաքարը, որի համաձայն հուղարկավորված է պատմական Կապադակ գավառի Յաղուբլու գյուղի գերեզմանոցում², այսինքն իր ծննդավայրում: Հավանաբար հենց նրանից հետո էլ կաթողիկոսությունը դադարեցրել է իր հայրապետական գործունեությունը, վերստին միանալով և ընդունելով Գանձասարի հոգևոր առաջնորդությանը, որը այդ նույն շրջանում առաջնորդում էր Արիստակես անունով կաթողիկոսը՝ «Արիստակես կաթողիկոսն վախճանեցաւ ի ՋԴԵ թուին Հայոց ի 1521 ամի Տեառն»³:

Ահա այս փաստարկներից կարելի է եզրակացնել, որ 15-րդ դարում, երկրում քաղաքական աննպաստ իրավիճակի պատճառով Աղվանից եկեղեցու ներսում տեղի է ունենում մասնատում, որի արդյունքում ճալեթում ևս հաստատվում է Աղվանից անվանված կաթողիկոսական աթոռ, որը, սակայն հաստատումն չէր և երկարատև գոյություն ու էական դերակատարություն չկարողացավ ունենալ: Իսկ Գանձասարը, որպես կաթողիկոսանիստ, սկսել է իր գործունեությունը ոչ թե, ինչպես ընդունված էր մինչև հիմա, 1516 թվականից, այլև XIV դարի վերջերից և XV դարի սկզբներից, ընդ որում ոչ ընդհատումներով, այլ մշտական:

Այսպիսով, պահպանված աղբյուրները միանշանակորեն փաստում են քննարկվող ժամանակաշրջանում միաժամանակ երկու կաթողիկոսությունների գոյության մասին, ընդ որում, ճալեթի կաթողիկոսների մասին հանդիպող բոլոր հիշատակություններում Աղվանից անվան հետ գործածված է նաև «ի յաթոռն ճալեթոյ» արտահայտությունը, ինչը հավանաբար կատարված է երկու Աղվանից աթոռները տարբերակելու նպատակով: XIV-XV դարերում բուն Արցախում Հայ Աղվանից կաթողիկոսական գահին տիրանում էին մեծմասամբ Հասան-Ջալալյան իշխանական գերդաստանի ներկայացուցիչները, որոնք էլ հիմնականում

¹ Հովհ. Շահխաթունյանց, էջ 344:

² Մակ. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, մաս Բ, էջ 222-223: Ս. Կարապետյան, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը, էջ 93:

³ Բաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», «Արծազանք», 1886, № 45, էջ 591:

գահանիստը տեղափոխել էին Խաչեն և նստում էին՝ սկզբում Ս.Հակոբա վանքում, ապա Գանձասարում:

XV դարի վերջերին և XVI դարի սկզբներին՝ Մերձավոր Արևելքում քաղաքական նոր ուժեր ասպարեզ եկան: Այդ ուժերից մեկը Օսմանյան սուլթանությունն էր, մյուսը Սեֆյական Պարսկաստանը: Պարսկական արքունիքի հրամանով Հայոց Արևելից կողմերում ստեղծվում են մելիքություններ, որոնք պետք է ճանաչեին Պարսկաստանի գերիշխանությունն ու հաստատվեին շահերի կողմից: Նրանց միաժամանակ շնորհվում էին որոշ իրավունքներ, որոնց թվում՝ նաև սեփական զինական ուժ ունենալու¹: Պարսկական արքունիքի կողմից համեմատաբար ավելի մեղմ ու սիրաշահողական քաղաքականություն տարվում էր Հայոց եկեղեցու նկատմամբ:

Պարսկաստանի գերակայության ներքո Հայոց Արևելից հոգևոր առաջնորդությանը վերապահված էին որոշ արտոնություններ, որոնց մասին վկայում են շահերի կողմից Գանձասարի կաթողիկոսներին շնորհված հրովարտակները: Պարսից արքունիքի կողմից նման հարգալից վերաբերմունքը Հայ Աղվանից կաթողիկոսության նկատմամբ, բնականաբար արվում էր քաղաքական նկատառումներից դրդված: «Ժողովրդին հպատակության մեջ պահելու գործում հայ եկեղեցու կատարած կարևոր դերը քաջ գիտակցում էին նվաճողները և երբեմն նույնիսկ նպաստում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման ու տնտեսապես ապահովման գործին»²: Եվ, չնայած որ «թվացյալ» մեղմ քաղաքականություն էր տարվում նաև աշխարհիկ իշխանությունների նկատմամբ, այնուամենայնիվ, պարզորոշ նկատելի է պարսկական արքունիքի կողմից տարվող քաղաքականության իրական ուղղվածությունը՝ տնտեսապես ու քաղաքականապես հնարավորինս թուլացնել իշխանական տները, որոնց նկատմամբ կիրառվում էին տարատեսակ բռնություններ ու կեղեքումներ՝ ճանաչելով միայն հոգևոր առաջնորդությունը:

Հրովարտակներից մեկում, մատնանշելով Գանձասարի Հայ Աղվանից հոգևոր առաջնորդի իրավունքները նշված է նաև, որ «ոչ մի արարած նրա գործերին չխառնվի ու չմիջամտի, նրան ենթակա հոգևորականների ու մերձավորների նկատմամբ. հանցանք չգործեն, նրանցից

¹ Լեո, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր դպրոցի, Թիֆլիզ, 1914, էջ 54:

² Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ XLIV:

ոչինչ չպահանջեն և որևէ ցանկություն ու ակնկալություն չունենան»¹:

Փաստորեն, պարսկական արքունիքի կողմից Գանձասարի կաթողիկոսությանը շնորհված էր բավական արտոնյալ վիճակ, նրան ենթակա թեմերն ու եկեղեցիները ազատված էին հարկերից, որի պատճառով աշխարհիկ իշխանավորները իրենց տիրույթներում գտնվող վանքերում նվիրատվություններ էին կատարում, դրանով ազատվելով իրենց վրա դրված տարատեսակ հարկերից ու տուրքերից: Հիշյալի մասին հարուստ տեղեկություններ են արձանագրված ձեռագրերում ու վիճագրերում²: Սակայն Արցախի իշխանական տների մնացորդները, այնուհանդերձ, համեմատաբար կենսունակ գտնվեցին ու պահպանեցին իրենց վարչա-քաղաքական գոյությունը և հետագայում, Գանձասարի հոգևոր առաջնորդության շուրջը միավորվելով, շարունակեցին ազգային-ազատագրական ոգորումները: Իսկ Գանձասարի հոգևոր առաջնորդությունն իր հերթին, օգտվելով կաթողիկոսությանը շնորհված քաղաքական ու տնտեսական հնարավորություններից, իր շուրջը համախմբեց հոգևոր առաջնորդության ենթակայության տակ գտնվող հայերին, և ինչպես Լեոն է իրավացիորեն նշել. «Հասան-Ջալալյան կաթողիկոսները անհամեմատ ասելի լաւ էին գործում, ասելի խոշոր դեր էին կատարում, քան նույն տոհմանունը կրող մեկիքները... ասիա մի հոգևորականութիւն, որ ծուլուած է իր ժողովրդի հետ, որ տանում է նրան դէպի կռիւ, դէպի տանջանքներ և հերոսութիւններ՝ լեռնային ոգին, լեռնային կեանքի ազատութիւնը սիրելու և պահպանելու համար»³:

Եվ այսպես, Գանձասարում վերջնականապես հաստատված Հայոց Արևելից կողմանց կամ Հայ Աղվանից հոգևոր առաջնորդության համար սկսվում է մի ուրույն փուլ:

¹ ՄՊԿԶ, Ա, էջ 46:

² Դիվան հայ վիճագրության, պրակ V, էջ 13, 21, 24, 28...: Հայերեն ձեռագրերի ժեղարի հիշատակարաններ, մաս Ա, Բ, Գ:

³ Լեոն, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգևոր դպրոցի, էջ 56:

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄՔՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՍԿՋԲՈՒՆՔԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԳԱՐՑԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Միջազգային իրավունքի սկզբունքները բոլոր սուբյեկտների համար ունեն պարտադիր բնույթ: Այդ սկզբունքները փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրը պետք է դիտել մյուս բոլոր սկզբունքների համատեքստում:

Պետության տարածքային ամբողջականության սկզբունքը հաստատվել է 1945 թ. ՄԱԿ-ի կանոնադրության ընդունմամբ: Դրա իմաստը ցանկացած ոտնձգություններից պետության տարածքի պաշտպանությունն է:

1970 թ. ՄԱԿ-ի կանոնադրության մեջ մասնավորապես սահմանվեց, որ յուրաքանչյուր պետություն «պետք է ձեռնպահ մնա որևէ պետության կամ երկրի ազգային միասնության, տարածքային ամբողջականության խախտմանն ուղղված ցանկացած գործողություններից»: Նշվել է նաև, որ «պետության տարածքը չպետք է լինի ռազմական բռնազավթման օբյեկտ, որը հանդիսանում է ուժի գործադրումով կանոնադրության դրույթների խախտման արդյունք»: Ցավոք սրտի, դեռևս մինչև այս կանոնադրության ընդունումը, 20-րդ դարի սկզբներին խախտվեց արցախահայ պետության տարածքային ամբողջության սկզբունքը և այսօր էլ հաջողությամբ փորձ է արվում նույն սկզբունքի կիրարկմամբ նորից ոտնահարել մեր իրավունքները: Խոսենք փաստերով:

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո ժամանակավոր կառավարությունը տեղերում ստեղծեց իշխանության մարմիններ՝ գործադիր կոմիտեներ:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (Օզակում) 1917 թ. մարտի 13-ի որոշմամբ ստեղծվեց Ղարաբաղի գործկոմ, որի իշխանությունը

տարածվում էր Արցախի ինչպես դաշտային, այնպես էլ լեռնային շրջանների վրա:

Ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում ժամանակավոր կառավարության մարմիններին զուգահեռ ստեղծվեցին բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդներ: Ջինվորների, բանվորների, գյուղացիների Շուշիի խորհրդի կազմի մեջ կային տարբեր ազգերի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ:

1917 թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումից հետո Անդրկովկասում նոյեմբերի 15-ին կազմավորվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ: Անդրկովկասի քաղաքական ուժերը, չընդունելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական նոր կացությունը, երկրամասը հռչակեցին անկախ վարչաքաղաքական միավոր:

Տեղերում զգալի էր անիշխանության մթնոլորտը: Նախկին իշխանության մարմինները կազմալուծվեցին: Երկրամասում վիստում էին հանցագործ տարրերից կազմված բանդաները, որոնք անարգել թալանում էին խաղաղ բնակչությանը: Վերացվեցին հարևան շրջանների հետ ունեցած նախկին ավանդական կապերը: Մանավանդ դադարեցվեց դաշտային Ղարաբաղից Շուշի և հայկական մյուս բնակավայրերը ներկրվող ցորենի մատակարարումը: Շուշիում մտցվեց հացի բախշման քարտային եղանակը:

Հեղափոխությունից անմիջապես հետո Շուշուց հեռացավ քաղաքի հայկական մասում տեղակայված ռուսական 532-րդ հետևակային Սիբիրյան զորամասը: Նրան էր միացել ռուս-պարսկական սահմանում գտնվող 6-րդ սահմանապահ գնդի մի զորամաս ևս¹: 1917 թ. դեկտեմբերին ճակատից վերադարձող Ղարաբաղցի հայ զինվորներին Եվլախ-Շուշի խճուղու վրա թուրք-թաթարական բանդաները զինաթափեցին և զնդակահարեցին²:

Արցախի բնակչության մտահոգությունը փարատելու, երկրամասում կարգ ու կանոն հաստատելու լեգիտիմ իշխանություն ստեղծելու նպատակով Հայ հեղափոխական դաշնակցության Ղարաբաղի «Ապա-

¹ Գ. Թումյան, Դեպքեր Լեռնային Ղարաբաղում (1917-20 թթ.), պատմական ակնարկ, Եր., 1966, էջ 9:

² Նույն տեղում, էջ 4:

ռաժ» կոմիտեն նպատակահարմար գտավ գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի համադրմամբ կյանքի կոչել լիազոր մի մարմնի, «որ գործելու է իբրև Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն և որի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»¹: «Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ և վստահություն ներշնչել նաև հարևան մուսուլմանությանը»²:

Փաստորեն Լեռնային Ղարաբաղում ստեղծվելիք իշխանությունը ի վերուստ բացառեց որևէ էթնիկ միավորի ծառայելու մտայնությունը և փորձեց հանդես գալ որպես իր լիազորության շրջանակներում գտնվող տարածքների բոլոր ազգերի շահերի պաշտպան: Դրա մասին է վկայում նաև հետագա դեպքերի զարգացման ընթացքը:

Նախապատրաստական աշխատանքներից հետո, 1917 թ. դեկտեմբերին Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքը ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»³: Այդ մարմինը հետագայում անվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառնություններով: Որոշվեց նորաստեղծ կառավարության մեջ ներառել, համամասնական սկզբունքով, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներին: Փոխադարձ համաձայնությամբ հինգ պորտֆելներ տրվեց դաշնակցությանը, իսկ մնացած կուսակցությունները ներկայացրին երեքական անդամներ: Որպես կառավարության անդամներ ընտրվեցին Հայրապետ Մուսայելյանը, Անուշավան Միքայելյանը, Եղիշե Իշխանյանը, Հարություն Թումյանը, Ասծատուր Ավետիսյանը, Աշոտ Մելիք-Հովսեփյանը, Լևոն Վարդապետյանը, Նիկոլայ Իսախանյանը, Հռիփսիմե Մելիք-Հովսեփյանը, Արա Միքայելյանը, Ալեքսանդր Մելքունյանը, Ալեքսանդր Ծատուրյանը, Արմենակ Ղարազյոզյանը և Մելիքսեթ Եսայանը: Խորհրդի

¹ Գ. Թումյան, նույն տեղում, էջ 14:

² Նույն տեղում, էջ 13:

³ Նույն տեղում, էջ 15:

նախագահ ընտրվեց դաշնակցական Հայրապետ Մուսայեյանը, իսկ քարտուղար՝ դաշնակցական Նիկոլայ Իսախանյանը¹:

Համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակից ոգևորված և ազգային պետականությունը չընդունող բոլշևիկյան կուսակցության երեք ներկայացուցիչներ մի քանի օրից հրաժարվեցին մասնակցել նորաստեղծ իշխանության մարմնի գործունեությանը: Փաստորեն Միջկուսակցական բյուրոյի մեջ էին դաշնակցականներ, մենշևիկներ և էսեռներ:

Վերոհիշյալ փաստերն ու դեպքերի զարգացման ընթացքը մեզ հիմք է տալիս ասելու, որ 1917 թ. դեկտեմբերին, մի քանի ամիս առաջ, դեռևս մինչև Անդրկովկասյան երեք ազգային հանրապետությունների ծնունդը, Լեռնային Ղարաբաղում դրվեցին պետական մի միավորի հիմքերը, որոնք իրենց ավարտին հասան 1918 թ. հունիսին:

Գործուն իշխանություն ունենալու նպատակով Միջկուսակցական Բյուրոն նպատակահարմար գտավ ընտրական համակարգի միջոցով տեղերում ստեղծել վարչական և դատական մարմիններ:

Առանձնակի ուշադրության կենտրոնում էր պարենի հայթայթման գործը: Երկրի հայ բնակչության անվտանգությունը ապահովելու նպատակով 1917թ. դեկտեմբերին ստեղծվեց Ռազմական Խորհուրդ Հարություն Թումյանի գլխավորությամբ: Ձինված ուժերի համալրումը իրականացվում էր կամավորության սկզբունքով: Ձենքը և զինամթերքը ծեռք էր բերվում հիմնականում դրսից: Տեղերում ստեղծվում են զինագործական արհեստանոցներ: Քայլեր կատարվեցին երկրամաս հրավիրելու ծագումով արցախցի ռուսական բանակի սպաներին:

1918 թ. հունվարին Թիֆլիսում Հայրապետ Մուսայեյանը, բանակցելով Արցախ-Ձանգեզուր հայրենակցական միության անդամների հետ, կազմակերպում է Արցախյան գունդը, որի կազմում էր 600 զինվոր: Գնդի հրամանատար է նշանակվում գնդապետ Միքայել Մելիք-Շահնագարյանը, իսկ տեղակալ՝ պորուչիկ Հովակ Ստեփանյանը²:

Միաժամանակ խնդիր դրվեց տեղերում վերջ տալ անիշխանությանը, հակահարված տալ ավազակային այն խմբավորումներին,

¹ Գ. Թումյան, Դեպքեր Լեռնային Ղարաբաղում (1917-20 թթ.), պատմական ակնարկ, Եր., 1966, էջ 15:

² «Հայրենիք», 1935, № 2, էջ 84:

որոնք պատուհաս էին դարձել խաղաղ աշխատավոր բնակչության համար: Հյուսիսային Արցախի հայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու, զենք և զինամթերք հայթհայթելու նպատակով 1918 թ. հունվարին Միջկուսակցական բյուրոյի որոշմամբ զինված մի ջոկատի գլուխ անցած՝ Գանձակ է մեկնում Հարություն Թումյանը:

1918 թ. ապրիլի 9(22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հռչակեց խորհրդային Ռուսաստանից անկախ վարչաքաղաքական միավոր: Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ազերի-թուրքերի ներկայացուցիչները ստեղծում են Անդրկովկասի ժողովրդական դաշնային հանրապետություն: Անդրկովկասյան սեյմում գտնվող հայ և մահմեդական ներկայացուցիչների համաձայնությամբ Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ շրջանի կարգավիճակ¹:

Հայ քաղաքական ուժերը բուն քաղաքում ազգամիջյան լարվածությունը կանխելու և մահմեդական բնակչության հետ համագործակցության ելքեր գտնելու նպատակով մահմեդական կոմիտեին առաջարկեցին ստեղծել մի նոր մարմին՝ ազգամիջյան կոմիտե, որի մեջ ներառված կլինեն հայեր և մահմեդականներ: Կառավարման համակարգի անաչառությունը պահպանելու նպատակով որոշվեց վրացի Յոսիֆ Իլավիանովիչ Կորիկին նշանակել կոմիտեի նախագահ: Հայ գործիչների հանդուրժողական, ավելի ճիշտ զիջողական, այս քայլը այդպես էլ չգնահատվեց ազերի-թուրքերի կողմից: Իրարամերժ շահերի գոյության պայմաններում ազգամիջյան կոմիտեն կարճատև գործունեությունից հետո 1918 թ. ապրիլի վերջին դադարեցրեց իր գործունեությունը²:

Իրավիճակը Արցախում ծանրացավ: Արցախի դաշտային հատվածում գործող թուրք գործավարները, մահմեդական հետամնաց խավերի վրա հենվելով, շրջափակեցին երկրամասը: Շուտով կյանքն ապացուցեց, որ Անդրկովկասի միացյալ կառավարությունը երկարատև գործել չէր կարող:

1918 թ. մայիսի 26-ին ստեղծվեց Վրաստանի հանրապետությունը, մայիսի 27-ին Ադրբեջանի հանրապետությունը, մեկ օր անց, մայիսի 28-ին՝ Հայաստանի հանրապետությունը: Հարկ է նշել, որ Ադրբեջանի հանրապետության կառավարությունը լիարժեք սկսեց գործել 1918 թ.

¹ «Մշակ», 25 հուլիսի, 1918, № 144:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 221, ց. 1, գ. 30, ք. 23-24, 28-29:

սեպտեմբերից, երբ թուրքերը օգնությամբ նրանք գրավեցին Բաքուն և վերջ տվեցին Կոմունային: Միաժամանակ նկատեմք, որ Ազգերի լիգան դե յուրե չի ճանաչել Ադրբեջանի հանրապետությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ երկիրը չուներ կայուն կառավարման համակարգ և չի վերահսկում այն տարածքները, որոնցին հավակնում է¹:

Օրեցօր ծանրանում էր արցախահայության վիճակը: Մանավանդ Բաթումիի պայմանագրից հետո, երբ ԳԳ-ը հրաժարվեց Արցախից, Ադրբեջանի ճնշումները ավելի սաստկացան: Արցախի քաղաքական ուժերը, հաշվի առնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, ուժերի հարաբերակցությունը, ինչպես նաև ԳԳ-ից սպասվող անհուսալի օգնությունը, որոշեցին նախկինում ստեղծած պետական միավորը ավելի ամրապնդել ու հենվելով սեփական ներուժի վրա՝ հաղթահարել թուրքերի՝ ազգերի-թուրքերի և նրանց հետ գործակցող անգլիացիների ճնշումները: Այդ նպատակով 1918 թ. հունիսի 17-ին Շուշիում հրավիրված միջկուսակցական երկրորդ հավաք-խորհրդակցությունում որոշվեց ստեղծել նոր մարմին «Հայ հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների կոմիսարների խորհուրդ»²: Կոմիսարներ են ընտրվում.

1. Հայրապետ Մուսայեյան, դաշնակցական, կոմիսարների խորհրդի նախագահ,
2. Աշոտ Մելիք Յուզեփյան, մենշևիկ, արդարադատության կոմիսար,
3. Հարություն Թումյան, դաշնակցական, զինվորական կոմիսար,
4. Արսեն Բակունց, մենշևիկ, արտաքին գործերի կոմիսար,
5. Արամ Միքայելյան, սոցիալիստ - հեղափոխական, ֆինանսների կոմիսար,
6. Ասծատուր Ավետիսյան, դաշնակցական, պարենավորման կոմիսար,
7. Արտաշես Պետրոսյան, դաշնակցական, ներքին գործերի կոմիսար,

¹ League of Nation, "The Records of the First Assembly meetings of the Committees II", Geneva, 1920, pp. 173-174.

² Հայրենիք» 1933, № 11, էջ 85:

8. Ռուբեն Տեր-Գասպարյան, սոցիալիստ - հեղափոխական, կոմիսարների խորհրդի քարտուղար:

Կոմիսարների խորհրդին կից ստեղծվում է մի մարմին, որը պիտի գբաղվեր երկրամասի ազգային փոքրամասնությունների հարցերով: Երկրամասը բաժանվում է երկու շրջանի: Առաջին շրջանի մեջ ներառված էր Խաչենը, Ջիվանշիրը, Ջրաբերդը և Գյուլիստանը, լիազոր՝ Եղիշե Իշխանյան, իսկ երկրորդի մեջ՝ Վարանդան և Դիզակը, լիազոր՝ Արա Յովհաննիսյան¹: Հարկ է նշել, որ Եղիշե Իշխանյանի օրագրի մեջ կառավարության կազմը և պաշտոնները մի քիչ տարբեր ձևով է ներկայացված:

1. Անուշավան Տեր-Սիքայեյան՝ նախագահ,
2. Ռուբեն Տեր-Գասպարյան՝ քարտուղար,
3. Աշոտ Մելիք-Յովսեփյան՝ փոխնախագահ, միաժամանակ արտաքին գործերի վարիչ,
4. Հայրապետ Մուսաեյան՝ պարենավորման հարցերի վարիչ,
5. Հարություն Թունյան՝ զինվորական հարցերի վարիչ,
6. Արամ Սիքայեյան՝ ֆինանսների վարիչ,
7. Արսեն Բակունց՝ հաղորդակցության վարիչ,
8. Արտաշես Պետրոսյան՝ ներքին գործերի վարիչ,
9. Ասատուր Ստեփանյան՝ հաշվապահ²:

Փաստն այն է, որ Լեռնային Ղարաբաղում ստեղծվել էր կոալիցիոն կառավարություն, որը նպատակային քաղաքականություն սկսեց վարել երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական հարցերի լուծման ուղղությամբ:

Տեղերում իշխանության մարմինները ուժեղացնելու նպատակով 1918 թ. հուլիսի կեսերին վարչական նոր բաժանումներ կատարվեցին: Երկրամասը բաժանվում է չորս գավառի: Առաջին գավառի մեջ ներառվեց ամբողջ Դիզակը: Գավառապետը՝ Արտեմ Լալայանն էր, օգնականը՝ Աշոտ Շահունցը: Երկրորդ գավառը ընդգրկում է Վարանդայի մի մասը Դրնավից Ավետարանոց, ուղիղ գծով ձգվելով դեպի հարավ, գավառապետն էր՝ Իսրայել Տեր-Իսրայեյանը, օգնական՝ Գեորգի

¹ ՀՀ ՊԿՊՍ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 26, տե՛ս նաև Գ. Աբրահամյան, Արցախահայության ազատագրական պայքարը 1917-23 թթ., Ատենախոսություն, Եր., 1966, էջ 58-59:

² Եղիշե Իշխանյան, էջ 155:

Գասպարյանը, որը հետագայում դարձավ գավառապետ: Վարանդայի մյուս մասը Խաչենի աջափնյակի հետ ներառված էր երրորդ գավառի մեջ: Գավառապետն էր Ալեքս Փիրումյանը, որին փոխարինեց Բագրատ Միքայելյանը: Չորրորդ գավառի՝ ծախափնյա Խաչենը, Ջրաբերդը և Գյուլիստանը, գավառապետն էր Մարկոս Տեր Աստուածատրյանը, օգնականը՝ Արշակ Շահիջանյանը, որը նույնպես հետագայում դարձավ գավառապետ¹: Նման բաժանումը ավելի նպատակահարմար էր, որովհետև այս պարագայում նշված վարչական միավորները առավել շատ համապատասխանում էին Խամսայի սահմաններին: Պատմական փորձը այստեղ իր դերակատարությունը ունեցավ: Գավառներում կարգ ու կանոն հաստատելու համար ստեղծվեցին 50-ական հոգուց բաղկացած միլիցիայի ջոկատներ: Դիզակի միլիցիայի ջոկատի պետն էր Արսեն Լալայանը, օգնականներ՝ Աշոտ Շադունցը և Ավանես Զեփեանցը: Վարանդայի միլիցիայի պետն էր Աղալար Չայրապետյանը, օգնականը՝ Աղապարոն Դանիելբեկյանը: Աջափնյա Խաչենից՝ Աղասի Վերդյանը, օգնականը Դալի Սահրասան: Խաչենի ծախափնյակի՝ Հաթերքի ենթաշրջանինը՝ Ասծատուրը, Առաջածորի ենթաշրջանինը՝ Արտեմ Սուքիասյանը: Ջրաբերդի միլիցիայի պետն էր՝ Նիկ. Համբարձումյանը, օգնականը Նիկ. Զախարբեկյանը²:

«Քանի որ յեղափոխութեան հետևանքով քայքայել, վերջացել էին պետական հաստատութիւնները,- գրում է ժամանակակիցը,- նորերն էլ չէին ստեղծել և հնարաւոր չէր ստեղծել, ուստի Բիւրոյի լիազօրները ստիպւած զբաղւել էին գյուղացիների միջև ծագած վեճերով քննիչի, հաշտարար միջնորդի և դատաւորի դեր կատարելով»³: Կոմիսարների խորհրդի լիազորության տակ էր գտնվում նաև Արաքսի վրայով Պարսկաստանի սահմանը:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ կոմիսարների խորհուրդը ոչ միայն տնօրինում էր բուն Արցախի հայության ճակատագիրը, այն փորձում էր սատարել Ադրբեջանի հայությանը: 1918 թ. հուլիսի 8-ին Ղարաբաղի կոմիսարների խորհուրդը Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանին հղում է հետևյալ բովան-

¹ Եղիշե Իշխանյան, էջ 162-163:

² Նույն տեղում, էջ 163:

³ Նույն տեղում, էջ, 156:

դակությամբ մի նամակ. «Թանկագին ընկեր Ստեփան Շահումյան, հայկական Ղարաբաղը պատրաստ է օգնելու ձեր կռվող ուժերին թիկունքային շեշտակի գործողություններով: Թշնամու դեմ կարող ենք հանել մինչև 20 հազար լավ սպառազինված և ամեն ինչով ապահովված փորձված մարտիկներ: Մեզ ներկայումս անհրաժեշտ են տվյալներ թշնամու ուժերի քանակի և դասավորության մասին: Հարվածի ուղղության և ժամանակի մասին տեղեկացրեք»: Նամակի տակ դրված է զինվորական կոմիսար Հարություն Թումյանի ստորագրությունը¹: Նույն բովանդակության մեկ այլ նամակ էլ հասցեագրվել էր դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեին:

Կոմիսարների խորհրդի գործունեությունը իրավական հիմքերի վրա դնելու, ինչպես նաև երկրի ներքին և արտաքին քաղաքականությանը առնչվող հարցերը լուծելու նպատակով որոշվեց հրավիրել Ղարաբաղի հայության առաջին համագումարը: Մինչ այդ բոլոր գավառներում ընտրվեցին պատգամավորներ: Դա նույնպես կատարվեց օրենքի շրջանակներում: Ըստ ընտրական հրահանգի յուրաքանչյուր գյուղում գյուղացիների ընդհանուր ժողովներում ընտրում էին երկուական պատգամավոր: Շուշի քաղաքը բաժանվել էր ութ ընտրական տեղամասի²:

1918 թ. հուլիսի 22-26-ը 180 պատգամավորների մասնակցությամբ Շուշիում հրավիրվեց համագումար: Համագումարը միաձայն որոշում է Ղարաբաղը ճանաչել որպես Արարատյան հանրապետության (այսինքն ՀՀ-ի - Վ. Բ.) մաս: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստեղծված իրավիճակում Ղարաբաղը կտրված է ՀՀ-ից, որոշվեց ստեղծել Ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն, որը պիտի ունենար երկիրը կառավարելու բոլոր իրավունքները: Կառավարությունը ուներ հետևյալ կազմը.

1. Այվազյան Մարտիրոս, հաղորդակցության և ճանապարհների վարիչ,
2. Բաղդասարյան Արսեն (նա ուներ նաև Հովսեփյան ազգանունը - Վ. Բ.), պարենավորման գործերի վարիչ,
3. Եսայան Մելիքսեթ, քարտուղար և շրջանների հետ կապի վարիչ,

¹ Հարություն Թումյան, էջ 63:

² Նույն տեղում, էջ 71:

4. Թունյան Հարություն, զինվորական գործերի վարիչ,
5. Իշխանյան Եղիշե, ներքին և արտաքին գործերի վարիչ,
6. Տեր-Աստվածատրյան Մարկոսբեկ, արդարադատության գործերի վարիչ,
7. Քամայան Արշավիր, ֆինանսների վարիչ¹: Ղարաբաղի զինված ուժերի հրամանատար է նշանակվում Արտաշես Վարդապետյանը:

Հարկ է նշել, որ կառավարության անդամների պարտականությունների բախշվածությունը այլ ձևով է ներկայացված Հ. Աբրահամյանի ղոկտորական ատենախոսության մեջ²:

Եղիշե Իշխանյանի օրագրում տեղ գտածը ավելի հավանական է, որովհետև հեղինակը ոչ միայն կառավարության անդամ էր, այլ նաև վարչապետի լիազորություններ էր իրագործում:

Երկրի ներսում կարգ ու կանոնը պաշտպանելու նպատակով՝ քաղաքացիական բնույթի գործերը քննելու համար որոշվում է ստեղծել միջնորդ դատարաններ, իսկ քրեական հանցագործությունների համար՝ զինվորական դատարան: Կանոնակարգվում է հարկահանության գործը:

Դրսից ոչ մի օգնության հույս չունենալով, որոշվում է պարենի հարցը լուծել ներքին պահուստների հաշվին: Երկրի սահմանները անխաթար պահելու համար նպատակահարմար գտնվեց ստեղծել բանակային ստորաբաժանումներ:

Արտաքին քաղաքականության մարզում, մանավանդ թուրքերի հետ հարաբերությունների հարցում, փորձել պահպանել խաղաղ գոյակցության սկզբունքը³: Համագումարի որոշմամբ ստեղծվում է կառավարության օրգան՝ «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը⁴: Գավառներում գործում էին կառավարության լիազորները, որոնց անվանում էին կոմիսարներ:

Բերված փաստերը վկայում են, որ 1918 թ. հուլիսի 22-ին դեպքերի զարգացման արդյունքում Անդրկովկասում և Լեռնային Արցախում ստեղծվում է չորրորդ սուվերեն հանրապետությունը: Այն ուներ պետությանը հատուկ բոլոր ինստիտուտները. օրենսդիր մարմին, գործադիր դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

¹ Եղիշե Իշխանյան, էջ 177:

² Հ. Աբրահամյան, էջ 61:

³ Ե. Իշխանյան, էջ 173-174:

⁴ Հ. Աբրահամյան, էջ 62:

Այդ ամենի մասին է վկայում նաև ՀՀ գործիչներից մեկը՝ բժիշկ Արշալույս Բաբայանը. «Ազգային խորհուրդը՝ կազմուած բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչներից, կարողացաւ երկար ժամանակ Ղարաբաղը անկախ վիճակի մէջ պահել... Տաճիկների օրով և յետոյ նա առանց միջոցների, առանց դուրսի օգնութեան, մեմ-մեմակ, կարողացաւ իր վարած ազգային և հաստատուն քաղաքականութեամբ հեռու պահել հայութիւնը կոտորածներից ու ւերից: ... Ազգային խորհուրդը թոյլ չտուաւ ոչ տաճիկներին եւ Ադրբեյջանին՝ տիրանալու Լեռնային Ղարաբաղին»¹:

Այդ օրերին «Մշակը» գրել է. «արցախահայութիւնը հռչակեց իր «անկախութեան իրավունքը»²: Նորաստեղծ պետութեան սահմանները սկսում է Գանձակի մատուցներից և հասնում մինչև Արաքսի ափերը: Ըստ էութեան Արցախի իշխանութիւնների իրավասութեան տակ մտնում էին Խամսայի մելիքութիւնների տարածքները: Կառավարութեանը մտահոգում էր հյուսիսային Արցախի բնակչութեան անվտանգութեան հարցը (Վ. Բ.):

1918 թ. օգոստոսի 2-ին կառավարութիւնը որոշում է նորաստեղծ պետութեանը միացնել Գանձակի հայկական շրջանները³: Լեռնային Ղարաբաղի կառավարութիւնը ստիպւած էր լուծել ոչ միայն ներքին կյանքին առնչվող բազմապիսի հարցեր, այլև անհրաժեշտ միջոցառումներ էին ձեռնարկվում երկրի պաշտպանունակութեան ամրապնդման և 3500 զառթականների տեղավորման ուղղութեամբ: Ելնելով ստեղծված իրավիճակից կառավարութեան կազմում կատարվում են կառուցվածքային փոփոխութիւններ: 1918 թ. հուլիսի վերջին որոշվեց ստեղծել զառթականութեան գործերի վարչութիւն: Նորաստեղծ վարչութեան պետ նշանակվեց Մուշեղ Զաքարյանը, իսկ օգնական՝ Անուշավան Տեր-Միքայելյանը⁴: Այնուհետև արտաքին գործերի նախարարութիւնը առանձնացվեց ներքին գործերից: Արտաքին գործերի վարիչ դարձավ Աշոտ Մելիք-Յովսէփյանը, որը Միջկուսակցական Բյուրոյի ժամանակ

¹ Բժ. Ա. Բաբայան, Էջեր Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ 28-29:

² «Մշակ» 23 փետրվարի, № 42, 1919:

³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 60:

⁴ Եղիշե Իշխանյան, էջ 180:

նույնպես արտաքին գործերի վարիչն էր¹: Այդպիսով կառավարության կազմը համալրվեց և ձեռնամուխ եղավ երկրի առջև ծառայած ներքին ու արտաքին հարցերի կարգավորմանը:

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը և թուրքական հրամանատարությունը լավ հասկանալով, որ խարդավանքներով ու դիվանագիտական խաղերով չեն կարող տիրանալ Լեռնային Ղարաբաղին, փորձեցին հարցը լուծել զենքի ուժով: Այդ նպատակով ենվեր փաշայի հրամանով թուրքական մի զորագունդ է տեղափոխվում Գանձակ: Թուրքական մեկ այլ զորամաս 1918 թ. օգոստոսին անցավ Հազարու գետի կողմերը, նպատակ ունենալով Արցախը կտրել Սյունիքից, միաժամանակ թույլ չտալ, որ Շուշիի գունդը Գորիսից անցնի Լեռնային Ղարաբաղ: Նուրի փաշայի տրամադրության տակ դրվեց «վայրի դիվիզիան», որը նույնպես նախապատրաստվում էր ներխուժել Արցախ:

Այս ամենը զուգակցվում էր տնտեսական ճնշումներով: Լեռնային Ղարաբաղի հայությանը արգելվեց տնտեսական կապեր պաշտպանել Դաշտային Ղարաբաղի մահմեդական բնակչության հետ: Հայ գյուղացիներին արգելված էր վաճառել հաց, աղ և առաջին անհրաժեշտության ապրանքները, հատկապես պարենային:

Իրավիճակը Արցախում օրեցօր ավելի էր ծանրանում: 1918 թ. օգոստոսի 3-ին թուրքերը մտել են Բաքու և հաշվեհարդար տեսել հայության հետ, օգոստոսի 4-ին նույն ճակատագրին արժանացան Արցախը Ջանգեզուրի հետ կապող կարևոր հանգուցակետերից՝ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը:

1918 թ. սեպտեմբերի 4-ին մուսավաթական կառավարության կողմից Ղարաբաղի պարետի պաշտոնին նշանակված Իսմայիլ Հակկի բեկը գրավոր վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը՝ զենքը վայր դնելու և ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը²: 1918 թ. օգոստոսի 18-ին Նուրի փաշան կոչով դիմում է Ղարաբաղի հայությանը՝ խղձալ իրենց երեխաներին և ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը³: Նույն պահանջով Ղարաբաղի ժողովրդական կառավարությանն է դիմում Աղդամուն գտնվող Կովկասյան մուսուլ-

¹ Եղիշե Իշխանյան, էջ 180:

² Նույն տեղում, էջ 194:

³ «Մշակ», 18 փետրվարի, 1919:

մանական առաջին դիվիզիայի հրամանատար Ջամիլ Ջահիդ բեյը¹:

Այս օրախնդիր հարցը քննարկելու համար 1918 թ. սեպտեմբերի 7-10-ը Շուշիում հրավիրվեց արցախահայության երկրորդ համագումարը: Օրակարգի հարցերն էին. «ա) ճանաչել Ադրբեջանի իշխանութիւնը, բ) ենթարկելով իշխանութեան, վար դնել ու յանձնել զէնքերը, գ) զեկուցում կառավարութեան և անւանափոխութիւն»²: Համագումարը միաժամանակ մերժում է թուրքերի և Ադրբեջանի հանրապետության կառավարության անօրինական պահանջները: Լեռնային Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը հրաժարական տվեց: Համագումարը այն մերժեց և նորընտիր կառավարությունը թարմացվեց 5 հոգով: Միաժամանակ համագումարը որոշեց Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը վերանվանել Ղարաբաղի Հայոց ժողովրդական խորհուրդ: Համագումարը, որպես կառավարության անդամներ, ընտրում է հետևյալ անձանց.

1. Իշխանյան Եղիշե, նախագահ, դաշնակցական,
2. Եսայան Մելիքսեթ, քարտուղար, չեզոք,
3. Ջաքարյան Մուշեղ, գաղթականության կոմիսար, դաշնակցական,
4. Թումյան Հարություն, զինվորական կոմիսար, դաշնակցական,
5. Մուսայելյան Հայրապետ, ազատ, դաշնակցական,
6. Հովհաննիսյան Արա, պարենավորման կոմիսար, էսեռ,
7. Շահնազարյան Ռուբեն, լուսավորության կոմիսար, դաշնակցական,
8. Վարդապետյան Լևոն, արդարադատության կոմիսար, մենշևիկ,
9. Տեր-Միքայելյան Անուշավան, խնամատարության կոմիսար, դաշնակցական,
10. Քամայան Արշավիր, ֆինանսների կոմիսար, մենշևիկ,
11. Հովսեփյան Աշոտ, արտաքին գործերի կոմիսար, դաշնակցական³:

Փաստորեն նորընտիր կառավարության մեջ ընտրվեցին Ղարա-

¹ «Մշակ», 23 փետրվարի, 1919:

² Եղիշե Իշխանյան, էջ 200:

³ Եղիշե Իշխանյան, էջ 203-204:

բաղի քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները, որոնք նպատակ ունենին ի մի բերել երկրի ներուժը և համահավաք ձևով դիմակայել արտաքին թշնամիներին: Միայն բուլշևիկյան կուսակցության ներկայացուցիչները չընտրվեցին կառավարության կազմում: Բանը նրանում էր, որ վերջիններիս խորթ էին ազգային շահերն ու հիմնախնդիրները և համակված համաշխարհային հեղափոխության հայակործան մոլուցքով, նպատակ ունենին ներքին ու արտաքին հանգամանքները օգտագործել՝ երկիրը դարձնելու խորհրդային:

Արցախյան շարժման առաջին իսկ օրվանից սկսած, ցավոք սրտի, հայկական դիվանագիտությունը մշտապես ձգտել և ձգտում է դարաբաղյան հակամարտությունը լուծել ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքի հիման վրա, դրանով իսկ ժխտելով դարեր ի վեր արցախահայ պետականության գոյության փաստը:

Ազգերի ինքնորոշման իրավունքի շարահարումը կասկածանքի տակ է դնում արցախահայության տարածքային ամբողջականության սկզբունքը, որի մասին փաստերով խոսվեց վերևում: Գաղտնիք չէ, որ միջազգային խաղի կանոնները որոշել և շարունակում են որոշել մեծ տերությունները, այն պետությունները, որոնք հարյուրամյակներ շարունակ մայր երկրները ծաղկեցրել են ի հաշիվ գաղութների, որոնց եթե ոչ քաղաքական, ապա տնտեսական շահագործումը ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության կեղծ պատրվակով քողածածկած շարունակում և նոր որակներ են հաղորդում: Ակնհայտ է, որ այս պարագայում տարածքային ամբողջականության սկզբունքը գերակա է դառնում ազգերի ինքնորոշման միջազգային նորմից:

Բարեբախտաբար պատմական անցյալը և արցախյան շարժման ողջ ընթացքը մեզ հնարավորություն են տալիս դարաբաղյան քննութիւնը լուծել երկու սկզբունքների համադրմամբ: Եթե կուզեք տարածքային ամբողջականության սկզբունքը, որ այդքան շատ սիրում են շահարկել Ադրբեջանի քաղաքական և ոչ քաղաքական շրջանակները, օգտագործելով ամեն մի միջոցառում, անգամ սպորտային և որն էլ բարեհաջող կերպով մարսվում և միս ու արյուն է ստանում միջազգային դիվանագիտության խոհանոցում, այսօր առավել շատ շահեկան է հայկական կողմի համար: Պատճառաբանությունը շատ ակնհայտ է. դեռևս մինչև Ադրբեջանի 1918 թ. մայիսի 27-ի հանրապետության ասպարեզ գալը, արցախահայության ստեղծած պետական ինստիտուտները տնօրինում

էին Գանձակի մատույցներից մինչև Արաքսի ափերը ընկած, ինչպես հայ, այնպես էլ այլ ազգային փոքրամասնությունների, այդ թվում թաթարների (ադրբեջանցիների) բնակավայրերի տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքը:

Ինչ վերաբերում է ազգերի ինքնորոշման իրավունքին, ապա այստեղ հայ դիվանագիտության անելիքները նույնպես շատ են: Բանը նրանում է, որ ազգերի ինքնորոշման միջազգային այս նորմը հանրությանը երբեմն մատուցվում է որպես Ադրբեջանի «բարի կամեցողությունից» կախված հանգամանք, կասկածանքի տակ դնելով արցախահայության իրավունքը: Հայտնի է, որ ազգերի ինքնորոշման իրավունքից հավասարապես օգտվել են ինչպես Ադրբեջանի հանրապետության, այնպես էլ ԼՂՀ ազգաբնակչությունը:

ԽՍՀՄ փլուզումից առաջ խորհրդային Ադրբեջանը բաղկացած էր իրավահավասար երեք սուբյեկտներից՝ Նախիջևանի Ինքնավար հանրապետությունից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզից և բուն Ադրբեջանից:

ԼՂԻՄ ազգաբնակչությունը, օգտվելով ԽՍՀՄ սահմանադրության ընձեռած հնարավորությունից, 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց իր անկախությունը: Դա թշնամաբար ընդունվեց նախկին խորհրդային Ադրբեջանի սուբյեկտներից մեկի՝ բուն Ադրբեջանի կողմից և փորձ արվեց զինական ուժով հարևան երկրի տարածքների բռնագրավման ճանապարհով, ԼՂՀ արորիզեն բնակչության՝ հայության եղեռնի միջոցով հասնել իր հավակնոտ նպատակներին: Արցախահայության ազատագրական հայրենական պատերազմը, որը տևեց 1991-94 թթ., ավարտվեց թշնամու պարտությամբ: Ահա պատմական այս պարզ ճշմարտությունը ևս չենք կարողանում պատշաճին կերպով մատուցել աշխարհին:

Ընդհանրացնելով վերոհիշյալ փաստերն ու մեկնաբանությունները, կարելի է ասել, որ միջազգային իրավունքի բոլոր սկզբունքները գործում են մեր օգտին, պարզապես հայկական երկու հանրապետությունների իրավասու մարմինները և քաղաքական ուժերը անզիջում դիրքորոշմամբ և աշխատանքով պետք է պաշտպանեն մեր ազգային շահերը:

ԱՐՑԱԽԻ ԱՁԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Սովորաբար գրականության մեջ արցախյան ազատագրական շարժման մասին խոսելիս, հիմնական շեշտը դրվում է 20-րդ դարի վերջերին ծավալված պայքարի վրա: Որպես արցախյան դարավոր ազատագրական շարժման վերջին պոռթկում, անշուշտ անկախությունը վերականգնելու և մայր հայրենիքի հետ վերամիավորելու համար մղվող պայքարը ճակատագրական նշանակություն ունի Արցախի համար: Սակայն արցախյան ազատագրական պայքարի արմատները ձգվում են դարերի խորքեր, միահյուսվում հայ ժողովրդի դարավոր պայքարին:

Արցախը քրիստոնեության տարածման և հայկական մշակույթի զարգացման հնագույն օջախներից մեկն է: Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնադրված Ամարասի եկեղեցին ամբողջ Աղվանքի հոգևոր կենտրոնը դարձավ: Մեսրոպազի առաջին դպրոցներից մեկը, որը բացվեց Ամարասում, զորեղ միջոց հանդիսացավ քրիստոնեական կրոնն ու գաղափարախոսությունը Հայաստանում ամրապնդելու գործում:

Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի առաջին շարքերում էին Արցախի, Ուտիքի, Սյունիքի լեռնականները: Արաբական տիրապետության ժամանակ Արցախը բազմիցս ապստամբեց նրանց դեմ, գլխավորելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը 9-10-րդ դարերում: Արցախի, Խաչենի, Փառիսոսի, Դիզակի իշխանական տները Բագրատունիների հետ միասին պայքարում էին ազգային պետության վերականգնման համար: Ունենալով որոշ ներքին ինքնուրույնություն Արցախի հայ մելիքները 18-րդ դարի սկզբներից դարձան հայ ժողովրդի ազատագրական շարժման ղեկավարները:

Թուրքիայի կողմից հրահրվող լեռնայինների արշավանքների դեմն առնելու նպատակով Արցախում ստեղծվեց պայքարի միասնական կենտրոն, որը կոչվեց սզնախ: Մեծ սզնախի ղեկավարն Գանձասարի

կաթողիկոս Եսայի Դասան Ջալալյանը, փոքր սզնախինը՝ Ավան հայրապետը: Շուտով Արցախի բոլոր գավառներում ստեղծվում են սզնախներ, որտեղ համախմբում էին տվյալ վայրի բնակիչներին:

Սզնախները համաժողովրդական պայքար էին մղում թուրք-պարսկական զավթիչների դեմ: Ավելին, օգնության ձեռք էին մեկնում Դայաստանի մյուս վայրերում մղվող պայքարին: Այսպես, 1724 թ. Ավան հայրապետը օգնության հասավ Սյունիքի ազատամարտիկներին և համատեղ ուժերով պարսիկներին դուրս մղեցին երկրից:

Արցախի ազատագրական պայքարը նոր փուլ թևակոխեց կապված Ռուսաստանի արևմտյան քաղաքականության աշխուժացման հետ: Իր տիրապետությունն Արևելքում ամրապնդելու նպատակով, Ռուսաստանը մի կողմից սուտ խոստումներ էր տալիս հայ և վրաց ազատամարտիկներին, մյուս կողմից՝ գաղտնի պայմանագիր կնքում Թուրքիայի հետ: Այդ երկդիմի քաղաքականության հետևանքով պայքարի ելած հայ զինվորականությունը միայնակ մնաց պարսիկների և լեզգիների դեմ: Իսկ թուրքերը օգտվելով ռուսների հետ կնքած պայմանագրից մեծ ուժերով հարձակվեցին Դայաստանի վրա, գրավեցին ու ավերեցին երկիրը: Սակայն Ղարաբաղի վրա թուրքերի հարձակումը հաջողություն չբերեց: Նրանք հերոսաբար կռվում էին Թուրքիայի դեմ արգելափակելով նրանց հետագա առաջընթացը: Այս պայքարի ծանր օրերին մահացավ Եսայի Դասան-Ջալալյանը (1728), ապա հետագա դիմադրությունը համարելով անհուսալի՝ Ավան հայրապետը իր համախոհներով անցավ Ռուսաստան: Արցախից սկսված զանգվածային արտագաղթը շատ ծանր անդրադարձավ պայքարի վրա: Պարսկաստանի ուժեղացման հետ մեկտեղ շուտով սրվեցին թուրք-պարսկական հարաբերությունները, որի ժամանակ Ղարաբաղի մելիքները մերձեցան Նադիր շահի հետ և պայքարեցին թուրքերի դեմ: Արցախի մելիքների ակտիվ պայքարի շնորհիվ 1786 թ. պարտության մատնված Թուրքիան Արևմտյան Դայաստանը հանձնեց պարսիկներին:

Այդ ժամանակ Արցախում ձևավորվեց Խամսայի մելիքությունը, որը փաստորեն հայկական ֆեոդերատիվ պետության վերածման փորձ էր: Մելիք Եգանը, որը գլխավորում էր Խամսայի մելիքությունը, փաստորեն իր վրա էր վերցրել համահայկական հոգսերը, Խամսայի մելիքությունը տասնամյակներ շարունակ դարձավ հայ ազատագրական շարժման նոր հանգրվանը, ամրապնդելով՝ ազգային միավորման գաղափարը:

Դա դարձել էր ուժ, որը հաշվի էր առնում ժամանակի հայ հասարակական-քաղաքական գաղափարները: Ավելին, քանի որ հայերի մոտ պետական այլ միավորում չկար, ուրիշ երկրներ նույնպես, օրինակ Ռուսաստանը, հարաբերություններ էին հաստատում Խամսայի մեկիքության հետ, որը հանդես էր գալիս ամբողջ հայ ժողովրդի ամունից:

Ղարաբաղյան մեկիքների տասնամյակներ մղած հերոսական պայքարի շնորհիվ, հայ ազատագրական շարժումը կողմնորոշվեց դեպի Ռուսաստան: Դա տվյալ պայմաններում միակ ճիշտ կողմնորոշումն էր: Ղարաբաղի մեկիքների կիսանկախ վիճակը, նրանց ռազմական ուժը Արցախը դարձնում էր հայ ազատագրական շարժման հիմնական կենտրոնը: Արցախյան ազատագրական պայքարի պայմանները միաձուլվում էին հայ ազատագրական շարժման դարավոր ընթացքին:

Միջնադարյան Արցախը առաջավոր դեր էր խաղում նաև հայկական մշակույթի զարգացման գործում: Ամարասի, Գոշավանքի, Դադիվանքի, Գանձասարի, Շուշիի եկեղեցիներն ու ամրոցները հայ մշակույթի խոշոր կենտրոններ էին: Հայ մեկիքները տարբեր նվաճողներից գնում էին հայկական ձեռագրեր և կտակում եկեղեցիներին: Հայ ճարտարապետության զարգացման խոշոր լծակներ էին Արցախի միջնադարյան ճարտարապետական հուշարձանները: Պատահական չէ, որ հայոց հնագույն խաչքարը (853 թ.) գտնվում է Արցախում:

Ստանձնելով համահայկական ազգային ազատագրական պայքարի առաջնորդի դերը, արցախահայությունը ակտիվ մասնակցում էր հայերի դեմ ուղղված բոլոր պատերազմներին: Նրանք գործում մասնակցություն ունեցան հայդուկային շարժմանը: Նշանավոր հայդուկ դեկավարներից էին Ն. Դումանը, Թորգոմը, Գաբրիել Կաֆյանը, Ալ. Մանուկյանը և շատ ուրիշներ: Արցախցի հայդուկներն ու հայդուկապետը օրինակ էին ծառայում պայքարի տարբեր ոլորտներում: Արցախցիների ակտիվ մասնակցությունը Բաքվի հայ-թուրքական ընդհարումներին վճռական նշանակություն ունեցավ: Թալանի ծարավ թուրքերը հարձակվել էին հայկական բնակավայրերի վրա: Արցախի ազատամարտիկները Շուշիից մինչև Բաքու ու Գանձակ կազմակերպված ջոկատներով կռվում էին թուրքերի դեմ, կանխում նրանց վայրագությունները:

1917 թ. հոկտեմբերից հետո Անդրկովկասի քաղաքական քարտեզի վրա գծագրվեց թուրքերից կազմված մի նոր պետություն՝ Ադրբեջանը, որը ազգային, պետական ավանդույթներ չուներ: Այն ստեղծվեց պան-

թուրքիզմի շահանկատ ծրագրերից ելնելով: Այն հիմնականում ուղղված էր հայ ժողովրդի դեմ և առաջին հերթին Լեռնային Ղարաբաղի դեմ:

1918 թ. հուլիսին դաշնակցության կողմից հրավիրված համագումարը Լեռնային Ղարաբաղը հռչակեց անկախ և ընտրեց Ղարաբաղի հայոց Ազգային խորհուրդ, որը լիազորված էր պաշտպանելու արցախահայության անկախությունը: Սակայն թուրքական մեծաքանակ զորքերը մտան Ղարաբաղ և չնայած ժողովրդի հերոսական դիմադրությանը գրավեցին Շուշին: Արցախցիների կազմակերպած հերոսական պայքարի շնորհիվ՝ 1918 թ. հոկտեմբերին Մսմնա գյուղի մոտ ջախջախեցին թուրքերին:

Համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո Անդրկովկասում նրանց փոխարինեցին անգլիացիները, որոնք նույնպես պաշտպանում էին Ադրբեջանի շահերը: Արցախցիները փոքրաթիվ ուժերով շարունակում էին դիմադրություն ցույց տալ թուրքերին ու անգլիացիներին: 1920 թ. ապրիլի 25-ին Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը, կազմեց Արցախի ժամանակավոր կառավարություն, միաժամանակ որոշելով «հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը, որպես նրա անբաժան մաս»: Սա արցախահայության դարավոր երազանքն էր: Սակայն դեպքերի հետագա զարգացումը նպաստավոր չեղավ արցախյան ազատագրական պայքարի համար: 1920 թ. Ադրբեջանում հաստատված խորհրդային կարգերը նոր արհավիրքներ բերեցին Արցախին: Բոլշևիկ դարձած թուրքերը այժմ փորձում էին իրենց տարածքային հարցերը լուծել Ռուսաստանի օգնությամբ: Իսկ վերջիններս ամեն ինչ անում էին դաշնակցական Հայաստանի տարածքները պոկելու և խորհրդային Ադրբեջանին հանձնելու համար:

1920 թ. մայիսին 11-րդ բանակը մտավ Շուշի, և Արցախը հայտարարվեց Ադրբեջանի մաս: Ռուսաստանը դիմում էր ամենաստոր քայլերի Արցախը մասնատելու, Ադրբեջանին միավորելու համար:

1921 թ. հունիսի 5-ին, Կովբյուրոյի ապօրինի որոշմամբ, Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Մոսկվան Ադրբեջանի նավթի համար զոհաբերեց հայ ժողովրդի շահերը: Արցախահայությունը չընդունեց այդ որոշումը և առաջին օրվանից պայքարեց դրա դեմ: Իսկ Ադրբեջանի իշխանությունները պատժիչ ջոկատներ տեղադրեցին Արցախում և լայն

պայքար սկսեցին հայերին այնտեղից արտամղելու համար:

Երկար պայքարից հետո որոշում ընդունվեց (1923 թ.) Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ ստեղծելու մասին: Ադրբեջանի իշխանությունները անջատեցին Լաչինի շրջանը՝ ստեղծելով Քուրդիստանի գավառ, որով փաստորեն ԼՂԻՄ-ն լիովին մեկուսացվեց, զրկվեց Հայաստանի հետ կապ ունենալուց: Արցախից անջատվեցին և Ադրբեջանին միացվեցին մի շարք հայկական գյուղեր (միայն Գյուլիստանի գավառից 107 գյուղ): Այդ վերածնունդների արդյունքում պատմական Արցախի 11,5 հազար ք. մ. տարածքից մնացել էր 4,4 հազար ք. մ.:

Արցախում ամրապնդելով իրենց իշխանությունը և ԽՍՀՄ-ից ստանալով բազմակողմանի օժանդակություն Ադրբեջանի ղեկավարները սկսեցին վարել բացահայտ հակահայկական քաղաքականություն: 1920-ական թթ. անցնելով նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ)՝ գյուղացիությանը պետք է հողաբաժիններ տրվեր, ադրբեջանցիներն Արցախում մոտ 5 անգամ շատ հող ստացան, քան՝ հայերը: Վերջիններիս զգալի մասը մնաց հողազուրկ: Նույն խտրական և հալածական քաղաքականությունն էր տիրում նաև հետագայում: Գյուղի կոլեկտիվացման շրջանում Բաքվի իշխանությունները ԼՂԻՄ-ում գյուղացիական լավագույն տնտեսությունների ջարդ կազմակերպեցին: Կուլակաթափման անվան տակ ունեզրկեցին միջակ գյուղացիության մեծ մասին, իսկ որևէ դժգոհություն հայտնողները աքսորվում էին հեռավոր շրջաններ: Հայկական շրջանները մի քանի անգամ քիչ մեքենաներ և գյուղատնտեսությանը սպասարկող նյութեր էին ստանում, քան ադրբեջանական շրջանները: Պետության կողմից չէին վերանորոգվում ջրանցքները, առուները, հողաշինարարական որևէ աշխատանք չէր տարվում: Քոչվոր թուրքերի հոգեբանությամբ ամեն միջոցի դիմում էին հայերին երկրամասից արտաքսելու համար: Արցախցիների լուռ դժգոհությունը երբեմն պռոթվումներ էր ունենում, որոնք որակվում էին որպես նացիոնալիզմ և դաժան հալածվում Ադրբեջանի իշխանությունների կողմից: Այդ քաղաքականությունը ցայտուն դրսևորվեց հայրենական պատերազմի տարիներին: Օգտագործելով հարմար պահը՝ պատերազմի զորահավաքը հիմնականում կատարվում էր հայերի հաշվին: Լեռնային Ղարաբաղից պատերազմի տարիներին զորակոչվել է 45 հազար մարդ (բնակչ. 1/3), այն դեպքում, երբ ադրբեջանցիներից զորակոչվել է 17-ից մեկը: Սակայն հայ ժողովրդի զավակները պատերազմին հերոսաբար

մասնակցեցին, կանխելով Թուրքիայի Անդրկովկասի վրա հարձակման վտանգը, որը կարող էր նոր եղեռնի տեղիք տալ: Արցախը պատերազմին տվեց 3 մարշալ, 30-ից ավելի գեներալ և 24 Խորհրդային Միության հերոս: Ադրբեջանի ոչ մի մարզ չէր կարող մրցել Արցախի հետ:

Ադրբեջանի իշխանությունները ավելի լկտիացան հետպատերազմյան շրջանում: 1950-70 թթ. տնտեսությունները խոշորացնելու պատրվակով հայկական գյուղերից խլվեցին ընդարձակ տարածություններ և հանձնվեցին ադրբեջանցիներին: Արցախի բարձրադիր գոտիներում ստեղծվեցին ժամանակավոր ամառանոցներ (յայլաղներ), որոնք շուտով դարձան մշտական գյուղեր: Գողի պես քայլ առ քայլ բարձրանալով հայկական լեռները, ադրբեջանցիները սկսեցին սահմանափակել հայկական գյուղերի տարածքները, ճանապարհները, ջրերը: Այս բոլորի հետևանքով հայերը հաճախ մեկնում էին արտագնա աշխատանքի, նույնիսկ աշխատում էին ադրբեջանական գյուղերում: Իշխանություններն ամեն ինչ անում էին հայկական գյուղերի վիճակը ծանրացնելու համար: 1986 թ. Ադրբեջանի մեկ շնչին ընկնում էր 473 ռ. կապիտալ ներդրում, Նախիջևանում՝ 392, իսկ ԼՂԻՄ-ում՝ 181 ռուբլի: Ծանր էր հայկական դպրոցների վիճակը: Դրանք մեծմասամբ 20-30-ական թթ. կառուցված շենքեր էին, որոնք չէին վերանորոգվել և պիտանի չէին ուսումնական աշխատանքների համար: Մինչև 1970 թ. մարզում հայկական դպրոց չէր կառուցվել: Չկային մանկավարժներ, դասագրքեր: Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականության մասին, հետագայում ԼՂԻՄ-ում ստեղծված հատուկ կոմիտեի նախագահ Ա. Վոլսկին գրել է. «Երկրում շրջելիս ես չեմ հանդիպել այնպիսի ավերածությունների, մարդկանց ճակատագրի հանդեպ այնպիսի արհամարհանքի, ինչպես Լեռնային Ղարաբաղում»: Այդ բոլորի նպատակը մարզի հայաթափումն էր: Ադրբեջանը հարուստ փորձ էր ձեռք բերել Նախիջևանում:

Ադրբեջանի իշխանությունների հակահայկական գործունեության հետևանքով տարեցտարի նվազում էր Արցախի հայ բնակչությունը: Ավելին, Հայաստանի իշխանությունների թողտվության պատճառով, նրանք մոլախոտի պես տարածվել էին նաև սահմանամերձ շրջաններում: 1979 թ. մարդահամարի տվյալներով Ամասիայի, Վարդենիսի, Կապանի, Կրասնոսելսկի, Մեղրու, Ազիզբեկովի շրջաններում, ադրբեջանցիները կազմում էին բնակչության մեծամասնությունը: Սա հայկական

իշխանությունների անհեռատես և վտանգավոր քաղաքականության արդյունքն էր:

Արցախն Ադրբեջանին բռնակցելու առաջին իսկ օրվանից բնակչու-թյունը պայքարում էր դրա դեմ: Դեռևս 1920 թ. այդ պայքարը ղեկավարելու համար ստեղծվում է «Ղարաբաղը Հայաստանին» կոմիտե, որը բոլոր շրջաններում ուներ իր բջիջները: Արցախի լեռներում պատասպարվում էին մեծ թվով հայ վրիժառուներ, որոնք փորձում էին կանխել ադրբեջանցիների վայրագությունները: 1930 թ. Շուշիում ձերբակալվեց 17 զինագործ, առգրավվեց 6 թնդանոթ, 30 գնդացիր և այլ զինամթերք: Ժողովուրդը լուռ պատրաստվում էր իշխանությունների դեմ հանդես գալու: Խնածախի բնակիչների պատամբությունն այնպես էր վախեցրել իշխանություններին, որ այն կանխելու համար Բաքվից զորք բերվեց:

Ադրբեջանի իշխանությունները նորանոր միջոցների էին դիմում մարզի բնակչությանը վախի մեջ պահելու համար: Նրանք ժամանակ առ ժամանակ մարզի ղեկավարներին մեղադրում էին նացիոնալիզմի մեջ, հեռացնում աշխատանքից և նրանց հետ բռնաճնշումների ենթարկում հարյուրավոր ակտիվիստների:

Որոշակի նպատակներ հետապնդելով՝ 1949 թ. Հայաստանից մեծ քանակությամբ ադրբեջանցիներ տեղափոխվեցին Ադրբեջան: Սակայն նոր յուրացվող տարածքներում նրանց բնակեցնելու փոխարեն տեղափոխեցին Ղարաբաղի հայկական գյուղերում, ստեղծելով լարված իրավիճակ: Բարեբախտաբար ադրբեջանցիները շուտով հեռացան այդ վայրերից, և հիմնականում վերադարձան Հայաստան:

Ադրբեջանի իշխանությունների հայահալած քաղաքականության դեմ հանդես էին գալիս հասարակության բոլոր խավերը: 1962 թ. Ստեփանակերտից 300 աշխատողների ստորագրությամբ բողոք-նամակ ուղարկվեց Մոսկվայի համապատասխան մարմիններին, որտեղ նկարագրված էր մարզի անմխիթար վիճակը և խնդրում էին շտապ միջոցներ ձեռնարկել: 1965 թ. Արցախի 13 ղեկավար աշխատողներ նամակով դիմեցին ԽՍՀՄ ղեկավարներին, որտեղ կոնկրետ փաստերով ցույց էին տրվում հայահալած քաղաքականության հետևանքները: Նամակ - բողոքներ էին ուղարկվում նաև Երևանից և այլ հայաշատ քաղաքներից: Տասնյակ պատվիրակներ էին մեկնում Մոսկվա, որոնք հետագայում հալածվում էին ադրբեջանցիների կողմից: Ժողովուրդը բռնցքավորվում

էր, Արցախյան ազատագրական շարժումը նոր փուլ թևակոխեց 1980-ական թթ. կեսերին երբ ԽՍՀՄ-ում հռչակվեց «վերակառուցման» քաղաքականությունը: ԼՂԻՄ ժողովուրդը ոտքի ելավ խորհրդային իշխանության տարիներին կրած մարդկային նվաստացումների դեմ, ԼՂ բոլոր շրջաններում ցույցեր ու միտինգներ տեղի ունեցան, տեղական խորհուրդները որոշումներ ընդունեցին Արցախը Հայաստանի հետ վերամիավորելու համար: 1988 թ. փետրվարի 20-ին համանման որոշում ընդունեց Արցախի մարզխորհրդի նստաշրջանը: Դա նոր փուլ նշանավորեց արցախյան ազատագրական շարժման մեջ: Այդ որոշումները տասնամյակների, եթե ոչ դարերի, ընթացքում արցախցիների ազատագրական պայքարի պոռթկումն էր, մի պայքար, որը մղվեց ոչ միայն Արցախի ազատագրման համար, այլ ամբողջ հայ ժողովրդի ազատագրման, ազգային պետականության վերականգնման համար, խորակունքներից բխող և դարերի ընթացքում ձևավորվող այդ համազգային պայքարը չէր կարող ցանկալի արդյունքի չհասնել: Դրա վկան է Արցախի անկախության 15-ամյա գոյությունը, նրա տնտեսական և մշակութային ձեռքբերումները:

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՅԼԵՐԸ ԼԳԻՍ-Ը
ՀՍԽՅ-Ի ՀԵՏ ՎԵՐԱՄԻՎՎՈՐԵԼՈՒ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ
(1945-1985 ԹԹ.)**

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը ՀՍԽՅ-ի հետ վերամիավորելու խնդիրը խորհրդային ամբողջ ժամանակաշրջանում մտահոգել է ոչ միայն հայ հասարակությանը, այլև Հայաստանի խորհրդային իշխանություններին, գտնվել նրանց ուշադրության կենտրոնում: Արտահայտելով հայ ժողովրդի կամքը խորհրդային Հայաստանի ղեկավարությունը քննադատաբար է վերաբերվել Ղարաբաղը ՀՍԽՅ-ի կազմից դուրս թողնելու ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմանը, իսկ հարմար առիթի դեպքում էլ չի հապաղել խնդիրը բարձրացնել ԽՍՀՄ միութենական իշխանությունների առջև, հանդես գալով որպես պահանջատեր:

Նորաստեղծ խորհրդային Հայաստանի առաջին կառավարությունը՝ ՀՍԽՅ ժողկոմխորհը, որը կազմավորվել էր 1921 թ. մայիսին, արդեն հունիսի 12-ին կայացրած որոշումով պաշտոնապես հայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղը այսուհետ հանդիսանում է ՀՍԽՅ անբաժան մասը»¹: Իսկ Ղարաբաղյան հարցի վերաբերյալ ՌԿ/Բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի ոչ օրինական և անարդարացի որոշումը խորհրդային Հայաստանի իշխանությունները քննադատեցին անմիջապես: Արդեն հուլիսի 16-ին ՀԿ/Բ/Կ Կենտկոմը միանգամայն սխալ և անբավարար համարեց Կովկասյան բյուրոյի որոշումը²: Խիստ քննադատություն հնչեց նաև 1922 թ. հունվարի 26-29-ը երևանում տեղի ունեցած Հայկոմկուսի առաջին համագումարում: Պատվիրակները

¹ «Խորհրդային Հայաստան», հունիսի 19, 1921:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:

Ժանր մեղադրանքներ հնչեցրին Կենտկոմի հասցեին, Ղարաբաղի հարցում վճռականություն և հաստատականություն չդրսևորվելու համար¹:

Այնուհանդերձ, արցախահայության և Խորհրդային Չայաստանի ղեկավարության հաստատական և հետևողական ջանքերի շնորհիվ երկու տարվա համառ դիմադրությունից հետո Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին նահանջել և 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ²: Դրա շնորհիվ էր նաև, որ արցախահայությունը Խորհրդային տարիներին միասնաբար դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց:

Ստալինյան բռնապետության պայմաններում, երբ այլախոհության յուրաքանչյուր դրսևորում դաժանորեն պատժվում էր, Խորհրդային Չայաստանի ղեկավարությունը սատարելով արցախահայությանը, փորձում էր կենտրոնական իշխանությունների առջև բարձրացնել ԼՂԻՄ-ը Մայր Չայրենիքի հետ վերամիավորելու հարցը, սակայն անարդյունք:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, 1945 թ. գարնանը Խորհրդային Չայաստանի ղեկավարությունը, արձագանքելով Չամասփյունքյան կազմակերպությունների կոչերին, ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև բարձրացրեց Թուրքիայի կողմից բռնազավթած հայկական տարածքները (Կարս, Արդահան, Սուրմալու) Խորհրդային Չայաստանի հետ վերամիավորելու խնդիրը: Վերջինիս արդարացի լուծման անհրաժեշտությունը հիմնավորվում էր ոչ միայն պատմական արդարությունը վերականգնելու առումով, այլև աշխարհով մեկ սփռված հայության հայրենադարձությունը դեպի Խորհրդային Չայաստան կազմակերպելու համար: Այս կապակցությամբ Չայաստանի ղեկավարությունը չանտեսեց և հերթական անգամ բարձրացրեց նաև Լեռնային Ղարաբաղը Չայաստանի հետ վերամիավորելու հարցը: 1945 թ. նոյեմբերին Չայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Չարությունյանը ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինին ուղղված նամակում իրավացիորեն նշում է, որ դրա անհրաժեշտությունը բխում է ոչ միայն պատմամշակութային, տնտեսական և

¹ ՀԱԱ, ց. 2, գ. 2, ք. 13, 23:

² Нагорный Карабах в 1918-1923 гг. Сб. документов и материалов, Ер., 1992, с. 669-670.

քաղաքական տեսակետից, այլև Ղարաբաղի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունից¹: Սակայն Հարությունյանի կողմից բարձրացված խնդրի շուրջ շահագրգիռ քննարկումներ այդպես էլ չծավալվեցին և այն հերթական անգամ դուրս մղվեց օրակարգից: Նման ճակատագրի արժանացավ նաև Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների հարցը:

Սակայն դա չընկճեց Հայաստանի ղեկավարությանը, երկու տարի անց, 1947 թ. աշնանը, վերջինս կրկին բարձրացնում է ղարաբաղյան խնդիրը, այս անգամ այն կապելով Հայրենիքի ճամփան բռնած տասնյակ հազարավոր սփյուռքահայերի տեղավորման հրատապ խնդրի հետ: ՀԿ/ԲԿ Կենտկոմի քարտուղար Ջավեն Գրիգորյանի հետ միասին Գրիգոր Հարությունյանը Մոսկվայում հանդիպում է Ստալինի հետ, լուրջ և համոզիչ փաստարկներով հիմնավորում հարցը դրական լուծելու անհրաժեշտությունը: Հայաստանի ղեկավարության համառության շնորհիվ խնդիրն այս անգամ թեև քննարկման առարկա է դառնում, սակայն Ստալինի և Ադրբեջանի ղեկավարության խորամանկ հակառաջարկով տեղափոխվում է այլ հարթություն: Ընդառաջելով Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության համատեղ ներկայացրած խնդրանքին, ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1947 թ. դեկտեմբերի 23-ի և 1948 թ. մարտի 10-ի որոշումներով արտոնում է Հայկական ԽՍՀ-ից դեպի Ադրբեջանական ԽՍՀ ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը: 1948-1953 թթ. ընթացքում Հայաստանից Ադրբեջան տեղափոխվեց շուրջ 45.000 մարդ, սակայն նրանց մոտ 20 տոկոսը շատ շուտով դարձյալ վերադարձավ Հայաստան²:

1949 թ. Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հերթական անգամ փորձում է քննարկման առարկա դարձնել ղարաբաղյան խնդիրը, Գ. Հարությունյանը նորից դիմում է Ստալինին: Սակայն Բերիայի և Բաղիրովի ջանքերով հարցի քննարկումն ավելորդ և ոչ նպատակահարմար է համարվում³:

Այսպիսով պատմական տվյալ ժամանակաշրջանում թուրք-ադրբեջանական հակահայկական գործունեությունը կրկին արդյունավետ էր,

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 034, գ. 27, թ. 74:

² Տե՛ս, Վիրաթյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Եր., 2001, էջ 83-87:

³ Տե՛ս, Սարումյան Ն., Քաղաքական և մշակութային իրավիճակը Լեռնային Ղարաբաղում 1960-1980-ական թթ., Ստեփանակերտ, 2001, էջ 13:

և հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելու հարցը դարձյալ չստացավ իր արդարացի լուծումը:

Արցախի խնդիրը ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև հերթական անգամ հրապարակայնորեն բարձրացնելու համար նպաստավոր իրավիճակ ստեղծվեց 1960-ական թթ., երբ խորհրդահայությունը ազգային զարթոնք էր ապրում: Նույն ժամանակաշրջանում արցախահայությունը նոր թափով զանգվածային շարժում ծավալեց Արցախը խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով: 1962-1963 թթ. ընթացքում ԼՂԻՄ-ի և հարակից հայկական շրջանների շուրջ 2500 հայերի ստորագրությամբ բողոքագիր դիմում պատրաստվեց և ուղարկվեց ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչևիին: Ներկայացնելով հարցի նախապատմությունը, Ադրբեջանի կազմում արցախահայության թշվառ գոյությունը և Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների խտրականության քաղաքականության, բողոքագիրները պահանջում են «անհապաղ վճռել ԼՂԻՄ-ը և հարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ԽՍՀ-ի մեջ վերամիավորելու կամ ՌՍՖՍՀ-ի կազմի մեջ մտցնելու հարցը»¹:

Խորհրդային Հայաստանում նույնպես արձագանքեցին արցախահայության պահանջին: 1965 թ. Մեծ Եղեռնի 50-ամյա սգո տարելիցի կապակցությամբ ԽՍՀՄ պատմության մեջ աննախադեպ բազմահազարանոց հավաքներում առաջ քաշվեց նաև Ղարաբաղը Հայաստանի կազմում ընդգրկելու պահանջը:

1965-1966 թթ. ինչպես Արցախից, այնպես էլ Երևանից, հայկական այլ շրջաններից բազմահազար ստորագրություններով նամակներ ուղղվեցին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ, Նախարարների խորհուրդ, ԽՄԿԿ Կենտկոմ՝ Ղարաբաղյան հարցը հայ ժողովրդի օգտին լուծելու պահանջով: Դրանցից պետք է առանձնացնել Լեռնային Ղարաբաղի ու խորհրդային Հայաստանի հայ մտավորականների, գիտության և մշակույթի գործիչների կողմից 1965-1966 թթ. ընթացքում Մոսկվա ուղղված բազմահազար ստորագրություններով նամակները: ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին 1966 թ. օգոստոսին Երևանից ուղարկված նամակում, որը ստորագրել էին շուրջ 2. 000 հայ մտավորականներ՝ Մ. Սարյանի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Ե. Քոչարի և այլ հայ

¹ «Սփյուռք», Բեյրութ, 1963, դեկտեմբերի 31:

մեծերի գլխավորությամբ, մասնավորապես նշվում էր, որ «Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսա-ծնով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով: Ղարաբաղի պատմությունը՝ Հայաստանի պատմությունն է՝ հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եվ քանի որ գոյություն ունի հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից»¹:

Խնդրից անմասն չմնաց նաև ՀՍԽՖ ղեկավարությունը: Արձագանքելով հայության կոչերին, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի և ՀՍԽՖ Նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի ստորագրություններով 1966 թ. սեպտեմբերի 30-ին Մոսկվա, ԽՄԿԿ Կենտկոմ ուղղված ընդարձակ և բովանդակալից նամակում Հայաստանի ղեկավարները հենմելով պատմական անժխտելի փաստերի վրա, հիմնավորում են Լեռնային Ղարաբաղը (ինչպես նաև Նախիջևանը) Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկելու «ծայրահեղ անհրաժեշտությունը»: «Մեր կարծիքով,- նշվում է փաստաթղթում,- նպատակահարմար կլիներ քննարկել և դրական լուծել Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի փոխանցման հարցը...

Սակայն, եթե Հայկական ԽՍՀ-ին Նախիջևանի վերադարձնելը ժամանակակից փուլում կապված է հայտնի դժվարությունների հետ, ապա ՀՍԽՖ-ին Լեռնային Ղարաբաղի վերադարձնելը չի կապված որևէ դժվարությունների հետ և կարող է իրականացվել անցավագին:

Հնարավոր անցանկալի հակազդեցության երկյուղները հիմնազուրկ են, քանի որ հարցը չի դրվում Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի ինչ-որ մասի օտարման-խլման մասին, այլ ինքնավար ազգային մարզի միութենական հանրապետության միաձուլման, որոնցում բնիկ բնակչությունը միատեսակ-հայկական է:

Այդ հարցի դրական լուծումը կունենա բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն...»²:

Այսպիսով, հետստալինյան ձնհալի տարիներին հայ ժողովրդի և Խորհրդային Հայաստանի ղեկավարության ձայնը Արցախի խնդրում առավել հաստատական դարձավ, և պատահական չէր, որ ԽՄԿԿ Կենտ-

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 1-2:

² Նույն տեղում, գ. 65ա, թթ. 1-9:

կոմի քարտուղարությունը 1966 թ. հանձնարարեց Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին քննարկել ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու հնարավորությունը և առաջարկություններ ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ: Սակայն Խորհրդային բարձրաստիճան գործիչների ադրբեջանամետ դիրքորոշման պատճառով խնդրի արդարացի լուծումը դարձյալ ձախողվեց¹:

Ադրբեջանի կենտրոնական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ի նկատմամբ շարունակվող և տարեցտարի սաստկացող հակահայկական քաղաքականությունը 1970-ական թթ. ընդվզումների և ազգային ինքնագիտակցության նոր պոռթկումներ առաջացրեց ինչպես հայ հասարակության, այնպես էլ Խորհրդային Հայաստանի ղեկավարության մոտ:

1976-1977 թթ. ԽՍՀՄ-ում նոր Սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկումներ ծավալվեցին: Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, ամբողջ հայ ժողովուրդը Ղարաբաղի խնդիրը դարձյալ բարձրացրեցին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների առջև: Տարբեր մակարդակի դիմումների, հուշագրերի, պահանջագրերի, տեղեկատու և այլ փաստաթղթերի հեղեղ տեղաց դեպի Մոսկվա:

Մոսկվան կարծես ստիպված էր տեղի տալ, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի նիստի արձանագրության մեջ հիմնավորելով հայության պահանջը՝ հետևյալ արդարացի ձևակերպումը մտցվեց. «Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն է միացվել Ադրբեջանին: Ընդ որում՝ հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը և տնտեսական շահերը: ... Հարկավոր է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ-ի հետ: Այդ ժամանակ ամեն բան իր օրինական տեղը կընկնի»²: Սակայն հերթական անգամ Ադրբեջանի և Խորհրդային ազդեցիկ ղեկավար մի շարք գործիչների ջանքերով ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն մերժեց առաջարկությունը և հարցը հանեց օրակարգից:

1985 թ. գարնանից ԽՍՀՄ-ում ծավալված ժողովրդական գործըն-

¹ Перестройка и национальные отношения, Ер., 1989, с. 40.

² Տե՛ս, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի թիվ 61 արձանագրություն:

թացները նոր հույսեր արթնացրին հայության և Խորհրդային Հայաստանի ղեկավարության մոտ դարաբաղյան խնդիրը արդարացի լուծելու համար: Հասունանում էր համայն հայության համաժողովրդական ազգային-ազատագրական պայքարի վճռական փուլը, որն էլ ավարտվեց պատմական հաղթանակով: Դրա վառ ապացույցն է ներկայիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն ազգային-ազատագրական հերոսական պայքարի շնորհիվ ձեռք է բերել իր անկախությունը, կազմավորել ժողովրդավարական պետություն, որի թիկունքին կանգնած է տարածաշրջանի ամենամարտունակ բանակը՝ ԼՂՀ պետականության և անկախության, արցախահայության բնականոն զարգացման ամենավճռորոշ երաշխիքը:

ԱՐՑԱԽՆ ԸՍՏ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ

Ուրարտական թագավորներից միակը Ռուսա I-ն էր (մ. թ. ա. 735-713 թթ.), որն արչավանք է ձեռնարկել դեպի Արցախի տարածաշրջան: Նա դրա մասին արձանագրություն է գրել տվել Սևանա լճի հարավային ափի մի ժայռի վրա՝ Ծովինար գյուղի մոտ¹:

Այդ վավերագրում նշված է, որ Վանի թագավորը ծովի այս կողմի (այսինքն՝ հյուսիս-արևմտյան) երկրները նվաճելուց հետո նույն ծովի այն կողմում (այսինքն՝ հարավ-արևելյան) իրեն է հպատակեցրել տասնինը երկիր: Դրանք են՝ Գուրքումելի, Շանատուաինի, Տերիուիշաինի, Ռիշուաինի, Թարզուաինի, Արիաինի, Ջամանի, Իրքիմաինի, Ելաինի, Երիելտուաինի, Աիդամանիունի, Գուրիաինի, Ալզիրանի, Պիրուաինի, Շիլաինի, Ուիդուաինի, Ատեզաինի, Երիաինի և Ազամերունինի:

Ուրարտական գրավոր աղբյուրներում այլ վկայություններ չկան այդ երկրների աշխարհագրական դիրքն ու սահմանները որոշելու համար: Ուստի, ինչպես ընդունված է տեղագրական վերականգնողական ուսումնասիրություններում, մենք դիմում ենք այդ երկրներն ընդգրկող տարածքի, այսինքն՝ Արցախի հետագայի տեղանունների մեջ դրանց համարժեքները բացահայտելուն:

Նշված ցուցակի *Թարզուաինի* երկրի անվանման մեջ **ինի** մասնիկն ուրարտերենի ածանց է: Իսկ Թուրզուա-ն հիշեցնում է Արցախի պատմական Թառիջ/ճ բնակավայրի անունը (այժմ՝ Թալիշ):

Պետք է նկատի ունենալ, որ ուրարտական սեպագրերում ջ հնչյուն արտահայտող նշան չկա: Օտար տեղանունների այդ բաղաձայնը գրիչները վավերագրել են զ ունեցող սեպագիր վանքերի միջոցով:

¹ **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, № 389, стр. 1-14.

Օրինակ՝ Ջավախք երկրի անունը նրանք գրել են Zabab ձևով:

Իսկ Թարգուա ձևը հին հայերենի սեռական հոլովի վերջավորությամբ է: Այդ երկիրը կոչվել է Թառիջ կենտրոնի անունով:

Թառ անունով կազմված (այստեղ այն հանդես է գալիս հայ. **իճ** բարբառային **իջ** ածանցով) մենք ունենք մի շարք հին տեղանուններ: Օրինակ՝ Թառ գյուղը Վանի նահանգում, Թառ՝ Ամասիայի շրջանում, Թառիկ՝ Խարբերդի նահանգում, Թառու՝ Երզնկայի գավառում, Թառուց՝ Հասանկալայի շրջանում և այլն:

Այս հին տեղանունները հաստատում են, որ Թառիճ/ջ բնակավայրի անունը պարունակում է հայերենի թառ արմատը, որը բացի «հավի կան թռչունների թառելու, հանգչելու տեղ» իմաստից, ինչպես նշում է Հր. Աճառյանը, նշանակում է նաև «մարդկանց բարձր տեղ ելնել, նստելը»:

Այդ տեղանվան իմաստը մատնացույց է անում, որ որ դա կրող բնակավայրը գտնվել է բարձր տեղում:

Վերը նշված Ռուսա Լ-ի ցուցակի Պիրուաինին երկրի անունը նույնպես պարունակում է -ուա սեռական հոլովի վերջավորությունը, որից հետո գրիչն ավելացրել է ուրարտերենի -ինի ածանցը: Այն Մուշի բարբառում պահպանվել է -վա ձևով: Օրինակ, Շուշվա երկիր, Լոռվա երկիր, Խաչվա երկիր (Բուլնիս-Խաչին):

Պիրուա - տեղանունը մենք հակված ենք նույնացնելու Ջանգելանի շրջանի Պիրինք բնակավայրի հետ, որի մեջ նույնպես առկա է **պիր** արմատը: Դա, կարծում ենք, հին հայկ. **բիր** հնդեվրոպական արմատն է, որը Ղարաբաղի բարբառում դարձել է **պիր** ու նշանակում է «գավազան, մահակ» նաև «փորելու գործիք» (հմտ. բիր-բրիչ): Տեղանվան իմաստը հուշում է, որ տվյալ տարածքում զբաղվել են հողագործությամբ: Այդ արմատը հաճախ է հանդիպում պատմական Հայաստանի այլ տեղանուններում: Օրինակ՝ Բիրալի (-ալի ածանցով)՝ գյուղ Արարատի շրջանում, Բիրան (-ան ածանցով)՝ Դիարբեքիրի շրջանում, Բիրան՝ Մուշի գավառում, Բիրան՝ Բալուի գավառում, Բիրի՝ Վանի գավառում, Բիրիք՝ Խարբերդի նահանգում և այլն: Հետևաբար, Պիրուա երկիրը Ջանդելանի շրջանն է:

Շիլաինի երկրի անունը, կարծում ենք, կարելի է նույնացնել Շուշիի գավառի Ալիինք բնակավայրի հետ: Ինչպես նշում է Գ. Բ. Ջահուկյանը՝ հայերենի որոշ բառերի **ս** հնչյունը ուրարտերենում հանդիպում ենք շ գրությամբ: Օրինակ՝ հայ. սան «կաթսա» և ուրարտ. san «աման», հայ.

ծես և ուրարտ. *šisuli*, հայ. աստեն և ուրարտ. *ištini*, հայ. մեսիմ «նվիրել» և ուրարտ. *mese* «տուրք» և այլն:

Սիլա - անունը պարունակում է հայ. սիլ «խաղողի հնձան» արմատը և սեռ. հոլովի -ա ցուցիչը, որն առկա է նաև Ղարաբաղի բարբառում (հմմտ. Շիրակա երկիր, Ղարսա երկիր, Երևանա երկիր բարբառային ձևերը): Այդ արմատը հանդիպում է Շատախի Սիլվան բնակավայրի անվան մեջ՝ բաղադրված վան «բնակատեղի» արմատի հետ: Դրա հոմանիշ հնձան արմատից են կազմված Վանի գավառի Զնձան, Մարտակերտի շրջանի Զնձան, Անձևացյաց գավառի Զնձանիս բնակավայրերի անունները:

Ալզիրանիմ հիշեցնում է Արցախի պատմական Զարջ/ճլանը*: Այդ գավառն ըստ Ղ. Ալիշանի գտնվել է հետագայի Վարանդի կամ Դիզակի տեղում: Ինչպես վերը նշվեց, ուրարտական սեպագրերում օտար տեղանունների մեջ եղած *ջ* հնչյունը վավերացված է *z* պարունակող նշաններով: Զարջլան տեղանվան մեջ, ինչպես հաստատում է նրա հին Ալզիրանի ձևը, տեղի է ունեցել *ր* և *լ* հնչյունների դրափոխություն: Դրա տարբերակ Զարճլանը Ղարաբաղի բարբառի հետևանքն է: Իսկ բառասկզբի *հ-ն*, որպես թույլ հնչյուն ուրարտացու կողմից կարող էր չընկալվել, մանավանդ որ նրա լեզվում *հ-ն* չի եղել:

Երիա - երկրի անվան մեջ, կարծում ենք, առկա է հայ. *երի* արմատը, որն ունի նաև «առաջ», «լանջ» իմաստները: Այն հանդիպում է Աղիովիտի Երիշատ, Վանի նահանգի Երիք, Սիսիանի Երիստան և այլ տեղանունների մեջ: Այն հանդիպում է նաև Տավուշի շրջանի Երիծոր գյուղի անվան մեջ: Զնարավոր է, որ Երիա - երկիրը հենց Տավուշի շրջանն է: Նշված արմատը հանդես է գալիս հայ. սեռականի -ա վերջավորությամբ:

Արիա - երկրի անվան մեջ կարելի է առանձնացնել հայ. *հ.* - ե ծագումով արի «քաջ» արմատը: Այդ նույն բառից են կազմված Մուշի գավառի Արի, Դիարբեքիի նահանգի Արիս (-ս հոգնակի հայցականի վերջավորությամբ) գյուղերի և Պարսկահայքի Արիսի գավառի անունները:

* Զալջրան տեղանունը, որը հետագայում դարձել է Զարջլան, կազմված է հայ. հնդեվր. հալ-հալվել, որը Զր. Աճառյանը կապում է հեղուկ «թափվել, խառնվել» բառի հետ և ջուր արմատներից: Տեղանունը նշանակում է «առատ կամ միախառնվող գետերով տարածք»: Այդ բառերը հանդիպում են մի շարք հայկական հին տեղանունների մեջ՝ Սյունիքի Զալիծոր (հալ+ի+ծոր), Դիարբեքիի Զալաք կամ Զալե, Զալս, Զալիալ գյուղի անունները Վանի գավառում և այլն:

Այդ արմատի քաջ հոմանիշից կազմված են Վասպուրականի Քաջբերունիք գավառի և Ախալցխայի Քաջաց քաղաքի անունները: Այդ երկրի տեղադրման համար, գուցե, հիմք կծառայի Գետաբեկի շրջանի Արիղըրան գյուղի անունը, որի արի արմատի վրա ադրբեջանցիներն ավելացրել են իրենց լեզվի դըրան «ջարդող» բառը:

Ջամանի երկիրը, կարծում ենք, կարելի է նույնացնել Ջողից քիչ հյուսիս գտնված այժմ ավերակ Ջաման բնակավայրի և դրա շրջանի հետ: Այդ տեղանունը կազմված է հին հայ. *զ* - նախդիրից սաստկականի իմաստով, ամալ «լցնել» բայի ամ *հ*. - *ե*. արմատից և *-ան* հոգնակերտ ածանցից:

Այդ արմատը հանդիպում է Վասպուրականի ԱՄք, Քղիի Ամառիճ, Ջևանշիրի գավառի Ամանյան, Գետաբեկի շրջանի Ջամանլի և այլ հին տեղանուններում: Դրա հոմանիշ *լի* արմատից է կազմված Բիթլիսի գավառի Լի բնակավայրի անունը: *Ջ* - սաստկական նախդիրը հանդիպում է Վանի նահանգի Ջակոս (ակոս արմատից) և Ջերվանդավան բնակավայրերի անուններում:

Արդամանի - երկրի անունը, կարծում ենք, կազմված է, հին հայ. *այդ* և *ամ* արմատներից՝ *-անի* ածականակերտ ածանցով:

Այդամ անունով մի գյուղ գտնվել է Էրզրումի նահանգի Կարաքիլիսայի գավառում: Հանդիպում են Այդի՝ գյուղ Դիարբեքիրի շրջանում, Այդի ավերակ բնակավայր Ծաղկածորի մոտ, Այդին՝ բնակատեղի Արդվինի շրջանում և այլն, որոնց անունների մեջ առկա է այդ արմատը: Վերջինս օգտագործված է «դեմ, դիմաց» իմաստով: Այդ հոմանիշով են կազմված Թալինի շրջանի Դեմ, Մարտունու դեմեր (կիկլոսյան ամրոց), Վանի նահանգի դեմին բնակավայրերի անունները:

Այդամանի - անունը, հնարավոր է, նշանակում է «Դեմի, դիմացի լանջերով լի»:

Ելա - երկրի անվան ուշ ժամանակների համարժեքը մենք չենք հանդիպում հետագայի Արցախի տեղանունների մեջ: Սակայն, կարծում ենք, այն նույնպես հայկական տեղանուն է՝ կազմված հայ. *ել* «դիք, զառիվեր» արմատից ու հանդես է գալիս սեռական հոլովածուով: Այն հանդիպում է Հին Բայազետի Ելան (*-ան* ածանցով), Պարսկահայքի Ելի (գավառ), Ալավերդու շրջանի հին Ելդաղդաղ «սար» բառը թուրքերն են ավելացրել դրա վրա) և այլ տեղանուններում:

Երիեւտուա - երկրի անունը նույնպես կազմված է հայերենի ար-

մատներից: Ինչպես վերը նշվեց, **երի** արմատը նշանակում է «լանջ», իսկ ելը՝ «դիք, գառիվեր»: Իսկ տու «տալ» արմատը հանդիպում է Սևանի ավազանի Նորատուս (հոգնակի հայոց –ս վերջավորությամբ) և Ալիշտալի և շատ այլ հին հայկական տեղանունների մեջ:

Ի դեպ, վերջինս ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է Ալիշտու ձևով, որի մեջ առկա է հայ. ալիս «ալիք» բառը:

երիելտուա - տեղանունը վկայված է հին հայ. սեռական հոլովի -ա վերջավորությամբ ու նշանակում է «դիք լանջերով հարուստ երկիր»:

Շանատուա - երկրի անունը, կարծում ենք, կազմված է հայ. սան «կաթսա» (նախապես «գոգավորություն») և վերը նշված տու արմատներից **ա** հոդակապով և սեռական հոլովի -ա վերջավորությամբ: Վերևում նշվեց (Շիլա - երկրի առիթով), որ ուրարտացիները հայկական տեղանունների և բառերի ս հնչյունը իրենց արձանագրություններում փոխարինել են շ-ով:

Սան բառով են կազմված Բիթլիսի նահանգի Սան, Վանի Սանաց, Սղերդի Սանե, Թունանյանի շրջանի Սանային (=Սանահին) բնակավայրերի անունները:

Այսպիսով, Արցախը և դրան հարակից տարածքները՝ ընկած Քուռ և Արաքս գետերի միջև, ինչպես ցույց են տալիս ուրարտական սեպագիր աղբյուրներում վկայված այդ տարածաշրջանի երկրների անունների ստուգաբանությունները, դեռևս մ. թ. ա. 8-րդ դարում բնակեցված են եղել հայերով:

Կարծում ենք, մեր այս եզրակացությունները հաստատվում են նաև ուրարտական թագավոր Ռուսա I-ից (մ. թ. ա. 735-713 թթ.) ավելի քան մեկ դար հետո Դարեհի պարսկական կայսրության բաժանման մասին (մոտ մ. թ. ա. 520 թ.) Յերոդոտոսի «Պատմության» մեջ պահպանված տվյալներով:

Ըստ պատմիչի վկայության Հայկական Լեռնաշխարհի արևմտյան մասը այդ կայսրության 13-րդ նահանգն էր, իսկ արևելյան հատվածը՝ 18-րդն էր:

Վերջինիս մասին Յերոդոտոսի աշխատության մեջ գրված է. «Մատինների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու

հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»¹:

Մատիեններ անունը, ինչպես պարզել են մասնագետները, Միտան-նի (այսինքն՝ Խուրրի) տերմինի հին հունական դրափոխված ձևն է: Մատիենները ըստ հին հույն պատմիչի բնակվում էին Վանա և Ուրմիա լճերից անմիջապես հարավ՝ Մեծ Ջաբ գետի ավազանում: Այն ընդգրկել է սեպագիր աղբյուրներում հիշատակված Կադուխի (=Կադեստոն), Ուրուատրի (=Արարադա երկիր՝ Կորդուք), Կունենու (վերջինից անմիջապես արևելք), Խաբխի (Կորդաքից անմիջապես հյուսիս) խուրրիական երկրները:

Ալարոդները բնակվում էին Հայկական Լեռնաշխարհի արևելյան տարածքներում, իսկ սասպերները՝ ճորոխի ավազանում:

Սակայն արևելքում 18-րդ նահանգը Դարեհի կայսրության ո՞ր վարչական միավորներին էր սահմանակցում:

Դրա մասին Հերոդոտոսի աշխատության մեջ գրված է. «Ակբատանան, Մեդիայի մնացյալ մասը, պարկանները և օթոկորյունները վճարում էին չորս հարյուր հիսուն տաղանդ». սա տասներորդ նահանգն էր:

Մեդիան, որը հետագայի Ատրոպատենեն է՝ Ատրպատականը, Երասխ գետով է սահմանակից եղել Հայաստանի հետ: Դա հաստատվում է հետագայի շատ այլ վկայություններով: Ուրեմն Հայաստանի արևելյան հատվածը՝ 18-րդ նահանգը Երասխ գետով սահմանակից է եղել Մեդիայի հետ:

Այնուհետև Հերոդոտոսի աշխատության մեջ կարդում ենք. «Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ». սա տասնհինգերորդ նահանգն էր²:

Տվյալ Սակերը, որոնք Ստրաբոնի հիշատակած Սակասենեի՝ Կիրովաբադի շրջանի բնակիչներն էին, կասպերի հետ ներկայացնում էին 15-րդ նահանգը: Սակասենեն Քուռ գետով սահմանակից է եղել այդ գետի, Կովկասյան լեռների, Վրաստանի և Կասպից ծովի միջև ապրող հետագայի լեզգիական ցեղերի հետ, որոնցից մեկը վկայված է կասպեր անունով: Կարելի է եզրակացնել, որ Դարեհի վարչական բաժանման ցուցակում բոլոր լեզգիական ցեղերը հանդես են գալիս դրանցից մեկի՝

¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1986:

² Նույն տեղում:

Կասպից ծովի արևմտյան տարածքների բնակիչ կասպերի անունով:

Այս բոլորից հետևում է, որ 18-րդ նահանգը՝ Արևելյան Հայաստանում Քուռ գետով սահմանակից է եղել կասպերի և արևելքում սակերի հետ: Ուրեմն Արցախի տարածքը մ. թ. ա. 6-րդ դարում մտած է եղել 18-րդ նահանգի՝ Արևելյան Հայաստանի կազմի մեջ, որն իր հերթին հաստատում է, որ մ. թ. ա. 6-րդ դարի երկրորդ կեսին Արցախի տարածքը նույնպես շարունակում էր հայաբնակ լինել և մտնում էր Հայաստանի կազմի մեջ:

**ԳԱՆՁԱՍԱՐԻ 1714 ԹՎԻ ԳԱՐՏՆԻ ԺՈՂՈՎԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Հայոց պետականության իրավական և սահմանադրական զարգացումը՝ պայմանավորված բնականոն երևույթներով, հնագույն ժամանակներից խարսխված է եղել բնիկ օրենքների վրա:

Մովսես Խորենացին Հայկազունների գահավորության մասին գրել է. «բնիկ մախնույ սերունդք ի թագաւորութեան հասանեն յաստիճան», «ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք», «զմերս ազգի ածից զկարգ թագաւորացն, զի մերոյ աշխարհիս բնիկք պսակաւորք արք այնոքիկ, զորոց զանուանսն ի ներքոյ դրոշմեսցուք»¹: Հայոց «բուն բարքերը» հիշատակել է նաև Ազաթանգեղոսը²:

Հայոց պատմության ընթացքում ստեղծվել են ներքին և արտաքին հարաբերություններին վերաբերող վավերագրեր, որոնց բնույթը և բովանդակությունը պայմանավորված էր երկրի քաղաքական և սոցիալական վիճակով ու աշխարհաքաղաքական ընթացքով:

Հազարամյակների խորքից եկող Մեծ Հայքի թագավորության սահմանադրական ավանդույթները, ներառվելով կանոնական իրավունքում տեղ գտած դրույթների շրջանակի մեջ,³ շարունակվեցին նաև հայ Արշակունիների քաղաքական ասպարեզից հեռանալուց (428 թ.) հետո: Հայոց Արևելից կողմերում վերականգնված Հայոց թագավորությունը օրենսդրական ճանապարհով ամրացնելու գաղափարով, Հայկազունի-Սիսակեան Առանշահիկ տոհմից սերած Վաչագան Բարե-

¹ Մովսես Խորենացի, էջ 65-67:

² Ազաթանգեղոս, 839:

³ Կանոնագիրք Հայոց, Ա, աշխատ. Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964:

պաշտ արքան, ըստ Մովսես Կաղանկատվացու, ստեղծեց «Սահմանադրութիւն կանոնական»-ը¹: Այն ընդունվեց Աղուեմի կանոնադիր ժողովում որպէս Հայոց թագավորության գրավոր Սահմանադրություն, որին պատմագիտության մեջ իրավացիորեն մեծ տեղ է տրվել²: Հայ ժողովրդի կյանքում Հայ եկեղեցին պատմական հանգամանքներով դեկավար դիրքում էր, ուստի սահմանադրական նորմերը, ընդգրկելով աշխարհիկ ոլորտներ, շեշտադրվում էին եկեղացական կանոնադրությամբ և լույս աշխարհ եկան Հայոց կաթողիկոս Հովհաննես Օձնեցու «Կանոնագիրք Հայոցը», Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը», իրենցով նշանավորելով Հայոց վաղ միջնադարի և հետագա՝ Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական պետության ժամանակների սահմանադրական զարգացումները:

18-րդ դ., երբ օրակարգի հարց էր դարձել Հայոց աշխարհը թուրք-պարսկական լծից ազատագրման խնդիրը, հայ սահմանադրական մտքի արտահայտություններն եղան Գանձասարի 1714 թ. գաղտնի ժողովի *Որոշումը* և 1773 թ. Հակոբ Շահամիրյանի «Որոգայթ փառացը»՝ ապագա անկախ Հայկական Հանրապետության Սահմանադրությունը, որը ոգով համահունչ էր Գանձասարի ժողովի Որոշմանը: «Որոգայթ փառացը» հռչակում էր. «Միաբան եղիցի ժառանգութիւն ազգին Հայոց... և պահպանեսցի տունն Հայոց ըստ Օրինօքն Հայաստանեայց մինչև յաւիտեան: ...Ամենայն բնութիւն մարդոյ ծնեալ ի յերեսս երկրին Հայաստանեաց ունի պատիւ անուանիլ զինքն Հայ... Պատուելի մեզ է սովորութիւնն Աստուածպաշտութեան Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյն. . .»³:

«Որոգայթ փառացը» գրվել է հայրենիքից հեռու, որպէս Հայաստանի ապագա Սահմանադրություն, իսկ 1714 թ. *Որոշումը* ազատագրական պայքարի ընդերքում ստեղծված սահմանադրական փաստաթուղթ էր: *Որոշումը* ներկայացված է Ապրես Բեկնազարյանցի անունով

¹ Մովսես Կաղանկատուացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 89-94:

² Բ. Ուլուբաբյան. Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 174: Կիմ Ղահրամանյան, Վլադիմիր Հովհաննիսյան. 1500-ամյա Հայկական Սահմանադրությունը. Ընդունման հանգամանքները և նշանակությունը, Երևան, 1999, էջ 17:

³ Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց (1773), Թիֆլիս, 1913, էջ 140-142:

հայտնի «Գաղտնիք Ղարաբաղի» երկուն, որի հեղինակն իրականում Մակար Բարխուտարյանցն է¹: *Որոշման* առանցքումն է Արցախի նշանակությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարում:

Նախկինում՝ Հայոց ամբողջական պետության գոյության ժամանակաշրջանում, այսպես կոչված «դաշնակիցը» լինում էր հակամարտող տերություններից մեկը և համապետական կամ առանձին նախարարական խմբավորումների քաղաքական կողմնորոշումը բխում էր միջպետական հարաբերությունների բնույթից, իսկ 17-րդ դարի վերջերից և հետագայում՝ քաղաքական դաշնակիցների փնտրտուքի և դրանով իսկ՝ քաղաքական կողմնորոշման աշխարհագրությունը խիստ ընդլայնվեց: Սկսեց մշակվել օտարի օգնությամբ և հովանավորությամբ նվաճող տերություններից ազատագրվելու և Հայկական պետությունը վերականգնելու անպտուղ տեսությունը: Մինևույն ժամանակ, ավելի քան հինգ հազարամեայ փորձով՝ սեփական ուժին ապավինելու Հայկյան ազատատենչ ոգին անմար էր և հայ քաղաքական մտքի համոզմունքն էր, որ հայրենիքը օտարի լծից կարելի է ազատագրել միայն զենքի ուժով: Սակայն, աշխարհաքաղաքական վիճակի թելադրանքով սեփական ուժին ապավինելու հրամայականին գումարվել էր օտարի միջոցով ազատագրվելու պատրանքը: 18-րդ դ. հայ իրականության մեջ մշակվող ազատագրական պայքարի հետագա ընթացքը կանխորոշվում էր սեփական ուժին ապավինելու և օտարից օգնություն ստանալու

¹ Քննելով «Գաղտնիք Ղարաբաղի» երկի մասին նյութերը, Պավել Չոբանյանը գրել է. «Գիտակցելով Արցախի պատմության խոր ուսումնասիրության և ազատագրական շարժումների հանգամանալից նկարագրության անհրաժեշտությունը և ոգևորուած Բաֆֆու դեռևս 1882 թ. «Մշակում» տպագրված «խամսայի մելիքությունները» աշխատության թողած մեծ տպավորությամբ ու նաև հենվելով վերջինիս վրա, Մակար Բարխուտարյանցը 1886 թ. Ապրես Բեկնազարյանցի անունով հրատարակում է «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունը... Աշխատության քննադատությամբ հանդես են եկել Բաֆֆին և Լեոն... Մ. Բարխուտարեանցը 1888 թ. հանդես է եկել «Քննադատություն քննադատությանց» վերնագրով գրքույկով, որտեղ շրջանցելով «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակի հարցը և մեկ առ մեկ պատասխանելով Լեոյի առարկություններին (Լեո. Վե՛պ, թէ պատմութիւն (Ղարաբաղի անցեալը Ապրես Բեկնազարեանցի գրչի տակ), Շուշի, 1887, էջ 3-4), գրեթէ անխտիր պաշտպանում է «Գաղտնիք Ղարաբաղում» շարադրուած դրոյթները...: Մակար Բարխուտարյանցը... միանգամայն վստահ է նրանում նկարագրված իրադարձությունների ճշգրտությանը, արտատպել է որոշ խոշոր հատվածներ իր «Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ... » (տես՝ «Աղուանից երկիր եւ դրացիք. Արցախ» հատորը կազմեց Պաւել Չոբանեանը, Երևան, 1999, էջ 8):

հույսի միախառնման քաղաքականությամբ:

Օտարի վրա հույս դնելը համարելով ստրկամտություն և, արտահայտելով սեփական ուժին ապավինելու գաղափարը, «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի հեղինակը գրել է. «Օտարը միշտ օտար է. օտարն ունի միշտ իւր կեղծ քաղաքականութիւնը... Օտարներից օգուտ սպասելն յիմարութիւն է: Ամեն կառավարութիւն ունի իր քաղաքական շահերը եւ միշտ ձգտում է յօգուտ իւր ընդլայնել այդ շահերը... Աւելի լաւ է որ մենք մեր յոյսը մեր վերայ դնենք, մեր ոյժերը միացնենք եւ միացեալ ոյժով կարգի դնենք մեր գործերը... Սնտոի յոյսերով այլոց դրանց առջեւ դեգերելն անօգուտ ժամավաճառութիւն է»¹:

Ինչպես դիպուկ նշել է Րաֆֆին, Գանձասարի վանքի «Հայոց ժողովի» մեջ էին հայ մելիքները և հոգևորականները հավաքվում խորհրդի: Մեծ գրողը հատուկ ընդգծել է այդ ժողովների կարևորությունը. «Իրենց դիտաւորութիւնների մասին խորհելու եւ կարգադրութիւններ անելու համար գաղտնի ժողովներ էին կազմում Գանձասարի վանքում, նոյն ժամանակուայ Եսայի կաթողիկոսի նախագահութեամբ»²:

Հայոց ապստամբության նախաշեմին, Գանձասարում՝ Եսայի կաթողիկոսի հրավիրած ժողովին, ըստ «Գաղտնիք Ղարաբաղի», մասնակցում էին Խաչենի մելիք Գրիգոր Ջալալյանը,³ Գյուլիստանի Մելիք-Յովսեփ Մելիք-Աբովյանցը, Վարանդի մելիք Հուսեյն Ա, Ջրաբերդի մելիք Եսայի Մելիք-Հայկազյանցը և Դիզակի մելիք Ավան Բ: Մասնակիցների մեջ էին նաև մելիքազուններ, զորավարներ, եպիսկոպոսներ, ավագերեցներ և գյուղապետներ: Գանձասարի ժողովի ընդունած *Որոշման* առաջին տասը կանոնները վերաբերում էին հայության միասնու-

¹ «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 42-43, 48:

² **Րաֆֆի**. Երկերի ժողովածու, հ. 9, Խամսայի մելիքութիւնները, Երեւան, 1987, էջ 430-433:

³ Րաֆֆին գրել է. «Մուլքի բէկը վախճանուեցաւ 1716 թուին եւ թողեց երկու որդի, երեքը կոչուում էր մելիք Գրիգոր, կրտսերը կոչուում էր մելիք Ալլահվերդի: Մելիք Գրիգորը խելացի, ճարտարախօս մարդ էր... Ջանազան քաջագործութիւններից յետոյ նա հեռացաւ աշխարհից եւ, մտնելով Գանձասարի վանքը, վարդապետ ձեռնադրուեց: Մելիք Գրիգորից յետոյ նրա եղբայր մելիք Ալլահվերդին վարեց Խաչենի իշխանութիւնը, իսկ այդ վերջինի մահից յետոյ՝ իր որդի Մելիք բէկը, որը ութն որդիներ թողեց: Նրա որդիներից մէկն էր Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսը... » (Նույն տեղում, էջ 427):

թյան պահպանության գաղափարով՝ Ս. Էջմիածնի¹ շուրջ համախմբմամբ կաթողիկոսական աթոռակալությանը, ուսյալ հոգևորականներով եպիսկոպոսական վիճակների համալրմանը և վանականության ներքին կյանքին:

«Ա. Աղուանից (այսինքն Գանձասարի) կաթողիկոսն կ'ընտրուի ժողովրդեան ազատ իրաւունքով եւ կը հաստատուի Ս. Էջմիածնի կաթողիկոսի կոնդակով:

Բ. Աղուանից կաթողիկոսն, ըստ դարաւոր սովորութեան, պէտք է հպատակի Էջմիածնի կամքին, հայութեան միութեան կապը պահպանելու համար:

Գ. Եթէ Ջալալեան տոհմի եպիսկոպոսներից եւ ազգից չգտնուի արժանաւորագոյն կաթողիկոսացու, դրսից ընտրելու է:

Դ. Որդիաբար հնազանդիլ Աղուանից կաթողիկոսին եւ սիրով ընդունիլ նորա հոգեւոր կարգադրութիւնները:

Ե. Իւրաքանչիւր մելիքի գաւառի վիճակաւոր եպիսկոպոսն կամ վարդապետն կ'ընտրուի տեղական ժողովրդից եւ մելիքից, եւ սոցա վկայաթղթով հանրագրութեամբ կը ներկայացուի Աղուանից կաթողիկոսին:

Զ. Ամեն վիճակաւոր եպիսկոպոս իրաւունք ունի ձեռնամուխ լինել միայն իւր վիճակի կարգադրութեան եւ ոչ այլոց թէ՛ ձեռնադրութեամբ եւ թէ՛ որելիցէ գործերով:

Է. Եթէ ամեն գաւառում հարկաւոր են վարդապետ, քահանայ, սարկաւազ եւ դպիր՝ վիճակաւոր եպիսկոպոսներն նախ պարտաւոր են գրով կանխաւ զեկուցանել Աղուանից կաթողիկոսին եւ ապա ձեռնադրել նորա հրամանաւ:

Ը. Ամեն եպիսկոպոս պէտք է հոգայ իւր վիճակի եւ իւր վանքի լուսաւորութեան եւ որչափ կարելի է ձեռնադրել ուսեալները եւ ոչ թէ տգէտները:

Թ. Վանահայրերի ընտրութիւնն կախուած է միաբանութիւններից եւ Աղուանից կաթողիկոսի հաստատութիւնից:

Ժ. Յանցաւոր եպիսկոպոսների պատիժներն կախուած են կաթողիկոսից, իսկ միաբան վարդապետաց, սարկաւազաց եւ դպրացն՝ վանա-

¹ Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցի (1706-1714) սատարում էր Եսայի կաթողիկոսին:

հայր եպիսկոպոսներից, եւ քահանաներինն՝ վիճակաւոր եպիսկոպոսից. բայց այս ամենն զգուշաւոր քննութիւններից վերջն»:

Հաջորդ կանոնախումբը վերաբերում էր Ջալալյանների գահերեցութեամբ Գանձասարը՝ պատերազմական իրավիճակով թելադրված պատասխանատվության բարձրացմամբ, որպէս ազատագրական պայքարի ռազմավարության կենտրոնի և մելիքական զինվորական կանոնների հաստատմանը.

ԺԱ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան մելիքները եւ թէ՛ յայտնի եւ թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամեն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամեն գնդապետ իւր զօրավարին եւ ամեն զօրական իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իւրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իւրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պէտք է հաղորդէ միւսներին:

ԺԴ. Իւրաքանչիւր մելիք, եթէ կը յանդգնի իւր գաւառի որոշեալ սահմաններից դուրս գալ եւ ուրիշ մելիքների իրաւունքը բռնի յափշտակել՝ կը պատժուի միւսների (մելիքների) ժողովով որոշած պատժով եւ ժՌ (10. 000) թուման տուգանք կը տուժէ մելիքաց (ընդհանուր) գանձարանին եւ կը տուժէ առանձին՝ վնասուած մելիքի վնասը:

ԺԵ. Ամեն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

Հատուկ կանոնով ռազմական օրենքի ուժ էր տրվում հայրենիքի և եկեղեցու հանդէպ կատարվող հանցանքի պատժի սահմանմանը, վավերացումը թողնելով հոգևորականներից և մելիքներից կազմված ատյանին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը

պատժուի կրօնական եւ մեղքական խառն ժողովոյ որոշած պատժով:

Ընտանիքը համարվում էր երկրի կայունութեան երաշխիքը.

ԻԱ. Մեղքներից ով որ կը յանդգնի, իւր օրինաւոր ամուսնոյն վերայ, ուրիշ ապօրինի կին պահել, հասարակութեան տալ վատ օրինակ եւ զայթակղութիւն եւ թշնամանել եկեղեցւոյ օրէնքը՝ այնպիսին անխնայ կը պատժուի արդար վրէժխնդրութեամբ:

Ամուսնությունը թույլ էր տրվում ազգային պատկանելության սահմաններում՝ արտաքինից եկող որևէ միջամտություն կասեցնելու հրամայականով.

ԺԸ. Ո՛չ այլազգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

Տասնիններորդ կանոնով, չէր բացառվում, անհրաժեշտության դեպքում արտաքին ուժերի հետ համագործակցությունը, սակայն միայն սահմանադրական ատյանի կողմից վավերացվելուց հետո.

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Քսաներորդ կանոնով Հայրենյաց շահը սահմանվում էր բարձրագոյն արժեք, որը բոլորն անխտիր պետք է գիտակցեին:

Ի. Իւրաքանչիւր մեղք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից եւ օգուտներից:

22-րդ կանոնով յուրաքանչյուր մեղքից պահանջվում էր, որ պատերազմի ժամանակ ինքը անձամբ գլխավորեր իր զորքը:

Վերջում սահմանվում էին *Որոշման* մեջ ամրագրված կանոնները խախտողների նկատմամբ կիրառելիք պատիժները.

ԻԳ. Մեզանից ով որ կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արիւնահեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մեղքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն»:

Ժողովից հետո մասնակիցները ստորագրում են բնագիրը և արտագրված հինգ օրինակները, որոնցից մի մի օրինակ մեղքները վերցնում են իրենց հետ, համբուրում են Գանձասարի Ս. Յովհաննէս

Մկրտիչ Եկեղեցու Ս. քենը և գնում են իրենց կալվածքները¹:

Հայրենյաց արժեքների գիտակցման հրամայականով՝ Հայրենիքը պաշտպանելու և առաջիկա պայքարում համախմբվելու վճռականությամբ Գանձասարում 1714 թ. հրավիրված գաղտնի ժողովի *Որոշումը* կարևոր ներդրում է Հայոց ազատագրական ծրագրերի մշակման և սահմանադրական մտքի պատմության մեջ:

¹ «Գաղտնիք Ղարաբաղի», էջ 210-214:

**XIX դարի երկրորդ կեսի եւ XX դարասկզբի Արցախի
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հազարամյակների պատմությունն ունեցող Արցախի ինքնատիպ մշակույթը՝ տեղական երանգավորմամբ, ազգային նույն օրինաչափություններով ու առանձնահատկություններով անցել է երկար ու բեղուն ճանապարհ՝ հարուստ մարդկային մտքի ու ձեռքի ստեղծագործ աշխատանքի, ազատատենչ ոգու փայլատակումներով: Պատմական տարբեր ժամանակներում Արցախի մշակույթը ծառայել է հայ էթնոսի պահպանման և շրջակա, հաճախ ավելի հզոր, էթնիկական հանրություններից նրա պաշտպանության գերխնդրին: Աստիճանաբար ձևավորվել է հայության այդ հատվածի մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթի ավելի բնորոշ գծեր և դրանք հաղորդել հաջորդ սերունդներին: Լինելով հանուր հայության մշակույթի մի օղակ, Արցախի մշակույթը սնունդ է առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն էր բերում համազգային մշակույթի գանձարանին: Հետաքրքիր է, որ Մեծ Հայքի այս նահանգի բնակչությունը, իր քաղաքական ու մշակութային շրջահայաց գործիչների ջանքերի շնորհիվ, պատմական ամենածանր պայմաններում իսկ կարողանում էր ետ չձնալ համազգային հոգևոր կյանքի ընթացքից: Դա նկատելի է, հատկապես քննության ենթակա ժամանակաշրջանում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատմաքաղաքական խառնակ ու ծանր պայմաններում Արցախի մշակութային կյանքը շարունակեց հարատևել անհամաչափ առաջընթացով՝ իհարկե մինչև 19-րդ դարի սկիզբը:

Դարասկզբին տեղի ունեցող բախտորոշ իրադարձությունները Արցախի ժողովրդի պատմության մեջ նշանավորեցին մշակութային կյանքի էական փոփոխություններով և շրջադարձերով, որոնք որակապես փոխեցին երկրամասի հոգևոր ու նյութական մշակույթի բնույթն ու

կերպարը: Այդ շրջադարձները վճռական դեր խաղացին Արցախի ժողովրդի կյանքում, հիմք դնելով նոր ժամանակի պահանջների համահնչուն աշխարհայեցողությանը և մշակույթին՝ իր բոլոր դրսևորումներով:

Պատմական զարգացման նոր ժամանակներում Արցախի մշակույթը հանդես է եկել ոչ թե որպես իր մեջ ներառված բաղադրիչների պարզ հանրագումար, այլ բարդ ու ճկուն մի համակարգ, որում ճշգրտորեն ըմբռնվել են դարաշրջանի խնդիրները և բավարարվել ժամանակի և միջավայրի պահանջումները: Արցախի ժողովուրդը կարողացավ կարճ ժամանակում յուրացնել դարի շունչը, քայլ առ քայլ վերգտավ ու գիտակցեց իր նախնիների ստեղծած մշակութային արժեքների ոգին և, հենվելով դրա վրա, կերտեց նոր ժամանակի պահանջներին համահնչուն իր մշակույթը:

Նոր դարի առաջին կեսին ստեղծված Արցախի մշակույթը կարևոր օղակ եղավ իր դարավոր մշակույթի պատմության շղթայում և նոր որակ ու նոր իմաստ հաղորդեց նրան, միաժամանակ հիմք դառնալով դարի երկրորդ կեսին նրա փայլուն առաջընթացի համար:

Այսպես, 19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարի սկիզբը, կարևոր շրջան են Արցախի մշակույթի բազմադարյան պատմության ընթացքում: Այդ շրջանի մշակույթի զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ, որոնք թելադրված էին Արցախի ժողովրդի կյանքի յուրահատուկ պայմաններով:

19-րդ դարի 50-60-ական թվականներին Հայաստանում, ինչպես նաև նրա անբաժան հատվածում՝ Արցախում սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտում կատարվող տեղաշարժերը լուրջ փոփոխություններ առաջացրին երկրամասի հասարակական-քաղաքական և հոգևոր մշակութային կյանքում: Դա սերտորեն կապված էր Ռուսաստանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման հետ, արդեն ֆեոդալական հասարակարգի ընդերքում վաղուց ձևավորված կապիտալիզմի պայմաններում միայն Անդրկովկասը կարողացավ ֆեոդալիզմից անցնել կապիտալիզմին¹:

Կապիտալիստական հարաբերությունները հայ իրականության մեջ առավել նկատելի դրսևորումներ ունեին նաև հայկական աշխարհա-

¹ Տե՛ս, Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հր., հ. 6, Երևան, 1981, էջ 750:

սփյուռ գաղթօջախներում, ապա 19-րդ դարի կեսերից այդ հարաբերություններն սկսում են թափանցել Հայաստան և նրա մասը կազմող Արցախ, և էական փոփոխություններ կատարում երկրի սոցիալ-տնտեսական կյանքի, ազատագրական պայքարի, հասարակական մտքի ու մշակույթի զարգացման բնագավառում:

Այդ տասնամյակում Արցախի մշակույթի առաջընթացին նպաստեց արևմտահայ, ինչպես նաև արևելահայ իրականությունում ձևավորված հասարակական-քաղաքական հոսանքների պայքարը, որոնցից յուրաքանչյուրը (կղերահետադիմական, լիբերալ-բուրժուական հոսանք)¹ մշակույթի զարգացումը ձգտում էր դնել իր համար ցանկալի հունի մեջ:

Արցախահայությունը սերտորեն կապված էր ինչպես հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ծավալված առաջադեմ լուսավորական գաղափարների, այնպես էլ Ռուսաստանի և այլ երկրների հասարակական-քաղաքական անցուդարձերի հետ, որը բարերար ազդեցություն ունեցավ ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև մշակութային կյանքի զարգացման վրա:

Պատմական հանգամանքների բերումով և իր աշխարհագրական դիրքի թելադրանքով Արցախը միշտ էլ կապող օղակ է եղել Ռուսաստանի և Արևելքի ու Արևմուտքի երկրների միջև:

Այդ պատճառով Արցախի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ոլորտը և մշակույթը մշտապես գտնվել է ոչ միայն մայր Հայաստանի, այլև այդ երկրների տնտեսական կյանքի և մշակութային ակտիվ փոխազդեցությունների ոլորտում՝ միաժամանակ պահպանելով իր հոգևոր ինքնատիպությունը և եզակիությունը: Մշակութային նորամուծությունները, Արցախի բնակլիմայական պայմաններին հարմարացվելուց և խորապես յուրացվելուց հետո, իրենց արժանի տեղն են գրավել երկրամասի ավանդական մշակութային արժեքների գանձարանում:

Արցախի մշակույթը ուշագրավ երևույթ է նաև հանուր հայության մշակույթի հայեցակետից, քանի որ խնամքով պահպանելով ու հարստացնելով ինքնատիպ մշակույթը, Արցախի ժողովուրդը դրանով իսկ արժանի ավանդ է ներդրել ազգային ընդհանուր մշակույթի գանձարանում: Հազարամյակների պատմությունը ակնհայտորեն հաստատում

¹ Մանրամասն տե՛ս, Վ. ՌՆՆՈՒՆԻ, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, ՀՀ ԳԱԱ հր., Երևան, 1956, էջ 6:

է այն ճշմարտությունը, որ մեր ազգային նկարագրին, որպես կանոն, խորթ է թեկուզ և ճոխ ու բազմակողմանիորեն զարգացած, մշակույթների նմանակող լինելը, համեմայն դեպս, միշտ էլ տիրապետող է եղել բուն ազգայինը՝ սերունդներին ժառանգություն թողնելու միտումը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Արցախի մշակույթի զարգացման վրա իր ազդեցությունն է ունեցել հայ ժողովրդի ազգային համախմբման գործընթացի ուժեղացումը, ազգային-ազատագրական շարժումների ծավալումը, գաղափարապես մշակված ու ընդհանուրի հավանության արժանացած ծրագրերի իրականացումը, որոնք նոր խնդիրներ են առաջադրել հայ առաջադեմ մտավորականներին: Նրանք առաջնորդվել են այն գաղափարով, որ ժողովրդին հարկավոր է լուսավորել¹, հաղորդակից դարձնել դարաշրջանի սոցիալական ու քաղաքական տեղաշարժերին, մշակութային արժեքներին և նպաստել նրա ազգային ինքնագիտակցությանը, կյանքի կոչել իր խորքերում ծվարած կենսունակ ուժերին՝ մասնակից դարձնելով նրան ժողովրդի հոգևոր վերակենդանացմանը և վերափոխմանը:

Ժամանակի հրամայական պահանջներին համապատասխան, Արցախի մշակույթը զարգանում էր առավելապես մայր Հայաստանի մշակույթի հետ սերտ կապերի մեջ, կրում նրա խոր ազդեցությունը, մյուս կողմից, հայ-ռուսական կապերի ուժեղացումը հնարավորություններ էին ընձեռում, որպեսզի Արցախի մշակույթը ավելի սերտորեն առնչվի ռուսական առաջավոր մշակույթի հետ և նրա բարերար ազդեցությամբ զարգացման նոր հեռանկարներ ձեռք բերի, միաժամանակ օտար չմնալով համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին:

Քննարկվող ժամանակաշրջանի Արցախի մշակույթն իր ուղղություններով հանդերձ ուներ հայ մշակույթի երեք ճյուղավորումների (արևմտահայ, արևելահայ և գաղութահայ) արտահայտման ամենաբազմազան դրսևորումներ ու յուրահատկություններ: Սակայն նրա համար առավել բնորոշ ընդգծված ընդհանրությունները մեկ միասնական, համահայկական մշակույթն է: Այդ միասնականության, համընդհանրության ամենաեական հիմքերն էին ողջ հայ ժողովրդի դարերով պահպանված հոգևոր ընդհանրությունը, բազմադարյան մշակույթի հարազատ ավանդույթներին, միասնական հայրենիքից զրկված ժողովրդի

¹ Տե՛ս, Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 292:

սոցիալական ու ազգային ազատագրական գոյատևման ու միավորման անմար ձգտումը:

4. Երկանյանը իրավացիորեն մատնանշում է. «Եվ որքան էլ ուժեղ ու խորն էին օտար ազդեցությունները, հայ մշակույթը նոր ժամանակներում պահպանեց իր ուրույն դեմքը, կարողացավ նոր պայմաններին, կյանքի նոր պահանջներին համապատասխան յուրօրինակ ազգային արտահայտություններ ստանալ: Մշակույթի ամենատարբեր ճյուղերում եղել է մի ընդհանուր գիծ, մի միասնական ընդհանրություն, դա հայ ժողովրդի պատմական դառը ճակատագրից թելադրված ազատագրվելու հարատև ուղին էր, որ ստեղծագործելու և խիզախելու մշտական լիցքեր տալիս նրա մշակույթի գործիչներին»¹:

Արցախի մշակույթի զարգացման գործում 19-րդ դարի կեսերից վճռորոշ դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ Արցախի երիտասարդությունը Ռուսաստանում, Եվրոպայում իր ուսումնառության ընթացքում հաղորդակից է լինում հասարակական-քաղաքական շարժումներին, կյանքի ընդհանուր առաջընթացին. նա ոչ միայն յուրացնում էր այդ երկրների մշակույթը, այլև նրանից առանձնացնում էր այն արժեքավորը, որը կարող էր առաջ մղել երկրամասի բազմադարյան մշակույթը:

Արցախի, ինչպես տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքի աշխուժացմանը նպաստել են նաև երկրամասի մշակութային կենտրոնների սերտ կապերը հայկական խոշոր մշակութային կենտրոնների (Կալկաթա, Մադրաս, Նոր Ջուղա, Վենետիկ, Մոսկվա, Նոր Նախիջևան, Պետերբուրգ, Թիֆլիս, Բաքու և այլն) հետ իր բոլոր դրսևորումներով՝ գրատպության, պարբերական մամուլի, լուսավորության, դպրոցաշինության արվեստի և այլ ուղղություններում: Անժխտելի փաստ է, որ դարեր շարունակ, վայրագ նվաճողների ասպատակությունների հետևանքով պատմականորեն ստեղծվել է այնպիսի աշխարհաքաղաքական և ժողովրդագրական իրադրություն, որ հայ մշակույթի կենտրոնները տարանջատված են եղել վիթխարի տարածքում, գործունեություն են ծավալել բազմաբնույթ և նույնիսկ խայտաբղետ աշխարհագրական, էթնիկական և մշակութային բնակլիմայական պայմաններում: Նույնիսկ

¹ Տե՛ս, 4. Երկանյան, Հայկական մշակույթը 1800-1917թթ., ՀՀ ԳԱԱ հր., Երևան, 1982, էջ 12:

այդ պայմաններում օտարածին ազդեցություններից խուսափելով, անվերապահորեն մշակութային ավանդույթի կարգավորիչ գործառույթը ի վիճակի է եղել ապահովել ազգային մշակույթի համակարգի ամբողջությունը:

Պատմաշրջանի Արցախի մշակութային կյանքի զարթոնքի վրա շարունակում էր իր որոշակի ազդեցությունն ունենալ 19-րդ դարի 60-ական թվականներին արևելահայ իրականությունում ծավալվող հասարակական-քաղաքական-մանկավարժական հզոր շարժումը¹, որի գործիչներն էին հյուսիսափայլականները՝ Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանցը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ: Լուսավորական շարժումը Արցախում ծավալվում է պարբերական մամուլի («Հայկական աշխարհ», «Քնար խոսնակ», «Գործ», «Ազգագրական հանդես»² և այլն), հասարակական կազմակերպությունների, գրադարանային ընկերությունների և առաջադեմ ուսուցիչների ու աշակերտների միջոցով: Լուսավորական շարժման գործիչների մշակած ծրագրերում բովանդակում էին լուսավորության տարածման, դպրոցական ցանցի ընդլայնման, կանոնադրությունների ընդունման, մշակութային բազմապիսի ճյուղերի զարգացման հիմնական ուղիները³: Արցախահայությունը սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքների բերումով սկսել էր հաղորդակից դառնալ ժամանակի ազդեցություններին, պատկառելի լուսավորական շարժմանը: Ժողովրդին լուսավորելու քարոզն ու կոնկրետ գործը ամուր շաղկապվեցին իրար և տվեցին պայմաններին համապատասխանող ցանկալի արդյունքներ: Սկսվել ու դարակեսին լայն ծավալ էր ստացել ազգի համախմբման գործընթացը, որը շարժման մեջ էր դրել հասարակության մտավորականությանը՝ խթանելով մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացմանը:

¹ Տե՛ս, **Ն. Գ. Սարգսյան**, 19-րդ դարի 60-ական թվականների արևելահայ հասարակական, մանկավարժական շարժումը և «Հայկական աշխարհը» ԴՊՄԳ, գիտական աշխատություններ, Երևան, 1969, ք.1, էջ 43:

² Տե՛ս, **Ս. Ավագյան**, Ղարաբաղի մամուլի պատմություն, (1828-1920), Երևան, 1980:

³ Այդ մասին տե՛ս, **Լեո**, Երեսնամյակ հայոց բարեգործական ընկերությունը Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911, **Գ. Գ. Դարությունյան**, Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարում, 2001, Կանոնադրություն Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի, Շուշի, 1894, «Կանոնք եկեղեցական ծխական ուսումնարանների հայոց», Վաղարշապատ, 1899:

Բնութագրող ժամանակաշրջանի Արցախի մշակութային զարգացման միտումն էր նաև համազգային գաղափարների մշակումը և դրանց շուրջ ազգային կենսունակ ուժերի համախմբումը, մերժեցումը ու համագործակցության հաստատումը միմյանցից անջատված հայության զանազան հատվածների միջև:

Պատմաշրջանում Արցախի և մշակույթի զարգացման բարդ գործընթացը չի ընթացել հարթ ու խաղաղ ճանապարհով: Մշակույթի բնութագրական հատկանիշները՝ դպրոցը, պարբերական մամուլը, գրատպությունը, արվեստի ճյուղերը և այլ ուղղություններ ունեցան ինչպես անախընթաց նվաճումների փայլտակումներ, այնպես էլ խոչընդոտող հանգամանքներ: Իշխող վերնաշենքում ուղղված աննպաստ ուղղությունները, քաղաքական բուռն իրադարձությունները, հարափոփոխ և դժնդակ պայմանները, ցարիզմի գաղութային քաղաքականությունը, տասնամյակներ շարունակ հայ-թուրքական ընդհարումներն իրենց բացասական ազդեցությունն են ունեցել Արցախի մշակույթի զարգացման վրա: Չնայած ստեղծված անբարենպաստ պայմաններին, այնուհանդերձ հայ եկեղեցին քաղաքական հեղաբեկումների օրերին որոշ դեպքերում պահպանեց իր դերը ժողովրդի հոգևոր մշակույթի ղեկավարման գործում և անգնահատելի ծառայություններ մատուցեց այդ ասպարեզում: Միշտ էլ հայ եկեղեցին ստանձնել է երկրի հոգևոր գաղափարական, մշակութային կյանքի ղեկավարի մենաշնորհը, լծվել երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահերի պաշտպանության գործին, ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում: Իսկ մշակութային զարթոնքի նախանձախնդիր հայ մտավորականության կարող ուժերը համառ ջանքերով ի վիճակի եղան հաղթահարել մշակույթի զարգացումը կասեցնող բազում դժվարությունները և պահպանել Արցախի մշակույթի ինքնատիպությունն ու միասնությունը, որը կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, առաջադիմական գաղափարների մշակման գործում: Դեռևս դա էլ կանխորոշեց մշակույթի բնութագրական հատկանիշների վերելքը, նրա ընթացքի հիմնական ուղիները, դրսևորման ձևերն ու բովանդակությունը:

Այսպիսով, վերը շարադրածից կարելի է եզրակացնել, որ XIX դարի երկրորդ կեսը և XX դարի երկու տասնամյակները (1850-1920 թթ.) կարևոր շրջան են Արցախի մշակույթի բազմադարյան պատմության

ընթացքում: Մշակութային զարթոնքի (դպրոցական ցանցի ընդլայնում, լուսավորության, գրատպության, պարբերական մամուլի, արվեստի զարգացումը, մշակույթի ականավոր գործիչների մատուցած ծառայությունները և այլն) առանձնահատկությունները թելադրված էին երկրամասի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու բազմազան ազդեցությունների և ժողովրդի կյանքին բնորոշ առանձնահատկություններով:

Աներկբա, Արցախի ինքնատիպ մշակույթը տեղական երանգավորմամբ զարգանում է առավելապես համահայկական մշակույթի բարերար ազդեցությամբ, ազգային նույն օրինաչափություններով ու առանձնահատկություններով:

*ՄԴԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԿԱՃԱՌ» գիտական կենտրոն*

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՓՈՐՁ

Նպատակահարմար ենք գտնում նախ ներկայացնել «Արցախյան շարժում» բառեզրի (տերմինի) մասին մեր դիտարկումը: Ի՞նչ հասկանալ այդ բառակապակցության տակ: Հայ ժողովրդի, մանավանդ, նրա արցախյան հատվածի պատմության մի նշանակալի հատվածը բնորոշելով «արցախյան շարժում» անվամբ, նկատի ունենք ոչ թե սոսկ արցախցիների, այլ համայն հայության միասնական պայքարը հանուն Արցախի ազատագրության (նեղ իմաստով) և հայոց բազմադարյա ազատամարտի վերջին փուլը (ի դեպ, որի առանցքում հենց Արցախն էր) նախորդներից տարբերելու համար (լայն իմաստով): Քանի որ հայ ազգային ազատագրական պայքարի վերջին երեքհարյուրամյա շրջանի առանցքում հաճախակի էր հանդես գալիս Արցախը (1720-ական թվականներ` սղնախական պայքար, 1735-1820-ական թվականներ` համասայի մելիքությունների կամ իշխանապետության ոսկեդարը¹, որին զուգահեռ կարող էր համարվել Ռարաբաղի խանության գոյությունը², 1905-1906 թվա-

¹ Հիշենք, թե 18-րդ դարի վերջերին Հայոց պետականության վերականգնմամբ մտահոգված հայ ազգային գործիչները ինչպես էին փորձում հենվել Արցախի մելիքների ռազմական ու տնտեսական հզորության վրա, նրանցից (կամ նրանց ժառանգներից) որևէ մեկին տեսնելով վերականգնվելիք հայոց թագավորության գահին:

² Միանգամայն սխալ ու հիմնադուրկ է այն տեսությունը, թե իբր Ռարաբաղի խանությունը ադրբեջանական է, հետևաբար, նրա իրավահաջորդը լինելուն կարող էր հավակնել 1918 թ. ստեղծված խամաճիկային Ադրբեջանը: Նկատի առնելով այն փաստը, որ Ռարաբաղի խանությունը, ճանաչելով Պարսկաստանի գերիշխանությունը, լայն ինքնավարություն ուներ, իսկ նրա և՛ բնակչության, և՛ զորքի հիմնական մասը հայերն էին կազմում, ինչպես նաև այն, որ պարսիկ պաշտոնյա համարվող խաներն առանց հայ մելիքների ոչ մի լուրջ արտաքին ու ներքին քաղաքականություն չէին վարում (չէին էլ կարող), կարելի է միանշանակ պնդել, որ Ռարաբաղի խանության իրավահաջորդը ԼՂԻՄ-ն էր, ապա և ներկայիս լեռնային Ռարաբաղի հանրապետությունը (հմմտ.՝ Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ:

կաններ՝ **թուրք(թաթարա)-հայկական ընդհարումները**, 1918-1921 թվականներ՝ **պետականության վերականգնման ու պաշտպանության համար պայքարը**, և, վերջապես, 1980-ականների ազգային զարթոնքը, որը սկզբնավորվեց Մայր Հայաստանի հետ Արցախի վերամիավորման համար քաղաքական պայքարով և հետագա զարգացում ապրեց Հայաստանի անկախության վերականգնման տեսքով¹: Ավելին, դեռևս 16-17-րդ դարերում, երբ հայոց լեռնաշխարհը ծվատվում էր թուրք-պարսկական պատերազմներից ու հեծում զավթիչների դաժան լծի տակ, իրենց կիսանկախ գոյությունը պահպանում էին նաև Արցախի (Խաչենի) մանր ու մեծ իշխանությունները (հետևաբար՝ ապագայի համար անթեղված պահելով ազատագրական պայքարի կայծերը), ուստի «Արցախյան շարժում» բառեզրը երիցս բովանդակում է այդ ամբողջը, արժանի լինելով գիտական շրջանառության մեջ մտնելու և լայնորեն կիրառություն գտնելու համար: Ավելացնենք, որ նախկինում (հատկապես 1988-1990-ական թվականներին) «Արցախյան շարժում» բառեզրը նշանակել է 1988 թ. փետրվարին սկսված՝ ազատագրական պայքարի բացահայտ փուլը և ընդգրկել է, հիմնականում, մինչև ակտիվ ու ծավալուն պատերազմական գործողությունների մեկնարկն (մոտավորապես՝ 1992 թ. հունվար) ընկած ժամանակամիջոցը: Մենք ևս մեր որոշ գործերում² «Արցախյան շարժում» բառեզրն օգտագործել ենք 1988-1991 թթ.-ի վերաբերյալ, հավատարիմ մնալով ժամանակի ոգուն, ինչը, սակայն, լիարժեքորեն չի բնորոշում և չի ընդգրկում պատմական զարգացման նախընթաց շրջանը: Նույնը կարելի է ասել նաև պատերազմական ու հրադադարին հաջորդած տարիների մասին, որոնք ազատագրական պայքարի նվաճումների ամրապնդման ժամանակաշրջան են ներկայացնում, ուստի նույնպես յուրօրինակ պայքար են:

Թարգմ. գրաք. քննադից և ծանոթագր. Պ. Մ. Խաչատրյանի: Եր., Երևանի համալս. հրատ., 1991, էջ 103-104, **Հարությունյան Մ. Ա., Հովհաննիսյան Լ. Լ.**, Արցախի 18-րդ դարավերջի և 19-րդ դարի էթնոքաղաքական պատմության մի քանի հարցերի մասին (ըստ օտար աղբյուրների): Պատմական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու): Մաս Ա, Ստ., ԱրՊՀ հրատ., 2003, էջ 20-36, **Բաբայան Ռ.**, Փանահ խանի իշխանությունը Ղարաբաղում. ազգային ողբերգություն՝ն, թե՞ արցախյան դիվանագիտության մեծ, բայց մինչև այսօր անհայտ հաղթանակ: «Ազատ Արցախ», թթ. 72, 73, 75, 77, 2006 թ. և այլն):

¹ Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայոց ազգային գաղափարախոսություն: Եր., 1999, էջ 165:

² Տե՛ս **Հարությունյան Մ. Ա.**, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը: Եր., 2000, էջ 16:

Հիրավի, Արցախյան շարժումը հայ ազգային ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասն է և անցել է զարգացման երկարատև պատմական ուղի: Կարծում ենք, որ արդեն ժամանակն է մտածել Արցախյան շարժման պատմության պարբերացման մասին: Հնարավոր է, որ այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերն ընկալվեն ոչ միանշանակ, սակայն դա չպետք է խանգարի բուն գործընթացին: Ընդհակառակը, շահագրգիռ քննարկումներն ու փաստարկված հիմնավորումները կարող են նպաստել Արցախյան շարժման պատմության պարբերացմանը, փուլերի ժամկետային ու իրադարձային սահմանազատումների ճշգրտմանը:

Հարկ է նշել, որ նման խնդիր ուսումնասիրողներն մինչև հիմա չեն դրել, իսկ այդ ուղղությամբ տարերայնորեն կատարված փորձերը կրել են միակողմանիության կնիքը (հաճախ ելնելով ուսումնասիրության բնույթից), ուստի չեն ընդգրկել ազատագրական պայքարն իր բոլոր փուլերով ու ենթաշրջաններով: Ինչքան մեզ է հայտնի, ոչ ոք Արցախյան շարժումը չի դիտարկել հայ-թուրքական բազմադարյան հակամարտության համատեքստում, թեև այդ իրողությունն ակնհայտ է, և որի մասին հեռավոր ակնարկներ կարելի է տեսնել խնդրո առարկայի մասին գրեթե բոլոր հեղինակների գրվածքների տողատակերում: Սույն հոդվածի նպատակներից մեկը հենց խնդիրը նման դրվածքով ներկայացնելն է, որի հիմնավորումները կտանք ստորև:

Արցախյան շարժման պարբերացման, թերևս, անդրանիկ փորձի հեղինակը պատմական գիտությունների դոկտոր Ն. Հովհաննիսյանն է, ով, այսպես կոչված, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բաժանում է երեք փուլի.

Առաջին. - 1988-1990, այն անվանելով «Հռչակագրերի ժամանակաշրջան»:

Երկրորդ. - 1991-1994, այն անվանելով «Ռազմական գործողությունների ժամանակաշրջան»:

Երրորդ. - 1994 – մինչև ներկա ժամանակը՝ «Խաղաղ [կարգավորման] գործընթաց»¹:

Որպես հակառակորդ կողմի տեսակետ, ուշագրավ է նաև ադրբեյ-

¹ Տե՛ս, **Оганесян Николай**, Карабахский конфликт. этапы, подходы, варианты решения. Ер., 1997, с. 25-44:

ջանցի հեղինակ Ջանգիր Արասլըի առաջարկը՝ հակամարտությունը բաժանել յոթ փուլի:

Առաջին՝ 1988 թ. փետրվար – 1990 թ. հունվար (էթնիկական հակամարտություն):

Երկրորդ՝ 1990 թ. հունվար – 1991 թ. օգոստոս (պարտիզանական պատերազմ):

Երրորդ՝ 1991 թ. օգոստոս – 1992 թ. մայիս (ներխուժում ()):

Չորրորդ՝ 1992 թ. հունիս – 1993 թ. հունվար (հակահարձակում ()):

Հինգերորդ՝ 1993 թ. փետրվար – 1993 թ. նոյեմբեր (բռնազավթում ()):

Վեցերորդ՝ 1993 թ. դեկտեմբեր – 1994 թ. մայիս (հավասարակշռություն):

Յոթերորդ՝ 1994 թ. մայիս – 1995 թ. մայիս (հրադադար)¹:

Ակնհայտ է նման պարբերացման միտումնավոր, միակողմանի և քաղաքական ուղղվածությունը: Այլ թեմայի նյութ համարելով մեր կողմից հարցականներով նշված աչառու և իրականությունը խեղաթյուրող ձևակերպումների քննադատությունը, անդրադառնա՞նք ավելի քողարկված բնույթ կրող, բայց ադրբեջանական կեղծ քարոզչությանը համահունչ ակնարկներին: Առաջին փուլի սահմանումը ակամայից բացահայտում է սկզբնապես քաղաքական հիմնահարցը (ԽՍՀՄ իրավահավասար սուբյեկտներից մեկի՝ Ադրբեջանական ԽՍՀ կազմից մյուսի՝ Հայկական ԽՍՀ կազմի մեջ ԼՂԻՄ-ը մտցնելը, ինչը բխում էր նախկինում թույլ տված բռնարարքի ու կոպիտ սխալի ուղղման և ազգերի ազատ ինքնորոշման՝ հանուրի կողմից ճանաչված իրավունքի ու հիմնարար սկզբունքի կենսագործման անհրաժեշտությունից) ադրբեջանցիների կողմից բռնությամբ էթնիկական հակամարտության հուն մտցնելու գործընթացը, որի համար միջոցների խտրության առջև չկանգնելով, Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարությունն իրականացրեց հարձակումներ Հյուսիսային Արցախի Չարդախլու բնակավայրի (1987 թ. նոյեմբեր), և Ասկերան ավանի վրա (1988 թ. փետրվարի 22), Սումգայիթի հայ բնակչության ցեղասպանությունը (1988 թ. փետրվարի 27-29), Գանձակի հայաթափումը (1988 թ. նո-

¹ Տե՛ս **Араслы Джангир**, Армяно-азербайджанский конфликт: военный аспект. Б., 1995, с. 4-57:

յնքեր-դեկտեմբեր), Բաքվից ավելի քան 200 հազար հայ բնակչության բռնի տեղահանությունը (1990 թ. հունվարի 13-20)*:

Ձավեշտականն այն է, որ արտահայտելով Ադրբեջանում մշտապես բորբոքվող ռևանշիստական տրամադրություններն ու լծվելով պատերազմը վերսկսելու՝ պաշտոնական Բաքվի շանտաժային քաղաքականությանը, Ջ. Արասլըն վերջին, իր իսկ բնորոշմամբ՝ «իրադադարի» փուլը եզրափակում է 1995 թ. մայիս ամսով, ակներևաբար, չտեսնելով ու չպատկերացնելով հրադադարի շարունակության հնարավորությունը, այլապես, իր գրվածքի վերջում «տոտալ պատերազմի» բացահայտ կոչ չէր անի¹...

Մեր ուսումնասիրությունների արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ Արցախյան շարժման պատմությունը, դիտարկելով այն թուրք-հայկական դարավոր հակամարտության համատեքստում, կարելի է բաժանել հետևյալ փուլերի.

Առաջին՝ **1720-ական թթ. – 1985 թ.**- պատմական նախընթաց զարգացումները:

Երկրորդ՝ **1985 – 1991 թթ.** - քաղաքական ձեռնարկումները:

Երրորդ՝ **1991 – 1994 թթ.** - գերիշխողը ռազմական գործողություններն էին:

Չորրորդ՝ **1994 – 1998 թթ.**- գերակայում էին դիվանագիտական ջանքերը:

Հինգերորդ՝ **1998 թ. - առ այսօր՝** - առաջանցիկը տնտեսական զարգացումն է²:

Արդ, փորձենք հիմնավորել մեր տեսակետը, առանձին-առանձին անդրադառնալով փուլերից յուրաքանչյուրին և դրանց ժամկետային ու

* Անշուշտ, ոչ պատահականորեն է ադրբեջանցի հեղինակն ընտրել 1990 թ. հունվարը, երբ հայերի ջարդերը կազմակերպելուց հետո խորհրդային իշխանության տապալումը կանխելու համար Բաքու մտցվեցին խորհրդային զորքեր (հունվարի 20), ճանապարհին ճգնելով անգնե հայերի արյամբ հղփացած դիմադրողներին, ինչի շուրջ ադրբեջանական քարոզամեթոդային բարձրացրած աղմուկը նպատակ ուներ խլացնել հայ բնակչության զանգվածային ջարդերի դեմ առաջադեմ մարդկության բողոքի ծայրը:

¹ Տե՛ս Արասլը Ջ., նշվ. գիրքը, էջ 58:

² Տե՛ս **Հարությունյան Մ.**, Արցախյան շարժման պատմության պարբերացումը: «Մարտիկ», փետրվար, թիվ 7, 2003 թ., **Մույնի՝** Արցախյան շարժման պատմության պարբերացման փորձ: «Կաճառ», թ. 4, 2006 թ.:

իրադարձային սահմանազատումների համար մեր ունեցած նկատառումներին:

Խոսելով պատմական նախընթաց զարգացումների փուլի մասին, հարկ է ճշգրտել մեկնարկի հարցը: Սովորաբար, հեղինակների մեծամասնությունը «Արցախյան հիմնախնդրի» սկիզբը համարում է 1918 թվականը, երբ Ռուսական կայսրության փլուզումից հետո Այսրկովկասում ձևավորվեցին երեք անկախ հանրապետություններ, որոնցից մեկը՝ մինչ այդ երբևէ գոյություն չունեցած Ադրբեջանը, ժավալապատական հավակնություններ հանդես բերելով, անհիմն պահանջներ ներկայացրեց հայ ժողովրդի պատմական հայրենիքի արևելյան մասում հռչակված Հայաստանի Հանրապետությանը: Ընդսմին, թուրքական սփյնների վրա ստեղծված խամաճիկային Ադրբեջանի տարածքային անհիմն հավակնությունները, որոնց առանցքում հայկական վաղնջական ու հայերով մշտաբնակ Լեռնային Ղարաբաղն էր, Ձանգեզուրը և Նախիջևանը, կազմում էին հայ ազգաբնակչությանն իր բնօրրանից՝ Հայկական Լեռնաշխարհից դուրս մղելու կամ ուղղակի բնաջնջելու առնվազն 1720 - ական թվականներից կիրառվող թուրքական հրեշավոր քաղաքականության բաղկացուցիչ մասը: Ինչպես պատմությունը, այնպես էլ ժամանակակից Թուրքիայի թշնամական դիրքորոշումը ԼՂՀ-Ադրբեջան հակամարտության նկատմամբ, գալիս են հաստատելու, որ Արցախյան հիմնախնդիրը պետք է դիտարկել թուրք-հայկական դարավոր հակամարտության համատեքստում: Հայ ժողովրդի բնօրրանն ու պատմական հայրենիքը՝ Հայկական բարձրավանդակը զավթած թուրքերի ու Հայրենատիրության պարտավորություն ունեցող համայն հայության հետևողական պայքարի մեկնարկը Արցախյան շարժումն է:

Նպատակահարմար ենք գտնում կանգ առնել Թուրքիայի կողմից Ադրբեջան պետության ստեղծման փաստի վրա*, քանի որ այն կազմում է ԼՂՀ-Ադրբեջան հակամարտությունը թուրք-հայկական պայքարի համատեքստում դիտարկելու մեր գաղափարի առանցքը:

* Պրոֆեսոր Ա. Ս. Մանասյանը Ադրբ. Հ-ի ստեղծումը իրավացիորեն համարում է ուրիշների ազգային տարածքներում ինտեղվեցիայի և բնիկ ժողովուրդների բնաջնջման ճանապարհով թուրքական պետությունների ստեղծման Թուրքիայի նախակիպրոսյան փորձ (տես **Մանասյան Ա.Ս.**, Ղարաբաղյան հակամարտությունը պատմաքաղաքական և իրավական տեսանկյուններից: «Ղարաբաղ. հակամարտություն-համաձայնություն» պատմաքաղաքական հոդվածների ժողովածու: Եր., 1997, էջ 13):

Պատմական աղբյուրները, ժամանակակիցներն ու հետագա ուսումնասիրողները միահամուռ վկայում են, որ Ադրբեջանը ստեղծվել է Թուրքիայի կողմից՝ Այսրկովկաս կատարած ինտերվենցիայի միջոցով: Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան, հարկադրված լինելով իր զորքերը հանել Այսրկովկասի զավթած տարածքներից, այդուհանդերձ իր ներկայությունը տարածաշրջանում պահպանեց նորաթուխ Ադրբեջանի միջոցով, որի կառավարող շրջանակները՝ հանձին մուսավաթականների, ձգտում էին իրականացնել պանթուրքական խելացնոր ծրագրերը, տարածքային պահանջներ ներկայացնելով հալան երկրներին:

Հենց իսկ «Ադրբեջան» անվամբ Արևելյան Այսրկովկասը կոչելը նպատակամիտված էր հիմք ստեղծելու Իրանի հյուսիսային նահանգի (Ատրոպատենա, Ադրբատական, միջնադարում՝ եկվոր թուրքերի արտասանությամբ՝ Ազերբայջան) նկատմամբ տարածքային հավակնությունների համար: «Ադրբեջան» բառը, 1920-ական թվականների Ադրբեջանական ԽՍՀ-ի մեջ մտնող տարածքների վերաբերյալ սկսել է օգտագործվել առաջին աշխարհամարտի վերջին տարում դրանց վրա թուրքական օկուպացիոն ռեժիմի հաստատումից և այսպես կոչված «ադրբեջանական դեմոկրատական հանրապետության» հռչակումից հետո միայն¹: Ի դեպ, մի կողմից Այսրկովկասում բոլշևիկների իշխանության տարածման երթուղին, որ սկսվել է Բաքվից, իսկ մյուս կողմից՝ թուրք-բոլշևիկյան ձևավորվող հանցավոր դաշինքը, ինչպես նաև բոլշևիկյան ժավալապաշտությունը՝ «Կարմիր Արևելք» կոչված զառանցանքի տեսքով միանգամայն համընկան պանթուրքիստների զավթողական նկրտումներին, որից էլ վարպետորեն օգտվեցին Թուրքիայի ու Ադրբեջանի պարագլուխները: Արհեստածին Ադրբեջանի ստեղծման հանգամանքների ու հեռագնա նպատակների մասին ծանրակշիռ գրականություն² կա, որից կարե-

¹ Мельгузов М., Тер-Саркисянц А., Трапезников Т., Исторические фальсификации с политической подоплекой (в Азербайджанской республике в государственном уровне фальсифицируется история Закавказья). М., 1999, с. 9.

² Տես **Էնաթրոլլահ Ռեզա**, Ազերբայջան և Առան (Վովկասյան Ալբանիա): Եր., 1994, էջ 150-158, **Бартольд В. В.**, Сочинения: т. 2, ч. 1. М., 1963, с. 703, 775, **Мельгузов М., Тер-Саркисянц А., Трапезников Т.**, указ. соч, с. 9-12, **Пахомов Е. А.**, Краткий курс истории Азербайджана с прилож. экскурсии по истории ширваншахов 11-14 вв. (Сокр. излож. лекций, чит. в Бак. Инст. Народн. образования в 1922/23 учеб. году). Б., 1923, с. 11, 15, **Սանասյան Ա. Ս.**, նշվ. հոդվածը, էջ 12-13 և այլն:

լի է եզրակացնել, որ նորաթուխ Ադրբեջանը Թուրքիան դիտում էր որպես Միջին Ասիա և Հյուսիսային Կովկաս ու Պովոլժե դուրս գալու առաջնադիրը կամ հենակայան, ասել է թե՛ պանթուրքական ծրագրերի իրականացման կարևոր օղակներից մեկը: Դա՝ հեռագմա նպատակը: Իսկ մերձավոր նպատակը Հայկական լեռնաշխարհի՝ իր բնիկ ու իսկական տերերի՝ հայերի վերջին օազիսը (Հայաստանն ու Արցախը) թուրք-ադրբեջանական արքամի մեջ առնելն է:

Աշխարհաքաղաքական առումով կատաղի մրցակցություն էր ընթանում Բաքվի նավթին և Իրանի ու Պարսից ծոցի ավազանի երկրների հետ կապող առևտրական ուղիներին տիրելու համար: Այդ պայքարից մեծ ակնկալիքներ ուներ հատկապես Թուրքիան, որ Առաջին աշխարհամարտում պարտություն կրելուց հետո հարկադրված էր ազատել արաբական նահանգները, դրան հակառակ՝ ձգտելով հաստատվել Այսրկովկասում և Միջին Ասիայում՝ դրա համար իբրև գործիք ստեղծելով Ադրբեջանը: Իսկ բոլշևիկներն էլ, ինչպես վերը նշվեց, տարվելով «համաշխարհային հեղափոխությունը» մահմեդական Արևելքից սկսելու մոլուցքով, ըստ էության նպաստեցին պանթուրքական ծրագրերի իրականացմանը, հատկապես Ադրբեջանի ստեղծման առումով:

Այստեղ տեղին է մեջբերել Ժամանակակցի՝ բոլշևիկների բռնատիրության դեմ զինված պայքարի առաջնորդներից մեկի՝ գեներալ Անտոն Դենիկինի խոսքը. «Ամեն ինչ Ադրբեջանական հանրապետությունում արհեստական, «ոչ իրական» է եղել՝ սկսած Պարսկաստանի նահանգներից մեկից փոխառնված նրա անվանումից, ընդգրկելով լեզգիների Ջաքաթալան, հայ-թաթարական Բաքվի, Ելիզավետպոլի նահանգները, ռուսական Մուղանը և *միավորվելով թուրքական քաղաքականությանը՝ իբրև պանթուրքիզմի և պանիսլամիզմի առաջնադիրը (պատվար) Կովկասում* (ընդգծումը՝ Մ. Հ.): ... Ի վերջո, արհեստականորեն պահպանվել է նաև ազերբայջանական կառավարությունը՝ սկզբում Նուրի փաշայի, հետո գեներալ Թոմսոնի կամքով, իսկ հետագայում՝ պարզապես, իներցիայով»¹:

Այսպիսով, Արցախյան շարժման պատմական նախընթաց զարգա-

¹ **Деникин А. И.**, Очерки русской смуты. "Вопросы истории", 1994, N 12 նույնը տես **Деникин А. И.**, Очерки русской смуты. М., т. 4, с. 235-236 Հմմտ.՝ **Կնյազյան Դ.**, Գեներալ Անտոն Դենիկինը Ադրբեջանական հանրապետության մասին: «Մերծավոր Արևելք»: Եր., «Զանգակ-97», 2006, էջ 67-68:

ցումների փուլը սկսվել է 1720-ական թվականներին և անցել հետևյալ ժամանակաշրջանները.

1720-1730 - ական թթ. – 1813 թ. հոկտեմբերի 12, երբ Գյուլիստանի դաշնադրությամբ ի շարս այլ հայկական տարածքների, Ղարաբաղը ևս անցավ Ռուսաստանի տիրապետության տակ, ինչը, թեև ժամանակավորապես հեռացրեց թուրքական վտանգը, բայց չլուծեց Արցախի հայ մելիքների ժառանգական իրավունքների հարցը: Ռուսական կայսրության կազմում արցախահայության ազատագրական պայքարը սառեցվեց և պահպանվեց որոշակի խմորումների տեսքով:

1905-1906 թթ. – 1918-1921 թթ., թուրք-հայկական զինված ընդհարումները վերստին վառեցին ազատագրական պայքարի կրակը: Այդ ժամանակամիջոցում, ամենաշոշափելի նվաճումը, թերևս, Լեռնային Ղարաբաղում պետականության խորհրդանիշների և տարրերի վերածնունդն էր: Հենց այդ հանգամանքն էլ վճռորոշ նշանակություն ունեցավ Լեռնային Ղարաբաղին խորհրդային պետականության ձևերից մեկի՝ ինքնավար մարզի կարգավիճակի շնորհման համար:

1923 թ. հուլիսի 7 – 1985 թ. հունիս, երբ խորհրդային իշխանության տարիներին, թեև սառեցվել էր Արցախյան հիմնախնդիրը, այդուհանդերձ, մի քանի անգամ բարձրացվեց այն (1940, 1960, 1970-ական թվականներին), սակայն՝ առանց էական արդյունքների: Արցախյան շարժման գաղափարական հարստացման համար նշանակալի դեր խաղաց 20-րդ դ. 60-ականների ազգային զարթոնքը և՛ Հայկական ԽՍՀ-ում և՛ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ-ում):

Արցախյան շարժման քաղաքական փուլը, որը մեկնարկեց 1985 թ.¹, ԽՍՀՄ-ում վերակառուցման քաղաքականության ընձեռած հնարավորությունների պայմաններում, իր հերթին կարելի է բաժանել երկու շրջանի.

1985 թ. հունիս – 1988 թ. փետրվարի 20՝ ընդհատակյա-մախապատրաստական:

1988 թ. փետրվարի 20 – 1991 թ. ապրիլի 30՝ բացահայտ - սահմանադրական, երբ պայքարի հիմնական եղանակները հանրահավաքներն

¹ Այդ մասին ակնարկել է շարժման ակտիվ գործիչներից մեկը: Տե՛ս **Սուրադյան Իգոր**, Ընդամենը վարկած: «Ազդակ» (բացառիկ): Արցախի պայքարի 10-ամյակ: 20 փետրվար, 1988, էջ 124 (նույնը «Սոսկ մեկնակետ (տարբերակ)» վերնագրով տպագրվել է «Հայոց Աշխարհ» թերթի 1998 թվականի թթ. 6-10 համարներում):

էին, ցույցերը, քաղաքական գործադուլները, իրավական-օրենսդրական ակտերի ընդունումը և այլն:

1988 թ. փետրվարի 20-ը Արցախյան շարժման պատմության մեջ կարելի է առանձնացնել մի քանի նկատառումներով: Փաստորեն, այդ օրը ԼԴԻՄ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված պատմական որոշումը նշանակում էր Մայր Հայաստանին վերամիավորվելու՝ արցախահայության իղծերի ու ակնկալությունների ամրագրում ժողովրդի ընտրյալների (ժող. պատգամավորների) ներկայացուցչական մարմնի կողմից, ինչպես նաև բացահայտում ու օրինականացում էր ընդհատակում երկարատև խմորումներ ապրած շարժումը: Կարող է հարց առաջանալ, թե ինչու շարժման բացահայտման (լեգալացման) համար մեկնակետ է ընդունվում հենց փետրվարի 20-ը, բայց ոչ փետրվարի 13-ի առաջին հանրահավաքը Ստեփանակերտում կամ, ասենք, 1987 թ. զանգվածային ստորագրահավաքը (այսինքն՝ յուրօրինակ հանրաքվեն) և ԼԴԻՄ-ից առաջին պատվիրակության առաքելությունը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում:

Այդ հանրահայտ քաղաքական ձեռնարկումները ոչ ոք չի կարող անտեսել: Սակայն, կարծում ենք՝ ակնհայտ է, որ ադրբեջանական կոմունիստական վերնախավի, ապա և նրան ձայնակցող կրեմլյան բարձրաստիճան հովանավորների՝ Արցախյան շարժումը «մի խումբ ծայրահեղականների գործ» ներկայացնելու՝ շանտաժի հասնող քաղաքականությունը առաջին անգամ լուրջ հակահարված ստացավ հենց փետրվարի 20-ի պատմական ակտով: Հենց միայն նման օրակարգով նստաշրջանի հրավիրումը ինքնին քաղաքական կամք ու քաղաքացիական խիզախություն էր պահանջում պատգամավորներից, ինչպես նաև հրապարակում հավաքված ցուցարարներից, մարզային թերթում որոշման հրապարակումն ապահոված և նստաշրջանի նյութերը անհրաժեշտ հասցեներով տարածած նվիրյալներից:

Այսպիսով, փետրվարի 20-ի որոշումը օրինականություն հաղորդեց համաժողովրդական պայքարին, դարձավ Արցախյան շարժման իրավաքաղաքական թղթապանակի առաջին փաստաթուղթը, անդրանիկ սահմանադրական-իրավագոր քայլը Մայր Հայաստանին վերամիավորվելու ճանապարհին¹:

¹ Հանգամանալից տես **Հարությունյան Մ.**, Փետրվարի 20-ի խորհուրդը: «Մարտիկ», 14-20 փետրվար 2003 թ., թիվ 8(510), էջ 1:

Արցախյան շարժման ռազմական փուլը, կարծում եմ, նպատակահարմար է բաժանել հետևյալ ժամանակաշրջանների, հիմք ընդունելով ավարտուն պատերազմաշրջանների, հակառակորդի նախահարձակումների կասեցման, ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հակահարձակման և այդ ամենին հետևած կարճատև դադարների հաջորդականությունն այնպես, որ մի ժամանակահատվածի ավարտը համընկնի ռազմական գործողությունների վայրէջքին, իսկ հաջորդի սկիզբը՝ դրանց նոր վերելքին¹:

Առաջին. 1991 թ. ապրիլի 30 - 1992 թ. մայիսի 18:

Երկրորդ. 1992 թ. հունիսի 12 – 1993 թ. հունվարի 20:

Երրորդ. 1993 թ. փետրվարի 5 – 1993 թ. նոյեմբերի 1:

Չորրորդ. 1993 թ. դեկտեմբերի 15 – 1994 թ. մայիսի 17:

Առաջին ժամանակաշրջանի համար մեկնակետ է ընդունված «Կոլ-ցո» ռազմագործողությունը, որը ագրեսիայի դասական օրինակ էր, իսկ ավարտը համարված է Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնումը և Արցախի շրջափակման ճեղքումը, ինչին հետևել է օպերատիվ դադար: Երկրորդ ժամանակաշրջանի սկիզբ է համարվում ԼՂՀ-ի սահմանների ողջ երկայնքով, մի քանի օպերացիոն ուղղություններում հակառակորդի ձեռնարկած հարձակումը, իսկ ավարտ՝ մարտական գործողությունների հիմնական թատերաբեմում՝ Մարտակերտի ռազմաճակատում հակառակորդի առաջխաղացման կասեցումը, ինչը ուժերի հավասարակշռության արդյունք էր: Երրորդ ժամանակաշրջանի

¹ Մեր կողմից հիմնահարցի մշակումները տես՝ **Արցախի ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը**: ԱրՊՀ, «Գիտական տեղեկագիր», № 1, Ստեփանակերտ, 2000, էջ 78-88, **Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.**: Ատենախոս. սեղմագիր: Երևան, ՀՀ ԳԱ Պատմութ. ինստիտուտ, 2001, էջ 24-26 (*ատենախոսությունը պահվում է Պատմության ինստիտուտի գիտական կաբինետում*), **Լեռնային Ղարաբաղ. տասնամյա պայքարի հիմնական փուլերը**: ԼՂՀ անկախության տասնամյա տարելիցին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ԵՊՀ պատմութ. ֆակուլտետ: Երևան, 2001, 15-18, **Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994**: Հանրագիտարան 1 հատորով (Հայկ. հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ **Հ. Մ. Այվազյան** (գլխ. խմբագիր-տնօրեն), **Զ. Հ. Բալայան** (նախագահ), **Հ. Մ. Խաչատրյան** (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.), և ուրիշներ): Երևան, Հայկական Հանրագիտարանի հրատ., 2004, էջ 10 (այստեղ, գիտախմբագրական հանձնաժողովի առաջարկությամբ և հանրագիտարանի բնույթից ելնելով հինգ փուլ ենք ներկայացրել, ինչը, սակայն, անընդունելի է սույն պարբերացման տեսանկյունից):

սկիզբ է ընդունված Մարտակերտի ռազմաճակատում ԼՂՀ ԻՊՈՒ լայնածավալ հակահարձակումը, ինչը արմատական բեկում մտցրեց պատերազմում, իսկ վերջ՝ Քարվաճառի, Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլիի փայլուն ռազմագործողությունների եզրափակիչ գործողությունը՝ Ջանգելանի վնասազերծումը, ինչի շնորհիվ ավարտին հասցվեց ԼՂՀ-ի շուրջ հուսալի անվտանգության գոտու ստեղծումը, Պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը, իսկ հակառակորդին պարտադրվեց նստել բանակցությունների սեղանի շուրջ: Չորրորդ ժամանակաշրջանի համար մեկնարկ է համարվում ռազմական ճանապարհով հիմնահարցերը լուծելու Ադրբեջանի վերջին հուսահատ ճիգը և դրա ձախողումից ու ՊԲ-ի շեշտակի հակահարձակումներից հետո պարտադրված հրադադարի հաստատումը հակամարտության գոտում:

Արցախյան շարժման դիվանագիտական փուլը պայմանականորեն կարելի է սահմանազատել 1994-1998 թվականներով, երբ հրադադարի հաստատումից հետո լայն ասպարեզ էր բացվել բանակցություններում և դիվանագիտական այլ ձեռնարկումներով Արցախի հիմնախնդիրը միջազգային աստիճաններում պաշտպանելու համար:

Կարող է օրինական հարց առաջանալ. մի՞թե 1992-1994 թվականներին դիվանագիտություն չի եղել: Իհարկե, եղել է: Սակայն, վճռորոշը, եթե կարելի է ասել՝ դիվանագիտության առաջնիչ ուժը, գերիշխող գործոնը եղել է պատերազմը, ուստի՝ ռազմաճակատներում օպերատիվ իրավիճակի կտրուկ փոփոխությունները նկատելիորեն ազդել են հակամարտող կողմերի քաղաքական քայլերի ու դիրքորոշման վրա: Նմանապես, 1998-ից հետո դիվանագիտական ձեռնարկումները Արցախյան հիմնախնդրի լուծման ուղղությամբ որակական նոր մակարդակի ու արդյունավետության են հասել, սակայն, ընթացիկ փուլում առաջին պլան է մղվել տնտեսության զարգացման ու արդիականացման խնդիրը, ինչն իր հետևից կարող է ճանապարհի հարթել նաև արտաքին արդյունավետ քաղաքականության համար: Միանշանակ է, որ տնտեսական վերափոխումների հաջողությունը մեծապես պայմանավորված է արտաքին քաղաքականությամբ և սերտորեն փոխկապակցված է ներքաղաքական զարգացումների, օրենսդրական-իրավական դաշտի ամրապնդման հետ: Եվ, ընդհակառակը, նպատակասլաց արտաքին քաղաքականությունը նպաստավոր պայմաններ է ապահովում

տնտեսության զարգացման (ներդրումների և վարկային ծրագրերի իրականացման) համար:

Նշենք նաև, որ 1998 թվականը նշված երկու փուլերի սահմանագիծ է ընդունված այն նկատառումով, որ իշխանափոխությունից հետո արմատապես վերանայվեցին արտաքին քաղաքականության ելակետը և ռազմավարությունը¹, ինչպես նաև վերաբերմունքը տնտեսության զարգացմանը, որը սկսեց դիտվել որպես արտաքին քաղաքականության հաջողության գրավական:

Արցախյան շարժման հասկացության և պատմության պարբերացման սույն առաջարկն, անշուշտ, վերջնական չէ: Դրանք թերևս լրամշակման ու սրբագրումների կարիք ունեն, հատկապես, ժամկետային սահմանազատումների առումով: Այդուհանդերձ, մի բան ակնհայտ է. Արցախյան շարժումը, հանդիսանալով հայոց ազգային ազատագրական բազմադարյա պայքարի արդի փուլը, անցել է զարգացումների պատմական, քաղաքական, ռազմական, ապա թևակոխել դիվանագիտական ու տնտեսական ուղին, որը ճիշտ ու հետևողականորեն շարունակելու պարագայում, հնարավոր կլինի հասնել բաղձալի վերջնական նպատակին:

¹ Տե՛ս **Գեղամյան Գ. Մ.**, Հայաստանը 1991-2000 թվականներին: «Հայրենիք և ծառայություն»: Ուսումն. ձեռնարկ ԳՀ ԶՈՒ սպաների և ենթասպաների ԳՊՊ-ի համար: Եր., «Ոսկան Երևանցի», 2001, էջ 476:

**«ՂԱՐԱԲԱՂԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ», «ՂԱՐԱԲԱՂ», «ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ»
ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

Վերջին շրջանում շատ հաճախ թե՛ առօրյայում և թե՛ մամուլում ու գիտական գրականության «Ղարաբաղ» անվանումն օգտագործվում է որպես «Արցախ» անվան հոմանիշ, ինչն այնքան էլ ճիշտ չէ:

«Ղարաբաղ» անունը սկսվել է օգտագործվել XIV դարից, որպես Արցախ և Ուտիք աշխարհների հավաքական անվանում: «Ղարաբաղ» տեղանվան առաջին հիշատակություններից մեկը մենք հանդիպում ենք վրաց «Քարթլիս Ցխովրեբա»-ի այն աշխատության մեջ, որը պատմում է Գեորգի Լաշայի թագավորությունից (XIII սկիզբ) մինչև Գեորգի Պայծառի ժամանակը¹:

«Ղարաբաղ» տեղանվանը մենք հանդիպում ենք նաև պարսիկ ժամանակագիր Համդալլահ Ղազվինիի «Հավաքունն պատմություն» աշխատության մեջ, որը գրվել է XI դ. առաջին կեսին, իսկ հիշյալ տեղանունն էլ մտնում է 1334-1344 թթ. դեպքերը նկարագրող հատվածի մեջ: Բացի Համդալլահ Ղազվինիից «Ղարաբաղ» տեղանվան մասին հիշատակում են XIV -XV դդ. պարսիկ այլ ժամանակագիրներ²:

Հայ պատմագիրներից «Ղարաբաղ» տեղանունը հիշատակում է Թովմա Մեծոփեցին: XVI դ. վերաբերող աղբյուրներից մեկում «Ղարաբաղի» փոխարեն հիշատակված է «Սեաւ այգի»³: «Ղարաբաղ» տեղանվան բացատրությունը լեզվաբանության մեջ տեղիք է տվել մի շարք բացատրությունների: Նախկինում տարածված է եղել այն տեսակետը, որ այս տեղանունը կազմված է թուրքերեն «կարա, դարա» (սև) և

¹ Բ. Ուլուբաթյան, Խաչենի իշխանությունը 10-14-րդ դարերում, Երևան, 1976 թ. էջ 40:

² Նույնի, էջ 41:

³ Մ. Եպս. Բարխուդարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999 թ., էջ 160:

«բաղ» (այգի) արմատներից: Ըստ մի շարք հետազոտողների այն ծագել է պարսկական աշխարհագրական անվանակարգի հողի վրա. ի տարբերություն հարթավայրային մասի, որն անվանվում էր Բաղ-ի Սաֆիդ (Սպիտակ այգի) երկրամասի լեռնային մասն սկսել է անվանվել Բաղ-ի Սիախ, որը թրքալեզվական իմաստավորմամբ վերափոխվել է Կարաբաղի (Սև այգի)¹: Ըստ Կովկասի տեղանունները ուսումնասիրող Կ. Գանի «կարա» արմատը նշանակում է նաև «թանձրախիտ», «մուգ կանաչ»²:

Ըստ Բ. Ուլուբաբյանի՝ «կարա»-ի մեջ պետք է տեսնել ոչ միայն «սև» իմաստը, այլև այդ բառի երկրորդ շատ տարածված բովանդակությունը՝ «մեծ»:

Եիշտ է, «Ղարաբաղ» անվան ծագման վերաբերյալ գիտական բանավեճերը շարունակվում են և վերջնականորեն հաստատված կարծիք դեռևս գոյություն չունի, սակայն ակնհայտ է, որ այդ անվանումն օգտագործվում է զանազան փոփոխակներով: Հրապարակված գիտական պատմական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Ղարաբաղ» անվանումն օգտագործվում է հիմնականում երեք իմաստներով.

1. Լայն- այն ընդգրկում է Հայկական բարձրավանդակի գրեթե ամբողջ հյուսիս-արևելյան հատվածը, որի հյուսիս-արևելյան սահմանը Կուր գետն է, իսկ հարավ-արևելքում՝ Արաքսի հովիտը: Ըստ Լեոյի. «Ղարաբաղը համապատասխանում է Մեծ Հայքի նահանգներից Ուտիքի մի մասին, ամբողջ Արցախին և Սյունիքի մեծագույն մասին...Ղարաբաղին կցված է և Միլի տափաստանը, որը կոչվում է և Ղարաբաղի տափաստան»³: Սահմեղական հեղինակներից Սիրզա Ջամալ Ջևանշիրը նույնպես Ղարաբաղի սահմանները նշում է հիմնականում Լեոյի նշած սահմաններով. «Ինչպես գրված է հին պատմական աշխատություններում, Ղարաբաղի վիլայեթի սահմանները հետևյալներն են՝ Արաքս գետը, Խուդափերիհի կամուրջից մինչև Կարմիր կամուրջը, արևելքից՝ Կուր գետը: Ղարաբաղի

¹ П. М. Мурадян, История-память поколений, Ереван, 1990, стр. 76.

² К. Ган, Опыт объяснений географических названий, Тифлис, 1909, стр. 70.

³ Լեո, Ղարաբաղ, Աթենք, 1990, էջ 7:

հյուսիսային սահմանը համարվում է Գերան (Կուրակ) գետը, արևմուտքից՝ Ղարաբաղի բարձր լեռները...»¹:

2. Միջին – ընդգրկում է Ղարաբաղի լեռնային մասը. մեծ մասամբ Խամսայի մելիքությունները, որոնց սահմանները, ըստ պատմական աղբյուրների, ձգվում է Արաքսից մինչև Կուր գետը: Ղարաբաղի լեռնային մասը ընդգրկում է Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի մելիքությունները: Ռուս հայտնի ռազմական պատմաբան Վ.Պոտտոն Ղարաբաղի Լեռնային մասը համարում է Սյունիք²:

3. Նեղ - այն համապատասխանում է նախկին ԼՂԻՄ տարածքին: Սկսած 1923 թվականից, երբ կազմավորվեց ԼՂԻՄ-ը Լեռնային Ղարաբաղ, սկսեցին անվանել այդ վարչաքաղաքական միավորը, որը այնքան էլ ճիշտ չէ: Լեռնային Ղարաբաղ անվան տակ հասկացվում էր ավելի մեծ տարածք, քան ԼՂԻՄ-ը:

Փաստորեն, «Ղարաբաղի խանություն» և «Լեռնային Ղարաբաղ» հասկացությունների տակ պետք է նկատի ունենալ Ղարաբաղի որոշ հատվածը: Ըստ ռուս հետազոտող Ի. Սեգալի՝ մինչև Ղարաբաղի խանության կազմավորումը Ղարաբաղի սահմաններն են եղել հարավում՝ Արաքսը, արևելքում՝ Ջավաթ գյուղը, որի մոտակայքում՝ ղարաբաղյան լեռները: Ղարաբաղի խանության կազմավորումից հետո նրա մեջ մտնում էին հետագայի Ջևանշիրի, Շուշիի, Ջեբրաիլի գավառները և Ջանգեզուրի գավառի մի մասը: Ղարաբաղի հյուսիսային հատվածը մտնում էր Գանձակի խանության մեջ³:

Ղարաբաղի խանությունը կազմավորվել է Ղարաբաղի որոշակի հատվածում և նախապես ընդգրկել է իր մեջ Դաշտային Ղարաբաղի մի հատվածը և Շուշին: Ասել է, թե սկզբնապես Ղարաբաղի խանությունը ամենևին էլ այն տեսքը չի ունեցել, ինչպես ներկայացվում է մահմեդական պատմագրության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, մահմեդական հեղինակները, մասնավորապես Միրզա Ջամալ Ջևանշիրը, ներկայացնում են միևնույն սահմանները: Այսպիսով, ուշ միջնադարում Ղարաբաղի տարածքում գոյություն

¹ Мирза Джамал Джеваншир, История Карабахского ханства, Баку, 1961, стр. 63.

² Վ. Պոտտո, Ղարաբաղի առաջին կամավորները, Երևան, 1974 թ., էջ 5:

³ З. И. Сегал, Елизаветпольская губерния (впечатления и воспоминания), "Кавказский вестник", 1902, стр. 66.

ունեին Ղարաբաղի և Գանձակի խանութիւնները:

Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը Ղարաբաղը բաժանում է երեք մասի՝ Դաշտային, Լեռնային և Հարավային կամ Ստորին, միջին և վերին: Դաշտային կամ Ստորին գավառներն ընկած են Արաքս և Կուր գետերի, Աղստև գետի և Փոքր Կովկաս լեռնաշղթայի միջև: Լեռնային կամ Միջին գավառները ընկած են Փոքր և Մեծ լեռնաշղթաների և Ձորագետի միջև տարածված մասի վրա: Հարավային կամ Վերին գավառները ընկած են Հակարի գետի ձախ ափերի Դիզափայտ և Քիրս լեռնաշղթաների հարավահայաց լանջերին¹:

Ղարաբաղի վարչատարածքային բաժանումների վերաբերյալ կարևոր աղբյուր է հանդիսանում Միրզա Յուսուֆ Նեսեսուվի «Ճշմարտացի պատմութիւն» աշխատութիւնը:

Նադիր շահի հրամանով ստեղծված Խանսայի մելիքութիւնների տարածքային բաժանման հարցերը հետաքրքրել են հայ ուսումնասիրողներից Րաֆֆուն, Լեոյին և այլոց, որոնք ընդհանուր գծերով են նշում հայ մելիքութիւնների սահմանները: Ճիշտ է, այդ սահմանները երբեմն փոփոխվել են, սակայն XVIII դարում, ըստ երևութիւն, գոյութիւն են ունեցել որոշակի սահմանագծեր, որոնցում ժողովուրդը առանձնացնում էր մելիքութիւններից յուրաքանչյուրը: Ներսեսուվի «Ճշմարտացի պատմութիւն» աշխատութեան շնորհիվ հնարավոր է դառնում ճշգրտել XVIII դարի Խանսայի մելիքութիւնների սահմանները՝ հիմնականում համընկնելով Րաֆֆու տվյալների հետ²: Դրանք որոշակիորեն են մտցնում Ղարաբաղի հայկական տարածքների հարցում, որը անտեսվել էր XIX դարի Արևելյան Այսրկովկասի վարչական բաժանումների ժամանակ: Համեմատութիւնը ցույց է տալիս նաև, որ խորհրդային իշխանութեան հաստատման տարիներին Ադրբեջանի ենթակայութեան տակ դրված ԼՂԻՄ-ը չէր ընդգրկում Ղարաբաղի հայկական տարածքները ամբողջութեամբ: Նրա սահմաններից դուրս էին մնում ընդարձակ շրջաններ, որոնք, ինչպես երևում է Ներսեսուվի վկայութիւնից, XVIII դարում պատկանում էին Խանսայի մելիքութիւնների հայաբնակ տարածքների թվերին:

¹ Մ. եպս. Բարխուդարյանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, Երևան, 1999 թ., էջ 170:

² Րաֆֆի, Խանսայի մելիքութիւնները, Երկեր, հ. X, Երևան, 1964 թ., էջ 124:

Ներսեսուվի վկայությամբ Դիզակի մելիքությունը (մահալը) ձգվում էր արևմուտքից դեպի արևելք Յազարի (Աղավնու) գետից մինչև Քյոնդալան գետը, հարավում՝ Արաքս գետից մինչև Քիրս լեռնաշղթան¹: Վարանդայի հարավային և արևմտյան սահմանն էր կազմում Քիրսի լեռնաշղթան, արևելյանը՝ Ալի Բալի հովիտը, հյուսիսային՝ Կարկառի հարավային վտակները²: Խաչենի մելիքությունը (մահալը) «Ճշմարտացի պատմությունում» ներկայացված է հետևյալ սահմաններում. հյուսիսային և հարավային սահմաններն էին կազմում Կարկառ և Ղաբարթ գետերը: Արևմտյան սահմանը ձգվում էր Ղարաբաղյան լեռնաշղթայի (Միխթուբյան) երկայնքով, իսկ արևելքում այն եզերում էր Բայաթի՝ նախկինում անտառային, իսկ այժմ ետանտառային մարգագետնային գոտին³:

Ջրաբերդի արևելյան և արևմտյան սահմաններ էին կազմում նորից Ղարաբաղյան լեռնաշղթան ու Բայաթի անտառը, այս անգամ իրենց հյուսիսային հատվածներով, իսկ հյուսիսային ու հարավային սահմաններն էին Թարթառ և Ղաբարթու գետերը⁴: Խամսայի մելիքության (մահալ) սահմաններն էին կազմում Մռով ու Գյուլիստան լեռները և Կուր, Կուրակ ու Թարթառ գետերը⁵:

Այսպիսով, Ղարաբաղի խանությունը ընդգրկել է Կուր - Արաքսյան Միջագետքի հարավային և հարավ - արևելյան հատվածը Գանձակի և Շաքիի խանություններից հարավ և զբաղեցրել է 13 հազար քառ. վերստ⁶: Ըստ վարչատարածքային բաժանման՝ Ղարաբաղի խանությունը բաղկացած էր 21 վարչական միավորից, որոնք կոչվում էին մահալներ: Խանության կազմի մեջ էր մտնում նաև Կապան-Ջանգեզուրի շրջանը: Ղարաբաղի խանության մահալներն էին Սիսիանի, Կապանի, Դեմուրչխասանլիի, Բաղաբերդի, Խուրդափարայի, Աջնանի, Ջավանշիրի, Թալիշի, Խաչենի, Մեղրու, Վարանդայի, Փիսիանի և այլն⁷:

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Երևան, 2000 թ., էջ 40:

² Նույնի, էջ 41:

³ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 42:

⁴ Նույն տեղում, էջ 43:

⁵ Նույն տեղում, էջ 43:

⁶ **Иваненко В. Н.**, Гражданское управления Закавказье (от присоединения Грузии до наместничества великого князя М. Николаевича), Тифлис, 1901, стр 146.

⁷ Յայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974 թ., էջ 15:

Ռուսական աղբյուրներում, բացի մահալներից, նշված են նաև այն կալվածքները, որոնք պատկանում էին խանին և նրա հավատարիմ մարդկանց: Այսպես, բացի մահալներից, կային նաև հետևյալ կալվածքները՝ խանական ընտանիքին, Գյուլ-մամեդ բեկին, Ուզուրլա բեկին, Իսմաիլ բեկին, Հաջի Աղալար բեկի, Սաֆար Ալի բեկին, Խանլար աղային, Ռուստամ բեկին, Ասադ բեկին պատկանող¹: Ղարաբաղի խանությունը, որը ծագել էր միայն 1747 թ. հետո թաթարական խառը ցեղերից, որոնք հնագանդություն հայտնեցին Ջևանշիր ցեղի Սարջալու տոհմի Փանահին, որը օգտվելով Պարսկաստանում տիրող խառնաշփոթ իրավիճակից իրեն հայտարարեց խան²:

Այսպիսով, Ղարաբաղի խանությունը պետք է դիտարկել որպես մի ամբողջական էթնոքաղաքական կազմակերպություն, կոնկրետ էթնոպատմական դրություն: Ղարաբաղի խանությունը երբեք չի եղել զուտ մահմեդական խանություն, ինչպես փորձում են ներկայացնել որոշ «վայ» պատմաբաններ հարևան հանրապետությունից: Ղարաբաղի խանությունում հայ բնակչությունը միշտ գերակշռել է:

¹ Акты Кавказского Археографической комиссии, том VII, док. 1302.

² **Иваненко В. Н.**, Гражданское управление Закавказье, СПб, 1900, стр 148.

**ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴԻՄԱԴԱՐՑԸ ՓԱՐԻՁԻ ՎԵՅԱԺՈՂՈՎՈՒՄ
(1919-1920)**

1919 թ. հունվարին գումարվեց Փարիզի խաղաղության վեհաժողովը, որը պետք է քննարկեր և սահմաներ պատերազմից հետո աշխարհաքաղաքական նոր կարգերը: Տերությունների միջև ի հայտ են գալիս մեծ, վաղուց առկա հակասություններ, և ստեղծում յուրօրինակ սրվածություն: Հակասությունների այս հորձանուտում պետք է վճռվեր նաև Հայաստանի հարցը: Ակնկալվում էր, թե երկարատև զրկանքներից և համաշխարհային պատերազմի հարուցած բազմաթիվ աղետներից հետո Հայկական հարցը պիտի ստանար արդարացի հանգուցալուծում: Խորհրդաժողովի աշխատանքները նաև պետք է վճռեին Հայաստանի սահմանների հարցը: Ցավով պետք է արձանագրել, որ հայ ժողովրդի շահերը պաշտպանող երկու պատվիրակությունները Հայաստանի Հանրապետության կողմից՝ Ավետիս Ահարոնյան, արևմտահայերի կողմից՝ Պողոս Նուբար փաշա, մինչև վերջ չկարողացան համաձայնության գալ հետապնդվող նպատակների շուրջ:

Հենց սկզբից հակասությունները սրվեցին պատերազմի արդյունքում չափից դուրս ուժեղացած բրիտանացիների և նոր հզորացող ԱՄՆ-ի միջև մի կողմից, Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև՝ մյուս կողմից, ապա նաև՝ Բրիտանիայի և Իտալիայի միջև: Բրիտանացիները ռուսական կայսրության փլուզումից հետո ձգտում էին թույլ չտալ Ֆրանսիայի հզորացումը և փորձում էին հակակշռել այն ամերիկացիների միջոցով: 1919 թ. մայիսի 14-ին վեհաժողովի Չորսի խորհուրդը որոշում է Հայաստանի և Թուրքիայի մանդատն առաջարկել ԱՄՆ-ին: Հետագայում քննարկվում են նաև Հայաստանի մանդատը Իտալիային, ապա մույնիսկ՝ Հունաստանին հանձնելու տարբերակները:

Հայաստանի խնդիրը վիճարկվում էր բազմաթիվ մակարդակներում, սակայն որևէ հստակ որոշում չէր կայացվում: Միակ պարզորոշու-

թյունն այն էր, որ Դաշնակից և միավորված տերությունները համաձայն-վեցին Հայաստանը Թուրքիայից ամբողջովին առանձնացվելու հար-ցում¹:

Հայաստանի վրա ամերիկյան մանդատի տարածումը շրջանառու-թյան մեջ էր մտնելու այն պարագայում, երբ ԱՄՆ-ի Սենատը համաձայ-նություն տար մանդատային տարածքներ վերցնելու առաջարկին: Քննարկվող տարբերակներից Հայաստանի համար ամենաշահավետը և իրատեսականը ամերիկյանն էր: ԱՄՆ-ը շահագրգռված էր Հայաստանի սահմանների առավելագույն արդյունավետությամբ և պնդում էր, որ «Հայաստանի սահմանները պետք է որոշվեն այն հաշվարկով, որ բա-վարարվեն հայերի բոլոր օրինական պահանջները, և ապահովվի դեպի ծով հայերի ազատ և հուսալի ելքը»²:

ԱՄՆ-ի հեռանկարային նպատակներից էին. ստեղծել հզոր մի ման-դատային տարածք իր աշխարագրական դիրքով (հաշվի էր առնվում նեղուցների՝ Բոսֆորի և Դարդանեւի ներառումը), տնտեսական հնարավորություններով, քաղաքական կայունությամբ: Պետք է նկա-տել, որ այս պարագայում հայկական խնդիրը ավելի էր բարդանում:

Ամերիկյան քաղաքականությունն անվերապահորեն բախվում էր բրիտանական շահերի հետ: Մանդատի ընդունման դեպքում Հայաս-տանի ամերիկյան մանդատի արժեքը գնահատվում էր 757 մլն դոլար 5 տարվա համար, որից հետո այն ինքնաբավ պետք է դառնար: Նախա-պես 59.000-ամոց ուժ էր պահանջվում, որը հնարավոր կարիքի դեպ-քում կհասներ մինչև 200.000-ի³: Միաժամանակ արձանագրվում էր, որ Մեծ Բրիտանիան հավասարապես կարող է վարել այդ մանդատը, բայց ամերիկյան կողմը հայտարարում էր, որ բրիտանական մանդատն այն-քան էլ ընդունելի չի լինի հայերի համար այն առումով, որ բրիտանա-կան քաղաքականությունը կուլ էր գնում մահմեդական շահերին:

Վեհաժողովում և հատկապես Ազգերի լիգայի ստեղծման շրջանակ-

¹ Տե՛ս, Գ. Գ. **Махмурия**, Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ереван, 1999, էջ 54:

² **Дэвид Ллойд Джордж**, Правда о мирных договорах, Москва, 1957, էջ 421:

³ Տե՛ս, **Ջ. Կիրակոսյան**, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովե-տական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, 1972, էջ 611-612:

Մերում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հակասությունները հանգեցնում են ԱՄՆ-ի՝ եվրոպայում ծավալած քաղաքականությունից հրաժարվելուն: Արդյունքում՝ եվրոպացիները 1920 թ. հունվարին Ազգերի լիգայի բացման նիստն անց են կացնում առանց ԱՄՆ-ի: Իսկ մինչ այդ, Սևրի պայմանագրի ստորագրման համար Հայաստանի սահմանների հստակեցումը հանձնարարվում է նախագահ Վիլսոնին: Այստեղ պետք է նշել, որ ԱՄՆ-ը ձգտում էր մանդատային տարածքի մեջ ընդգրկել արևմտահայկական տարածքները, «սակայն այդպիսի Հայաստանը չուներ ամուր հիմք, և դաշնակից խորհրդաժողովը գտնում էր, որ այդ մտահղացումը չէր համապատասխանում իրականությանը և որպես հիմք պետք էր վերցնել Ռուսահայաստանը, որտեղ հաշվվում էր 400-500 հազար բնակիչ»¹:

Հետագայում, Մեծ Հայաստանի ստեղծման բարդությունները հաշվի առնելով, Լոնդոնի կոնֆերանսը Հայկական հարցը նմանեցնում էր Հրեական հարցին: 1920 թ. առաջին կեսին դաշնակիցները գալիս են այն եզրահանգման, որ հայերն ի վիճակի չեն լինելու պահպանել և մույնիսկ վերագրավել արևմտահայկական տարածքները, ուստի դրանք Հայաստանին տալը վտանգավոր է²: Դա բերելու էր նոր բախումների և տարածաշրջանում վիճակի անկայունացման:

Արդյունքում, դաշնակիցների խորհուրդը վերջնականապես Հայաստանը թողնում է անպաշտպան: Դա վկայում էր Լլոյդ Ջորջը, ասելով, որ չի կարող պատասխանատվություն վերցնել իր վրա և համաձայնվել Մեծ Հայաստանի ստեղծմանը: Նա խորհրդակցել էր Բալֆուրի հետ, որը Փարիզում զբաղվում էր այդ հարցով, և պարզվել էր, որ Բալֆուրն ամբողջովին կիսում է իր մտքերը: Նա նաև գտնում էր, որ բրիտանական կառավարությունը կհանգեր այդ տեսակետին: Հասկանալի էր, որ լորդ Քերզոնը, որպես Լոնդոնի կոնֆերանսին մասնակից արտգործնախարարների և դեսպանների ներկայացուցիչ, մասնակիորեն սատարում էր վեհաժողովի այդ որոշումը³: Բացի այդ՝ նա գտնում էր, որ Մեծ Հայաստանի ստեղծումը ողջ աշխարհի մահմեդականների շրջանում ոչ ցանկալի տրամադրությունների ի հայտ գալու պատճառ

¹ Дэвид Ллойд Джордж, Правда о мирных договорах, т.2 421:

² Նույն տեղում, էջ 430-431:

³ Նույն տեղում, էջ 438:

կդառնա:

Փաստորեն, Ահարոնյանի պահանջները չեն արժանանում դաշնակիցների ուշադրությանը և Հայաստանին օժանդակելուն և միավորելուն ուղղված նպատակները վերջնականապես թաղվում են 1920 թ. փետրվարին՝ Լոնդոնի, ապա 1920 թ. ապրիլին՝ Սան Ռեմոյի խորհրդաժողովներում: Այդուհանդերձ, դաշնակիցները հայերին պաշտպանելու նպատակով որոշում են դիմել ԱՄՆ-ին՝ որպես միջնորդի: Նախագահ Վիլսոնին հետագայում խնդրում են կազմել Հայաստանի քարտեզը:

1920 թ. օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռուսինիայի, Չեխոսլովակիայի լիազոր ներկայացուցիչների և Թուրքիայի միջև ստորագրվում է հաշտության պայմանագիր, որի 88-րդ կետով Թուրքիան ճանաչում էր Հայաստանի անկախությունը և համաձայնվում էր, որ ԱՄՆ նախագահի իրավական վճռով լուծվի Թուրքիայի և Հայաստանի միջև գծվելիք սահմանների խնդիրը¹:

Հետագայում Վիլսոնի կողմից գծված Հայաստանի սահմանների մեջ է առնվում Արևմտահայաստանի 90.000 քառ. կմ տարածքը:

Փարիզի վեհաժողովի ընթացող բանակցություններում բազմիցս քննարկումների առարկա է դառնում Լեռնային Ղարաբաղի հարցը: Ավետիս Ահարոնյանի և այլոց հետ բանակցություններում բրիտանացիների ներկայացրած սահմաններում Ղարաբաղը ներառվում էր Ադրբեջանի կազմում²:

Ղարաբաղի սահմանաբաժանմանն անդրադարձել են նաև բրիտանացիները, որոնք այն ներկայացրել են հատուկ հուշագրով³: Այդ հուշագիրը հետախուզության բաժնի ռազմածովային շտաբի փաստաթղթերից է՝ 32 թվով համարակալված և թվագրված է 1919 թ. ապրիլի 23-ով: Այստեղ ներկայացված են Հայաստանի արևելյան սահմանները:

Ղարաբաղի հարցը որոշվում էր լուծել ըստ նախկին ցարական բա-

¹ Տե՛ս, **Պ. Լազեան**, Հայաստանը եւ հայ դատը, Երևան, 1991, էջ 214-215: A History Of The Pease Conference Of Paris, vol. VI, London, 1924, p. 83:

² Տե՛ս, **Ա. Նասիպեան**, Բրիտանիա և Հայկական հարցը 1915-1923 թթ., ԳԲԸՄ Վ. Ապտալեան մշակութային հիմնադրամ, 1994, էջ 157, քարտեզ 6 (Հայաստանի սահմանները բրիտանական պատվիրակության կողմից առաջարկված 1919 թ):

³ Տե՛ս, Caucasian Boundaries, Documents and Maps 1802-1946, Edited by Anita L. P. Burdett, Archive Editions, London, 1996, p. 577-578:

Ժամանակ, գտնելով, որ Հայաստան-Ադրբեջան սահմանը թաթարների և հայերի միջև անհուսալի խառնվել է և անհնար է կազմել մոտավոր ազգագրական սահման: Երևանի և Ելիզավետպոլի ռուսական նահանգների միջև սահմանը առաջարկվող և եղած լավագույն ֆիզիկական սահմանն է, և այդպիսով կոպիտ ձևով հայ և թաթար փոքրամասնությունները հակառակ կողմերում հավասարեցվում են այդ գծով¹: Պարզ է, որ բրիտանացիներն այս ծրագրով ձգտում էին իրենց քաղաքականության հիմքում պահել Ելիզավետպոլի նահանգի նախկին սահմանները: Այդ սահմաններով Ղարաբաղը մտցվում էր Ադրբեջանի կազմի մեջ:

Փաստաթղթում նշված է, որ ՀՀ ներկայացուցիչ Ա. Ահարոնյանը պնդում էր Ղարաբաղի հայկական պատկանելությունը՝ փաստելով գերակշռե հայ բնակչությունը և երկրամասի հայկական տարրի անբաժան լինելը: Առաջարկվում էր անգամ Հայաստանի Հանրապետության սակավ հայաբնակ Նախիջևանի գավառը փոխարինել համարյա միատարր Ղարաբաղով²:

Սակայն, բրիտանացիները գտնում էին, որ դա հարցի լուծում չէր, և անթույլատրելի էր սահմանների ազգագրական և ֆիզիկական տարբերակումը:

Նախիջևանի օտարումը բերելու էր Հայաստանից Դիլմանի, Խոյի, Սալմաստի և Մակուի հայ բնակչության հաղորդակցության խզմանը:

Այնքան անհեռատեսորեն էր վճռված ազգային և վարչական բաժանումը, որ բրիտանացիները իրենք ևս գտնում էին, թե հարցը պետք է լրացուցիչ ուսումնասիրության ենթարկվի. «Քարտեզի վրա կարմիր գիծը առաջարկում է համաձայնության ստեղծում ազգագրական և ֆիզիկական տեսակետներից, սակայն առաջարկը կարիք է զգում ավելի լուրջ և լիակատար ուսումնասիրության, հավանաբար՝ տեղում»³: Խոսքը սահմանների լրացուցիչ ուսումնասիրումն էր էթնիկ տեսանկյունից:

Հետագայում բրիտանական կողմից մեկ այլ նախագիծ է ստեղծվում, որով Ջանգեզուրը և Շուշի քաղաքը ընդգրկվում էին Հայաստանի Հանրապետության կազմի մեջ:

Հայաստանի արևելյան սահմանների այլընտրանքային նախագիծը

¹ Նույն տեղում, էջ 577-578:

² Տե՛ս, նույն տեղում:

³ Caucasian Boundaries 1802-1946, p. 680:

կազմել և առաջարկել էր պրոֆեսոր Դուգլաս Ջոնսոնը¹: Վերջինս նշում էր, որ Ահարոնյանը պահանջում է այնպիսի սահմանների հաստատում, որը ներառում է Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի, Շուշու և Ջանգեզուրի հայկական գյուղերը, ինչպես նաև Ջեբրայիլի գավառի հայկական մասը: Ահարոնյանի ներկայացրած սահմանները Դ. Ջոնսոնը համարում էր ոչ պրակտիկ՝ ռազմավարական և տնտեսական պատճառներով: Նրա կարծիքով, այս սահմանը բաժանում էր լեռները Կուրի հովտից այն դեպքում, երբ դաշտային անասնապահ թաթարները կապված էին լեռներին իրենց անասունների հոտերով, իսկ լեռնաբնակները հարթավայրերին՝ տնտեսական առումով:

Հաշվի չառնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ գավառների բնակչության գերակշիռ մասը հայեր են, պրոֆեսոր Ջոնսոնը շարունակում էր արդարացնել Ղարաբաղի 255000 հայ բնակչության բռնակցումը Ադրբեջանին՝ դրա պատճառը բացատրելով միայն տնտեսական նպատակահարմարությամբ: Մոռացության էին տրվում էթնիկ պատկանելության, մշակութային, աշխարհագրական, պատմական և քաղաքակրթական գործոնները, որոնք Ղարաբաղի հայությանը կապում էին Հայաստանի Հանրապետության հետ: Ջոնսոնի սահմանաբաժանումը մանրամասնորեն ներկայացնում էր սահմանային գիծը, որը նշված էր Բրիտանական Միջազգային քարտեզի և Ռուսական քարտեզի կողմից: Բրիտանական եզրահանգմամբ արձանագրվում էր, որ վերոնշյալ սահմանային բաժանումն իրականացվող փոխհամաձայնությունն է և իրական ռազմավարական սահման, որը հնարավորություն կտար Հայաստանի կազմում ներառել Ջանգեզուրի գավառը և Շուշի քաղաքը, որոնցից յուրաքանչյուրն էլ պարունակում է մեծաթիվ հայկական բնակչություն:

Սահմանը Հայաստանի կազմում ընդգրկում էր ողջ Ջանգեզուրի գավառը, ներառյալ և հայերի կողմից պահանջված մասը, ավելի ցածր գտնվող Հաքարլու-Բարգուշա գետային ցանցը: Այդ ավազանի ավելի ցածր հատվածն անվիճելի է իր թաթարական բնույթով, սակայն, անհնար է այն բաժանել վերին մասից, որը Հայաստանին է, ուստի անհրաժեշտ է այն ամբողջովին առնել Հայաստանի մեջ: Սահմանագիծը Հայաստանի կազմում է ներառում նաև Շուշու գավառի փոքր մասը,

¹ Նույն տեղում:

անտարակույս քաղաքի հետ¹:

Մյուս կողմից, նշված գիծը Հայաստանից դուրս է թողնում Շուշու գավառի մեծ մասը, Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի գավառները և հայերով բնակեցված մասը Ջերայիլի գավառում:

Ջոնսոնը վկայում էր, որ անհնար է գտնել համարժեք այլ սահման, որը կներառեր Շուշու, Ղազախի, Ելիզավետպոլի, Ջևանշիրի գավառներում բնակվող հայերին:

Այսպիսով, ըստ Ջոնսոնի նախագծի, Ղարաբաղի լեռնային գավառների մեծ մասը տրվում էր Ադրբեջանին, սակայն, ի տարբերություն նախորդի, այն Հայաստանին էր թողնում Ջանգեզուրը և Շուշի քաղաքն իր հարակից մի շարք տարածքներով:

Փաստորեն, Ղարաբաղի հայ ազգաբնակչության մեծ մասը բռնի պետք է ենթարկեցվեր Ադրբեջանին: Այն ոչ մի տեսակետից իրատեսական չէր, քանզի հաշվի չէր առնում տեղի ազգաբնակչության գերակշիռ մասի կարծիքը:

Ղարաբաղի նկատմամբ բրիտանացիների որդեգրած նման քաղաքականությունը բնական է, առաջ էր բերել Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Ա. Տիգրանյանի լուրջ մտահոգությունները, որը նշում էր, թե Ղարաբաղի և նրա հարակից խնդիրներում գեներալ Թոմսոնը ու իր գործակիցները և հաջորդները գործել են ոչ իրենց գլխու, այլ արտաքին գործերի զորական նախարարության գիտությամբ և համաձայնությամբ: Թոմսոնի և մյուս գեներալների (անգամ մեզ մոտ հայասեր համարվող Բիչի) զեկուցումները մասնավորապես Ղարաբաղի և առհասարակ մեզ վերաբերվող խնդիրներում, եղել են ի վնաս մեզ և այլն²:

Ղարաբաղի նկատմամբ բրիտանական քաղաքականության վերաբերյալ բողոք ուղարկվեց Ու. Չերչիլին, որը, սակայն, հրաժարվեց ընդունել այն իրողությունը, թե «բրիտանացիները Ղարաբաղը Ադրբեջանին հնազանդեցնելու քաղաքականություն են վարում»³:

Իհարկե, Հայաստանի Հանրապետության արտգործնախարար Ա. Տիգրանյանի դժգոհությունը բրիտանական քաղաքականության վերա-

¹ Caucasian Boundaries 1802-1946, p. 680-681:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 62, քք. 1-2:

³ Տե՛ս, նույն տեղում:

բերյալ ուներ իր օբյեկտիվ պատճառները, քանզի հսկայական էին նույնիսկ այն սխալները, որոնք չէին ժխտում անգամ իրենք՝ բրիտանացիները: 1920 թ. մարտի 3-ին “Times”-ի համարում Ու. Չերչիլը կառավարության նկատմամբ դժգոհություն է արտահայտում. «Գեներալ Սիլը դժգոհում է, որ նրանք (կառավարությունը) հաշվի չեն առել մի քանի հազար հայերի կյանքի ապահովումը: Հայերի խնդրի դժվարությունը նրանում է, որ թուրքական և հայկական բնակչությունը բավական մեծ տարածքներում խառն է»¹:

Բրիտանական քաղաքականությունն այլևս ի վիճակի չէր միջամտելու շարունակվող գործընթացներին, ուստի բուլշևիկյան ուժեղացող ճնշումն իր հունի մեջ էր առնելու նաև Հայաստանը, որի մասին իր կառավարությանը տեղեկացնում էր Անդրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Կոմանդոր Լյուկը²: Նա վկայում էր, որ Լեգրանը հայտարարել է, թե Ղարաբաղն ու Ջանգեզուրը հայկական տարածքներ են:

Իսկ այդ պարագայում, երբ խորհրդայնացել էր Ադրբեջանը և խորհրդայնացումը տարածվում էր Ղարաբաղում և այլ տարածքներում, Հայաստանի Հանրապետությանը ոչինչ չէր մնում անել, քան համաձայնել խորհրդային Ռուսաստանի հետ: 1920 թ. օգոստոսի 10-ին Բ. Լեգրանի, Ա. Ջամալյանի և Ա. Բաբալյանի մասնակցությամբ ստորագրված խաղաղության մասին պայմանագիրը պարունակում էր 6 կետ: Համաձայն 2-րդ կետի, վիճելի համարվող «Ջանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը զբաղեցվում էին խորհրդային զորքերով, մինչև նոր խաղաղության համաձայնագրի ստորագրումը մոտ ապագայում»³: Պայմանագրի 6-րդ կետով թույլ էր տրվում Հայաստանի տարածքով խորհրդային զորքերի ազատ տեղաշարժը, մի հանգամանք, որին առանձնահատուկ նշանակություն էր տալիս խորհրդային ղեկավարությունը: Նպատակը թուրքիայի հետ անմիջական կապի ստեղծումն էր, որով պետք է ապահովվեր «համաշխարհային հեղափոխության» տարածումն Արևելքում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը Ղարաբաղը ճանաչում էր խորհրդային ազդեցության գոտի, որն էլ առաջացնում է բրիտանացիների դժգոհությունը: Այս մասին Հայաստանի Հանրապետության

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 104:

² Տե՛ս, Armenia, Political and Ethnic Boundaries 1878-1948, London, p. 816:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 262:

կառավարությանը բողոք է հայտնում կոմանդոր Լյուկին փոխարինած գնդապետ Ստոքսը: Հոկտեմբերի 3-ին երևան ժամանելուց հետո նա արդարանում էր, թե «Անգլիան այժմ անգոր է ռեալ օգնություն հասցնել Հայաստանին, ռմբակոծել կամ վերցնել Տրապիզոնը միտք չունի, որովհետև Անգլիան չի կարող մեծ ուժ հանել տաճկական ափը՝ երկրի խորքերը գնալու, իսկ միայն քաղաքը և նավահանգիստը գրավելը մեծ օգնություն չի տա Հայաստանին»¹: Ստոքսը օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է անհեռատես քաղաքականություն: Նա, փաստորեն, խորհուրդ էր տալիս հույսը դնել միայն սեփական ուժերի վրա և հրաժարվել օգնություն ստանալու գաղափարից:

Վերոնշյալ քաղաքական իրադարձությունների կապակցությամբ իր բողոքն է հայտնում Անգլիայի «Բանվորական Կուսակցությունը»²: Այնտեղ նշվում է, որ Ռուսաստանը չի կարող թույլ տալ Թուրքիայի կողմից Հայաստանի տարածքների նվաճումը, քանզի դա անարդարացի է:

Սակայն սա ընդամենը բողոք էր և իրատեսական ազդեցություն չէր կարող ունենալ:

Իսկ, իրականությունն այն էր, որ շարունակում էր գործել թուրք-թաթարական հայասպան մեքենան, այս անգամ արդեն քենալաբուլ-շևիկյան քողի տակ: Հայ ժողովուրդը հայտնվել էր օրհասական նոր վիճակի առջև:

Այսպիսով, բրիտանական զորքերի դուրսբերումն Անդրկովկասից Լեռնային Ղարաբաղը լիովին թողնում էր անպաշտպան՝ թուրք-թաթարական ջարդարարների դեմ, իսկ ադրբեջանական բանակը և մահմեդական խաժանուժը նախաձեռնում էին Ղարաբաղ-Ջանգեզուրի բռնազավթումը: Չնայած, որ Հայաստանի Հանրապետությունը քայլեր է ձեռնարկում Ղարաբաղ-Ջանգեզուրի պաշտպանության ուղղությամբ, սակայն իրականացվում էին Շուշու հայության և Ղարաբաղի մյուս հատվածների հայ բնակչության կոտորածները: Պետք է նշել, որ Ղարաբաղի պաշտպանունակության ամրապնդման աշխատանքները զուր անցան, քանզի խորհրդաքենալական համագործակցությունը բերում էր Ղարաբաղի խորհրդայնացմանը: Բրիտանական դիրքորոշումները Փարիզի վեհաժողովում Ղարաբաղի սահմանների և պատկանելիության շուրջ

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 94, ք. 1-2:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 103:

հարցը թողնում էին անվճռելի: Վեհաժողովի ավարտի հետ Ղարաբաղի հարցի որոշումը առկախ էր մնում:

Ղարաբաղի խորհրդայնացմամբ երկրամասի պատմության համար բացվում է մաքառումների և պայքարի մեկ այլ ժամանակաշրջան՝ լի հերոսացումով, նվիրումով, հայրենասիրությամբ:

1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագիրը Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների հարցի վճիռը թողնում էր իրենց՝ այդ պետությունների փոխադարձ համաձայնությամբ: Իսկ դա նշանակում էր, որ վիճարկվող գավառների շուրջ պայքարը պետք է շարունակվեր:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Թուրքիայի կողմից Հայաստանին պարտադրված Ալեքսանդրապոլի պայմանագրով հայերին ստիպում էին նաև հրաժարվել Սևրի պայմանագրից:

Պատահական չէր, որ խաղաղության վեհաժողովը հանգեց այդպիսի որոշման, քանզի հենց այդ ժամանակ Անդրկովկասում իր կամքն էր սկսում թելադրել խորհրդային Ռուսաստանը:

ՎԱՐԱՆՂԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆԸ

Վարանդա գավառի մելիքության տարածքը սկսվում էր Կարկառ գետից և տարածվում մինչև Քիրս-Դիզափայտ լեռնագոտին: XVII դ. սկզբից Վարանդա գավառի տիրակալներն էին Մելիք-Շահնազարյանները, որոնց իշխանանիստը Ավետարանոց (Չանախչի) բերդավանն էր: Այստեղ «ժամանակին երեք մելիքական ապարանքներից բաղկացած պալատական համալիր է եղել, որոնցից միայն մեկն է հատվածաբար մեզ հասել»¹: Սույն հողվածում համառոտ ներկայացվում է Վարանդայի մելիքության պատմությունը:

Միջնադարյան Հայաստանի և Վրաստանի կյանքում մեծ դեր ունեցած Ջաքարիա սպասալարի ու Իվանե աթաբեկի քույր Դովից առաջացած Դովյան իշխանական տոհմից է XVI դ. սկզբում սերվել Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների տոհմը², որի ներկայացուցիչ Միրզաբեկը XVII դ. սկզբին բնակություն է հաստատել Վարանդայի Ավետարանոց գյուղում և այնտեղ սկիզբ դրել Մելիք-Շահնազարյանների տիրապետությանը:

Միրզաբեկի Վարանդայի Ավետարանոց գյուղում հաստատվելու մասին Ս. Ջալալյանցը գրում է. «Վերանորոգող մեծաշեն գիւղաքաղաքիս եղև մելիք Միրզաբեգ որդի մելիք Մելիքբեգի, թռն Ապովայ տեառն Գեղամայ, եղբայր Շահնազարայ՝ տեառն Գեղարքունւոյ, քանգի ի գօրանալ Կովկասական ասպատակաց և յարծակիլ ի վերայ նահանգին Գեղամայ ի թուին Հայոց ՌԼԱ (1582), որպէս երևի ի տապանագիրս այնր գաւառի թէ «ի փոխիլ Ղուզիլբաշին Տաղստանայ Լեկզին՝ որ գաւառս

¹ **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Ե., 2001, էջ 89:

² **Տեր-Մկրտչեան Կ.**, Դօփեանք և Մելիք Շահնազարեանք, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Բ, էջմիածին, 1914, էջ 97 և հաջորդ էջերում:

աւերեցաւ թվին ՌԱ-ին»։ Այնուհետև սկիզբն եղև աւերանաց բարեբեր աշխարհին Գեղամայ. վասն որոյ և բնակիչք նորա ածապարեալ անկան յանուրս Արցախու և Գարդմանայ, յայնժամ և Մելիքբեգ ընտանեօք իւրովք էջ ի գիւղն Աւետարանոց և սկիզբն արարեալ վերանորոգեաց զսա և շքեղացոյց որպէս վայելն էր իւրումն փառաց և պատուոյ, յորոյ սերնդոց ելին արք հզօրք և անուանիք. և եղեն տիրապետօղք այսոցիկ գաւառաց¹։ Հետագայում այս միտքը գրեթե նույնութեամբ կրկնել է Մ. Սմբատյանցը²։

Այն, որ Մելիք-Շահնազարն ունեցել է Միրզաբեկ անունով կրտսեր եղբայր, ակնհայտ է դառնում Կ. Տեր-Մկրտչյանի հրատարակած հիշատակարանից.

«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զպարոնաց պարոնն և գլխիսանաց յիշխանն՝ զՄելիք Շահնազարն և զհայրն իւր զՄելիքբեկն և զմայրն իւր զԽաթունաղէն և զկենակիցն իւր զպրն Ֆախրիջահանն... և զհարագատ եղբայրսն իւր՝ զպրն Ատիբեկն, որ տարածամ մահուամբ փոխեցաւ առ Աստուած, և զԳաւզայ բեկն և զորդին իւր զԼաւանդ բեկն. զՄիրզաբեկն և որդին իւր զԲադրխանն. և զայլ ամենայն արեան մերձաւորսն իւր»³։

Միրզաբեկի Գեղարքունիքից 1582 թ. Վարանդա տեղափոխվելու Ս. Զաւալյանցի առաջարկած թվականը չի ընդունվել Կ. Տեր-Մկրտչյանի կողմից, որովհետև վերջինիս ասելով ինքն այդ թվագրով արձանագրութիւն չի գտել։ Բացի այդ, այլուստ հայտնի է նաև, որ դեռ 1606 թ. Գեղարքունյաց գավառը որևէ ավերվածութեան չէր ենթարկվել։ Ամենայն հավանականութեամբ Միրզաբեկը Վարանդա է տեղափոխվել 1603 թ., իսկ Մելիք Շահնազարն էլ նույն ժամանակամիջոցում ապաստանել էր Ծարում⁴։

Վերջին վարկածի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պատմիչ Հովհաննեսիկ Ծարեցին 1572-1600 թթ. անցքերն ընդգրկող իր ժամանակագրութեան մեջ, ցնցող գույներով նկարագրելով Վարանդա գավա-

¹ **Զաւալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հ. Բ, Տփիսիս, 1858, էջ 247։

² **Սմբատեանց Մ.**, Տեղեկագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, Վաղարշապատ, 1896, էջ 810։

³ **Տեր-Մկրտչեան Կ.**, Դօփեանք և Մելիք-Շահնազարեանք, էջ 189-190, 194։

⁴ Նույն տեղում, էջ 133-134։

ռուն 1579-1580 թթ. տեղի ունեցած սովը¹, ոչինչ չի հաղորդում նման մի տեղափոխության մասին:

Բայց 1603 թ. այդպիսի մի տեղաշարժի մասին վկայություն, իրոք, գտնում ենք Դավիթ եպիսկոպոսի հիշատակարանում. «Յորժամ եղև գարուն, այս բարեմիտ և իմաստուն իշխանս պարոն Մելիք Շահնագարս, իմացաւ զոխս սրտից Օմար ազգին, հրաման արար երկրիս, թէ «Եկայք մտցուք յամուրս, զի մի՛ լիցուք կոխան այլազգաց» և ինքն գնաց ի Ծար և ի Տպէլ: Եւ որք զհետ նորա գնացին, զերժան ի սրոյ և ի գերութենէ այլազգեաց»²: Տպէլի տեղադրության հարցը պարզած Ա. Գակոբյանը և Գ. Սիմոնյանը ենթադրում են, որ «Մելիք Շահնագարը ամենայն հավանականությամբ հետապնդումներից խուսափելու համար նախ անցել է Ծար, ապա երբ վտանգը ավելի է սաստկացել՝ Տուտխուի հովիտը՝ Տպէլ»³: Հավանաբար այդ ժամանակ էլ Մելիք-Շահնագարի եղբայր Միրզաբեկը հաստատվել է Վարանդայի Ավետարանոց գյուղում: 1606 թ. Շահնագարը նոր էր մահացել, որ շահ Աբաս Ա-ն այցելեց մելիքանիստ Մեծ Մազրա, հյուրընկալվեց Շահնագարի որդիներ Օրիի (Յավրի) ու Քամալ-բեկի կողմից, նրանց նորից հաստատեց գավառի տեր՝ նվիրելով նաև ուրիշ գյուղեր ու դաստակերտներ, իսկ մելիք Շահնագարի կրտսեր եղբայր Միրզաբեկին էլ մելիք կարգեց Վարանդայում⁴:

Սինչև Վարանդայի մելիքի պաշտոնում Միրզաբեկի հաստատվելը, այնտեղ իշխել է մեկ այլ հայկական մելիքական տուն, որի ներկայացուցիչների այսպիսի մի հերթականություն է վիճազրերի հիման վրա նշում Մ. Բարխուտարյանը. «Մելիք-Պապի որդի Գալստիանայ, Մելիք-Աւան որդի Մելիք-Պապու, Մելիք-Աղան եղբայր Մելիք-Աւանայ, Մելիք-Փաշայ կամ Փաշիկ որդի Մելիք-Աւանայ, Մելիք-Դանիէլ, Մելիք-Մուզաֆֆար, որ

¹ «Ճռաքաղ», Մոսքուա, 1859, տետրակ 9, էջ 73-75, **Առաքել Դարիժեցի**, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 608-611, Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. 2, Ե., 1956, էջ 242-244:

² **Տէր-Աւետիսեան Ա.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 68, Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, Ե., 1974, էջ 218:

³ **Գակոբյան Ա., Սիմոնյան Գ.**, Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպէլի տեղադրության հարցը, «ՊԲԳ», 1998, թիվ 1-2, էջ 230:

⁴ **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 132:

է տոհմիս վերջին մելիքն»¹: Վարանդա գավառում տեղի ունեցած իշխանափոխության մասին Լեոն գրում է. «Այս տոհմը ետ մղվեց Մելիք-Շահնազարյաններից, որոնք և իրենց ձեռքն առան ամբողջ Վարանդան»²: Այդ պատմության վրա որոշակի լույս է սփռում Միրզաբեկի որդի Մելիք-Բաղի Ա-ին (Բաղրխան, Բաղրխան) Իրանի շահ Սեֆու (1629-1642) կողմից 1633 թ. տրված հետևյալ հրովարտակը, որի պատճենը հրատարակել է Մ. Բարխուտարյանը.

«Բարձրագոյն հրաման եղաւ... Նշանաւոր քրիստոնէայ Մելիք-Բաղին յայտնում է, թէ Վարանդայ գաւառի բնակիչները, նոյն գաւառի տանուտէրների կազմած հասարակական վճռով ընտրել և ճանաչել են զինքը իրանց մելիք, բայց յիշեալ գաւառի շրջաններից մի քանիսն՝ Մելիք Դանիէլը... Թագաւորին մերձաւոր բարձր աստիճանաւորներն-Սաֆի-դուլի բէկ և Ալի-Մարդան բէկ իւզբաշին, Սամէդ-Բաղր-բէկ և ուրիշները հաստատել են հպատակների հասարակական վճիռը: Այդ բանը վաւերացնելու համար ներկայացնելով վերև յիշուած հասարակական... (Մելիք-Բաղին) խնդրում է նշանակել զինքը մելիք յիշեալ գաւառին:

Արքունի օրագրից երևում է, որ այդ գաւառի պարտականութիւնը (մելիքութիւնն) յանձնուած էր Մելիք-Մուզաֆֆարին... Մելիք-Մուզաֆֆարն հասարակական այդ վճռի վերայ մակագրել է, որ ինքն հրաժարուում է յիշեալ գաւառի մելիքութեան պաշտօնը կատարելուց և որ նորա եղբօր մահից յետոյ ոչ ոքի յանձնուած չէ այդ պաշտօնի կատարելն:

Ուստի յարգելով նորա (Մելիք-Բաղու) խնդիրը, մենք հրամայեցինք, համաձայն հասարակական վճռին, որը կազմել են Մելիք-Մուզաֆֆարն և ուրիշներն, մեր թագաւորական միւս շնորհների նման «Լույ-իլ» (կոկորդիլոսի տարին) ամսի ութին... Մելիք-Բաղին մելիք Վարանդայի գաւառին, որն առաջ յանձնուած էր Մելիք-Մուզաֆֆարին և Ղարա-Կիւնին... Տաճկաց 1042 (1633) թւին»³:

Սույն հրովարտակից երևում է, որ Մելիք-Մուզաֆֆարը, չկարողանալով դիմակայել առավել հզոր այս տոհմին, հրաժարվել է «յիշեալ գաւառի մելիքութեան պաշտօնը կատարելուց» հօգուտ Մելիք-Բաղու,

¹ **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 40-41:

² **Լեոն**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, Ե., 1973, էջ 257:

³ **Բարխուտարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 41-42: Այստեղ Մ. Բարխուտարյանը 1633 թ. տրված հրովարտակի հեղինակ է համարում 1587-1629 թթ. գահակալած Շահ-Աբբաս Ա-ին, մինչդեռ այդ ժամանակ Իրանի շահը Սեֆին էր:

որին էլ Վարանդայում հաջորդել է որդին՝ Մելիք-Շահնազար Ա-ը: Այդ մասին ստույգ տեղեկություններ ենք գտնում Շահ-Աբբաս Բ-ի (1642-1666) կողմից 1646 թ. նրան տրված հրովարտական, որի սկիզբը նախորդ հրովարտակի հակիրճ վերաշարադրությունն է.

«Համաձայն բարձրագույն հրամանի, որ տրված է Հիջրեթի 1042 թ. Ռեջեբ ամսում (1633 թ. հունվարի 12 - փետրվարի 11), Արամի Վարանդա կալվածի տիրապետությունը հանձնված էր Մելիք-Բադի քրիստոնյային հպատակների գրավոր համաձայնությամբ, որ վավերացրել և ստորագրել էր Խափանի ամենահռչակավոր և ամենափառավոր կողմնակից Սեֆի-Կուլի-բեկը, շինությունների վերակացուն, ամենաբարձրապատիվ Ալիմերտան բեկի կառավարության ժամանակ:

Այժմ գերազանցագույնը քրիստոնյաների մեջ, Մելիք-Շահնազարը, որդի վերոհիշյալ Բադիի, եկավ Դիվանը և հայտարարեց, որ իր հայրը ճանաչված էր տիրապետող և որ վերոհիշյալ կալվածի տանուտերերը և հպատակները իրենց ստորագրությունները և կնիքները դրել են այն խնդրագրի վրա, որով ճանաչում են և Մելիք-Շահնազարին իրենց վրա տիրապետող, իսկ ամենաբարձրապատիվ Սեֆի-Կուլի-բեկը նորից վավերացրեց և ստորագրեց այն խնդրագիրը ի հաստատություն թե նրանք ճիշտ որ ճանաչում են նրան իրենց տեր: Ուստի բարձրագույն արքայական ողորմածությամբ հրամայում ենք, որ ծայն տալու իրավունք ունեցող անձինք համաձայն լինեն տալ չորրորդ մասը նրա տիրապետության, իսկ նա, Շահնազարը, պիտի ամեն տեսակ ջանք և եռանդ գործադրե պահպանելու հպատակների և ստորադրյալների մեջ կատարյալ արդարություն և ուղղամտություն, գործելու այնպես, որ չլինի և ոչ ամենափոքր ճնշում և կողմնապահություն, իսկ վերոհիշյալ կալվածի հպատակները և ստորադրյալները պարտավոր են համարել նրան լիազոր տեր, չչեղվել նրա հրամաններից և կարգադրություններից, որոնք վերաբերում են կալվածը մեծացնելուն և բարեշինելուն, առանց նրա գիտության ամենափոքր իրավունքներ և արտոնություններ անգամ չյուրացնել, համարել տիրողի բոլոր իրավունքները նրան շնորհված, չտալ նրան օգնական կամ ընկեր, ընդունել որ այս կարողությունը պատկանում է նրան ըստ սովորության և նախկին տիրողների օրինակով, իսկ վերոհիշյալ մելիքը պարտավոր է վարվել այնպես, որ ամենքը գոհ լինեն նրանով և վերջապես կատարել այս հրամանը, որ հաստատված է թագավորական կնիքով: Տրված է Ջուլիիջա ամսին

1055 թ. (1646 թ. հունվարի 18-փետրվարի 17)»¹:

Հետագայում հավանաբար հենց Մելիք-Շահնազարն էլ իր ծնողների հիշատակին Ավետարանոցի եկեղեցուն մի խաչ է նվիրել, որի արձանագրությունը ընդօրինակել է Ս. Ջալալյանը. «Սուրբ խաչս յիշատակ է մելիք Բաղուն և իւր կողակից Մարիամին ի դուռն Ամարասայ. թվին Հայոց ՌճԺ (1661)»²:

Մելիք-Շահնազար Ա-ը որպես Վարանդայի տիրակալ հիշվում է նաև 1673-ին, Հերիեր գյուղի Ս. Գրիգորիս եկեղեցու արևմտյան դռան ճակատակալ քարին փորագրված արձանագրության մեջ. «Ջաւրութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս ի դռն եւ ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց եկն մարախ, եկեր զերկիրս Աղուանից եւ աւերեաց բազում տեղիս ի թագաւորութեան Շահ Սուլէմանին, պարոնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք Բաղու որդի Մելիք Շահնազարին եւ օժանդակութեան Ովանիսին եւ քահանայից եւ տանուտեարց, մեծամեծաց եւ փոքունց ամէն. թվին ՌճԻԲ (1673)»³:

Մելիք-Շահնազար Ա-ին հաջորդել է որդին՝ Մելիք-Բաղիր կամ Բաղի Բ-ը, որի վերաբերյալ պահպանվել են մի շարք վկայություններ: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանն իր պատմության մեջ վկայում է, որ լեզգիները 1722 թ. ապրիլին «անցին յերկիրն Վարանդու, զնոյն (ավերն ու ավարը - Ա. Մ.) և անդ գործեցին. բայց Մելիքն նոցա Պաղիր անուն փութով ընդ առաջ յղեաց նոցա արս ոմանս յիրմէ անտի ընծայիւք, և զկէսն թափեաց զգերւոյն և զերկիր իւր»⁴:

Մելիք-Բաղու մասին որոշ տեղեկություններ էլ գտնում ենք 1723-1728 թթ. հայ-ռուսական հարաբերություններն արտացոլող մի քանի փաստաթղթերում: Այսպես, Մարտիրոս վարդապետի՝ 1724 թ. փետրվարի 24-ին Դերբենդի ռուսաց պարետին ուղղված նամակում, ուր խոսվում է նաև Արցախի մելիքների և յուզբաշինների քաղաքական կողմնո-

¹ **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 17:

² **Ջալալյանց Ս.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 248:

³ **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 214, **Լալայան Ե.**, Երկեր, հ. 2, Ե., 1988, էջ 37:

⁴ **Եսայի Հասան-Ջալալեան**, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868, էջ 37, տես նաև **Կոստանեանց Առ.**, Դիզակի մելիքութիւնը, «Նիւթեր հայ մելիքութեան մասին», պրակ Ա, Վաղարշապատ, 1913, էջ 20:

րոշումների մասին, կարդում ենք. «Մէլիք Պաղի թոռնը մէլիք Պաղըր կանա Կարմիր աչքի (պարսիկների-Ա. Մ.) կողմն է»¹: Սակայն, նշենք, որ 1726 թ. մայիսին, Մէլիք-Քաղին Արցախ ժամանած Պետրոս Ա-ի պատվիրակ Իվան Կարապետին է տվել հավատարմության հետևյալ երդմնագիրը.

«Գիրեցաւ էլչի Իվան Կարապետի հրամանովն:

Պատշառ գրոյս այս է. ես՝ Վարանդեցի մէլիք Պաղիս, տեր Օվանս, և այլ ջամհաթս, ամէն թօպուն թալեղս, այս գիրս դվինք վերայգրեալ էլչի պէկին հրամանոցն, խօսքէն, թէ և մասլահաթէն դուս գանք, թագայորէն խային լինինք և մեր ապրանք տոնկ լնի:

Մեր կամով գիրեցինք գիրն ՌՃԴԵ (1726) թվին»²:

Մէլիք-Քաղրի ընտանիքի անդամների մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Ե՛վ այս, և՛ այլ դեպքերում մելիքական ընտանիքների մասին մեր պատկերացումները ընդլայնում են վիճաբերը: Մէլիք-Քաղրի կնոջ անունն անհայտ է, իսկ Ավետարանոցի մոտ, Կուսանաց անապատում³ գտնվող Մէլիք-Շահնազարյանների տոհմական հանգստարանի մի տապանագրից տեղեկանում ենք, որ.

**«Այս է դապան մէլիք Պաղրի որդի մէլիք Միրզաբէկին,
թվին ՌՃՂԳ (1744), նոյեմբերի Ժ (10) առ...**

Աստուած փոխեցաւ, օվ որ գարդա ողորմի ասի. ամէն»⁴:

¹ Արրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Ե., 1953, էջ 40, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, Ереван, 1967, с. 72.

² Արրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 253, Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. II, ч. II, с. 291.

³ 1825 թ. կազմված Արցախի վանքերի ցուցակում Կուսանաց անապատը ներկայացված է այսպես. «Անշէն անապատ Կուսանաց, կառուցեալ մերձ գեղջն Աւետարանոց Վարանդայ գաւառակի, եկեղեցին ամբողջ, տանիք գաւթին խախտեալ, յորում ամփոփեալ կան մարմինք ոմանց Մելիքաց ցեղին Մելիք-Շահնազարեանց, և այլոց հոգևորականաց, սենեակքն բոլորովին կործանեալք» (տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը 1813-1933 թթ., Ե., 2001, էջ 47): Կուսանաց անապատի մասին տե՛ս նաև **Мелик-Шахназаров Е.**, Из древностей селения Ченахчи. Кусанац анапат, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 19, Тифлис, 1894, с. 78-83:

⁴ Դիվան հայ վիճագրության (այսուհետև՝ Դիվան), V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Ե., 1982, էջ 149:

Իսկ Մելիք-Բաղու դուստրերի անունները հայտնի են դառնում Ավետարանոցում Մ. Բարխուտարյանցի ընդօրինակած սույն հիշատակարանի շնորհիվ. «Սուրբ ավետարան սրբագիր եւ ոսկեգօծ վախճան եւ յիշատակ է Աբրահամ պարոն-տէրին, որ տվան Մելիք Պաղուն կուսակրօն դստերացն Յուսիմին եւ Դաւլաթին եւ Շահնադուխտին ձեռքն ի վայելումն... գրեցաւ մատամբ տէր եղիազարին մայիսի ԻԵ (25). օրն թվ. ՌՃՁՁ (1737). էր»¹:

Մելիք-Բաղիր Բ-ը հավանաբար 1730-ին արդեն վախճանված էր, որովհետև այդ թվականին Իրանի շահ Թահմասպ Բ-ի (1722-1732) հրովարտակով Վարանդայի մելիքի պաշտոնում նշանակված ենք տեսնում Բաղրի եղբայր Մելիք-Յուսեյնին: Մեջբերենք այդ հրովարտակի XIX դ. կազմված և մեզ հասած պատճենի թարգմանությունը.

«Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի կապակցությամբ.

Թոնգուզ յըլի (խոզի տարվա) չորրորդ ամսվա սկզբից Վարանդա մահալի մելիքությունը շնորհեցինք բարձրաստիճան Մելիք Սուհամնադ Յուսեյնին, որպեսզի ինչպես հարկն է այդ գործը ստանձնելով, նրա պարտականությունները առանց թերացման կատարի, ռայաթների հետ, որոնք ամենազոր Արարչի որոնումների արժեքավոր ձեռքբերումն են, լավ վերաբերվի՝ այնպես անելով, որպեսզի բոլորը նրա բարի արարքներից գոհ ու շնորհակալ լինեն և բարի օրհնանք հղեն սրբազան էությանը: Վերոհիշյալ մահալի քեդխուդաներն ու ռայաթները հիշյալ բարձրաստիճան պաշտոնյային պետք է այնտեղի մելիք ճանաչեն, նրա օրինավոր խոսքին ու կամքին, որ ուղղված կլինի մահալի շենացմանը և դիվանի ունեցվածքի հարստացմանը, չհակառակվեն: Թող մեծ մուսթովֆիները այս ռադամ-շնորհագիրը հարատևող մատյաններում գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն: Գրվեց 1142 թ. սրբազան զի հեջջե ամսին (1730 թ. հունիսի 17-հուլիսի 17)»²:

¹ Բարխուտարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, էջ 209:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 173, պատճեն: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. "копия от грамоты Тахмасп Шаха": Այս հրովարտակի թարգմանության համար շնորհակալ ենք Ք. Կոստիկյանին: Նա նաև ենթադրում է, որ փաստաթղթում Մելիք-Յուսեյնի «Սուհամնադ անունը կամ ավելացվել է բնագրի պատճեն կազմելու ընթացքում տեքստի սխալ ընթերցման արդյունքում կամ մահմեդական միջավայրում նա այդ անունը ևս կրել է» (տես **Կոստիկյան Ք.**, Թահմասպ II-

Մելիք-Յուսեփինը հայտնի է օսմանյան թուրքերի դեմ տարած մի քանի հաղթանակներով: Այդ մասին է վկայում Կուսանաց անապատի գավիթ-դամբարանում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը¹: Մելիք-Յուսեփինը վախճանվել է 1736 թ.:

Մելիք-Յուսեփինի կինը Դիզակ գավառի տիրակալ Մելիք-Եգանի (մահ. 1744) քույր Աննա խաթունն էր: Ավանդությունը Մելիք-Յուսեփինի կնոջ՝ Աննա խաթունի և դստեր՝ Գայանեի հետ է կապում մի գիշերում Արցախ թափանցած օսմանյան զորամասի ոչնչացումը, որից հետո Գայանեն մտնում է կուսանոց, նվիրվում գրչարվեստին: «Գայանէ կոյսն, որ սբանեց Իսմայիլ փաշին և գրեց սուրբ Ավետարանն, որ շենում է եկեղեցումն Չանաղչու»², - կարդում ենք Մատենադարանի ձեռագրերից մեկում: «Իմ 1881 թվի ճանապարհորդության ժամանակ, - գրում է Րաֆֆին, - Ավետարանոց գյուղում ինձ հաջողվեցավ տեսնել մի հրաշալի գրչագիր ավետարան, որ գրված էր նույն Գայանեի ձեռքով»³:

Աննա խաթունը վախճանվել է 1747 թ., ինչպես վկայում է Կուսանաց անապատի գավթում գտնվող նրա տապանաքարի սույն արձանագրությունը.

**«Այս է դապան մելիք Յիսեփն
գողակից Եանիա [խա]թունին,
թվին ՌՃՂԶ (1747)»⁴:**

Մելիք-Յուսեփինին հաջորդել է նրա եղբայր Մելիք-Բաղու որդի Մելիք-Սիրզաբեկ Բ-ը, որի մասին չափազանց քիչ բան է հայտնի: XIX դ. պատմագիր Սիրզա Յուսուֆ Ներսեսովը (Յուսեփի Ներսիսյանց) գրում է. «Նադիր շահը նրանից (Մելիք-Շահնազարյաններից- Ա. Ս.) ոմն Սիրզաբեկի, հանցանք վերագրելով, պարանով խեղդամահ է անում և ասում.

ի հայերին ուղղված հրովարտակները և 1730-31 թթ. նրա արշավանքը դեպի Երևան, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIII, Ե., 2004, էջ 358):

¹ **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1987, էջ 441, **Քարխոտարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 44-45, Դիվան, V, Արցախ, էջ 149:

² **Միքայէլ-բէկ Մելիք-Շահնազարեան**, Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին, Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9:

³ **Րաֆֆի**, նշվ. աշխ., էջ 441:

⁴ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) նյութեր, **Ս. Կարապետյանի** «Արցախի վիմագրերը» անտիպ աշխատությունից: Այն տապանագրերը, որոնց համար աղբյուր չի նշված, վերցված են վերոհիշյալ դիվանից:

«Սա Շիրույենների (Կավատ Բ-ի- Ա. Ս.) ցեղից է»¹: Իսկ XIX դ. կեսերի մեկ այլ հեղինակ՝ Միքայել-բեկ Մելիք-Շահնազարյանը, այդ մահապատիժը կապում է Մելիք-Միրզաբեկի կողմից հարկային պարտավորությունները չկատարելու հետ²: Իսկ ահա Րաֆֆու գրչի տակ պարանը վերածվել է դահճի սրի³: Այս դեպքը, ինչպես վկայում է Մելիք-Միրզաբեկի տապանաքարի վերորբերյալ արձանագրությունը, տեղի է ունեցել 1744 թ. նոյեմբերի 10-ին:

Նադիր շահը մահապատժի ենթարկված մելիքի փոխարեն Վարանդայի տիրակալ է նշանակել Մելիք-Յուսեփինի ավագ որդի Մելիք-Յովսեփին: Վերջինիս մելիքությունը, սակայն, կարճ է տևել: Մելիք-Յովսեփի կրտսեր եղբայր Մելիք-Շահնազար Բ-ը, որը «խելակորույս սիրահարված էր իշխանություն կոչված գեղեցկուհու սրտամաշ աչքերին»⁴, օգտվելով Նադիր շահի սպանությանն (1747) հաջորդած քաոսից, սպանել է եղբորը, կոտորել նրա ընտանիքը և իրեն հռչակել Վարանդայի մելիք: Ուշագրավ է այս եղբայրասպանության Րաֆֆու մեկնաբանությունը. «Մելիք-Յովսեփը և Մելիք-Շահնազարը խորթ եղբայրներ էին, բացահայտում է նա, ՝ Յովսեփը ծնված էր Մելիք-Յուսեփին Ամնա-խաթուն անունով կնոջից, որը Տիզակի իշխան Մելիք-Ավանի քույրն էր, իսկ Մելիք-Շահնազարը ծնված էր Ջոհրա-խանումից, որը Նախիջևանի խանի աղջիկն էր, ազգով թուրք: Մելիք-Յուսեփինը նրան իբրև գերի բերեց Նախիջևանից, հետո ամուսնացավ նրա հետ»⁵: Սպանված Մելիք-Յովսեփը խաչեն զավառի տիրակալ Յասամ-Ջալալյանների փեսան էր և վերոհիշյալ արյունահեղությունից մազապուրծ եղած նրա փոքրահասակ որդին՝ Սայի-բեկը, ապաստանել էր այնտեղ, իր քեռի Մելիք-Ալլահվերդու մոտ: Սակայն շուտով սարջալիների ցեղապետ Փանահ Ալիի (մահ. 1762) հետ դաշնակցած Մելիք-Շահնազարի եղբայրասպան ծեռքը հասավ նաև նրան...

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, Ե., 2000, էջ 42:

² Մատենադարան, ձեռ. 7429, էջ 43ա: Այդ մասին մանրամասն տես Մաղալյան Ա., Վարանդայի Մելիք-Միրզաբեկի մահապատժի պատճառը, «Հայոց պատմության հարցեր», 2006, թիվ 7, էջ 30-37:

³ Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 451, Մուսայելեան Գ., Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը, «Արարատ», 1914, գ, էջ 240:

⁴ Мира Аджезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950, с. 55.

⁵ Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 452:

Ենթադրում ենք, որ Մելիք-Յուսեփին որդին և Մելիք-Շահնազար Բ-ի եղբայրն էր նաև ոմն Ղահրաման բեկ: Նման ենթադրության համար հիմք է ծառայել Ավետարանոցի Մելիք-Շահնազարյանների տոհմական հանգստարանում գտնվող մի տապանաքար, որը կրում է սույն արձանագրությունը.

**«Այս է տապան մելիք Սեյիմի որդի
Ղահրաման բեկին, թվ(ին) ՌՄԷ (1758)»:**

Միաժամանակ նշենք, որ Ղահրաման բեկի անվան հետ կապված որևէ հիշարժան դեպք մեզ հայտնի չէ:

Շահնազարի մելիքական իշխանությունը 1748 թ. հաստատվել է Իրանի Ալի Իբրահիմ շահի հրովարտակով: Մեզ է հասել այդ շահական հրովարտակի XIX դ. կազմված պատճենը, որի թարգմանությունը ներկայացնում ենք ստորև.

«Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյաներից լավագույն Վարանդայի մելիք Շահնազարի հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ, վիշապի տարվա երրորդ ամսվա սկզբից նրան նշանակում ենք տարեկան 50 Թավրիզի թուման ռոճիկ և նրան հանձնում Վարանդա մահալի մելիքությունը, որպեսզի նա ամեն տարի իր ռոճիկը ստանա այնտեղ դիվանի մալիյաթի գումարից և ծախսի իր կարիքների համար՝ ճշտորեն ու շիտակ կերպով ծառայելով և անհրաժեշտ ջանքեր գործադրելով այդ վիլայեթը շենացնելու, ռայաթներին հավաքելու, դիվանի հարկերն ու այլ պարտավորությունները կատարելու գործում, այնպես որ նրա բարյացակամությունն ու հավատարմությունը աշխարհակալ տիրոջը [շահին] հայտնի դարձնի: Վարանդա մահալի ռայաթները պետք է վերոհիշյալին այդ մահալի մելիք ճանաչեն ու այդ գործի պարտականությունները նրան վերապահեն: Բարձրագույն դիվանի մեծ մուսթովֆիները այս արքայական ռադամ-հրամանագիրը թող գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն: Գրվեց 1161 թ. զի հեջջե ամսին (1748 թ. նոյեմբերի 22-դեկտեմբերի 22)»¹:

Մելիք-Շահնազարի տմարդի արարքը նրա դեմ է հանում Արցախի

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 203, պատճեն: Վավերագրի հակառակ կողմում ռուսերենով մակագրված է. "копия грамоты Ибрахим Шаха персидского" (թարգմ.՝ Ք. Կոստիկյանի):

մյուս մեկիքներին: «Մեկիք Շահնագարը զգալով իր տկարությունը մեկիքների հանդեպ՝ անհանգստացած սկսում է ելք որոնել,- գրում է Միրզա Յուսուֆ Ներսեսսվը,- ճարահատյալ դիմում է Փանահ խանի օգնությանը, նրան հպատակվում և հավատարմության երդում է տալիս և նրա աջակցությամբ ազատվում մեկիքների պատժից... Մեկիք Շահնագարը լինելով շատ հարուստ՝ Ղարաբաղի խաներին ծառայություններ է մատուցում, որի շնորհիվ մեծ պատվի է արժանանում: Փանահ խանի իշխանության սկզբնական շրջանում, երբ նա փողի կարիք էր զգում, Մեկիք Շահնագարը անհրաժեշտության դեպքում օգնության էր հասնում և նրա կարիքները բավարարում... Վերջում Մեկիք Շահնագարը իր գործերը բարելավելու և դիրքերն ամրապնդելու համար, աղջկան՝ Յուրզադ խանումին, կնության է տալիս Իբրահիմ խանին (Փանահի որդուն-Ա. Մ.), և այդ կերպ նրա հետ բարեկամական կապեր հաստատում»¹:

1775 թ. հուլիսի 6-ին Սիմեոն Երևանցի կաթողիկոսին ուղղված մի անստորագիր նամակում կարդում ենք. «Եւ եթէ ի կողմանցս յայսցանէ հարցանիցես. հնգեքին մէկիքքն են ընդ մեզ բաց ի մէկիք Շահնագարէն, որ դեռևս խարդախութեամբ ընդ մեզ գնայ. և ոչ զնախանձն իւր հատանէ ի մէնջ»²: Այդ շրջանում Արցախում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնում է նաև Յովսէփ արքեպիսկոպոս Արղուսյանը, որը 1780-ին հերթականությամբ ներկայացնելով Խամսայի մեկիքներին, Վարանդայի Մեկիք-Շահնագարի մասին գրում է. «Ձօրացուցիչն է տաճկաց և միաբան ընդ խանին. ունի կարօղութիւն և սա հազար արանց պատերազմողաց. Վարանդ»³: Գեներալ Պավել Պոտյոմկինին Յ. Արղուսյանի 1783 թ. հունվարի 28-ին գրած նամակում կարդում ենք. «Մեկիք Ադամի, մեկիք Յովսէփի և մեկիք Եսայու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խորոցէր մեկիք Շահնագարն, որ է այր խորամանկ, թերահաւատ և ամենայն գործս բարեաց անպիտան, նենգաւոր և դաւաճանօղ եղբարց: Ի Ղարաբաղ գայր էլ ինչ, որպէս յերկրիս նօղայիքն խորանաշրջիկ, որք կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորի անունն էր Փանայ խան: Խորամանկն ի չարիս մեկիք Շահնագարն զնա կոչեալ ի յօգնու-

¹ Միրզա Յուսուֆ Ներսեսսվ, նշվ. աշխ., էջ 42, 50:

² Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 25:

³ Յովսէփ կաթողիկոսի յիշատակարանը, «Կռունկ Յայոց աշխարհին», 1863, թիւ Է, էջ 512, Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 25, Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, Ереван, 1990, с. 153:

թիւն իւր, կամաւ իւրով հնազանդեցաւ մնա և զբերթն իւր ետ մնա»¹: Զնդկահայ ականջալուր-ժամանակակիցները Մելիք-Շահնազարին բնութագրել են այսպէս. «Զնարամիտ անձնավորութիւն է, հմուտ դիվանագիտական օրենքներին ու ծեսերին: Սա ևս պարսից իշխանութեանն է ենթարկվում. առանց պարսիկ իշխանի (Փանահի-Ա. Մ.), որը սրան իրեն է հպատակեցրել, որևէ բան, ինչ էլ որ կամենա, չի կարող անկախաբար կատարել»²: Իսկ ահա այդ իրողութեան արձագանքները XIX դ. կեսերի հայկական մամուլում. «Շահնազար՝ Վարանդայի մէլիքը, Չարաբերդի Մէլիք Աղամին և Գիւլիստանի Մէլիք Յովսէփին մէջ եղած դաշնակցութեանից վախենալով, ինքն էլ Փանահ խանին հետ մի բարեկամութիւն արաւ, նրան իր բնակատեղին Շուշուայ բերդը և իր աղջիկն էլ (Փանահի որդուն- Ա. Մ.) կնութեան տուաւ»³: Փաստորեն, այդ եղբայրասպան պատերազմում հայ մելիքներից հաղթողներ և պարտվողներ չեղան, այլ օգուտ քաղեց երրորդ, օտար կողմը՝ վաչկատուն սարջալիների ցեղապետ Փանահ խանը, որը Մելիք-Շահնազարի թողտվութեամբ 1752-ին հաստատվեց Արցախի սրտում:

Կյանքի մայրամուտին Մելիք-Շահնազարը զղջում է իր գործած չարիքների համար և, որպէս մեղքերի թողութիւն, վճռում վերանորոգել Ամարասը⁴: «Ճռաքաղ» հանդեսում հանգամանորեն ներկայացված են Ամարասի վերանորոգման աշխատանքները. «Մէլիք Շահնազար Զայկազն՝ իշխան գաւառակին Վարանդու՝ կամելով ի հիմանց նորոգ շինել զայս ուխտատեղի, և հաստատել միաբանս ի մնա, կանգնեաց յապահովութիւն ի վերջ 18 դարու նախ առաջին ամրոց քառակուսի զեկեղեցեան՝ չորիւք աշտարակօք քարուկիրս և ամրակուռս, և ի ներքս պարսպին շուրջանակի սեղանատունս, խոհանոցս, սենեակս և այլ շինութիւնս ի պէտս և ի բնակութիւն միաբանից, որք և ցարդ ամբողջութեամբ մնան: Այլ յաւարտիլ շինութեան բերդին՝ աւարտ եհաս և արևու

¹ **Պետրոսյան Պ.**, Զովսէփ արք. Արղությանի երկու մամակ-զեկուցագրերը որպէս հայ ժողովրդի պատմութեան սկզբնաղբյուրներ, «Էջմիածին», 1962, թիվ է, էջ 37, Армянно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 212:

² Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, Ե., 1991, էջ 103:

³ **Շահնազարեանց Կ.**, Ծրագիր պատմութիւն Զայաստան աշխարհին, «Կռունկ Զայոց աշխարհին», 1863, թիւ Ը, էջ 622:

⁴ **Զաւալյան Ա.**, Գշլ. աշխ., հ. Ա, Տփիսիս, 1842, էջ 196:

նորին՝ չեղեալ ձեռնհաս ի շինութիւն եկեղեցւոյն»¹:

Պետք է նշել, որ Վարանդայի տիրակալը հարուստ անճնավորութիւն էր և «Ամարասի վանքը շինելու, իր կալվածներում ջրանցքներ տանելու և այլ տնտեսական շինությունների վրա Մելիք-Շահնազարը ծախսել է առնվազն 80 հազար ռուբլի արծաթ... Միայն տուգանքների արդյունքը տալիս էր Շահնազարին 20 հազար ռուբլի, իսկ «միջի» (ծրի աշխատանքով կատարված) վարուցանքը և հունձը, որ անում էին մելիքի համար, - 30 հազար ռուբլի: Խմիչքների հարկերի կապալը (Շուշի բերդում) տալիս էր Մելիք-Ջումշուդին (Մելիք-Շահնազարի որդուն) 7000 ռուբլի»²:

Մելիք-Շահնազարը վախճանվել է 1792 թվականին, տարեց հասակում: Պահպանվել է Ամարասի Իսրայել կաթողիկոսի ձեռքով գրված հույժ հետաքրքրական մի վկայություն, որտեղ բարբառային լեզվով ներկայացված են Մելիք-Շահնազար Բ-ի վերջին օրերը և ժառանգական վեճերը նրա որդիների միջև³:

Նրա մարմինն ամփոփվել է Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանատանը, իսկ շիրմաքարը կրել է հետևյալ չափածո արձանագրությունը.

**«Այս է տապան Մելիք Շահնազարին,
Որ է որդի Մելիք Յիւսէինին,
Արցախ գաւառաց իշխանին,
Վարանդու տիրապետողին.
Սա էր հայր Մելիք Ջիւմշիտին,
Ըստ ռուսաց պլկովնիկին,**

¹ «Ճռաքաղ», Մոսքուա, 1859, տետրակ Ժ, էջ 339:

² **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 23, նույնի՝ Խոջայական կապիտալ, Ե., 1934, էջ 168: Ի դեպ, Մելիք-Շահնազարի ժառանգները ևս զբաղվել են բարեգործությամբ: Այսպես, Մատենադարանում պահվում է Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի 1821 թ. մարտի 26-ի օրհնության գիրը Մելիք-Շահնազարի դուստր Գումայի խաթունին, նրա նվիրած մեկ մաճար ոսկու առթիվ (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 329):

³ **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, գիրք 2, էջ 376-377, հմմտ. **Բարխուտարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, էջ 121, նաև՝ **Թօփճեան Յ.**, Յուզակ ժողովածուաց Խ. վրդ. Դաղեանի, հ. Բ, Վաղարշապատ, 1900, էջ 42, ռուսերեն պատճենը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 173:

**Ազնիւ ոմն Յայոց ազգին,
Արի եւ քաջ զօրավարին
Խնդրեմ առնել զայս արժանին
Միոյ բերան Յայր մեղային
ՌՄԽ. թվին (1792)»¹:**

Մելիք-Շահնազարն ամուսնացել էր երեք անգամ: Նրա առաջին, օրինավոր կինը՝ Թաջունը (Թագուհի), որն ըստ Րաֆֆու Խաչեն գավառի տիրակալ Յասսան-Ջալալյանների տնից էր², վախճանվել է 1751 թ., ինչպես վկայում է նրա տապանաքարի սույն արձանագրությունը.

**«Այս է տապան մելիքին
Շահնազարին կողակից
Թաճունին, թվին ՌՄ (1751)»:**

Այս Թաջունը Մելիք-Ջումշուղի և Ամարանի (Գյուլիստանի Մելիքբեգլար Բ-ի կինը) մայրն էր և նրա մահվան թվականը մոտավոր պատկերացում է տալիս նաև Մելիք-Ջումշուղի ծննդյան թվականի մասին: Րաֆֆին Մելիք-Շահնազարի ընտանիքը ներկայացնում է այսպես. «Մելիք-Շահնազարը ուներ մի քանի կնիկներ, Թագուհի-խանումից ծնվեց Մելիք-Ջումշուղը, Սոնա-խանումից (Դիզակի Մելիք-Եսայու դուստրը- Ա. Մ.) ծնվեց Մելիք-Յուսեփն III և մի աղջիկ՝ Յուրիզատ անունով, որին հայրը կնության տվեց Իբրահիմ-խանին, իսկ Մալայիկ-խանումից ծնվեց Ջհանբախը, Ջհանգիրը և մի աղջիկ Յունայի անունով»³: Րաֆֆու տողերի իսկությունը հաստատվում է Բաղդասար մետրոպոլիտի 1849 թ. հոկտեմբերի 8-ի մի գրությամբ՝ Արցախի մելիքների կանանց և որդիների մասին հավաստի տեղեկություններով⁴: Մելիք-Շահնազարի երկրորդ և երրորդ ամուսնություններից, կամ ինչպես ժողովրդի գիտակցության մեջ է արմատացած՝ ապօրինի կապերից

¹ **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, էջ 210, **Լալայան Ե.**, Երկեր, հ. 2, էջ 38-39, Դիվան, V, Արցախ, էջ 150:

² **Րաֆֆի**, նշվ. աշխ., էջ 452:

³ Նույն տեղում, էջ 499:

⁴ Վաւերագրեր Յայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 180, տես նաև՝ Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9, որտեղ կարդում ենք. «Մելիք Շահնազարն ունեցաւ 3 կին. առաջին բակաճ կնկանից ծնաւ Մելիք Ջիմշուղն. երկրորդ խանմից Յուսէյիմն, երրորդ բակաճից ծնաւ Մելիք Ջհանբախը, Ջհանգիր աղան»:

ծնված լինելու հանգամանքը ամենևին էլ չի խանգարել, որ նրա այդ գավակները ևս բաժին ստանան իրենց հոր ունեցվածքից և անգամ ունենան Վարանդայի մելիք դառնալու հավակնություններ: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է 1207 հ. թ. ռամազան ամսին (1793 թ. ապրիլի 12-մայիսի 12) կազմված մի արձանագրության պատճեն, ըստ որի Մելիք-Շահնազարի որդիներ Ջհանբախշն ու Ջհանգիրը իրար մեջ բաժանում են իրենց հայրական ունեցվածքը, որոնցից առաջինին բաժին է ընկնում Ամարաս (Աղ Օղլան) գյուղում գտնվող այգին տան հետ, նաև Չանախչի գյուղում գտնվող այգին և հնձանը, իսկ Ջհանգիր բեկին՝ Բեքիջանում գտնվող այգին ու 30 թավրիզի թուման գումարը¹: Իսկ Յուսեփնը, որի քույր Յուրիգատ խանունը Շուշիի Իբրահիմ խանի կինն էր, վերջինիս աջակցությամբ ցանկացել է դառնալ Վարանդայի մելիք: Այնուամենայնիվ, Մելիք-Շահնազարի ավագ որդի Մելիք-Ջումշուդին հաջողվել է տիրանալ գավառի իշխանությանը: Պահպանվել է Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի՝ 1794 թ. օգոստոսի 8-ին նրան ուղղված ցավակցական նամակը, որպես «մխիթարութիւն վասն մահուան հօրն, և շնորհաւորութիւն յաջորդելոյն իւրոյ զիշխանութիւն նորին»²: Իսկ Մելիք-Յուսեփնը մահացել է 1801-ին: Նրա տապանաքարին արձանագրված է եղել.

«Այս է տապան Մելիք Շահնազարի որդի Մելիք Յիւսէփինին. թվին ՌՄԾ (1801) էր»:

Մելիք-Յուսեփի որդիները ևս վաղ են մահացել, ինչպես վկայում են նրանց տապանագրերը.

«Այս է տապան Մելիք Յիւսէփինի որդի Մանասան բեկին. թվին ՌՄԾԶ (1807)»:

«Այս է տապան Մելիք Յիւսէփինի որդի... Աւաքճանին, թվին ՌՄՅԲ (1823)»³:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 240: Վավերագրի հակառակ կողմում մակագրված է. «Ջհանպախշին Ջհանգիրին տուս եկած թարկ տավան է»:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 1, թ. 1, տես նաև՝ Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 639-640:

³ **Բարխուտարեանց Մ.**, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, էջ 211, Դիվան, V, Արցախ, էջ 151:

Մելիք-Ջուճուղուն իշխանության է եկել իր հոր աջակցությամբ կայացած Ղարաբաղի խանության դեմ անհաշտ պայքար մղելու վճռակա-
նությամբ:

Իրանի շահ Աղա Մուհամմադ խանը 1797-ին երկրորդ անգամ է ար-
շավում Անդրկովկաս: Շուշիի Իբրահիմ խանը, երկյուղելով շահի դա-
տաստանից, ընտանիքով փախչում է Դաղստան՝ իր աներ Օմար խանի
մոտ: «Իբրև լուաւ Աղա Մամատ շահն, թէ փախեաւ ապստամբեալ
խանն Իբրահիմ ի քաղաքէ Շուշոյ՝ ել և եկն տիրեաց նմա առանց բանի
պատերազմի և ետ ածել զառաջեաւ զամենայն իշխանսն հայոց՝ և
չարչարեալ զնոսա բազմատեսակ տանջանօք, զի զստոյզն ասացեն
զորքանութենէ յընչից իւրեանց»¹: Իսկ «ձերբակալվածների մեջ էին
Վարանդայի Մելիք Շահնազարի որդի Մելիք Ջուճուղը, Սուլա Փանահ
Վաղիֆը և շատ ուրիշ ազնվականներ ու իշխանավորներ»²: Մելիք-
Ջուճուղը Աղա Մուհամմադ խանին 70. 000 ռ. տուգանք տալով հազիվ
է ազատում իր գլուխը³ և, օգտվելով վերջինիս անակնկալ սպանու-
թյունից, նախքան Իբրահիմ խանի վերադարձը, իր քրոջ որդու՝ Գյուլիս-
տանի Մելիք-Ֆրեյդունի հետ փախչում է Վրաստան: Այս դեպքերի մա-
սին հիշատակություններ են թողել նաև իրենք՝ փախստական մելիքնե-
րը: Այսպես, Մելիք-Ջուճուղի՝ 1798 թ. դեկտեմբերի 23-ին գրված և Պա-
վել Ա ցարին ուղղված խնդրագրում կարդում ենք. «Աղայ Մահմատ խա-
նին մտեալ յամրոցն Շուշի՝ զմնացեալ ինչս իմ զթագուցեալս զգուշու-
թեամբ, յափշտակեալ էառ յինէն, զկնի որոյ և ինքն ի նոյնում ամրոցի
սպանեալ եղև, իսկ ես ըստ վերոյ գրելոցն երկուցեալ ի դառնալոյ
Իբրէհիմ հալիլ խանին, տեսնելով զյարմար դիպուած ի փրկել զիս, թո-
ղեալ զտունս, զգաւառս և զամենայն զհպատակս իմ, բռնադատեալ եղէ
անտի որդով իմով Պողոսիս և քեռորդուով մէլիք Փիրիդոնիս և իւզբաշի
Պետրոս քեզին աստ ընդ իս եղելօվքն հանդերձ նմանապէս և կնաւս և
այլօվք զավաքոքս գրեթէ մերկ փախչիլ առ յաղթագեաց զօրքն ռու-
սաց, որ ի Վիրս»⁴: Ահա նաև Մելիք-Ֆրեյդուն Մելիք-Բեգլարյանի վկա-

¹ **Զաքարեան Յ.**, Պատմութիւն գաւառին Արցախու, Մատենադարան, ձեռ. 2734, էջ 18: Այս երկի հրատարակությունը տես **Մաղախան Ա.**, Յակոբ Զաքարեանի «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատութիւնը, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիւ 1-12, էջ 317-394:

² **Միրզա Յուսուֆ Ներսեսով,** նշվ. աշխ., էջ 74:

³ **Армяно-русские отношения в XVIII веке,** т. IV, с. 461.

⁴ Նույն տեղում, էջ 494:

յությունը. «Ի յարձակելն ի վերայ Ղարաբաղու Աղայ Մահմատ խանին, յորմէ և տանջողն՝ Իբրահիմ Խալիլ խան, եղև բռնադատեալ փախչիլ առ լեզկին և ի մերկանալն ի նմանէ ըստ մնացեալ գոյից բարերարին իմոյ և գերապատուելի մօրեղբայր մէլիք Ջիմշիտին և ի սպանանելն Աղայ Մահմատ խանին ի Ղարաբաղ ի յիւրոցն, ես յիշեալ մօրեղբայրքն իմով փախեայ անտի ի Վիրս»¹: Մելիք-Ջումշուդի Արցախից հեռանալու մասին գրում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցիին հնդկահայ նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանին հասցեագրված նամակում. «Այլ յետ ներքինւոյ կործանմանն մելիք Ջումշուտն կասկածեալ յիբրահիմ խանէն, որ դառնալոց էր ի Կովկասու, ամենայն տամբն խոյս ետ ի Տփլիս»²: Պետք է նշել, որ մելիքների հեռանալը հայրենիքից խարխլեց Խամսայի մելիքությունների հիմքերը և, ընդհակառակն, ամրապնդեց Իբրահիմ խանի դիրքերը Արցախում:

1797-1798 թթ. Արցախում սով է սկսվում, որին հաջորդում է ժամտախտը: Քաղցից և համաճարակից փրկվելու նպատակով մելիքների հպատակները, հիմնականում՝ Գյուլիստան և Վարանդա գավառների ազգաբնակչությունը, ևս գաղթում են Վրաստան:

Վրաստանում սովատանջ հայ ազգաբնակչությանը վատ են ընդունում: Վրաց ազնվականությունից հուսախաբ 1799 թ. «Մելիք-Բեգլարյան Մելիք-Ֆրեյդունը և Մելիք-Շահնազարյան Մելիք-Ջումշուդը գնացին Ս. Պետերբուրգ անձամբ աղերսամատույց լինելու կայսրի մոտ իրենց պահանջների մասին»³: Պավել Ա-ի 1799 թ. հունիսի 2-ի հրովարտակի համաձայն Գյուլիստանի Մելիք-Աբովին է տրվում Բոլնիսի գավառը, Մելիք-Ֆրեյդունին՝ Աղջակալան և Բորչալուի մի մասը, իսկ Բորչալուի մնացած մասը և Լոռին վրաց Գեորգի ԺԲ թագավորի (1798-1800) հրամանով տրվում է Մելիք-Ջումշուդին⁴: Բացի այդ, կայսրը դեսպանորդ մելիքներին պարգևատրում է գերազանցության շքանշաններով և մշտական թոշակ նշանակում. Մելիք-Ջումշուդին տարեկան 1400 ռ., Մելիք-Ֆրեյդունին՝

¹ Նույն տեղում, էջ 491:

² Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին (1795-1797 թթ.), աշխ.՝ Ռ. Տիտանյանի, Ե., 1981, էջ 97:

³ Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 533-534:

⁴ Акты Кавказской Археографической Комиссии, т. I, Тифлис, 1866, с. 637.

1000 ռ., իսկ Մելիք-Ջուճուղի որդի Մելիք-Պողոսին՝ 600 ռ.¹:

Սակայն Արցախի մելիքների դերը Վրաստանում, հատկապես վրաց Գեորգի ԺԲ թագավորի մահից (1800 թ. դեկտեմբերի 28-ին) և Ռուսաստանի հետ Վրաստանի միավորումից հետո, բավականին ընկնում է: Այդ իսկ պատճառով մելիքները և նրանց հպատակները սկսում են վերադառնալ Արցախ: Մելիքներից առաջինը օրինակ է ծառայել Մելիք-Ջուճուղը, որը «1805 թ. ծախել է Լոռին Վրաստանի լեռնային մասի կառավարիչ կոմս Մուսին-Պուշկինին 6000 ռուբլով եւ յուր հարազատների հետ վերադարձել Ղարաբաղ»²:

Ուշագրավ է այն փաստը, որ Մելիք-Ջուճուղն աջակցել է մայրոք Լիսանկիչին՝ պարսից բանակին միանալ փորձող Իբրահիմ խանի ոչնչացման գործողությունն իրականացնելիս³, որը տեղի է ունեցել 1806 թ. մայիսի 8-ի գիշերը:

Մելիք-Ջուճուղը, ինչպես վկայում է նրա տապանագիրը⁴, վախճանվել է 1812 թ. ապրիլի 25-ին, և թաղվել Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանատանը:

Մելիք-Ջուճուղին հաջորդած Մելիք-Խուդադադը (1793-1833) Վարանդա գավառի վերջին տիրակալն էր:

Վերջում հետաքրքիր է տեսնել, թե ինչպես են արտահայտվել Մելիք-Շահնազարյանների տան շառավիղները Վարանդայում իրենց նախնիների տիրապետության մասին: Մասնավորապես, «Վասն ծագման Մելիք-Շահնազարեան տոհմին» ձեռագրում այդ մասին կարդում ենք. «Ղարաբաղու նահանգում Վարանդոյ գավառումն մեր յին ժամանակներում ամենկին մահմետական չի եղել, բացի միայն հայք են եղել տիրապետողներն»⁵: Իսկ Մելիք-Ջիանբախչի որդի Խոսրովը իր եղբայր Լալային 1836 թ. նոյեմբերի 24-ին ուղարկած նամակում գրում է. «Վարանդու մոզալն որ կայ, Խամսայի հինկ մելիքին, մին մելիքին հայրդնիցն այ, ինչպես որ մեծի շայի Ապասի ժամանակիցըն մինչի Փանայ

¹ АКАК, т. II, Тифлис, 1868, с. 1149, **Ершцов А.**, Карабагские мелики в Грузии с 1800 по 1800 г., "Кавказская старина", 1872, N 2, с. 35.

² **Լալայան Ե.**, Երկեր, հ. 3, Ե., 2004, էջ 113:

³ Իբրահիմի սպանության մասին տես АКАК, т. III, Тифлис, 1869, с. 334-335.

⁴ **Բարխուտարեանց Ս.**, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, էջ 210-211, **Լալայան Ե.**, Երկեր, հ. 2, էջ 39, Դիվան, V, Արցախ, էջ 150:

⁵ Մատենադարան, ձեռ. 7429, էջ 9բ:

խանի, եւ Փանայ խանի ժամանակիցըն մինչ Երմօլօվըն Կուրծիստան կալուն, Վարանդու մէլիքութունըն մէլիք Պաղուն ժառանկներին ծեռիցըն ոչ դուրս էյ եկած, ոչ էլ ատաթ էյ դուրս կալուն, ոչ էլ կարելի այ դուրս բերելին, պատճառ որ. այսպէսի աստիճանըն պարսից թաքայորների ֆարմանների զօրութունօվըն տված էյ որթոց զորթի ին նախնիացըն... որպէս որ այիայ ԲՃ (200) տարի ավէլ էյ, որ Վարանդույ ժողօվորթըն ծառայուն էն մէլիք Պաղուն ժառանկացըն»¹:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Մելիք-Շահնազարյանների տան ներկայացուցիչները որպէս տոհմիկ ազնվականներ մտան ռուսական ծառայութեան մեջ:

¹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 257, վավ. 167: Հրատարակութունը տես **Մաղայան Ա.**, Փաստաթղթեր Վարանդայի Մելիք-Շահնազարյանների տոհմի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2005, թիվ 2, էջ 9-10:

ԱՐՑԱԽ - ՋԱՎԱԽՔ. ՊԱՏՄԱԿԱՆ ՁՈՒԳԱԴՅՈՒՆԵՐ

Ներկայիս այսրկովկասյան աշխարհաքաղաքական բարդ զարգացումների մեջ Հայաստանի Հանրապետության և համայն հայության համար առաջնային նշանակություն ունեն ինչպես Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ Ջավախքի հիմնահարցերը: Հետզհետե այս խնդիրներն ավելի ու ավելի են փոխկապակցվում և ձեռք բերում քաղաքական սրություն, հայտնվում տարածաշրջանային գործընթացների կիզակետում:

Հայ ժողովրդի հազարամյակների պատմության ընթացքում Արցախը որպես Մեծ Հայքի թագավորության արևելյան մահանգ, իսկ Ջավախքը՝ Գուգարաց աշխարհի կազմում՝ հյուսիսային վարչամիավոր, ռազմավարական նշանակություն են ունեցել համահայկական պետության անվտանգության համակարգում: Պատահական չէ, որ 428 թ. Արշակունյաց թագավորության անկումից հետո, երբ Արցախը միացվեց Աղվանից, իսկ Գուգարք-Ջավախքը՝ Վրաց մարզպանություններին, համահայկական պետականության վերականգնման խնդիրն ավելի դժվարացավ: Նույնիսկ 9-րդ դարի վերջին Բագրատունյաց թագավորության հռչակումից հետո էլ ուժեղ, կենտրոնացված պետություն ստեղծելու ջանքերի անարդյունավետությունը պայմանավորվեց սահմանային մահանգների ու գավառների, այդ թվում՝ Արցախի ու Ջավախքի ինքնիշխան կարգավիճակի ձևավորմամբ կամ դրանց նկատմամբ հարևան պետությունների հավակնություններով:

Ուշ միջնադարում պատմական Արցախը՝ պարսկական տիրապետության տակ գտնվող Ղարաբաղի խանության, իսկ Ջավախքը՝ Օսմանյան կայսրության կազմում Ախալցխայի էյալետի սահմաններում սանջակի՝ գավառի կարգավիճակով, հայտնվեցին ոչ հայանպաստ էթնոգործընթացների կիզակետում, որոնց արդյունքում այդ տարածա-

շրջաններում տեղաբնիկ հայության կողքին հայտնվեցին օտար էթնիկական տարրեր:

19-րդ դարի առաջին երեսնամյակին ռուսական կայսերապաշտական քաղաքականությունը հող նախապատրաստեց խնդրո առարկա երկրամասերում հայահավաք գործընթացների և դրանց նախկին էթնոնկարագրի վերականգնման համար¹:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ հայ ազգային-հասարակական և մշակութային կյանքի աննախադեպ վերելքի պայմաններում պատմական Հայաստանի տարբեր շրջանների հայության, այդ թվում՝ արցախահայերի և ջավախահայերի շփումներն ավելի սերտացան: Արցախահայ մտավորականների մի յուրահատուկ բույլ ծառայության անցավ Ջավախքի դպրոցներում և մշակութային ընկերություններում: Ջավախքում հատկապես մեծ ճանաչում ունեցան ծագումով արցախցի ազգագրագետ-գիտնական, ուսուցիչ Երվանդ Լալայանը և մտավորական Ջալալ Տեր-Գրիգորյանը: Նրանք զգալի նպաստ բերեցին Ախալքալաքում դպրոցական կյանքի աշխուժացման գործին: Ե. Լալայանը հսկայական պատմագագրական բնույթի նյութեր հավաքեց Ջավախքի վերաբերյալ և դրանք զետեղեց իր իսկ հրատարակած «Ազգագրական հանդեսի» էջերում²: Ջ. Տեր-Գրիգորյանն Ախալքալաքում հիմնադրեց բարեգործական ընկերություն, մեծ աշխատանք կատարեց գավառի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի աշխուժացման ուղղությամբ: Նրա ջանքերով ստեղծվեց ազատագրական խմբակ, Ախալքալաքում լայն արձագանք գտավ արևմտահայ ազատագրական պայքարին ազգովի նպաստ բերելու համազգային շարժումը³:

19-րդ դարի վերջին արևմտահայության ազատագրման գործին ի թիվս Հայաստանի զանազան շրջաններից զինվորագրված բազմահազար հայորդիների, պայքարի մեջ նետվեցին զգալի թվով արցախցիներ

¹ Ինչպես ադրբեջանական, այնպես էլ վրացական պատմագրության մեջ գոյություն ունի այն տեսակետը, թե Արցախն ու Ջավախքը մինչև 19-րդ դարի առաջին երեսնամյակը բնակեցված չեն եղել հայերով: Վերջիններս իբր այնտեղ հայտնվել են միայն Ռուսաստանին այդ երկրամասերի միացումից հետո՝ ռուսական իշխանությունների վարած հայամպաստ ժողովրդագրական քաղաքականության հետևանքով (տես **Սեյրոնյան Ա.**, **Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին**, Ե., 2003, էջ 19-25):

² Տես **Լալայան Ե.**, Երկեր, հ. 1, Ե., 1983:

³ Ջավախքում Ջ. Տեր-Գրիգորյանի ազգանվեր գործունեության մասին, տես Ախալքալաքի գավառագիտական թանգարան, գ. 3674, 3701, 3709:

ու ջավախքցիներ: ճանաչված արցախցի ֆիդայիներ Նիկոլ Դումանի, Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) կողքին Արևմտյան Հայաստանում կռվում էին համբավավոր ախալցխացի ու ախալքալաքցի մարտիկներ Շամիլը (Տիգրան Օքոնյան), Հաջի Լևոնը (Լևոն Խզարճյան), Ուսուլ Խեչոն (Խաչատուր Տեր-Կարապետյան), Արտաշես Սուջյանը, Ջավախեցի Նիկոլը և ուրիշներ:

Խանասորի արշավանքում, որի արդյունքում հայդուկները վրեժ լուծեցին 1896 թ. Վանի ինքնապաշտպանության մասնակիցների նկատմամբ արյունալի կոտորած իրականացրած քրդական մազրիկ ցեղից, հերոսաբար զոհվեցին ախալքալաքցիներ Ստ. Նազարեթյանն ու Ս. Յաղանյանը: «19 քաջեր ընկան հայրենի հողին վրա այդ կռիվներու ընթացքին,— գրում է խանասորցի զոհերի մասին Միքայել Վարանդյանը,— 19 նահատակներ հայոց աշխարհի բոլոր կողմերէն...: Վանեցի, շատախցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, դազախեցի, դլարցի, նորբայազետցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիզեցի, դարաբաղցի, ախալցխացի, ախալքալալցի և այլն»¹:

Ռուսաստանյան առաջին հեղափոխության շրջանում (1905-1907 թթ.) և դրանից հետո հայ քաղաքական շրջանակները, մասնավորապես դաշնակցականները, ռուսական իշխանությունների առջև հանդես եկան Անդրկովկասում վարչատարածքային վերաբաժանման իրականացման առաջարկությամբ: Ազգային շրջաններում ծագած դժգոհությունների պատճառները նրանք իրավամբ տեսնում էին ցարիզմի վարչաքաղաքական համակարգի հետամնացության մեջ: Խնդիր էր դրվում ի թիվս բազմաթիվ բարեփոխումների, երկրամասում մտցնել ընտրովի տեղական ինքնակառավարման մարմիններ՝ զեմստվոներ, որոնք պետք է կազմվեին էթնիկ-ազգային սկզբունքով՝ մեկ ընդհանուր երկրամասային զեմստվոյի ենթակայությամբ: Այս ծրագիրը հնարավորություն էր տալու Անդրկովկասի հայաշատ շրջանների բնակչությանը, մասնավորապես Երևանի նահանգից դուրս գտնվող միավորների, առաջին հերթին՝ Արցախի ու Ջավախքի հայությանը մասնակից դառնալ տեղական կառավարման մարմիններին: Այս նախագիծը ներկայացվեց Կովկասի փոխարքային: Սակայն 1908–1909 թթ. ընթացքում անդրկովկասյան նահանգապետերին ներկայացված բազմաթիվ առաջարկություն-

¹ Վարանդյան Մ., Գ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 156:

ների թվում, այն ևս մնաց թղթի վրա և առժամանակ մոռացության տրվեց:

Փոխարքա Վորոնցով–Դաշկովի գրասենյակը զեմստվոների խնդիրը կրկին օրակարգ մտցրեց միայն 1913 թ.: Առաջարկվում էր ստեղծել նոր նահանգներ, որոնց կազմավորման հիմքում առավելապես պետք է ընկած լիներ տարածքների ազգային կազմի միատարրության սկզբունքը: Նշանակում է՝ երկարատև քննարկումների արդյունքում հաշվի էր առնվել դաշնակցության ներկայացրած նախագիծը: Սակայն Ղարաբաղում, Ախալքալաքի գավառում և դրանց հարող հայկական մյուս շրջաններով հանդերձ վարչական նոր նահանգներ ստեղծելու ուղղությամբ հայ գործիչների գործադրած ջանքերը հանդիպեցին վրաց-թաթարական շրջանակների կատաղի դիմադրությանը: Խնդիրը կրկին օրակարգ մտավ միայն ցարիզմի տապալումից հետո՝ 1917 թ. գարնանից:

1917 թ. մարտից, պայմանավորված ռուսական հասարակության ազատականացման գործընթացով, հայությունը որոշակի պայքար ծավալեց ռուսական վարչատարածքային բաժանումն ըստ էթնիկ սկզբունքի վերափոխելու համար: Ջավախքցիները փորձեցին հասնել իրենց գավառը Թիֆլիսի նահանգից հանելու և նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլին միացնելու, իսկ արցախցիները՝ Ելիզավետպոլի նահանգի հայաիոծ հատվածներում նոր նահանգ ստեղծելու ծրագրերին: Բոլշևիկների կողմից հոկտեմբերին իշխանության զավթումը, Ռուսական կովկասյան բանակի կազմալուծումն ի չիք դարձրին այդ ծրագրերը, որոնց շուրջ հայ քաղաքական շրջանակները ձեռք էին բերել որոշ համաձայնություններ վրաց մենշևիկների ու ադրբեջանական մուսավաթականների հետ¹:

1918 թ. մայիսին թուրքական զորքերի ներխուժումից հետո հայ խաղաղ բնակչության կոտորածներ կազմակերպվեցին Ջավախքում, ապա՝ Արցախում: Այդ երկրամասերը հայտնվեցին սուր պայքարի կիզակետում: 1918-1920 թթ. հայկական Արցախի ու Ջավախքի նկատմամբ տարածքային հավակնություններ հանդես բերեցին Ադրբեջանի և

¹ 1917 թ. Անդրկովկասում էթնիկ սկզբունքի հիման վրա նոր նահանգներ ստեղծելու ժամանակավոր կառավարության ստեղծած հանձնաժողովի գործունեության մասին տես **Шахатунян А.**, Административный передел Закавказья, Т., 1918 և **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 267-270:

Վրաստանի իշխանությունները: Վրաց-ադրբեջանական բացահայտ գործակցության հետևանքով այդ տարածքները վերածվեցին իսկական կռվախնձորի: Հայաստանի Հանրապետությունն իր գոյության ընթացքում երբեք չհաշտվեց այդ կենսական հայկական տարածքները հարևան հանրապետություններին զիջելու մտքի հետ: Պատահական չէ, որ ինչպես Լեռնային Ղարաբաղն ու Ախալքալաքի գավառը, այնպես էլ Լոռին, Նախիջևանը, Ջանգեզուրը, համարելով պատմական հայկական տարածք, ՀՀ ղեկավարությունն իր գործունեության ավելի քան երկու տարվա ընթացքում որոշակի ջանքեր գործադրեց այդ երկրամասերը Հայաստանին միացնելու ուղղությամբ՝ կանգ չառնելով անգամ խնդրի լուծման ռազմական տարբերակի առջև:

Վրաստանի և Ադրբեջանի տարածքային հավակնությունները հայկական գավառների նկատմամբ շարունակվեցին նաև Անդրկովկասի խորհրդայնացումից հետո:

11-րդ կարմիր բանակի զորամասերը Արցախ մտան Ադրբեջանը խորհրդայնացնելուց հետո 1920 թ. մայիսին, իսկ Ախալքալաք՝ 1921 թվականի մարտի երկրորդ կեսին, Վրաստանում խորհրդային վարչակարգեր հաստատելուց մոտ մեկ ամիս անց: Հարևան խորհրդային հանրապետություններից Արցախ ու Ջավախք կարմիր բանակի մտնելու հանգամանքը քիչ դեր չխաղաց հետագայում դրանց պատկանելության հարցն ի վնաս Հայաստանի լուծելու համար:

Թուրքական զորքերի հեռացումից հետո, հետևելով մոտ մեկ տարի առաջ Կարմիր բանակի օժանդակությամբ Ղարաբաղ ներթափանցած ադրբեջանցի բուլշևիկների գործելակերպին, վրաց խորհրդային իշխանություններն Ախալքալաքի գավառի հայության նկատմամբ հաստատեցին բռնառեժիմ: Նման պայմաններում ավելի հաճախակի դարձան արցախցիների և ջավախքցիների դիմում-խնդրագրերը տարբեր ատյանների՝ իրենց գավառները խորհրդային Հայաստանին կամ Ռուսաստանին միացնելու վերաբերյալ:

1921 թ. ապրիլի 23-ին Ախալքալաքի Սուլդա, Մրագովալ, Դադեշ, Վաչիան, Կարգախ գյուղերի ներկայացուցիչները Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին հայտնում էին. «Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80000 բնակչությունից 60000-ից ավելին հայեր են, ...միացնեք Հայաստանի Հանրապետության: ...Եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից, ևս ա-

ռավել, եթե մեր երկիրը չդառնա Սովետական Ռուսաստանի մասը և մեր գլխից չվերանա թուրքական յաթաղանը, մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը...»¹:

1921 թ. գարնանից Անդրկովկասի նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև վիճելի տարածքային խնդիրների լուծման համար 1921 թ. մայիսի 2–ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կավբյուրոն ստեղծեց հատուկ հանձնաժողով: Այդ հանձնաժողովին հայկական կողմի մոտեցումները ներկայացնելու նպատակով մայիսի 9–ին հրավիրեց խորհրդակցություն: Այն անցկացրեց ընդամենը մի քանի օր առաջ՝ մայիսի 4–ին Երևան ժամանած ՅՍԽՅ ռազմահեղափոխական կոմիտեի՝ հեղկոմի նախագահ Ալ. Մյասնիկյանը: Ներկա էին Ա. Մռավյանը, Պ. Մակինցյանը, Ս. Լուկաշինը և Գ. Խոջամիրյանը: Լսելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ ներքին սահմանների հաստատման հարցի մասին» արտգործոժողկոմ Մռավյանի զեկուցումը՝ որոշվեց նրա նախագահությամբ ստեղծել մի հանձնաժողով, որի մեջ մտցվեցին Ս. Յամբարձումյանը, Գ. Լազյանը, Ա. Ղարաբոյազյանը և համապատասխան մասնագետներ²: Հանձնաժողովն սկսեց աշխատանքներն անհրաժեշտ նյութերի հավաքման ուղղությամբ: Մի շարք գիտակ մարդկանց հանձնարարվեց կազմել զեկուցագրեր Հայաստանի ու հարևան խորհրդային երկու հանրապետությունների միջև վիճելի համարվող տարածքների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի, Ախալքալաքի ու Խրամի (Ծալկա) վերաբերյալ: Վերջին խնդրի կապակցությամբ զեկուցագրի կազմման գործը դրվեց ծագունով ախալքալաքցի Պողոս Աբելյանի վրա, որն իր վաղեմի բարեկամ Ալ. Մյասնիկյանի հրավերով հունիսի 16–ին Թիֆլիսից տեղափոխվել էր Երևան:

1921 թ. հունիսի 25–27–ին Թիֆլիսում Կավբյուրոյի հանձնաժողովը հրավիրեց իր անդրանիկ միստը՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի 2, Ադրբեջանը՝ 3, Հայաստանը՝ ընդամենը 1 անդամ (Ալ. Բեկզադյան): Ինչպես երևում է, մնան անհավասար ներկայացուցչական կազմով հայ ժողովրդի ազգային–պետական շահերի պաշտպանության որևէ երաշխիք չէր կարող լի-

¹ Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 2, գ. 46, ք. 66:

² Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 15, ք. 15–17:

մել: Եվ իրոք. առաջին իսկ նիստում Բեկզադյանը, նշելով ցարիզմի կողմից անցկացված վարչական բաժանման անարդարացիությունը և մասնավորապես, Օսմանյան կայսրությունում թուրքերի կազմակերպած հայկական կոտորածների հետևանքով աշխարհով մեկ սփռված գաղթականությանը տեղավորելու անհրաժեշտությունը, Խորհրդային Չայաստանի ժանր սոցիալ-տնտեսական վիճակը, խնդրեց հանձնաժողովի անդամներին հայկական հոծ բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը (առնվազն 72 %-ը՝ հայեր), Լոռին և Լեռնային Ղարաբաղը (94 %-ը՝ հայեր) զիջել Չայաստանին: Սակայն նա միայնակ մնաց հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի մեծամասնության հանդեպ (վերջիններիս միացավ Ս. Կիրովը), որոնք Վրաստանում և Ադրբեջանում հակահեղափոխական տարրերի աշխուժացման համար հող չստեղծելու պատրվակով, մերժեցին տարածքային փոփոխությունների մասին Ալ. Բեկզադյանի առաջարկը: Վերջինս պահանջեց հարցի վերջնական լուծումը տեղափոխել ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կավթյուրո՛՛:

Ի կատարումն Ա. Մռավյանի հանձնարարության՝ Պողոս Աբելյանը 1921 թ. հուլիսին Ախալքալաքի մասին ներկայացրեց մի ընդարձակ փաստաթուղթ,² որտեղ պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական և տնտեսական հայեցակետերից հանգամանորեն հիմնավորում էր Ախալքալաքը Չայաստանին միավորելու հայ ժողովրդի արդարացի ձգտումը: «Զավախքի հայությունը,– գրում էր այդ զեկուցագրում Աբելյանը,– մենշևիկյան կառավարությանը տաճկականից վատ է համարում: Նրա աչքը այնպես է վախեցել, որ ոչ մի վրացական կառավարություն չի ուզում...: Այս է ճշմարտությունը: Ախալքալաքցին ուզում է, որ Ախալքալաքը լինի իսկական, թուրքի հարձակման համար հավիտյան անմատչելի՝ Ռուսաստան. եթե այդ էլ չեղավ, նա ուզում է իր բախտը կապել Չայաստանի հետ, և նա այժմ ուզում է միանալ Սովետական Չայաստանին»³: Աբելյանը անընդունելի էր համարում որևէ ինքնավարություն: Նա հանդգնված ասում էր, որ ծայրահեղ դեպքում Ջավախքը

¹ Хармандарян С. В., Ленин и становление закавказской федерации, Е., 1969, с. 101—102.

² Տե՛ս ԳԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, ք. 122-134 և ֆ. 113, ց. 3, գ. 42, ք. 41-53:

³ Նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 3, ք. 133:

Ծալկայի հետ պետք է ունենա ինքնավարություն Հայաստանի հովանավորությամբ¹:

1921 թ. հուլիսի 2–7–ը թիֆլիսում գումարվեց ՌԿ/Բ/Կ Կավբյուրոյի պլենումը անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև որոշակի լարվածություն ծնող այդ հարցերը վճռելու համար, որին մասնակցեց Խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ի. Ստալինը:

Ինչպես հայտնի է, հուլիսի 4-ի նիստում քվեարկությամբ թեև վճռվեց Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին, սակայն հաջորդ օրը Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի սպառնալիքներից հետո, առանց քննարկման հարցը վերանայվեց՝ հօգուտ Ադրբեջանի: Հայ պատմագրության մեջ դեռ գերիշխում է այն տեսակետը, որ հուլիսի 4-ի արդարացի ու հայանպաստ որոշման վերանայման գործում վճռական դեր է ունեցել Ի. Ստալինի միջամտությունը: Սակայն նման բացատրությունը խիստ պարզունակ է: Հուլիսի 4-ի, լույս 5-ի գիշերը Ղարաբաղի հարցում Կավբյուրոյի անդամների մոտեցումներում տեղի ունեցած փոփոխությունը հասկանալու համար անհրաժեշտ է քննության առնել նաև Կավբյուրոյի հուլիսի 7-ի նիստի ընթացքը:

Այդ օրը Կավբյուրոն անդրադարձավ Հայաստանի և Վրաստանի ՍևՀ–ների միջև վիճելի համարվող Լոռվա և Ախալքալաքի գավառների խնդիրներին: Չայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու Չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) շրջանները Հայաստանի ՍևՀ–ին միացնելու հարցը, տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացությունը ներկայացնել Կավբյուրոյի պլենումի քննարկմանը²: Ինչպես և պետք էր սպասել՝ վրաց բոլշևիկների հայեցողությանը թողնված հայկական կողմի պահանջը պիտի մերժվեր: Եվ իրոք, հուլիսի 16–ին Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը: Ջավելտական է, որ այդ որոշումը վրաց ղեկավարությունը «հիմնավորում» էր գրեթե նույն պատճառաբանությամբ, ինչ հուլիսի 5-ի նիստում արվել էր Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին միացնելու ժամանակ. այն է՝ «քաղաքական

¹ Նույն տեղում, թ. 133ա:

² ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի Կենտրոնական պետական արխիվ, (այսուհետև՝ ՀՀ ՀԲԿՓ ԿՊԱ) Հավաքածու 1, գ. 7, թ. 45:

նկատառումներ» և Բաքվի ու Թիֆլիսի հետ այդ գավառների տնտեսական կապվածության շինծու և անհամոզիչ պատճառաբանություն: Դրանում հանդգնելու համար հատվածաբար մեջբերենք Կավթյուրոյի հուլիսի 5-ի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի հուլիսի 16-ի նիստերի արձանագրությունները.

Յուլիսի 5-ի որոշումից. «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային համերաշխության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապի և նրա Ադրբեջանի հետ մշտական կապից, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍՄՅ կազմում»¹:

Յուլիսի 16-ի որոշումից. «Ելնելով քաղաքական նկատառումներից, ինչպես և Ախալքալաքի շրջանի Թիֆլիսի հետ տնտեսական կապից, ընկ. հայերի առաջարկությունը համարել անընդունելի»²: Նկատենք, որ «քաղաքական նկատառումներ» ասելով բուլշևիկներն ի նկատի ունեին, մի դեպքում՝ հայ-մահմեդական (թաթար-ադրբեջանական), մյուս դեպքում՝ հայ-վրացական համերաշխության հաստատումը: Սակայն դա արվում էր ոչ թե պատմական արդարության, այլ միայնակ մնացած ու անհամեմատ թույլ հայության կենսական շահերը վրաց-ադրբեջանական մեծամասնության օգտին զոհաբերելու հաշվին:

Վերոհիշյալից հստակ երևում է, որ հուլիսի 4-ի երեկոյան կամ 5-ի լույս գիշերը Ն. Նարիմանովը ստացել էր Կավթյուրոյի վրացի անդամների համաձայնությունը (որոնց միացել էին նաև Ս. Կիրովը և Ի. Ստալինը) իրեն պաշտպանելու դեպքում հաջորդ, այն է՝ հուլիսի 7-ի նիստում փոխարդարձաբար օգնել վրացիներին Ախալքալաքի և Խրամի հարցը Վրաստանի կոմկուս տեղափոխելու և դրանով իսկ հօգուտ Վրաստանի լուծելու հարցում:

Այսպիսով, 1921 թ. հուլիսին վրաց-ադրբեջանական համերաշխությունն ընդդեմ Չայաստանի ակնհայտ էր: Այսպես՝ կուսակցական մարմինների որոշմամբ պատմական Արցախը տրվեց Ադրբեջանին, իսկ Ջավախքը՝ Վրաստանին: Սակայն ինչպես այս, այնպես էլ այլ վիճահարույց հարցերի շուրջ պայքարը շարունակվեց հաջորդ ամիսներին և նույնիսկ, տարիներին:

¹ Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, отв. ред. В. А. Микаелян, Е., 1992, с. 650.

² ՀՀ ՉԶԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 43:

1921 թ. հուլիսի կեսերին արցախահայությունն ու ջավախահայությունը, իրագել դառնալով Կավքյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտրոնի քաղբյուրոյի վերոհիշյալ որոշումներին, բազմաթիվ նամակ-բողոքներ հղեց Մոսկվա, Թիֆլիս, Երևան, Բաքու: Վրաց և ադրբեջանական հեղկոմները, որոնց կազմից հանվեցին բազմաթիվ «անցանկալի» հայ գործիչներ, շարունակեցին «փորձի փոխանակությունը» իրենց անցած գավառների հայության նկատմամբ բռնություններ իրականացնելու հարցում¹:

Յատկանշական է, որ այդ օրերին Խորհրդային Յայաստանի իշխանություններին խալաքալաքցիների գրած բազմաթիվ նամակ-խնդրագրերում (որոնք հնարավոր չէ ընթերցել առանց հույզի ու վրդովմունքի), Ախալքալաքում ստեղծված մղձավանջային իրավիճակից դուրս գալու միակ ելքը համարում էին գավառի միացումը Յայաստանին: Դրանցից մեկում կարդում ենք. «... որպեսզի վերացվի Ջավախեթիայի բլոկադան, ... որպեսզի կանգ առնի արտակարգ կոմիսարների այցը, որպեսզի վերջ տրվի ամենայն տեսակ տղայական կամայականության և սրբագործված ալան-թալանին, միայն մի միջոց կա, որը և ամբողջ գավառի բնակչության 75% կազմող հայ ազգաբնակչության տենչն ու փափագն է. այն է՝ միացնել Ախալքալաքի գավառը իրեն հարազատ Սովետական Յանրապետության հետ»²:

1921 թ. հուլիսի 5-7-ի ՌԿ (Բ)Կ Կավքյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտրոնի բյուրոյի հուլիսի 16-ի որոշումներից հետո էլ հայ բոլշևիկների ազգային թևի ներկայացուցիչները որոշ փորձեր կատարեցին Ջավախքի, ինչպես և Լեռնային Ղարաբաղի ենթակայության հարցը վիճարկելու ուղղությամբ: Սակայն անօգուտ. Խորհրդային Յայաստանի քաղաքական, շատ դեպքերում նաև՝ տնտեսական մեկուսացումը շարունակվում էր:

1920-ական թթ. սկզբներին Խորհրդային երեք հանրապետությունների միջև սահմանների վերաբերյալ կնքված համաձայնագրերից հետո էր Խորհրդային Ադրբեջանն ու Վրաստանը չդադարեցրեցին Յայաստանից տարածքային նոր կորզումներ կատարելու փորձերը: Ադրբեջանը, որը նախապատրաստվում էր Ղարաբաղում անցկացնել հան-

¹ Ջավախքում վրաց բոլշևիկների սանձազերծած կամայականությունների մասին մանրամասն տես **Մեկունյան Ա.**, մշվ. աշխ., էջ 339-343:

² ՂԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 24, ք. 75-76 և ԴԴ ԴԲԿԾ ԿՊԱ, ֆ. 1, գ. 1, գ. 112, ք. 129-130:

րաքվե՝ վերջնականապես երկրամասի բռնակցումը «օրինականացնելու» համար, իր հերթին ակնկալում էր Վրաստանի աջակցությունը:

Դեռ 1921 թ. գարնանից ձևավորված վրաց-ադրբեջանական գործակցությունը նոր դրսևորումներ ունեցավ 1921 թ. վերջին և 1922 թ. սկզբին: «Եղբայրական» հանրապետություններն արգելքներ հարուցեցին Ռուսաստանից եկող սննդամթերքը Հայաստանին առաքելու խնդրում: Թիֆլիսում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ա. Սուրխաթյանին 1922 թ. հունվարի 21-ին հղած հեռագրում արտգործօղկոմ Ա. Մռավյանը խնդրում էր միջոցներ ձեռք առնել Վրաստանից Ախալքալաքի, իսկ Ադրբեջանից՝ Ղազախի վրայով Ռուսաստանից ստացվող ապրանքների մուտքը ապահովելու, ճանապարհները ապաշրջափակելու ուղղությամբ¹:

Նման պայմաններում Հայաստանը փորձեց արդարացի լուծումների հասնել գոնե ներքին սահմանային հարցերում և կամ Վրաստանին մնացած տարածքներում հայության համար ապահովել ինքնավարություն: Դեռ 1922 թ. մի խումբ հայ գործիչներ ներկայացրին նախագիծ Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրաստանի ՍԽՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու մասին: Սակայն վրաց պետական շրջանակները, մտավորականության ներկայացուցիչներ (հատկապես պատմաբան Իվ. Ջավախիշվիլին) սվիններով ընդունեցին այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու քայլ և 1923 թ. հասան նրա մերժմանը²:

Մայր Հայրենիքի հետ Արցախի և Ջավախքի միացման համար հայ բնակչության պայքարի մի նոր պոռթկում տեղի ունեցավ 1925-1926 թթ.: Նման պահանջով Ախալքալաքի 37 գյուղական խորհուրդներ դիմեցին Հայաստանի, Վրաստանի և ԽՍՀՄ բարձրագույն իշխանական մարմիններին: Երևան ու Թիֆլիս ժամանեցին նրանց հատուկ պատվիրակությունները: Ժամանակի համար արտառոց այդ հարցի քննությունը հանձնարարվեց կովկասյան գործերին «քաջատեղյակ» Սերգո Օրջոնիկիձեին: Վերջինս, ինչպես երևում է ՏԱՍՍ-ի տարածած հաղորդագրությունից («Պրավդա» թերթ, 12 մայիսի), 1926 թ. մայիսի 10-ին Թիֆլի-

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 136, թ. 20:

² «Տրեբնոյե», 1998, 7, թթ. 29-30 (Արտամուշի, ամսագիր, Թիֆլիս, 1998, թիվ 7, էջ 29-30, վրացերեն), Հմմտ.՝ «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990)», էջ 60-62:

սում անդրկովկասյան ընդլայնված կուսակցական խորհրդակցությունում հանդես եկած գեկուցումով խոր անհանգստություն հայտնեց երկրամասում տակավին չոչնչացված մենշևիկյան, դաշնակցական ու մուսավաթական կուսակցությունների «պառակտչական», հակախորհրդային գործունեության առնչությամբ: Քննադատելով տեղերում ազգային հարցի նկատմամբ որոշ ղեկավար անձանց «սխալ» մոտեցումները, Օրջոնիկիձեն նշում էր, որ «Անցյալ տարի Ախալքալաքի 37 գյուղեր ցանկություն են հայտնել միանալ Հայաստանին»¹: Ըստ երևույթին՝ կամենալով ընդգծել, որ գավառի ոչ բոլոր բնակավայրերն են հանդես եկել նման ցանկությամբ, բոլշևիկ գործիչն անպայմանորեն ընդգծել է «37» թիվը՝ մոռանալով, որ այն գավառի հայկական գյուղերի ընդհանուր թվի մեջ պատկառելի ցուցանիշ է: Եթե ամբողջ գավառի մոտ 80 գյուղերից հանենք մոտ 10–12 ռուս–աղանդավորական և վրացական գյուղերը, ապա կստացվի, որ գավառի հայ բնակչության կեսից ավելին, ճարահատյալ գնացել է այդ վտանգավոր քայլին: Ս. Օրջոնիկիձեն այդ փաստը համարել է «սկանդալ»՝ զարմանք հայտնելով խորհրդային Վրաստանից հեռանալու և Հայաստանին միանալու հայերի «անբնական» ցանկության կապակցությամբ:

Պարզվում է, որ համանման իրավիճակ ստեղծվել է նաև Գանձակի (Գյանջա) գավառի լեռնային մասում (խոսքը Ղարաբաղի մասին է – Ա. Մ.): Օրջոնիկիձեն, փորձելով հնարավորինս թաքցնել իրենց ազգային քաղաքականության ձախողումները, ինչպես վրացահպատակ Ախալքալաքի, այնպես էլ Ադրբեջանին ենթակա շրջանների հայության դժգոհության պատճառը համարել է ոչ թե քաղաքական, այլ զուտ տնտեսական: Այն է՝ Անդրկովկասի հողժողովոմատը Ջավախքում հայերին բավարար հողատարածքներ չի տրամադրել և նրանց գժտեցրել է ոչխարաբույծ–խաշնարած վրացիների հետ, իսկ երկրորդ դեպքում՝ Գյանջայի (Ղարաբաղի – Ա. Մ.) հայերին առհասարակ չի հատկացրել խոստացված հողակտորները:

Բնականաբար, հայության պահանջը մերժվել է: Ինչպես երևում է եղած կցկտուր նյութերից՝ Ախալքալաքի հայ պատվիրակներն օգնության խնդրանքով դիմել են հայ բոլշևիկներին, այդ թվում՝ ՀԽՍՀ ժող-

¹ Правда, 1926, 12 мая. Зմնտ.՝ Արեղեան Ա., Մենք և մեր հարեւանները, Հայրենիք, 1928, դեկտեմբեր, թիվ 2 և Հայրենի Ջաւախք, Պէյրուք, 2002, էջ 335:

կոմխորհի նախագահ, ծնունդով արցախցի Սաքո Համբարձումյանին հույս ունենալով զոնե հասնել Վրաստանի սահմաններում ինքնավարության տրամադրմանը: Սակայն Համբարձումյանը, զգուշանալով, ախալքալաքցիներից պահանջել է՝ թողնել ու հեռանալ իրենց տները և հիշեցրել, որ «կոմունիստական կուսակցությունը գիտե, թե ում եւ երբ պետք է տալ ինքնավարություն»¹:

Այս դեպքերի մասին Փարիզի «Հառաջ» թերթում կարդում ենք. «...այսօր անհերքելի իրողութիւն է, որ ախալքալակցիք ձգտում են իրենց գաւառը միացնել Հայաստանին: Նրանց գիւղական խորհուրդների այս ուղղութեամբ կատարած քայլերը յայտնի են ընթերցող հասարակայնութեանը թէ՛ մեր և թէ՛ բուլշեւիկեան մամուլից»²:

Այսպիսով՝ սահմանային հարցերում մնալով միայնակ խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի ավելի ազդեցիկ բուլշեւիկների և նրանց աջակցող կենտրոնի առջև, խիստ թուլացած Հայաստանի ղեկավարությունը, ի վերջո տեղի տվեց: Ջանգվածային բռնամիջոցների շնորհիվ խորհրդային իշխանությանը հաջողվեց առժամանակ լռեցնել ինչպես արցախցիներին ու ջավախքցիներին, այնպես էլ հարևան հանրապետություններին անցած այլ տարածքների հայությանը:

Հետագա տարիներին, ստալինյան բռնատիրության ամրապնդման պայմաններում հիմնահարցը մոռացության տրվեց, առավել ևս, որ կամա թե ակամա, բնակչության մեջ գերակշռեց խնդիրը «ինտերմացիոնալ բարեկամության» շրջանակներում լուծելու մոտեցումը, իսկ տարածքային վերածնունդների փորձերը դարձան անընդունելի ու խիստ վտանգավոր: Հարցը բարձրացնող անձանց մեծ մասը 1930–ական թվականներին բռնադատվեց:

Խորհրդային իշխանության տարիներին քաղաքական ու սոցիալ–տնտեսական լծակների անբարենպաստ ներգործության հետևանքով սկսված բնակչության արտահոսքը դարձավ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և Ախալքալաքի ու Բոգդանովկայի շրջանների ժողովրդագրական իրադրությանը բնորոշող երևույթ: Այդ առումով պատահական չէր, որ բնակչության տոկոսային հարաբերության տեսակետից, ի թիվս հայկական այլ տարածքների, երկրորդ աշխարհամարտի

¹ Արեղեան Ա., նշվ. աշխ., Հայրենի Ջալախք, Պեյրուք, 2002, էջ 335: Արեղեան Ա., նշվ. աշխ., էջ 336:

² Յառաջ, Փարիզ, 1928, 28 հունիս, էջ 2:

տարիներին այս երկրամասերն ունեցան մարդկային ավելի մեծ կորուստներ: Ադրբեջանի և Վրաստանի ղեկավարությունը ռազմաճակատ նետեց այնտեղի հայության առավել մեծ հատվածները: Բավական է նշել, որ պատերազմի օրերին բանակ զորակոչված 12684 ախալքալաքցիներից զոհվեց (մասամբ անհետ կորածներ) 7788–ը, այսինքն՝ 61,4 %-ը¹: Այս ցուցանիշը, որ գրեթե նույնական է նաև ԼՂԻՄ-ի համար, եպես գերազանցում է ԽՍՀՄ այլ շրջաններից բանակ զորակոչվածների կորուստները:

1988 թ. սկսված արցախյան համահայկական շարժմանը, ապա նաև ազատամարտին գործուն մասնակցություն ունեցավ նաև ջավախահայությունը: Հարյուրավոր ջավախահայեր իրենց կյանքը նվիրաբերեցին արցախի ազատագրության գործին²: Այդ մասնակցությունը Ջավախքում վրացական իշխանությունների վարած խտրական քաղաքականության դեմ յուրովի ընդվզելու արտահայտություններից մեկն էր:

Ներկայումս Լեռնային Ղարաբաղը և Ջավախքը կրկին հայտնվել են մարտահրավերների առջև: Սակայն ինչպես անկախ Արցախը, այնպես էլ պատմական Ջավախքն իր վարչական երկու շրջաններով (Ախալքալաքի և Բոգդանովկա-Նինոծմինդայի շրջաններ), հիմնականում հայաբնակ մոտ 100 գյուղերով և ավելի քան 100 հազար բնակչությամբ (95 %-ը՝ հայեր)³, շարունակում են ապրել իրենց հայաշունչ և հայեցի կյանքով՝ դատապարտված ապագայի նկատմամբ լավատեսության հրամայականով:

¹ Մելքոնյան Ա., Ջավախք. պատմության ուրվագծեր, Ե., 1999, էջ 44, 49:

² Արցախյան ազատամարտին Ջավախքի և հարակից շրջանների հայության մասնակցության մասին տես՝ **Ղազարյան Վ.**, Ջավախքի արծիվները Արցախի լեռներում, Ե., 2003:

³ Ջավախքին հարևան Ախալցխայի, Ասպինձայի և Ծալկայի շրջաններում հաշվվում է մոտ 30 հայկական գյուղ՝ 60 հազ. հայ բնակիչներով:

**ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայոց նորագույն պատմության մեջ իր ուրույն տեղն ունի արցախահայության ազատագրական պայքարը: 1921 թ. հուլիսի 5-ին Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին ապօրինի բռնակցվելուց հետո արցախահայությունը շուրջ 7 տասնամյակ անընդհատ բողոքում էր այդ անարդարացի որոշման դեմ՝ պահանջելով միավորվել մայր հայրենիքի հետ: Սակայն Մոսկվայի և Բաքվի իշխանությունները մերժում էին այդ արդարացի պահանջը: Ավելին, Ադրբեջանը կանխամտածված խոչընդոտում էր Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական, գիտամշակութային զարգացմանը, արգելակում կապը մայր հայրենիքի հետ և աստիճանաբար արտամղելով տեղի հայ բնակչությանը՝ արհեստականորեն ավելացնում էր ադրբեջանցիների քանակը՝ փորձելով փոխել մարզի ժողովրդագրական կազմը: 1980-ական թվականներին ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ արցախահայությունը կամ պետք է զանգվածաբար լքեր իր հողը և արժանանար Նախիջևանի հայության ճակատագրին, կամ պետք է պայքարի ելներ իր բնօրրանը և մարդկային ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար: Արցախը ընտրեց երկրորդ ուղին՝ պայքարի ճանապարհը: Գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունն ու թվացյալ ժողովրդավարությունը նպաստեցին արցախահայության բացահայտ պայքարի ծավալմանը, և ադրբեջանական բռնատիրությունից նրա ազատագրումը դարձավ խիստ հրատապ:

Արցախյան ազատամարտի սկզբնավորման և շարժման ակունքների բազմակողմանի քննությունն ու հաղթական նվաճումների բոլոր փուլերի գիտական հետազոտումը հայ պատմագիտության կարևոր խնդիրներից է: Այն ունի արդիական ու քաղաքական կարևոր նշանա-

կություն: Արցախահայության հերոսական պայքարի օբյեկտիվ ու սուբյեկտիվ նախադրյալների, «վերականգունմից» դեպի անկախություն տանող ծանր ու դժվարին ճանապարհի և այդ նպատակի շուրջ հայ ժողովրդի համազգային միավորման և, վերջապես, Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում տարած փայլուն հաղթանակների շատ հարցեր դեռևս ինչպես հարկն է չեն արժանացել հետազոտողների ուշադրությանը: Հիմնախնդրի շուրջ եղած գրականությունն ավելի շատ հանրամատչելի է և հուշագրական բնույթ ունի:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհի քաղաքական կյանքում տասնյակ նոր պրոբլեմներ, բազում խնդիրներ առաջացան: Անհրաժեշտ է նորովի գնահատել այդ ամենը և վերագնահատել շատ տեսակետներ, որոնք հրապարակ են նետվել դեպքերի թարմ հետքերով կամ հորինվել ադրբեջանական գրչակների կողմից:

Արցախի ազատագրական պայքարի բազմակողմանի քննությունն ու ընդհանրացումը կարևոր նշանակություն ունի նաև նորանկախ Հայաստանի պետականության հաստատման ու կառուցման հետ կապված շատ խնդիրների լուսաբանման գործում:

Ավելի քան 17 տարի է անցել Արցախյան ազատագրական պայքարի նորագույն շրջանից, սակայն առ այսօր հրապարակի վրա չկա մի ամբողջական ուսումնասիրություն, որտեղ քննության առնված լինեն Արցախյան նորօրյա ազատամարտի՝ 1988 թվականից սկսած բոլոր փուլերն ու առանձնահատկությունները, հաղթական ճակատամարտերի դերն ու նշանակությունը, ռազմական գործողությունները, հայերի հերոսական պայքարի առանձին կողմերը, 1994 թ. զինադադարի հաստատումը, համահայկական զորակցությունը Արցախին, ինչպես նաև՝ միջազգային հանրության ջանքերը արցախյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման ուղղությամբ: Մինչև այսօր չկա նաև մի ամբողջական ուսումնասիրություն, որը նվիրված լինի Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախության հռչակմանը, պետականության ամրապնդմանը, ինչպես նաև ԼՂՀ կայացման գործընթացին, նրա ներքին ու արտաքին քաղաքականության բազմակողմանի վերլուծությանը:

Արցախյան (1988-2005 թթ.) հիմնախնդրի ուսումնասիրության վերաբերյալ հրապարակի վրա եղած գրականությունը, ուսումնասիրությունները կարելի է բաժանել մի քանի մասերի. *առաջին*՝ Արցախյան շարժման վերաբերյալ եղած ուսումնասիրություններ, *երկրորդ*՝ Ղարա-

բաղա-ադրբեջանական 1991-94 թթ. պատերազմի ռազմական գործողությունների վերաբերյալ հետազոտություններ, *Երրորդ*՝ Արցախյան հարցի միջազգայնացման ու միջազգային հարաբերությունների ոլորտում նրա քննարկումների մասին եղած փաստաթղթեր ու ուսումնասիրություններ, *չորրորդ*՝ Արցախյան անկախ պետականության (ԼՂՀ) հռչակման, պետականության կայացման, նրա ներքին ու արտաքին քաղաքականության վերլուծության վերաբերյալ եղած ուսումնասիրություններ:

Առաջին մասի վերաբերյալ հրապարակի վրա կան Ղարաբաղյան հիմնախնդրին նվիրված բազմաթիվ աշխատություններ, ուսումնասիրություններ, հոդվածներ, գրքեր, հուշագրություններ, վիճակագրական և փաստագրական ժողովածուներ, օրագրություններ, կինովավերագրեր, գիրք-հուշամատյաններ, տարեգրություններ և այլն, որոնք կարևոր դեր են խաղացել անհրաժեշտ եզրակացություններ անելու համար¹:

Շարժման հենց սկզբից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տպագրվել են փաստաթղթերի և վավերագրերի ժողովածուներ², որոնցում շոշափված են արցախյան հիմնախնդրին առնչվող բազմաթիվ հարցեր: Հապշտապ կազմված այդ ժողովածուները, չնայած ժամանակին էական դեր են խաղացել Արցախ-Ղարաբաղի հիմնախնդիրը ճիշտ հասկանալու գործում, զերծ չեն մի շարք թերություններից: Այդ ժողովածուներից դուրս են մնացել Արցախի հիմնախնդրին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր՝ սկսած 1920-ական թվականներից մինչև 1980-ական թվականները: 1988 թ. ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան ակադեմիկոս Գ. Գալոյանի և Կ. Խուդավերդյանի խմբագրությամբ հրատարակեց «Լեռնային Ղարաբաղ» պատմական տեղեկանքը³, որտեղ հավաստի սկզբնաղբյուրների և վավերագրերի հիման վրա տրված է Արցախի համառոտ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև

¹ Нагорный Карабах в девятой пятилетке. Степанакерт, 1976, Народное хозяйство Азербайджанской ССР в 1984 году, Баку, 1985 և այլն:

² Թվմասյան Վ., Արաքանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, Մեղադրվում են, Երևան 1989, Нагорный Карабах в 1918-1923 гг., Нагорный Карабах, весна-осень 1990, Документы и материалы, Ереван, 1990, Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах, Ереван, 1995 г., Азербайджанская аргументация и ее опровержение, Ереван, 1989, Нагорный Карабах и вокруг него. Глазами независимых наблюдателей, Ереван, 1991 և այլն:

³ Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988.

մեր օրերը: Նրանում հիմնավորված է արցախյան հիմնախնդրին ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու անհրաժեշտությունը: Աղբյուրագիտական առանձնակի նշանակություն ունի Վահան Չարունյանի կազմած ժամանակագրական ստվարածավալ ժողովածուն¹, որը բաղկացած է 6 մասից և նրանում ընդգրկված են 1988-1997թթ. Արցախի հիմնախնդրի վերաբերյալ մամուլում հրապարակված բազմաթիվ նյութեր ու մեկնաբանություններ:

Արցախյան շարժման վերաբերյալ բազմաթիվ գրքերով ու հոդվածներով հանդես է եկել Բագրատ Ոլուբաբյանը, որը զգալի ներդրում ունի Ղարաբաղյան հիմնախնդրի բարձրացման հարցում: Նրա «Արցախյան գոյապայքարը» (Երևան, 1994), «Արցախյան գոյապայքարի տարեգրություն» (Երևան, 1997) և մամուլում տպագրված տասնյակ հոդվածներն ու հրապարակումները կարևոր ու խիստ անհրաժեշտ ուսումնասիրություններ են, նաև ականատեսների վկայություններ, դեպքերի ու իրադարձությունների վերլուծություններ, ընդհանրացումներ և զնահատականներ: Բ. Ոլուբաբյանի գրքերը սկզբնավորելով Արցախյան շարժման ուսումնասիրությունը՝ համակարգված ու ընդհանրացված տեղեկություններ է հաղորդում խնդրո առարկա թեմայի վերաբերյալ: Սակայն նրանցում հպանցիկ են ներկայացված պատերազմական գործողությունները: Մեծ է նաև գրող-հրապարակախոս Ջորի Բալայանի դերը, որի գրքերն ու հոդվածները, չնայած ունեն ավելի շատ քաղաքական-հրապարակախոսական, քան թե պատմագիտական ուղղվածություն, բայց օրագրային գրառումների, վավերագրական ակնարկների ու զժանկարների մի յուրօրինակ հավաքածու են, որոնք նոր շունչ են տվել արցախյան պայքարին ու էական դեր խաղացել Արցախ-Ղարաբաղի հիմնախնդրի միջազգայնացման գործում²: Տարեգիր-հրապարակախոսների այս շարքը լրացնում է Բակուր Կարապետյանը ոչ միայն գրքերով ու հոդվածներով, այլև փաստավավերագրական նկարահանումներով³: Նա առաջիններից մեկն էր, որ փորձեց վեր հանել Արցախի հիմնախնդիրը և նկարագրել պայքարի սկզբի իրադարձությունները: Արցախ-

¹ **Арутюян В. Б.**, События в Нагорном Карабахе, ч. 1-6, Ереван, 1990-1997.

² **Զ. Բալայան**, Դժոխք և դրախտ, Երևան 1995, նույնի՝ Բժիշկ Մարությանը և նրա «Պատերազմի հետքը երկար է մնում», Երևան, 1999 և այլն:

³ Կարապետյան... եվ նրա շուրջ, Երևան, 1990, նույնի՝ Անգլուհու արցախյան ողիսականը, Երևան, 1994:

յան հիմնահարցը միջազգային իրավունքի տեսանկյունից դիտարկելու ուղղությամբ առաջին լուրջ փորձն արեց Յու. Բարսեղովը¹: Նրա ուսումնասիրություններում բերված կարևոր փաստարկներն ու հիմնավորումներն անվիժելի են դարձնում, որ Արցախի հիմնահարցի արդարացի լուծմանը կարելի է հասնել ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի համաձայն: Արցախյան շարժման 1988-89 թթ. շրջափուլի առաջին ուսումնասիրողներից է Վլադիմիր Գրիգորյանը: Սակայն նա ամեն կերպ փորձել է գերազնահատել Արցախյան ազատամարտում «Չայոց համազգային շարժում» կազմակերպության դերը, ինչի հետ չենք կարող համաձայնել²: Արցախյան գոյապայքարի արդարացիությունը գիտականորեն հիմնավորող առաջին հեղինակներից է նաև ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը³: Նրա գրքում կարևոր տեղ է հատկացված Ադրբեջանական ԽՍՀ հայ բնակչության նկատմամբ իրագործված բռնազաղթի ու սպանդի, ինչպես նաև Չայաստանից ադրբեջանցիների արտագաղթի պատճառների բացահայտմանը: Այս ուղղությամբ արժեքավոր ուսումնասիրություններ է կատարել նաև ակադեմիկոս Գրիգոր Ավագյանը: Նա իր գրքում, որն ըստ էության հեղինակի՝ արցախյան հիմնահարցին նվիրված նախկինում իրատարակված տարաբնույթ ուսումնասիրությունների ամփոփումն է, ցույց է տվել Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի վրա գործադրված բռնաճնշումների ընթացքը և դրանց բացասական հետևանքները⁴: Վերակառուցումից մինչև անկախություն ընկած ժամանակաշրջանում Չայաստանում տեղի ունեցած իրադարձությունների վերլուծությանն է նվիրված Ռ. Ազիզբեկյանի գիրքը⁵, որում մամուլում հրապարակված փաստական նյութի և այլ ուսումնասիրությունների հիման վրա լուսաբանված են հայ ժողովրդի 1985-1991 թթ. պատմության շրջադարձային էջերը՝ Արցախ-Ղարաբաղի ազատագրական շարժման ծավալումը և դեպի ազգային անկախ պետականության վերականգնում տանող դժվարին ուղին: Չե-

¹ **Ю. Барсегов.** "Народ Нагорного Карабаха-субъект права на самоопределение, Москва, 1993, **Յու. Գ. Բարսեղով,** Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պորբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Երևան, 1990:

² **В. Григорян,** Армения 1988-1989, Ереван, 1999.

³ **Վ. Ե. Խոջաբեկյան,** Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

⁴ **Г. Авакян,** Нагорный Карабах. Ответ фальсификатрам, Ереван, 1991.

⁵ **Ռ. Ազիզբեկյան,** Չայաստանը վերակառուցումից մինչև անկախություն. Համառոտ ակնարկ, Երևան, 1992:

ղինական առանձնահատուկ ուշադրություն է դարձրել արցախյան շարժման դրդապատճառներին:

Հյուսիսային Արցախի գոյապայքարի պատմությանը նվիրված Կիմ Ղահրամանյանի արժեքավոր աշխատությունը¹ անդրադառնում է ԼՂԻՄ մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձություններին, որոնք լայն արձագանք գտան Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում: Խիկար Բարսեղյանի գրքում զետեղված են մանուլում տպագրված նրա հոդվածները և փաստաթղթեր, որոնցում վերլուծվել են 1988-1990 թթ. տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները և գնահատվել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին նվիրված բազմաթիվ հարցեր²:

Արցախ-Ղարաբաղյան հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծությանն են նվիրված Հրանտ Աբրահամյանի մի շարք աշխատություններ³, ինչպես նաև Ն. Սարումյանի «Քաղաքական և մշակութային իրավիճակը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում 1960-80-ական թվականներին» (Ստեփանակերտ, 2001), Ա. Արշակյանի «Արցախյան գոյապայքար (1985-1992 թ.)» (Երևան 2004)⁴: Նշված հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել, հենվելով հիմնականում նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների, պարբերական մամուլի, ժամանակակիցների հրատարակած և չհրատարակած հուշագրությունների և այլ պատմագիտական նյութերի վրա, ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացրել Արցախի ազատագրական պայքարի նախադրյալների, դրա սկզբնավորման, այդ պայքարի շուրջ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայության համախմբման, ինչպես նաև պատերազմում հայ ժողովրդի հերոսամարտի և ծանր պայմաններում տարած փայլուն հաղթանակների առաջին փուլի արդյունքները: Հրապարակի

¹ Կ. Ղահրամանյան, Հյուսիսային Արցախ, գոյության պայքար, գիրք Բ, Երևան, 1993:

² X. Барсегян, Истина дороже. К проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван, 1992.

³ Հ. Աբրահամյան, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, նույնի՝ Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, նույնի՝ Ճակատագրին ընդառաջ, Երևան, 2001, նույնի՝ Արցախյան շարժումը և հայ քաղաքական ու հասարակական ուժերը, կրթությունը և գիտությունը Արցախում, 1-2, Երևան, 2004, էջ 119-126:

⁴ Ս. Առուստամովի «ԵՃմարտությունը Լեռնային Ղարաբաղի մասին» (ռուսերեն լեզվով), Երևան, 1999:

վրա են նաև մի շարք այլ հեղինակների աշխատություններ¹ ու հուշագրություններ², որոնք աղբյուրագիտական արժեք ունեն: Ս. Չոբանյանի կազմած փաստավավերագրական ժողովածուն ներկայացնում է արցախահայության նկատմամբ Ադրբեջանում նախապես ծրագրված ու իրագործված վանդալիզմի և հակահայկական ուղղվածության տարաբնույթ դեպքերի բազմաթիվ ասպացույցներ³:

Ադրբեջանահայության ցեղասպանությանը և բռնագաղթին են նվիրված մի շարք գրքեր ու հրապարակումներ⁴, որոնցում բացահայտվել են տեղի հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնությունները, դաժանություններն ու ջարդերը: Արցախյան խնդրին նվիրված բազմաթիվ գրքեր ու ժողովածուներ են հրատարակվել նաև Ադրբեջանում⁵: Դրանց հեղինակները առանց բացառության նենգափոխում են պատմական ճշմարտությունը և դեպքերն ու

¹ Ս. Սելբունյան, Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, Երևան, 1997. Շ. Սկրտչյան, Արցախ, Երևան, 1991, Ա. Հակոբջանյան, Արցախյան ազատամարտի ակունքների մոտ, Երևան, 2001., Լ. Սկրտչյան, Արցախ-Ղարաբաղը իր անցյալով և ներկայով, Սփենք, 1988, Ա. Մանասյա, Карабахский конфликт: ракурсы правового подхода, Ереван, 1997. **Бабанов Игорь**, Воеводский Константин, Карабахский кризис, Санкт-Петербург, 1992. **Сахаров**. О Нагорном Карабахе, Ереван, 1996, **С. Золян**, Нагорный Карабах: проблема и конфликт. Ереван, 2002.

² **Գ. Գրիգորյան**, Ղարաբաղյան օրագիր (1988-1992), Երևան, 2005, Ա. Պետրոսյան, Արևուր Սկրտչեան, Երևան, 2004:

³ **С. Чобанян**, Государственно организованный терроризм, Геноцид армян 1988-1991 гг., Ереван, 1992:

⁴ Ի. Մոսեսովա, Ա. Հովհանյան, Բաքվի ջարդերը, Երևան, 1992, Սելիք-Շահնազարյան Լևոն, Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1988. **Кокс Кералайн, Айбнер Джон**, Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998. **Мельк-Шахвазарян Левон**, Гандзак. Неутраченный мир (воспоминание очевидца), Степанакерт, 1996, **Удубабян Г.**, Золян С., Аршакян А., Сумгаит...Геноцид...Гластность, Ереван, 1989, **Вермишева Седа**, Депортация населения армянских сел НКАО и прилегающих районов: апрель-июнь 1991 года, Ереван, 1995, Заключение комитета Верховного Совета РСФСР по правам человека по итогам слушаний, посвященных конфликтам в ряде районов Азербайджанской республики и республики Армения (конец апреля-май 1991 года), Ереван, 1992. Геноцид армян в Азербайджане, Степанакерт, 1998. Анексия и депортация, Степанакерт, 1998. Дневник судебного процесса о преступлениях против армянского населения Сумгаита, Степанакерт, 1998.

⁵ Хроника НКАО февраль 1988 - февраль 1990, Баку, 1990, Конфликт в Нагорном Карабахе, Баку, 1990, К истории образования Нагорно-Карабахской области Азербайджанской ССР 1918-1925, документы и материалы, Баку, 1989, **Аляев И.**, Нагорный Карабах. История, факты, события, Баку, 1989 և այլն:

իրադարձությունները ներկայացնում իրենց համար շահեկան կտրվածքով:

Երկրորդ մասի՝ 1991-94 թթ. ազատամարտի ռազմական գործողությունները, պաշտպանության բանակի կազմավորման և անցած մարտական ուղու, պատերազմի առանձին դրվագները մի ամբողջության մեջ առաջին անգամ ներկայացրել է Ս. Հասրաթյանը իր «Գոյամարտը (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց)» (Ստեփանակերտ, 1998) և «Ղարաբաղյան պատերազմ» (Երևան, 2001) աշխատություններում, որտեղ պատերազմը ներկայացված է ընդհանուր գծերով: Խոշոր ռազմական գործողությունները վերլուծության չեն ենթարկվել, դրանց անցկացման անհրաժեշտությունը, պատմական նշանակությունը և նման խնդիրներ դուրս են մնացել հեղինակի ուշադրությունից: Հատկապես բանակի կազմավորման գործընթացը ներկայացված է դրվագներով, իսկ ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի հրամանագիրը ինքնապաշտպանական ուժերի մասին և Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանագիրը՝ ԻՊՈՒ-ն ՊԲ-ի (Պաշտպանության բանակի) վերակազմավորելու մասին, վրիպել են նրա ուշադրությունից: Նրա աշխատություններում չի զանազանվում Արցախյան շարժման քաղաքական փուլը պատերազմականից, դեռ ավելին՝ չի ուրվագծվում, թե երբ է սկսվել պատերազմը:

Արցախյան պատերազմի ընթացքի ու Պաշտպանության բանակի կազմավորման, մարտական գործողությունների ու դրանց հետ կապված քաղաքական և դիվանագիտական ձեռնարկումների մասին փաստական հարուստ նյութեր կան Վ. Հարությունյանի վերը նշված «Իրադրությունը Լեռնային Ղարաբաղում» ժամանակագրության 4-րդ և 5-րդ մասերում: Սակայն նրա տեղեկությունները ամբողջական չեն: Առանձին մարտական գործողությունների մասին տեղեկություններ է պարունակում Ռազմիկ Պետրոսյանի հուշերի գիրքը¹, որը գերծ չէ թերություններից ու անճշտություններից, մասնավորապես բացակայում է Սարտակերտի ճակատում մղված մարտական գործողությունների ժամա-

¹ Ռ. Պետրոսյան, Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997, Գրքի լրամշակված տարբերակը - Արցախ, պատերազմ, զինադադար, Երևան, 2001:

նակագրությունը: Ուշագրավ են նաև Ս. Քամայանի գրքերը¹, մանավանդ Մարտունու շրջանում ընթացած մարտական գործողությունների և այդ ուղղությամբ ստորաբաժանումների կազմավորման ու մարտական ուղու լուսաբանման տեսակետից: Գանձակուն 1988 թ. հայերի ինքնապաշտպանության մասին են ականատես Լ. Մելիք-Շահնազարյանի հուշերը²: Փաստերով հարուստ նյութեր է պարունակում նրա մյուս ծավալուն աշխատությունը³, ուր դիտարկվում են արցախահայության ազգային-ազատագրական պայքարը ճնշելու՝ Ադրբեջանի որդեգրած բոլոր ձևերն ու եղանակները: Հեղինակը Ադրբեջանի ագրեսիայի սկիզբը համարում է ԼՂՀ հռչակումից հետո (1991 թ., սեպտեմբերի 2): Իրականում ԼՂՀ հռչակումը Ադրբեջանի ագրեսիային դիմադրելու կարևորագույն ձեռնարկումներից էր: Հեղինակի ուշադրությունից վրիպել են Գետաշենի, Մարտունաշենի և մյուս հայկական բնակավայրերի բռնատեղահանության իսկական պատճառները, սոցիալ-քաղաքական հիմքերը, ներքին խնդիրները:

1991 թ. ամռանը տիրահռչակ «Կոլցո» ռազմական գործողության ընթացքում Հադրութի շրջանի սահմանամերձ գյուղերի հայաթափման անմիջական ու թարմ տպավորության տակ հետագայում ԼՂՀ ԳԽ անդրանիկ նախագահ ընտրված Ա. Սկրտչյանը փորձել է վերհանել ողբերգության պատճառները, ներկայացնել իրադարձությունների ճիշտ պատկերը⁴: «Կոլցո» ռազմական գործողության մասին է նաև Նվարդ Սողոմոնյանի փաստագրությունը («Կոլցո» I, II, III մասեր, Ստեփանակերտ, 1994-2000 թթ.): Նախկին խորհրդային սպա Պ. Բաղդասարյանի հուշերի գիրքը, որը կոչվում է «Դիմակայություն. հուշագրություններ» (Երևան, 1998), ընդգրկում է միայն 1989-92 թթ. տեղի ունեցած այն դեպքերն ու գործողությունները, որոնց անմիջական մասնակիցը կամ կազմակերպիչն է եղել հեղինակը: Նա փորձել է ցույց տալ Արցախյան ազատամարտի գլխավոր հերոսի՝ ժողովրդական կամավորական աշ-

¹ **С. Камалян**, Карабах на пути к бессмертию, Краснодар, 1994, նոյնի՝ Ավոն մեր աչքերով, Երևան, 1994:

² **Левон Мелик-Шахназарян**, Гандзак неутраченный мир (Воспоминания очевидца), Степанакерт, 1996.

³ **Левон Мелик-Шахназарян**, Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской республики, факты и комментарии. Ереван, 1992.

⁴ **Արթուր Սկրտչյան**, Ի՞նչ է տեղի ունեցել Հադրութում, Երևան, 1992:

խարհագրի դերը Արցախի ու Հայաստանի անվտանգության համար մղված պայքարում: Ռազմաքաղաքական ընդհանրացումներում արտահայտել է իր մարտական փորձից ու աշխարհայացքից բխող անձնական տեսակետներ: Դ. Բաղդասարյանի գրքում առաջին պլան է մղված ինքը՝ հեղինակը, որոշ դեպքերում գերազնահատված է նրա դերակատարությունը:

Ռազմաբժշկական ծառայության ստեղծման, պատերազմում բուժաշխատողների գործունեության ու մարտական ուղու մասին է Վ. Մարությանի գրառումների հիման վրա ստեղծված գիրքը¹: Հեղինակը, լինելով ռազմաբժշկական ծառայության հիմնադիրներից մեկը, ականատեսի քաջատեղյակությամբ ու հավաստի է ներկայացնում ինչպես պաշտպանության բանակի կազմավորման, այնպես էլ պատերազմի առանձին դրվագներն ու մանրամասները:

Վիրաբույժ-լրագրող Ա. Բունիաթյանի գիրքը² ընդգրկում է Արցախյան պատերազմի 1992 թ. ապրիլի 24-ից մինչև հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածը: Հետաքրքիր մանրամասնություններ կան Մարտակերտի ռազմաճակատում տեղի ունեցած իրադարձություններից: Արձակագիր Կ. Դանիելյանը դրվագ առ դրվագ ներկայացնելով արցախահայության վեցամյա պայքարի պատկերը՝ անդրադարձել է նաև ՊԲ կազմավորմանը, պատերազմի հատկապես Ասկերանի ուղղությամբ և շրջանի ինքնապաշտպանական կազմավորումների մղած մարտական գործողություններին: Ի. Բաբանովը և Կ. Վոյեվոդսկին վերը նշված իրենց աշխատություններում անաչառ են ներկայացրել Արցախում տեղի ունեցող իրադարձությունները, մանավանդ Գետաշենի ողբերգությունը՝ հիմնավորելով, որ խաղաղ բնակչության դեմ բռնությունները գործադրել են ԽՍՀՄ ղեկավարության ցուցումով: Լրագրող Ս. Մարգարյանի կազմած փաստագրական ժողովածուն³, ուր զետեղված է Մարտակերտի շրջանում ծավալված մարտական գործողությունների լուսանկարային և տեղեկատվական քրոնիկոնը, արժևորվում է Արցախ-

¹ **Валерий Марутян**, У войны долгий след (Записи военврача), Ереван, 1996.

² **Ա. Բունիաթյան**, Արյունոտ օրեր, Մարտակերտ, Վավերագրություն, գիրք1, Երևան, 2000:

³ **Ս. Մարգարյան**, Մարտակերտ չհայտարարված պատերազմի կիզակետ (փաստագրություն), Ստեփանակերտ, 1999:

յան գոյամարտի մասնակից զորահրամանատարների հուշերով ու իրադարձությունների գնահատականներով:

Ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրություն է Միեր Հարությունյանի «Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը» (Երևան, 2000) աշխատությունը, որտեղ ոչ միայն ներկայացրել է պատերազմի սկզբի ռազմական գործողությունները, այլև Արցախյան պատերազմի գլխավոր դերակատարի՝ պաշտպանության բանակի կազմավորման փուլերն ու անցած մարտական ուղին, ինչպես նաև Շուշիի և Լաչինի ազատագրումն ու դրա նշանակությունը պատերազմի ընդհանուր ելքի վրա: Արցախյան ազատամարտի ռազմական գործողությունների նկարագրությանն են վերաբերում Ռազմիկ Պետրոսյանի «Արցախ, պատերազմ, զինադադար» (Երևան, 2001) և Փաշա Օհանջանյանի «Ղարաբաղի ազատագրման պատերազմը» (Երևան, 2000) աշխատությունները:

Մի շարք հեղինակներ հուշամատյաններ, հուշագրեր, Արցախյան հերոսներին նվիրված աշխատություններ, գրքույկներ են հրատարակել, որտեղ նկարագրված են մարտական գործողությունները և ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների հերոսապատումը¹: Պատմաբան Հ. Դեմոյանը իր աշխատություններում անդրադարձել է Արցախյան ռազմական գործողություններին և հատկապես 1992 թ. փետրվարին Խոջալուի դեպքերին²:

¹ **Գ. Ղարիբյան**, Արթուրը: Արծվի թռիչք էր նա, Երևան, 1999, **Ա. Արշակյան**, Մահ չի մացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն, Երևան, 1993, **Հ. Աբրահամյան**, **Շ. Մկրտչյան**, Արցախի համար զոհված դիզակցիները, Երևան, 2000, **Փայա Առուստամյան**, Իմ սերը քեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան, 1998, **Սեդրակ Նանագուլյան**, Արծիվները բարձունք են տենչում, գիրք Ա, Բ, Գ, Երևան, 1992-1993, **Էռեստ Եսայան**, Բույլ նահատակաց, Երևան, 1996, **Բարկեն Մուսայելյան**, Հանուն Արցախի և հայրենի Մարտունու, Ստեփանակերտ, 1998, **Վ. Առաքելյան**, **Գ. Ազիզյան**, Նրանք փառքով անմահացան, Երևան, 1996, **Ի. Աբայան**, Ընդմիշտ մեզ հետ, Ստեփանակերտ, 1995, **Վ. Միրզոյան**, Սարգսաշեն, Ստեփանակերտ, 1997, Բաժին № 9-12, Պեյրուք, 1993, № 1-6, Պեյրուք, 1996, **Ս. Նանագուլյան**, Շահեն, Երևան, 1993., **Ռ. Սահակյան**, Արծվապաշտ երկիր, փաստագեղարվեստական, Երևան, 2004 թ.:

² **Демоян Г., Мелик-Шахназарян Л.**, Ходжалинское дело: Особая папка, Ереван, 2003. **Демоян Г.**, Карабахская драма: Скрытые действия, Ереван, 2003.

Hayk Demoyan, Levon Melik-Shahnazaryan, The KHOJALU CASE: A SPECIAL DOSSIER, Yerevan 2004, Этническая причина, նույնի Этническая принадлежность в политическом и общественном дискурсе современного Азербайджана, по примеру антиармянских материалов, Ереван, 2004, ...prepared by Hayk Demoyan, Yerevan, 2004.

Արցախյան ազատագրական պայքարի և նրա մարտական գործողությունների մասին պաշտպանվել են նաև թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներ: Դրանցից են Կ. Ղահրամանյանի «Հյուսիսային Արցախ (պատմական քննական վերլուծություն)»՝ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, (Երևան, 2000), Մ. Հարությունյանի «Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին», 1991-1994 թթ.՝ թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2001), Ա. Արշակյանի «Արցախյան գոյապայքարը 1985-1992 թթ.». թեկնածուական ատենախոսության սեղմագիր (Երևան, 2003) և այլն: Հատկապես արժեքավոր ու ամփոփ ուսումնասիրություն է «Ղարաբաղի 1988-1994 թթ.» հանրագիտարանը (Երևան, 2004 թ.), որտեղ ոչ միայն տրված է Արցախյան հերոսամարտի մասնակիցների և հատկապես զոհվածների կենսագրականներ, այլև ռազմական գործողությունների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Արցախյան շարժման սկզբնավորման պատմությունը: Նույնիսկ առանձին ներկայացված է բժիշկների, արվեստագետների, գրողների և այլ ոլորտների մասնագետների մասնակցությունը Արցախյան ազատամարտին: Անշուշտ, աշխատությունը առաջին փորձն է և կարող է օգտակար լինել հետագա ամփոփ ուսումնասիրությունների համար, սակայն այն զերծ չէ թերություններից, հատկապես մարդկանց, գործողությունների ամբողջական ընթացքի նկարագրությունը, զինադադարի հաստատումը, շատ մասնակիցների անունների բացակայությունը, չկա շարժման սկզբնավորման պատմությունը և այլն:

Երրորդ խումբ գրականությունը ավելի սակավ է: Արցախյան հարցի միջազգային քննարկումները ներկայացված են ավելի շատ ՀՀ Արտաքին գործերի նախարարության հաշվետվություններում և ԵԱՀԿ և մյուս միջազգային ասոյաններում ու մամուլում:

Արցախյան հարցի քննարկումներին անդրադարձել է ՀՀ-ում Ռուսաստանի նախկին դեսպան Վ. Ստոլպիշինը¹: Նա փորձել է վերլուծել իրադարձությունները, քննադատաբար է մոտեցել հակամարտության նկատմամբ Ռուսաստանի քաղաքական որոշ ուժերի, մանավանդ արտաքին գործերի նախարարության սխալ դիրքորոշմանը: Բացահայտվել է մի շարք ռազմական գործողությունների քաղաքական-

¹ Владимир Столпизин, Карабахский конфликт, 1992-1994, Москва, 1998.

դիվանագիտական աստառը: Ուշագրավ աշխատանք է ներկայացրել Արմեն Այվազյանը: Նա իր «Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը» (Երևան, 1998), աշխատության մեջ ներկայացնում է Ղարաբաղյան հակամարտության զարգացման փուլերը և հարցի ուսումնասիրության վիճակը, ներկայացնում է հակամարտության ռազմավարությունը, Ադրբեջանի և Թուրքիայի նկատմամբ Հայաստանի անվտանգության պատճառները, ԵԱՀԿ բանակցությունների ընթացքը, Ղարաբաղի և Հայաստանի անվտանգության միջազգային երաշխիքները՝ ԵԱՀԿ ծրագրի լույսով, փոխզիջումային հնարավոր տարբերակները և այլն: Արժեքավոր աշխատություն է նաև փիլիսոփա Ա. Մանասյանի «Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելուն» (Երևան, 2003) հոդվածների ժողովածուն: Այստեղ հեղինակը ներկայացրել է Արցախյան հարցի միջազգայնացման ուղղությամբ կատարված աշխատանքները, նաև հարցի քննարկումները միջազգային աստիճաններում և դրա լուծման օրինական ձևերը:

Չորրորդ մասի վերաբերյալ նույնպես գրականությունը սակավաթիվ է, չնայած գրվում են նոր գրքեր, ուսումնասիրվում են հոդվածներ, բայց մի ամբողջական աշխատություն այս ուղղությամբ դեռևս չկա: Լևոն Մելիք-Շահնազարյանը իր վերը նշված աշխատություններում անդրադարձել է ԼՂՀ-ի ներքին և արտաքին քաղաքականության հարցերին, հատկապես 1991-96 թվականների ժամանակահատվածում:

Արցախի ներքին կյանքի հարցերի վերլուծությանն է վերաբերվում «Լեռնային Ղարաբաղի մշակութային և հոգևոր ժառանգությունը» (Երևան, 1998) աշխատությունը, որտեղ ներկայացված են ԼՂՀ-ի արդի մշակութային արժեքները: Ա. Դաբաղյանի և Մ. Գաբրիելյանի «Շուշին 1992-2002 թթ. հայերի վերադարձը ազատագրված քաղաք» (ազգագրական ակնարկ) աշխատությունում արժեքավոր փաստագրական նյութեր են ամփոփված վերջին տասնամյակում քաղաք վերադարձող հայ բնակչության ժողովրդագրական կազմի վերաբերյալ: Այստեղ շարադրված է Շուշիի բնակչության կենսաապահովման համակարգի, հասարակական հարաբերությունների, քաղաքային մշակույթի ձևավորման ընթացքի հիմնական առանձնահատկությունները: Բազմաթիվ հոդվածներ են հրատարակվել Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի մանուկում և անսագրերում, որոնք վերաբերում են ավե-

լի շատ ԼԴՅ-ի ներքին կյանքի, սոցիալ-տնտեսական վերափոխումների վերլուծությանը: Սակայն դեռևս չկա մի ամբողջական աշխատություն ԼԴՅ-ի անկախ պետության ստեղծման ու կայացման մասին: Դա այսօր հրատապ խնդիր է:

Նկատի ունենալով Արցախյան ազատամարտի նորագույն շրջանի (1988-2005 թթ.) պատմության ողջ կարևորությունն ու ազգային-հայրենասիրական, գիտական և քաղաքական նշանակությունը, կարծում ենք, որ.

Առաջին: Առաջիկայում այդ պատմությունը պետք է իրականացնել կոմպլեքս եղանակով՝ ներգրավելով դրա մեջ ոչ միայն ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության ինստիտուտները, այլև ԵՊՀ պատմության, միջազգային հարաբերությունների և արևելագիտության ֆակուլտետները, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը:

Երկրորդ. Ցավոք, անկախ Հայաստանի Հանրապետությունում 14 տարիների ընթացքում չստեղծվեցին ազգային անվտանգության բնագավառը ուսումնասիրող պատշաճ գիտական որակավորում ունեցող վերլուծական կենտրոններ՝ իրենց համապատասխան կադրերով, թեև ի սկզբանե պարզ էր, որ ղարաբաղյան հակամարտությունը սերտորեն առնչվում է համաշխարհային բազմաբնույթ զարգացումներին, որոնք անհրաժեշտ է ժամանակին և արագ վերլուծել: Ուստի խիստ անհրաժեշտ է մնան կենտրոնների ստեղծումն ու համապատասխան կադրերով դրանց ապահովումը: Դրանք կարելի է ստեղծել նաև բուհերում՝ կոնկրետ և հրատապ ծագած խնդիրները քննարկելու և վերլուծելու համար:

Երրորդ. Անհրաժեշտ է, որ Հայաստանի կառավարությունը կամ արտաքին գործերի նախարարությունը ստեղծի ռազմավարական հետազոտությունների կենտրոն, որը կմշակի ռազմավարական հեռանկարային գործողությունների ծրագրեր ոչ միայն ՀՀ անվտանգության ապահովման համար, այլև Արցախյան հակամարտության ընթացքն ու կարգավորման հնարավորությունները մասնագիտական համակարգված վերլուծության ենթարկելու, կոնկրետ ու պրակտիկ առաջարկներ անելու նպատակով:

Չորրորդ: Ուսումնասիրությունների արդյունավետությունը էապես կարելի է բարձրացնել գիտական համագործակցություն հաստատելով նշված հարցերով զբաղվող արտասահմանյան գիտնականների և

մասնավորապես սփյուռքահայ պատմաբանների, արևելագետների ու միջազգայնագետների հետ:

Հինգերորդ: Հարկավոր է ընդգծել, որ Արցախի ազատագրական պայքարի՝ 1988-2005 թթ., պատմության ուսումնասիրության կարևորությունը, ստեղծել համակարգող մի մարմին՝ ընդգրկելով նրա մեջ հիշյալ հարցերով զբաղվող բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչներին. դա հնարավորություն կտա խելամտորեն օգտագործել համրապետության գիտական ներուժը:

Վեցերորդ: Սոցիոլոգիական հարցումներով ու անձնական դիտարկումներով կարելի է վերլուծել ու քննարկել ԼՂՀ-ի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտների գործընթացները և անել համապատասխան առաջարկներ:

ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՎՐԱՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
XVIII դարի երկրորդ կեսին

Հայոց քաղաքական միտքը ազատագրական իր ծրագրերում մշտապես կարևոր տեղ է հատկացրել Վրաստանին և հայ-վրացական հարաբերություններին: Հայ-վրացական հարաբերությունները XVIII դարում ձևավորվում էին ինչպես բուն Վրաստանում՝ ժողովուրդների բազմաբնույթ հարաբերությունների հենքի վրա, այնպես էլ բուն Հայաստանում և տարածաշրջանում՝ վրաց իշխանությունների ունեցած առնչությունների ոլորտում: Հայազգի գործիչները հաճախ ընդգրկվում էին նաև Վրաստանի արտաքին հարաբերությունների ձևավորման ոլորտ և իրականացնում Վրաց արքունիքի դիվանագիտական բանակցությունների վարումը այլևայլ պետությունների ու երկրների հետ¹:

Պարսկաստանում Նադիր շահի սպանությունից անմիջապես հետո և XVIII դարի երկրորդ կեսի ընթացքում առաջացած քաղաքական նոր իրադրության պայմաններում, ի տարբերություն հայ իրականության, վրաց իշխանություններին հաջողվում է ձեռք բերել փաստացի անկախություն՝ պահպանելով Իրանական պետության մեջ նախկինում ունեցած «Գուրջիստանի վալիի» իրենց բարձր կարգավիճակն ու համարումը և ներկայանալ որպես իրանական պետության ճակատագրով «մտահոգ» գործիչներ: «Մահմեդական չալմայով քրիստոնեության համար պայքարի այս ձևը»², որ շարունակում էին կիրառել Վրաց Բագրա-

¹ XVIII դարի երկրորդ կեսին նման գործիչներից էին Օթար Թումանովը, Գուրգեն Ենիկոլայանը, Սուլխան Թումանյանը և այլք: Վրաց արքունի դիվանագիտիկներ Թումանյանների (վրաց իրականության մեջ՝ Թումանիշվիլի) տոհմածառը տես **Cyrille Toumanoff**. *Les Dynasties de la Caucasic Chretienne*. Roma, 1990, p. 338-345, 565-566.

² Գ. Ֆաօստրաձե, *Քրիստոնեական և սոցիալական շրջադարձեր XIII-XVIII ևս., տ.ժ.* 1982, թ. 242.

տունի թագավորները արտաքին քաղաքականության մեջ նաև XVIII դարի ընթացքում, անհրաժեշտ հանգամանք էր իրենց դիրքերն ամրապնդելու համար:

1740-ական թթ. վերջերին և 1750-ական թթ. սկզբներին Չայաստանի տարածքում հայազգի իշխանավորները, աստիճանաբար զիջում են անգամ նախորդ տասնամյակներին արդեն իսկ իրենց ունեցած դիրքերը. Արցախում ստեղծվում է մահմեդական խանություն, իսկ Երևանում, Նախիջևանում և Գանձակում ամրապնդվում են մահմեդական կառավարիչների դիրքերը: Պարտություն են կրում Շահկերտի ու Ագուլխի ինքնապաշտպանությունները:

Չայոց հասարակական-քաղաքական կյանքի ուղղորդիչ իր դերակատարումով XVIII դարի կեսերից առանձնապես կարևորվում է Էջմիածնի կաթողիկոսության ազդեցությունը, որը աստիճանաբար թոթափելով 1730-40-ական թվականների ճգնաժամային իրադարձությունները, 50-ական թվականների վերջերից սկսում է վարել առավել նպատակաուղղված քաղաքականություն և վերածվում առավել ազդեցիկ գործոնի: Այդ գործընթացում նշանակալի էր Չակոբ Շամախեցի, իսկ այնուհետև նրա աշակերտ Սիմեոն Երևանցու և ապա Ղուկաս Կարնեցու վարած հավասարակշիռ և շրջահայաց գործունեությունը: Դեռևս 1745 թ. Նադիր շահի կողմից Ղազար Ջահկեցուն կաթողիկոսական գահից արտաքսումից և Չովհաննես Ագուլեցուն կաթողիկոս կարգելուց հետո, Ղազար Ջահկեցուն կրկին կաթողիկոսական Աթոռին վերադարձնելու գործում կարևոր դերակատարում ունեցած Չակոբ Շամախեցին¹, 1749 թ. ընդունում է նաև Արևմտյան Վրաստանի գահազուրկ եղած Ալեքսանդր V թագավորի կողմից օժանդակության ակնկալիքով դեսպանագնացությամբ Էջմիածին ժամանած Տիմոթեոս արքեպիսկոպոս Գաբաշվիլուն²: Չայոց Ղազար Ջահկեցի կաթողիկոսի անունից գրած իր նամակում ներկայացնելով Մայր Աթոռի վիճակը և դրանով պայմանավորված օժանդակության ցուցաբերման անհնարինությունը և վրաց

¹ Տես նրա վրաց թեմնուրագ II թագավորին և Թիֆլիսահայոց ու Մելիք Աղային գրած նամակները՝ ՄՄ, ծեռ. 6241, ք. 14ա, 78բ-79ա (ստորև՝ հավելված):

² Տ. Գաբաշվիլու գործունեության նախին տես Թիմոտեյ Գաբաշվիլու. Միմոսկոպ. Երևան, 1956. Գ. Յաֆթաձե. Թիմոտեյ Գաբաշվիլուի լեզբով և ռուսերենով (1737-1740 Վրացի), - Կարտուլու Նաթլու-Նաթուրուրեթի Նաթուրուրեթի Թեոլոգիայի Ինստիտուտի, I, տ. 1970, Գ. 151-180.

թագավորին մաղթելով իր խնդրանքը «յԱստուծոյ, զի զքեզ՝ զբաղձալիդ մեր, զպարծանսդ քրիստոնէից ի ձախողակի պատահմանց և ի չար դիտուածաց անվնասելի պահեսցէ... և վերստին ի յԱթոռ քո զքեզ անդրադարձուցէ մեծագոյն փառօք քան զառաջինսն», խնդրում է, որպէսզի էջմիածնի կացութեան մասին իմանա «ի սիրելի եղբօրէ մերմէ Տիմոթէոս արևոյ եպիսկոպոսէ, զոր ահա խաղաղութեամբ և սիրով ուղևորեցաք առ մեծութիւն քո»¹: Ընտրվելով Յայոց կաթողիկոս, Յակոբ Շամախեցին 1759 թ. վրաց թագավորներին ուղղած նամակում, ներկայացնելով իր ընտրութեան պարագաներն ու Մայր Աթոռի ծանր վիճակը, գրում է, թէ «ոչ ի սպառ յուսահատիմք, այլ՝ յուսամք յամենակարօղ և յողորմածն Աստուած, զի ... ի փորձութեանց և ի նեղութեանց մերոց աստի զմեզ, զձեզ և զազգս մեր ազատեսցէ և ի բարիս աւարտեսցէ վերջն մեր: Եւ զի յայսպիսի չարաբեր ժամանակս եմք և անյաջող դիպուածս այժմ, այն յաղագաւ խնդրենք առաւել հոգածու և օգնական լինիցիք սրբոյ Աթոռոյս և մեզ՝ Աթոռայնոցս, զի շէն և պայծառ մնասցի սա ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին...»²: Յակոբ Շամախեցին խնդրում-պարտավորեցնում է վրաց թագավորներին «զջուկութիւնս ոչ դնել ի միջի, այլ որպիսեօք սրտիւք և մտօք, որք զձեզ և զձերայինսն հոգայք, նոյնպիսեօքն զմեզ և զձերայինսն հոգասջիք... որք թէպէտ մինչև ցայժմ հոգացեալ էք, սակայն այժմ՝ յաւուրս մերում, և ևս առաւել հոգալ պարտիք»: Ըստ Յ. Շամախեցու, նրանք պարտավոր են այդ անելու, որովհետև «Նախ, զի ես՝ մեղաւորս, ի բնէ բարեկամ, սիրելի և մախածանօթ ձեր եմ... երկրորդ պատճառն, զի ժամանակս այսպէս վրդովեցեալ է և աշխարհս մեր անթագաւոր»³: Յակոբ Շամախեցին իր այդ դիրքորոշումը որդեգրել էր դեռևս 1740-ական թվականներից, երբ Այսրկովկասում հայոց համար հենարան կամ դաշնակից կարող էին լինել

¹ ՄՄ, ձեռ. 6241, էջ 13բ-14ա (սևագրություն): Ի դեպ, այս վկայությունը արժեքավոր է նաև Տիմոթէոս Գաբաշվիլու կյանքի ու գործունեության ուսումնասիրման առումով, որը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ որպէս Ալեքսանդր V-ի դեսպանութեան ղեկավար 1737-1739 թթ. եղել էր Ռուսաստանում, 1740 թ. ապրիլի 28-ին Մոսկվայում մասնակցել հայոց մահամերձ Միմաս արքեպիսկոպոսի դավանափոխութեան արարողութեանը, իսկ 1755-1759 թթ. ճանապարհորդել Երուսաղէմ, իսկ հետագայում փոխադրվելով Ռուսաստան, թաքցրել 1740 թվականից հետո իր Վրաստանում լինելու հանգամանքը (հմմտ. Պ. Չոբանյան, Վրաց ուղեգրությունները..., էջ 33-34):

² ՄՄ, ձեռ. 6241, էջ 16ա:

³ Նույն տեղում:

առաջադիմող վրաց թագավորները: Վրաց թագավորների համար էական կարող էր լինել հայոց օժանդակությունը: Երկուստեք ակնկալությունները թելադրում էին հայ-վրաց համագործակցություն:

Վրաց Թեյմուրազ II և Յերակլ II թագավորներին հաջողվում է, ինչպես ասվել է, հարկային կախվածության մեջ զցել Երևանի ու Գանձակի մահմեդական իշխողներին, իրենց ազդեցությունը մասամբ հաստատել Արցախի ու Նախիջևանի իշխողների նկատմամբ՝ ընդ որում մշտապես զգուշանալով նաև, որպեսզի իրենց պայքարը տարածաշրջանում չընկալվի որպես դավանական խտրականություն հետապնդող քաղաքականություն, թեև ըստ Պեյսոնելիի արձանագրման, այն մտահոգության առիթ էր դարձել հարևան Օսմանյան կայսրությունում. «1751 թ. սկզբին Թեյմուրազ և Յերակլ իշխանները աֆղանների ապստամբությունից անհանգստացած, ճանապարհ են ընկնում՝ նրանց դարձյալ վերադարձնելու այն լծի տակ, որը նրանք կարողացել էին թոթափել: Հայերն էլ իրենց հերթին միանում են վրացիներին: Այս բանակի մեջ մտնող բոլոր *զինվորներն իրենց հագուստների և դրոշակների վրա խաչեր էին կրում:* Խաչակիրներին նմանվող այս մարդիկ գնում են աֆղանների դեմ և հանդիպելով նրանց Օրդուար (Odouar) քաղաքի մոտակայքում, պարտության են մատնում նրանց և շատերին կտորկտոր անում: Այս մարտում Յերակլը իրեն այնպես դրսևորեց, որ այդ իրադարձությունը կարելի է համենատեղ հին ժամանակների ամենահերոսական իրադարձությունների հետ»¹: Յերակլի հաջողությունների մասին լուրերի չափազանցումները և թողած տպավորությունը արձանագրում է նաև Կ. Պոլսում ռուսական ռեզիդենտ Ա. Օբրեսկովը, 1752 թ. օգոստոսի 4-ին հաղորդելով, թե «այստեղի հույները ոչ միայն վրացիների հետ հավատակցության պատճառով ... որքան թուրքերի նկատմամբ չարությունից, որոնց տիրապետությունը իրենց՝ հունական, հնուց ի վեր արմատացած հպարտության հետ չի համատեղվում, ամբողջ հոգով ցանկանալով օտարի միջոցով ազատագրվել այդ տիրապետությունից», շտապում են ուրախանալ և հուսալ, որ «Յերակլը Պարսկաստանը նվաճելուց հետո կգրավի նաև Թուրքիան և, ուռճացնելով նրա

¹ Մ. Կ. Զուլայան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. XIII-XVIII դարեր. գիրք Ա. Քաղաքական պատմություն, Երևան, ՀԳԱ հրատ., 1990, էջ 324-325:

ուժերը՝ և հատկապես բնատուր տաղանդի ու զինվորական ունակու-
թյունների համար նրան որպես մեկ այլ Ալեքսանդր Մեծ էին համարում
և ամենուրեք ամենայն ջանասիրությամբ փառաբանում էին: Ես, տեսնե-
լով այս ջանքերի անպատշաճությունը, նրանց, որոնց կարելի էր վստա-
հել, ասել եմ, որ իրենց այդպիսի լուրերը օգուտի փոխարեն վնաս կբե-
րեն վրացիներին...»¹: Զերակլի հաջողություններին արձագանքում էին
ոչ միայն հույները, այլև Կ. Պոլսի հայերը: Օբրեսկովի 1752 թ. օգոստո-
սի 4-ին գրած զեկուցագրի վկայությամբ. «Հայերը լսելով, որ իրենց
պատրիարքին Զերակլը ընդունել է բոլոր պատիվներով և իրենց՝ հայե-
րին, վրացիներին հավասար հովանավորում է, որոնք նրա զորքերում
կազմում են գրեթե կեսը, փառաբանում էին սնապարծությամբ, որ
իրենց հավատակիցները ուրիշներից ոչ պակաս լավ զինվորներ են և որ
դրանով գերության լծից, որի ներքո նրանք մի քանի հարյուրամյակ
գտնվում են, կազատագրվեն»²: Զերակլի հաջողությունների մասին
լուրերը առավել ուռճացվում էին Ֆրանսիայի դեսպանատան կողմից:
Ֆրանսիայի դեսպանը «տարբեր նկատառումներով իրենից կախված
հայերի, լատինների ու հրեաների խմբով այդ [լուրերը] ավելացնում էր
և, այդպիսով, ամբողջը հորինելով...որ իբր Զերակլը ռազմադաշտում
ուևի մինչև ութսուն հազարանոց բանակ»³:

Միանգամայն ակներև է, որ XVIII դարի երկրորդ կեսին հայ-վրա-
ցական պետության ստեղծման հնարավորության հարցը և Վրաց Բագ-
րատունիներին Հայոց թագավոր ևս ճանաչելու ձգտումները չէին կա-
րող հիմնված լինել Պետրոս I-ի 1722 թթ. տված խոստումի վրա, ինչպես
այդ հաճախ կրկնվում է հայ պատմագիտության մեջ: Այն հայ-

¹ Գ. Զաօժաձե, Դարձակա և զանգուտի խմբագրութեան Զոլոտոպոլսկոյ շրտայնտոտա ռուսկոտան
XVIII ս-ու 50-60-ուս Վլադիմիր, - "Դարձակա խմբագրութեան խմբագրութեան Զոլոտոպոլսկոյ
սեկրետարատ", II, տոտակա, 1973, ԳԳ. 73, ՄԵՆ.

² "... Армяне, слыша, что Ираклий патриарха их со всею честью принял и их,
армян, равно с грузинцами содержит, которых и в войске его почти половина
находится, разславляли из тщеславия, что одноверцы их не хуже других добрые
войны и что тем из под ига неволи, в которой они чрез несколько сот лет нахо-
дятся, освободятся, грузинцы, находящиеся здесь, принявшие магометанскую
веру, которых великое множество, а иныя и в знатных чинах по оставшей ... еще
некоторой природной любви об отчизне с радостию процветание однородцев
своих слышали и по пристрастию також увеличивали" (Մույն տեղում).

³ Նույն տեղում:

վրացական երկարատև հարաբերություններին ուղեկցող գաղափարի արդյունք էր: Ռուսաստանը, ինչպես XVIII դարի առաջին քառորդին, այնպես էլ դարի վերջին քառորդին հմտորեն օգտագործում էր մահմեդական լծի դեմ հայ-վրացական համագործակցության հնարավորության հույսը և անկախություն ձեռք բերելու երազանքը: XVIII դարի երկրորդ կեսի առանձնահատկությունն էր Ռուսաստանի կողմից Վրաստանի նկրտումներին Յայաստանի տարածքի նկատմամբ բավարարում տալու միջոցով՝ շահելու վրացի և հայ գործիչների օժանդակությունը՝ Այսրկովկասում իր տիրապետությունը հաստատելու համար: Այդ առումով հասկանալի և բացատրելի է դառնում նաև այն փաստը, որ 1796 թ. Վ. Ջուրովի հրամանատարությամբ Ռուսական բանակի այսրկովկասյան արշավանքի ժամանակ ևս Երևանի գրավումը վերապահվում էր Յերակլ II-ին՝ բավարարում տալու ինչպես վրաց հավակնություններին, այնպես էլ դիվանագիտական հիմնավորում ստեղծելու՝ Օսմանյան թուրքիայի հետ անմիջական ընդհարումից խուսափելու համար:

Թերևս առանձին արձանագրման արժանի է միայն 1783 թ. ապրիլի 6-ին Գ. Պոտյոմկինի հայտնի հրահանգը Պ. Ս. Պոտյոմկինին. «Ձեզ ուղարկված կարգադրություններից դուք կհասկանաք ինչպես պետք է կապերը սերտացնել Յերակլ թագավորի հետ: Ձեռք բերելով նրա վստահությունը, դուք անվերապահ կկառավարեք նրան: Շուշիի խան Իբրահիմին պետք է տապալել, քանզի դրանից հետո Ղարաբաղը կկազմի Յայկական, բացի Ռուսաստանից, բոլորից անկախ, մարզ... Սրանով և Յայկական մյուս ուժեղ նահանգները կամ կհետևեն նրանց օրինակին, կամ թե մեծ քանակով [հայեր] կսկսեն գալ Ղարաբաղ»¹: Իր այդ քայլի մասին Գ. Պոտյոմկինը ծանուցել է Եկատերինա II-ին 1783 թ. մայիսի 19-ին. «Դեռևս չունենալով Ձեր Կայսերական Մեծության կարգադրությունը, ես գեմ. - պոր. Պոտյոմկինին Շուշիի Իբրահիմ խանի վերաբերյալ հրահանգ եմ տվել, որ կմոտեցնի նրան հնազանդության: Այստեղ անհրաժեշտ է քննարկել, որպեսզի հարմար առիթով նրա մարզը, որ բաղկացած է հայ ժողովրդից, հանձնել ազգային կառավարմանը և դրանով վերականգնել Ասիայում քրիստոնեական պետություն, ըստ Կայսերական մեծության Ձեր խոստումների՝ տրված իմ միջոցով Յայոց մելիքներին»²:

¹ Армяно-русские отношения..., IV, с. 239:

² Նույն տեղում, с. 241:

Տվյալ պարագայում, ինչպես ակնհայտ է, շրջանցված է Վրաստանը, որին և հարկատու էին Երևանի ու Գանձակի խամերը, իսկ Արցախի հայ մելիքների հետ իր հարաբերությունները Յերակլի համար ևս միջոց էին՝ Իբրահիմի հետ հարաբերությունները կարգավորելու գործում: Նման իրավիճակում դժվար չէ պատկերացնել Յերակլի մտահոգությունները ապագայի համար: Գ. Պոտյոմկինի այդ նամակները և իրահանգները գրվում և Այսրկովկաս էին ուղարկվում 1783 թ. գարնանը, երբ զուգահեռ ընթանում էին նաև բանակցությունները ռուս-վրացական պայմանագրի շուրջ, որի մի շարք ձևակերպումներին Վրաստանը համառորեն դիմադրում էր, և որը կնքվեց ի վերջո Գեորգիևսկում միայն 1783 թ. հուլիսի 24-ին: Դրանից հետո սպասելով Գեորգիևյան պայմանագրի վավերացման արարողությանը, Յերակլը արդեն պահանջում է Վրաստանին միացնել Գանձակի նահանգը, որի համար Գ. Պոտյոմկինը 1784 թ. ապրիլի 6-ի զեկուցագրում ծանուցում է Եկատերինա II-ին. «на желание ж его присоединении к Грузии персидской провинции Генжи, издавна уже ему принадлежащей, испрашиваю высочайшего повеления В. И. В. »¹: 1784 թ. կրկին աշխուժանում են գրագրությունները Յայոց ազատագրության մասին: Ռուսաց արքունիքի համար ակնհայտ էր, որ «Իբրահիմ խանը, վախենալով իր բռնապետությունից բաց թողնել այս (իմա՝ հայ - Պ. Չ.) ժողովրդին, փորձում է միանալ Ռուսաստանին»²: 1786 թ. մայիսի 26-ին Ս. Բուռնաշևը արդեն ստացել էր Իբրահիմ խանի մայիսի 23-ին գրած նամակը, որը նա ուղարկել էր Պ. Ս. Պոտյոմկինին: Արցախը ոչինչ հուսադրող լուրեր չի ստանում: Արդյո՞ք Յայոց պետականության վերականգնումի հնարավորության մասին լուրերը լրացուցիչ լծակներ չէին նաև Վրաց թագավորի և Ղարաբաղի խանի հնազանդեցումը արագացնելու ու Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս դյուրացնելու համար: Այդպիսի հարցադրումը դառնում է տրամաբանական և հավանական, որովհետև Յերակլը այդ լուրերից հետո ստորագրում է պայմանագիրը, հանձնում է Արցախի Իբրահիմ խանին Ռուսաստանի հովանավորությունը հայցելու նամակ գրել Ռուսական արքունիք, իսկ Գեորգիևյան պայմանագրով էլ իրավունք է ստանում Ռուսաստանի օժանդակությամբ գրավված բոլոր տարածքները միաց-

¹ Армяно-русские отношения..., IV, с. 299:

² Նույն տեղում:

նելու Կրիստոսին. **"Артикул второй.** Ея Имп. Величество ... обещает и обнадеживает Императорским Своим словом за Себя и Преемников Своих, что милость и покровительство их от Светлейших Царей Карталинских и Кахетинских никогда отъемлемы не будут. В доказательство чего, **Ея Величество дает Императорское Свое ручательство на сохранение целости настоящих владений Его Светлости Царя Ираклия Теймуразовича, предполагая распространить таковое ручательство и на такие владения, кои в течение времени по обстоятельствам приобретены и прочным образом за ним утверждены будут**"¹. Շուտով, սակայն, ծագում են նոր խնդիրներ:

Գեորգիևսկյան պայմանագիրը դեռևս նոր էր վավերացվել (1784 թ. հունվար), երբ Ա. Ա. Բեգրորդկոյի հաղորդմամբ, Գ. Ա. Պոտյոմկինը 1784 թ. մայիսին նամակով ծանուցել էր իրեն Պարսկաստանի ներկա փոխարքա Ալի Սուրադ խանի կողմից առաքված դեսպանագնացի ժամանելու մասին, «готовности все сделать, что нам угодно, желая приобрести благоволение государыни и признание его в шахском достоинстве» և այն մասին, թե Գ. Պոտյոմկինը «почитает сие за самый надежнейший способ к окончанию персидских наших дел заключением с ним договора»²: Ի հեճուկս Գեորգիևսկյան պայմանագրի, արդեն ենթադրվում էր, որ Ալի Սուրադ խանի հետ կնքելիք պայմանագրով «распоряжены будут наши приобретения, границы Ираклиева царства, состояние независимых областей Армянской и другой, из побережья Каспийского учреждаемой»³. Ենթադրվող երեք մարզերի գաղափարը թելադրում էր շարունակել Արցախի

¹ Պժ, II, թթ. 463-464.

² Армяно-русские отношения..., IV, с. 317. Հմնտ. **А. Р. Иоаннисян.** Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 131-132.

³ Ի հեճուկս Գ. Ա. Պոտյոմկինի սպասումների, Ալի Սուրադ խանը այդ առիթով դիվանագիտորեն պատասխանել էր Ռուսական արքունիքի հանձնարարությամբ դեսպանությամբ Սպահան ժամանած Հակոբ Անտոնյանին, թե «Если государыни угодно просить у меня области или города под протекцию, то я по благости божией имею власть и силу разделить всю Персию пополам в ее владение, однакож, **будучи я довольно известен, что государыня имеет весьма достаточны города и места, я не думаю, чтоб она просила области**» (Армяно-русские отношения..., IV, с. 301).

մելիքներին հուսադրումը, որի մասին լուրերի ի հայտ գալը, սակայն, չէին կարող չամհանգստացնել ոչ միայն Իբրահիմին, այլև Հերակլին:

1786 թ. նոյեմբերի 2-ին Պ. Ս. Պոտյոմկինին գրած նամակում Հերակլ II-ը հիշեցնում է տեղի ունեցած իրադարձությունների «տրամաբանական» ընթացքը և Այսրկովկասում իրադրության շիկացման, Վրաստանի կրած դժվարությունների ու թուրքական արքունիքի հետ Իբրահիմի մերժեցումի համար մեղադրում ռուսական կողմին. «Ձեզ հայտնի է, որ մեր և Իբրահիմ խանի միջև եղել է փոխադարձ երդում, և նա միշտ արտահայտվում էր դեպի մեզ այնպիսի բավականությամբ, որ թե մենք ուն հովանավորությամբը դիմենք, ապա նա ևս դրան կհամաձայներ և երբ մենք մտանք Ռուսական գահի հովանու ներքո, այնժամ մենք խորհուրդ տվեցինք Իբրահիմ խանին, որպեսզի նա ևս բարեհաճի դեպի Ռուսական բարձրագույն արքունիքին, որպեսզի նա լիազորագրով Ձեր բարձրագույնեղության մոտ ուղարկի իր մարդուն, որը և ուղարկեց մոլլա Վալիին այն նույն մարդու հետ՝ բացատրելով իր նվիրվածությունը և ջանասիրությունը համառուսական արքունիքին: Բավական ընդարձակորեն ձեզ հաղորդել է, որից հետո մենք (ևս) համոզել ենք մեր խորհուրդներով, որպեսզի նա ուղարկի իր հատուկ ներկայացուցչին, որը և ուղարկել է Մուսա Սուլթանին Բարձրագույն արքունիք: Ձեզ այդ բոլորը հայտնի է, թե ի՞նչ գործերով է ուղարկվել և ինչո՞վ է վերադարձել ես:

Երբ այստեղ ժամանեց Բարձրագույն արքունիքից դոկտոր Ռայնեզը, հենց նույն ժամանակ Ռուսաստանից եկավ խամսեցի մի հայ, նույն այդ հայը բերեց խամսայի մելիքներին նամակներ: **Նրանց մասին մենք ոչինչ տեղյակ չէինք, թե ի՞նչ գործեր էր նա կատարում**, որոշ ժամանակ անց մելիքներից՝ իրենցից իսկ, նրանց ամբողջ գրագրությունը բացահայտվեց: Տեղեկանալով այդ մասին, Իբրահիմ խանը ծայր աստիճան վրդովվեց և բռնագրավեց մելիքությունը մելիք Աբովից, որից հետո սկսեց մեր հանդեպ ևս դժգոհել, և այդ պատճառով՝ նաև ռուսական հովանավորությունից: Այդ ժամանակից սկսեց մեր նկատմամբ թշնամանալ, սկսեց գրագրություն Օսմանյան արքունիքի, Էրզրումի Պատալ փաշայի և Ախալցխայի Սուլեյման փաշայի հետ, հրահրում էր նրանց, որ նրանք ևս մեր նկատմամբ թշնամանան»¹:

¹ Армяно-русские отношения..., IV, с. 345.

Ինչպես ակնհայտ է, Յերակլը Իբրահիմի քաղաքականությունը որակում է որպես շրջադարձ և Կրաստանի հետ թշնամանալը ևս կապում-պայմանավորում է մելիքների և Ռուսաստանի միջև բանակցությունների փաստի հետ: Մինչ այդ, ըստ Յերակլի, Իբրահիմը իբր «պահպանել» է ռուսամետ ու վրացամետ դիրքորոշում: Յերակլը, այս դեպքում, անշուշտ, անկեղծ էր Իբրահիմի մտավախությունների գնահատության խնդրում: Մինչ այդ էլ Յերակլը, տեղեկացվելով Տամարային Ալի-Մուրադ խանի մոտ բանակցությունների ուղարկելու Պ. Ս. Պոտյոմկինի մտադրության մասին, դեռևս 1784 թ. դեկտեմբերի 28-ի նամակում զգուշացրել էր նրան, թե չափտի առիթ տալ Իբրահիմին կասկածելու իրենց (իմա՝ ռուս և վրաց կողմերի - Պ. Չ.) անկեղծությանը՝ ապագա ծրագրերի առումով. «Неоднократно писали мы к в. в., что Ибраимхан ежели увидит в нас хоть самую малую перемену и колебание мысли, тотчас ганжинскаго Магмет хана со всею его фамилиею отпустит и без того с турками, Адрибежанскими ханами и Дагестанскими начальниками имеет сношение и тем более приклонится он к ним и с ними соединится и дело более затруднение получит; Ганжа потеряется и Карабах против нас становится»¹.

Շուտով Իբրահիմին հաջողվում է Գանձակի խանությունը իրոք դուրս հանել Յերակլի տիրապետությունից և այնտեղ իշխանության բերել Ջավադ խանին ու հաստատել իր ազդեցությունը²: Իբրահիմը հայ-ռուսական բանակցությունների մասին իրեղեն ապացույցներ է ստանում նամակատար-դեսպանագնաց Գաբրիել Կարախանովին Գանձակում ձերբակալելու, նրան Շուշի տեղափոխելու և այնտեղ հարցաքննելու միջոցով, որին հաջորդում են Արով, Բախտամ ու Մեջլում մելիքների և Գանձասարի Յովհաննես Կաթողիկոսի բանտարկությունները 1787 թ.: Յովհաննես կաթողիկոսը և Մելիք Բախտամը սպանվում են, իսկ Արով և Մեջլում մելիքներին հաջողվում է փախուստով միայն ազատվել: Յերակլին և Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Բուրնաշևին ոչինչ չէր մնում անել, քան համատեղ արշավանք կազմակերպել դեպի Գանձակ՝ այնտեղ Յերակլի տիրապետությունը վերականգնելու հա-

¹ Межкавказские политические и торговые связи Восточной Грузии (конец 60-х - начало 90-х годов XVIII в.), с. 212-213.

² А. Р. Иоаннисян, Россия..., с. 181-182.

մար: Բուրնաշևը, սակայն, հրաժարվում է արշավանքը դեպի Արցախ շարունակելու Չերակլ II-ի առաջարկից՝ պատճառաբանելով, թե այն Պարսկաստանին ենթակա տարածք է և ինքը հրաման չունի այնտեղ արշավելու¹: Դեպի Գանձակ ռուս-վրացական զորքի արշավանքը սկսվելով 1787 թ. օգոստոսի 12-ին Թիֆլիսից, դադարեցվում է այն մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 17-ին Գանձակի մոտ: Գանձակի խանը բանակցությունների ժամանակ Չերակլին հարկի վճարման պարտավորություն էր ստանձնել, սակայն այդ վճռական պահին Ս. Բուրնաշևը ստացավ արդեն ավելի քան մեկ ամիս առաջ՝ օգոստոսի կեսերին, ստորագրված հրամանը՝ ռուսական գումարտակներով Ռուսաստան վերադառնալու մասին²: Ստանալով հրամանը, Ս. Բուրնաշևը, այլևս չի հապաղում այն կատարել, իսկ Չերակլը միայնակ ի վիճակի չէր շարունակելու արշավանքը: Արով և Սեջլում մելիքներին հաջողվում է միայն իրենց ուղեկիցների փոքր խմբով Վրացական և Ռուսական զորքերի հետ հեռանալ Արցախից՝ «դառնալով արդեն անտուն վտարանդիներ»³:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, թե Չայաստանի ազատագրման նպատակով եթե հայազգի գործիչները ունեին որոշակի ակնկալիքներ Վրաստանի կողմից ռազմաքաղաքական օժանդակություն գտնելու հարցում և մշտապես ձգտում էին նպաստել Վրաստանի առաջընթացին, ապա վրաց իշխանությունները օգտագործելով հայոց ազգային ակնկալիքները, մտահոգված էին միայն Վրաստանի տնտեսական, ռազմաքաղաքական ու մշակութային զարգացման խնդիրներով: Չայաստանի քաղաքական անկախության վերականգնումի խնդիրները չէին կարող մտնել և չէին մտնում վրաց գործիչների նախագծումների մեջ, Վրաստանը ընդամենը փորձում էր ընդարձակել իր սահմանները՝ ընդգրկելով Չայաստանի տարածքները, իր տիրապետությունը հաստատել Չայաստանում և հայոց նկատմամբ ազդեցությունը պահպանելու նպատակով ներկայանալ որպես Չայոց հովանավոր և ապաստան:

¹ Ձ. Նախեճձյ. «Վրացական և Ռուսական զորքերի Չերակլ-Չայաստանի շարունակական արշավանքի մասին», «Պատմական հայաստան», 1973, թիվ 121:

² Ա. Ռ. Զովիանիսյանը իրավացիորեն այդ որակում է որպես «Գեորգիևյան պայմանագրի կրպակակալ խախտում: Վրաստանը, փաստորեն, մետվեց բախտի քմահաճույքին» (Ա. Ք. Իոաննիսյան, Ռուսաստան..., շ. 188):

³ Ա. Ք. Իոաննիսյան, Ռուսաստան..., շ. 189:

Հայոց օժանդակությունը փնտրելու խնդրում հակադրվում էին վրաց-
ռուսական շահերը, իսկ Հայաստանի մահմեդական իշխանությունները
Հայոց ազատագրական ձգտումների մեջ, բնականաբար, տեսնում էին
միայն իրենց տիրապետության վախճանը:

ՇՈՒՇԻ՝ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ

Շուշի բնակավայրը, որը վաղ միջնադարում կոչվել է Շիկաքար, ուշ միջնադարյան աղբյուրներում՝ նաև Քար, Քարագլուխ, Քարագլխի բերդ, Քարագլխի սղնախ, հաճախ նաև՝ Շոշի բերդ, Շոշի սղնախ, որովհետև թշնամի ուժերի հարձակումների ժամանակ այնտեղ պատսպարվել է հարևան Շոշ ավանի և գավառի բնակչությունը, հիմնադրվել է 1720-ական թվականներին պատմական Հայաստանի Արցախ նահանգի Վարանդա կամ Մյուս Հաբանդ գավառի հյուսիսային ծայրում¹ Կարկառ գետի ձախ ափին:

Շուշի բերդաքաղաքի հիմնադրման և բնակեցման ճշգրիտ տարեթվի մասին պատմության մեջ տարածայնություններ գոյություն ունեն: Կարծիքներ կան, որ Շուշին հիմնադրվել է 18-րդ դարի սկզբին, սակայն կան նաև 18-րդ դարի երկրորդ կեսին վերաբերող կարծիքներ: Այսպես, Պ. Չոբանյանը գտնում է, որ Շուշի բերդի մասին գրավոր աղբյուրները վերաբերում են 18-րդ դարի սկզբին²: Մ. Սարգսյանը հայտնում է այն կարծիքը, որ «առաջմ ստույգ պարզված չէ, թե մինչև 18-րդ դարի սկիզբը այստեղ բնակավայր գոյություն է ունեցել, թե ոչ»³: ըստ Լեոյի Շուշին հիմնվել է 1750-1752 թվականներին⁴, ըստ նրա մյուս աշխատության⁵՝ 1752-1754 թվականներին, ըստ Միրզա-Ջամալ Ջիվանշիրի⁶ և Միրզա Ադիգյոզալ Բեկի⁷՝ 1756-57 թթ. և այլն:

¹ Ղ. Ալիշան, Արցախ, Ե., 1993, էջ 92:

² ՊԲՀ, 1994, ք.1-2, էջ 184:

³ **М. Саркисян**, Из история градостроительства Шуши, Ереван, стр. 4.

⁴ **Լեո**, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 59:

⁵ **Լեո**, Պատմություն հայոց, հ. 3, Ե., 1946:

⁶ **Միրզա-Ջամալ Ջիվանշիր**, Ղարաբաղի պատմություն, Բաքու, 1959:

⁷ **Мирза Адигезалыбек Карабахский**, История Карабаха, Баку, 1950 г.

Ս. Սարգսյանը իր «Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ»¹ գրքում այն կարծիքն է հայտնում, որ Շուշին միջնադարյան աղբյուրներում հիշատակվող նշանավոր Կարկառ ամրոց-բնակավայրն է, հիմնավորելով այն Կ. Գանձակեցու² հաղորդած «1246 թվականին մոնղոլ զորապետ Բաթուի և նրա որդի Սարթախի մոտ մեկնած Խաչենի Յասան Ջալալ իշխանից թուրքերի կողմից խլված հայրենական կալվածքներ՝ Չարաբերդը, Ականան ու Կարկառը, վերադարձնելու» մասին տեղեկություններով: Ս. Սարգսյանը արաբական աղբյուրների, մասնավորապես Յակուտ ալ-Խամավիի (1178-1229)³ հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ ըստ որի «Կարկառը քաղաք է Առանում, Բայլականի մոտ, կառուցված Անուշիրվանի (531-578 թթ.) կողմից», գտնում է, որ Կարկառ ասելով աշխարհագետը նկատի է ունեցել Շուշին, բայց «հեռու հայացքով», որը հատկանշական է օտար ուսումնասիրողներին⁴: Ուստի և, Ս. Սարգսյանը նշում է, որ ինչպես վկայում են բազմաթիվ փաստերը, Կարկառը Անուշիրվանից, այսինքն 6-րդ դարից առնվազն 600-700 տարի առաջ էլ գոյություն ուներ: Այդ է վկայում Աղրբեջանի նախարարների խորհրդի՝ 1968 թ. ապրիլի 2-ի թիվ 140 որոշմամբ հաստատված հուշարձանների ցուցակը, համաձայն որի, Շուշիում (հյուսիս-արևմուտք) եղել են մի շարք ք. ա. 2-1-ին հազարամյակի հնագիտական հուշարձաններ (դամբարան, կուրգան), որոնց գտնվելու վայրը ներկայումս դժվար է ճշտորոշել⁵:

Կարկառ-Շուշիին անդրադարձել են նաև Իբն Խորդաբեդեն ու Իբն-Ֆակիհը⁶ (10-րդ դ.) բնակավայրի հիմնադրումը վերագրելով Անուշիրվանին, Յամդալլահ Ղազվինին⁷ (1281-1349), նշելով, որ «Կարկառը առևտրական քաղաք է...», ինչպես նաև Ջալալ-ադ-դին սուլթանի անձ-

¹ Ս. Սարգսյան, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ, Ե., 1996, էջ 47:

² Կ. Գանձակեցի, Յայոց պատմություն, Ե., 1982, էջ 258:

³ Յակուտ ալ-Խամավի, Արաբական աղբյուրները Յայաստանի և հարևան երկրների մասին, Ե., 1965, էջ 103:

⁴ Ս. Սարգսյան, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 151:

⁵ Տես՝ նույն տեղը, էջ 152-153:

⁶ *Ибн Хордабэдэ*, Книга путей и царств, СМОМПК, XXXII, Тифлис, 1902, стр. 15: *Ибн-ал-факих*. - СМОМПК, XXXI, Тифлис, 1902, стр. 15: Տես՝ նույն տեղը, էջ 153:

⁷ *Хамдаллах Казвини*, Нузхат ал-Кулуб, Баку, 1983, стр. 50-51.

նական քարտուղար Շիխաբ ադ-Դին ան-Նասավին¹ (13 դ.), որն ամրոցին «Կալադարա» անունն է տալիս և ուրիշներ:

Բացի այս տեղեկություններից Շուշիի տարածքում հայտնաբերված Բ. ա. 14-13-րդ դդ. խեցեգործական ու քարե կենցաղային առարկաները վկայում են, որ դեռևս վաղ անցյալում այստեղ եղել է ամրոց-բնակատեղի²: 1981 թ. այստեղ հայտնաբերվել են 971 թ., 1252 թ. և այլ թվականների խաչքարեր³:

Աղբյուրագիտական այդ տվյալները վկայում են, որ Շուշին մինչև 18-րդ դարն էլ նշանավոր քաղաք է եղել, որով միաժամանակ հերքվում է աղբյուրագիտական պատմաբանների այն թյուր կարծիքը, համաձայն որի Շուշիի բերդի հիմնադիր է համարվում Փանահ Ալի խանը: Մի բան պարզ է, որ Շուշին գոյություն է ունեցել Փանահ-խանից առաջ՝ սկզբում որպես գյուղական բնակավայր, իսկ Ավան հարյուրապետի ժամանակ որպես բերդ կամ բերդաքաղաք:

Առանձնացած սարահարթում, կավախառն ու պատռված անառիկ ու աննատույց ժայռոտ տեղում (բացի քաղաքի երևանյան և գանձակյան կողմերից, որոնք էլ ամրացված են աշտարակներով, բարձրավանդակի փոքր մասում բերդաքաղաքն է, իսկ մեծագույն մասում՝ գերեզմաններն ու պարտեզները), Քիրսի հյուսիսային հեռավոր փեշերի վրա՝ երեք կողմերից անդնդախոր ձորերով պատված, «Չըրբերդի, Վարանդինի և Ջանգեզուրի սահմանամիջում, ամբողջ Առանի, այսինքն Ղարաբաղի գլուխը», ինչպես նշում է Ղ. Ալիշանը⁴, կազմող ամուր քարաշերտերով կռած ու կերտած՝ որպես ձուլվածք, բարձրանում է մի հսկա քարակոփ սարահարթ, որին ամբողջ Ղարաբաղը Ղալա էր կոչում, ամրոց-բերդ, ուր բազմած Շուշին որպես սրաթև արծիվ, մի առանձին հպարտությամբ իշխում է իր ողջ շրջակայքի վրա:

Բնական անմատչելի դիրքի շնորհիվ Շուշին ինչպես հնագույն ժամանակներում Վարանդա գավառի հայ բնակիչների համար, այնպես էլ

¹ **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, 1973, стр. 278: Տես՝ **Ս. Սարգսյան**, Խաչենի ամրոցները, Ստեփանակերտ, 2002, էջ 153:

² Գ. Զանրագիտարան, Երևան, 2004, էջ 525:

³ **Շ. Սկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 209:

⁴ **Ղ. Ալիշան**, Արցախ, Ե., 1993, էջ 108:

հետագա իր գոյության շրջանում մինչև մեր օրերը, ժառայել է իբրև պաշտպանական ամրություն: Շուշին առաջին անգամ տեսնողը բացականշում է «Պատերազմների և սխրագործությունների մեջ փառք որոնող, այդպիսի մի մարդ էլ դրել է այդ քաղաքի հիմքը»: Եվ այդպես է. 9-րդ դարի կեսին իշխան Սահլ Սմբատյանը հաղթել է այստեղ արաբական ասպատակիչ զորքին և ազատագրել գերեվարված հայ բնակչությանը:

Շուշին տեղադրված է ծովի մակերևույթից 1238-1533 մ բարձրություն ունեցող լեռան վրա, լեռ, որը հարավ-արևմուտքից արևելահյուսիս տարածվելով՝ հետզհետե ցածրանում է և ներքին մասում բավական հարթ տարածություն կազմում, մինչդեռ հարավ-արևմտյան կողմում գտնվում է լեռան սեռը: Լեռան հարավային կողմում տարածվում է մի անդնդախոր ձոր, որի միջով հոսում է Քարին-տակի գետակը: Այս մասում լեռը սաստիկ ժայռոտ և ուղղահայաց է: Նմանապես և հյուսիսային կողմը մի խոր ձոր է, որի միջով հոսում է Ղայթալու գետակը: «Ամբողջ քաղաքը,- ինչպես գտնում էր Ե. Ջալալյանը,- բռնում է մոտավորապես 3-4 քառակուսի վերստ տարածություն, որը կտրատվում է մի քանի մանր և երեք մեծ, հարավից հյուսիս տարածվող ձորակներով, որոնց միջով հոսում է անձրևի ջուրը, տանելով իր հետ քաղաքի անմաքրությունները»¹: Քաղաքը բաժանված էր երկու գլխավոր մասի՝ հայոց և թուրքերի թաղի: Հայոց թաղը գտնվում էր քաղաքի վերին մասում, իսկ թուրքերինը՝ ներքևում:

Նրա փողոցները, որ կառուցվել են 18-19-րդ դարի ճարտարապետների գծած հատակագծով, այդպես էլ մնում են նեղ: Քաղաքն ունեցել է երկու գլխավոր դարպաս՝ «Վերին դարպաս» (Երևանյան) ու «Ստորին դարպաս» (Գանձակի): Երկու դարպասներն իրար հետ կապված էին նեղ փողոցով ու հազիվ երկու սայլ էին անցնում²:

Մթության մեջ Շուշիի գլխավոր փողոցները լուսավորում էին 172 լապտերներ: Շուշիում կար 4 եկեղեցի և մեկ կուսանաց մենաստան: ճարտարապետական տեսակետից բոլորից գեղեցիկն ու նշանավորը բյուզանդական ոճով շինված, խաչաձև հատակագիծ ունեցող Ղազան-

¹ Ե. Ջալալյան, Արցախ, թիվ 2, էջ 24:

² Հ. Հարությունյան, Շուշի, Ստեփանակերտ, 2002, էջ 6:

չեցոց ս. Ամենափրկիչ մայր եկեղեցի¹ է: Եկեղեցին գործել է մինչև 1930 թվականը, մասամբ վերանորոգվել է 1981-1988 թթ.՝ մշեցի վերականգնող վարդապետ Վ. Բաբայանի ջանքերով: 1988 թ. Շուշիի հայերին տեղահանելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների խորաքանդակները: 1988 թ. ավարտվել է եկեղեցու ու զանգակատան նորոգումը և մեծ հանդիսությամբ օծվել հուլիսի 19-ին, որպես հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդանիստ՝ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի առաջնորդությամբ:

Եթե իր գոյության առաջին շրջանում Շուշին համեստ բնակավայր էր եղել, ապա 18-րդ դարի 50-ական թվականներից սկսվում է նրա պատմական դերի բարձրացման ժամանակաշրջանը:

1750-ական թվականներին Վարանդայի մելիքությանն ուխտադրժոբեն տիրացած Շահնագար Բ, իր դեմ միավորված Ղարաբաղի մյուս չորս մելիքություններին դիմադրելու համար, դաշնակցել է «սարը-ջալու» կոչվող վաչկատուն ցեղի առաջնորդ, աշխարհակալական ձգտումներով տոգորված Փանահ խանի հետ և 1752 թվականին նրան տրամադրել Շոշի բերդը: Փանահ խանը Մելիք Շահնագարի աջակցությամբ այժմյան Շուշիի տեղում այդ բնական ամրությունների վրա, գլխավորապես հյուսիս և արևելյան կողմերից, նոր արհեստական պարիսպներ կառուցելով (առաջին բերդապարիսպները 1724 թ. հիմնել է Ավան հարյուրապետը) և այն դարձնելով իր ամրոց նստավայրը՝ Փանահաբադ, նպատակ դրեց կռվի միջոցով ձեռք ձգել Ղարաբաղի հայ մելիքների կալվածքներին: Նա Փանահաբադը բնակեցրեց ինչպես իր ցեղակիցներով, այնպես էլ հարևան հայկական գյուղերից տեղափոխված շինականներով ու արհեստավորներով: Փանահ խանը իրեն Ղարաբաղի տեր հռչակելով խարխլել է հայ մելիքությունների միասնությունը, ջլատել նրանց ուժերը: Նրա հաջորդ Իբրահիմ խանը իր տիրապետությունը տարածելով Ղարաբաղի և Սյունիքի մելիքությունների վրա և սերտ կապեր հաստատելով օսմանյան սուլթանության հետ, ամեն կերպ աշխատել է խափանել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսական կայսությանը:

Շուշին աթոռանիստ քաղաք լինելով, զարգանում է նաև որպես վարչական, առևտրական և արհեստավորական կենտրոն: Շուշին աս-

¹ Ե. Լալայան, հ. 2, էջ 27:

տիճանաբար պատկառելի դիրք է գրավում Անդրկովկասի այլ քաղաքների շարքում:

19-րդ սկզբին Շուշին դարձել է ռուս-պարսկական պատերազմների ռազմաբեմ: 1805 թ. Ղարաբաղը Ռուսաստանին միացվելուց հետո Շուշին ձեռք է բերել կայուն խաղաղություն, տնտեսական ու մշակութային զարգացման մեծ հնարավորություններ: Ստեղծվել են արհեստագործական բազմաթիվ ընկերություններ: Շուշին ուներ ավելի շատ բնակիչներ, քան Բաքուն: 1862-1863 թթ. մարդահամարի տվյալներով Բաքվում բնակվում էր 14897 մարդ, Շուշիում՝ 19659: Հետագա տարիներին ևս աճում է Շուշիի և ընդհանրապես Ղարաբաղի բնակչությունը: 1904-1913 թթ. Շուշիի բնակիչների թիվը 33100-ից հասնում է 42700 մարդու¹:

19-րդ դարի կեսերից սկսած՝ Ղարաբաղի բնակչության (այդ թվում և Շուշիի) աճին մեծապես նպաստում էր վաճառականական աշխույժ եռուզեռը: Շուշիում կային առևտրական մեծ տներ, որոնք սեփական խանութներից բացի, առևտրական կապերի մեջ էին ոչ միայն Ռուսաստանի, այլև արտասահմանի նշանավոր քաղաքների հետ: Շուշիի գորգագործների ու նորաբաց մետաքսագործական ֆաբրիկաների արտադրանքները տարածվել են այդ կենտրոնների շուկաներում: Շուշեցիները հաճախ էին երևում Թավրիզում, անգլիական և ֆրանսիական շուկաներում:

Շուշու վաճառականական դասը գերիշխող դեր ուներ Ղարաբաղում: Շուշին իջևան էր դարձել նաև ոչ Ղարաբաղցի վաճառականների համար: Այստեղ էին գալիս ու այստեղով գնում Ռուսաստանի և արտասահմանի շատ առևտրականներ:

Շատ շատերն են հիացել Ղարաբաղով, մասնավորապես՝ Շուշիով: Այստեղ այցելել են մեծահամբավ հայ, օտարազգի գիտնականներ: Շուշու մասին գրած հուշերում բացառիկ ջերմությամբ է խոսում Հր. Աճառյանը. «Երբ բարձրանում ես բարձունքի գլուխը, որ տեղական բարբառով «քերծ» կամ «քերծեր» է կոչվում, առաջդ բացվում է հոյակապ մի տեսարան: Աջդ, ձախդ և հետևդ բարձր բլուրներ են, ծածկված կարճահասակ անտառներով, որոնք սև գույն ունեն և սրա համար էլ երկիրը կոչվել է Ղարաբաղ, այսինքն՝ «սև այգի»²:

¹ Ավագյան Ս. Ղ., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Ե., 1989, էջ 3-4:

² Հր. Աճառյան, Կյանքիս հուշերից, Ե., 1967, էջ 254:

1850-80-ական թվականներին գործել են մետաքսագործական ֆաբրիկա, էլեկտրակայան, 4 կաշեգործական արհեստանոցներ, 3 ներկատուն, 4 տպարան, հիվանդանոց, 5 իջևանատուն-հյուրանոց, 185 խանութ¹:

19-րդ դ. երկրորդ կեսից Շուշին դառնում է հայ մշակույթի կարևոր օջախներից մեկը: Ցարական ինքնակալության դաժան պայմաններում էլ լուսավոր միտքը հետզհետե ընդգրկում է նոր ոլորտներ: 1874-1920 թթ. գավառում հրատարակված պարբերականների թիվը հասնում էր 21-ի (19-ը՝ հայերեն, 2-ը՝ ռուսերեն):

1827 թվականից Շուշիում արդեն գործում էին և՛ տպարանը և՛ ուսումնարանը: (Առաջին գիրքը «Պատմություն Սուրբ Գրոցն» էր (հրատ. 1828 թ.):)

Սակայն 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Շուշի քաղաքը, զգալի չափով կորցնելով իր տեսակարար կշիռը Անդրկովկասում և Ղարաբաղում հասնում է լիակատար անկման: 1905-1906 թվականներին հայ-ադրբեջանական (թաթարական) ազգամիջյան ընդհարումներն ու 1918-1920 թթ. արյունոտ դեպքերը հասցնում են Շուշի քաղաքի հայկական մասի լիակատար ավերմանը, Շուշին դատարկվում, քայքայվում և անճանաչելի է դառնում:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատվելու նախօրյակին Շուշին դարձել է ազգամիջյան արյունահեղ բախումների թատերաբեմ:

1905-1906 թթ., 1920 թ. մարտի 23-ի ողբերգական իրադարձություններով, երբ թուրք-ադրբեջանական հրոսակների կողմից կազմակերպվեց հայ բնակչության կոտորածն ու Շուշին մատնվեց հրդեհի, ամբողջ մեկ դար տևած մշակութային և տնտեսական աննախադեպ վերելքն ընդհատվեց:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելու նախօրյակին Շուշին դարձել էր ազգամիջյան արյունահեղ բախումների թատերաբեմ: 1920 թ. մարտին Շուշի ժամանած թուրքական զորապետներ Նուրի և Խալիլ փաշաները, տեղի մուսավաթական կառավարիչ Խոսրով-Բեկ Սուլթանովի ու նրա կուսակիցների հետ հրդեհել են քա-

¹ ՀՀ Հանրագիտարան, Ե., էջ 526:

ղաքի հայկական թաղամասը (շուրջ 7 հազար տուն), կոտորել հայ բնակչության մեծ մասին (35 հազար), կողոպտել ունեցվածքը:

1921 թ. հուլիսի 5-ին Շուշին Լեռնային Ղարաբաղի կազմում ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշմամբ հանձնվել է Ադրբեջանին:

ԼՂԻՄ-ի կազմավորումից (1923 թ. հուլիս 7) հետո ադրբեջանական իշխանությունները երկրամասի կենտրոն են դարձրել Վարարակնը՝ Ստեփանակերտը:

Թվում էր, խորհրդային կարգերի ժամանակ Շուշին կհայանար, կկարողանար բուժել իր վերքերը և վերստին կենդանություն առնել: Սակայն նույն խորհրդային կարգերի ժամանակ Շուշիում մոլեգնել էր մի նոր բարբարոսություն, որին զոհ գնացին քաղաքի հայկական չորս գերեզմանատներն իրենց փառաշուք շիրմաքարերով, խաչքար-կոթողներով:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին Շուշին զգալի անկում է ապրում: Եթե 1921 թ. Շուշիում բնակվել էր 9223, 1923 թ.՝ 6976, 1925 թ.՝ 5000, ապա, 1920-ական թվականների վերջերին այդտեղ բնակվում էր 3000 մարդ (գերազանցապես ադրբեջանցիներ): 1960-ական թվականների սկզբին ադրբեջանական իշխանությունները հիմնականում հայկական թաղամասի ավերակների վրա ձեռնարկել են Շուշիի նոր կառուցապատումը՝ ոչնչացնելով դեռևս կանգուն մնացած հայկական և ռուսական (միակ) եկեղեցիները:

1966 թ. փետրվարի 2-ի «Շինարար» (ռուսերեն) թերթի համարում ճարտարապետ մի ոմն Ք. Սեիդով «խորհուրդ էր տալիս» Շուշվա թրքությանը փրկել գերեզմանական շրջապատից, բարձրաձայն կոչելով, որ «մեռածները կերան սաղեղին»: Նման գործողությունները շարունակական բնույթ էին ստացել:

Ողբերգական իրադարձությունները կրկնվեցին 1988 թվականից սկսված արցախյան շարժման հետ: Ղարաբաղի հայերն իրենց քաջարի նախնիների ավանդներին հավատարիմ հերոսական պայքար մղեցին Շուշիի համար: Եվ այդ պայքարով գրվեց հայ ազատագրական պայքարի պատմության փառավոր էջերից մեկը:

Տարիների ընթացքում քաղաքը գրեթե լիովին հայաթափվել էր և դարձել ադրբեջանաբնակ: Իշխող դիրք գրավելով Ստեփանակերտի նկատմամբ, որտեղից երկու տարի շարունակ ուղիղ նշանառությամբ մահաբեր արկեր էին թափվում Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքի

վրա 1992 թ. մայիսի 7-ի գիշերը Արցախի ազատամարտիկները կռվակոչի ահազանգին ելած սկսեցին Շուշիի գրոհը: Մայիսի 7-8-ի կատաղի մարտերից հետո, մայիսի 9-ի առավոտյան ազատագրվեց հայոց հինավուրց քաղաքը և ամրացվեց հայոց դրոշը: Շուշիի ազատագրումը արցախահայության համար քաղաքական, ռազմավարական և բարոյահոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ: Շուշին-Քարազլուխը՝ բոլոր լրատվական մարմինների ականա խոստովանությամբ՝ ադրբեջանական կողմի վերջին հենակետն էր Լեռնային Ղարաբաղում, Շուշիի ազատագրումը Արցախի ազգային-ազատագրական շարժման նոր փուլի սկիզբը դրեց:

Ազատագրումից հետո Շուշիում բնակություն են հաստատել ԼՂՀ տարբեր վայրերից բռնագաղթված հայեր: Շուշիի մուտքի մոտ կանգնեցվել են քաղաքի ազատագրման մարտերում խփված տանկի («Տանկ-հուշարձանը»), զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող խաչքար, քաղաքում՝ Վ. Սարգսյանի հուշարձանը:

Շուշիի ազատագրումից հետո քաղաքում գործում են 2 միջնակարգ, 1 երաժշտական (1992 թ. նոյեմբերից) դպրոցներ, շրջանային կենտրոնական գրադարան (1993 թ. սեպտեմբերի 1-ից), պատմաերկրագիտական թանգարան (1992 թ.), պատկերասրահ (1995 թ.), մանկապատանեկան թատերախումբ, «Վարանդա» երգչախումբը, հրատարակվում է «Շուշի» թերթը և այլն:

Այսօր Շուշին, որը հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակից է Ասկերանի, հարավ-արևելքից՝ Չադրութի, արևմուտքից և հարավ-արևմուտքից՝ Քաշաթաղի շրջաններին ունի յոթ համայնք, ինն գյուղական բնակավայր և 5300 բնակչություն (2003 թվականի դրությամբ):

К ВОПРОСУ О МЕТОДИКЕ ПРИСВОЕНИЯ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ АРЦАХА В СОВРЕМЕННОЙ АЗЕРБАЙДЖАНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Если не считать отдельные хроники периода присоединения Карабахского ханства к России¹, а также работу А. Бакиханова², вопросы истории и культуры Карабаха стали объектом пристального внимания азербайджанских исследователей начиная с первой половины 1920-х гг.³, когда, в силу известных исторических причин, Карабах оказался включенным в состав Азербайджанской советской республики.

В исследованиях 1930-х гг. еще можно было наблюдать сравнительно объективную характеристику историко-культурных явлений в регионе⁴.

В связи с этим, примечательно, что еще в 1920-1930-х гг. азербайджанские исследователи, по существу, не знали народа с самоназванием – «азербайджанец». Достаточно симптоматичным в этой связи является высказывание А. Алекперова по этому вопросу: «несмотря на то, что название азербайджанец являлось естественно правильным и свидетельствовало, о том, что национальное большинство Азербайджана

¹ Мирза джамал Джеваншир, История Карабаха. Баку, 1959; Ахмедбек Джеваншир, О политическом существовании Карабагского ханства (с 1747 по 1805 г.) Баку, 1961, Мирза Адигезал-бек. Карабах-наме, Баку, 1950 и др.

² А. Бакиханов. Гюлистан-Ирам. Баку. 1951.

³ Под «азербайджанскими исследователями» этого периода (20–40-е гг.) нужно понимать всех ученых, занимавшихся историей новосозданной республики Азербайджан.

⁴ Алекперов А. К., Исследования по археологии и этнографии Азербайджана. Баку, 1960. Секция истории..., с. 74.

вступило на новую ступень общественного развития, это название получило широкое употребление среди азербайджанского населения лишь с 1936 г.»¹.

Говоря о формировании азербайджанского народа и заселении нынешней территории Азербайджана тюрками он подчеркивает, что это был длительный процесс, начавшийся в VII-VIII вв, когда с севера и частично с юга сюда просачивались различные группы тюркских племен: « Аборигены Азербайджана, отдельные иранские и даже некоторые арабские племена, поселенные в Азербайджане халифами в Ширване... целый ряд тюркоязычных племен, шедших в Азербайджан с севера и с юга вот из кого формировался азербайджанский народ..»². Немаловажным, на наш взгляд, является и следующее замечание ученого: « что тюрки здесь застали народ с армянской культурой и религией, указывает, то, что во многих селениях, посещенных нами, мы находим остатки армянских храмов и кладбищ»³.

Данный вопрос оставался актуальным и гораздо позднее. Об этом, в частности, говорит тот факт, что в середине 1960-х гг., З. М. Бунятов во введении своей монографии писал: «этническая общность, которая стала носителем одного имени – азербайджанцами, названа в работе общим условным термином «тюрки»⁴.

Об этом же говорит и Р. Геюшев, замечая, что, начиная с IX в., равнинная часть междуречья Куры и Аракса превратилась «в стоянки пришлых племен, зона обитания которых, явилась своеобразной преградой между нагорными районами и остальной частью Азербайджана»⁵. Однако Геюшев забывает упомянуть, что этими пришлыми племенами были тюркские племена.

Зато другой азербайджанский исследователь Ю. Б. Юсифов считает, что «сложение азербайджанского народа и его языка происходило в раннем средневековье с преобладанием огузских элементов и

¹ Там же, с. 71.

² Там же, с. 75.

³ Там же, с. 88. Заметим, что такое отношение к фактическим материалам характерно лишь до конца 50-х гг. XX в.

⁴ Там же, с. 4.

⁵ Р. Геюшев. Гандзасар – памятник Кавказской Албании., Day. Az 2006.

завершилось в VII -VIII вв.»¹.

На протяжении всего существования Советского государства, в Азербайджане, на правительственном уровне осуществлялась программа присвоения культурного наследия Арцаха и других районов исторической Армении, оказавшихся в составе этой республики. Эта программная линия особенно усилилась начиная с 1936 г., когда тюрков Азербайджана переименовали в азербайджанцев, и они по сути стали титульной нацией. Именно тогда встал вопрос о необходимости научно обосновать их присутствие на данной территории, «доказать» автохтонность новоиспеченной нации. Но, поскольку историческая «ниша» была занята, началось присвоение культурного наследия местного населения - армян, тем более, что для этого были достаточно благоприятные предпосылки.

С момента советизации и насильственного присоединения Карабаха к Азербайджану, с начала атеистической пропаганды, связь армян Арцаха со своим культурным наследием, (если исключить ее наиболее бытовые элементы), почти исчезла, то есть это культурное наследие, (религия, фольклор, легенды и мифы, памятники культового зодчества) в основном, уже не осуществляло своей главной функции - функции сохранения нации. В подобных условиях, агрессивность другой этнической среды (в нашем случае азербайджанской) в отношении этого наследия не могла встретить серьезного сопротивления. Началось постепенное отчуждение, а затем и присвоение культурного наследия армян Карабаха. Программа присвоения культурного наследия Арцаха составляла важнейшую часть арменофобской политики правительства Азербайджана.

Насильственное отчуждение обычно протекало с помощью внешне как будто запутанного, но внутренне довольно гибкого механизма². На интеллектуальном уровне оно получало псевдонаучный характер, при этом использовались два основных рычага:

¹ Ю. Б. Юсифов. Об актуальных проблемах этнической истории Азербайджана. [www/regnum.ru/ntws](http://www.regnum.ru/ntws), 2006.

² Об этом см. Петросян Г. Л., Культурный этноцид в Арцахе. Рукопись. Пользуясь случаем выражаю свою признательность Г. Петросяну.

а) Поскольку контраст между армяно-христианской и татаро-мусульманской культурами более чем очевиден, одним из рычагов насильственного отчуждения в ходе пропаганды интернационализма и равноправия народов, в 1930-1980-х гг. стало выявление «общих истоков», «родственности», «тождественности» этих культур. Данная тенденция явно прослеживается во многих работах, изданных в те годы в Баку, независимо от национальной принадлежности автора¹. Вместе с тем, в тех же работах делались попытки представить армян Арцаха прошлыми, которые арменизировали местное албанское население.

б) другой рычаг состоял в создании промежуточного звена, («опосредованный путь») цель которой, приписать культурное наследие армян Арцаха албанцам, а через албан – азербайджанцам. Механизм опосредованного присвоения давал возможность, при необходимости сохранять кажущуюся нейтральность и объективность.

Одновременное использование этих двух рычагов, как показали последние десятилетия, в соответствующих условиях, могли придать насильственному отчуждению характер чисто академической дискуссии, что безусловно большая удача для этноса-«присвоителя».

Однако, в любом случае это присвоение носило элитарный характер, в нем были задействованы административные органы и научная интеллигенция, а отношение азербайджанского народа к этому наследию оставалось полуравнодушным (в реалиях советского периода таким было отношение к любому историческому наследию вообще), - полувраждебным (что можно определить как отношение к конкретной антагонистической культуре).

¹ Левнятов В., Очерки из истории Азербайджана в VIII веке. Баку, 1948; Тер-Григорян Т. И., Нагорно-Карабахская автономная область. Изв. Аз. ФАН СССР, № 4, 1939; А. С. Вартапетов, Очерк жилищ и строительных кадров Нагорного Карабаха (материалы поездки в Карабах летом, 1933 г.); Ямпольский З., Об этногенетической непрерывности на почве Азербайджана. //Вопросы истории Кавказской Албании/ Под ред. И. Алиева., Баку, АН АзССР, 1962, Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв. Баку, изд.-во АН АзССР, 1965; Геюшев Р. Б., Христианство в Кавказской Албании. Баку, Элм. 1984; Мамедова Ф. Д., Политическая история и историческая география Кавказской Албании, III в. до н.э – VII в. н. э. Баку, Элм, 1986; Ахундов Д. А., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. Баку, Азерб. гос. изд-во, 1986; Алиев И. Г., Нагорный Карабах. История. Факты. События. Баку. Элм. 1986 и др.

Поначалу наличие армянских памятников на территории новосозданной республики просто замалчивалось, к чему начали прибегать еще в 1950-е гг.¹

В 1970-е гг. азербайджанские историки перешли от замалчивания к присвоению армянского исторического наследия. Средневековое княжество Хачен стало «албанским», а принадлежавший ему Гандзасарский монастырь был объявлен «памятником культуры и религии Кавказской Албании»². В 1980-х гг. Хаченское княжество и Гандзасарский монастырь вновь были представлены в качестве исторического наследия Кавказской Албании³, несмотря на то, что в Гандзасаре сохранились многочисленные армянские надписи, и что правитель Хаченского княжества назывался в источниках армянским князем.

Тот же Бунятов утверждал, что Арцах никогда не принадлежал к центрам армянской культуры⁴. Позднее Бунятов пытался очистить и другие земли современного Азербайджана от армян и армянского наследия⁵.

Со временем азербайджанские авторы начали удревнять время возникновения государства Кавказская Албания, чтобы сделать ее современником соседних государств⁶.

¹ Казиев М. А. (ред), «Памятники истории Азербайджана», Баку, Изд-во АН АзССР, 1956; В новом еще более полном издании этого академического справочника авторы, упорно хранили гробовое молчание об армянах и их культурном наследии, см. Казиев М. А. (ред). Азербайджан: (Исторические и достопримечательные места). Баку, Изд-во АН АзССР, 1960.

² Геюшев Р. Б., О слове « хат » в наименовании памятников Нагорного Карабаха // Материальная культура Азербайджана Баку, Элм. 1973, вып. 7, с. 331-334; его же: О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря. Материальная культура Азербайджана, Баку, Элм. 1973, вып. 7, с. 366-368.

³ Геюшев Р. Б., Гандзасар – памятник Кавказской Албании. Баку, Элм, 1986; Ахундов Д. А., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. с. 224-229; Геюшев Р. Б., Ахадов А., Гандзасарский монастырь – албанский памятник.// Возрождение. 1991, № 5.

⁴ Бунятов З. М., Азербайджан в VII-IX вв..., с. 100-101.

⁵ Бунятов З. М., Об одном историческом недоразумении Докл. АН АзССР, 1977, т. 33, № 2; его же: Государство атабеков Азербайджана (1136-1225 гг.), Баку, Элм, 1978, с. 195-196

⁶ Бабаев И. А., К вопросу о возникновении государства Албании (Кавказской). Изв. АН АзССР, История, философия и право. 1976, 48-49; его же: Города Кавказской Албании в IV- в. до н. э. - III в. н.э. Баку, Элм, 1990, с. 6, 46-49; Геюшев Р. Б., Христианство в

Делались также попытки удревить время возникновения христианства в Албании¹ и оторвать Албанскую церковь от Армянской церкви, представляя ее изначально автокефальной².

Начиная с 1950-х гг. азербайджанские авторы стали переименовывать средневековых армянских политических деятелей, историков и писателей, живших и творивших в Карабахе, в албан. Так, со временем, Мовсес Каганкатвацци, писавший на армянском языке, превратился в албанского историка Моисея Каланкатуйского (а в наше время, даже в Мусу Галанкендли)³. Та же участь постигла Мхитара Гоша, Киракоса Гандзакечи, Вардана Аревелци, Сахля Смбадяна, Хамама Благочестивого и др. Наиболее популярной в Азербайджане книгой, где все это стало принципиальной позицией, была работа З. М. Буниятова⁴. В этот период делалось все, чтобы оторвать население раннесредневекового Арцаха от армянских корней. При этом подчеркивалось, что насельники Арцаха – албаны разговаривали по тюркски⁵.

Современная азербайджанская историография вообще отрицает процесс тюркизации края, заявляя, что тюркский этнос изначально обитал на территории нынешней республики Азербайджан, Северного Ирана (Атропатена) и республики Армения. Так, некто, А. Алекперов обращаясь с «Открытым письмом» к директору Института истории АН Азербайджанской республики И. Г. Алиеву, высказывает свое принципиальное несогласие с последним относительно тюркизации края. Он считает тюрков нынешней территории Азербайджана аборигенами, и высказывает свое отрицательное отношение к тезису И. Алиева – что

Кавказской Албании. с. 3; Мамедова Ф. Д., Политическая история и историческая география Кавказской Албании, III в. до н. э – VII в. н. э., с. 57; ее же: К вопросу об албанском (Кавказском) этносе. Изв. АН АзССР. История, философия и право., 1989, № 3, с. 108; Ахундов Д. А., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. с. 6; Гаджиев Т. Г., Раннесредневековые города Азербайджана (IV – начало VIII вв); автореф. канд.ист. наук. М., МГУ, 1994.

¹ Геюшев Р. Б., Христианство в Кавказской Албании. с. 25-27; Ахундов Д. А., Архитектура древнего и раннесредневекового Азербайджана.с. 107-109.

² Геюшев Р. Б., Христианство в Кавказской Албании. с. 76-79 и др.

³ Горхмазоглу Н., «Противоречия» Страбона.www.regnum.ru/news, 2006.

⁴ Буниятов З. М., Азербайджан в VII-IX вв.

⁵ Гукасян В. Л., К освещению некоторых вопросов истории Азербайджана в монографии « Азербайджан в VII-IX вв.» Изв. АН АзССР, сер. Лит. яз. и искусство, 1968, № 4, с. 121.

тюрки пришли в край в период гуннского переселения: «никакой тюркизации в Азербайджане не было!» - вот главный вывод Алекперова.¹ А. Алекперов пишет: «понятия "Азербайджан" и "тюрк" взаимодополняемы,... "тюрк" является порождением "Азербайджана", т.е. "Азербайджан" — это детализированный и материализованный синоним слова "Бог/Свет"», и далее «наличие такого большого количества тюркизмов как в шумерском, так и семитских языках данного ареала свидетельствует о большом культурном влиянии тюрков на соседствующие с ними народы хотя бы с конца IV тысячелетия до н.э.»². Недалеко ушел от своего собрата другой современный азербайджанский историк Агасыюглу, который в свою очередь «внес» лепту в албановедение, заявив, что албанская «диофизитская церковь была подчинена хайской (монофизитской). А так как литература велась на церковном языке (а таковым стал хайский грабар), то этнопоним «албан» в записи и иногда произношении приобрел свойства хайской формы: «aghuan». Произносимое по-хайски слово «aghuanits» (албанский) в албанской среде записывалось и произносилось как «aghuanLI» («~лы» - тюркский суффикс принадлежности), слово «aghuanк» (хайск. «албаны») – в виде «aghван.ЛАР» («~ЛАР» – тюркский суффикс мн. ч.). так появились слова – гибриды»³. Однако, есть ли хотя бы один источник где-бы этот термин действительно произносился в указанной форме? Конечно нет, не то Агасыюглу привел бы его. Еще одним «открытием» Агасыюглу является заявление о том, что «Албанская церковь была уничтожена в 1928 году»⁴.

В настоящее время азербайджанская политическая элита пытается, в очередной раз, найти новых предков, теперь уже не только в лице албан, но и тюрков, а Карабах представить в качестве неотъемлемой части Азербайджана, в составе так называемых «азербайджанских государств Хулагуидов и Джалаиридов, Каракуюнлу, Аккоюнлу и Сефе-

¹ А. Алекперов, «История не терпит фальсификаций!!!» www.regnum.ru/news, 2006.

² А. Алекперов, "Под знаком огня", газета "Зеркало" от 20 января 1996.

³ Агасыюглу Ф., К интерпретации этнопонима «албан/алван/агван». Day. Az, 2006.

⁴ Там же.

видов»¹, подчеркивая при этом, что в Карабахе испокон века жили тюркоязычные азербайджанцы (под именем албан и тюрков), которые в начале XIX в., после присоединения края к России были арменизированы².

Необходимо особо оговорить, что если в советское время, армянскому этносу отводилась какая-то роль в истории и культуры данного региона, то сегодня полностью игнорируется существование армян не только в Карабахе, но и вообще в Закавказье³. Ярким примером может служить последняя книга Ф. Мамедовой «Кавказская Албания и албанцы» и отклики на нее. Примечательно, что Ф. Мамедову обвиняют в предательстве, лишь по той причине, что она на карте приложенной к работе отметила государство под названием «Великая Армения», хотя сама работа преподносится автором как новая концепция, «показывающая, что армян на Кавказе не было: ни политически, ни этнически, ни культурно»⁴.

¹ Пириев В., Карабах в составе государств Хулагидов и Джалаиридов (XIII-XIV вв.) // Карабах, Баку. Изд.-во «Чашыоглу», 2004, с. 49-60; О. Эфендиев, Карабах в составе государств Каракоюнлу, Аккоюнлу и Сефевидов (XV-XVII вв.). Там же, с. 61-70.

² Мамедова Ф., Гошгарлы Г., Карабах в эпоху средневековья. Там же, с. 48.

³ Карабах. Очерки истории и культуры. Баку, 2004; Ф. Мамедова. Кавказская Албания и албанцы. Баку, 2005 и др.

⁴ В интервью корреспондента «Эхо» с Ф. Мамедовой, последняя заявила, что ажиотаж вокруг ее книги был создан директором Института истории НАНА Ягубом Махмудовым, который обнаружив на карте "Албания и сопредельные страны во II-I вв. д.н.э." наличие в Восточной Анатолии "Великой Армении", в состав которой входили северо-западные земли Атропатены и Мильско-Муганская степь (Каспиана - албанская область) объявил, что Ф. Мамедова "продалась армянам, Европе и Америке". Обиженная Ф. Мамедова переговорила с президентом НАНА Махмудом Керимовым, который успокоил Мамедову заявив, что в Италии, где он был недавно, во многих музеях и даже в Колизее висят карты "Великой Армении". Но давление нарастало и об этом узнали не только в Азербайджане, но и за рубежом. По словам Ф. Мамедовой, на приеме в посольстве Японии иностранные дипломаты говорили ей: "мы поняли, что ваш директор институтов не знает источники и не знает историю. Но он, разве не бывал за рубежом, где почти в каждом музее висит карта Великой Армении». Можно было бы подумать, что речь идет о больном, невменяемом человеке, который непонятно каким образом оказался директором института истории, однако факты указывают на то, что это давнишняя политическая программная линия. Та же Ф. Мамедова вспоминает, что в 1969 г. Гейдар Алиев, будучи назначенным на пост первого секретаря ЦК КП Азербайджана потребовал развязать т.н. армянский узел. «Я на фактах, - гордо заявляет Ф. Мамедова- показала, что армян на Кавказе не было». Мало того, Ф. Мамедова заявляет, что и речи не может быть об армянской государственности в Киликии:

Методика работы современных азербайджанских историков является примером целенаправленного претворения в жизнь идей пантюркизма, которая в последние десятилетия открыто пропагандируется в Азербайджане. Причем вдохновителями этих идей, как и раньше, выступают руководители этого государства. Примером может служить обращение президента Ильхама Алиева к ученым своей страны, найти доказательства автохтонности азербайджанцев и «в активной и программной форме довести до мирового сообщества, что армяне пришли в Нагорный Карабах – неотъемлемую часть Азербайджана, как гости». Этот же тезис был озвучен И. Алиевым еще в 2004 г. в Лондоне: «Нагорный Карабах - это территория, которая исторически принадлежала азербайджанцам и Азербайджану. Армяне пришли на эту территорию лишь после 1828 года, и мы встретили их как гостей»¹.

Обоснованию аборигенности азербайджанцев и пришлости армян целиком посвящены монографии и статьи последнего десятилетия, распространяемые на разных языках на интернет сайтах².

Азербайджанские историки выдают свои спекулятивные утверждения за аксиомы, признанные среди ученых, умалчивая о тех спорах и дискуссиях, которые велись и ведутся вокруг вопросов, связанных с историей и культурой Арцах – Карабаха.

Примером таких декларативных утверждений могут служить следующие высказывания Играра Алиева, в книге «Карабах», изданной в 2004 г.: Арцах «не может являться армянским, хотя бы потому, что в ту пору и значительно позднее здесь никаких армян не было!» и далее, «...албанские племена следует считать, несомненно, автохтонными центральных и юго-восточных областей Закавказья, конечно же и Курорараксинского междуречья, что никак нельзя сказать об армянах, претендующих на Карабах, как «исконно армянской Земли»³. Остается

«киликский царством правила албанская династия - албанские эмигранты, вышедшие из Гянджи. Это династия Хетумидов (основатель Авшин)».

¹ Из речи И. Алиева в клубе «CHATHAM HOUSE», 13 декабря 2004 г. в Лондоне.

² Этнокультурное наследие Кавказской Албании. Материалы конференции; «Карабах. Очерки истории и культуры»; Ф. Мамедова, Кавказская Албания и албанцы. Баку, 2005; А. Юнусов, Карабах: прошлое и настоящее; Статьи на страницах «Зеркало», «Эхо» и др.

³ Карабах. Очерки... с. 26.

неясным, почему албанские племена «несомненно» являются автохтонами Карабаха, в то время как об армянах этого «никак нельзя сказать»? На чем основывает свой вывод академик? Есть ли хоть один источник, подтверждающий его заключение. Конечно же нет, иначе он привел бы его. Однако у И. Алиева особое отношение к источникам: широко используя армянские источники, там где на его взгляд они подтверждают его выводы, он, в то же время, с пренебрежением говорит о них, называя их тенденциозными если их данные не соответствуют его построениям. Тот же двойной стандарт наблюдается и в отношении к античным, греко–римским источникам.

Свои умозрительные спекуляции, не подтвержденные каким-либо аргументом, он выдает за истину, и затем, опираясь на них же, делает новые, не менее иллюзорные построения. Яркой иллюстрацией этого может быть следующее выражение: « Как было уже показано выше в конце II тыс. и в начале I тыс. до н.э. армянского этноса на Южном Кавказе не было»¹. Между тем, ни «выше», ни «ниже» кроме безапелляционных заявлений, ничего подобного не было доказано. Страницы же источников, на которые ссылается И. Алиев не подтверждают, а наоборот полностью рассеивают его измышления².

Таким образом, современные азербайджанские историки пытаются представить Карабах, как и все междуречье Куры и Аракса, в качестве региона, в котором не было армян, зато испокон веков обитал тюркский этнический массив. Тюрки, прародина которых находится на Алтае, по желанию азербайджанских авторов, автоматически превращаются в автохтонов края.

В основе фальсификаций современных азербайджанских историков лежит болезненное стремление преувеличивать значение азербайджанского государства, существовавшего, согласно их представлениям, «извечно» на территории Восточного и Южного Закавказья, Северного Ирана (в границах древних государств Албания, Атропатена, Мидия, с охватом целого ряда областей исторической Армении). Они не могут, а

¹ Карабах. с. 27.

² Следует отметить, что И. Алиев, по сути ничего нового не добавляет, к тем умозаключениям, которые он сделал еще в 1988 г. в своей брошюре «Нагорный Карабах. События, факты».

точнее не хотят, считаться с тем фактом, что было время когда не существовало ни государства с названием « Азербайджан», ни азербайджанцев – как народа.

Сегодня перед историками Азербайджана поставлена двуединая задача: «доказать» аборигенность азербайджанцев на территории современной республики Азербайджан, и одновременно очистить эту территорию от армянского наследия. И то, и другое санкционируется непосредственно руководством республики. Еще 26 марта 1998 г. президент Азербайджана Г. Алиев издал указ «О геноциде азербайджанцев», в котором в частности, отмечается, что «с подписанных в 1813, 1828 годах Гюлистанского и Туркменчайского договоров началось расчленение азербайджанского народа, передел наших исторических земель», и «были созданы предпосылки для реализации политики изгнания азербайджанцев со своих земель и их уничтожения»¹.

Однако, для того, чтобы что-то или кого-то расчленишь, одним из первичных условий должно быть наличие таковых. В период же, о котором говорит Г. Алиев, в истории не фигурировал народ с наименованием «азербайджанцы», и тем более на тех территориях, где была образована Азербайджанская ССР, а сегодня республика Азербайджан. Но, если не было азербайджанского народа, то каком переделе «исторических земель» может идти речь?

Термин «азербайджанец», применительно к тюрско-татарскому этническому массиву, как известно, начал использоваться только в 1930-х гг. Таким образом, даже при большом желании, невозможно было в XIX в. осуществлять политику «изгнания азербайджанцев со своих земель и их уничтожения», поскольку таковых на означенных территориях не было. Что касается мусульманского населения, проживавших на территориях бывших персидских провинций-ханств – Ереванского, Нахичеванского и Карабахского, то они представлены были этнически персами, татарами, татами....

В 1950-х гг., с пробуждением национального самосознания азербайджанского народа, политическая элита этой республики, пытаясь выявить исторические корни своего народа, начала политику отчужде-

¹ Карабахский конфликт, с. 232.

ния и присвоения культурного наследия армян. Однако, в рассматриваемом указе все переворачивается с ног на голову: «Начиная с 50-х годов армянские националисты с помощью своих покровителей начали оголтелую кампанию духовной агрессии против азербайджанского народа. В периодически распространяемых в Советском государстве книгах, журналах и газетах они стремились доказать принадлежность армянскому народу самых выдающихся шедевров нашей национальной культуры, классического наследия, памятников архитектуры»¹. То же повторяется в «Заявлении Милли меджлиса (парламента) азербайджанской республики в связи с днем геноцида азербайджанцев». Здесь указывается на то, что азербайджанцы являлись «коренными жителями этих территорий на протяжении всей истории», а армяне «разрушали их исторические и культурные памятники и переименовывали топонимы»².

Все эти заявления делаются на фоне четко выраженного враждебного отношения азербайджанского этноса к культурному наследию армян на территории советского и постсоветского Азербайджана, что можно проиллюстрировать на примерах уничтожения хачкаров Джуги, и актов вандализма в отношении хачкаров и культовых христианских памятников Кельбаджара, Физули, Зангелана, Джебраила и Агдама.

Таким образом, насильственное присвоение культурного наследия армян Нагорного Карабаха со стороны Азербайджана, можно определить как государственную политику, направленную на отчуждение ее от истинных хозяев, с тем, чтобы культурное наследие одного этноса превратить в стимул «самосохранения», а точнее самоутверждения новоиспеченной нации. С этой целью делаются попытки:

1. Идентификации Кавказской Албании и Азербайджана (данная тенденция впервые была озвучена в работах конца 30-х – 40-х гг. напр. Левиатов, Тер-Григорян и др., получила дальнейшее развитие с 60- гг. напр. З. Буниятов. Азербайджан в VII – IX вв и др.).
2. Удревнения истории Албании.

¹ Там же, с. 235.

² Там же, с. 242.

3. Раскручивание тезиса о том, что существовала богатая албанская литература, и что армяне уничтожили, предварительно переведя ее на армянский язык.
4. Переименование средневековых армянских политических деятелей, историков и писателей, родившихся или живших в Арцахе и Утике, в албанских.
5. Попытка «доказать», что Арцах никогда не принадлежал к центрам армянской культуры, оторвать население раннесредневекового Арцах-Карабаха от армян, заявляя, что процесс арменизации Карабаха имел место с XII в (З. Бунятов), и даже с XIX в. (Мамедова, Ахундов и др.). При этом, уже с 1950-х гг., в туристических справочниках умалчиваются армянские памятники Нагорного Карабаха.
6. Декларация того, что в Армении со времен Тиграна II не было политической и экономической независимости, в то время как Албания представляла собой сильное государство, возникшее в IV-III вв. до н. э.
7. «Доказать», что христианство проникло в Албанию раньше чем в Армению, и Албанская церковь всегда была независима или боролась за независимость от Армянской церкви. При этом Армянская церковь представляется как некая злобная сила, пытавшаяся подавить свободомыслие в Албании.
8. Переход азербайджанской исторической науки на традиции антиармянской турецкой историографии (с сер. 70-х гг. XX века, точнее после пленума НК обкома КП Азербайджана 1975 года).

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ՀՕՄ)
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իր սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտների զարգացման համար զրկված է միջազգային ֆինանսական կազմակերպություններից վարկեր ստանալու հնարավորությունից: Այդ գործում անգնահատելի է Հայկական Սփյուռքի բարեգործական կազմակերպությունների օգնությունը: Սփյուռքահայ բարեգործական կազմակերպություններից իր մեծ ավանդն ունի Հայ օգնության միությունը:

Հայ օգնության միությունը (ՀՕՄ, անգլերեն՝ Armenian Relief Society) ոչ կառավարական կանանց բարեգործական կազմակերպություն է, որը հոգում է հայ ժողովրդի կարիքները՝ կամավոր, մարդասիրական և ընկերային հիմունքներով:

1998 թ. ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի (Ecosoc) լիիրավ անդամ է:

Հիմնադրվել է 1910 թ. ԱՄՆ-ի Նյու Յորք քաղաքում, ՀՀԴ գործիչ է. Ակնունու (Խաչատուր Մալումյան) ջանքերով, ԱՄՆ-ի հայ կանանց տարբեր կազմակերպությունների միավորմամբ և կոչվել է ՀՀԴ Կարմիր խաչ: 1946-ի պատգամավորական ժողովի որոշմամբ կազմակերպությունը վերանվանվել է Հայ օգնության միություն (ՀՕՄ)¹:

Հայ օգնության միության խորհրդանշանը կը պարունակել՝
Սիրտ մը՝ խորհրդանիշ բարեգործութեան և կարեկցութեան
Խաչ մը՝ խորհրդանիշ Հայերու պաշտօնական դաւանանքի՝ Քրիստոնէութեան

¹ Ծրագիր- կանոնագիր Հայ օգնության միության, բարեփոխուած 1998-ի համահայկական պատգամաւորական ժողովին, 1998 թ. հոկտեմբեր, էջ 1:

Սուր մը՝ խորհրդանիշ զգօնութեան եւ հայրենիքի պաշտպանութեան

(Խաչը սուրին բռնակոթն է)

Արարատ լեռ՝ խորհրդանիշ Հայ Ազգի հայրենիք՝ Հայաստանի

Արեւ և ճառագայթներ՝ խորհրդանիշ կրօնութեան լոյսին

Ձթենիի ճիւղ՝ խորհրդանիշ խաղաղութեան

Դափնիի ճիւղ՝ խորհրդանիշ մշակոյթի

Երիզ մը՝ որուն վրայ կերեւան «ՀՕՍ» սկզբնատառերը եւ հիմնադրութեան թուականը «1910»¹:

ՀՕՍ- ի գործունեությունն ընթացել է առողջապահական, սոցիալական և կրթական-դաստիարակչական ոլորտներում: Ներկայումս ՀՕՍ-ը աշխարհի 23 երկրներում ունի 209 մասնաճյուղ, 15 առանձին մասնաճյուղեր՝ ավելի քան 16 հազար անդամներով¹: Կազմակերպության կենտրոնատեղին Ուոթըրթաունում է (Մասսաչուսեթս, ԱՄՆ):

Հայ օգնության միությունը Հայաստանում գրանցվել է 1991 թ. և շուրջ 1500 անդամներով գործում է ՀՀ տասնյակ քաղաքներում և գյուղերում: Արցախահայությանը օգնելու նպատակով 1996 թ. Ստեփանակերտում բացվում է Հայ օգնության միության Արցախի մեկուսի մասնաճյուղը՝ իրագործելով Ակնունու երազանքը՝ «Դեպի երկիր, միշտ դեպի երկիր»: Մասնաճյուղն ունի 33 անդամ: Օգտվելով մասնավոր բարերարների և ՀՕՍ-ի ԱՄՆ, Արևմտյան, Արևելյան շրջանների, Ավստրալիայի շրջանային վարչության, Հունաստանի Հայ Կապույտ խաչ, Կանադայի մասնաճյուղերի ու Ֆրանսիայի Կապույտ խաչի աջակցությունից կազմակերպությունը Արցախում իրականացնում է բարեգործական ծրագրեր սոցիալական, առողջապահական և կրթական-դաստիարակչական ոլորտներում:

Հայ օգնության միությունը Արցախի մասնաճյուղի միջոցով 1992 թ. սկսած իրագործում է ծնողազուրկ երեխաների խնամակալական ծրագիր: 1988 թ. ավերիչ երկրաշարժը և Արցախյան պատերազմը հազարավոր մանուկների որբացման պատճառ դարձան: Ծրագրի մեջ առաջին հերթին ընդգրկված են զոհված ազատամարտիկների ընտանիք-

¹ Ծրագիր - կանոնագիր Հայ օգնության միութեան, բարեփոխուած 1998-ի համահայկական պատգամաւորական ժողովին, 1998 թ. հոկտեմբեր, էջ 23:

¹ ՀՕՍ (Կեդրոնական վարչության 43-ամսեայ տեղեկագիր) 2002-2005, էջ 6:

մերի և երկկողմանի ծնողագուրկ անչափահաս երեխաները: Հանրապետության շուրջ 1550 ծնողագուրկ երեխաներ մինչև 18 տարեկանը լրանալը անհատ հովանավորների կողմից տարեկան ստանում են 120 ԱՄՆ դոլար¹:

Կազմակերպության կողմից իրականացվում է նաև «Լավագույն ուսանող» ծրագիրը՝ բարձր առաջադիմությամբ աչքի ընկած ուսանողները տարեկան ստանում են 100 ԱՄՆ դոլար²:

ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղը համագործակցում է Ստեփանակերտի վերականգնողական կենտրոնի հետ, որն իր վրա է վերցրել պատերազմի ժամանակ ողնաշարից վիրավորված շուշեցի երեք ազատամարտիկների խնամքը, որոնք անդամալույծ են և շարժվում են սայլակներով: ՀՕՄ-ը կարողացավ լուծել սննդի հետ կապված հարցերը, իսկ բուժման ծախսերը իր վրա վերցրեց Վերականգնողական կենտրոնը³: ՀՕՄ-ը հոգում է նաև անապահով քաղաքացիների առողջապահական խնդիրները: Նրա հովանավորությամբ Արցախի հաշմանդամների, թոշակառուների, կարիքավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամներին անվճար ակնոց է տրամադրում «Սիրուն օպտիկը»:

Մինչև Արցախյան պատերազմը Ղարաբաղում գործում էր շուրջ 200 մանկապարտեզ, սակայն պատերազմի պատճառով դրանցից շատերն ավերվեցին⁴: Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը ՀՕՄ-ի Արցախի մասնաճյուղը ստանձնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մանկապարտեզների հովանավորության գործը: Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզը գործում է 1998 թ. մայիսից: Այստեղ հաճախում են զոհված ազատամարտիկների, Արցախյան պատերազմի առաջին կարգի հաշմանդամների, երկրորդ կարգի հաշմանդամների, (որոնք ունեն երեքից ավելի երեխա կամ աշխատանքով ապահովված չեն) և հինգ և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների շուրջ 100 երեխա⁵:

Վերջին տարիներին կազմակերպության հովանավորությամբ մանկապարտեզներ են բացվել Շուշիում, Քարին տակ, Ասկերանի շրջանի

¹ «Ազատ Արցախ», 24 հունիսի 2004:

² «Դեմո», 15 օգոստոսի 2005:

³ «Մարտիկ», Պաշտպանության բանակի պաշտոնաթերթ, 20-24 մարտի 2000:

⁴ «Ազատ Արցախ», 30 սեպտեմբերի 2004:

⁵ «Ազատ Արցախ» 24 հունիսի 2004:

Այգեստան, Հադրուքի շրջանի Մեծ Թաղեր և Տող գյուղերում, Մարտունու շրջանի Ավդուռ, Հադորտի, Աշան, Շահունյանի շրջանի Ակնաբերդ գյուղերում: Երեխաների թիվը անցնում է 500-ից¹: Մանկապարտեզներում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների նախադպրոցական կրթության և հայեցի դաստիարակության վրա: Մանկապարտեզների բացումը նպաստում է նաև տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը: Ներկայումս աշխատանքներ են տարվում նոր «Սոսե» մանկապարտեզներ բացելու ուղղությամբ՝ Մարտակերտի շրջանի Առաջաձոր, Ասկերանի շրջանի Խնձորիստան գյուղերում և Քարվաճառում:

Հայ օգնության միությունը Արցախում շարունակում է իրականացնել իր առջև դրված բարեգործական ծրագրերը:

¹ ՀՕՄ (Կեդրոնական վարչութեան 43-ամսեայ տեղեկագիր) 2002-2005, էջ 22:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1917-1923 ԹԹ.

Ցարական Ռուսաստանում Լեռնային Ղարաբաղի տարածքը ամբողջովին գտնվում էր Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ընդ որում Գյուլիստանը՝ Ելիզավետպոլի գավառում, Ջրաբերդը՝ Ջիվանջիրի գավառում, Վարանդան և Խաչենը Շուշիի գավառում, իսկ Դիզակը՝ Շուշու և Կարյազիմոյի գավառում:

1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին առաջ քաշվեցին տեղական ինքնակառավարման, վարչատարածքային առումով Ռուսական կայսրությունը ազգային-էթնիկական սկզբունքով վերաբաժանելու, ինչպես կովկասյան երկրամասում, այնպես էլ ողջ կայսրությունում դաշնային կառուցվածք ստեղծելու ծրագրեր:

Այս քննարկումները վերսկսեցին նաև Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ հայ, վրացի և թաթար գործիչները ուշադրության հրավիրեցին երկրամասի վարչատարածքային բաժանման մեջ ազգային-տարածքային գործոնի անտեսումը¹:

Սակայն այս քննարկումները թե՛ տեսական և թե՛ գործնական առումով նոր թափ ստացան 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո:

Պետք է նշել, որ փետրվարյան ամբողջ Ռուսաստանում ազգային հարցի լուծումը կապվում էր զեմստվոների՝ տեղական ինքնավարության մարմինների ստեղծման խնդրի հետ: Հեղափոխության առաջին ամիսներին, երբ կործանվում էին միապետության դարավոր վարչական հիմքերը և ազատությունը կայունացնելու նպատակով ստեղծվում էին նոր, ժամանակավոր մարմիններ, զեմստվոներով զբաղվելը դիտվում էր վաղաժամ:

¹ Մանրամասն տես, **Վ. Մելիքյան**, Փետրվարյան հեղափոխումներ և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Եր., 1997, էջ 115-117, **Ա. Մելքոնյան**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 265-267:

Այսուհանդերձ, 1917 թ. ամռան սկզբին այդ հարցը նորից ակտիվացավ: Անդրկովկասում զենստվոճներ մտցնելու նպատակով ՕԶԱԿՈՄ-ի կողմից հրավիրվեց խորհրդակցություն: Անմիջապես հարց բարձրացվեց նաև վարչական վերաբաժանման մասին, որը վերաբերում էր ոչ միայն Ելիզավետպոլի ու Երևանի, այլև Թիֆլիսի նահանգներին ու Կարսի մարզին:

Միաժամանակ Պետրոգրադում ընթանում էր կենտրոնական խորհրդակցություն՝ նվիրված Սահմանադիր ժողովին ընտրությունների դրույթների մշակումը: Մասնակցում էին Անդրկովկասի ժողովուրդների 2-ական ներկայացուցիչներ: Այս խորհրդակցությանը զուգահեռ, Ռուսաստանի ներքին գործերի նախարարությունը ևս հրավիրել էր խորհրդակցություն՝ ցարական վարչակարգի օրոք զենստվոճներից զրկված ազգային շրջաններում այդ ինստիտուտի ստեղծման վերաբերյալ: Քննարկվում էին Սիբիրի, Արխանգելսկի, Թուրքմենստանի, Մերձբալթյան նահանգների, կազակային շրջանների զենստվոճների խնդիրները: Ի դեպ, որոշ նահանգների վերաբաժանումը այստեղ լուծում գտավ: Ժամանակավոր կառավարության որոշումներով ստեղծվեցին նոր նահանգներ ու գավառներ, որոնցից էին, օրինակ, Լիֆլյանդիան ու Էստլանդիան, լատիշների ու էստերի նորաստեղծ նահանգները¹: Ձեռնստվոյական խորհրդակցությունը օգտվելով այն բանից, որ Սահմանադիր ժողովի ընտրությունների Անդրկովկասի ներկայացուցիչները գտնվում էին Պետրոգրադում, նրանց հրավիրեց մասնակցելու զենստվոյական հանձնաժողովի աշխատանքներին: Այնտեղ քննարկվեցին Անդրկովկասում զենստվոճներ հիմնելու և երկրամասի վարչական վերաբաժանման նպատակահարմարության խնդիրները: Հավաքին մասնակցում էին երկրամասի գրեթե բոլոր ազգերի (յուրաքանչյուրից 7 հոգի) և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Առաջարկվում էր հիմնականում հարցի լուծման երեք ուղի: 1. Իրականացնել Անդրկովկասի էթնիկական-սահմանային նոր վերաձևում, կամ եզակի հիմքի վրա Անդրկովկաս ներմուծել զենստվոճներ: 2. Չքննարկել այդ խնդիրը և այն հանձնել ՕԶԱԿՈՄ-ին, որն էլ համապատասխան միջոցով կիրականացնի երկրամասի վարչական վերաբաժանումը և 3. Օգտվելով Պետրոգրադում Անդրկովկասի պատվիրակների ներկայությունից,

¹ Տե՛ս Ա. Շախաթունյան, նույն տեղում, էջ 120:

մշակել նախագիծ և այն ուղարկել ՕԶԱԿՈՄ-ի և Կովկասի դեմոկրատիան ներկայացնող կազմակերպությունների վերջնական եզրահանգմանը: Մեծամասնության կողմից հավանության արժանացավ վերջին տարբերակը¹:

Խորհրդակցություններում հայերի շահերը ներկայացնում էին Գևորգ Խատիսյանը և Ավետիք Շախաթունյանը: Նրանք ունեին Անդրկովկասի վերաբաժանման բավականին մշակված նախագիծ: Այն պատկանում էր Ավետիք Շախաթունյանին, որն էլ 1918 թ. Թիֆլիսում հրապարակեց «Административный передел Закавказского края» ամփոփիչ աշխատությունը: Վիճաբանություններն ընթացան հենց հայկական նախագծի շուրջ, որը մասնակի փոփոխություններով ուղարկվեց Կովկաս: Նախագծում առաջարկվում էր Լոռին անջատել Բորչալուի գավառից, ինչպես նաև Ախալքալակի շրջանը հանել Թիֆլիսի նահանգի կազմից: Ապագա Ալեքսանդրապոլի նահանգը (ապագա Յայաստանը նրանց կարծիքով ստեղծվելու էր Ալեքսանդրապոլի շուրջը) դաշնակցական երկու գործիչները պատկերացնում էին Ալեքսանդրապոլի, Ախալքալակի, Լոռու, Կարսի, Կաղզվանի գավառների միավորման տեսքով: Այս առաջարկները նույնպես առարկություն չստացան: Խորհրդակցությունը ընդհանուր առմամբ տվեց դրական պատասխան՝ վերաբաժանման հիմքում դնելով էթնիկական սկզբունքը: Խնդրի իրագործման համար ընտրվեցին Անդրկովկասը ներկայացնող երեք հիմնական ազգերի 2-ական ներկայացուցիչներ՝ իշխան Ջ. Ավալովի նախագահությամբ²: Ի վերջո բյուրոկրատիան որոշ քաշքշուկներից հետո նախագիծը հանձնեց ՕԶԱԿՈՄ-ին³:

Իր հերթին ՕԶԱԿՈՄ-ը հրավիրեց խորհրդակցություն՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ: Յուրաքանչյուր ուղղությունը ներկայացնում էին հինգ հոգի: Խորհրդակցությունը հավանություն տվեց նախկին դրույթներին: Այս անգամ էլ առարկեցին վրացական ազգային դեմոկրատները՝ Վրաստանից Բորչալուի և Ախալքալակի անջատման դեմ: Նրանք հիմնվում էին իբր թե 1783 թ. պայմանագրի վրա⁴:

¹ Տե՛ս Ա. Շախաթունյան, նույն տեղում, էջ 121

² Տե՛ս Армяно-Грузинский вооруженный конфликт, с. 6-7:

³ Տե՛ս Նույն տեղում, էջ 7-8:

⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 9-10:

Այս ամենից պարզ երևում է, որ սահմանների լուծման հարցն այն ժամանակ արդեն դրված էր ոչ թե վարչական, այլ առավելապես պետական-տարածքային հարթության վրա:

1917 թ. հոկտեմբերի 14-15-ին, Չխենկելու նախագահությամբ և Ժորդանիայի ու Գեգեչկորու մասնակցությամբ, կայացած ՕԶԱԿՈՍ-ի մի ընդլայնված խորհրդակցությունում հայերի կողմից առաջարկված սահմանային փոփոխությունները մերժվեցին՝ հիմք ընդունելով հայերի ու մուսուլմանների անհանդուրժողականությունը: Ա. Շախաթունյանի արտահայտությամբ. վերաբաժանման հարցում «հայկական», «կուսակցական» և «միակողմանի» նախագծի դեմ դարձյալ սկսվեց վրացա-մուսուլմանական կամպանիան, այս անգամ որպես վարչական վերաբաժանման դեմ արհեստականորեն ստեղծված երկարաժամկետ զենք:

Անդրկովկասի սահմանափոխության հարցերը քննարկեցին նաև Հայոց ազգային համախորհրդակցության (27 սեպտեմբերի-13 հոկտեմբերի) հոկտեմբերի 6-ի նիստում:

Հարցի քննարկումը նախապատրաստել էր անկուսակցական պատգամավոր Ստ. Կամսարականը, որը Միք. Պապաջանյանի խորհրդով երկար ժամանակ ուսումնասիրել էր այդ խնդիրը Գևորգ Խատիսյանի հետ:

Հանդես գալով զեկուցումով և անդրադառնալով տվյալ ժամանակաշրջանում Անդրկովկասի նահանգների և գավառների սահմաններին, Կամսարականը նշեց, որ սահմանաբաժանումը կատարելիս ցարական կառավարությունը աչքի առաջ չի ունեցել ոչ միայն էթնիկական, այլև տեղագրական ու տնտեսական պայմանները, նույնիսկ վարչական կառավարման արդյունավետության խնդիրը: Իշխանություններին, այդ թվում Կովկասյան փոխարքայություններին, ձեռնտու է եղել, որ բազմազգ երկրամասի այս կամ այն նահանգում կամ գավառում արմատական բնակչությունը մյուս ազգությունների նկատմամբ բացարձակ մեծամասնություն չկազմի: Դա մասնավորապես վերաբերել է հայաբնակ գավառներին: Որպեսզի հայերը այս կամ այն վարչական տարածքում բացարձակ մեծամասնություն չկազմեն, շատ հաճախ տվյալ հայաբնակ գավառից անջատել են առանձին մասեր և միացրել հարևան թուրքաբնակ վարչական տարածքներին:

Ժամանակավոր կառավարությունը սահմանաբաժանման ահա այսպիսի ժառանգություն էր ստացել նախորդ ռեժիմից: Նման վիճակը

խիստ դժվարացնում էր ժողովրդավարական կարգախոսներով իշխանության եկած կառավարության գործը: Բայց, չնայած դրան, այդ կառավարությունը, ի տարբերություն ցարական վարչակազմի, փորձում էր զեմստվոյական կառավարում մտցնել լեզվի, դատարանի, հողաբաժանության, դպրոցների և այլ հարցերում, դրանով իսկ, ըստ էության, նպաստելով ազգային տարածքների համախմբմանը: Ձեմստվոյական հիմնարկների ստեղծումն իր հետևից անհրաժեշտաբար և անխուսափելիորեն առաջ էր բերում սահմանափոխության խնդիրը:

Ստ. Կամսարականը համախորհրդակցությանը ներկայացրեց իր կողմից կազմված՝ Անդրկովկասի վարչական տարածքների սահմանափոխության նախագիծը: Նրանում նա նկատի չէր ունեցել քաղաքական դիտումները, այլ հիմք էր ընդունել տնտեսական և էթնիկական սկզբունքները, այն է՝ ի մի բերել ու համախմբել միևնույն ցեղի բնակչության վայրերը: Դրա հետ միասին, ապագա զեմստվոյի գործունեությունը հեշտացնելու նպատակով, նա հաշվի էր առել նաև երկրամասի տարբեր տարածքների տնտեսության բնույթը:

Նախագծի համաձայն, Անդրկովկասի հայերով խիստ բնակեցված տարածքներից կազմվում էր հայկական մի նահանգ, որի մեջ պետք է մտնեին. ամբողջ Երևանյան նահանգը, Կարսի շրջանից՝ նրա լեռնային մասը: Հայկական այս նահանգի տարածությունը լինելու էր 60 հազ. քառ. վերստ՝ 2 միլիոն բնակիչներով, որոնցից հայերը կազմելու էին 1 միլիոն 200 հազար կամ նահանգի բնակչության ընդհանուր թվի 60 տոկոսը¹:

Այսպիսով, համախորհրդակցության պատգամավորները գործ ունեին հայաբնակ տարածքներում վարչական միավորներ ստեղծելու երկու տարբերակի հետ՝ կառավարության առաջարկած և ՕԶԱԿՈՄ-ի հավանությանն արժանացած տարբերակի, որը նախատեսում էր ստեղծել հայկական երեք նահանգ, և Ստ. Կամսարականի կազմած և համախորհրդակցության՝ նահանգների ու գավառների սահմանագծերի փոփոխության և զեմստվոյի հարցերի սեկցիայի հավանությանը արժանացած տարբերակի, որը նախատեսում էր մույն տարածքների վրա կազմակերպել հայկական մեկ նահանգ:

Քննարկման ընթացքում կարծիքները բաժանվեցին:

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1-2, 1992, էջ 60:

Հայ ժողովրդական կուսակցությունը, հաշվի առնելով հաղորդակցության դժվարությունները և ենթադրվելիք կենտրոնի մեծ հեռավորությունը ծայրագավառներից, կողմնակի էր երեք մահանգների տարբերակին:

Յ. Յ. Դաշնակցությունը, ընդհակառակը, հանդես եկավ մեկ մահանգ ունենալու առաջարկի օգտին:

Սոցիալ-դեմոկրատները, որոնք ընդհանրապես դեմ էին պետության մահանգային վարչական կառուցվածքին, այս անգամ էլ դեմ արտահայտվեցին հայկական առանձին մահանգ կամ մահանգներ ստեղծելու առաջարկին, ասելով, որ, մահանգային բաժանման ձգտելով, «հայերը ցանկանում են քաղաքական սահմաններ գծել և ոչ վարչական»¹:

Սոցիալ-դեմոկրատները դրա փոխարեն առաջին գիծ մղեցին վարչական բաժանման կանտոնային սկզբունքը՝ Շվեյցարիայի օրինակով: Նրանք առաջարկում էին գոյություն ունեցող մահանգներում կատարել ներքին բաժանումներ՝ միատարր համախմբումների համար ստեղծել կանոններ և դրանով իսկ ապահովել մահանգների փոքրամասնությունների ազգային-կրթական-մշակութային կարիքները՝ նորից հենվելով զենստվոյի վրա:

Հանդես գալով մահանգային և գավառային բաժանումների դեմ ընդհանրապես սոցիալ-դեմոկրատները գտնում էին, որ Անդրկովկասի ողջ տարածքում պետք է ստեղծել կանտոնային վարչական միավորներ՝ Թիֆլիսը դարձնելով այդ կանտոնների կենտրոնավայրը: Ըստ որում, նրանք այն կարծիքի էին, որ Թիֆլիսը չպետք է թողնել Վրաստանին, իսկ Բաքուն՝ թուրքերին, որ այդ երկու քաղաքները ոչ թե պետք է պատկանեն այս կամ այն ազգին, այլ պետք է լինեն անկախ կանտոններ, ինքնուրույն վարչական միավորներ՝ ինտերնացիոնալ բնույթով: Իսկ դրան կարելի էր հասնել Անդրկովկասի վարչական կանտոնային բաժանման սկզբունքը միասին ընդունելու միջոցով:

Չընդունելով կանտոնների ստեղծման առաջարկը, դաշնակցական պատգամավորները (Ա. Շահխաթունի, Ն. Աղբալյան, Խ. Կարճիկյան) իրենց ելույթներում տարակուսանք էին հայտնում, ասելով, որ սոցիալ-դեմոկրատները միշտ հանդես են եկել մեծ համախմբումների օգտին,

¹ Նույն տեղում, էջ 63:

բայց այժմ, չգիտես ինչու, հրապարակ են բերել այնպիսի առաջարկ, որի իրականացման դեպքում մեծապես կոժվարանան Անդրկովկասի բոլոր ժողովուրդների գործերը: Օրինակ, խաշնարածները չեն կարող սահմանափակվել մի կանտոնի ներսում, ասում էր Ավետիք Շահ-խաթունին. կամ մի՞թե կարելի է ամեն մի կանտոնում, ասենք ունենալ «կազյոննայա պալատա»:

Քանի որ բուռն վիճաբանություններն արդյունք չտվեցին և հնարավորություն չեղավ սահմանափոխության մասին որոշում կայացնել, ուստի համախորհրդակցությունն անհրաժեշտ գտավ այդ հարցի մասին բանաձևի ընդունումը թողնել հետագա նիստերից մեկում, սակայն համախորհրդակցության ընթացքում այդ հարցը այլևս չքննարկվեց:

1918 թ. մայիսի վերջին Անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախացումից հետո Ղարաբաղի խնդիրը դառնում է հայ-ադրբեջանական հարաբերությունների անկյունաքարը: Բաթումի բանակցությունների ընթացքում Ադրբեջանը պահանջում էր ոչ միայն Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը, այլև նույնիսկ Երևան քաղաքը: 1918 թ. հունիսի 13-ին Հայոց ազգային խորհուրդը դիմում է մուսուլմանական ազգային խորհրդին, որ երկու խորհուրդների համատեղ նիստում, որտեղ քննարկում էր երկու հանրապետությունների սահմանազատման հարցը, «Ձեր կողմից արվեց հայտարարություն, որ Ղարաբաղի և Հայաստանի արևելյան սահմանների մասին հարցը կդառնա մուսուլմանական ազգային խորհրդի քննարկման առարկան, որից հետո կվերականգնվեն բանակցությունները նշված հարցով»: Գրության վերջում խնդրում էր հայտնել, երբ է սպասվում բանակցությունների վերսկսումը¹: Գրության հաջորդ օրը Ադրբեջանի մուսուլմանական ազգային խորհուրդը կտրականապես մերժում է Հայոց ազգային խորհրդի առաջարկը, և պնդում, որ Ադրբեջանի և Հայաստանի տարածքների սահմանների մասին բանակցությունների ընթացքում երբեք Ղարաբաղի հարցը չի քննարկվել, իրենք կտրականապես մերժում են այդ առաջարկը և քննարկումները կարող են ընթանալ միայն հայկական և մուսուլմանական ազգային խորհուրդների, իբրև թե արդեն ձեռք

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 20:

բերված բանավոր համաձայնության շրջանակներում¹:

Իսկ ինչպես էին պատկերացնում հայերը Ղարաբաղը, ինչ էր այն:

1918 թ. հուլիսի 10-ին Թիֆլիսում Ղարաբաղի հայրենակցական միության կազմած տեղեկանքի համաձայն, այն իր մեջ ներառում էր Ելիզավետպոլի, Ջիվանշիրի, Շուշու, Կարյազինոյի և Ջանգեզուրի գավառների լեռնային շրջանները, որտեղ բնակվում էին 300 հազար հայեր (համաձայն «Կովկասյան կալենդարի», այսքան հայեր (299754) էին բնակվում նշված գավառներում 1916 թ. հունվարի 1-ին, բացառությամբ Ելիզավետպոլ քաղաքի (12125 հայ)²:

1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարությունը նշանակում է դոկտոր Սուլթանովին Ղարաբաղի գեներալ-նահանգապետ, որը իր մեջ ներառում էր Ջանգեզուրի, Շուշու, Ջիվանշիրի և Ջեբրաիլի (Կարյազինոյի) գավառները:

Դրան հակառակ, ԶԶ կառավարության հունվարի 21-ին Ջանգեզուրի և Ղարաբաղի հայկական շրջանները համարելով ԶԶ անբաժանելի մաս, որոշում է կազմավորել «Ջանգեզուր-Ղարաբաղյան երկրամասային (մարզային) խորհուրդ», որը այդ տարածաշրջանը կառավարելու էր ԶԶ գործող օրենքներով: Երկրամասի մանրամասն սահմանները ճշտված չէին:

Ղարաբաղի ազգային խորհուրդը 1919 թ. փետրվարին 4-րդ համագումարի օրերին Գայկական Ղարաբաղ է համարում Շուշու, Կարյազինոյի, Ջիվանշիրի (Ջրաբերդ), Ելիզավետպոլի (Գյուլիստան) գավառների Լեռնային գոտին:

Փաստորեն Ջանգեզուրի գավառը առանձնացվում է Ղարաբաղից, և ինչպես նշված է Գայկական Ղարաբաղի ժամանակավոր կառավարման կանոններում, ունենալու էր հատուկ կառավարում³: Ղարաբաղի հայության 5-րդ համագումարին (23-29 ապրիլի 1919 թ.) մասնակցում էին Գյուլիստանի ներկայացուցիչները և այստեղ գեներալ Շատելփորտը համաձայնվում է Գյուլիստանը մտցնել Ղարաբաղի կազմում:

Ջանգեզուրի հայոց ազգային խորհրդի բրիտանական հրամանա-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, ք. 25:

² Кавказский календарь на 1917 г., Тиф., 1913, с. 190-197.

³ Нагорный Карабах, с. 80-81.

տարության համար 1919 թ. մայիսի 30-ին կազմած տեղեկագրում ևս Ղարաբաղը և Ջանգեզուրը ներկայացված են որպես առանձին երկրամասեր և Ղարաբաղի կազմում ներառված են Խաչենը, Ջրաբերդը, Վարանդը և Դիզակը¹:

Ղարաբաղի Հայոց 7-րդ համագումարում Ղարաբաղի Լեռնային մաս է համարվում Շուշու, Ջիվանշիրի և Ջերբախի գավառները (Դիզակ, Վարանդան, Խաչեն, Ջրաբերդ)²: Ջրաբերդ անվան տակ հասկացվում է նաև Գյուլիստանը 13 հայկական գյուղերով, քանզի Ջիվանշիրի գավառապետի մեկ օգնականը և մեկ պրիստավը հատուկ զբաղվելու էին Գյուլիստանի շրջանով: Եվ երբ 1919 թ. սեպտեմբերի կեսերին Գյանջայի գավառապետ Բահրան բեկը փորձում է իրեն ենթարկել շրջանը, նույնիսկ ադրբեջանական իշխանությունները պահանջում են դադարեցնել ինքնական գործողությունները: Սակայն նոյեմբերի 1-ին Գյանջայի նահանգապետը հանձնարարում է գավառապետին իր ենթակայության տակ վերցնել շրջանի գործերի վարումը³:

1920 թ. մարտի 6-ին Ղարաբաղի հայության 8-րդ համագումարում մասնակցում էին Ղարաբաղի 5 շրջանների ներկայացուցիչները:

Ադրբեջանում Խորհրդային իշխանության հաստատումով իրադրությունը փոխվեց, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգնական ուժ ունենալով 11-րդ կարմիր բանակը, փորձում է արագ և ամեն գնով Ադրբեջանին միացնել Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը: Ստեղծվում է Ղարաբաղի նահանգային հեղկոմ, որը սկզբում ղեկավարում է նույն ինքը՝ դոկտոր Խոսրով բեկ Սուլթանովը: Մայիսի 12-ին Շուշի ժամանեց Ս. Օրջոնիկիձեն, որը ձերբակալեց Սուլթանովին: Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնեց հայ բոլշևիկներին՝ հանձինս Սաքո Համբարձումյանին և հաջորդ օրը հեռացավ Ղարաբաղից: Մայիսի 28-ին Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը երկրամասը հռչակեց խորհրդային և ստեղծվեց հեղկոմ Ս. Համբարձումյանի նախագահությամբ: Միաժամանակ ստեղծվեց Դաշտային Ղարաբաղի հեղկոմ Բ. Վելիբեկովի նախագահությամբ՝ Շուշի կենտրոնով: Հունիսի 16-ին այս հեղկոմները միավորվեցին: Նախագահ դարձավ Վելիբեկովը, ապա Ասադ Կարակը: Ջանգեզուրը այս նահանգում ունենալու էր գա-

¹ Նույն տեղում, էջ 226:

² Նույն տեղում, էջ 324:

³ Նույն տեղում, էջ 356-358:

վառի կարգավիճակ:

Արդեն 1920 թ. հուլիսի 10-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի բյուրոն Ղարաբաղի հարցը հեշտությամբ լուծելու համար որոշում է Ղարաբաղը մասնատել, վերացնել «Ղարաբաղյան մարզային կենտրոնը», այն նորից բաժանել երեք գավառների միջև՝ ստեղծելով առանձին գավառային հեղկոմներ:

Հայաստանում Խորհրդային իշխանության հաղթանակից հետո, հեղափոխական արբեցումից հետո շարունակվեց պայքարը Լեռնային Ղարաբաղի համար արդեն Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի միջև:

1921 թ. մարտի 1-ին Մոսկվայում Ադրբեջանի ներկայացուցիչ Բ. Շախբաղթինսկին Լենինին է ներկայացնում մի զեկուցագիր, որտեղ ներկայացնում է Անդրկովկասի վիճելի տարածքները: Ղարաբաղը նա ներկայացնում է մի ընդարձակ լեռնային մարզ, որի ցածրավայրում ապրում են մուսուլմանները, իսկ լեռնային մասում՝ հայեր: Ղարաբաղի հայ բնակչության քանակը նշում է 178 հազար, իսկ թուրքերին և քրդերին՝ 415 հազար, որտեղից են այս թվերը, անհասկանալի է: Ջիվանշիրի, Շուշու և Ջեբրաիլի գավառների հայ բնակչությունը 1916 թ. հունվարի 1-ին կազմում էր 142110, եթե դրան ավելացնենք Ելիզավետպոլի գավառի հայ բնակչությունը, կստացվի 198699 հազար (առանց Ելիզավետպոլ քաղաքի): Իսկ մուսուլման բնակչությունը երեք գավառներում կազմում էր 207890, Ելիզավետպոլի գավառի հետ՝ 347087 (առանց Ելիզավետպոլ քաղաքի):

Նշենք, որ Ջանգեզուրը ներկայացված է որպես վիճելի այլ տարածք:

1921 թ. ընթացքում Ադրբեջանին անցած Ջանգեզուրի գավառի Արևելյան հատվածից և Կարյազիմոյի գավառի արևմտյան մասերից (Հադրութ) կազմավորվում է Կուբաթլուի գավառը, որը՝ համաձայն «Բակինսկի ռաբոչի» թերթի 1922 թ. մարտի 8-ի հաշտարարագրության՝ համարվում է Ղարաբաղի 4 գավառներից մեկը (Շուշի, Ջիվանշիր, Կարյազիմո, Ղուբաթլի):

1923 թ. հուլիսի 1-ին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախագահությունը ստեղծում է Ղարաբաղյան հարցի հանձնաժողով, հանձնարարում յոթ օրվա ընթացքում որոշելու՝

1. Ղարաբաղի ավտոնոմիայի սահմանները,

2. Քուրդստանի կանոնադրությունը,
3. Ցածրադիր (կամ դաշտային) Ղարաբաղի վարչական բաժանումը:

Մի քանի օր անց՝ հուլիսի 7-ի և 16-ի ընթացքում հանձնաժողովը որոշում է Ջիվանշիրի, Շուշու և Կուբաթլիի գավառների այն հայկական և թուրքական գյուղերի ցանկը, որոնք մտնելու էին ԼՂ-ի կազմում:

Անհամաձայնություն է ծագում Շուշիի և Խոնաշենի հարցում, հանձնաժողովը որոշում է դրանք ընդգրկել ցածրադիր Ղարաբաղի կազմում: Արձանագրությունում արձանագրված է Ա. Ղարազյոզովի հատուկ կարծիքը, որ դրանք պետք է մնան ԼՂ-ի կազմում:

1923 թ. հուլիսի 7-ին Ադրբեջանի կենտրոնական ղեկըտ է հրապարակում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ» կազմավորման մասին: Ղարաբաղը բաժանվում է երեք մասի՝ Լեռնային Ղարաբաղ, Ցածրադիր Ղարաբաղ և Քուրդստան:

Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախագահները հուլիսի 16-ին քննարկելով Ղարաբաղյան հարցի հանձնաժողովի զեկուցումը, որոշում է Սկոբելևսկու հասարակության ռուսական գյուղերի հողերը (այսինքն Խոնաշենը) և Շուշի քաղաքը ընդգրկել ԼՂ-ի կազմում:

Ցածրադիր վայրերից ձևավորել 2 գավառ՝ Աղդամի և Ջեբրաիլի:

ROMAN PERCEPTIONS OF CAUCASIAN ALBANIA

The ancient history of Caucasian Albania has been the object of some excellent works, among which the most important are the pioneer, and still useful monograph of Kamila Trever, and the thorough examination of the written evidence by Aleksan Hakopyan¹. Despite the high level of the research, the specialists of the ancient world are unable to cope with this important subject, essentially for linguistic reasons: in fact, only a few ancient historians can read Russian and Armenian. Even though a young Italian scholar, Marco Bais, has recently synthesized the progress of the research it is still difficult to integrate the scientific achievements on Caucasian Albania within a more general context². But there is another implication: historiography on Albania in antiquity only considers the historical positive value of classical witnesses. We lack a critical investigation of the image of Albania seen through Roman eyes³.

As is well known, the most ancient source on Albania is the *Geography* of Strabo of Amaseia, written during the early first century⁴. According to several scholars, Strabo collected the materials for his des-

¹ **K. V. Trever**, *Очерки по истории и культуре кавказкой Албании (IV в. до н. э. -VII в. до н. э.)*, Moskva-Leningrad 1959; **A. A. Akorjan**, “Албания”-“Алуанк” в греко-латинских и древнеармянских источниках, Erevan 1987.

² **M. Bais**, *Albania caucasica. Ethnos, storia, territorio attraverso le fonti greche, latine e armene*, Milano 2001; see also my review in *Le Muséon* 115 (2002): 228-237.

³ See **C. R. Whittaker**, “Mental Maps and Frontiers. Seeing like a Roman” = *Rome and Its Frontiers. The Dynamics of Empire*, London-New York, p. 63-87.

⁴ **R. Nicolai and G. Traina**, *Strabone. Geografia. Il Caucaso e l'Asia minore. Libri XI-XII*, Milano 2000; see recently M. Bais, “The southern border of Caucasian Albania (1st B. C. -2nd A. D.): calling up the sources”, *Bazmavëp* 153 (2005): 331-345 (who partly holds the old-fashioned argument of Strabo's unreliability). The most recent critical edition is now S. Radt, *Strabons Geographika. Band 3. Buch IX-XIII: Text und Übersetzung*, Göttingen 2004.

cription of the country from sources related to Pompey's expedition, at the time of the last Mithridatic war, namely Posidonius of Apamea and Theophanes of Mitylene. Nevertheless, it will be reasonable to propose at least an author somewhat later, that is Quintus Dellius, a general of Mark Antony who left his own account of the Oriental campaign of 37-36 BC¹.

Strabo's account of the Albanians is in Book XI, which includes a description of the Caucasus and Central Asia. Yet he had already mentioned the Albanians in the excursus at the end of Book VI, which is a general description of *imperium Romanum* at the end of Augustus' principate:

“As for the Armenians, and the peoples who are situated above Colchis, both Albanians and Iberians, they require the presence only of men to lead them, and are excellent subjects, but because the Romans are engrossed by other affairs, they make attempts at revolution -- as it is the case with all the peoples who live beyond the Ister in the neighborhood of the Euxine, except those in the region of the Bosphorus and the Nomads, for the people of the Bosphorus are in subjection, whereas the Nomads, on account of their lack of intercourse with others, are of no use for anything and only require watching” (VI, 4, 3, tr. Loeb).

Strabo distinguishes the nomads, tribes without an identity, from *ethnē* as the Armenians, the Albanians, and the Iberians. He develops this conception, which is somewhat artificial, from Hellenistic ethnography. However, despite this methodological schematization, we know from comparative ethnology that Strabo's account of the Albanians can be generally trusted. Moreover, the presence of Rome (and of Parthia) was actually highlighting the existence of the Caucasian peoples (XI, 6, 4)². But this passage shows the consideration of the whole Caucasus according to Augustus' policy: here the Albanians and the Iberians, that is, the kingdoms of Albania and Iberia, are cited together, just as we find them

¹ See R. Nicolai, “Strabone e la campagna partica di Antonio. Critica delle fonti e critica del testo”, in G. Traina (ed.), *Studi sull'XI libro dei Geographika di Strabone*, Galatina (Lecce, Italy) 2001: 95-126.

² F. Thélamon, “Amazones et Gargaréens: la disjction des masculins et des féminines au Caucase”, *Mélanges Pierre Lévêque*. 7. Anthropologie et société, Paris 1993: 319-338, p. 325).

in the accounts of other historians of the first century, such as Livy (in the *Periochae*), Velleius Paterculus, and Josephus.

This logic is not different from that of Strabo's Book XI. Actually, the Geographer separates the peoples of Subcaucasia in two blocks: Iberia/Albania, and Armenia. Iberia and Albania are described in paragraphs 3 and 4, before the accounts on the Amazons, the Caspian Sea, and Central Asia. Following a geographical logic, Strabo then describes Media and Armenia, which closes Book XI; next Book, XII, will consider central-east Anatolia.

The decision to consider Armenia as a separate entity is due to the greater importance of this kingdom. Such a difference is echoed in the *Res gestae divi Augusti*, where the king of Armenia is given a more important consideration than "the kings of the Albanians, Hiberians and Medes." On the other hand, Strabo points at the "subversive activities", expressed by the verb *neōterizō*, which we find in Zonaras/Dio Cass. LV, 10, 8 to describe the crisis of 2 BC, when the Armenians refused to accept the king imposed by Augustus, the Median Artawazd¹.

But the separation of the Armenian highlands from the Iberians and the Albanians was not merely a historical topos: actually, Roman generals considered the Iberian and the Albanians as a unitary strategic sector. A passage of Strabo (XI, 14, 15) where the city of Tigranokerta is put "near Iberia" puzzled the philologists. The editors of Strabo proposed several corrections of the preserved text *kai polin ektize plēsion tēs Ibērias metaxy tautēs kai tou kata ton Eufratēn zeugmatos*, changing the name of Iberia according to their commonsense: therefore, the name of Iberia has been changed in Nisibis, Assyria, or even Armenia. More prudently, Radt preserves the name of Iberia in his text, adding the *cruces desperationis*². Sir Ronald Syme is the only scholar who tried to explain the name of Iberia in Strabo's passage on Tigranokerta. According to him, in this

¹ For a general account see M. -L. Chaumont, "L'Arménie entre Rome et l'Iran. I. De l'avènement d'Auguste à l'avènement de Dioclétien", in *Aufstieg und Niedergang der römischen Welt* 9. 1, Berlin and New York 1976:71-194, p. 73 ff.

² See both text and apparatus criticus in Radt, *Strabons Geographika* cit., p. 400.

context, Iberia was a geopolitical denomination of Subcaucasia¹. But this is not necessary, since we know of the existence of other foundations by Tigran called Tigranokerta. In his passage on Tigranokerta (actually referred to the more famous foundation in Mesopotamia), Strabo may have added a geographical information concerning a different Tigranokerta, located in the eastern part of the empire of Tigran the Great: archaeological evidence of this site seems now to be proved by the first issues of the expedition directed by Hamlet Petrosyan². If this hypothesis is correct, then we have more evidence of the constant connection of Albania and Iberia. This tie originated from the very beginning of Roman presence in the Caucasus, and explains Pompey's strategy in 65 BC. Instead of chasing Mithridates, who fled from Anatolia to the Bosphorus, he decided to control the whole of the Caucasus. Since such a decision could have been considered unsound to a great part of the Senate, Pompey developed his own propaganda. As the Iberians and the Albanians were not regarded as fierce enemies, he insisted on the mythological background of the region, and especially highlighted the tradition of the Amazons. At XI, 4, Strabo puts the Albanians in a sort of an intermediary position between nomadic and civilised life: although they are "more inclined to the shepherd's life and closer akin to the nomadic people", they are not "wild", and "only moderately warlike" (XI, 4, 1). Even though they fight like the Armenians, "both on foot and on horseback, both in light armour and in full armour", the Albanians "take no forethought for war or for government or farming" (XI, 4, 4). Pompey had to be aware of this inclination, when he decided to occupy their land instead of chasing Mithridates. The Albanians could eventually gather a reasonably large army, as both Strabo and Plutarch say. On the other hand, he had to justify his choice at least in ideological terms, so he exploited the ethnographic traditions on the Amazons, which gave him a mythological background in order to justify the deployment of Roman troops to a less dangerous strategic sector, as witnessed by Plutarch's *Life of Pompey*.

¹ R. Syme, *Anatolica. Studies in Strabo* (ed. By A. Birley), Oxford 1995, p. 63.

² See H. Petrosyan and al., in the present volume, p. 000.

The ‘shepherd attitude’ of the Albanians is highlighted by the authors who “have made expeditions there together”. Strabo ‘s sources remember a people leading a “Cyclopeian” mode of life. (XI, 4, 2), exploiting a land so extraordinarily rich and fertile, that they did not have to develop particular skills. On the other hand, Albanians (and their dogs) love hunting; but in this case too, they did not develop a particular skill. They add to this basic attitude their engagement (XI, 4, 5). In a way, they were considered barbarians. In 2 AD, king Tigran of Armenia was killed in a military operation against some “barbarians”: perhaps they can be considered as tribes making up part of the Albanian kingdom. After all, according to Strabo, the ethnogenesis of the Albanians was recent. Formerly they had a “king”, for each of the 26 groups composing the tribes, distinguished “according to their several languages” (XI, 4, 6). One of the most important ethnic groups of Albania was no doubt the *Lp’ink’*, *Lupenii* according to Pliny *nat.* VI 29. This name was actually removed from classic geography, as we know from the Greek writer Abydenos, now lost, but fragments of whom are preserved by Eusebios and Movsēs Xorenac’i II ¹. The latter (*FHG* IV f. 8; *FGrHist* 715 f. 1, see Eus. *Chron.* I, p. 58 s.) reports the attack by Nebuchanedzzar *i Libiac’woc’ ew i Veriac’woc’ ašxarh*, that is “over the land of the Libyans and of the Verians (Iberians)”. This tradition goes back to the *Indikà* of Megasthenes, and is also recorded by Josephus (*Ant. Iud.* 10. 227: *katastrepsasthai gar auton fēsi Libyēs tēn pollēn kath’Ibērian*). But, in the context of MX 2. 8, the fragment of Abydenos refers to the mythical origins of the Gugarac’ik’, and follows immediately his account on the origins of the Albanians. Xorenac’i prefers the variant *Libiac’woc’*, to the *lectio facilior*, *Libēac’woc’* we find in the Armenian version of Eusebius (*Libēac’woc’ ew yIberac’woc’*)².

However, at the time Strabo was writing, only one king was ruling the Albanians. The ancient sources keep mentioning the Albanians

¹ A. Topchyan [T’op’č’yan], *The Problem of the Greek Sources of Movsēs Xorenac’i’s History of Armenia*, Leuven 2006.

² See G. Traina, “Due note sull’identità politica nel Caucaso antico”, in C. Bearzot, F. Landucci, G. Zecchini (eds.), *Gli stati territoriali nel mondo antico*, Milano 2003: 317-26.

together with the Iberians, as does Strabo in Book VI; yet Strabo's ethnographic construction gives both peoples a different evaluation. "Perhaps a people of this kind", he says of the Albanians, " have no need for a sea" (XI, 4, 3), which is not the case of the Iberians, more sensible to a Hellenic way of life.

Roman understatement of the Albanian military force can possibly explain why Plutarch (*Pomp.* 45, 2) does not mention the Albanian king Oroises, as Appian does, in the account of Pompey's triumph of 62 BC. According to Trever, both Albanians and Iberians were considered as lesser enemies; moreover, they had not lost their land as Mithridates and Tigran had. But Pompey knew very well the importance of putting together the kingdoms of the Caucasus. Ancient historians too often forget that Armenia was not merely a "buffer state" between Rome and Iran, as could suggest a superficial and modernistic analysis of the sources. The example of Tigran the Great was too recent, and the only way to prevent his successors from taking a steady position in the Caucasus was to change the dynastic balance, and to endorse the position of the axis Albania-Iberia as an alternative. This axis is attested, at least in Roman accounts, until the reign of Hadrian. For example, in his short text attesting his expedition against the Alans, Arrian of Nicomedia says that he swept away the Alans from Armenia, then put in order the Iberians and the Albanians. The same can be said of the Flavian policy: according to a recent reconstruction the fragment D of the *cursus honorum* of Neratius Pansa from Saepinum (*Année Épigraphique* 1968, n° 145) can be integrated as *[leg(atus) Aug(usti) exercit]us qui in A[lbaniam et Hiberiam missus est*, which gives new evidence to the military interpretation of the situation¹. The later policy of the Parthian Empire resulted in the Albanian people definitely coming under Iranian control.

¹ G. Migliorati, in A. Valvo, G. Manzoni (eds.), *Analecta Brixiana*, Milano 2004.

**ՐԱՖՅԻՆ ԵՎ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՅ ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԻ ՀԱՅ
ԱԶՆՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Թեև հնադարյան և միջնադարյան հայ ազնվականության ծագումն ու կառուցվածքը խորապես ուսումնասիրված են¹, դեռևս մեծ աշխատանք կա տանելու արդի ժամանակներում այս հասարակական դասի զարգացման շուրջ:

Մասնավորապես Արևմուտքում, գիտնականները մեծապես անտեսել են այս նյութը: Այնուամենայնիվ, կարևոր բացառություն են Կիրիլ Թումանովը և Ռոբերտ Յյուսենը, ովքեր ամենացորդ մվիրվել են արդի ժամանակների հայ ազնվականության մանրակրկիտ ուսումնասիրմանը, սակայն նրանց աշխատանքները գլխավորապես ծագումնաբանական բնույթի են: Ինչ վերաբերում է Խորհրդային Հայաստանին, այդ ժամանակաշրջանում նշված ոլորտի նկատմամբ պատմական հետաքրքրությունը զգալիորեն տուժեց այն գաղափարախոսական պայմանավորումից, որը ստիպում էր ազնվականությունը դիտարկել որպես

¹ Տես **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, Санкт-Петербург 1908 (Armenia in the Period of Justinian, translated with partial revisions, a bibliographical note and appendices by **N. Garsoïan**, Lisboa 1970), **Հ. Մանանդյան**, Ֆեոդալիզմը հին Հայաստանում: Արշակունիների և մարզպետության շրջան, Երևան 1934; **E. Kherumian**, Esquisse d'une féodalité oubliée, in "Vostan. Cahiers d'histoire et de civilisations arménienne", 1948-1949, n. 1, էջ 7-56; **А. Г. Сукасян**, Общественно-политической строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963; **С. Toumanoff**, Studies in Christian Caucasian History, Georgetown 1963; idem, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de la Caucasic chrétienne, Roma 1976; **Ս. Կրկյաշերյան**, Նախարարներն ու նախարարությունները Հին Հայաստանում, «Լրաբեր հաս. գիտ.», 1978, 10, էջ 60-75; **С. Toumanoff**, Les dinasties de la Caucasic chrétienne de l'Antiquité jusqu'au XIX siècle. Tables généalogiques et chronologiques, Roma 1990; **Գ. Սարգսյան**, Մովսես Խորենացու նախարարական տոհմերի ցանկը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 3, էջ 73-70:

շահագործող դասակարգ՝ «ավատատիրական» հասարակարգի կուռ կաղապարի շրջանակում:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ չափազանցություն չի լինի ասել, որ արդի ժամանակների ազնվականության ուսումնասիրությունը խոստանում է լինել շատ արգասաբեր: Նախ և առաջ, ըստ իս, այն կարող է նվազեցնել հայ ժողովրդի կերպարի նույնացումը վաճառականի և աշխարհաքաղաքացու կերպարի հետ, որը չի համապատասխանում հայերի հասարակական ընդհանուր կառուցվածքին նույնիսկ ազգային թագավորությունների անկումից հետո: Որքան էլ որ հայ վաճառականները մեծ դեր ունենային ԺՁ-ԺԸ (XVII-XVIII) դարերի համաշխարհային առևտրի մեջ, այն ընդգրկում էր փոքրաթիվ և սփռված հատվածն այս ժողովրդի, որի գերակշիռ մեծամասնությունը կապված մնաց հայրենի երկրին: Ժամանակակից գիտնականներից մեկը նկատում է, որ «...հայերի առևտրական կարողությունների կարծրատիպերը ստվեր են նետում անցյալում այս ժողովրդի ձեռքբերումների վրա որպես ռազմիկներ, որոնք ծառայել են ոչ միայն հայրենի իշխանական տներին, այլև հռոմեական, սասանյան և բյուզանդական կայսրություններին»¹: Հանդգնություն չի լինի ասել, որ այս չափազանցված ուշադրությունը սփյուռքային և առևտրական տեսանկյունից գրեթե համապատասխանում է «ընչաքաղցության և վախկոտության» բացասական հատկանիշներին, որոնք արդի ժամանակներում հաճախ վերագրվում են հայերին²:

Նման կարծրացած նախակերպարն, իրոք, զարմանք է առաջացնում, եթե հիշենք այս ժողովրդի անցյալում վայելած հեղինակությունը: Օրինակ, հնադարյան քրիստոնեական ավանդույթի հանրահայտ պատմիչ Փիթեր Բրաունը նշում է, որ «...ինչպես շվեյցարացի Landesknechten կամ նոր ժամանակների շոտլանդացի Highlanders (լեռնականները), այնպես էլ հայերը մեծ հռչակ էին վայելում երկու կայսրությունների

¹ R. G. Krikorian, From swords to plowshares...back to swords: the Reconstruction of Armenian Martial Identity, "The Annual of the Society for the Study of Caucasias", (6-7) 1994-1996, էջ 29:

² Այս քննարկ շուրջ տե՛ս R. G. Suny, Images of Armenians in Russian Empire, in R. G. Hovannisian (ed.), The Armenian Image in History and Literature, Malibu (Ca.), էջ 105-137 և A. Ferrari, L'eroe, il mercante, il sovversivo: figure dell'Armeno nella cultura russa pre-rivoluzionaria, in A. Pavan, G. Giraudo (a cura di), Le minoranze come oggetto di satira, I, Padova 2001, էջ 180-188:

(բյուզանդական և պարսկական) բանակներում: Նրանք սերում էին մի մշակույթից, որը ծնունդ էր հերոսների»¹: Այս հնամենի վարկը սերտորեն կապված էր հայ ազնվականության հետ, որի մտավոր կառուցվածքը հիմնավոր նշանակություն էր տալիս ռազմական արժեքներին: «Ընչաքաղցության և վախկոտության» հիմքն իրականում կարող է առաջացած լինել ազնվական տների գրեթե ամբողջական ոչնչացումից հետո, որը մարմնավորում էր հայերի ռազմական առաքինությունները, և նրանց մեջ մոր առևտրական կամ տնտեսական վերաբերմունքի ի հայտ գալով, որն այս ժողովրդին հայտնի դարձրեց ողջ աշխարհում, որոնք, սակայն, ոչ միշտ վայելեցին սեր ու հարգանք: Միգուցե պատահական չէ, որ հայերը շարունակեցին ցուցաբերել երբեմնի ռազմական առաքինությունները գլխավորապես այնտեղ, (ինչպես Ջեյթունում կամ Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում), որտեղ զանազան պատճառներով ազգի ազնվականությունը կարող էր վերապրած լինել, պահպանելով թե՛ ավանդական ռազմիկի խառնվածքը և թե՛ առաջնորդելու կարողությունը:

Այս ամենից զատ, կարծում եմ, որ արդի ժամանակաշրջանի հայ ազնվականության մոր և ոչ լոկ ծագումնաբանական ուսումնասիրությունը լայնորեն կխորացնի մեր գիտելիքը հայ ժողովրդի ընդհանուր պատմության շուրջ:

Անձամբ մի քանի տարի առաջ սկսեցի զբաղվել Անդրկովկասի հայ ազնվականությամբ, թարգմանելով Վենետիկում Մխիթարյան միաբան Ղուկաս Սեբաստացու կողմից մոտավորապես 1737 թվականին խմբագրված *Դավիթ Բեկի* ապստամբության ժԸ դարի ժամանակագրությունը², իմ հերթին այս նյութին նվիրելով մի քանի ներածական հոդվածներ³: Սույն թեմայի վրա աշխատելով, բնականաբար բախվեցի

¹ P. Brown, *The Rise of the Western Christendom. Triumph and Diversity*. AD 200-1000, Cambridge (Ma.), 1996, էջ 169:

² *Le guerre di Dawit' Bëk, un eroe armeno del XVIII secolo* (ներածություն, թարգմանություն և մեկնաբանություններ), Milano 1997:

³ *Nobility and Monarchy in Eighteenth Century Armenia. Introduction to a New Study, «Iran & the Caucasus: Research Papers from the Caucasia Centre for the Iranian Studies»*, Երևան-Լայդեն, Brill, 2004, 8. 1, էջ 53-63 [Լույս է ընծայվել նաև. *Armenian Studies Today and Development Perspectives. International Congress, Yerevan, September 15-20, 2003. Collection of Papers, Erevan 2004*, էջ 329-333] և *Մենք մեծ Հայաստանացու իշխանքներս և մելիքներս*. Introduzione allo studio della nobiltà armena in Transcaucasia nel XVIII secolo, in V.

Ղարաբաղի մեկիքներին նվիրված Րաֆֆու հայտնի աշխատությանը, և նպատակահարմար գտա պատրաստել դրա իտալերեն թարգմանությունը, առաջինը արևմտյան լեզվով, որը լույս կտեսնի հետագա ամիսների ընթացքում:

ՐԱՖՖԻՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Հայտնի հայ գրողի այս աշխատությունը սերտորեն կապված է այն բազում պատմական վեպերին, որոնք կազմում են Րաֆֆու ստեղծագործության ամենանշանակալի մասը: Պատմավեպի ժանրին դիմելը ծառայեց, ըստ Աբովյանի մեծ դասի, որպես առանձնաշնորհյալ միջոց ազգային ինքնության և հայրենասիրության դասեր քաղելու համար: Այնպիսի վեպերում ինչպիսիք են *Ջալալեդդին* (1877), *Խենթը* (1880), *Դավիթ Բեկ* (1881-1882), *Կայծեր* (1883-1887), *Սամվել* (1888) և *Պարոյր Հայկազն* (1894, ետմահու) Րաֆֆին նկարագրում է նոր մարդկանց, զերծ անցյալի նախապաշարունմներից ու համակամությունից, որոնց մեջ առատորեն մեղադրվում էր Հայ Եկեղեցու քարոզչությունն այն համոզումով, որ ազատագրման միակ ուղին զինված դիմադրությունն է, որին սակայն պետք է նախորդեր ժողովրդի մեջ համբերատար պրոպագանդան: Ազդեցությունն այս պատմավեպերի, որոնց միջոցով Րաֆֆին մղում էր իր հայրենակիցներին ազատագրական շարժման, գործելու նաև զենքը բռունցքների մեջ, առանց սպասելու դրսից փրկության, իրոք նշանակալից եղավ հայ հասարակության վրա այնպիսի ժամանակաշրջանում, երբ այն տեսնում էր առաջին շոշափելի քայլերն այդ ուղղությամբ: Այս իմաստով Րաֆֆին դարի ամենից ներկայանալի և ազդեցիկ հայ գրողն էր, որը մարմնավորում էր իր ժողովրդի ազգային և միևնույն ժամանակ հասարակական ձգտումները¹:

Սակայն այսօրվա նյութս ոչ թե գրական, այլ պատմագրական բնույթի է: *Խամսայի մեկիքությունները. 1600-1827* աշխատությունն, իրոք, նշված ժամանակաշրջանի Ղարաբաղի և հատկապես նրա

Calzolari, A. Sirinian, B. L. Zekiyan (a cura di), Dall'Italia e dall'Armenia. Studi in onore di Gabriella Uluhogian, Dipartimento di Paleografia e Medievistica, Università di Bologna, Bologna 2004, էջ 181-205:

¹ Տե՛ս L. Nalbandian, The Armenian Revolutionary Movement, Berkeley 1967, էջ 57.

ազնվականության, այսպես կոչված *մելիքների*¹, իսկական պատմությունն է: Արդեն *Դավիթ Բեկի* մեջ Բաֆֆին շոշափել էր այդ թեման և, իրոք, այս երկու ստեղծագործությունները սերտորեն կապված են միմյանց նախ և առաջ ազգային ազնվականության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության և արդի հայոց պատմության մեջ նրա ունեցած դերի համար:

Բաֆֆին կարողացել է իրականացնել այս պատկերը հիմնականում այն փաստի շնորհիվ, որ քաջատեղյակ էր Ղարաբաղի մելիքների պատմությանը, որոնց մոռացության էր մատնել հայ հասարակությունը արդեն ժԹ. դարի երկրորդ կեսին: Հենց ինքը՝ Բաֆֆին հիշում է, որ

¹ Մելիքների մասին, բացի Բաֆֆու միշտ արժեքավոր հանդիսացող գրքերից, չնայած որոշ անձգրտությունների, (համասյի մելիքութունները. 1600-1827. Սիւթեր հայոց նոր պատմութեան համար, Թիֆլիս 1882, տպված նաև նույնի երկերի ժողովածու, հ. IX, Երևան, 1987, էջ 417-625, որի ռուսերեն թարգմանությունը՝ (Меликства Хамсы, Ереван 1991) և Ա. Բեկնազարյանցի աշխատությունից, (Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886), ուշադրության արժանի են նաև հետևյալ ուսումնասիրությունները և գրքերը: Առաքել Վարդապետ, Սիւթեր հայ մելիքութեան մասին. I պրակ. Դիզակի մելիքութիւնը. Վաղարշապատ 1913 և Կարապետ Եպիսկոպոս (Տէր Սիմասեան), Հայ մելիքութեան մասին. II պրակ. Դոփեանք և Մելիք-Շահնազարեանք. Էջմիածին, 1914: Խորհրդային շրջանում մելիքության մասին գրված ոչ բազմաթիվ աշխատանքներից նշենք մի քանի հոդվածներ. Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Սատենադարանի» 8 (1967), էջ 191-227, Հ. Փափազյան, Մելիք Եգանի ընդունարանի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիտ.» 1985, n 5, էջ 75-78 և Մ. Սարգսյան, Մելիքական բնակելի համկառնայց Տող ավանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, 3, էջ 132-140. Վերջերս լույս տեսած գործերից նշենք. Ա. Լույան, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, և Ա. Մաղալյանի հոդվածները. Գյուլիստան գավառի տիրակալ Մելիք-Բեգլարյանի տոհմածառը, «Կրթությունը և գիտությունը Արցախում», 2003, 1-2, էջ 11-14, Ջրաբերդի գավառի տիրական Մելիք-Իսրայելի տոհմածառը, «Հայոց Պատմության հարցեր», 4, 2003, էջ 36-40, Արցախի Գիւլիստան գավառի տիրական Մելիք-Բեգլարեանների Հնդկաստանի ճյուղը, «Հանդէս անսորեայ», 2004 (1-12), էջ 475-491, Արցախի Գյուլիստան, Ջրաբերդի և Դիզակի գավառների մելիքական տների տոհմածառերը, «Բազմավէպ», 2004, էջ 93-121. Արևմտյան հայագետներից այս թեմային անդրադարձել է Ռ. Հյունսենը իր մի քանի հոդվածներում. R. Hewsen, The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study, «Revue des Etudes Arménien», 1972, n. 9, էջ 285-329; The Meliks of Eastern Armenia II, 1973-74, n. 10, 282-300; The Meliks of Eastern Armenia III, 1975-76, n. 12, էջ 219-243; The Meliks of Eastern Armenia IV, XIV (1980), pp. 459-470; Three Armenian Noble Families of the Russian Empire [The Meliks of Eastern Armenia V], «Հասկ», 1981-1982, էջ 389-400; The Meliks of Eastern Armenia VI: the House of Aghamaleanc', «Բազմավէպ», 1984, էջ 319-333:

մինչ 1882 թվականին իր աշխատանքը կամաց-կամաց լույս էր տեսնում Թիֆլիսի «Մշակ» օրաթերթի համարներում, ծանոթները նրան հանդիպելիս ասում էին՝ «Լավ է», բայց ապա հետևում էր հարցը. «Որտեղի՞ց ես քաղել այդ տեղեկությունները... Այս հարցի մեջ, որ ինձ հաճախ էր ուղղվում, զգացվում էր մի տեսակ կասկած, անվստահություն... ծանոթներիցս ոմանք նույնիսկ հարցնում էին: ... Եթե իրոք ունեցել եմք Ղարաբաղի այդ իշխանապետությունները, ինչու՞ չգիտեիմք այդ մասին...»:

Այս աշխատության հրատարակությունից հետո մինչդեռ Ղարաբաղի մելիքների պատմությունը վերջնականապես հայերի, հատկապես արևելահայերի, ազգային հիշողության մաս կազմեց: Ի դեպ, մի քանի տարի անց (1886) Պետերբուրգում հրատարակվեց մեկ այլ եզակի աշխատություն, որը շոշափում էր գրեթե նույն նյութերը: Խոսքը վարդապետ Մակար Բարխուդարյանի արդի հայերեն թարգմանությամբ *Գաղտնիք Ղարաբաղի* հատորյակի մասին է, որի գրաբար բնօրինակը ենթադրվում է, որ գրվել է ոմն Ապրես Բեկնազարյանցի կողմից: Այն հիմնականում նվիրված է շրջանի ազնվական ընտանիքների տոհմաբանությանը, որի ստույգ լինելուն թերահավատությամբ են վերաբերվել շատերը, այդ թվում և Բաֆֆին:

Խամսայի մելիքությունները աշխատությամբ Բաֆֆին ձգտել է վերականգնել արդի հայ պատմության կարևոր էջերից մեկը: Եւ ոչ թե սոսկ ուսյալ ոգու մղումով, այլ քաղաքական և մշակութային այնպիսի ծրագրի շրջանակում, որն ուղղված է ժամանակակից հայ ժողովրդի հաստատմանը. մի ժողովրդի, որն իրազեկ է իր անցյալին, բայց միաժամանակ միտված է ապագայի կերտմանը: Այս աշխատությունն, ուստի, պետք է ըմբռնել Բաֆֆու գաղափարական կողմնորոշման լույսի ներքո: Նա համոզված էր, որ Հայաստանի քաղաքական վերածնունդը կարող էր տեղի ունենալ ոչ թե մեծ տերությունների (և ոչ իսկ Ռուսաստանի) միջամտությամբ, այլ միայն իր ժողովրդի ինքնուրույն գործողությունների շնորհիվ, որոնք նախ և առաջ պետք է հիմնված լինեին կրթության ընդարձակ գործունեության, ինչպես նաև ինքնապաշտպանության գործուն գարգացման վրա: Այս առումով Ղարաբաղի մելիքները, որոնք պահպանվեցին ԺԸ. (XVIII) դարի ողջ ընթացքին և մասամբ ԺԹ. (XIX) դարի առաջին տարիներին, իրենց ռազմական և ժողովրդին առաջնորդելու ունակությամբ կազմում են արտասովոր հետաքրքրության ուսումնասիրության առարկա: Բացի դրանից,

ինչպես երևում է նրա ազգանունից (Մելիք-Յակոբյան), Ռաֆֆին սերում էր արևելահայ ազնվականական այս ընտանիքներից մեկից¹:

Այս բոլոր գործոնները նրան մղեցին ձեռնարկելու երկար հետազոտություն այդ բնագավառում մի ճանապարհորդությամբ, որը սկիզբ առավ 1881 թվականի հուլիսի վերջին Թիֆլիսից, որտեղ Ռաֆֆին բնակվում էր ինչպես ռուսական կայսրության հայ մտավորականության մեծ մասը: Դեպի Ղարաբաղ կատարած այս ճամփորդությունը տևեց երկու ամիս, որի ընթացքում Ռաֆֆին հյուրընկալվեց մենաստաններում և ընտանիքներում: Նրան երբեմն ընդունում էին հյուրասեր կերպով, երբեմն էլ մեծ անվստահությամբ, ինչպես ինքն է պատմում *Խամսայի մելիքությունների* վերջում: Այս ամենի արդյունքում գրողը հավաքեց զանազան փաստաթղթեր շրջանի մելիքությունների վերաբերյալ. ձեռագրեր, արծանագրություններ, հիշատակարաններ, տոհմածառեր և բերանացի պատմություններ: Յետագա ամիսներին ուսումնասիրեց այս նյութերը, և 1882 թվականի ընթացքում *Խամսայի մելիքությունները* հրատարակվում է *Մշակի* էջերում: Ջուզահեռաբար, չնայած գրաքննության հետ ունեցած որոշ խնդիրներին, աշխատությունը լույս տեսավ նաև առանձին հատորով², կրկին Թիֆլիսում, որտեղ վերատպվեց 1895 թվականին: *Մշակի* մեջ հրատարակման ընթացքում ընթերցողների մոտ ծագած որոշ հարցերին պատասխանելու նպատակով Ռաֆֆին աշխատության վերջում գետեղել էր գործածած աղբյուրների ցանկը, միաժամանակ խոստանալով, որ եթե նյութը լավ ընդունելություն գտներ, ապա մի երկրորդ հատոր էլ լույս կընծայեր, ներառելով այն բոլոր աղբյուրները, որոնց միջոցով կազմել էր առաջինը, և հրավիրելով ամենքին իրեն այլ նյութեր ուղարկել:

Թեև այդ երկրորդ հատորը երբեք լույս չտեսավ և ընդարձակ ու անմիջական հաջողություն գտնելու գրողի հույսը մասամբ հիասթափություն ապրեց, այդուհանդերձ Ռաֆֆու այս աշխատությունն աննկատ չանցավ: Օրինակ, Արփիար Արփիարյանը ցանկություն էր հայտնել հրատարակել *Արևելքի* մեջ, սակայն գրաքննական պատճառներով ստիպված եղավ սահմանափակվել ծաղկաքաղերով, որոնք լույս տե-

¹ Տե՛ս R. Hewson, *The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study*, էջ 308, ծ. 69:

² Ռաֆֆի, *Երկերի ժողովածու*, հ. IX, Երևան, 1987, էջ 696:

սան 1884-1885 թվականերին թերթի զանազան համարներում: Այդ ժամանակաշրջանի հայ գիտնականները, ինչպես Հայկունին և Լեոն մեծապես գնահատեցին *Խամսայի մելիքությունները*, մինչդեռ առավել քննադատական եղավ Գալուստ Շիրմազանյանի դիրքորոշումը, ըստ որի ծայրաստիճան տեղի էր տրված բերանացի ավանդությանը, և, որը 1886 թ. *Նոր դարի* մեջ ընդգծեց որոշ անճշտություններ¹:

Ինչ գնահատական կարելի է տալ այսօր Րաֆֆու այս ուսումնասիրությանը: Պատասխանը կարող է որքան գրական, այնքան էլ պատմագրական բնույթի լինել: Սկսենք առաջին տեսանկյունից: Ըստ իս, խոսքն իրոք արժեքավոր ստեղծագործության մասին է, որի մեջ Րաֆֆու պատմողական տաղանդը ներկա է առաջին էջից մինչև վերջինը, բայց միևնույն ժամանակ առանց երկարաբանությունների, որոնք ընդհանրապես ծանրացնում են հաճախ վեպերը: Հուսով եմ, որ հայի և ռուսի օրինակով իտալացի ընթերցողը ևս այս առումով կկարողանա գնահատել արժեքը:

Պատմական տեսանկյունից ևս այս գործն ունի շատ արժանիքներ: Ինչպես վերջերս անդրադարձավ Ռուանդ Ավետիսյանը, *Խամսայի մելիքություններով* և Ապրես Բեկնազարյանցի վերոհիշյալ *Գաղտնիք Ղարաբաղի* գրքին նվիրված իր մեծ հոդվածով, որի զեղարվեստական արժեքն ընդունելով, այնուամենայնիվ, ցույց է տալիս պատմական անհիմն լինելը², Րաֆֆին մեծ ավանդ ունի հետագա արևելահայ պատմագրության մեջ, հատկապես այն ամենին ինչը վերաբերում է լեզվի գործածությանը³: Իրոք անհրաժեշտ է հիշել, որ մինչ այդ ռուսական կայսրության մեջ պատմական աշխատություններ լույս չէին տեսել հայերեն լեզվով, բացառությամբ Ալեքսանդր Երիցյանցի (1801-1902) *Ներսես Աշտարակեցին* գործից (Թիֆլիս 1877): Իրոք, այնպիսի արժեքավոր գիտնականներ, ինչպիսիք էին Սկրտիչ Էմինը (1815-1890), Քերովբե Պատկանյանը (1833-1899), Գրիգոր Խալաթյանը (1858-1912) և Կարապետ Եզյանցը (Գ. Ա. Եզով, 1835-1905) իրենց պատմական գործերը գրում էին ռուսերեն լեզվով: Մի քանի տարվա ընթացքում

¹ Նույն տեղում, էջ 697-698:

² Նույն տեղում, էջ 396-510:

³ Տես **Ր. Ավետիսյան**, Գրական լեզվամտածողությունը Րաֆֆու գիտական խոսքում, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, 1, էջ 253-262:

իրավիճակը փոխվեց և լույս տեսան այնպիսի կարևոր գործեր, ինչպիսիք էին հենց նույն Երիցյանցի *Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը* և *Կովկասի Հայք ժՅ դարում*, I-II, Թիֆլիս, 1894-1895, Ստեփանոս Բալասանյանի (1837-1889) *Պատմություն հայոց. սկզբից մինչև մեր օրերը*, Թիֆլիս, 1890, Գ. Աղանյանի փաստագրական ծանրաշուք հավաքածուները՝ *Դիվան հայոց պատմության*, Թիֆլիս, 1893-1915, Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի *Հայոց նոր վկաները* (Վաղարշապատ, 1903), Անտոն Կարակաշյանի *Քննական պատմություն հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական և բանասիրական տեղեկութանց*, I-IV, Թիֆլիս 1880-1895, ծանրակշիռ աշխատությունը, մինչև այնպիսի դեմքեր, ինչպիսիք են Լեոն (Առաքել Բաբախանյան, 1860-1932) և հատկապես Նիկողայոս Ադոնցը (1875-1942), որն ի դեպ սկզբում գրում էր ռուսաց լեզվով, ապա ֆրանսերենով:

Խամսայի մեջիքություններում տեղ գտած բանավոր և գրավոր փաստերի հավաքածուն իրոք նշանակալից է, ինչպես երևում է գրքի վերջում առկա աղբյուրների ցանկից: Դրանք դարձել են էլ ավելի արժեքավոր, քանի որ այդ աղբյուրներից շատերը, բնականաբար, բանավորները և ոչ միայն, կորստի են մատնվել, ուստի մեզ են փոխանցվել միայն Բաֆֆու աշխատության շնորհիվ: Բացի դրանից, այնուամենայնիվ, հարկավոր է վերագրել այդ աշխատանքին մաս որոշակի բժախնդրություն: Հմուտ պատմաբան չլինելով հանդերձ, Բաֆֆին կարողացել է հավաքել և գործածել աղբյուրները էպես ճիշտ ձևով, թեև ոչ զերծ սխալներից, որոնցից ամենամշանակալին կարծես շրջանի մեջիքական ազգատոհմերին Ղարաբաղից դուրս ակունք վերագրելն է (բացառությամբ գլխավորից՝ Հասան-Ջալալյաններից), որոնց մինչդեռ հետագա ուսումնասիրությունները համարել այդ տեղանքից¹:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Այստեղ կցանկանայի շատ համառոտ կերպով ընդգծել այս աշխատության մի քանի գաղափարական կողմերը: Ըստ իս, *խամսայի մեջիքությունների* մեջ մախ և առաջ նկատվում է ոչ միայն ժամանակագրական, այլև գաղափարական որոշակի հեռավորություն նյութի և հեղինակի միջև: Բաֆֆին ամբողջովին ժՅ. (XIX) դարի երկրորդ կեսի

¹ Stu **R. Hewson**, *The Meliks of Eastern Armenia: A Preliminary Study*, էջ 319-324:

ժողովրդավար մարդ էր: Այս գաղափարական շրջանակը ոչ միշտ էր նրան թույլ տալիս ճշտորեն ըմբռնել, որ դեռևս մեկ դար առաջ մելիքները գործում էին քաղաքական և մշակութային հարաչափերի հիման վրա, որտեղ էթնիկ և ազգային կողմը նվազ կարևոր էր տոհմային և կրոնական կողմերից: Այս տեսանկյունով էլ հավանաբար բացատրվում է Բաֆֆու թերի հակակրանքը վրացիների հանդեպ, որոնք *խամսայի մելիքությունների* մեջ ներկայանում են որպես նվաստներ, անվաստաիելիներ և դավաճաններ: Իմ կարծիքով, Բաֆֆու այս վերաբերմունքը էթնիկ անձնական հակակրանքից առավել անդրադարձնում էր Թիֆլիսի հայ և վրացի համայնքների փոխհարաբերությունների վատթարացումը, որը դարավոր դրական համագոյությունից հետո տեղի ունեցավ ժԹ. (XIX) դարի վերջին տասնամյակների ընթացքում հասարակական-տնտեսական պատճառների հետևանքով:

Բաֆֆու գաղափարախոսության մեկ այլ կարևոր կողմն է նրա հակակղերականությունը, որ Յովսեփ Էմինից մինչև Աբովյան քննադատում էր ոչ այնքան Հայ եկեղեցին ինքնին կամ ավետարանական պատգամը, այլ ընչաքաղցությունը, հասարակական, մշակութային և քաղաքական պահպանողականությունը, իշխանությանը հնազանդելու քարոզչությունը, և մինչև իսկ ազգային հարցի դավաճանումը: Այս տեսադաշտում դրոշմված են այնպիսի եկեղեցականներ, ինչպիսին էր Երից մանկանց վանքի կաթողիկոս Իսրայելը, որոնք հանուն իշխանության տենչի դավաճանեցին իրենց ժողովրդի ազգային հարցը: ԺԸ. (XVIII) դարի վերջին տասնամյակներին հայ-ռուսական փոխհարաբերությունների մեջ կարևորագույն դեր խաղացած Արքեպիսկոպոս Յովսեփ Արղությանի հանդեպ Բաֆֆին ունի երկզոր վերաբերմունք. գրողը նրան բազմիցս փառաբանում է իր հայրենասիրության, բայց քննադատում իր ծայրահեղ սնամիառության համար (գլ. ԼԸ.): Մինչդեռ Բաֆֆին մեծ խանդավառություն է ցուցաբերում վանականների և քահանաների կերպարների հանդեպ, որոնք իրականացնում են կարևոր ռազմական ձեռնարկներ: Օրինակ, Ավագ վարդապետը, որն առավել հայտնի է որպես Դալի-Մահրազա, որ թուրքերենից թարգմանյալ նշանակում է «խենթ վանական»: Կամ այն եկեղեցականները, որոնք մշակութային կամ քաղաքական ծառայություն մատուցեցին հայ ժողովրդին, ինչպես՝ արքեպիսկոպոս Բաղդասարը, որը վերջին սերունդն էր Աղվանքի կաթողիկոսի, և որին մինչդեռ մյուս աղբյուրները ներկայացնում են բացա-

սական լույսի ներքո իր թերի զարգացածության և ազգականներից առաջնություն տալու համար:

Զժխտելով հանդերձ այս կողմերը, Րաֆֆին գնահատում է նրա վերակազմակերպման աշխույժ գործունեությունը, որ եկեղեցուն, ուստի և հայ ժողովրդին վերադարձրեց օտարին անցած բազում սեփականություններ (զլ. ԽԲ.):

Խամսայի մեկիքությունների մեջ նկատելի է նաև բավականին բարդ վերաբերմունք մահմեդականների հանդեպ. Րաֆֆին ընդգծում է, թե ինչպես հաճախ հայ մեկիքներին հավատարմորեն նեցուկ էին կանգնում շրջանի մի քանի մահմեդական խաները (զլ. ԺԳ. -ԻԳ.): Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Րաֆֆու կարծիքով շրջանի հայ և մահմեդական ժողովուրդների միջև փոխհարաբերությունները կարող են դրական լինել կրոնից դուրս, անձնական կապերի հիման վրա, մինչդեռ իսլամը որպես այդպիսին միտված է կերպարանավորվելու որպես մոլեռանդ և ճնշիչ: Մյուս առումներով Րաֆֆին հայ եկեղեցուն չի վերապահում առանձնապես դրական վերաբերում: Իրոք, իր աշխարհիկ և ազգային տեսանկյունով Րաֆֆին հակառակ էր քրիստոնեությանը, որովհետև այն չափազանց պասիվ էր, և մահմեդականությանը՝ որովհետև չափազանց հարձակողական էր¹:

Այժմ Ռուսաստանի հետ ունեցած փոխհարաբերության մասին: Ընդհանուր առմամբ Րաֆֆին ճանաչում է Ռուսաստանի ունեցած դրական դերը հայերի համար, սակայն մեղադրում է հաճախ Պետերբուրգին, որը գերապատվությունը տալիս է անվստահելի մահմեդական խաներին հայ հավատարիմ մեկիքների փոխարեն, չհատուցելով այն զոհաբերությունները, որ հայերը արել էին հօգուտ Ռուսաստանի այդ պատերազմների ընթացքում: Միևնույն մեղադրանքն ուղղված է զորավար Մադաթովին, որի ռազմական ունակությունները փառաբանելի են, բայց նա, ծագումով հայ լինելով հանդերձ, անտարբերություն ցուցաբերեց իր ազգակիցների կարիքների նկատմամբ, մինչդեռ շատ ուշադիր է եղել իր անձնական շահերին (տես զլ. ԼԶ.):

¹ Տես **K. B. Bardakjian**, *A Reference Guide to Modern Armenian Literature. 1500-1920*, Detroit 2000, էջ 145:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բաֆֆու միջոցով փոխանցված Ղարաբաղի մելիքների դեպքերն, առանձնահատուկ նշանակության են, թեև վերջնական արդյունքում ծախսողվեցին անկախ քաղաքական ինքնություն վերակազմավորելու հայկական փորձերի առումով: Իրոք, խոսքը (Օսմանական Կայսրության մեջ Ջեյթունի դեպքի հետ միասին) ժամանակակից հայոց պատմության մեջ քաղաքական անկախության, ինչպես նաև զինված դիմադրության վերջին վայրի մասին է: Ուստի ԺԸ. (XVIII) դարի երկրորդ կեսին Ղարաբաղի մելիքների անկումը կարելի է համարել ոչ միայն հայ հին ազնվականության կարապի երզը, այլև հավանականության գրեթե բացառումը, որ իր քաղաքական և ռազմական կարողությունների հիման վրա Ղարաբաղը դառնար Պիեմոնտեի կամ Պրուսիայի հայկական տարբերակը, այսինքն ազգային քաղաքական անկախության միջուկ, որի շուրջ կառուցվեր ժամանակակից մի պետություն:

Չնայած իրենց դժբախտ վախճանին, նման դեպքերը նույնչափ զգալի նշանակություն ունեն ժամանակակից հայոց պատմության մեջ, որքան Բաֆֆու աշխատությունը, որին անդրադարձա այստեղ, մշակութային շրջանակում:

ሀ ር ሊ ላ ብ ቱ ጌ ፀ

ՀԱՅՐԵՆԻ ՇՈՒՇՎԱ ԿԱՐՈՏԸ ՍՐՏՈՒՄ
(Գրիգոր Սյունիի ծննդյան 130-ամյակի առթիվ)

Հայ երաժշտության պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն «Անդրկովկասի կոմսերվատորիայի»՝ Շուշվա երաժշտական միջավայրի ծնունդ կոմպոզիտոր-խմբավարներ և երաժշտական-հասարակական գործիչներ *Դանիել Ղազարյանը* (1883-1958), *Եղիշե Բաղդասարյանը* (1881-1919), *Ստեփան Դեմուրյանը* (1872-1934)... Նրանց շարքում է *Գրիգոր Սյունի* կեղծանունով հանդես եկած *Գրիգոր Միրզայանը* (1876-1939), որն իր ստեղծագործությամբ և, ի մասնավորի, ժողովրդական երգերի մշակմամբ զգալի դեր կատարեց հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի բյուրեղացման գործում:

Մելիքների տոհմից էր սերում Գրիգորի պապի հայրը՝ Մելիք Հովհաննես Միրզաբեկյան-Սյունին, նույն ինքը՝ աշուղ Թեյմուրը, որը Պարսից Ֆաթալի շահի հրավերով երկար տարիներ անց էր կացրել պալատում, երգել ու հեղինակել բազմաթիվ պարսկական թեսնիֆներ: Շարունակելով հոր արվեստը, Թեյմուրի զավակներից մեկը շուտով խնձորեսկից տեղափոխվում է Շուշի, դառնում աշուղ Դադասի Սյունեցի, այնուհետև՝ Աթաբեկ: Դադասու որդիներից Հովհաննեսը՝ ժողովրդական բանաստեղծ-երգիչ և մանրանկարիչ, աշուղ Վարանդեցին, ամուսնանում է Աննա Հախունցի հետ: Ամուսինները մեկը մյուսի ետևից կորցնում են իրենց տասնչորս զավակներին՝ դեռևս մանուկ հասակում: Որդեկորույս հոր, արդեն նավթարդյունաբերության ու պղնձարդյունաբերության ասպարեզի խոշոր սեփականատեր դարձած մեծահարուստ Վանի բեյի մեծագույն երազանքն էր զավակ ունենալը: Եվ ահավասիկ, Աստծո կամոք, 1876-ի սեպտեմբերի 10-ին Գանձակի (հետագայում՝ Կիրովաբադ) գավառի Գետաբեկ գյուղում ծնվում է նրա տասնհինգերորդ զավակը՝ Գրիգոր Հովհաննես Վարանդեցի Դադասի Միրզաբեկյան Սյունին: Երկու տարի անց Սյունիների ընտանիքը բնակություն է հաստա-

տուն Շուշիում: Տազնապած նորածնի առողջական թույլ վիճակով և նախորդ երեխաների դժբախտ ճակատագրով, Գրիգորի ծնողները յոթ տարի շարունակ դիմում են տարբեր գուշակների և կատարում նրանց թելադրանքները: Առողջ մեծացած Գրիգորի 7-ամյակը հայրը նշում է աննախադեպ ճոխությամբ. այդ օրը նա որդուն նվիրում է իր ձեռքով պատրաստած դափն ու սուրը և ասում՝ «...առ այս դափը և երգե ամեն անգամ, որ սիրտդ նեղանա և սրտիդ ցավերը փարատին: Իսկ երբ մեկը քեզի ցավ պատճառե և կամ վրադ բռնանա, առ այս սուրը և կուրծքը խրե... բայց, որդի՛, տե՛ս որ այս դափն ու սուրը պարապ ժամանցներու կամ խենթ նպատակներու համար չի գործածես»¹:

Սերելով աշուղների տոհմից, օժտված լինելով հնչեղ ձայնով ու երաժշտական վառ ընդունակություններով, Գրիգորը, բնականաբար, վաղ հասակում տարվում է երաժշտությանը: Նրա մանկության տարիներն անցնում են Շուշի քաղաքում, որտեղ և ստանում է տարրական կրթությունը: Սակայն շատ շուտով նա կորցնում է հորը և որպես երգիչ ժողովրդական երաժիշտներ Արտեմի ու Բալայի հետ թափառում գյուղից գյուղ: Փորձելով հարստացնել երաժշտության ասպարեզում իր գիտելիքները, Սյունին ինքնուրույն ծանոթանում է նոր հայկական ձայնագրությանն ու յուրացնում կատարելապես:

1891-ին նա ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարան և աշակերտում Քրիստափոր Կարա-Մուրզային, ծանոթանում դեռևս ուսանող Կոմիտասի հետ, նրանց ազդեցությամբ տոգորվում ամհուն սիրով առ հայ ժողովրդական երգը: Սյունին Արմենակ Շահնուրադյանի հետ դառնում է երգչախմբի մենակատար. «Միրզայանն ուներ շատ քաղցր, երազուն, քնքույշ արևելյան ձայն մը: Դժբախտաբար այդ երազուն ձայնը դատապարտված էր ապագային կորսվելու...», - հետագայում, անդրադառնալով իր ճեմարանական տարիներին, «Ինքնակենսագրության» մեջ արձանագրելու է Ա. Շահնուրադյանը²: Դեռևս ճեմարանում ուսանելու ժամանակաշրջանում Սյունին ձեռնամուխ է լինում հայկական ժողովրդական երգերի գրառմանը, հավաքմանն ու ներդաշնակմանը՝ այդ ասպարեզում հասնելով նկատելի հաջողությունների: Վիճակը նետված է. Սյունին կայացնում է իր համար ճակատագրական որոշում՝ նվիրվել

¹ Յ. Բրուտյան, Արցախյան ոգին երաժշտության ծիրի մեջ, Երևան, 2000, էջ 105:

² Արմենակ Շահնուրադյան, Երևան, 1998, էջ 24:

հայ երաժշտությանը: Քր. Կարա-Մուրզան պատանուն խորհուրդ է տալիս չբավարարվել ձեռք բերած գիտելիքներով և երաժշտական մասնագիտական կրթությունը շարունակել Թիֆլիսում, Մոսկվայում կամ էլ՝ Պետերբուրգում: Այնուհետև երաժշտական-տեսական իր գիտելիքների պաշարը Սյունին հարստացնում է՝ կարճ ժամանակ աշակերտելով Մակար Եկմայանին:

1895-ին Սյունին ավարտում է Գևորգյան ճեմարանը: Վերադառնալով Շուշի, նա կազմակերպում է երգչախումբ և հանդես գալիս իր բազմաձայնած ժողովրդական երգերից կազմված առաջին համերգով: Այնուհետև նույն թվականի աշնանը, հետևելով Կարա-Մուրզայի խորհրդին, երաժշտական բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու նպատակով Սյունին մեկնում է Պետերբուրգ: Պետերբուրգի կոնսերվատորիայի ընդունելության քննություններին նախապատրաստվելու համար Սյունին ընդունվում է երաժշտական դպրոցներից մեկը, պարապում Պանչենկոյի և Կալաֆատիի երաժշտական դասընթացներում:

1898-ին նա ընդունվում է Պետերբուրգի կոնսերվատորիան և սովորում Ն. Ռիմսկի-Կորսակովի դասարանում, աշակերտում Ա. Լյադովին, Ա. Գլազունովին: Ահավասիկ թե ինչ է գրում Սյունիի պոլիֆոնիայի դասախոս, հռչակավոր կոմպոզիտոր Ա. Գլազունովը 1904-ի մայիսի 24-ին Ն. Ռիմսկի-Կորսակովին հղած նամակում. «...Քիչ մնաց մոռանալի քեզ տեղեկացնել, որ քարշ գալով եկավ Միրզոյանցը՝ կաղեկաղ և ձեռքը կապտած: Առաջին իսկ խոսքերից սկսեց զանգատվել հազար ու մի հիվանդություններից, ասում էր, թե վրան մի քանի վիրակապ կա. սակայն ֆուգան գրել էր հմտորեն»¹: Ի դեպ, Սյունիի ֆուգաները պատմական խոշոր արժեք ունեցան. 1902–1904-ին ստեղծված նրա ֆուգաները դարձան արևելահայ պրոֆեսիոնալ երաժշտության մեջ այդ ժանրի առաջին նմուշները²:

Ուշագրավ են Նիկողայոս Տիգրանյանի հիշողությունները Գրիգոր Սյունիի մասին: Նրանք ծանոթացել են 1890-ական թվականներին: Այնժամ Սյունին «...մի ջահել, վառվռուն ուսանող էր կոնսերվատորիա-

¹ Յ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 110:

² Հայկական առաջին երկձայն, եռաձայն և քառաձայն ֆուգաների հեղինակն է Տիգրան Չուխաճյանը:

յում և շատ սիրելի ու առաջադեմ աշակերտ էր հայտնի պրոֆեսոր ու մեծ կոմպոզիտոր Ն. Ռիմսկի-Կորսակովի: Գրիգորն իր տաղանդով ու աշխատասիրությամբ կոմսերվատորիայում աչքի ընկնող ուսանողներից էր: Նա իբրև աշակերտ՝ հայտնի ֆուգիստ էր... Մենք հաճախ գնում էինք միասին զբոսնելու: Մի օր հեռու պարտեզում նրա գլխում հղացավ մի ֆուգայի հատված: Նոտայի թուղթ չկար հետներս: Սոտիս նամակների մաքուր երեսների վրա նա նոտագրեց իր ֆուգան: Երբ տուն վերադարձանք, քույրս նվագեց. և մենք շատ հավանեցինք»¹:

Ուսումնառության տարիներին Սյունին ղեկավարում է Պետերբուրգի հայկական եկեղեցու երգչախումբը, որի համերգներից մեկին՝ 1902 թ. մարտի 3-ին, մասնակցում է երգիչ Մակար Վարդիկյանը: Նա ներդաշնակում է հոգևոր երգեր, կատարում ժողովրդական երգերի մշակումներ, գրում մեներգեր և պոլիֆոնիկ ստեղծագործություններ:

1903 թվականի ամառը դեռևս Պետերբուրգի կոմսերվատորիայի ուսանող Սյունին հայրենի Շուշիում հանդես է գալիս համերգներով. ի դեպ, 1903-ի հուլիսի 31-ի համերգին իրենց օգոստոսյան համարներում անդրադառնում են «Մշակն»² ու «Տարազը»³՝ համապատասխանաբար «Գրիգոր Միրզայանի համերգը Շուշիում» և «Միրզայանի համերգը Շուշիում» հոդվածներով:

1904-ին Սյունին ավարտում է Պետերբուրգի կոմսերվատորիան և որպես պրոֆեսիոնալ կոմպոզիտոր վերադառնում Անդրկովկաս՝ հետայսու մշտապես գտնվելով երաժշտական-հասարակական եռուն գործունեության մեջ. աշխատում է որպես երաժշտության ուսուցիչ, կազմակերպում ինքնագործ երգեցիկ խմբեր, տալիս համերգներ, հաջողությամբ կատարում հայ ժողովրդական երգերի մշակումներ՝ դաշնամուրի նվագակցությամբ և երգեցիկ խմբի համար, գրում Ավ. Իսահակյանի տեքստերով ռոմանսներ, նաև՝ երաժշտություն Ղ. Աղայանի «Արեգնազան» հեքիաթի սյուժեով թատերական ներկայացման համար: Տեղեկություններ են պահպանվել առ այն, որ հետագայում Սյունին «Արեգնազանի» երաժշտությունը զարգացրել է՝ վերածելով ինքնուրույն ստեղծագործության: Պահպանվել են նաև հատվածներ «Ասլի և

¹ Յ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 111:

² Ռ. Սազմանյան, Հայ երաժշտական կյանքի տարեգրություն (1901-1910 թթ.), Երևան, 2006, էջ 64:

³ Նույն տեղում:

Քյարան» օպերայից: Հենց 1904-ին Պետերբուրգում լույս է տեսնում հայ ժողովրդական երգերի մշակումներից բաղկացած «Հայ ժողովրդական երգեր» Ա պրակը. տետրը պարունակում էր չորս երգ. «Սարերի հովին մեռնիմ», «Հաբրբան», «Սարեն կուգա ծիավոր», և «Օհ նազանն»: 1904-ին Պետերբուրգում լույս է տեսնում նաև Գրիգոր Սյունիի «Ախ ալ վարդի» երգը՝ գրված Ավ. Իսահակյանի խոսքերով:

Այս շրջանում Սյունին տարվում է դաշնակցության գաղափարներով և անդամագրվում ՀՅԴ-ին, գրում ու անստորագիր տարածում երգեր¹, հետագայում հրաժարվում դաշնակցության գաղափարներից, դառնում դաշնակցության համոզված հակառակորդ:

Շարունակելով Մ. Եկնայանի գործը, 1905–1908-ին Սյունին երաժշտություն է դասավանդում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և ղեկավարում երգչախումբը:

1908-ից Սյունին գերազանցապես թափառական կյանք է վարում. շրջագայելով Հայաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի հայաբնակ տարբեր վայրերում (Տրապիզոն, Կարին, կրկին Թիֆլիս, Թեհրան, Կ. Պոլիս ևն, 1923-ից՝ ԱՄՆ)՝ կազմակերպում է սիրողական երգչախմբեր ու տալիս համերգներ՝ ամենուրեք հնչեցնելով հայկական երգը ի նպաստ հայ ժողովրդական զանգվածներում բազմաձայն երգեցողության տարածման: Աշխատելով Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի քաղաքներում՝ Տրապիզոնում, Սամսունում, Կիրասոնում, Էրզրումում, Բիթլիսում, Վանում, Սեբաստիայում և այլուր, հանդես գալով որպես խմբավար, Սյունին հետաքրքրություն է արթնացնում հայության մեջ ազգային երաժշտության հանդես: Այս առումով նրա գործունեությունը հիշեցնում է Կարա-Մուրզային: Սյունին բազմաթիվ երգեր է հավաքել Սյուրմենեի, Կարատերի, Յամբոյի գետահովիտների գյուղերում բնակվող հայերի շուրթերից: Հետաքրքրական է, որ Սմբատ Եպիսկոպոսը 1911-ի սեպտեմբերի 19-ին, ապա 1913-ի սեպտեմբերի 17-ին գրավոր հանձնարարականներով խնդրում է Խնուսի, Ներթևի, Բասենի թաղական խորհուրդների քահանաներին և գյուղացիներին՝ ծանոթ երաժշտագետ Սյունիին «...երգեր հաւաքելու համար, ամէն կերպ դիւրութիւն,

¹ Տես Մ. Մուրադյան, Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում, Երևան, 1970, էջ 535:

օժանդակութիւն եւ յարգանք ցոյց տան եւ զոհ թողուն զինքը»¹: 5-6 տարվա ընթացքում Սյունիին հավաքում է ավելի քան 500 երգ, մի քանի երգախառն պոեմներ, այդ թվում՝ «Վիթենն ու Ձին», «Յեյրան-Սեյրան»-ը: Հանշենի, ճերմելի, Տերեսիի, Թորթումի և շրջակա գյուղերում գրառած բազմաթիվ երգերից բաղկացած 2 ստվարածավալ տետրերը նա Թիֆլիսում ներկայացնում է բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին. ցավոք, այդ նյութերը չհրատարակվեցին և հավանաբար կորսվեցին անհետ, ինչպես նախորդ 500 երգերը և այլ հոգևոր արժեքներ:

1910–1914-ին Սյունիին աշխատում է Երզրումի Սանասարյան դպրոցում, իսկ ամառային ամիսներին շրջում Հայաստանի տարբեր գավառներում, ծայնագրում բազմաթիվ ժողովրդական երգեր ու պարեղանակներ՝ հետագայում դրանք օգտագործելով իր երկերում:

Հընթացս առաջին աշխարհամարտի՝ 1914-ին նա վերադառնում է Թիֆլիս՝ ակտիվորեն մասնակցելով Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության գործունեությանը: «Սիւնիին երբ 1914-ի աշնան՝ համաշխարհային պատերազմի հետեւանքով, Երզրումէն Թիֆլիս կը փախչէր իր ամբողջ գոյքերը յանձնեց ամերիկացի միսիոնար մըսթըր Սթեփըլթընին եւ անոնք անհետ կորսւեցան հարիւրաւոր ուրիշ հայ տարագրեալներու ստացւածքներուն հետ, որոնք նոյնպէս այդ միսիոնարի խնամքի ու պահպանութեան տակ դուած էին, այն յոյսով, թէ անոնց տէրերը օր մը կը վերադառնան: Ի՞նչ պատահեցաւ Սիւնիի այդ արժեքաւոր աշխատութեանց, որոնք ամբողջ կեանքի մը քրտնաջան զոհողութեանց ու ճիգերուն արդիւնքն էին: Այժմ Չիքակոյի մէջ հաստատուած մըսթըր Սթեփըլթըն չի յիշեր անգամ: Եթէ հայ դժբախտ արքորեալներու կահկարասիներն ու ադամանդեղէն զարդերը կրնային Աստծոյ բարեպաշտ մէկ պաշտոնեային քսակը պարարտացնել, հաւանաբար Սիւնիին թուղթերն ալ անոր խղճին պատանքն եղան: Բայց աւաղ, անոնք այլեւս գոյութիւն չունին հայ երաժշտութեան համար»²:

Շուտով համբավավոր երաժիշտը հրավեր է ստանում Հայաստանի դաշնակցական կառավարության նախարարներից, բայց քանի որ նա արդեն հիասթափվել էր դաշնակցության գաղափարական դիրքորոշումից և գործելակերպից, ուստի կտրականապես մերժելով հրավերը,

¹ Թ. Բրուտյան, ԳԶՎ. աշխ., էջ 107:

² Յ. Գույումճեան, Գրիգոր Մ. Սիւնի, Ֆիլադելֆիա, 1948, էջ 141–142:

մեկնում է Իրան, որտեղ էլ ծավալում է իր հետագա բազմարդյուն գործունեությունը:

1921-ի օգոստոսին Սյունին կրկին վերադառնում է Թիֆլիս՝ այս անգամ երկարատև թափառական կյանքից ու լարված գործունեությունից վատթարացած առողջական վիճակով, տևական հանգստի կարոտ: Նույն թվականի աշնանը առողջությունը վերականգնելու ակնկալիքով և այնուհետև Հայաստանում բնակություն հաստատելու մտադրությամբ նա ընտանիքի հետ մեկնում է Պոլիս: Բայց իրադարձությունների ընթացքը նրան տանում է ԱՄՆ, որտեղ էլ անցնում է նրա հետագա ողջ կյանքը: Բնակվելով Ֆիլադելֆիայում և շրջելով ԱՄՆ հայաբնակ քաղաքներով, Սյունին շարունակում է իր երաժշտական–հասարակական գործունեությունը: Նա կազմակերպում է երգչախմբեր ու համերգներ տալիս Բոստոնում, Ուոթթաունում, Նյու-Յորքում, Ֆիլադելֆիայում, Չիկագոյում, Դետրոյտում, Փրավիտենսում և այլուր՝ ունկնդրի կողմից արժանանալով բացառիկ ընդունելության: Համերգներից երկուսը (1924-ի հունվարի 27-ին և տասը տարի անց՝ 1934-ի փետրվարի 24-ին) շահում են միջազգային մրցանակներ: Ամերիկյան երաժշտական ընկերակցությունների կազմակերպած և ամերիկյան, ֆրանսիական, գերմանական, լեհական, շվեդական, նորվեգական, նեգրական, իռլանդական երգչախմբերի մասնակցությամբ կայացած միջազգային մրցույթներում հայկական երգչախմբի հաղթանակի մասին մամուլի դրվատական արձագանքների կողքին արժեքավոր էր միջազգային 12-րդ մրցահանդեսի կազմակերպիչ միսիս Հերիթ Ս. Րոսըլի ուղերձը, որում մասնավորապես ասված է. «Սիրելի պրն Սիւնի. հաճեցէ իմ շնորհաւորութիւններս ընդունիլ այն յաղթանակի համար, զոր տարիք Բ. կարգի մրցումին մէջ: Դուք բարձր գնահատութեան արժանի էք ձեր սքանչելի ելոյթին համար: Ամբողջ ձեռնարկին յաջողութեան մասին բազմաթիւ շնորհաւորական նամակներ ստացած ենք:

Ներփակ կստանաք դատաւորներու որոշման ամփոփումը, որ վստահ եմ, թէ պիտի շահագրգռէ ձեզ: Կը յուսանք ձեզ եւ ձեր երգչախմբին հետ կրկին գործ ունենալ յառաջիկա տարւայ երգահանդէսին մէջ: Կրնաք ռեւէ ատեն մեզի դիմել, եթէ կրնանք կերպով մը օգտակար ըլլալ ձեզի»¹:

1930-ի փետրվարի 19-ին Ֆիլադելֆիայում աննախադեպ հաջո-

¹ Յ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 111–112:

ղությամբ Սյունին բեմադրում է հայկական և արևելյան թեմաներով գրված իր «Պայքար և զոհողություն» մանկական օպերան, որի բոլոր դերակատարները մանուկներ ու պատանիներ էին:

Սյունին Հարություն Մեհրապյանի հետ համագործակցությամբ ԱՄՆ-ում հիմնում է «Ամերիկահայ երաժշտական միությունը», որն արգասաբեր գործունեություն ծավալեց ամերիկահայ գաղթօջախի բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման գործում: Սակայն Հայրենիքի կարոտն աստիճանաբար կրծում էր կոմպոզիտորի հոգին:

Ի մխիթարություն՝ նա հայրենիք է ուղարկում երաժշտական գործիքներ սիմֆոնիկ նվագախմբի համար, որոնց պակասն այն ժամանակ խիստ զգում էր սիմֆոնիկ նվագախումբը, Երևանի կոնսերվատորիային է նվիրում մի շարք երաժշտական գործիքներ, նորաբաց երաժշտական հրատարակչության համար անհրաժեշտ իրեր, նոտաներ, պարտիտուրների համար թղթեր...

Սյունին հիմնադրում է երաժշտական ստուդիա, ղեկավարում սիրողական երգչախմբեր ու հանդես գալիս համաշխարհային մրցույթներում, գրում է և հրատարակում բանվորական-հեղափոխական երգեր և սովետահայ ժողովրդի նոր կյանքը գովերգող ստեղծագործություններ: Սակայն կտրված լինելով Հայրենիքից, իր վաղ շրջանի ստեղծագործություններում ժողովրդական երաժշտության կենդանի զգացողություն, կոմպոզիտորական տեխնիկայի բարձր մակարդակը և արտակարգ տաղանդ հանդես բերած Սյունին չկարողացավ զարգացնել ու խորացնել իր ստեղծագործությունը:

ԱՄՆ-ում ապրած տարիներին Սյունին հանդես է եկել որպես Սովետական Հայաստանի բարեկամ, եռանդուն մասնակցել ՀՕԿ-ի գործունեությանը:

ԱՄՆ-ում անցկացրած ժամանակաշրջանում արդեն ի հայտ են գալիս մի շարք հիվանդություններ, որոնք քայքայում են առողջությունը, բայց հուսահատվելու փոխարեն, Սյունին ասում էր. «Քեփոտեղն արա, ինձի դարապաղցի կըսեն»¹: Սրտի տագնապ, տևական ծանր շաքարախտ, ապա՝ կոկորդի քաղցկեղ, որն էլ գերեզման իջեցրեց կոմպոզիտորին հազիվ 63 տարեկան հասակում: Վախճանվեց Սյունին 1939-ի դեկտեմբերի 18-ին, Ֆիլադելֆիայում (ԱՄՆ):

¹ Նույն տեղում, էջ 113:

Ամերիկյան մամուլը նրա մահվանն արձագանքեց բազմաթիվ ցավակցական հոդվածներով: Ահավասիկ հատված Օվըրբրուքի բարձրագույն դպրոցի երաժշտական բաժնի վարիչ Լուիզ Կեյզենի գրությունից՝ գրված 1939-ի դեկտեմբերի 21-ին. «Մեծ հարված էր մեզ տեղեկանալ, թե կորցրել ենք մի մեծ ու սիրելի անձնավորություն: Սյունին արտակարգ անձնավորություն էր: Միայնակ մի ամբողջ հաստատություն էր: Իսկ հիմա նա կդառնա լեգենդ ու գեղեցիկ հիշողություն»¹: Վախճանվեց Սյունին՝ Հայրենիքում վերջին հանգրվանը գտնելու փափագով: Նրա և կնոջ աճյունասափորները հասան Հայաստան 1959-ին, որդու՝ Ռուբենի միջոցով և 1968-ին «վերջապես իր նյութեղեն հյուլները խառնվեցին առեղծվածային Հայաստան աշխարհի նվիրական հողին, բայց ոչ իր երազած, իր պաշտած Ղարաբաղի...»²:

Ցավոք, մինչև օրս Սյունիի ստեղծագործական ժառանգությունը լրիվ հրատարակված, նույնիսկ՝ հավաքված և ի մի բերված չէ:

Նրա ժառանգությունը բաղկացած է ժողովրդական երգերի մշակումներից, հայ նշանավոր բանաստեղծների գրական խոսքի երաժշտականացումը հանդիսացող՝ ժողովրդական մեղեդիների վրա հիմնված երգերից ու ռոմանսներից, թատերական ներկայացումների համար գրված երաժշտական կտորներից և նվագախմբային որոշ ստեղծագործություններից:

Իր գործունեության վերջին շրջանում Սյունին մշակեց բանվորական հեղափոխական երգեր («Անվախ ընկեր», «Դու զոհ գնացիր», «Ինտերնացիոնալ»), 30-ական թվականներին Խորհրդային Հայաստանում ստեղծված մասսայական երգերի նմանողությամբ հորինեց «Նոր կյանքի երգեր» շարքը (1934):

Դաշնամուրի նվագակցությամբ ինքնուրույն մեներգերը (Հ. Թումանյանի «Ինձ մի խնդրիր», Ավ. Իսահակյանի «Ախ, ալ վարդի» ևն) գրված են հայ քաղաքային ժողովրդական երաժշտության ոճով, ունեն արտահայտիչ մեղեդիներ: Սրանք, ինչպես և բուն ժողովրդական երգերի մշակումները (օրինակ՝ «Նեննի» օրորոցայինը), զգալի դեր են խաղացել ազգային ռոմանսի ձևավորման ու զարգացման գործում:

Կոմպոզիտորի ստեղծագործության առավել արժեքավոր բաժինն են կազմում գեղջկական երգերի խմբերգային մշակումները, որոնցից

¹ Նույն տեղում, էջ 112:

² Նույն տեղում, էջ 113:

լավագույնները («Սարերի հովին մեռնին», «Սարերը հովել ա», «Ալագ-յազ» ևն) առանձնանում են ընդհանուր բարեհնչունությամբ և հայ խմբերգային երաժշտության դասական ժառանգության մասն են կազմում: Սյունին թե՛ խմբերգային և թե՛ մեներգային մշակումներում պահպանում է հայ ժողովրդական երգի առանձնահատկությունները՝ հասնելով ոճական անաղարտության: Նրա երգերից շատերը, այդ թվում՝ «Սարերի հովին մեռնեն», «Սարեն կուզա ծիավոր», «Ալագյազ», «Ախ, ալ վարդի», «Եթե մի օր», «Ինձ մի խնդրիր» երգերն իրենց մշտական տեղն ունեն համերգային երկացանկում:

Անդրադառնալով ազգային երաժշտարվեստում Սյունիի ստեղծագործական ներդրմանը, մեջբերենք երաժշտագետ Ալ. Շահվերդյանի կարծիքը: Բարձր գնահատելով Սյունիի ստեղծագործության սկզբում վառ արտահայտված նրա արտակարգ տաղանդը, վաղ շրջանի գործերում ժողովրդական երգերի զգացողությունը և կոմպոզիտորական նշանակալից տեխնիկան, նաև ստեղծագործական նվաճումները, նա գտնում է, որ Սյունիին չհաջողվեց լիովին ձերբազատվել եվրոպական դպրոցի դասական օրինաչափություններից և գտնել այն ուղին, որ հետագայում հայտնաբերեց Կոմիտասը: Նրբորեն ընկալելով ժողովրդական երգերը՝ իրենց կերպարային հատկանիշներով և հուզական դրսևորմամբ, պահպանելով դրանց ինտոնացիոն և ռիթմական յուրօրինակությունն ու դրսևորելով ճաշակ և հնարամտություն, միաժամանակ, երգերը ներդաշնակել-բազմաձայնելիս, ցավոք, Սյունին ձեռնպահ է մնում հայկական ձայնակարգերի հարստությունների ու առանձնահատկությունների կիրառումից՝ գերազանցապես մնալով մաժորի և դորիական մինորի սահմաններում, շրջանցում մեղեդու մեջ ամփոփված ձայնակարգային բազմազանության հենակետերը: Հայ երաժշտության բազմաձայնման հրաշալի օրինաչափություններից մեկը՝ ձայնառությունը, սրանցում զրկված է հարմոնիկ ճոխությունից: Մանրախույզ վերլուծելով Սյունիի առաջին շրջանի գործերը՝ «Տույ-տույ», «Նանա բալա», «Ալագյազ», «Մայիսն եկավ» երգերը, Շահվերդյանն ավստոսանք է հայտնում, որ մեծատաղանդ Սյունիին օբյեկտիվ պատճառներով չհաջողվեց նվաճել դարասկզբի ազգային երաժշտարվեստի բարձրագույն մակարդակը, այլ լոկ բավարարվեց Կարա-Մուրզայի արվեստը նախապատրաստողներից մեկի համեստ դերով¹: Հետագայում, Սյունիի

¹ Ա. Շահվերդյան, նշվ. աշխ., էջ 206-209:

ստեղծագործությունն ուսումնասիրած երաժշտագետ Ռ. Աթայանն առավել ընդլայնեց կոմպոզիտորի արժանիքների համայնապատկերը, ի մասնավորի արձանագրեց նրա նպաստն ազգային բազմաձայնության ասպարեզում: Հայտաբերելով Սյունիի՝ դեռևս ուսանողական տարիներին գրված *c moll* եռաձայն կրկնակի ֆուգան և վելուծելով, Աթայանը նկատում է, որ Սյունին նկատելիորեն ընդարձակել է Կարա-Մուրզայի ստեղծագործական մոտեցումը հայ ժողովրդական երգի հանդեպ:

Հատկանշական է, որ հայ երաժշտարվեստին ծառայեցին Սյունու տոհմի շառավիղները նույնպես՝ զավակներից ու թոռներից ոմանք: Նրա որդին՝ **Գուրգեն Սյունին** (1910–1995) շուրջ քառասուն տարի (1940–1982) ԱՄՆ Արևելյան տարածքում (Բոստոնից Նյու Յորք և Վաշինգտոն) կազմակերպել է երգչախմբեր և տարածել հայ երգը: 1971-ից համագործակցել է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հետ: «Նրա երգչախմբային ու պարային համույթները Ամերիկայի երաժշտական աշխարհում՝ Ռոբին Յուդ Դելուս և Իրվին լսարաններում, միշտ վառ են պահել հայ ազգային երաժշտության ավանդույթները», – ահավասիկ մի հատված 1995-ի ապրիլի 13-ին Ֆիլադելֆիայում լույս տեսած մահախոսականից¹:

Դաշնակահար **Սեթ Սյունին**² (ծն. 1930) Գրիգոր Սյունու թոռն է, դասեր՝ Սեդա Սյունիի որդին: Իր անդրամիկ համերգով հանդես է եկել 17 տարեկանում: Ավարտել է Ջուլիարդի կոմսերվատորիան, բազմաթիվ մենահամերգներով հանդես եկել ԱՄՆ քաղաքներում, հընթացս 1955-ի օգոստոսի 21-ի և 1962-ի սեպտեմբեր 15-ի, 16-ի համերգների, կատարել է Բախի *e moll* տոկատը, Մոցարտի *G dur* սոնատը, Բեթհովենի 21-րդ սոնատը, Պրոկոֆևի 3-րդ սոնատը, Լիստի «Պետրարկայի սոնետները» և «Մեֆիստո վալսը», Դեբյուսիի Պրեյլուդները, Շոպենի Պոլոնեզները, Էքսպրոմտները և վալսերը, Հինդեմիտի սոնատը և այլն: Դաշնակահարը նաև ստեղծագործել է, գրել դաշնամուրային պիեսներ, երգեր, խմբերգեր, որոնք հնչել են ԱՄՆ համերգային դահլիճներում: Ս. Սյունին տարիներ շարունակ զբաղեցրել է Acorn Film-ի տնօրենի պաշտոնը, ակտիվորեն մասնակցել ազգային ձեռնարկումներին, 1960-ին ղեկավարել «Անուշ» օպերայի բեմադրությունը՝ իրականացված Նյու Յորքի Հայկական առաջնորդարանի նախաձեռնությամբ:

¹ Թ. Բրուտյան, ԳԶՎ. աշխ., էջ 114:

² Տե՛ս նույն տեղը, էջ 115-116:

ՇՈՒՇԵՑԻ ՄԵԾ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԸ
(Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

Այս տարվա դեկտեմբերի 17-ին նշվելու է հայ մեծ քանդակագործ, 1881-ին Շուշի քաղաքում լույս աշխարհ եկած Հակոբ Գյուրջյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը: Այդ տարեդարձին է նվիրված սույն զեկուցումը:

Արվեստագետի մանկության ու պատանեկության, Շուշիում նրա անցկացրած տարիների մասին, դժբախտաբար, կցկտուր տեղեկություններ ունենք: Հայտնի է, որ նա ծնվել է մանրավաճառ Մարգար Գյուրջյանի նահապետական բազմազավակ ընտանիքում: Վաղ հասակում կորցնելով ծնողներին, մնացել է իր ավագ եղբոր՝ Գրիգորի խնամքի տակ: 1889-ից մինչև 1896 թվականը հաճախել է Շուշվա ռեալական ուսումնարանը, որտեղ նրա հայոց լեզվի ուսուցիչն էր ապագա անվանի ազգագրագետ, բանասեր-բանահավաք, հայ կերպարվեստի գիտակերվանդ Լալայանը:

Հ. Գյուրջյանի գեղարվեստական բնատուր ծիրքը, իր աչքով տեսած կամ երևակայած կերպարները ծավալային շոշափելի ձևերով որևէ նյութի մեջ մարմնավորելու կարողությունը ի հայտ է եկել հենց աշակերտական շրջանում:

Նույն տարիներին, քանդակագործի շնորհքից բացի, դրսևորվել է նաև Հ. Գյուրջյանի երաժշտական ընդունակությունը: Պատահական չէ, որ 1894-ին, երբ Շուշի է ժամանել նշանավոր երգահան, խմբավար, երաժիշտ-բանահավաք Քրիստափոր Կարա-Մուրզան, այստեղ երգչախումբ կազմել ու ներկայացրել հայ ժողովրդական և հոգևոր երգերը, նա սիրողական այդ երգչախմբի մեջ է գրավել նաև 13-ամյա Հակոբ Գյուրջյանին:

Շուշվա ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո Հ. Գյուրջ-

յանը մեկնել է Մոսկվա, ուր շուրջ հինգ տարի՝ 1899-ից մինչև 1904 թվականը սովորել է ճարտարապետ Ֆիդլերի մասնավոր տեխնիկական ուսումնարանում և ձեռք բերել գծագրողի մասնագիտություն: Միաժամանակ նա շարունակել է զբաղվել քանդակագործությամբ, մտերիմ հարաբերություններ է հաստատել Գոգոլի մոսկովյան հուշարձանի հեղինակ Նիկոլայ Անդրեևի հետ, հաճախել Իտալիայից նոր վերադարձած արձանագործ Պաոլո Տրուբեցկոյի աշխատանոցը: Նրանց անմիջական ազդեցությամբ են ձևավորվել Գ. Գյուրջյանի գեղարվեստական հայացքները, հետաքրքրությունը մի կողմից՝ եվրոպական դասական և ռեալիստական արվեստի, իսկ մյուս կողմից՝ իմպրեսիոնիզմի հանդեպ:

Գ. Գյուրջյանի ստեղծագործական ճակատագրի, մասնագիտական կողմնորոշման հարցում իր դերն է խաղացել նաև նրա հայրենակից, տաղանդավոր դիմանկարիչ Ստեփան Աղաջանյանը, որի հետ նա ծանոթացել է Շուշիում 1900 թվականին: Փարիզի հանրահայտ գեղարվեստական կրթարաններից մեկը՝ Ռոդոլֆ Ժուլիանի մասնավոր ակադեմիան հենց նոր ավարտած և հայրենիք վերադարձած գեղանկարչի հետ Գ. Գյուրջյանի ունեցած երկարատև զրույցները, համատեղ կատարած էտյուդները խորացրին նրա սերը կերպարվեստի նկատմամբ, էլ ավելի ամրապնդեցին նրան քանդակագործ դառնալու և այդ նպատակով Փարիզ գնալու իր մտադրության մեջ:

1906-ին Գ. Գյուրջյանն ամուսնացել է Շուշվա մեծահարուստներից մեկի դուստր Զայկանուշ Ղալամյանի հետ և ուղևորվել Ֆրանսիա, ուր մեկ տարի սովորել է Մոնպելյեի համալսարանի բժշկական ֆակուլտետում՝ ծանոթանալով մարդակազմության հիմունքներին, ապա՝ տեղափոխվել Փարիզ և ուսման անցել Ռ. Ժուլիանի գեղարվեստական ակադեմիայում: Այստեղ շուրջ երեք տարում նա մասնագիտական խոր գիտելիքներ ու անհրաժեշտ հմտություն է ձեռք բերել Ռաուլ Վեռնեի, Զանրի Գրեբերի և Պոլ Լանդոլսկու ղեկավարությամբ:

Զայ արվեստագետի ստեղծագործական ձևավորման մեջ հատկապես նկատելի է վերջինիս դերը: Լինելով ֆրանսիական ուշ, իր դարը ապրած կլասիցիզմի տիպիկ, թեպետև առավել օժտված ներկայացուցիչներից մեկը, Պ. Լանդոլսկին սեփական արվեստում անշեղորեն հետևում էր քանդակային «իդեալական» ձևերի կառուցման խիստ կանոնավոր՝ ակադեմիական մեթոդին: Նա չափազանց մեծ նշանակություն էր տալիս պլաստիկ ձևերի կատարյալ մշակմանը, խնամքով հղկում իր

նախասիրած ճերմակ մարմարի մակերևույթը, միաժամանակ հայտնաբերելով դրանց կառուցվածքային ու ֆակտուրային հատկությունները: Բանեցնելով ձևաոճական այդ սկզբունքները, նա իր կոթողային և նույնիսկ հաստոցային աշխատանքներում հասնում էր մոնումենտալ հնչողության: Դրա հետ մեկտեղ Պ. Լանդովսկու 1910-ական թվականների ստեղծագործության մեջ արտացոլում է գտել նաև ֆրանսիական «մոդեռնիզմ» հատուկ ոճավորության եղանակը, որի շնորհիվ նրա քանդակներն օժտվել են արտաքին փայլով ու գրավչությամբ: Գեղարվեստական այդ երեք բաղադրիչներով՝ քանդակային ձևերի դասական պարզությամբ, մոնումենտալ ընդհանրացված հարթություններով ու ծավալներով, դեկորատիվ-ոճավոր մշակումներով են հատկանշվում նաև Պ. Լանդովսկու աշակերտներից շատերի, այդ թվում՝ Յակոբ Գյուրջյանի առավել բնորոշ աշխատանքները: Ֆրանսերենով շարադրված՝ «Իմ մտքերը քանդակագործության մասին» ձեռագիր հոդվածում հայ արվեստագետը ևս գտնում է, որ իսկական քանդակը պետք է օժտված լինի վերոհիշյալ հենց այդ՝ կոմպոզիցիոն, մոնումենտալ ու դեկորատիվ հատկանիշներով: «Այն քանդակները,- ավելացնում է Յ. Գյուրջյանը,- որոնցում համադրված կամ զուգորդված չեն տվյալ սկզբունքները, չեն կարող դիտվել որպես ճշմարիտ արվեստի գործեր»¹: Սակայն, Պ. Լանդովսկու աշխատանքների համեմատությամբ, Յ. Գյուրջյանի ստեղծագործություններն առանձնանում են ոչ միայն իրենց արտաքին՝ ֆորմալ արժանիքներով ու տեխնիկական կատարելությամբ, այլև դրանցում մարմնավորված գեղարվեստական կերպարների կենդանի հուզականությամբ, հոգեբանական խորությամբ, զաղափարային կոնկրետ բովանդակությամբ: Եվ այդ տեսակետից, ինչպես նաև Յ. Գյուրջյանի 1910-ական թվականների մի շարք դիմաքանդակներում նկատվող իմպրեսիոնիստական թարմ տպավորությունները կարծի նյութի մեջ «արձանագրելու», այն շնչավորելու առումով հայ արվեստագետը պարտական է ոչ թե իր ակադեմիական ուսուցիչներին, այլ նոր ժամանակների եվրոպացի խոշորագույն քանդակագործ Օգյուստ Բոդենին, որի փարիզյան աշխատանոցը նա հաճախել է 1910-1911 թվականներին: Լուվրի և Լյուքսեմբուրգյան թանգարաններում Յ. Գյուրջյանը հիմնովին ուսումնասիրել է հին արևելյան (մասնավորաբար՝ հին եգիպտա-

¹ Տե՛ս. **Ք. Գ. Դրամյան**. Акоп Гюрджян. Ереван, 1973, с. 76:

կան), անտիկ հունական, եվրոպական դասական քանդակը, և դա նույնպես իր կնիքն է դրել նրա պլաստիկական մտածողության վրա: Արվեստագետի ստեղծագործական ձևավորման համար կարևոր դեր են խաղացել նաև նրա անձնական շփումները ֆրանսիացի նշանավոր արձանագործներ Անտուան Բուրդելի, Արիստիդ Մայոլի և Շառլ Դեսպիոյի հետ:

Փարիզի արվարձաններից մեկում՝ Բուլոնում Դ. Գյուրջյանի ձեռք բերած արվեստանոցում են ստեղծվել նրա առաջին, հիմնականում մարմարից արված կամ բրոնզից ձուլված աշխատանքները՝ ղարաբաղյան կարոտաբաղձ հուշեր արթնացնող, ազգային ոգով կերպարակերտված «Վարը» («Դորովել», 1910) և «Հայ գեղջկուհին երեխայի հետ» (1910) հարթաքանդակները, Մարգարիտ Շիրվանզադեի (1910) և Արշակ Զոպանյանի (1911)՝ ռեալիստական ձևերով լուծված, ջերմ ու մտերմիկ տրամադրությամբ թափանցված դիմաքանդակները, ռուս հանճարեղ նկարիչ Միխայիլ Վրուբելի հայտնի կտավներին ձայնակցող Դևի ֆիգուրը (1912) և այլն:



Նկար 1.
**«Քրիստոսի
գլուխը» («Մեռած
Քրիստոսը», 1914)**



**Նկար 2. Իսայ Դոբրովյենի
դիմաքանդակը (1913)**



**Նկար 3. Լև Տոլստոյի
դիմաքանդակը (1914)**

Ֆրանսիացի նկարիչների և Փարիզի Գեղեցիկ արվեստների ազգային ընկերության ցուցահանդեսներում այս աշխատանքների կողքին Դ. Գյուրջյանը ներկայացրել է նաև այդ տարիների իր լավագույն գործերը՝ «Քրիստոսի գլուխը» («Մեռած Քրիստոսը», 1914, նկ. 1), դաշնակահար և դիրիժոր Իսայ Դոբրովյենի (1913, նկ. 2) և Լև Տոլստոյի (1914, նկ.

3) դիմաքանդակները, որոնք աչքի են ընկնում կերպարների հոգեբանական և հուզական սուր, արտահայտիչ մեկնաբանությամբ: Հ. Գյուրջյանը հմտորեն է օգտագործել կրաքարի և մարմարի պլաստիկական հատկությունները: Նրա հատիչը կենդանացրել է նյութի անհաղորդ, իներտ զանգվածը, մակերևույթը թափանցել լույսով և այն շնչեցրել լուսաստվերային մեղմ թրթռներով կամ աշխույժ խաղով:

«Մեռած Քրիստոսի» ողբական կերպարում, նրա միտումնավոր խեղաթյուրված, ձգված-երկարած, մարդկային հոգեկան և ֆիզիկական տառապանքների դրոշմը կրող դիմաձևերում արտացոլվել են Առաջին աշխարհամարտի նախօրեին եվրոպական մտավորականության շրջաններում, հատկապես գրական-գեղարվեստական միջավայրում թանձրացած հուսահատության և հոռետեսության տրամադրությունները, «աստվածների աղջամուղջի», համընդհանուր լքվածության միջ-շեական գաղափարները, որոնք իրենց առավել ցայտուն, ծայրահեղ դրսևորումներն էին գտնում սիմվոլիստների և էքսպրեսիոնիստների ստեղծագործության մեջ:

Միանգամայն այլ՝ ռոդենյան ոճով, պլաստիկ ձևերի դասական պարզությամբ, բայց, միաժամանակ, իմպրեսիոնիստական զգայունությամբ ու հոգեբանական խոր իմացությամբ են լուծված ստեղծագործական ինքնամոռացման, հոգևոր և մտավոր ուժերի կենտրոնացման պահին պատկերված Ի. Դոբրովեյնի և Լ. Տոլստոյի դիմաքանդակները: Լև Տոլստոյի «Մտածողը» կոչված, բնականին մոտ և բնականից չորս անգամ խոշոր տարբերակներով հայտնի դիմաքանդակում Հ. Գյուրջյանը, պահպանելով ռուս գրողի արտաքին մասնությունը, նրա բնավորության ու խառնվածքի խարակտերային հատկանիշները, այսուհանդերձ, հասել է գեղարվեստական լայն ընդհանրացման, տիպականացրել նրա կերպարը:

Մոնումենտալ քանդակագործության բնագավառում Հ. Գյուրջյանի ձեռնարկած առաջին փորձն էր մասնակցությունը Բաքվի հայոց կուլտուրական միության գեղարվեստական մասնաճյուղի նախաձեռնությամբ՝ Երևանում Խ. Աբովյանի հուշարձանը կանգնեցնելու նպատակով 1910-ին հայտարարված մրցույթին: Մրցութային հանձնաժողովին Հ. Գյուրջյանի ներկայացրած էսքիզները (դրանք չեն պահպանվել), թեպետև արժանացան կերպարվեստի հարցերում բանիմաց Ալեքսանդր Շիրվանզադեի բարձր գնահատականին, այդպես էլ թղթի վրա

մնացին, քանի որ գործն ի վերջո հանձնարարվեց Փարիզում բնակվող հայազգի մեկ այլ քանդակագործի՝ ծնունդով երևանցի Անդրեաս Տեր-Մարուքյանին¹:

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուն պես Յ. Գյուրջյանը զորակոչվել է զինվորական ծառայության, թողել բուլոնյան իր արվեստանոցն ու մեկնել Մոսկվա: Այստեղ նա շարունակել է զբաղվել հաստոցային դիմաքանդակով, սակայն փոխվել է նրա ստեղծագործությունների հուզական շեշտը՝ հայեցողական կամ խորհրդավոր, ներփակ-ներինքնող տրամադրություններն իրենց տեղն են զիջել ռոմանտիկական անհանգիստ, հախուռն զգացմունքներին, որոնք երբեմն



*Նկար 4.
Ալ. Շիրվանզադեի դիմաքանդակը (1916)*

դրսևորվել են էքսպրեսիվ կերպով: Այդպիսի տպավորություն են թողնում, հատկապես, Ֆյոդոր Շալյապինի (1917) և Բեթհովենի (1919) դիմաքանդակները, որոնցում կերպարներն առավել արտահայտիչ դարձնելու նպատակով Յ. Գյուրջյանը քանդակային ձևերը կտրուկ աղճատել ու ենթարկել է համաչափական սուր շեղումների:

1916-ին Թիֆլիսում են ստեղծվել Ալ. Շիրվանզադեի (նկ. 4), զորավար Անդրանիկի (այդ աշխատանքը մեզ չի հա-

¹ 1915-ին Բաքվի հայոց կուլտուրական միությանը հասցեագրված Ա. Տեր-Մարուքյանի նամակից տեղեկանում ենք, որ բնական չափերը զգալիորեն գերազանցող հուշարձանն արդեն ծուլվել է բրոնզից և, պահանջվող գումարը վճարելուց հետո, կարող է Կովկաս ուղարկվել: Սակայն առաջացած ֆինանսական խնդիրների, ինչպես և պատերազմի հետ կապված խոչընդոտների հետևանքով էս. Արվյանի արձանը դեռ երկար մնաց Փարիզում: Ա. Տեր-Մարուքյանի մահից միայն վեց տարի անց՝ 1925-ին, խորհրդային Չայսաստանի կառավարությունը ծուլարանից գնեց ու երևան հասցրեց այս քանդակը, որը 1933-ին կանգնեցվեց Աստաֆյան (այժմ՝ Արվյան) փողոցում՝ Պողոս և Պետրոս առաքյալների դեռևս չավերված եկեղեցու մոտ, ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնին կից հրապարակում: Մի քանի անգամ տեղահանվելուց հետո այն վերջնականապես հանգրվան գտավ Քանաքեռում՝ էս. Արվյանի տուն-թանգարանի առջև (1964):

սել) և մեծահարուստ Ա. Մելիք-Ազարյանցի՝ պլաստիկական նկարչագեղ ձևերով մշակված, դինամիկ ռիթմով կառուցված, հոգեբանական դիպուկ շտրիխներով բնութագրված, իսկ վերջին դեպքում՝ սոցիալական սուր նկարագրով օժտված դիմաքանդակները:

Արտահայտչական զուսպ ու չափավոր միջոցներով է Հ. Գյուրջյանը լուծել այդ տարիների իր լավագույն գործերից մեկը՝ Ս. Ռախմանինովի դիմաքանդակը (1915), ուր արտաքննապես անշարժ, անհաղորդ, փակ ձևերի մեջ է ամփոփել մեծ կոմպոզիտորի ու դաշնակահարի հոգևոր անհանգիստ կյանքը, նրա մարդկային ու ստեղծագործական բարդ ներաշխարհը:

Քանդակագործի պորտրետային այս աշխատանքները, ինչպես նաև դիցաբանական կամ կրոնական թեմաներով կատարված փոքրաչափ հորինվածքները («Լեդա», 1915, «Վեներա», 1916, «Մեղսագործություն», 1916) ներկայացվել են Մոսկվայում և Պետրոգրադում 1915-ին բացված «Արվեստի աշխարհ» («Мир искусства») ստեղծագործական միավորման, ինչպես նաև 1917-ին և 1919-ին Թիֆլիսում կայացած՝ հայ արվեստագետների նորաստեղծ միության առաջին և երկրորդ ցուցահանդեսներում:

Թեպետ իր ստեղծագործական որոնումներում Հ. Գյուրջյանը մշտապես մնացել է ռեալիստական արվեստի սահմաններում, նա ոչ միայն ուշադիր հետևել է XX դարի առաջին երկու տասնամյակներում եվրոպական կերպարվեստում տարածում գտած մոդեռնիստական երևույթներին, այլև չափավոր կերպով օգտագործել նորարարների՝ կուբիստների, ֆուտուրիստների, էքսպրեսիոնիստների մշակած արտահայտչական միջոցները: Ֆրանսերենով գրված իր վերոհիշյալ հոդվածում, ինչպես նաև Երվանդ Քոչարի հետ Փարիզում ունեցած զրույցի ժամանակ, Հ. Գյուրջյանը հաստատել է ռեալիստական արվեստի հանդեպ իր գերադասելի վերաբերմունքը, բայց միաժամանակ նշել, որ քանդակային բարձրարժեք գործեր հնարավոր է ստեղծել նույնիսկ «բնության, տեսանելի իրականության հետ արտաքին որևէ նմանություն չունեցող՝ վերացական, արստրակտ ձևերով»¹:

Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած տարիներին արվես-

¹ Տե՛ս. **Ք. Գ. Դրամյան**. Акоп Гюрджян, с. 76:

տազետը զբաղվել է բուլշևիկյան կառավարության ծրագրած աշխատանքներով: Նպատակ էր դրված ոչ միայն «արվեստը դուրս բերել փողոց», այն մասսայականացնել, այլև «մոնումենտալ պրոպագանդայի» միջոցով գաղափարական խնդիրներ լուծել: Անվանի հեղափոխականների, մարքսիզմի հիմնադիրների, կուսակցության առաջնորդների, ինչպես և մշակութային առանձին գործիչների հիշատակը հավերժացնող բազմաթիվ հուշարձաններ պետք է կանգնեցվեին: Նախատեսված ծրագրի շրջանակներում Յ. Գյուրջյանը կատարել է Միխայիլ Վրուբելի հուշարձանի կավե մոդելը և Կարլ Մարքսի հսկայական՝ 15 մետրանոց բազմաֆիգուր կոթողի էսքիզները (հայտնի են լուսանկարներով): Սակայն անհրաժեշտ միջոցների և համապատասխան նյութերի բացակայության պատճառով դրանք չեն իրագործվել: 1921-ին Խորհրդային Ռուսաստանի լուսավորության ժողկոմ Ա. Վ. Լունաչարսկու հատուկ գրությամբ Յ. Գյուրջյանը գործուղվել է Փարիզ, որտեղից այլևս հետ չի վերադարձել:

1920-ական թվականներին քանդակագործի արվեստն աննախադեպ վերելք է ապրել: Այդ շրջանում նա ստեղծել է հիշարժան տասնյակ աշխատանքներ, ակտիվորեն մասնակցել ֆրանսիացի, ֆրանսահայ և ռուս արվեստագետների՝ Փարիզում, Բրյուսելում, Անտվերպենում, Բելգրադում, Պրագայում, Տոկիոյում և այլուր կազմակերպված ցուցահանդեսներին: Այդ քաղաքների թանգարաններում են պահվում հայ արվեստագետի գործերից մի քանիսը: 1924-ին Յ. Գյուրջյանը ցուցահանդես է բացել Նյու Յորքում, էլ ավելի ծավալուն էր 1926-ին Փարիզի Շարպանտյե պատկերասրահում տեղի ունեցած նրա անհատական մեծ (շուրջ 100 աշխատանք ընդգրկող) ցուցահանդեսը¹, որից հետո Յ. Գյուրջյանի վրա լուրջ ուշադրություն են դարձրել ֆրանսիացի հեղինակավոր արվեստաբաններ Գյուստավ Կանը, Լուի Վոքսելը, Դենի Ռոշը, Մաքսիմիլիան Գոթյեն² և ուրիշներ:

Այդ տարիներին Յ. Գյուրջյանի ստեղծագործության թեմատիկ ցանկը նկատելիորեն ընդլայնվել է: Առավել կարևորվել է սյուժետային քանդակը, որն ինքը՝ արվեստագետը բնութագրել է որպես «ազատ

¹ Տե՛ս. Les sculptures de A. Gurdjan. Paris, Hotel Jean Charpentier, 1926:

² Մաքսիմիլիան Գոթյեն հայ քանդակագործին նվիրված առաջին մենագրության հեղինակն է (տե՛ս. **Maximilien Gauthier**. Gurdjan. Paris, Les Grmieux, 1952, հայերեն զուգահեռ թարգմանությունը՝ Արշակ Չոպանյանի):

ստեղծագործություն»։ 1920-ական թվականներին մա հաճախ է անդրադարձել անտիկ դիցաբանությանը, Հին և Նոր Կտակարաններին, պատմական դեմքերին ու իրադարձություններին՝ «Լեդա», 1922, «Դիանա», 1922, «Խաչից իջեցնելը», 1923, «Ողբ», 1923, «Կլեոպատրա», 1924, «Սալոմե», 1926 (նկ. 5) և այլն։



Նկար 5. «Սալոմե» (1926)

Դրանցից առավել ուշագրավ աշխատանքն, անշուշտ, «Սալոմեն» է, որը հայտնի է բրոնզից ձուլված և բելգիական սև գրանիտից կերտած տարբերակներով։ Ավետարանում հիշատակված այս «ճակատագրական կնոջ» (ինչպես և, ի դեպ, Հուդիթի կամ Կլեոպատրայի) կերպարը բազմիցս է գրավել ռոմանտիզմի ու սիմվոլիզմի դիրքերում կանգնած կամ դրանց հարող գրողների և արվեստագետների ստեղծագործական երևակայությունը. հիշենք թեկուզ Գ. Ֆլոբերի, Ս. Մալարմեի, Օ. Ուայլդի չափածո և արձակ երկերը, Ժ. Մաս-

նեի, Ռիխարդ Շտրաուսի, Ֆ. Շնիտի երաժշտական դրամաները, Գ. Մորոյի, Գ. Կլիմտի, Օ. Բյորդսլիի գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքները, հայերից՝ Վ. Սուրենյանցի և Վ. Գայֆեճյանի կտավները։ Հ. Գյուրջյանի «Սալոմեն» այդ կերպարի գեղարվեստական մարմնավորման առավել հաջող օրինակներից է։ Եբրայական արքայադստեր դիվային ամբարտավան գեղեցկությունը, նրա հեշտալի ու զգայատենչ մարմնի ձևերը, ընդունած դիրքը, գլխի կամակոր, հպարտ դարձումը, արյունոտ ընծան կարծես «գուրգուրող» ձեռքի ծալքերը, ինչպես և եգիպտական ոճով՝ ուղիղ անկյան տակ տարածության մեջ շրջված ու հարթված, հստակ ու ճկուն ուրվագծերով սահմանազատված ծավալները ոչ միայն դեկորատիվ նրբագեղություն, այլև արտակարգ պլաստիկական ուժ, մոնումենտալ շունչ են հաղորդում չափսերով համեստ այս աշխատանքին։

Հ. Գյուրջյանի 1920-ական թվականների ստեղծագործության մեջ նկատելի տեղ են զբաղեցրել մա երաժշտական-պարային, տեսլարա-

նային, սպորտային մոտիվները («Տավղահարուհի», 1922, «Երաժշտություն», 1923, «Պարուհի», 1922, «Պար», 1923, «Տանգո», 1925, «Ցլամարտ», 1923, «Բռնցքամարտ», 1923 և այլն): Իր պորտրետային բազմաթիվ աշխատանքներում նա կիրառել է արտահայտչական նորանոր ձևեր ու եղանակներ՝ խորացնելով և ցայտեցնելով պատկերված մարդկանց հուզական-հոգեբանական նկարագիրը («Տիգրան Խան-Քելեքյան», 1921, «Սերոբ Սվաճյան», 1922, «Տիկին Սաբատյե», 1923, «Տիկին Կրիչևսկայա», 1924, «Ալիսա Սմիռնովա», 1925, «Սևամորթը», 1926, «Գեորգի Յակուլով», 1927, «Մարտիրոս Սարյան», 1927 և այլն):

3. Գյուրջյանի փարիզյան քանդակներին բնորոշ է ոչ միայն ժանրային բազմազանությունը, այլև կոմպոզիցիոն տիպերի ու տեսակների առատությունը՝ կլոր քանդակներ, բարձրաքանդակներ, հարթաքանդակներ, կիսարձաններ, կիսաֆիգուրներ, միաֆիգուր և բազմաֆիգուր հորինվածքներ: 3. Գյուրջյանն ազատորեն է կիրառում ինչպես դասական, այնպես էլ հին եգիպտոսի, արխաիկ Յունաստանի, հայկական միջնադարի, 1920-ական թվականներին տարածում գտած «զարդային ոճի» («ար դեկո») գեղարվեստական սկզբունքները: Ընդ որում, նրա գործերում հանդիպող դեկորատիվ տարրերը երբեք չեն դառնում ինքնանպատակ: Քանդակների գունավորումը կամ թեթևակի երանգավորումը, գրաֆիկական շեշտադրումները, բնական ձևերի աղճատումները, անսովոր շեղումներն ու կրճատումները, - այդ ամենը 3. Գյուրջյանի կողմից արվում է չափի այնպիսի զգացողությամբ, գեղարվեստական այնպիսի տակտով, որ չի թողնում էլլեկտիկ կամ մաներային քմահաճ տպավորություն:

Նախորդ տասնամյակի համեմատությամբ, 1920-ական թվականներին և առհասարակ՝ փարիզյան շրջանում 3. Գյուրջյանի ստեղծած աշխատանքներում նյութի ընտրության ու դրա մշակման առումով ևս որոշակի փոփոխություններ են նկատվում: Արվեստագետը փաստորեն հրաժարվում է մարմարից, դեկորատիվ-ոճավորական խնդիրներ լուծելու նպատակով կավի և գիպսի հետ մեկտեղ դիմում է փայտին, իսկ մոնումենտալ-կոթողային տպավորության հասնելու համար օգտվում կարծրակուռ որձաքարերից՝ սևակուճ (բազալտ), հատաքար (գրանիտ): Դա նույնպես վկայում է ինչպես արխաիկ հունական, այնպես էլ եգիպտական հին քանդակի հանդեպ 3. Գյուրջյանի աճող հետաքրքրությունը:

1930-ական թվականներին նշված միտումները շարունակվում են արվեստագետի լավագույն դիմաքանդակներում, որոնցից են «Դերասանուհի Դենրիետտա Պասկարը» (1933) և «Կաթողիկոս Գարեգին Յովսեփյանը» (1935): Դեռավոր, աղոտ, գրեթե աննշմար նմանություն կա Դ. Պասկարի դիմաքանդակի և եգիպտական հին կերպարվեստի գլուխգործոցներից մեկի՝ Նեֆերտիտի կիսանդրու միջև: Նկատի ունենք ոչ միայն դրանց կոմպոզիցիոն համաչափելի, դիմահայաց կառուցվածքը, քանդակային ձևերի նրբագեղությունն ու հղկվածությունը, գույնի միջոցով կանանց դեմքերը կենդանացնելու, դիմագծերը շեշտելու եղանակը, այլև այս երկու աշխատանքներում արտահայտված՝ քնարական փոքր ինչ թախծոտ տրամադրությունը, որն իր տեսանելի դրսևորումն է ստացել թե՛ Դ. Պասկարի, թե՛ ազնվագարմ եգիպտուհու շուրթերին հազիվ նշմարված, թեթև ժպիտի ու նրանց մտամփոփ հայացքների մեջ: Միևնույն ժամանակ, տարիքն առած, բայց դեռ գեղեցիկ դերասանուհու կերպարը Դ. Գյուրջյանի դիմաքանդակում ձեռք է բերել հոգեբանական ավելի կոնկրետ ու սուր մեկնաբանություն:

Կաթողիկոս Գարեգին Յովսեփյանի դիմաքանդակում Դ. Գյուրջյանին հաջողվել է հայ մշակույթի երախտավորի ազգային շեշտված դիմագծերի՝ ճակատն ակոսող խոր կնճիռների, ոսկրոտ այտերի, պարապ թողնված ու ստվերոտված ականախորշերի, բարակ շուրթերի տխուր, վշտագին արտահայտությունը համադրել մտավոր լարված, իմաստուն կյանքով ապրող ծերունու ներքին՝ հոգևոր հարուստ նկարագրի հետ:



Նկար 6. «Սիվեր» (1934)

Դ. Գյուրջյանի անիմալիստական՝ կենդանական ժանրին պատկանող քանդակներից շատերը («Սիամի կատուն», 1932, «Աղվեսը», 1934 (նկ. 6), «Կապիկը», 1938, «Որսաշունը», 1939 և այլն), արվեստաբան Ռ. Դրամբյանի դիպուկ բնութագրությամբ, գրեթե

«պորտրետային» կերպավորում են ստացել, քանի որ դրանցում հեղինակը ձգտում է ներկայացնել ոչ միայն կենդանիների ցեղային բնորոշ հատկանիշները, այլև նրանցից յուրաքանչյուրի «բնավորության» անհատական դրսևորումները՝ համարձակություն, երկչոտություն, խորամանկություն, հետաքրքրություն և այլն¹:

Մերկ կնոջ մարմինը ներկայացնելիս («Մերկ մարմին», 1922, «Մերկություն», 1933, «Պատանեկություն», 1934, «Կարիատիդ», 1935, «Կանացի իրան», 1939) Յ. Գյուրջյանը հաշվի է առնում ոչ միայն անտիկ-դասական, այլև արդի քանդակագործության մեջ այդ ժանրին հաճախ անդրադարձած և դրան կենսալի նոր լիցք հաղորդած վարպետների, մասնավորապես՝ Արիստիդ Մայոլի ստեղծագործական փորձը:

1935-ից հետո և, առանձնապես, 1940-ական թվականներին արվեստագետը հոգեկան և ֆիզիկական ուժերի անկում է ապրում: Նա գրեթե դադարում է հանդես գալ փարիզյան գեղարվեստական սալոններում: 1948-ին Յ. Գյուրջյանը վախճանվում է: Յոթ տարի անց Փարիզի Լև Տոլստոյի անունը կրող պուրակներից մեկում տեղադրվում է հայ քանդակագործի «Մտածողը»՝ ռուս հանճարեղ գրողի վերոհիշյալ մեծադիր կիսանդրին, որի հանդիսավոր բացման արարողության ժամանակ Անդրե Մորուան ասել է. «Տարիներ առաջ, իբրև եզակի բացառություն, Փարիզի Ալմա հրապարակում տեղադրվեց լեռն վիպասան Յենրիկ Սենկևիչի հուշարձանը: Այսօր մենք բացում ենք ևս մի օտարերկրացու՝ Լև Տոլստոյի հուշարձանը, որի հեղինակն է նույնպես այլազգի՝ Փարիզում ապրած հայ տաղանդավոր քանդակագործ Յակոբ Գյուրջյանը: Թող այս քարակերտ հրաշալի կոթողը դառնա մեր ժողովուրդների բարեկամության խորհրդանիշը»²:

Անցավ ևս մի քանի տարի, և իրականացավ Յ. Գյուրջյանի վերջին ցանկությունը՝ հայրենիք վերադարձան ու Յայաստանի պետական պատկերասրահում իրենց պատվավոր տեղը գրավեցին նրա անձնական արխիվը և ստեղծագործական հարուստ ժառանգությունը՝ շուրջ 450 աշխատանք:

Դժբախտաբար անկատար մնաց արվեստագետի մեկ այլ երազան-

¹ Տե՛ս, **Ք. Գ. Դրամյան**. Акоп Гюрджян, с. 70-72:

² Տե՛ս, **Անտո Բրջումյան**. Скульптор Акоп Гюрджян // Огонек, 1982, декабрь, N 50, с. 28 :

քը. նրա փափագն էր Շուշվա մերձակա ժայռերի վրա քանդակված տեսնել դեռ 1923 թվին իր կերտած՝ փոքրաչափ, բայց մոնումենտալ մեծ թափ ունեցող «Հաղթանակը» (նկ. 7): Հիշեցնենք, որ սրանից քառորդ դար առաջ, երբ նշվում էր Հ. Գյուրջյանի 100-ամյա հոբելյանը, Երևանի քաղաքային իշխանությունները որոշում ընդունեցին երկկողմանի այս բարձրաքանդակի խոշորացրած տարբերակը տեղադրել Մարշալ Բաղրամյանի պողոտայի վրա՝ այնտեղ, ուր այսօր կանգնած է փառապանծ զորավարի ձիարձանը:



Նկար 7. «Հաղթանակ» (1923)

Հ. Գյուրջյանի «Հաղթանակը» խոշորացնելու և այն համապատասխան նյութի մեջ տեղափոխելու աշխատանքները

հանձնարարվեցին քանդակագործ Լևոն Թոքմաջյանին, որն էլ ոգևորությամբ ընդունեց առաջարկը: Սակայն հետագայում, ինչ-ինչ պատճառներով, գործը դանդաղեց և այդպես էլ չհասավ իր նպատակին: Գուցե հիմա է եկել ճիշտ ժամանակը կրկին այդ հարցով մտահոգվելու ու հաղթանակած Արցախում դնել Հ. Գյուրջյանի «Հաղթանակը»: Դրանով մենք մեր հարգանքի տուրքը կմատուցենք հայրենասեր արվեստագետի հիշատակին և այդպիսով, վերջապես, կիրականացնենք նրա վաղեմի երազանքը:

ԽԱՂԱՂԱՍԵՐ ԱՌԱՆՇԱՀԻԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Չկա ավելի վեհ ու պատասխանատու միսիա, քան խաղաղությունը պաշտպանելն ու նրա ամրապնդման համար միջոցների ձեռնարկումներն են՝ հանուն ներկա և գալիք սերունդների, հանուն պատերազմներից զերծ աշխարհի կառուցման: Դարերի փորձը համոզում է, որ բռնակցված ցանկացած տարածք իր էթնիկ տերերով (ազգություն, բնակչություն), որևէ բռնապետության ենթարկված լինելու պայմաններում առաջացնում է պայթյունավտանգ իրադրություն: Ուստի, բռնապետությունից ազատագրումը մեծ դեր ունի տվյալ տարածաշրջանի խաղաղության և ժողովրդավարության սկզբունքների ներդրման համար:

Հարեթյան Հայկ նահապետի ժառանգ Սիսակից սերված Առանը, որ Հայոց արևելից կողմում նշանակված էր կուսակալ և երկիրն էլ իր անունով կոչվում էր Առանք, հայտնի էր իր բարի, խաղաղասեր ու քաղցր բնավորությամբ, և նրան կոչում էին «Աղու Առան», երկիրն էլ՝ «Աղու Առանք», որի մեջտեղում դժվարահունչ առ-ը ժամանակի ընթացքում սղվում է և մնում Աղուանքը: Առանշահ նախարարական-թագավորական տոհմի հիմնադիր Աղու Առան տիրակալին հատուկ բարեմասնություններն ու մարդկային հատկանիշները ներկայացնում է պատմահայր Մ. Խորենացին, նրան բնութագրելով «այր անվանի, առաջինը բոլոր մտավորական և հանճարեղ գործերում», իսկ նրա տոհմը՝ «մեծ ու անվանի», որ ժառանգեց մինչև Կուր գետի վերին հոսանքը, ուր հայերեն խոսքի սահմանն էր - «զեզերք հայկական խոսիցս»¹:

Ժառանգական բարեպաշտությունն ու խաղաղասիրությունը, որպես բարոյական կատեգորիաներ, կրում էին նախ իրենք՝ Առանի տի-

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, գիրք II, գլ. Ը:

րակալները, ապա հաստատում երկրում՝ քաջ գիտակցելով, որ հարագատ ժողովրդի նկատմամբ հոգատարությունն ու արդարադատությունը, օրենքի առաջ իրավահավասարությունն ու պատասխանատվությունը, ազգային արժեքների ստեղծումն ու պահպանումը, ուժեղ բանակը հիմք են երկրի պաշտպանության, որով էլ՝ երկրում խաղաղության պահպանման: Իսկ ամենազլխավորը՝ աստվածապաշտության և հայրենասիրության գաղափարով հայ սերնդի դաստիարակությունն է, որով ուղղորդվում էին Առանշահիկները:

Ազգայնամոլության և շովինիզմի հասկացությունը այդպես էլ նրանց համար մնացին խորթ և անուղելի: Դա է հավաստում նրանց տիրապետության տակ գտնվող բազմաթիվ տարբեր ցեղերի առկայության իրավահավասարության պայմանների հաստատումը ի սկզբանե՝ խոհեմ և իմաստուն Առանից սկսած: Նրանք խաղաղությամբ ընդունում էին տարբեր ցեղերի մուտքը Առանք ու ժամանակի ընթացքում այդ հետամնաց ցեղերը յուրացնում էին քաղաքակրթության տարրերը:

Ազգամիջյան, միջպետական և խաղաղարար հարաբերությունների ներդաշնակ զարգացման, ժողովրդավար պետության կառուցման առաջընթացի ամենակարևոր գործոնը **Աստծո կենսական ճշմարտության հաստատումն է երկրի վրա**, որը պայմանավորված է՝ աշխարհաքաղաքական հարաբերություններում ազգերի ժառանգական առաքելությունների ու իրավունքների, քաղաքակրթությունների գիտակցված արժևորումներով:

Առանշահերի փայլուն ու պայծառ աստղաբույլի մեջ դժվար է առանձնացնել և գերապատվություն տալ հայրենասիրությամբ ու բարեպաշտությամբ իրար չզիջող հոգևոր ու աշխարհիկ տերերից որևէ մեկին, քանի որ յուրաքանչյուրն անձնուրաց նվիրվածությամբ է վարել իր իշխանությունը՝ ելնելով ժամանակի քաղաքական իրադրություններից: Պարզապես հարկ է նշել պետական-վարչական և մշակութային մշանակության բացառիկ անհատականությունների շարք համալրող օրինակներ, որոնց պատմությունը պահպանել է պատմիչ Մովսես Կաղանկատվացին:

ՌԻՈՆԱՅՐ ԱՐՔԱ, որն առաջինն ընդունեց քրիստոնեական մկրտությունն Առանում Գր. Լուսավորչից, երկրում հաստատեց կարգ ու կանոն, մերժեց կամայականությունն ու բարձրացրեց ճշմարտության գաղափարը, նրա խնդրանքով Լուսավորչի թոռ Գրիգորիսը ձեռնադրվեց

Առանքի առաջին քրիստոնյա առաջնորդ, ժողովուրդը նրան անվանում էր «տիրող լույսի որդի»¹:

V դ. 80-ականներից Հայոց Արևելից կողմում ստեղծվեց Հայոց թագավորության բեկորը՝ Առանշահիկ թագավորությունը՝ դառնալով հայոց պետականության առանցքը: Այդ թագավորության գահակալն էր **ՎԱՉԱԳԱՆ ԲԱՐԵՊԱՇՏԸ** (487-510 թթ.): Նա վերացրեց Հայրենիքի հզորացմանը խանգարող երևույթները, ստեղծեց այն «Սահմանադրություն կանոնականը», որի 21 կանոնով ամրացավ պետականությունն ու երկրում հաստատվեց խաղաղություն, կառուցեց տարվա օրերի թվով եկեղեցիներ: Բարեպաշտ թագավորը «սահմանադրության» կանոններով ընդգծված պահանջ էր ներկայացնում «աշխարհիկ տերերի պարտականություններն ու իրավունքները երկրի կառավարման և օրենքի պահպանման գործում»²: Անզիջում դատ ու պատիժ կիրառելով երկիրը քայքայող աղանդների նկատմամբ, արդարադատ թագավորը հոգատարությամբ դպրոցներ էր բացում նաև այդ աղանդավորների երեխաների համար, քանի որ երկրի ապագան ապահովելու միջոցը նա տեսնում էր հասունացող սերնդի կրթության ու աստվածապաշտ դաստիարակության մեջ:

Հավասարությունն ու արդարությունը որպես հասարակական բարոյական կատեգորիաներ, հիմնարար տեղ գրավեցին նրա ստեղծած կարգ ու կանոնի մեջ, որով ամենաամօրեն վարքով ապրողներն անգամ, լինի հոգևոր դասի ներկայացուցիչ, իշխանավոր, թե հասարակ գյուղացի, հավասարապես պատասխանատու էին օրենքի առջև: Ահա այդ սկզբունքով էր ղեկավարում Վաչագան թագավորը, համաձայն իր «սահմանադրական կանոնականի», որն ընդունվեց V դ. վերջում և VI դ. սկզբին, Աղվենի ժողովում: Թագավորն օրենքների ստեղծմանը մասնակից էր դարձրել ոչ միայն աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների բարձր ներկայացուցիչների ու բարձրախավ ազնվականների, այլև շինականների: Համաժողովրդական այդ երևույթը բեկում առաջացրեց նորաստեղծ թագավորության հասարակական-քաղաքական կյանքում: Բոլորը գոհ էին իրենց վիճակից, համերաշխ էին, պաշտում էին թագա-

¹ Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղուանից աշխարհի», Երևան, 1969 թ., էջ 10:

² Բագրատ Ուլուբաքյան, «Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը», Երևան, 2001 թ., էջ 88:

վորին և միասին, խաղաղաբար լծվել էին աշխարհաշինությանը: Եվ այսքանից հետո գալիս ես եզրահանգման. ուրեմն, V դ. հայոց Առանքուն գոյություն ուներ **քաղաքացիական հասարակություն**, որի գոյությունը պայմանավորված էր օրենքի գերակայությամբ, էթնիկական համերաշխությամբ, որով և Վաչագան Բարեպաշտի թագավորությունում ձևավորվեց էթնիկական հավաքականությանը պատկանելու գիտակցում: Ցնցող է այդ ժամանակի համար այն երևույթը, երբ երկրի միապետը զբաղված էր բոլոր խավերի նկատմամբ հոգատարությամբ: Եվ,

- Ը կանոնով ծանրագույն պատիժների վճիռներ կայացնում էր միայն թագավորը:
- Դ կանոնի համաձայն, շինականից հարկը գանձվում էր ըստ կարողության և չունեցողը չէր վճարում:

Բարեպաշտության ու խաղաղասիրության նոր որակ է ներկայացնում Վաչագան Բարեպաշտի ուղիղ ճյուղը շարունակող ժառանգը՝ XIII դ. Առանք երկրի մի մասի՝ Արցախի «թագավոր», «ինքնակալ արքա» **ՀԱՍԱՆ ՋԱԼԱԼ ԴՈԼԱՆ**, որն իր անվանումը ստացել է արաբներից, բարձր մարդկային հատկանիշներ խորհրդանշելով. ՀԱՍԱՆ-գեղեցիկ, ՋԱԼԱԼ-փառք, վեհություն, մեծություն, ԴՈԼԱ-հարստություն, պետություն, իշխանություն: Մեծ մարդասեր ու աստվածապաշտ, հայրենիքի նվիրյալ Հասան Ջալալը կատարեց մոնղոլների պահանջը և իր ժողովրդին կոտորածից փրկելու համար զոհեց իր Ռուզուքան դստերը, նրան կնության տալով զորապետ Չարմաղանի որդի Բորա Նոյինին: Նա խոհեմաբար բարեկամության ու խաղաղության դաշինք հաստատելով թշնամու հետ, հայրենի երկիրը պահեց իր ձեռքում: Վաչագան Բարեպաշտի այս ժառանգը նույնպես կատարեց անուրանալի և ցնցող արարք. ժողովրդի վրա ծանրացած օտար ասպատակիչների ծախսերը և անվճարունակ աղքատի հարկը վճարում էր ինքը՝ նրանց փրկելով սարսափելի պատիժներից: Հասան Ջալալի խաղաղասիրական ու խոհեմ դիվանագիտական հոգածության ոլորտում էին նաև Արևելյան Հայաստանի մյուս երկրամասերը, ինչպես նաև Հայկական Կիլիկիան: Նա հոգատար էր Վրաստանի նկատմամբ, որի արքայատան հետ ուներ ազգակցական-բարեկամական կապեր և գլխավորելով հայոց ուժերին, 1260 թ. Դավիթ թագավորի հետ կազմակերպեց ապստամբական շարժում, կալանավորվեց ու հավատքին չդավաճանելու համար հողակոտոր արվեց Ղազվինում, 1261 թ.:

Պատմական նկարագրությունների մեջ հենց առաջին նախադասություններից է՝ «խաղաղասեր իշխան էր Դիզակի տեր **ԵՍԱՅԻ ԱՐՈՒ ՄՈՒՍԵՆ** (Մովսեսի հայր Եսայի, VIII-IX դդ.): Սակայն իրեն պարտադրված պատերազմներից միշտ էլ դուրս է եկել հաղթանակով»¹: Գուցե կարելի է բավականանալ այսքանով, եթե չլիներ արաբ բռնակալ Բուղայի հպատակվելու առաջարկությանը տված մեծ նշանակության արժանապատիվ հայի պատասխանը, որն ունի ազգային քաղաքական-մշակութային արժեք: Այդ պատասխանով կարծես ներկայացվում է Հայկի ժառանգների քաղաքակրթության գերակայությունը Հայկական լեռնաշխարհում ու նրա նշանակությունը աշխարհաքաղաքական զարգացումներում, հայ տիրակալների կողմից տարբեր երկրներում կառուցողական մշակութային-շինարարական գործունեությունը և ազգային առաքինությունները՝ որպես չափանիշ՝ իր հողում խաղաղ ապրող մարդու ըմբոստությունն ու անհանդուրժողականությունը նվաճողի դեմ. «Աշխարհակալների կարգն է՝ իրենց հպատակների երկիրը զնալ խնամակալությանը, իբրև խնամարկուներ վերացնել տառապալների նեղությունները և ոչ թե երկիրն ավերել ավազակաբար և ամայացնել սրով ու գերությամբ: Արդ, թող հայտնի լինի, որ ինչքան իմ գորությունը բավականանա և կենդանի լինեն, դեմ կկանգնեն տեր աստծո ուժով և զորությամբ, զնա՛ այստեղից, հեռացիր մեր սահմաններից: Եթե, ինձնից հեռանաս, կլինի խաղաղություն, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ. դու կդառնաս ոսոխ «պատերազմը քոնը կլինի, իսկ հաղթանակը՝ մերը»²: «Հեռացիր խաղաղությամբ», - ժամանակի հերոսի խոսքերի ազդեցության տակ, բարբարոսը մեղմանում է և ընտրում այն ճանապարհը, որով հաղթում են հերոսին՝ խարդավանքը. խաղաղության բանակցություններ վարելու պատրվակով, Բաղդադի խալիֆի կողմից Եսայի Արու Մուսեն ու բազմաթիվ հայ իշխաններ հրավիրվում են, ձերբակալվում և ուղղարկվում տաժանակրության:

ԳՐԻԳՈՐ ՀԱՄԱՍ (ՀԱՄԱՍ ԲԱՐԵՊԱՇԵՏ) թագավոր, որը վերականգնեց Առանի կամ Աղուանքի թագավորությունը նաև Կուրի մյուս ափում, Կամբեճան գավառում: Կառուցել է Հավքախաղաց բերդը: 893 թ. բարձր

¹ Բագրատ Ուլուբաբյան, «Արցախի պատմություն», Երևան, 1994 թ., էջ 44:

² Թովմա Արծրունի, «Պատմութիւնն տանն Արծրունեաց», ՄՊբ, 1887 թ., էջ 178-179 (աշխարհաբար շարադրությունը Բագրատ Ուլուբաբյանի):

վճարներով արաբ ասպատակիչներից ազատել է երկաթե կապանքներով գերված Հայոց կաթողիկոս Գևորգ Բ Գառնեցուն և Պարտավից բերելով, մեծարանքներով ճանապարհել Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՅԵՐԵՑ ԻՇՆԱՆ – 900-ականների կեսերին նրան հյուրընկալվելով Արդախի (Արցախ) նստավայրում, Հայոց Անանիա Մոկացի կաթողիկոսը գրել է. «Մեծ և փառավոր աստվածապահ և բարեպաշտ», որն սկզբից ևեթ հայտնել էր իր պատրաստակամությունը «բառնալ զխռովութիւն եկեղեցւոյ և միաբանել ի նոյն կարգ և ի կրոնս և ի հաւատ սրբոյ Լուսավորչին. զի որպէս էին հարք մեր, լիցուք և մեք մինչև յյաւիտեան»:

ՍԱՀԱԿ ՍԵՎԱԴԱ, որը մատենագիտական աղբյուրներում ներկայացված է որպես իմաստուն, քաջ ու բարեպաշտ իշխան, գրականության և ուսման հովանավոր: Նա Գարդմանքի, Քոսա և Փառնես գավառների տերն էր, զբաղվում էր լուսավորչությամբ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՆԵՔԵՐԻՍԸ Փառիստուն ստեղծեց թագավորություն, որ ճանաչվեց պարսից արքունիքի ու Բյուզանդիայի կայսեր կողմից՝ նրան ուղարկելով «թագ և արքայական ծիրանի»: Թագավորությունը դառնում էր ուժեղ վարչական կազմավորում և նրա նպատակն էր դառնալ հայոց պետության համար ամուր պատվար օտար հարձակումների դեմ:

Ազգատոհմերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի «զենետիկ դաստիարակություն»՝ ինքնակառուցված ծագումնաբանական հիմքի վրա, որով օժտված են Հայոց իրական պատմության մեջ Հայկ նահապետի սերունդներից ամենաերկարակյացը՝ Առանշահերի թագավորական տոհմը: Այդ զենետիկ ժառանգականության վեհագույն հատկանիշների կրողներից էր նաև Հաթերքի իշխանաց իշխան **ՎԱՆԹԱՆԳ ՄԵԾԸ**, որի պալատում և հովանավորությամբ, օտար և ազգակից իշխանավորների բռնություններից ժողովրդի ծանրացած վիճակի բարելավման, հասարակական հարաբերությունների կարգավորման ու հայ մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների մտահոգությամբ, ստեղծվեց Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Վախթանգյան եղբայրներն ու հարազատ բարեկամներ Զաքարյան իշխանապետները ձեռնամուխ եղան օրենքի գերակայության ճանապարհով հզորացնել հայոց երկիրը և խաղաղություն հաստատել:

1197 թ. Վախթանգ Գահերեցը և նրա եղբայրները կառուցեցին

Գոշավանքն ու նվիրեցին վարդապետ Մխիթար Գոշին: Վանքի Տաճարի ներսում փորագրված է. «... ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանի Վախտանգա և նորին զուգակցի Արզուխաթունի, և նորին եղբարցն՝ Սմայատա, Վասակա, Խոյրանա, Գրիգորո, Գրիգորիսի և նոցին զավակացն...»¹: Ահա այս զավակներն էին, որ իրենց ձեռքերի մեջ էին պահում երեք իշխանությունների բաժանված Արցախ Խաչենը, որտեղ համերաշխություն և խաղաղություն պահպանելու համար ենթարկվում էին «իրենց մեջ առավել շրջահայաց ու քաջամիտ իշխանին», «զահերեց էր դառնում քաղաքական ու ռազմական կարողություններով օժտված ժառանգը», «սրանք էին Առանշահիկ թագավորական տոհմից սերվածները և սրանք էին իշխանապետության օրինական ժառանգները», որոնցից էր 1216 թ. միասնական Արցախի թագավոր, Վախթանգ Տանգիկի որդի Յասան Ջալալ Բարեպաշտը, որի անունով էլ տոհմը վերակոչվեց Յասան Ջալալյանք:

Կիլիկիայի Առանշահիկ Յեթումյանների արքայատան վերջին թագավոր Լևոն VI –ի գահազրկումից հետո, հայկական պետականությունը պահպանվում էր Յայոց Արևելից կողմում և վարչաքաղաքական այդ միավորի աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները գտնվում էին Յասան-Ջալալյանների ձեռքում, որոնք, ինչպես նախորդ տարիներին, իշխանապետությունն ստանձնում էին ժառանգաբար, Յայոց անկախությունն ու ինքնավարության իրավունքները պահպանում էին նույնիսկ օտարներին հարկատու լինելու պայմաններում, որի ժամանակաընթացքն ուղեկցվում էր տարբեր վայրիվերումներով:

XV դարից երկիրը սկսեց ավերածություններ կրել թուրքական ցեղերի նվաճումներից: Եվ, Առանշահ Յասան - Ջալալյանները տեր կանգնեցին Յայոց գոյապայքարին:

Նոր գոյապայքարի նոր որակի ձևավորմանը առաջինը ձեռնամուխ եղավ Գանձասարի **ՊԵՏՐՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ** (Խանձքեցի, գահ,՝ 1653-1675 թթ.), ինչը դրսևորվում էր դիվանագիտական **խաղաղ բանակցություններով, Խաչով ու սրով**: Յայոց փրկությունը կապելով Ռուսաստանի հետ, Պետրոս կաթողիկոսը Գանձասարից Ռուսաստան օգնության խնդրանքով Ալեքսեյ ցարին ուղարկեց առաջին պաշտոնական գիրը: Դա, ինչպես նշել է Բագրատ Ուլուբաբյանը, առաջին

¹ Դիվան հայ վիճագրության, VI, Երևան, 1977 թ., էջ 64-65:

պաշտոնական գիրն է և սրանից տարիներ հետո էր, որ գրեց նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, կանոնավոր գրագրությանը կազմակերպեց Առանշահիկ Խաղբակյան – Պռոշյան տոհմից Իսրայել Օրին, իսկ ազատագրական շարժման առաջնորդը և արցախյան գնդերի հրամանատարը դարձավ **ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ** կաթողիկոսը¹, որը շարունակեց իր նախորդների սկսած բարեկամական հարաբերությունները ռուսական արքունիքի հետ և ամբողջ կյանքն անցկացրեց ժողովրդի համար նաքառելով: Ռուսաստանի հետ հարաբերություններում ազնվագարմ կաթողիկոսը մնաց վեհամձն, շիտակ, հավատարիմ, երբեք չկասկածելով Պետրոս Մեծի, ապա՝ Եկատերինա կայսրուհու վստահեցնող խոստումների ճշմարտացիությանը, որոնք այդպես էլ մնացին անտեսանելի ու այդ վշտերից էլ մահացավ 1728-ին: Այդ հավատարմությանը զոհ դարձան նաև **ՀՈԿՀԱՆՆԵՍ և ՍԱՐԳԻՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐ** կաթողիկոսները, **ԴԱՆԻԵԼ ԲԵԿԸ** և այլք:

Իսկ մետրոպոլիտ Բաղդասար Հասան-Ջալալյանի մասին Լեոն գրում է, որ Հայոց եկեղեցու, նրա միասնության ու ավանդական լավագույն կողմերի անխաթար, անաղարատ զարգացման գործիչ էր, իր պարտականությունների ու պաշտոնական դիրքի ճշմարիտ գիտակցությամբ ապրող մարդ:

Առանշահ տոհմի իշխանություն ունեցող համարյա բոլոր ժառանգները նախանձախնդիր նվիրումով էին զբաղվում Հայոց լեզվի խնդիրներին, ընդունելով այն որպես ազգի հարատևման միակ և անքննելի պայման: Դրա վառ օրինակ է Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի տպագրությունը, որը հիմնականում գրաբար էր՝ «նուրբ ու բյուրեղային լեզվով», «վայելուչ և գեղեցիկ»², - այդպես է գնահատել Լեոն:

Բացահայտ է, որ հայոց լեզվի արցախյան ենթաբարբառի հիմքը գրաբար հայերենն է:

Առան-արցախյան բարբառը լեզվաբանների կողմից համարվում է եզերական լեզուներից ամենամեծը: Սակայն ես չեմ խորանա լեզվաբանական առանձնահատկությունների մեջ. դա զուտ մասնագիտական խնդիր է: Պարզապես մեծ ուշադրության է արժանի Առան-արցախյան հայերենում հիմնավոր տեղ զբաղեցնող «նով» բառի ծագումնաբանու-

¹ **Բագրատ Ուլուբաբյան**, «Արցախի պատմություն», Երևան, 1994 թ., էջ 135:

² **Լեո**, ՊՂԴԹ, էջ 125:

թյունը, որը թե՛ բովանդակային, թե՛ առարկայական, թե՛ արմատական իմաստներով հանգեցնում է նահապետ Նոյին ու նրա կառուցած տապանի իմաստին, որի ուսումնասիրությունը թողնվում է մասնագետներին:

Աստվածաշնչյան տեղեկությունների համաձայն, Նոյը կառուցել է ոչ թե նավ, այլ տապան, որը նավի տեսք ուներ և Նոյը բնակվում էր նրա մեջ՝ ջրերի վրա: Իսկ Նով-ը՝ միստը կամ բնակությունն էր Ամոն աստծու, «քաղաք Արամագոյայ Ամմոնի»¹: Հնարավոր է, որ հետագայում «Տապանը» ստացել է տիրոջ՝ Նոյի անունը՝ «Նով»:

Մեծառանքում (Խաչեն) կա «Նովեր» կոչվող հնագույն մի բնակավայր, որտեղ կա նով: Առան-արցախյան «նով»-ը ունի տարբեր պատկերներում մեզ ներկայացված Նոյյան Տապանի տեսք, պատրաստված է փայտից, տեղադրվում է աղբյուրին կից՝ ջուր հավաքելու համար:

Այսքանից կարելի է եզրակացնել, որ «Նոյ-Տապան-նով-նավ»-երը բոլոր իմաստներով կապված են իրար հետ, որոնք պահպանվել են ավանդաբար՝ իրենց իմաստների մեջ խորհրդանշելով Նոյ նահապետին: Իսկ ավանդականի պահպանումը Առանի տերերի համար ժառանգաբար փոխանցվող սրբազան պարտականություն է:

Ուսումնասիրությունները գալիս են հաստատելու, որ Առանը կուսակալ էր նշանակված մի տարածքի վրա, որտեղ հայերեն գրերի ստեղծումից շատ դարեր առաջ գոյություն ուներ գրաբար հայերենով խոսակցական լեզու, որի պահպանմանը նվիրված էին Առանշահերը, և որը տարածված լինելով Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան կողմում, վերջին եզերքը Կասպից կամ Վրկանա ծովն էր՝ «զեզերք հայկական խոսիցս»:

Ինչպես մարդկային, նույնպես և միջպետական հարաբերություններում, արդարությունն է բարոյական դրսևորումների չափանիշը: Առան-Արցախի պարագայում, դարեր շարունակ բախվել են երկու անհամատեղելի կատեգորիաներ՝ էթնիկ հայ ազգի քաղաքակրթությունը և ավարառու քոչվոր ցեղերի վայրենաբարո նկրտումները հայոց տարածքների նկատմամբ:

Թուրքական կեղծարարության ոլորտում շահարկվում է Ղարաբաղ

¹ «Բառարան սուրբ գրոց» (Աստվածաշնչի բառարան), Կոստանդնուպոլիս, 1881 թ., էջ 421:

անվանումը, որը XIV դ. շրջանառվել է Առան-Արցախի վրա, սակայն, ի պատիվ հայության գեներտիկ բանականության, Ղարաբաղը այդպես էլ խորթ մնաց մեր ազգային հոգեկերտվածքին:

Այստեղ թերևս բավարարվենք միայն ռուս պոռֆ. Մինորսկու արտահայտությամբ՝ պանթուրքիստ պատմաբանների վարքագծի մասին. «Ուր որ Արևելքի հնադարյան ցեղերի կուլտուրայի բնագավառում գիտական չլուսաբանված խնդիրներ են հայտնաբերվում... թուրքերը անհապաղ իրենց ձեռքը նույն այդ տեղն են պարզում»¹:

Ի թիվս հայոց շատ հուշարձան-կոթողների, 1950-ականներին, թուրքական Ադրբեջանի քաղաքականության զոհ պիտի դառնար Գանձասարի եկեղեցին, որը կանգուն մնաց **ՅՈՎՅԱՆՆԵՍ ԱՍՐՅԱՆԻ** անձնուրաց ու խոհեմ ձեռնարկումների շնորհիվ: Իսկ հայոց սրբատարածք Նախիջևանը, նրա էթնիկ բնակչությունը, հոգևոր-մշակութային օջախները, խաչքարերը, գերեզմանները. այս բոլորը հափշտակվում են ու ոչնչացվում: Եվ սա հասկանալի է. ընդամենը XI դ. դեռ նոր ձևավորվող ազգությունը չէր կարող իր համար թիրախ դարձրած հայոց տարածքների վրա պահպանել այդ տարածքների պատկանելիությունը հաստատող արժեքները: Պարզապես անհասկանալի է, որ այդ վանդալիզմն ընթացք ունի նաև XXI դ.-ում, քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ:

Ընդհանրապես, յուրաքանչյուր ազգի, մարդու սրբությունը սկսվում է իր հողում նախնիների կամ հարազատի շիրիմներից (գերեզմաններից), անցնում ընտանիքով, հանգրվանում Ատժո տանը:

Առանշահիկների գերդաստանների, ժառանգների տապանատները գտնվում են նրանց կառուցված եկեղեցիներում կամ նրան կից առավել աչքի ընկած տարածքում: Գերեզմանները ավանդաբար համարվել են սրբավայրեր և վտանգի պահին զինական ուժերը միշտ պատրաստ են եղել պաշտպանելու այլազգիներից: Իսկ Գանձասարի մասին Գանձակեցին գրում է, որ գերեզմանատունը, որտեղ **«պահ են դրված»** հոխանաբերդի իշխաններն ու նրանց ժառանգները, կոչվում է **«Աստվածափառ տուն»**, իսկ որտեղ գտնվում է՝ **«Սրբավայր Գանձասար»**: Այդ գերեզմանատները այսօր էլ սրբավայրեր են Հասան-Ջալալյան ժա-

¹ Pan-turkism, par Minorsky, dans Encyclopedie de L'Islam, livraison N. P. 924, **Акопов Г. В.**, "Вопросы этногенеза народов Ближнего Востока..." "Известия АН Арм. СССР", 1956 г., N 7, стр. 37.

ռանգների համար և հանդիսանում են քաղաքական մշակույթի պատմական վկաներ: Եվ, նրա դեմ ոտնձգության ցանկացած մտադրություն կընդունվի որպես դիտավորություն, որն արժանի է խիստ պատժի:

Առանշահերը հայրենիքի խաղաղությունը, ազատությունն ու ապահովությունը գտնում էին ներքին միասնության մեջ: Հանձինս նրանց, Առանքը ճանաչվում էր որպես օրինակելի հայկական պետական միավոր, որը նեցուկ էր ոչ միայն ամբողջական Հայաստանին, այլև եղբայրական Վրաստանին՝ քաղաքական զարգացումներում ու պետականության պահպանման խնդիրներում, մշակույթի ակնհայտ վերելքներով:

Արդի ժամանակաշրջանում աշխարհը հագեցած է սուր հակասություններով և դրա դեմ պայքարի միակ միջոցն է՝ պաշտպանել հակամարտությունների, տարածայնությունների խաղաղ կարգավորման սկզբունքն ու խաղաղության այլընտրանք չունեցող գաղափարները և այն տարածել հասարակական տարբեր կարգ ունեցող պետություններում:

Խոշոր պետությունների ու նրանց ղեկավարած միջազգային կազմակերպությունների կողմից ազգային առանձնահատկությունների, կրոնական, մշակութային, քաղաքակրթական ու պատմական ճշմարտությունների ոչ արդար գնահատումը սրում է նույն այդ հակասություններն ու հակադրությունները՝ առաջացնելով թշնամանք երկրների ու ժողովուրդների միջև, որը դառնում է շարունակական այնքան ժամանակ, որքան շարունակվում են կայացվել անարդար վճիռներ: Անարդար վճիռների իրագործման վերջնակետում զոհ են դառնում նաև դրանց կայացնողները՝ պատերազմի սանձազերծմանը ձգտող, մարդկության ճակատագրի հետ անպատասխանատու խաղեր խաղացող իրավասու կամ ոչ իրավասու կառույցներ ու անհատներ:

Ցանկացած տարածաշրջանում, եթե ապահովված է էթնիկ ժողովուրդների ազատությունը, անկախությունն ու ազգային արժանապատվությունը, ուրեմն ապահովված է նաև նրանց համերաշխությունը, որը խաղաղության և միջազգային անվտանգության առաջին բաղադրիչն է: Ահա այդ համերաշխության և խաղաղարար քաղաքականությամբ են իրենց Հայրենիքը՝ Առան-Արցախը, պահել Առանշահիկները և նրանց ժառանգ Հասան-Ջալալյանները:

**Ս. ԲԱՐՍԻՈՒԴԱՐՅԱՆԻ ԴԵՐԸ ԱՐՑԱՆԻ ՎԻՍԱԿԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1950-ական թվականների վերջերին հայրենիք վերադարձավ խորհրդային բանտերից, ճամբարներից և հարկադիր աքսորավայրերից հրաշքով փրկված, անվանի հայագետ Սեդրակ Բարխուդարյանը: Նա ձեռնամուխ եղավ տարիներ առաջ կիսատ ու թերի թողած գիտական աշխատանքներին: Հ. Օրբելու՝ իր սիրելի ուսուցչի խորհուրդներով նա ձեռնարկեց իրեն հոգեհարազատ՝ հայ վիճագրության հավաքման, վերծանման, հրատարակման դժվարին, բայց և խիստ կարևոր գործը:

Մառի և Օրբելու երազանքն էր՝ տեսնել հրատարակված հայ վիճագրության հատորները գիտական որոշակի սկզբունքների կիրառմամբ: Սակայն հայ մշակույթի հարուստ այդ ժառանգության հրատարակության խնդիրը մինչև 1960-ական թվականների սկիզբը մնում էր անիրագործելի:

Իր ուսուցչի հետ, Սեդրակ Բարխուդարյանը, բազմաթիվ հանդիպումների ընթացքում, ծավալում էին լայն քննարկումներ՝ ապագա դիվանների կառուցվածքի, արձանագրությունների հավաքման մեթոդների, լուսանկարների, տառանիշերի, գրչագրերի և զանազան այլ հարցերի շուրջ: Այս կարևոր ելակետային խնդիրներն էին հենց դրվելու դիվանների հրատարակման հիմքում:

Ժամանակը, բնությունը, ինչու չէ՞ նաև մարդկային գործոնը, ավերման էին ենթարկում հուշարձանները և նրանց վրա փորագրված արձանագրությունները. անհրաժեշտ էր հանդես բերել աշխատասիրություն, ջանք ու եռանդ՝ օր առաջ փրկելու կործանումից դարերի խորքից մեզ հասած այդ ժառանգությունը: Արցախի հուշարձանների վիճակը առավել քան մտահոգիչ էր. հայտնի պատճառներով անհրաժեշտ էր շտապել:

Միայն միացյալ արշավախմբի դեպքում կարող էին հայ մասնագետները մուտք գործել Ղարաբաղ: Խնդիրը դժվարին էր, բայց իրագործելի: 1960 թվականին Հայաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների համաձայնությամբ, երկու հանրապետությունների տարածքների վրա սփռված երկու ժողովուրդների պատմության և մշակույթի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցող հայերեն և արաբատառ արձանագրությունների հավաքումը և հրատարակումը դարձավ հրատապ ու անհետաձգելի: Միացյալ արշավախումբն իր աշխատանքները սկսեց Լեռնային Ղարաբաղից: Գիտարշավի ընդհանուր ղեկավարն էր՝ Սեդրակ Բարխուդարյանը: Գիտարշավին հայկական կողմից մասնակցել են Գ. Կարախանյանը, Գր. Գրիգորյանը, Ս. Ավագյանը, Արտ. Վրույրը, Ա. Մանուչարյանը, իսկ Ադրբեջանական կողմից՝ Մ. Նեյմատովան. Յուս. Յուսիֆովը, Ա. Գուլիևը, Զ. Ջիդդին, Սուլեյմանովը: Համատեղ արշավախմբի աշխատանքները տևել են չորս տարի՝ մինչև 1964 թ.: Իր արշավախմբի հետ Սեդրակ Բարխուդարյանը շրջում էր ողջ Արցախը, իսկ նրա հարակից որոշ շրջաններ՝ (Լաչին, Քյալբաջար, Խանլար, Գետաբակ) ոչ ամբողջովին: Եղել են վայրեր, որտեղ որոշ արգելքների պատճառով հուշարձանը կամ տարածքը դուրս է մնացել հետազոտողի տեսադաշտից: Գիտարշավի ընթացքում հայտնաբերվել են նոր նյութեր, իսկ բազմաթիվ արձանագրություններ էլ՝ վաղուց արդեն գոյություն չունեին:

Արցախի հուշարձանների և վիճագիր արձանագրությունների հավաքման ու հրատարակման գործում մասնակից են եղել անցյալի բազմաթիվ ուսումնասիրողներ՝ Շախաթունյանցը, Ջալալյանցը, Մ. Բարխուտարյանցը, Ե. Լալայանը, Խ. Դադյանը, Մ. Տեր-Մովսիսյանը, Գ. Հովսեփյանը և Բարխուդարյանի սիրելի ուսուցիչ՝ Զ. Օրբելին:

1909 թթ., տակավին ուսանող, Անիի պեղումների մասնակից Հովսեփ Օրբելին Մառի հանձնարարականով, սկսում է զբաղվել նեֆրիտյան դաշույնի երախակալի վրայի արձանագրությամբ, որն ազդարարում էր տիրոջ անունը՝ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ԻՇԽԱՆ ԽԱՉԵՆՈ (3):

Անվանի իշխանն ապրել էր 13-րդ դարում՝ Խաչենում: Հիշյալ դաշույնի մշակութային արժեքի խորը գիտակցմամբ, Օրբելին մեկնում է Արցախ: Նա 17 օր ընդամենը մնում է Խաչենում, որի ընթացքում ծանոթանում և ուսումնասիրում է մի շարք հուշարձաններ՝ Կոշիկ անապատ, Մեծիրանից Ս. Հակոբա վանք, Առաջածորի եկեղեցի, Գանձասար,

Հավուց պտուկ, Խաղարի վանք և Դադի վանք:

Այս հուշարձաններից հավաքվում է մոտ 300 արձանագրություն, որոնց հրատարակությունը հետաձգվում է վիճազիր տառատեսակների բացակայության պատճառով: Հետագայում Օրբելին նպատակահարմար է գտնում նյութը հրատարակել փոքր ժողովածուներով: Առաջին ժողովածուն ընդգրկում է մոտ 100 արձանագրություն, որոնք վերաբերում էին Գանձասարի և Հավուց Պտուկի հուշարձաններին: Քաղաքական իրավիճակների խառնաշփոթում այն այդպես էլ չի հրատարակվում: Տարիներ անց՝ Օրբելու կողմից սրբագրված և պահպանված միակ օրինակը Սեդրակ Բարխուդարյանի կողմից ընդգրկվեց Արցախի պրակի համապատասխան բաժնում: Արցախյան արձանագրություններում առկա են շինարարական, հուշարձանների վերակառուցման, վերանորոգման, նվիրատվական տեղեկությունները: «Արցախի տարածքում գտնված հուշարձանների ժամանակագրական և ոճական առանձնահատկությունները նույնն են, ինչ որ Հայաստանի այլ վայրերում», - գրում է Սեդրակ Բարխուդարյանը¹:

Իր կենդանության օրոք նա ավարտին հասցրեց Արցախի արձանագրությունների ժողովածուն, որը կազմեց «Դիվան հայ վիճագրության» մատենաշարի 5-րդ պրակը՝ ընդգրկելով 1071 արձանագրություն: Պրակը հրատարակվեց նրա մահից 12 տարի հետո՝ 1982 թվականին:

Սեդրակ Բարխուդարյանը՝ անբողջովին զբաղված լինելով դիվանների հրատարակման խնդիրներով, ժամանակ չէր գտնում զբաղվելու վիճակաբանագրերի առանձին բնագավառների քննական վերլուծություններով: Արցախի պրակի նյութերը պատրաստելիս նա պատմաբանին բնորոշ հեռատեսությամբ կարևորում էր որոշ պատմամշակութային խնդիրների հրատապ ուսումնասիրությունը: Իր վերջին՝ «Էջեր Արցախի և հայ-աղվանական առնչությունների պատմությունից» աշխատության մեջ նա անդրադառնում է Արցախի և հարևան շրջանների քաղաքական պատմամշակութային հիմնախնդիրներին: Աշխատության մեջ առաջին անգամ վեր է հանում Համամ իշխանի տապանագրի արձանագրությունը, որը հայտնաբերվել էր Սոֆուլու-Տիգրանակերտ կամ Գյավուր Ղալա կոչվող ավերակներից. արձանագրությունը

¹ Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիճագրության, Արցախ, V պրակ, 1982 թ., էջ 9:

ունի բացառիկ սկզբնաղբյուրային նշանակություն¹: Ցավալի է, որ այդ աշխատությունը մինչև այժմ մնում է անտիպ:

Ս. Բարխուդարյանի անձնական արխիվում պահպանվել են տասնյակ նամակներ. հեղինակներից գրեթե բոլորը՝ դաշտային Ղարաբաղի բնակիչներ են: Մարդիկ լսելով, որ Հայաստանից եկած գիտնականները ուսումնասիրում են Լեռնային Ղարաբաղի հնությունները, ոգևորված և պատրաստակամ խնդրում են, որ հիշյալ արշավախմբերը այցելեն նաև իրենց գյուղերը: Հատկապես նամակները շատ են Շամխորի հայաբնակ Բարսում, Չարդախլու, Մարտունի, Սալեր, Օլագիր, Բադա, Նուզգեր գյուղերից:

Ստորև ներկայացնում ենք մի հատված՝ նրան ուղղված նամակից. «Ընկեր Բարխուդարյան, մեր կողմերում ոչ մի գիտական արշավախումբ չի եղել և կորչում են հնությունները. խնդրում ենք մի արշավախումբ դրկեք: Մեր հայ գյուղերը Ձեզ մեծ օժանդակություն ցույց կտան ամեն խնդրում, միայն ձեռնարկեք այդ գործը»:

Հնությունների կորստյան ցավով էր ապրում նաև 82-ամյա Թադևոս Դաշյանը՝ ծնունդով Դաշքեսանի շրջանի Ջագլիկ գյուղից:

Բարխուդարյանը մեկն էր, հոգսերը՝ շատ. ամարդարությունները ալեկոծել էին նրա հուզաշխարհը: Նա չէր կարող չզնալ Արցախ աշխարհի, չքայլել նրա սարերով ու ձորերով, չմտնել նրա մթին անտառները՝ հայերեն արձանագրություն փնտրելու հույս ու հավատով՝ հաղթահարելով բազում դժվարություններ: Նա սիրեց հայոց աշխարհի այդ չքնաղ անկյունը: Արցախցիների կողմից իրեն ուղղված բազում հարցերին պատասխանում էր. «Ամուր մնացեք այս հողի վրա, դա է փրկությունը»:

Իսկ իր կազմած Արցախ կոթողային հատորը ամենանշանավոր փաստավավերագրական ժողովածուն է՝ Արցախի հայկականությունը վերահաստատող հիմնարար վկայություններից մեկը:

¹ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Արցախ, V պրակ, 1982 թ., էջ 135-136: Տե՛ս նաև Ս. Բարխուդարյան, «Տեղեկագիր», ԳԱ, 1964, N 1, էջ 61-64:

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎԱԳԱՐԱՆԱՅԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Արցախահայության ավանդական (մոնոդիկ) երաժշտական մշակույթի առավել բնորոշ, առաջատար մարզերից է նվագարանային երաժշտությունը:

Հայտնի իրողություն է, որ Արցախում՝ Հայոց աշխարհի այս հնամենի, բնիկ հատվածում, մշտապես հատուկ ուշադրություն, հետաքրքրություն և սեր է ցուցաբերվել նվագարանի, նվագածության և նվագարանային երաժշտության նկատմամբ: Բազմաթիվ, հատկապես թառահարներով, քամանչահարներով, նաև զուռնահարներով, դուդուկահարներով, շվիհարներով, դիոլահարներով և վարպետ նվագարանագործներով է հայտնի Արցախը: Այս իմաստով ուշագրավ է երաժշտագետ, կոմպոզիտոր, բանահավաք Սերգեյ Մարկոսյանի «Արցախի ժողովրդական երաժիշտներ» խորագրով գիրքը (Երևան, 2004), որտեղ ներկայացված է 1880-1980-ական թվականների հարյուրամյա ընթացքում գործող հեղինակի բնորոշմամբ «Արցախի ժողովրդապրոֆեսիոնալ երաժիշտների տաղանդավոր մի համաստեղություն»¹, շուրջ 60 նվագածուներ, որոնց կողքին, ըստ հեղինակի «դեռևս ստվերում են մնում և պեղման կարիք ունեն արցախյան տասնյակ և տասնյակ ժողովրդական երաժիշտներ»²:

Նշելի է նաև, որ 1890-ական թվականներին Շուշիում՝ Արցախի երաժշտական կենտրոնում, հայ մշակութային օջախներից մեկում, երաժշտագետ Վասիլի Դորղանյանի պատկերավոր և թևավոր դարձած բնորոշմամբ՝ Անդրկովկասի այս յուրօրինակ կոմսերվատորիայում³,

¹ Մարկոսյան Ա., վերը նշված աշխատությունը, էջ 16:

² Նույն տեղում:

³ **Корганов В.**, Кавказская музыка, Тифлис, 1908, с. 28.

կոմպոզիտոր Եղիշե Բաղդասարյանի ջանքերով և ղեկավարությամբ, տեղացի երաժիշտների ուժերով ստեղծվեց ժողովրդական նվագարանների նվագախումբ (սազ, թառ, դուդուկ, քամանչա, թութակ և այլն, կազմով), որը կատարում էր պարեղանակներ, նվագարանային մուղամներ և այլ պիեսներ¹:

Արցախցիմ անտարբեր չի նաև եվրոպական նվագարանների և նվագարանային երաժշտության հանդեպ, սիրում և գնահատում է դրանք: Այսպես, Շուշիում 19-րդ դարի երկրորդ կեսին, առկա էին գերմանացի երաժիշտների կազմակերպած աշակերտական փողային և լարային նվագախմբեր, որոնք մասնակցում էին շրջիկ թատերախմբերի, նաև տեղի թատրոնի ներկայացումներին, քաղաքի պարահանդեսներին և նմանատիպ այլ միջոցառումներին²: Նույն տարիներին Շուշիի «Խանդամիրենց» (Խանդամիրյանների) թատրոնում կարգ կար՝ «ամեն երեկո, ներկայացումների ընդմիջումների ժամանակ, փակ վարագույրի առաջ միշտ ելույթ էին ունենում արցախական աշխարհի անվանի երաժիշտների ժողովրդական եռյակները, որոնք իրենց նվագով, երգ ու պարեղանակներով զբաղեցնում էին հանդիսատեսներին, իրենց կատարողական վարպետությամբ արժանանում երաժշտասեր շուշեցիների գնահատանքին»³:

Արցախահայ նվագարանային երաժշտությունը, արցախյան երգ ու բանի հետ մեկտեղ, արցախցու բովանդակ կյանքի (առօրյա, տոն, սուգ, ուրախություն, ծես և այլն) մշտական ուղեկիցն ու անբաժանելի մասն է: Այսպես օրինակ, արցախյան հարսանիքի, այլևայլ ծեսերի մշտական և առավել գործուն մասնակիցներն են եղել զուռնահարը և դիռլահարը «դավուլ զուռնան» (Ե. Լալայան)⁴, որն «ուրբաթ օրը գնում թե՛ փեսացուի, և թե՛ հարսնացուի տների առաջ ածում է «սահարի»՝ հատուկ հարսանեկան եղանակը, որով իմացնում է գյուղին, որ այդ օր-

¹ Մարկոսյան Ս., Հայկական ժողովրդական փողային արվեստի ուսումնասիրության հարցեր, դիպլոմային աշխատանք, գիտ. ղեկավար՝ Ա. Բուդաղյան, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, 1981, էջեր 33, 35:

² Մուրադյան Մ., Հայկական երաժշտական մշակույթի պատմություն (Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում), Երևան, 1970, էջ 194, Մարկոսյան Ս., դիպլոմային աշխատանք, էջ 33:

³ Մարկոսյան Ս., «Արցախի ժողովրդական երաժիշտներ», էջ 31:

⁴ Լալայան Ե., Ազգագրական հանդես, Երկրորդ տարի, Բ. գիրք, Վարանդա, Թիֆլիս, 1897, էջ 130:

վանից սկսվում է հարսանիքը»¹: «Դավուլ զուռնան» շաբաթ առավոտյան «մի որոշ եղանակ ածելով հրավիրում է բոլորին պատրաստվել պսակ գնալու»², «դավուլ զուռնի» առաջնորդությամբ ուղևորվում են դեպի հարսնացուի տունը՝ հարսնառի³ և այլն: Ի դեպ, հայ նվագաժամերին էին հատկապես նախընտրում հարսանիքների հրավիրելու արցախաբնակ այլազգիները՝ աղբրեջանցիները, քրդերը⁴: Հիշատակվում են նաև արցախյան ժողովրդական նվագաժամերի մրցույթները, որոնք տեղի էին ունենում եկեղեցական տարբեր տոների ժամանակ, Արցախի այս կամ այն եկեղեցու բակում կամ ընդարձակ գավթում⁵:

Արցախահայ նվագարանային երաժշտությունը ձևավորվել է դարերի ընթացքում հայ ավանդական բազմահարուստ երաժշտության հզոր հիմքով, միաժամանակ ներառելով, յուրացնելով, ազգային հենքին ներդաշնակորեն միահյուսելով կովկասյան և ավելի լայն՝ արևելյան ավանդական երաժշտության որոշ սկզբունքներ, նվաճումներ: Ներկայանում է որպես ձևավորված, կուռ, ամբողջական, ավանդական երևույթ, իրեն հատուկ նվագարաններով, նվագացանկով, նվագաժամային ձևերով և այլն:

Բնորոշվում է նվագարանների տեսականու բազմազանությամբ. լարային՝ աղեղնավոր, կսմիթային (քամանչա, թառ, սազ), փողային (դուդուկ, զուռնա, շվի և այլն), հարվածային (դիոլ, դափ և այլն) և նվագարանային տարբեր խմբերի առկայությամբ, նվագացանկի հարստությամբ (պարեղանակներ, նվագարանային մուղամներ, ծիսական նվագներ, աշխատանքային եղանակներ), նվագաժամային բազմապիսի ձևերով (մենակատարային, խմբակային, միաձայն, բազմաձայն, դրանց այլևայլ դրսևորումներով):

¹ Նույն տեղում: Տե՛ս նաև **Լ. Երնջակյան, Գ. Պիկիջյան**, «Հիմն արևին» («Սահարին» հայ երաժշտական մշակույթում), Երևան, 1998, էջ 13: Արցախում «Սահարին» անվանվել է նաև «Արևագալի», և կատարվել իբրև հարսանեկան ծեսի առավոտյան աղոթք, նույն տեղում, էջ 14:

² **Լալայան Ե.**, Ազգագրական հանդես, Վարանդա, էջ 135:

³ Նույն տեղում, էջ 132-133:

⁴ **Մարկոսյան Ս.**, Արցախի ժողովրդական երաժիշտներ, էջ 39, 84: Այս մասին տե՛ս նաև **Մ. Բրուտյան**, Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր, Երևան, 2001, էջ 72:

⁵ Այս մասին տե՛ս «Ամմար է նվագդ, վարպետ Ջամշուդ» պատումը Ս. Մարկոսյանի «Արցախի ժողովրդական երաժիշտներ» նշված գրքում, էջ 19-25:

Արցախահայ նվագարանային երաժշտության կերտողները, ավանդույթների կրողները և փոխանցողները տեղացի շնորհաշատ նվագածուների բազմաթիվ սերունդներն են: Դրանք թե՛ անանուն ժողովրդական կատարողներն են, թե՛ հայտնի մեծահմուտ (վիրտուոզ) մասնագետ նվագածուներ՝ փայլուն մենակատարներ, անսամբլիստներ, քամանչահարներ՝ Ավանես Ավանեսյանը, Արմենակ Էսրիյանը, թառահարներ՝ Արսեն Յարամիշյանը, Ներսես Դորդանյանը, Բալա Մելիքյանը, Սաշա Թարխանյանը, Սողոմոն Սեյրանյանը և ուրիշներ, որոնց համբավը հատկապես 19-րդ դարավերջին և 20-րդ դարում անցավ հայրենյաց սահմանները: Միաժամանակ նրանց եռանդուն կատարողական գործունեությունը դրսույց (Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, Լենինգրադ, Միջին Ասիա, Լեհաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Թուրքիա, Իրան և այլն) մեծապես նպաստեց Արցախի նվագարանային երաժշտության ավանդույթների տարածմանը և արմատավորմանը հատկապես Անդրկովկասում, ճանաչմանը, բարձր գնահատմանը Ռուսաստանում և այլուր:

Ոլորտին բազմիցս անդրադարձել են երաժշտագետները՝ Մ. Մուրադյանը¹, Մ. Բրուսյանը², Ֆ. Շուշինսկի³, Լ. Երնջակյանը⁴, Ս. Մարկոսյանը⁵, Մ. Գասպարյանը⁶, սակայն մեծ մասամբ այլ ուղղվածության աշխատությունների ներքո: Այնինչ երևույթը բազմակողմանի և մանրամասն երաժշտապատմական և տեսական ինքնուրույն դիտարկման և ուսումնասիրության կարիք ունի:

Մեր խնդրո առարկան Արցախի ավանդական նվագարանային երաժշտության կերտվածքային (երաժշտական նյութի շարադրման) որոշ կառուցվածքներն են: Դրանք դիտարկել և փորձել ենք վերլուծել՝ հիմք ընդունելով արցախյան նվագների ծայնագրված և նոտագրված նմուշները, որոնք պահպանվում են ՀՀ ԳԱԱ ԱԻ ժողովրդական արվեստ-

¹ Մուրադյան Մ., Հայկական երաժշտական մշակույթի պատմություն, նշվ. աշխ.:

² Բրուսյան Մ., Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր, նշվ., աշխ.:

³ Шушневский Ф., Народные певцы и музыканты Азербайджана, М., 1979.

⁴ Երնջակյան Լ., Հայ-իրանական երաժշտական կապերի պատմություն, Երևան, 1991:

⁵ Մարկոսյան, նշված դիպլոմային աշխատանքը, գիրքը:

⁶ Гаспарян М., Опыт характеристики музыкального быта Арцаха (на примере Гадрутского, Мартунинского районов и города Степанакерта НКАО), дипломная работа, научный руководитель Р. Атаян, Ереван, 1990.

տի բաժնուն, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնում, նաև զետեղված են (նոտագրությունները) մի շարք երաժշտագիտական տպագիր և ձեռագիր աշխատություններում: Դրանք են՝ «Յոլվի կանչ», «Կոխի եղանակ», «Լարախաղացի մեղեդիներ», հարսանիքի եղանակներ՝ «Յարսանքի կանչ», «Յին հարսանեկան քայլերգ», «Յարսը տնից հանելու եղանակ», «Փեսան հարսին հրավիրում է հարսանքի սեղանին», մուղաներ՝ «Սահարի», «Բայաթի Շիրազ», «Բայաթի Քուրդ», «Շուռ» և այլն, այդ մեղեդիների ավանդական կատարմանը համապատասխան նվագարաններով և նվագարանային կազմերով: Դիտարկել ենք նաև տարբեր բնույթի պարեղանակներ՝ «Ղարաբաղի կանանց շուրջպար», «Դարչինի», «Դերբենդի», «Լուսարչայ» և այլն, ժողովրդական և աշուղական երգերի նվագարանային այլևայլ տարբերակներ:

Խնդրո՞ղ դիտարկված և վերլուծված նյութի շրջանակներում մեր նախնական եզրակացությունները հետևյալն են.

1. Արցախահայ ավանդական նվագարանային երաժշտությանը հավասարապես հատուկ են նվագածության թե՛ մենակատարային, թե՛ խմբակային ձևերը:
2. Դրանք սովորաբար գործառնական (ֆունկցիոնալ) նշանակություն ունեն՝ ավանդաբար կապված են կատարվող եղանակի ժանրային պատկանելիության հետ: Այսպես, «Կոխի եղանակը», «Լարախաղացի մեղեդիները», հարսանեկան՝ կանչը, քայլերգը, ինչպես նաև հայ ավանդական հարսանիքի ծիսական մյուս եղանակներից՝ «Սահարի» մուղամը¹, կատարվում են նվագածության խմբակային ձևով (երկու զուռնա դիոլ): Մյուս մուղամները թե՛ մենակատարային (քամանչա, թառ), թե՛ խմբակային ձևով (երկու դուդուկ): Մենակատարային են հարսանեկան՝ «Յարսը տնից հանելու» և «Փեսան հարսին հրավիրում է հարսանքի սեղանին» եղանակները (զուռնա):
3. Նվագածության մենակատարային ձևը ավելի հատուկ է լարային նվագարաններին (թառ, քամանչա), խմբակայինը՝

¹ «Սահարու» որպես նվագարանային մեղեդի-մուղամի մասին տես Լ. Երնջակյան, Դ. Պիկիչյան, «Յինն արևին», նշվ. աշխ., էջ 8, 9:

փողային և հարվածային նվագարանների՝ երկու դուդուկ, երկու զուռնա և դիոլ և այլ կազմերով: Առկա է նաև հատկապես պարեղանակներում, լարային-հարվածային՝ թառ տմբլա երկյակը:

Նվագածության ձևերի և նվագարանների նշված կապը ներկայացնում ենք ստորև բերված աղյուսակի միջոցով:

Մենպոստի անունը	Խմբային անունը	
	Նվագարանային երկյակ	Նվագարանային եռյակ
1. ԹԱՌ	1. ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ	1. ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ ԴՅՈՒ
2. ՔԱՄԱՆԻՍ	2. ԵՐԿՈՒ ԶՈՒՌՆԱ	2. ԵՐԿՈՒ ԴՈՒԴՈՒԿ, ՏՄԲԼԱ
3. ԶՈՒՌՆԱ	3. ԹԱՌ ՏՄԲԼԱ	3. ԵՐԿՈՒ ԶՈՒՌՆԱ, ԴՅՈՒ

4. Նվագի կերտվածքային կառուցվածքը անմիջանկյուն կապված է նվագածության ձևի հետ: Ըստ այդմ՝ ակնհայտորեն առանձնանում են մենակատարային նվագածության և խմբակային նվագածության կերտվածքային կառուցվածքները:
5. Մենակատարային նվագածությանը հատուկ է երկձայնի տարրերով միաձայն կերտվածքը, երբ նվագածուն (հատկապես թառահարը) մեղեդու դադարների (ցեզուրա) պահին կսմիթով (pizzicato) վերարտադրում է մեղեդուց ստորև գտնվող մեկական հնչյուններ: Դրանք սովորաբար մեղեդու (կամ մեղեդու ավարտում որևէ հատվածի) ձայնակարգի հենակետային հնչյուններն են, մեծ մասամբ՝ տոնիկան կամ օժանդակ հենակետը, որոնք ձայնառության (դամի) նշանակություն ունեն, տվյալ դեպքում վերջինիս ընդհատվող ձևով, և կարծես հաստատում, վավերագրում են մեղեդու «ասելիքը»: Մենակատարային նվագածության կերտվածքային այս կառուցվածքը հատկապես բնորոշ է նվագարանային մուլաներին¹:

Նոտային օրինակ 1, մուլան «Ռաստ», հատված սկզբից,

¹ Հմտ. **Касимова С.**, Народно-национальные истоки мелодии и гармонии оперы "Севиль" Ф. Амирова, в сб. "Ученые записки" серия XIII (история и теория музыки, N 18), Баку, 1971, с. 21:

թառահար Ս. Սեյրանյանի կատարմամբ¹:



Եվս մեկ օրինակ, մուղամ «Մահուր հինդի», հատված սկզբից, թառահար Մելիքյանի կատարմամբ:

Նոտային օրինակ 2



Այս դեպքում ընդհատվող ձայնառությունը վերարտադրվում է հնչյունի երկձայն, օկտավային ներքընթաց նմանակման (իմիտացիա) միջոցով:

Ընդհատվող ձայնառական հնչյունները հատուկ են, մասնավորապես, մուղամի սկզբնամասին և ավարտին: Մուղամի միջնամասային, հատկապես բարձրակետային (կուլմինացիոն) հատվածներում ընդհատվող, ձայնառական հնչյունները վերածվում են արագընթաց, կրքոտ, կրկնվող՝ (repetitio) «կշռության մասնատվածությամբ ձայնա-

¹ Այս և հետագա տեքստում բերված հաջորդ՝ «Մահուր հինդի» մուղամի ձայնագրությունները պահպանվում են Կոմիտասի անվան պետական կոմսերվատորիայի երաժշտական ֆուլկլորագիտության ամբիոնում: Նոտային օրինակներ 1-6-ում զետեղված նյութի նոտագրությունը տողերիս հեղինակինն է:

ռությունների» (Ք. Քուշնարյան)¹, որոնք, ինչպես հայտնի է, գործի են դրվում հատկապես արևելյան ավանդական լարային նվագարանների վրա նվագելիս²: Այդ ծայնառությունները հանդես են գալիս թե՛ մեղեդու դադարներին, թե՛ մեղեդուն համընթաց, հատվածաբար առաջ բերելով երկծայն ինտերվալային շարադրանք, և թե՛ մեղեդու հետ յուրօրինակ փոխեփոխ ձևով՝ և նպաստում են մեղեդու դինամիկ վերելքին, սրացնելով ու նպատակամղելով այդ վերելքը դեպի բարձրակետ:

Նոտային օրինակ 3³



Նոտային օրինակ 4



Տե՛ս ևս երկու օրինակ «Մահուր հինդի» մուղամի միջին մասի բարձրակետային հատվածից (Նոտային օրինակներ 5, 6): Այս դեպքում ծայնառությունը մեղեդու նկատմամբ իր ավանդական՝ ստորև դիրքին հակառակ, կատարվում է մեղեդուց բարձր գտնվող հնչամասում:

¹ **Кущнарев Х. С.**, Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958, с. 218.

² Там же.

³ Այս և հաջորդ նոտային օրինակ 4-ը հատվածներ են վերը բերված «Ռաստ» մուղամի (Նոտային օրինակ 1) միջին մասից:

Ֆրագ «Շախշախի» պարեղանակից՝ թառ¹: Միաժամանակ մենակատարային նվագարանային պարեղանակներում նկատել ենք մաս մեղեդին պարզագույն հարմոնիզացիայի ենթարկելու որոշ դրսևորումներ, որոնք դիտարկում ենք որպես կոմպոզիտորական երաժշտության ազդեցության արդյունք²: Այսպես, «Շախշախի» պարեղանակում մեղեդին, որի ձայնակարգն է gis լոկր. 3, ուղեկցվում է ոչ միայն նշված ձայնակարգի ավանդական ձայնառական հնչյուններով՝ օժանդակ հենակետ՝ «հ», ստորին մեղիանտա՝ «ե», այլև տեղ-տեղ VII աստիճանով՝ “fis” և սուբդոմինանտայով՝ “cis”, որոնք ընդգծում են մեղեդու, մասնավորապես, երկրորդ աստիճանի («ա») ֆունկցիոնալ ուղորտը, և հարմոնիկ նոր երանգ հաղորդում պարեղանակին:

Նոտային օրինակ 8



Նոտային օրինակ 9



Այս երևույթը առաջ է բերում մաս երկծայն ենթաձայնային կերտվածքի տարրեր (տե՛ս նոտային օրինակ 9), մաս ֆրագ «Դերբենդի» (կանանց մենապար) պարեղանակից, թառ³:

¹ Մուրադյան Ա., «Հայկական նվագարանային պարեղանակներ» ձեռագիր հատոր, N 39: Ձեռագիրը պահպանվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

² Հմնտ. Эльдарава Э., Искусство апыгов Азербайджана, Баку, 1984, с. 52:

³ Մուրադյան Ա., «Հայկական նվագարանային պարեղանակներ», № 40:

Նոտային օրինակ 10,



6. Խմբակային նվագաժողովան կերտվածքները դիտարկվող մնուշներում բազմաձայն են: Բնորոշվում են ձայների կերտվածքային բազմազանությամբ՝ մեղեդիական, ձայնառական, կշռութային, բազմատենքրայնությամբ՝ փողային և հարվածային նվագարաններ, լարային և հարվածային նվագարաններ, բազմակշռութայնությամբ, առաջ բերելով յուրօրինակ «մոնոդիկ բազմաձայնության» («**МОНОДИЙНОЕ МНОГОГОЛОСИЕ**», եզրը՝ երաժշտագետ Ն. Ս. Յանով-Յանովսկայայինն է)¹ կերտվածքային օրինակներ:

Այդ կերտվածքները դիտարկվող մնուշներում երկուսն են՝ երկձայն և եռաձայն: Դրանցից երկձայն կերտվածքը հանդիպում է երկու տարբերակով.

- ա) երբ մեղեդին կատարվում է պահված ձայնառությամբ. առաջին դուդուկ կամ զուռնա՝ մեղեդի, երկրորդ դուդուկ կամ զուռնա՝ ձայնառություն:
- բ) մեղեդին՝ թառ, ուղեկցվում է հարվածային նվագարանի՝ դիոլ կամ տմբլա, կշռութային հնչամասով: Վերջինս տրոհված է բարձրութային երեք ենթահնչամասերի ցածր, միջին, բարձր) տե՛ս ստորև բերված ուրվագիծը 1-ը):

Ուրվագիծ 1



¹ **Янов-Яновская Н. С.**, Богатство многообразия. - В. журн.: "Советская музыка", 1981, N 1, с. 29.

Եռաձայն կերտվածքներում մեղեդին կատարվում է թե՛ դամի, և թե՛ կշռութային տրոհված հնչամասի ուղեկցությամբ (ուրվագիծ 2):

Ուրվագիծ 2

ՄԵՂԵԴԻ -----

ՉԱՅՆԱՌ _____

ԿՇՌՈՒՅԹ

7. Դիտարկվող կերտվածքները բոլոր չափանիշներով պատկանում են հայ ավանդական նվագարանային երաժշտության առավել բնորոշ, տիպական, ազգագրական տարբեր շրջաններում խիստ տարածված կերտվածքային կառուցվածքների շարքին:

Ներկայացված վերլուծությունը ավարտված չենք համարում, ապագային թողնելով արցախահայ նվագարանային երաժշտության այլ նմուշների կերտվածքների քննությունը: Սակայն խնդրո դիտարկման նախնական փորձն արդեն իսկ ի հայտ է բերում երևույթի բազմաբովանդակ լինելն ու նշանակությունը:

ԱՂԻԲԵԶԱՆԻՑ ԲՈՆԱԳԱՂԹՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԼՂՅ-ՈՒՄ

Արցախյան շարժումը հայոց նորագույն պատմության կարևորագույն էջերից է: Սկիզբ առնելով որպես արցախահայության շահերի պաշտպանությանն ու ինքնորոշման իրավունքի ապահովմանն ուղղված շարժում հՍՀՄ տարածքում, այն հետագայում ունեցավ զարգացման որակապես տարբեր փուլեր՝ հանրահավաքներ, ռազմական գործողություններ ու պարտադրված պատերազմ և դե-ֆակտո՝ Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան հանրապետության ձևավորում:

Թվարկված իրադարձությունների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն քաղաքական ու ռազմական, այլ նաև մշակութաբանական-ազգաբանական տեսանկյունից: Վերջին տասնամյակներում ազգաբանական գիտության համակարգում ձևավորվել ու զարգանում են նոր ուղղություններ՝ «պատերազմի ազգագրությունը» և «բռնության ազգագրությունը»¹: Պատերազմի և բռնության դրսևորումների ուսումնասիրությամբ զբաղվող ազգաբանների համար ուշագրավ են այն մեխանիզմները, որոնք կիրառում է արտակարգ իրավիճակում հայտնված հանրությը կամ վերջինիս առանձին հատվածը ինքնապաշտպանության կազմակերպման, կենսագործունեության ապահովման նպատակով: Չեչենական, աբխազական, արցախյան և այլ հակամարտություններին վերաբերող նյութերում ցույց է տրված, որ շատ դեպքերում գործում է «մենք-նրանք» պարզ երկբևեռ հակադրությունը, ինչը թույլ է տալիս մի կողմից՝ բյուրեղացնել ու հիմնականում դրական հատկանիշներ

¹ Տես՝ **В. Тишков**, Общество в вооруженном конфликте: этнография чеченской войны, М., 2001; Антропология насилия (отв. ред. В. Бочаров, В. Тишков), М., 2001:

րի հիմամբ ամբողջացնել ինքնապատկերացումները, մյուս կողմից՝ ամբողջացնել ու շրջանառության մեջ դնել բացասական պատկերացումների այն համախումբը, որը վերաբերում է հակառակորդին, թշնամուն: Ազգաբանական տեսանկյունից կարևոր է նաև, թե ինչպես է հասարակությունը ինքնակազմակերպվում արդեն պատերազմից հետո, ինչպիսի ինստիտուտներ ու արժեքային կողմնորոշիչներ է կիրառում հասարակական բնականոն ու ներդաշնակ հարաբերությունների վերականգնման համար:

Արցախյան շարժումը պատերազմի ազգագրության տեսանկյունից դիտարկելիս կարևոր է մեկ հանգամանք ևս. 1980-ական թթ. վերջից, մինչև ռազմական գործողությունների սկզբը, և՛ ՀՀ-ն և՛ ԼՂՀ-ն բախվեցին փախստականների խնդրին:

Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած ջարդերի ու բռնի տեղահանությունների հետևանքով հարյուր հազարավոր հայեր փախստականի կարգավիճակով հայտնվեցին Հայաստանում ու Ղարաբաղում: Այսինքն, արդեն արտակարգ իրավիճակում հայտնված հանրույթը ստիպված էր մտածել նման վիճակում հայտնված ևս մեկ խմբի՝ փախստականների տեղավորման մասին, հատկապես եթե հաշվի առնենք, որ ի տարբերություն ադրբեջանցիների, որոնք տեղափոխեցին ունեցվածքի մեծ մասը, Ադետի գոտում՝ ստացան միլիոնավոր ռուբլիների փոխհատուցում, Ադրբեջանից բռնագաղթված մեր հայրենակիցները հեռացել էին առանց ոչնչի:

Սկզբնապես փախստականների մի մասը տեղավորվեց Ստեփանակերտում, այլ քաղաքներում ու գյուղերում, հանրակացարաններում, ծանոթների, բարեկամների ու ազգականների մոտ, ապրելով խիստ ծանր պայմաններում, հաճախ ուղղակիորեն հայտնվելով նաև ռազմական գործողությունների գոտում: Այդ տարիներին ողջ Արցախը իրենից մի մեծ ռազմական ճամբար էր ներկայացնում:

Արցախյան պատերազմի ընթացքում աստիճանաբար ազատագրվեցին ու հայկական կողմի վերահսկողության տակ անցան հարյուրավոր բնակավայրեր: Դրանց զգալի մասը հայաբնակ էր կամ խառը բնակչություն ուներ: 1988 թ. դրությամբ, և հակամարտության առաջին տարիների ընթացքում, Ադրբեջանի վարած բռնագաղթի պետական քաղաքականության հետևանքով, ժամանակավորապես զրկվել էր հայկական բնակչությունից: Այդպիսիք էին Մարտակերտի շրջանի հյուսիս-

սային, Բերդաձորի ենթաշրջանի և Հաղրութի շրջանի «Ձորակի» գյուղերը: Ողջ ԼՂՀ-ում և նրան հարակից տարածքներում հարյուրից ավելի գյուղեր և մի քանի քաղաքներ այժմ ունեն փոքրաթիվ հայ բնակչություն: Քաղաքներից համեմատաբար մեծաթիվ բնակչություն ունեն Շուշին ու Բերձորը, գյուղերից՝ շուրջ մեկուկես տասնյակ գյուղեր Մարտունու, Մարդակերտի, Քաշաթաղի ու Քարվաճառի շրջաններում¹: Վերաբնակեցումը ստեղծված իրավիճակում հանդես է գալիս որպես հարկադրված միջոցառում: Արցախում ապաստանած հազարավոր փախստական ընտանիքներին միայն Ստեփանակերտում տեղավորել հնարավոր չէ, կապված քաղաքի սահմանափակ հնարավորությունների հետ: Ուստի, որպես հիմնական տարբերակներից մեկը հանդես է գալիս բնակությունը ազատագրված քաղաքային ու գյուղական բնակավայրերում: Ըստ տարբեր աղբյուրների 1990 թ. Ղարաբաղում հաստատվել էր մոտ 30.000 փախստական, իսկ զինադադարից հետո, ճշտված տվյալներով, ԼՂՀ տարածքում ապրում էր Ադրբեջանից բռնագաղթած 21.150 մարդ²:

Ազգագրական տեսանկյունից ուշագրավ են հատկապես Շուշիում ընթացող գործընթացները: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ վերաբնակեցման բոլոր փուլերում փախստականները, նախկին շուշեցիների ու ստեփանակերտցիների հետ, կազմել են քաղաքի բնակչության հիմնական խմբերից մեկը: Ըստ 1996 թ. տվյալների շուշեցիները կազմում էին քաղաքի բնակչության 20.7%-ը, ստեփանակերտցիները՝ 28.3%-ը, Ադրբեջանից բռնագաղթվածները՝ 21%-ը: Եթե հաշվի առնենք, որ Ստեփանակերտից տեղափոխվածների մի մասը նույնպես փախստական է, ապա վերջիններիս տեսակարար կշիռը քաղաքի բնակչության մեջ ավելի բարձր կարելի է համարել: Փախստական ընտանիքներ բնակվում են այլ քաղաքային ու գյուղական բնակավայրերում ևս:

Ստեղծված իրավիճակում, երբ արդբեջանական կողմն անընդհատ շահարկում է փախստականների հարցը, Ադրբեջանից հայ փախստականների վերաբնակեցման խնդիրը պետք է համարվի ԼՂՀ

¹ Տես՝ Ա. Ղաթադյան, Մ. Գարրիեյան, Շուշին 1992-2002 թթ., Հայերի վերադարձը ազատագրված քաղաք (ազգագրական ակնարկ), Եր., 2004:

² ԼՂ Հանրապետություն, 1995, 04. 02:

իշխանությունների քաղաքականության գերակայություններից մեկը, ընդ որում, փախստականների ներհոսք պետք է կազմակերպվի նաև ԶԶ-ից ու ՌԴ տարածքներից: Վերաբնակեցումը, ինչպես արդեն նշեցինք, հարկադրված միջոցառում է, որը հնարավորություն է տալիս մեր հայրենակիցներին ապահովել գոյության քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակում:

Փախստականների վերաբնակեցումը ունի նաև կարևոր քաղաքական նշանակություն: Արցախյան հակամարտության տարբեր փուլերում, նաև՝ զինադադարից հետո, ադրբեջանական իշխանություններն ու պետական քարոզչամեքենան բազմիցս անդրադարձել են փախստականների խնդրին, շեշտելով Ադրբեջանի տարածքում հարյուր հազարավոր փախստականների մասին: Իրականությունը, սակայն փոքր-ինչ այլ է: Փախստականի կարգավիճակը ենթադրում է պարտադրված գործողությունների արդյունքում բնակության պետության փոփոխություն: Այդպիսիք Ադրբեջանի տարածքում ԶԶ-ից տեղափոխվածներն են, որոնք, ինչպես նշեցինք, ի տարբերություն Ադրբեջանից փախստական հարյուր հազարավոր հայերի, Չայաստանից հեռացան ըստ էության կենսագործունեության կազմակերպման անհրաժեշտ բոլոր միջոցառումների իրագործումից հետո. փոխհատուցումներ, բնակարանների փոխանակում և այլն: Ավելին, հիմնականում գյուղաբնակ ադրբեջանցիները պարզապես զբաղեցրին Բաքվում, Սումգայիթում, այլ քաղաքներում հայերի կողմից լքված տասնյակ հազարավոր բնակարաններն ու տները: Քարոզչական տեսանկյունից այս փաստը ունի կարևոր նշանակություն: Չայ փախստականների և ադրբեջանցի փախստականների կորուստներն անհամեմատելի են և փոխհատուցման խնդիրը պետք է դրվի հայ-ադրբեջանական միջպետական հարաբերությունների հիմքում:

Այլ կարգավիճակում են ռազմական գործողությունների արդյունքում ազատագրված բնակավայրերից տեղափոխվածները, որոնք դեյուրե ունեն ներքին տեղահանվածի կարգավիճակ, քանի որ տեղափոխությունները եղել են մեկ պետության, այն է՝ Ադրբեջանի տարածքում: Չայկական կողմը ռազմական գործողությունների արդյունքում ընդամենը ԼՂԶ բնակչության ֆիզիկական անվտանգությունն ապահովող գոտի է ձևավորել, որի նույնիսկ մի մասի զիջումը պետք է համարել «բարի կամքի դրսևորում», անկախ միջազգային տարբեր կառույցների

ու կազմակերպությունների փաստարկներից ու հիմնավորումներից: Չմոռանա՞նք, որ նմանատիպ խնդիրներ ունի ԼՂՀ-ն ևս: Էական է նաև Շահումյանից տեղափոխվածների հարցը, որը վերջին տարիներին կարծես դուրս է մղվել բանակցային գործընթացից, մինչդեռ տեղահանված հազարավոր ընտանիքներ այսօր բազմաթիվ դեպքերում չունեն բնակության բավարար պայմաններ, զբաղվածություն, տանելի կենսամակարդակ:

Այսինքն, անկախ փաստարկներից, հիմնախնդրի դիտարկումը միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում, ենթադրում է համարժեք լուծումներ ու միջոցառումներ: Խոսելով փախստականների մասին ու ներկայացնելով տարբեր պահանջներ, ադրբեջանական կողմը չպետք է մոռանա, որ ինքը ևս պարտավորություններ ունի հարյուր հազարավոր հայ փախստականների առաջ: Ներքին տեղահանվածների փաստն արձանագրելիս պետք է հաշվի առնվի, որ այս իրողությունն իր հերթին հետևանք ու արդյունք է ԼՂՀ-ին պարտադրված բացահայտ պատերազմի: Միջազգային ատյաններում այս փաստի համակողմանի, հաշվարկված ու հիմնավորված ներկայացումը պետք է դրվի ինչպես ԶԶ, այնպես էլ ԼՂՀ մոտեցումների հիմքում:

Փաստահավաք առաքելության գեկույցը, որում նշվում էր, որ ազատագրված տարածքներում վերաբնակեցվողները հիմնականում փախստական ընտանիքներ են, ասվածի ապացույցն է: Ադրբեջանական կողմն իր հերթին խոչընդոտում է փաստահավաք առաքելության իրականացմանն արդեն Շահումյանի տարածքում: Երկակի ստանդարտների քաղաքականության հիմքում ընկած է այն, որ հայկական կողմի տվյալներով Շահումյանում իրականացվում է արդեն կազմակերպված վերաբնակեցում, ավելին, ոչնչացվում են պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ փախստականների վերաբնակեցումը ԼՂՀ-ում առկա իրավիճակով պայմանավորված երևույթ է: Ավելին, այն պետք է կրի զանգվածային բնույթ, քանի որ փախստականների ճնշող մեծամասնությունը ըստ էության զրկված է բնակության նախկին վայրեր վերադառնալու բոլոր հնարավորություններից:

**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ
ՍԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ 1988-1991 ԹԹ.**

Ստորև վերլուծված են 1988-1991 թթ. Արցախյան հակամարտության ընթացքում հայկական կողմի կրած մարդկային կորուստների վերաբերյալ առկա աղբյուրներից ամենամբողջականի՝ Անդրամիկ Արշակյանի կազմած «Մահ չիմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն» վերտառությամբ հուշամատյանի տվյալները, որի Ա գիրքը հրատարակվել է Երևանում 1993 թ., 15000 տպաքանակով¹: Այն պարունակում է համառոտ տեղեկություններ 1988-1991 թթ. հակամարտության արդյունքում զոհված 466 անծանց կյանքի և զոհվելու հանգամանքների մասին, որոնք ներկայացված են բռնի մահերի ժամանակագրական հերթականությամբ: Ձոհվածների ընդհանուր քանակությունն, իհարկե, չի ներառում հակամարտության բոլոր հայազգի զոհերին 1988-1991 թթ.: Հարկ է ընդգծել, որ Արցախյան հակամարտության ընթացքում հայկական կողմի, ինչպես նաև ադրբեջանցիների, կրած մարդկային կորուստները հայտնի են միայն մոտավոր: Ընդ որում, եթե բացառենք որևէ քաղաքական շահարկում, այսինքն՝ հայտնի տեղեկությունների խեղաթյուրում հակամարտության տրամաբանությունից բխող նպատակով, առանձին դժվարություններ են նկատվում հակամարտությանը զոհվածի մասնակցության փաստը ճշտելու, մահվան որոշ դեպքեր հակամարտ որևէ գործողությամբ հրահրված լինելը որոշելու խնդիրներում: Դրանց հավելվում է 1988-1991 թթ. գրաքննության ենթակա պաշտոնական լրատվամիջոցների, իսկ հետագա տարիներին՝ պատերազմական իրադրության ազդեցությամբ հաղորդված տեղեկությունների ոչ հավաստի կամ թերի լինելը: Մասնավորապես՝ հեղինակը չի ներկայացրել 1988 թ. փետրվարի

¹ Արշակյան Ա. «Մահ չիմացեալ՝ մահ, Մահ չիմացեալ՝ անմահություն. հուշամատյան», Երևան, «Առաջընթաց» հրատ., 1993; այսուհետ՝ «Հուշամատեան»:

26-28 Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում սպանված 32 (այլ տվյալներով՝ 53 կամ հարյուրի չափ) հայերին, և 1990 թ. հունվարի 13-22 Բաքվում զոհված հայերին¹: Տեղեկություններն ամբողջական չեն նաև Գանձակի և Նախիջևանի հայկական բնակչության բռնազաղթի ընթացքում կամ դրանից հետո Ադրբեջանի տարածքում մահացածների վերաբերյալ: Հավանաբար, Ա. Արշակյանը դիտավորյալ չի զետեղել բռնազաղթի զոհերին վերաբերող տվյալները, հաշվի առնելով, որ դրանք բազմիցս ներկայացվել են անցյալ տարիներին: Այս վերապահումով հանդերձ, Ա. Արշակյանի հուշամատյանը խնամքով կատարված աշխատանք է, որը թույլ է տվել մեզ բազմակարգ աղյուսակներ մշակել և նկատել հակամարտության ընթացքի մի շարք կարևոր օրինաչափություններ²:

Մենք համակարգել ենք «Հուշամատյան»-ում եղած տվյալներն ըստ զոհերի ժամանակագրության, զոհվելու վայրի և բռնի մահվան դեպքերի կրկնվող նկարագրությունների, սպանող կողմի և սպանության միջոցի, զոհերի հիմնական բնակավայրի մասին տվյալների: Համակարգված են նաև, բայց առայժմ այստեղ չեն ներկայացվի զոհերի սեռային և տարիքային կազմի, նրանց ընտանեկան դրության և թաղման վայրերի մասին հայտնի տեղեկությունները:

Ավելացնենք նաև, որ գիտակցում ենք զոհերին վերաբերող փաստերի նկատմամբ գիտական վերլուծության, ոչ հուզական վերաբերմունքի անսովորությունը: Կարծում ենք գիտական մոտեցումը զոհերի խնդրին չի բացառում ինչպես հեղինակի, այնպես էլ ընթերցողների արժեքային վերաբերմունք³:

¹ Տե՛ս այդ մասին՝ **Խոջաբեկյան Վ. Ե.**, Արցախը փորձության ժամին, Երևան, 1991, 94-148; **Амбарцумян С. А.**, Три года на пределе любви и смерти, Ер. 1992, стр. 103; **И. Мосесова, А. Овванян**, Вандализм в Баку, Ереван, 1991; **Чобанян С. С.**, Государственная и национальная политика Азербайджана, Ер., 1993, стр. 132-146, 169-181:

² «Հուշամատյան»-ի տեղեկությունների հավաստիության աստիճանը ստուգվել է տարբեր եղանակներով, այդ թվում՝ այնպիսի սկզբնաղբյուրների հետ համեմատությամբ, ինչպես օրինակ՝ **Սկրտչյան Ա.**, Ինչ տեղի ունեցավ Հաղորթում, Երևան, 1992, գրքի վերջում զետեղված հաղորթի զոհերի ցուցակը: 1988-1991 թթ. վերաբերյալ ավելի ցածր աստիճանի հավաստիության տեղեկություններ ենք ստացել 1996 թ. Հաղորթի և Մարտունու շրջանների ՔՎԱԳ բաժիններից, դրանցում վիճակագրական աշխատանքի խաթարման պատճառով՝ **Մ. Գաբրիելյան, Ա. Դաբադյան**, Դաշտային ազգագրական նյութեր, Մարտունի, 1996, Հաղորթ 1996:

³ Էթնիկական բախումների ազգագրական ուսումնասիրության շրջանակներում բռնության զոհերի (homocide) մասին էմպիրիկ տեղեկությունների գիտական վերլուծու-

Ձոհվածների քանակը ժամանակագրորեն: Այստեղ կներկայացվեն զոհվածների քանակի մասին տվյալները ըստ տարիների և ամիսների: Տվյալների միջինը որոշված է ըստ 1988-1991 թթ. ամիսների: Փակագծերում (իսկ գծապատկերի վրա կետագիծը) նշված են 1988 թ. փետրվարի, 1990 թ. հունվարի և Ադրբեջանից հայերի բռնագաղթի ընթացքում զոհվածների քանակը:

Աղյուսակ 1


	1988	1989	1990	1991	ընդամենը	միջինը
ըստ տարիների	7(42)	22	110(150)	327	466(210)	
հունվար	-	-	19(150)	12	31(150)	7. 6 (35)
փետրվար	(32)	1	7	10	18(32)	4. 5 (12. 5)
մարտ	-	-	7	10	17	4. 25
ապրիլ	-	-	6	32	38	9. 5
մայիս	-	-	23	53	76	19
հունիս	1	-	5	4	10	2. 5
հուլիս	1	1	1	24	27	7
օգոստոս	1	6	13	10	30	7. 5
սեպտեմբր	1	2	5	28	36	9
հոկտեմբեր	-	3	8	38	49	12
նոյեմբեր	1 (10)	6	8	23	38(10)	9. 5 (12)
դեկտեմբեր	2	3	8	81	94	24

Այս աղյուսակը թույլ է տալիս դիտել հակամարտության հայտնի օրինաչափություններից մեկը՝ զոհերի թվի տարեցտարի աճը, ինչը հետևանք է հակամարտ գործողությունների ընդհանուր թվի և դրանց բազմազանության ավելացման, ակտիվ մասնակիցների և նրանց կողմից օգտագործվող զինամիջոցների քանակական տվյալների մեծացման: 1988-1991 թթ. այս գործընթացը համեմատաբար դանդաղ և աստիճանական բնույթ էր կրում և ակնհայտ է դառնում միայն տարեկան չափումների դեպքում: «Ձոհվելու հանգամանքները» բաժնում ներկայացվող տվյալները կլրացնեն այստեղ ասվածը:

թյունը տվյալ բախման բնույթի, ծավալման օրինաչափությունների, ինչպես նաև՝ կողմերի բնութագրման հիմնական միջոցներից է: Համապատասխան տեսական մոտեցումների և ուսումնասիրությունների առումով տե՛ս Beckerman S. The Equations of War, CA, v. 32, n. 4, pp. 636-639; **Gluckman M.** "The Peace in the Feud", in Max Gluckman: Custom and Conflict in Africa, Oxford, 1960, pp. 1-26; Westermeyer J Assassination and Conflict Resolution in Laos. American Anthropologist, (AA), v. 75, n. 1, pp. 123-131.

Ձոնվածների քանակական վերլուծությունը հնարավոր է նաև մեկ այլ կտրվածքով: Ստորև ներկայացված գծապատկերի օգնությամբ կարելի է տեսնել, թե հակամարտության չորս տարիների ընթացքում ինչպիսին է զոհերի միջին քանակությունը ըստ ամիսների.

Գծապատկեր 1



Այս աղյուսակները մենք կազմեցինք, ենթադրելով, որ հակամարտության չորս տարին բավական երկար ժամանակահատված է, և ըստ ամիսների զոհվածների քանակը բաշխելու դեպքում կարելի է նկատել բնակլիմայական կամ գյուղատնտեսական ցիկլերին համապատասխան որևէ սեզոնային օրինաչափություն: Սակայն միայն 1988-1991 թթ. փաստերը թույլ չեն տալիս այս կարգի որևէ եզրահանգում կատարել: Կարող ենք միայն երկու նկատառում առաջարկել.

ա) եթե անգամ հակամարտության զոհերի քանակական տվյալների փոփոխությունը որևէ կապ ունի բնակլիմայական և գյուղատնտեսական գործոնների հետ, ապա այդ կապը նվազագույն է: Պետք է հաշվի առնել, որ արցախյան հակամարտությունը ժամանակակից հակամարտություն է, և դրա կողմերն առավելապես արդյունաբերական ժողովուրդներ են, ունեն ազատ մարդկային ռեսուրսներ և տեխնիկական հնարավորություններ բնության առաջադրած խոչընդոտներից խուսափելու համար:

բ) Մարտ և հունիս ամիսներին նկատվում է զոհերի նվազագույն

քանակություն, կարծես որոշ ընդմիջումներ կան հունվար - փետրվար, ապրիլ - մայիս և հուլիս - դեկտեմբեր ամիսների զոհերի բարձր թվերի միջև:

Ավելացնենք նաև, որ, ինչպես նկատելի է աղյուսակ 1-ում, հակամարտության զոհերի քանակության ժամանակագրական տատանումները անմիջական կապի մեջ են հակամարտության այս կամ այն միջադեպի հետ: Հատկապես ազդեցիկ են խոշոր միջադեպերը, որոնք պատճառահետևանքային կապերի մեջ են զոհերի թվերի տատանումների հետ: Կողմերից մեկի քաղաքական (օրենսդրական կամ դիվանագիտական) ակտիվությունը նախորդում է նրա կրած կորուստներին և/կամ այդ ակտիվության աճին որպես կանոն հետևում է զոհերի քանակի կտրուկ ավելացում: Եվ ընդհակառակը՝ զոհերի քանակության կտրուկ ավելացումը հանգեցնում է քաղաքական պատասխան քայլերի բազմացման, այդ թվում քայլերի «տեսականու» առումով:

Ձոհվելու վայրը: Այս բաժնում կրկին աղյուսակների ձևով կներկայացվեն հակամարտության ընթացքում հայկական կողմի զոհերի սպանության վայրերը:

Այդ տվյալների հիման վրա կարելի է առաջադրել մի քանի դիտողություններ:

Նախ՝ ուշադրություն է գրավում ԼՂՀ և Հայաստանի հանրապետության տարածքներում զոհվածների քանակի փոփոխությունը 1988-1991 թթ. ընթացքում: Այդ փոփոխությունը նկատելի է տվյալների հետևյալ դասավորության դեպքում.

Աղյուսակ 2

տարին	1988	1989	1990	1991	1988-1991
տարածքը					
ԼՂՀ	1	9	30	260	300
ՀՀ	6	12	76	57	151

¹ 1988-1991 թթ. Ադրբեջանի տարածքում սպանված հայերի մասին տեղեկությունների անորոշությունը թույլ չի տալիս դրանք ընդգրկել այս աղյուսակում: Միանշանակ է, որ սումգայիթյան իրադարձությունների հաշվառմամբ՝ 1988 թ. հայազգի զոհերի թիվն Ադրբեջանի տարածքում մի քանի անգամ գերազանցում է ՀՀ կամ ԼՂՀ (ԼՂԻՍ) տարածքում սպանվածների թիվը:

Աղյուսակը վկայում է, որ վերը նշված զոհերի ընդհանուր քանակի տարեկան աճը որոշ տարածքային բնութագիր ունի: 1988, 1989 և 1990 թթ.. ընթացքում ավելի շատ անձինք են զոհվել Հայաստանի, քան թե Արցախի տարածքում, 1991 թ. այդ հարաբերակցությունը կտրուկ փոխվում է. ԼՂՀ - 260 զոհ, ՀՀ - 57 զոհ: Մեր ունեցած տվյալներով, նույնպիսի կամ ավելի մեծ հարաբերակցություն է պահպանվում նաև 1992-1994 թթ. մի կողմից Արցախում, իսկ մյուս կողմից Հայաստանում և Ադրբեջանում զոհվածների քանակության միջև: Կարելի է ենթադրել, որ 1991 թ., հատկապես նրա երկրորդ կեսը, բեկումնային պահ էր հակամարտության ծավալման, հակամարտությունից պատերազմին անցման ընթացքում: Նկատելի է հակամարտող կողմերի գործողությունների կենտրոնացում հակամարտության բուն կենտրոնում՝ Արցախում: Ձոհերի քանակական աշխարհագրությունը ներկայացնում է միջէթնիկ հակամարտ գործողությունների որոշ վերախմբավորում, հակամարտության գլխավոր առարկայի շուրջ կենտրոնացման միտումով:

Ձոհվելու վայրերը փորձենք դասակարգել նաև սահմանային - ոչ սահմանային սկզբունքով: Ընդ որում ԼՂՀ ողջ վարչական տարածքը, ինչպես վերը նկատեցինք, համատարած շփման գոտի էր 1988-1991 թթ. ընթացքում, և ԼՂՀ բոլոր հայկական բնակավայրերը դիտվում են սահմանամերձ: Այդ պատճառով էլ ԼՂՀ և ՀՀ տվյալները աղյուսակում ներկայացնում ենք առանձին, ԼՂՀ-ն դիտելով որպես սահմանամերձ տարածք:

Աղյուսակ 3

Ձոհվելու վայրը	1988	1989	1990	1991	1988-1991
ՀՀ սահմանամերձ գոտում	1	8	30	51	90
ԼՂՀ	1	9	28	255	292
ՀՀ ոչ սահմանամերձ գոտում	5	4	41	6	56

Այս աղյուսակը նկատելի է դարձնում հակամարտության առաջին տարվա՝ 1988 թ. որոշ տարբերությունը հետագա տարիներից. 1988 թ. զոհվածների մեծամասնությունը սպանվել է Հայաստանի ոչ սահմանամերձ տարածքում՝ 3-ը Երևանում, 2-ը Եղեգնաձորի և Գորիսի շրջանների խորքային բնակավայրերում՝ Ռինդ գյուղում և Որոտան բանավանում: Հաջորդ տարիներին տարբերությունը սահմանային - ոչ սահմանային զոհերի միջև աճել է, և 1991 թ. դրությամբ մոտ 30 անգամ ավելի

շատ մարդ է սպանվել ՀՀ սահմանային գոտում և ԼՂՀ-ում, քան ՀՀ կենտրոնում: Ընդ որում, երկրի անվտանգ հատվածներում զոհվածներն ընդամենը 6-ն են: Նրանցից երկուսը սպանվել են Գյումրիում գտնվող ռուսական զորամասերից մեկի վրա կատարված հարձակման ժամանակ, երկու այլ ազատամարտիկներ չբացահայտված հանցագործության և դժբախտ պատահարի զոհեր են դարձել Աշտարակի շրջանում, մեկը մահացել է ճանապարհային վթարի, իսկ մեկ այլ անձ՝ ինքնաշեն ականի փորձարկման հետևանքով:

Ներկայացված աղյուսակը նույնպես որոշ վերապահումներ է պահանջում՝ կապված 1988-1990 թթ. Ադրբեջանի որոշ քաղաքներից և շրջաններից հայ ազգաբնակչության բռնի վտարման ընթացքում զոհվածների և 1990 թ. մայիսի 27-ին Երևանում խորհրդային բանակի հետ քաղաքացիների զինված ընդհարման զոհերի հետ: Վերջին դեպքում զոհվեցին մոտ 30 հայեր՝ մեծ մասամբ երևանցիներ, ինչը և ցույց է տրված 1990 թ. սյունակում:

Ձոհերի տեղագրության այս համառոտ դիտարկումը թույլ է տալիս նկատել հակամարտության մաս կազմող բռնությունների ալիքի աստիճանական տարածումը կենտրոնից դեպի սահմանները, իսկ հայ-ադրբեջանական սահմանի առանձին հատվածներից լարվածության մեծ մասն անցնում է ԼՂՀ: Պետք է նշել, որ այս դիտողությունը թույլ չի տալիս եզրակացնել, թե հակամարտությունը դեպի սահմաններ է արտահանվել կենտրոնից: Եթե հաշվի առնենք նաև 1988 թ. փոխադարձ բռնագաղթերը, որոնք նույնպես ուղեկցվել են սպանություններով, ապա ներկայացված տվյալները կարելի է դիտել որպես արցախյան հակամարտության առանձնահատկության դրսևորում: Այսինքն՝ հակամարտող կողմերն իրենց ներքին տարածքներում ունեին հայերը՝ ադրբեջանցի, իսկ ադրբեջանցիները՝ հայազգի բնակիչներ: 1988-1990 թթ. դեռևս զործունակ էր խորհրդային իշխանությունը, որը խոչընդոտում էր հակամարտության արագ ծավալմանը: Այս երկու հանգամանքներն ազդել են նաև զոհերի տեղագրության վրա. նախքան դիմահայաց առճակատման անցնելը հակամարտ կողմերը պետք է ազատվեին իրենց տարածքներում ապրող հակառակորդներից և խորհրդային իշխանության վերահսկողությունից:

Ձոհվածներն ըստ հիմնական բնակավայրերի: Ա. Արշակյանի «Հուշամատեն»-ի կառուցվածքը թույլ է տալիս հանրագումարի բերել

Մաս հակամարտության փուլում զոհված հայերի հիմնական բնակավայրին վերաբերող տվյալները¹: Հարկ ենք համարում նկատել, որ զոհվածների քանակն իսկապես որոշ չափով դրսևորում է հայաբնակ առանձին տարածքների մասնակցության չափը հակամարտ գործողություններին: Բայց սա միակ եզրակացությունը չէ, որ կարելի է կատարել համապատասխան տվյալների հիման վրա: Դրանց օգնությամբ նկատվող հիմնական օրինաչափությունը զոհեր տված բնակավայրերի աշխարհագրության ընդարձակումն է: Այսպես՝ 1988 թ. զոհվել են ընդամենը հինգ բնակավայրերի ներկայացուցիչներ, 1989 թ.-ին՝ 18, (որոնցից 8-ը՝ ԼՂՀ-ում), 1990 թ.-ին՝ 45 (որից 14ը՝ ԼՂՀ-ում): Այս ցուցանիշը նույնպես նախորդ աղյուսակների տվյալների նման վկայում է հակամարտության տարածումը սկզբնական սեղմ շրջանակից մինչև ավելի ընդարձակ տարածքներ: Ընդ որում, կրկին նկատելի է 1991 թ. շրջադարձային նշանակությունը. 1988-1990 թթ. ավելի մեծ թիվ են կազմում զոհեր տված Հայաստանի բնակավայրերը, իսկ 1991 թ. մեծամասնություն են արդեն ԼՂՀ բնակավայրերը՝ 109-ից 63-ը:

«Որտեղ են զոհվել» և «որտեղից են զոհվածները» տվյալների համեմատությունը 1988 և 1989 թթ. առունով այնքան էլ խոսում չեն՝ զոհվելու վայրը և զոհվածի հիմնական բնակավայրը գրեթե լիովին համընկնում են: Երկու աղյուսակներում գրեթե լիովին համընկնում են ԼՂՀ բնակավայրերի քանակը, ինչը խոսում է այն բանի մասին, որ ԼՂՀ 74 բնակավայրերի ներկայացուցիչները մեծ մասամբ զոհվել են իրենց բնակության վայրերում կամ դրանց շրջակայքում: Թիվ 2 աղյուսակում առկա է ընդամենը 43 տեղանում, որոնք պատկանում են Հայաստանի տարբեր բնակավայրերին, որտեղ զոհվել են հայազգի մարդիկ, այն դեպքում, երբ զոհեր է տվել Հայաստանի 73 բնակավայր, այսինքն՝ զոհ տված Հայաստանի բնակավայրերն զգալիորեն ավելի շատ են, քան այն բնակավայրերը, որտեղ զոհվել են այդ մարդիկ: Ավելի խոսում են թվական տվյալները՝ 1990 թ. Հայաստանի տարածքում զոհվել է 76 հոգի, այնինչ հայաստանցի զոհվածների թիվն է 83: 1991 թ. այդ հարաբերությունն ավելի մեծ է՝ 57/90: Նույն տարիներին ԼՂՀ տարածքում

¹ «Ձոհվածների բնակության վայրը» և «Ձոհվելու վայրը» անվանված աղյուսակները՝ «Հուշամատյանի» 466 անձանց վերաբերյալ խիստ ընդարձակ են և չեն ներկայացվում ամբողջությամբ:

զոհվածների և ծագումով ԼՂՀ-ից զոհվածների հարաբերակցությունը հակառակն է՝ 1990 թ.՝ 30/25, իսկ 1991 թ.՝ 260/223: Այս հարաբերակցությունն, անշուշտ, հետևանք է 1990-1991 թթ. Հայաստանից մեկնած կամավորների մասնակցության ԼՂՀ տարածքում ընթացող հակամարտության: Սակայն կրկին պետք է նկատենք, որ այս տվյալները հիմք չեն տալիս ենթադրելու հակամարտության «արտահանում» Հայաստանից ԼՂՀ: Նախ՝ վերոնշյալ հարաբերակցությունը նկատվում է հակամարտության երրորդ և չորրորդ տարիների տվյալներում, այլ ոչ թե սկզբնական շրջանում: Երկրորդ՝ նույնպիսի հարաբերակցություն է դիտվում հենց ԼՂՀ ներսում. երկրամասի կենտրոն հանդիսացող Ստեփանակերտում 1990 թ. զոհվել է հինգ հոգի, իսկ ստեփանակերտցիներ՝ 7-ը, 1991 թ. նույն տեղում զոհվել է 46 անձ, իսկ ԼՂՀ-ում զոհվածների մեջ ստեփանակերտցիների թիվն է 60: Համեմատության համար նշենք նաև Երևանում զոհվածների և երևանցի զոհվածների հարաբերակցությունը. 1989 թ.՝ 0/2; 1990 թ.՝ 30/47; 1991 թ.՝ 0/28: Մայրաքաղաքներին վերաբերող այս տվյալների համեմատությունը թույլ է տալիս որոշ տարբերություն նկատել նաև 1990 և 1991 թթ. միջև: 1991 թ. Ստեփանակերտում ավելի շատ հայեր են զոհվել և ավելի շատ ստեփանակերտցիներ՝ ԼՂՀ-ում, քան 1991 թ., այն դեպքում, երբ Երևանում զոհվածների և զոհված երևանցիների քանակական տվյալները 1991 թ. նվազել են 1990 թ. համեմատությամբ:

Ձոհվելու հանգամանքները: Հատկապես կարևոր ենք համարում այս բաժնում ներկայացված տվյալները, որոնք վերաբերում են 1988-1991 թթ. զոհված հայերի բռնի մահվան հանգամանքներին, նշում են, թե ովքեր են այդ սպանության մեղավորները, ինչպիսին է եղել մահվան միջոցը կամ զենքը:

Մենք բաժանել ենք զոհվածների մահվան հանգամանքներին վերաբերող տվյալները: «Ձոհվելու հանգամանքները» աղյուսակում ներկայացված են այդ հանգամանքների առավել ընդհանուր ձևակերպումները և համապատասխան քանակական տվյալները տարեկան ժամանակագրական կարգով:

Երկրորդ աղյուսակում քանակական տվյալները ներկայացված են նույն ժամանակագրական կարգով, սակայն դիտված են զոհվելու փաստի հետ կապված այլ հանգամանքներ. «սպանող կողմը» և «մահվան միջոցը կամ զենքը»: Այս աշխատանքում սակայն թույլ է տալիս ավելի ման-

րամասն դիտել հայտնի տվյալները, թեև երկու աղյուսակներն էլ կազմված են միևնույն անձանց բռնի մահվան մասին հաղորդումների հիման վրա:

Աղյուսակ 4

	Ձոհվելու հանգամանքները	1988	1989	1990	1991	1988-1991
1	ազերիների ^{1*} անասնագողություն	1	6	4	23	34
2	ազերիների ճանապարհային դարան	1	4	8	42	55
3	հարձակում բնակավայրի վրա ²	-	-	17	120	137
4	ԽԲ կարգապահական ձեռնարկ	3	1	22	10	36
5	հայրենամկեր նախաձեռնում	1	2	-	1	4
6	հատուկ կարևոր առաջադրանք ³	-	-	1	1	2
7	մարտական առաջադրանք	-	4	35	119	158
8	ինքնաշեն զենքի փորձարկում	9-1	5	9	2	26
9	դժբախտ պատահար	-	-	8	3	11
10	ներքին ընդհարում	-	-	4	2	6
11	այլ ⁴	-	-	2	3	5
	Ընդամենը`	7	22	110	327	466

Այս աղյուսակը, թեև փոքր-ինչ ընդհանուր ձևակերպմամբ, թույլ է տալիս առանձնացնել հայկական կողմից զոհեր խլած հակամարտության կրկնվող դիպվածները, և դրանց շարքում նկատել առավել վտանգավոր հանգամանքները: Եթե ուշադրություն դարձնենք զոհվելու հան-

¹ Ադրբեջանցիներին «ազերի» բառով է բնորոշում «Հուշամատենի» հեղինակը, ինչը, թերևս հեղինակի (մահ այլ հեղինակների) կողմից ռուսերեն «азербайджанец» բառի «азер» քամահրական կրճատման ներմուծումն է ժամանակակից հայերեն: Ադրբեջանցիներն իրենք իրենց այդպես չեն անվանում, կամ անվանում են միտումնավոր` տե՛ս գրականությունը` **Ասատրյան Գ.**, Ազարիներ, «Իրան-մանե» ամսագիր, Երևան, 1995, հ. 2 (12), ծգր. 2, ինչպես մահ «Encyclopaedia Iranica»-ի «Azari» բառահոդվածը:

² Հաճախ դժվարացել ենք զոհվելու հանգամանքները «հարձակում բնակավայրի վրա», թե «մարտական առաջադրանք» գնահատելիս, քանի որ ինքնապաշտպանական գործողության ընթացքում զոհվածները կարող են գնահատվել և՛ որպես բնակավայրի վրա հարձակման հետևանքով զոհվածներ, և՛ որպես մարտական առաջադրանք կատարողներ: Նման դեպքերում բնորոշումը կատարելիս հաշվի ենք առել զոհվածի տարիքը, տեղացի՞ էր նա արդյոք և այլն:

³ Երեք դեպքերն էլ նկատի ունեն ԽԲ զինապահեստներից զենքի բռնագրավման գործողությունը` «Հուշամատեն», 202, 450:

⁴ Նկատի են առնված ռազմական հարձակման ընթացքում տարեց անձանց մահը սրտային հիվանդությունից, կալանավորված ազատամարտիկի ինքնասպանությունը` «Հուշամատեն», 104, 124, 259, 287, 384:

գամանքների տասնմեկ խմբերից առավել վտանգավորները հինգն են, որոնք խլել են հակամարտության որևէ մեկ տարում տասից ավելի կյանք: Այդ հանգամանքների հետ կապված թվական տվյալները զետեղված են թիվ 4 աղյուսակի 1-4 և 7 տողերում, այսինքն՝ ներկայացնում են «ազերիների անասնագողության», «ճանապարհային դարանի», «հայկական բնակավայրի վրա հարձակման», «ԽԲ կարգապահական ձեռնարկի» և «մարտական առաջադրանքի» ընթացքում զոհվածների: Ընդ որում՝ նշված պատճառներով զոհերի կտրուկ թվական աճ է նկատվում 1990 և 1991 թթ. տվյալները համեմատելիս: Այսպես, ազերիների անասնագողության գործողությունների ընթացքում 1990 թ. զոհվել են ընդամենը 4, իսկ 1991 թ.՝ 23 հայեր, այսինքն՝ 5.7 անգամ ավելի: Ճանապարհային դարաններում 1990 և 1991 թթ. զոհվածների հարաբերությունն է 5.2 անգամ: հայկական բնակավայրերի դեմ գործողություններից զոհվել են 7 անգամ ավելի, իսկ հայկական կողմի մարտական առաջադրանքներում 1991 թ. զոհվել են 3.3 անգամ ավելի հայեր, քան նախորդ տարում: Այս վերջին դեպքում զոհերի թիվն ավելի մեծ աճ է արձանագրել 1989-1990 թթ. միջև՝ 1990 թ. մարտական առաջադրանք կատարելիս զոհվել են 4 անգամ ավելի հայեր, քան նախորդ տարում:

Կարևոր եզրակացության են հանգեցնում երրորդ, իբրև թե չեզոք կողմի գործողությունների հետևանքով զոհվածներին վերաբերող թվական տվյալները: Աղ. 4-ի «ԽԲ կարգապահական ձեռնարկ» տողում նշված են հետևյալ տվյալները՝ 1988 թ. – 3 զոհ, 1989 թ. – 1 զոհ, 1990 թ. – 22 զոհ, 1991 թ. – 10 զոհ: Այսինքն՝ նկատվում է բազմակի աճ 1989-1990 թթ. միջև: Առաջին երևույթի պատճառը պարզ է՝ 1989 թ. Արցախում Ա. Վոլսկու ղեկավարած վարչակազմի բաժանարար քաղաքականությունը համեմատաբար արդյունավետ էր և հայկական կողմի համար բարենպաստ: Սակայն 1990 և 1991 թթ. տվյալները և դրանց հարաբերությունը որոշ լրացուցիչ դիտարկման կարիք են զգում: Աղ. 5-ում նշված են ԽԲ զինվորների կողմից սպանված և ԽԲ ու թշնամու (ադրբեջանցիների) համատեղ գործողությունների հետևանքով զոհվածների տվյալները. 1990 թ. 32+2, իսկ 1991 թ.՝ 39+24: Այսինքն՝ 1990 և 1991 թթ. խորհրդային զինվորների ձեռքով կամ նրանց ակտիվ մասնակցությամբ զոհվել է զգալիորեն ավելի շատ մարդ, քան կարելի է ենթադրել միայն նախորդ աղյուսակի «ԽԲ կարգապահական ձեռնարկ» տողի տվյալները հաշվի առնելով: Ավելին՝ 1991 թ. տվյալները շատ մեծ

տարբերություն են մշում՝ եթե ԽԲ կարգապահական ձեռնարկների ընթացքում 1991 թ. զոհվել է ընդամենը 10 հայ, ապա նույն տարվա ընթացքում այդ նույն խորհրդային բանակն ինքնուրույն կյանքից զրկել է 39, իսկ ադրբեջանցիների հետ համատեղ գործողություններով՝ 24 հայերի: Ակնհայտ է, որ 1990-1991 թթ. «երրորդ կողմը» դադարել էր չեզոք լինել, և խաղաղարար գործողություններից անցել էր հայերի դեմ պատժիչ գործողությունների: Այդ իրավիճակը հետևանք էր նախկին խորհրդային Միության քաղաքական ղեկավարության կոշտ դիրքորոշման, և երկարաձգվեց մինչև 1991 թ. սեպտեմբեր ամիսը: Մեր աղյուսակն ընդամենը հավելյալ փաստ է, որը հաստատում է Արցախյան հակամարտության այս փուլում խորհրդային ղեկավարության և բանակի հակահայ վարքագծի մասին բազմիցս արտահայտված կարծիքները¹: Նրանց մեղքով զոհվել են մի քանի տասնյակ հայ մարդիկ, որոնց սպանությունը նույնիսկ ձևականորեն դուրս է մնում «կարգապահական ձեռնարկ» բնորոշումից: Այդ զոհերը պետք է փնտրել թիվ 4 աղյուսակի այլ տողերում՝ «հարձակում բնակավայրի վրա» կամ «ճանապարհային դարան»:

Աղյուսակ 5

Սպանող կողմը և միջոցը կամ զենքը	1988	1989	1990	1991
ինքն իրեն	1	7	23	10
ինքնաշեն զենքի փորձարկում	1	7	9	3
դժբախտ պատահար	-	-	8	2
մերքին ընդհարում	-	-	4	2
այլ	-	-	2	3
ԽԲ կողմից	3	1	32	39
գնդակահարված	1	3	30	28
տանկ	-	-	1	7
զրահամեքենա	-	-	-	2
ուղղաթիռ	-	-	1	-
զրահամեքենայի վրերթ	2	-	-	2
ԽԲ և թշնամու համատեղ գործողությամբ	-	-	2	24
գնդակահարված	-	-	2	24
թշնամու կողմից	3	14	53	254
գնդակահարված	2	10	40	174

¹ Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, 201-251, Чобанян С., նշվ. աշխ., էջ 169-228:

խոշտանգված	1	4	7	23
ակամահարված	-	-	1	8
անհայտ կորած	-	-	4	17
հրետանի	-	-	1	26
տանկ	-	-	-	2
զրահեմեքենա	-	-	-	2
ուղղաթիռ	-	-	-	2

Աղյուսակ 5-ում առանձնացրել ենք ընդամենը չորս միավոր, որոնք հակամարտության ընթացքում հանդիսացել են «սպանող կողմ»: Այս առումով զոհեր խլած նվազագույն միավորը, որը մենք ձևակերպել ենք «ինքն իրեն», ներառում է ինքնաշեն զենքի փորձարկման, հակամարտության ընթացքի հետ կապված դժբախտ պատահարների, ներքին ընդհարումների և մի քանի այլ պատճառներով զոհվածներին: Հակամարտության չորս տարիներին եղել են այս կարգի 41 ակամա զոհեր, այսինքն՝ բոլոր զոհերի մոտավորապես տասներորդ մասը: Հետևելով «Հուշամատյան»-ի հեղինակին, մեր պարտքը համարեցինք հատկապես նշել այս ինքնազոհաբերությունները, որոնք «պատերազմ» կոչվող երևույթի թերևս ամենաողբերգական ուղեկիցներն են:

Ինչ վերաբերում է «սպանող կողմերին», աղյուսակում նշված տվյալներն ինքնին խոսուն են. խորհրդային բանակի հակահայ գործունեությունը հստակորեն դրսևորվել է 1990 և 1991 թթ.: «ԽԲ և թշնամու կողմից սպանված» զոհեր են նկատվում սկսած 1990 թ., իսկ հաջորդ տարվա ընթացքում այդ զոհերի քանակական ցուցիչը բազմակի աճում է: Թե՛ նման համատեղման հայտնաբերումը, թե՛ այս երկու կողմերի հակահայ ակտիվության աճը որոշ չափով բացատրում են տասնյակ հայերի սպանության փաստերը:

Ակնհայտ է նաև հայկական կողմի ուղղակի հակառակորդի՝ ադրբեջանցիների ռազմական ակտիվության աճի կայուն միտումն արդեն հակամարտության սկզբից: 1988-1991 թթ. ընթացքում ադրբեջանցիների ձեռքով զոհված հայերի թիվը տարեկան աճել է 4-5 անգամ: Կրկնենք, որ այստեղ հաշվի չեն առնվում Սումգայիթի և Բաքվի զոհերը, որոնց մեծամասնությունը զոհվել է խոշտանգումների հետևանքով: Մեր դիտարկած տվյալներում ադրբեջանցիներին սպանության հիմնական միջոց է ծառայել հրաձգային զենքը: Բայց կարևոր է նկատել ադրբեջանցիների զինանոցում խոշտանգման՝ որպես մահվան միջոցի գո-

յությունը: Ընդ որում՝ սպանության այս առավել դաժան եղանակն առկա է հակամարտության բոլոր չորս տարիների ընթացքում, և դրա կիրառմամբ զոհված հայերի քանակությունը երկրորդն է աղյուսակի համապատասխան հատվածում:

1990 թ., և հատկապես 1991 թ. ադրբեջանցիներն սկսում են կիրառել նաև զենքի ծանր տեսակներ՝ տանկեր, զրահամեքենաներ և հրետանի, որոնք մինչ այդ գտնվում էին միայն խորհրդային բանակի վերահսկողության ներքո:

К ИСТОРИИ ОБРАЗОВАНИЯ РУССКИХ ПОСЕЛЕНИЙ ЗАКАВКАЗЬЯ (1830-1840-Е ГГ.)

Переселение русских в пределы Закавказья пережило несколько этапов, обусловленных как спецификой процессов, происходивших внутри России, так и задачами, которые стояли перед царизмом на ее окраинах. Одним из них явилось переселение в край крестьян-сектантов из внутренних губерний России, которые, по замыслу правительства, должны были внести значительный вклад в экономическое развитие региона.

Переселение «раскольников» в Закавказье было оформлено указом от 20 октября 1830 г. (в законоположениях «раскольниками» называли старообрядцев и сектантов - молокан, духоборцев, субботников, скопцов и др.)¹. Были определены две формы миграции: принудительная (за распространение «ереси» и антицерковную деятельность) и добровольная. В этом случае инициатива крестьян подкреплялась определенной работой со стороны властей.

Законодательные акты, принятые в 1830-1840-е гг., предоставляли сектантам Закавказья значительные льготы в социально-экономической и религиозной жизни, следствием чего явилось широкое добровольное переселение сектантов в край, и такая мера, как ссылка, вскоре потеряла свое воздействие. Напротив, новые группы молокан стремились в Закавказье, где уже обосновались их единоверцы.

В основу организации переселений раскольников были положены законодательные акты и постановления 1820-1830-х годов.

¹ ПСЗРИ. Собр. II. Т. V. СПб., 1831. N 4010.

Препровождение переселенцев в Закавказье, продовольствие партии в пути, выбор участков для размещения находились в ведении Главноуправляющего Закавказским краем.

Партии переселенцев (не более 250-300 человек) шли по строго определенному маршруту: через Ставрополь в города Тифлис и Шемаху (в последний обычно препровождались под конвоем ссыльные)¹.

Трудности в пути приводили к тому, что в Закавказье крестьяне добирались совершенно разоренными. По описанию С. Максимова, прибывшие в Закавказье в первой половине 1830-х гг. семейства молокан (к 1836 г. их численность достигала 645 человек) «...находились в самом беднейшем состоянии, в которое они приведены были от чрезвычайного расстройтва в дальней и затруднительной дороге, так что не только не были в состоянии исполнять какие-либо повинности, но даже и пропитывать себя»².

Немалые испытания ожидали переселенцев и по прибытии в Закавказье. Особенно тяжело пришлось первой волне переселенцев в начале 1830-х гг., когда численность русских в регионе была невелика и рассчитывать на их поддержку не приходилось.

В планы закавказской администрация входили различные мероприятия, направленные на облегчение жизни переселенцев. В частности, власти намеревались использовать помощь местного населения, которое должно было заготавливать продовольствие, сено, засеивать часть полей и т. д. Переселенцев должны были снабжать орудиями труда и рабочим скотом. Им предоставлялись льготы от уплаты податей, они освобождались от воинского постоя и рекрутской повинности и др. Семьям ссыльных переселенцев должно было выдаваться денежное пособие на строительство домов (50-100 руб.) Прибывавшие же в Закавказье по собственному желанию для соединения со своими единоверцами должны были сами заботиться о себе.

Однако многие из этих предписаний оставались на бумаге. В

¹ ЦГИА Грузии, ф. 4, оп. 2, д. 140, л. 53 об.).

² С. Максимов. Очерк русских переселений в последние полтора века. - Морской сборник, 1861, т. IV, с. 224.

1830-е годы четко наладить прием и обустройство крестьян на новом месте не удалось из-за слабых позиций государственной власти в Закавказье, а также отсутствия опыта в организации переселенческого движения. Снабжение крестьян сельскохозяйственными орудиями, рабочим скотом было неудовлетворительное. Семена зерновых культур доставлялись с опозданием, да и новые климатические условия были незнакомы крестьянам, что ставило под угрозу урожай. В 1840-е гг. благодаря приобретенному опыту работы, а также новым законодательным актам и практическим рекомендациям обустройство переселенческих партий проходило уже менее болезненно.

В Закавказском крае первоначальным местом поселения раскольников была выбрана Карабахская провинция. Этот регион прежде всего рассматривался как место ссылки, и в начале 1830-х гг. ссыльные, очевидно, составляли основную часть переселенцев. Позже, в 1833 г., было принято решение о поселении русских и в других районах Закавказья, прежде всего в «мусульманских провинциях», при этом обращалось особое внимание на удаленность сектантских поселений друг от друга, а также от городов¹.

По документальным источникам 1830 год явился начальной датой русского переселения в Закавказье. Именно в этот год в Карабахской провинции группой донских казаков-духоборцев и молокан (266 человек) в урочище Шаба-кишляг (Шабо-кишляг) было основано первое русское поселение - с. Тути (Туг)². Необходимо отметить, что в Актах, собранных Кавказской археографической комиссией (далее АКАК), поселение фигурирует под названием Кизыл-Кишляг³. Сектанты были сосланы в Закавказье за активное распространение «ересей» среди православного населения.

Переселенцы находились в пути несколько месяцев - с мая по июль. В начале августа они достигли места назначения, где для

¹ ЦГИА Грузии, ф. 4, оп. 2, д. 140, л. 55 об.

² Архив Музея истории религии и атеизма (СПб., Казанский собор) (далее МИРА), N 1, оп. 1, д. 601, л. 2.

³ АКАК, т. X, Тифлис, 1885, док. 293, с. 285.

них было подготовлено 50 землянок с просторными сенями и 300 вьюков дров. Кроме этого, властями было предписано заготовить на каждого переселенца по 6 четвертей пшеницы, по 12 четвертей проса и по 4 четверти ячменя. Чтобы обеспечить переселенцев запасом зерна на зиму, весной отведенную им землю должны были вспахать и засеять местные крестьяне¹. Были ли выполнены эти распоряжения, неизвестно.

Среди первых поселений Закавказья и с. Базарчай, основанное в 1832 г. Оно просуществовало всего несколько лет². Постоянные неурожаи из-за сурового климата и опустошительные налеты саранчи в течение нескольких лет заставили крестьян перебраться в с. Карабулак.

По документальным источникам, с. Базарчай являлось временным пристанищем для многих русских переселенцев. Здесь они жили по несколько лет, пока им не определяли постоянного места жительства. Здесь нашли временный приют молокане, первоначально водворенные в урочищах Дудакчи и Аладин. Последние в 1834 г. основали с. Карабулак (впоследствии с. Карягино)³.

В том же году в Зангезуре сектанты скопцы образовали с. Гиряк⁴. Из-за суровых климатических условий и неплодородных земель крестьяне в 1843 г. переселились на земли Старого Талыша.

В 1841 г. на карте Карабахской провинции появилось многолюдное русское поселение - Гюлистан (436 человек)⁵. Религиозный состав Гюлистана был пестрым: в нем проживали не только сектанты - молокане и субботники, но и старообрядцы.

В эти же годы в Карабахе были основаны еще два русских

¹ МИРА, N 47, оп. 13, д. 402, л. 3.

² ГНА, ф. 4, оп. 2, д. 140, л. 71.

В 1880 г. с. Базарчай возродилось вновь. Новыми жителями его были 50 семей русских крестьян, переселившихся из с. Баллукай Русское (И. Л. Сегаль. Русские поселенцы в Елисаветпольской губернии. - «Кавказ», 1890, N 40).

³ АКАК, т. X, док. 293, с. 284.

⁴ Национальный архив Республики Армения (далее НАА), ф. 93, оп. 1, д. 75, л. 1-6 об.

⁵ Там же, ф. 133, оп. 1, д. 329, л. 285-293. АКАК, т. X, док. 293, с. 285.

селения. В 1841 г. возникло с. Балукай Русское¹. Первыми жителями его были молокане, покинувшие урочище Аладин. В 1842 г. переселенцы из Тамбовской и Саратовской губерний (55 хозяйств) образовали с. Борисы Русские².

В эти же годы на территории Карабаха имелось и немногочисленное русское православное население при штаб-квартире в с. Хан-Кенды.

Большинство русских селений Карабахской провинции называлось по наименованию места поселения. Как правило, они располагались на казенных землях. Исключение составляли с. Гюлистан и Старый Талыш, расположенные на владельческих землях. Крестьяне этих селений, помимо государственных налогов, должны были выполнять определенные обязательства в пользу собственника земли.

На раннем этапе переселенческого движения достоверные сведения о землях, наиболее удобных к заселению, отсутствовали. Места для русских поселений выбирались чиновниками зачастую произвольно, без учета многих факторов. В результате многие первые русские селения были недолговечны. Они прекращали свое существование из-за недостатка пахотных и сенокосных земель, способных обеспечить хозяйственную деятельность переселенцев, из-за эпидемий и эпизотий, с которыми переселенцы не умели бороться, из-за засухи, неурожая. Таким образом, хозяйственная целесообразность была главной причиной переселений крестьян. Именно она вынуждала их переезжать с места на место и нести значительные материальные издержки, хотя, по мнению закавказской администрации, «раскольники к переселениям весьма склонны».

Среди основных причин, вызывавших вторичные миграции крестьян,- непривычный и нередко губительный для здоровья переселенцев климат.

Так, в 1832 и 1834 годы две партии молокан были поселены на урочищах Дудакчи и Аладин, однако недостаток земель и жар-

¹ АКАК, т. X, док. 293, с. 284.

² И. Л. Сегаль. Указ. соч.

кий нездоровый климат вынудил их вскоре оставить эти места.

При поселении донских казаков не было учтено, что урочище Шаба-Кишляг не имело достаточных пастбищ и было неудобно для колесного сообщения. Но самое главное - «крайне неудачный климат», из-за которого в течение 7 месяцев скончалось от болезней 58 человек¹.

Климатические условия также явились основной причиной массового выезда крестьян из с. Гюлистан в 1846 г. В 1848 г. чиновники Шемахинской палаты государственных имуществ констатировали, что это селение «впоследствии времени от нездорового климата уничтожилось, и поселяне ... оно разошлись по разным деревням»².

Тяжелые условия новой жизни, в которых оказывались переселенцы, - непривычные климатические и природные условия, иноэтническое окружение, разлука с родными местами и близкими людьми - вынуждали некоторых переселенцев отказываться от своей веры и принимать православие. Это был единственный путь, позволявший им вернуться на родину.

Так, уже через три недели после прибытия две семьи переселенцев с. Туги (10 человек) подали начальству прошения принять православие с «выражением раскаяния в своих прежних заблуждениях» и вернуться на родину. К началу марта 1831 г. 45 человек приняли православие и были возвращены на Дон³. Некоторые из них на родине вновь «впали в ересь», были «уличены» и посланы в Закавказье, в крепость г. Шуши, уже безвозвратно.

Русские переселенцы были выходцами из внутренних губерний Европейской части страны - Тамбовской, Саратовской, Воронежской, Пензенской, Симбирской, Рязанской и др. губерний. Религиозный состав переселенцев, осевших на территории Карабахской провинции, был различным. Основную часть составляли духоборцы и молокане. Последние были представлены последователями двух течений - постоянными и «общими». Име-

¹ МИРА, N 1, оп. 1, д. 601, л. 3; N 47, оп. 13, д. 402, л. 3.

² НАН, ф. 133, оп. 1, д. 329, л. 302 об.

³ МИРА, N 1, оп. 1, д. 601, л. 3; N 47, оп. 13, д. 402, л. 4.

лись немногочисленные группы субботников, скопцов и старообрядцев. В отличие от последователей других сект, среди которых были не только ссыльные, но и переселявшиеся по собственному желанию, все скопцы и старообрядцы были сосланы в Закавказье по судебным приговорам.

На протяжении 1830-1840-х гг. администрация предпринимала энергичные меры по ограничению распространения сектантства в Закавказье, что нашло отражение в законодательных актах. Указ 1832 г. предписывал селить молокан, духоборцев, субботников в местах отдаленных и малозаселенных, «кои признаются удобными для пресечения им способов к распространению расколов» и «не в одном, а в разных местах и не в большом числе, не составляя из них ... особой области, дабы они со временем действительно не могли сделаться вредными»¹.

Правила о переселении от 14 декабря 1842 г., когда численность русских в Закавказье значительно выросла, содержали еще более жесткие предписания, направленные на ослабление религиозной активности сектантов. Один из пунктов Инструкции закавказской местной администрации предписывал совместное поселение последователей различных религиозных направлений, «в вопросах веры несовместимых друг с другом»². Тем не менее большинство русских поселений объединяли последователей лишь одного религиозного направления.

Естественно, моноконфессиональное расселение больше привлекало сектантов, так как позволяло им полностью соблюдать нормы религиозной жизни и не допускать постороннего вмешательства в свою духовную жизнь. В определенной степени религиозное единomyслие способствовало и укреплению сельской общины.

Итак, по данным АКАК в 1844 г. на территории Карабахской провинции находились следующие русские поселения, основанные раскольниками: Тути (Кизил-Кишляг), Карабулак, Гюлистан, Балукай, Русские Борисы, Старые Тальши, в которых проживало

¹ Собрание постановлений по части раскола. СПб., 1875, с. 114.

² АКАК, т. X, док. 95, с. 117. ЦГИА Грузии, ф. 4, оп. 2, д. 140, л. 245-252.

свыше 1601 человек. Всего в Каспийской области, в состав которой входил Карабахский уезд, численность сектантов и старообрядцев составляла 8361 человек¹.

Несколько иные статистические данные содержатся в специальном рапорте статс-секретаря М. П. Позена на имя Николая I по поводу русских селений Закавказья. Согласно им, в Карабахском у. в 1844 г. проживало 1747 русских сектантов и старообрядцев, в Каспийской области 6811. По всему же Закавказскому краю их насчитывалось 8618 человек².

Таким образом, в 1830-е - начале 1840-х гг. русское население было сосредоточено в восточном Закавказье, в частности в Карабахской провинции, откуда во второй половине 1840-х гг. начались миграции переселенцев в другие районы региона. В частности, крестьяне с. Гюлистан переехали на территорию Восточной Армении, где участвовали в образовании селений Еленовка, Константиновка и Дилижан³.

¹ АКАК, т. X, док. 293, с. 286.

² **Д. И. Исмаил-Заде.** Русское крестьянство в Закавказье. 30-е годы XIX - начало XX в. М., 1982, с. 38-39.

³ НАА, ф. 133, оп. 1, д. 329, л. 285-293.

**ԴԱՐՔՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԻՍԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՑԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (XIX-XX ԴԴ.)**

Արցախի մի շարք գյուղերում մինչև XX դարի սկիզբ պահպանվել էր Նավասարդի տոնակատարությունների հետ կապված մի հետաքրքիր ավանդույթ, որի զուգահեռները կարելի է հանդիպել Հայաստանի այլ գավառներում նույնպես: Ըստ այդմ, Նավասարդի նախօրեին գյուղացիները չար ուժերին քշելու և նոր տարի նրանց մուտքը կանխարգելելու նպատակով հնարավոր բոլոր միջոցներով աղմուկ են բարձրացրել: Այս արարողությունների մասն է կազմել նաև դարբնի կողմից դարբնոցում զնդանին հարվածներ հասցնելը: Մեկ այլ դեպքում նշվում է, որ դարբինները շաբաթ երեկոյան են կատարել զնդանին կռահահարման ծեսը: Հանդիպում է նաև կռահահարման ծեսը Ջատկի Ավագ հինգշաբթի գիշերը իրականացնելու տարբերակը: Հատկանշական է, որ Ջատկի Ավագ հինգշաբթի դարբնի կողմից իրականացվող ծիսական գործողությունների շարքում հանդիպում է նաև հղի հարսներին «ուրբաթարուր» մատանիներ պատրաստելու արարողությունը: Այդ մատանիները կրելու դեպքում հարսները պաշտպանվում էին չար ուժերից և չար աչքից:

Առաջին հայացքից ծիսական այս փոքրիկ դրվագը, որտեղ դարբինը կռահահարման միջոցով մասնակցում էր չար ուժերին քշելու արարողությանը, սերտ զուգահեռներ ունի ինչպես միջնադարյան պատմիչների կողմից նկարագրվող Արտավազդի շղթայման ծեսի հետ, այնպես էլ Հայաստանի այլ շրջանների գյուղերից գրանցված այն ծեսի հետ, որ դարբինը Ջատկի Ավագ հինգշաբթի նախօրեին մտնում էր դարբնոց, երեք խորհրդանշական հարված հասցնում զնդանին և դուրս գալիս, բացատրելով, որ դրանով ամրացնում է ժայռում գամված Արտավազդի շղթաները: Հիշեցնենք, որ նա այստեղ հանդես է գալիս

որպես դրական հերոս, որը շղթայված է պահում աշխարհը փոխել (այսինքն գործող կարգը խափանել) ցանկացող Արտավազդին, որոշ տարբերակներում դիվահար Շիդարին: Հետաքրքիրն այստեղ այն է, որ դարբինները մի կողմից հանդես են գալիս, որպես չար ուժերի հակառակորդներ, մյուս կողմից գոյություն ունեցող կարգի, կամ ավանդույթի (Արտավազդի դեպքում խոսքը վերաբերում է թաղման ավանդույթի դեմ բողոքելուն): Նմանատիպ հերոս է նաև ժայռում փակված Փոքր Սիերը: Հատկանշական է, որ Սիերի դուռը կոչվող վայրի հետ կապված պահպանվել է Դարբնաց քարի ավանդույթը, համաձայն որի դարբինները օր ու գիշեր կռիվ են մղում վիշապների ու աշխարհակործան չար ուժերի հետ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ դարբնի կողմից իրականացվող կռահահարման ծեսը կապված է հնի ու նորի, տիեզերապահպան և տիեզերակործան ուժերի պայքարի մասին պատկերացումների: Հատկապես, այդ պայքարն ուժեղանում է ժամանակային պարբերաշրջանների փոփոխման պատճառով առաջացող կրիտիկական ժամանակամիջոցներին: Դարբնի ծիսական կերպարում հստակ նկատվում են տիեզերապահպան հերոսի հատկանիշներ: Սակայն հարց է ծագում, թե հատկապես ինչպիսի գծերով է օժտված ծիսական նման գործառույթ ստացող հերոսը:

XIX դարի վերջում և XX դարի սկզբներին Արցախում տարածում ունեին դարբնի կողմից պատրաստվող երկաթյա կամ պողպատյա իրերի հետ կապված որոշ հավատալիքներ, որոնք թույլ են տալիս ավելի լիարժեք դարձնել դարբնի ծիսական կերպարին վերաբերող մանրամասները: Մասնավորապես, դարբնի պատրաստած պողպատյա մեխերը կամ կայծքարի պողպատը՝ հրահանը համարվում էին չարխափան ինչպես չար ուժերից պաշտպանվելու, այնպես էլ հիվանդություններից ու վախից բուժվելու նպատակով: Այսպես, ինչպես բուժական, այնպես էլ չարխափան նպատակներով, բավական տարածված էր սուրբ ծառերի բներին մեխեր մեխելը: Հաճախ նույն նպատակով մեխ են մեխել նաև դռան շեմին, որը նույնպես չարի ու բարու պայքարի սահմանագծային տարածք է համարվել:

Մեկ այլ սովորության համաձայն, արգելվել է արևը մայր մտնելուց հետո երեխաներին լողացնել: Խիստ անհրաժեշտության դեպքում դա թույլ է տրվել՝ պայմանով, որ ջրի մեջ անպայման պողպատյա իր գցեն: Հաճախ այդ իրի դերում հանդես է եկել նաև կայծքարի պողպատը:

Վերջինս նաև երեխաներին չար աչքից պահպանելու նպատակով յոթ գույնի թելերով կարել են նրա ձախ ուսին:

Այսինքն, հստակ նկատելի է մի ընդհանրություն, որը ցուցում է, որ դարբնի պատրաստած երկաթե կամ պողպատե առարկաները կրում են չար ուժերին վնասագերծելու հատկանիշ: Հետաքրքիր է, որ պողպատի չարխափանության հատկությունը հաճախ բացատրել են պողպատի և կայծակի ընդհանրությամբ: Ի դեպ, այս հավատալիքը համահունչ է համահայկական և նույնիսկ հնդեվրոպական տարածում ունեցող այն հավատալիքի հետ, որ կայծակի ժամանակ երկնքից պողպատ է ընկնում: Արցախում, ըստ ավանդական պատկերացումների ընդունված է եղել նաև այն հավատալիքը, որ կայծակը դա հրեշտակների ձեռքի սուրն է, որով նրանք քշում են չար ուժերին: Այդ պատճառով էլ կայծակ խփած ամեն բան համարվում էր մաքրագործված: Այսինքն, կարելի է ասել, որ արցախյան ժողովրդական հավատալիքներում նկատվում են պողպատ-կայծակի, որպես սրբազան զենքի մասին ավանդական պատկերացումները: Ավելորդ չէ նշել, որ այս պատկերացման դրսևորմանն ենք հանդիպում նաև հայկական ժողովրդական էպոսի հերոսների զենքի՝ Թուր Կեծակիի անվանման մեջ:

Հատկանշական է, որ Արցախում տարածված է եղել նաև կայծակ խփած քարերի ու ծառերի պաշտամունքը:

Այսինքն, եթե ընդունենք, որ չարխափան համարվող պողպատե առարկաներ պատրաստողը դարբինն էր, որին փաստորեն նույնպես կարևոր տեղ էր տրվում Նոր տարվա կամ Ջատկի չարխափանության ծեսերում և նկատի ունենանք այն, որ ծիսա-առասպելական մտածողությունը նույնականացնում է պողպատն ու կայծակը, ապա կարելի է ասել, որ ծիսական մտածողության հարթությունում դարբնին վերագրվում են *պողպատ-կայծակ* սրբազան զենքին տիրապետող հերոսի հատկանիշներ:

Դարբնի մասնակցությամբ վերը բերված կռանահարության ծեսում, որը պատմական աղբյուրներում և Հայաստանի որոշ շրջանների ավանդույթներում բացատրվում է որպես Արտավազդի շոթայման ծես, կարելի է տեսնել ամպրոպի ու կայծակների միջոցով վիշապներին հալածող դարբին-ամպրոպամարտիկի կերպարի աղբյուրներ: Ի դեպ, ամպրոպամարտիկ դարբինը բավական տարածված կերպար էր ինչպես հնդեվրոպական, այնպես էլ հարևան կովկասյան ժողովուրդների

առասպելներում և հատկապես դրա զուգահեռները հայոց ավանդական ծիսական կյանքում պետք է դիտել որպես բնականոն երեւոյթ:

Մյուս կողմից, ինչպես վերը նշեցիք, այս ծեսն ընդհանրություններ ունի նաև համահայկական տարածում ունեցող Արտավազդի կամ Շիրհարի շղթայման ծեսի հետ, քանի որ ծիսական գործողության առումով, (այսինքն կռանահարության) այս ծեսերը կրկնում են իրար: Մեկ այլ վերլուծությունում մենք հանգամանորեն ներկայացրել ենք վիշապ Արտավազդ-դարբին հակադրության իմաստաբանությունը և ցույց տվել, որ Արտավազդի շղթայման ծեսի հիմքում նույնպես ընկած է վիշապ Արտավազդին շղթայելու միջոցով աշխարհի կարգը կործանումից պահպանելուն ուղղված վիշապամարտի առասպելաբանական թեման, որում դարբինը կրում է վիշապամարտիկ հերոսի ծիսական գործառույթը:

Նկատի ունենալով վերը բերվածը, կարելի է ենթադրել, որ Արցախում դարբնի մասնակցությամբ նավասարդյան այս ծեսի ենթատեքստում նույնպես հանդիպում է հին և նոր ժամանակների փոփոխման միջոցին աշխարհի կարգը խափանել ցանկացող և նրա դեմ պայքարող ամպրոպամարտիկ-դարբնի պայքարի իմաստաբանությունը, որի ակունքները թաքնված են երկաթի մշակույթի վաղ շրջանի հետ կապված հնդեվրոպական վիշապամարտի առասպելույթի մետաղագործական առումի հետ:

Բերված վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախում նավասարդյան ծիսակարգում դարբնի կողմից իրականացվող կռանահարման չարխափան ծեսը սերտ զուգահեռներ ունի համահայկական տարածում գտած մամտիպ մեկ այլ՝ նույնպես ծիսական կռանահարությամբ, դարբինների կողմից Արտավազդի շղթաների ամրացման ծեսի հետ և իմաստաբանորեն նրա հիմքում ընկած է հին ու նոր ժամանակների սահմանագծին ընթացող տիեզերակործան և տիեզերապահպան ուժերի պայքարը ներկայացնող վիշապամարտի թեման: Այսպիսով, բերված մասնավոր օրինակը և դրա վերլուծությունը ցույց են տալիս, որ արցախյան ժողովրդական հավատալիքները մասն են կազմում համահայկական հավատալիքների և դրանցում արտահայտված տարբերակները սերտորեն կապված են հայկական այլ շրջանների տարբերակներին, ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարածամանակյա առումներով:

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԻՊԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ
ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Արցախի բազմաշերտ ու հարուստ ժողովրդական բանահյուսություները մինչ օրս հիմնավորապես ուսումնասիրված չէ: Հրապարակի վրա և արխիվներում կան բազմաթիվ տպագիր և ձեռագիր բանահյուսական ժողովածուներ, որոնց մեջ ամփոփված են գրեթե երկու հարյուրամյակի ընթացքում բազմաթիվ նվիրյալ բանահավաքների ձեռքով գրառված Արցախի բանավոր մշակույթի գանձերը:

Ավանդական բանահյուսության մի շարք ժանրեր (իրապատում և հրաշապատում հեքիաթ, ավանդություն, զրույց, հուշապատում, զվարճախոսություն, վիպական երգեր) իրենց խորքում պահպանում են ժողովրդի պատմության հեռավոր արձագանքները: Ազգի պատմության վրա խոր կնիք թողած պատմական իրադարձությունները և այն կերտող առանձին նշանավոր պատմական դեմքերը դառնում են վիպական պատումի առանցք և արդյունքում ժողովրդի հավաքական հանճարը ստեղծում է պատմավիպական մի ողջ պատումնաշար, որը, դարերի ընթացքում բերնե-բերան անցնելով, հղկվելով, հասնում է ներկա ժամանակները: Հանրահայտ պատմական դեմքերը իրենց հռչակով, կատարած լավ ու վատ գործերով, նվաճումներով, բռնություններով, մեծագործություններով բանահյուսական հերոս դառնալու հնարավորություն են ձեռք բերում: Նմանօրինակ պատմավիպական կերպարների թվին են պատկանում Ալեքսանդր Մակեդոնացին, Լենկ Թեմուրը, Շահ Աբասը, Նադիր շահը, Դավիթ Բեկը և ուրիշներ: Երբեմն պատմական դեմքերը, որոնք դարերի խորքից են գալիս, այնքան են կերպարանափոխվում, որ ընկալվում են որպես բանահյուսական կերպարներ, ինչպես օրինակ՝ Դամանդա Բահլուլը, Լոխմանը, Խիկար Իմաստունը, Մուլլա Նասրեդդինը և ուրիշներ: Սակայն ոչ միշտ է, որ պատմական

կարևոր իրադարձությունը և ժողովուրդը կարող են դառնալ բանահյուսության թեմա: Երբեմն տեղական նշանակության իրադարձությունը և ժողովրդի ծոցից դուրս եկած ծանոթ անհատը ավելի կարևոր նշանակություն են ստանում ականատեսների ու հասարակության համար և դառնալով վիպական պատումների նյութ՝ զնալով տարածվում ու ահագնանում են և ընդհանուր վիպական բնավորություն ձեռք բերելով՝ հավասարվում համաշխարհային պատմավիպական ավանդույթի: Ձեռքի տակ ունենալով Արցախի բանահյուսական ժառանգությունը և այն դիտարկելով Արցախի հարուստ պատմության ֆոնի վրա՝ տեսնում ենք, որ ժողովրդական բանավոր ավանդույթի բազմազանությունն ու հարստությունը պայմանավորված են Արցախի պատմությամբ, բնաշխարհով, արցախցիների հերոսական բնավորությամբ, քաջությամբ, միամտությամբ, որը երբեմն կարող է հասնել հիմարության (հաթերքցիներ), ինչպես նաև ժողովրդի միստ ու կացով, սովորույթներով, կենցաղով: Արցախի պատմության որոշակի փուլերում բանավոր ստեղծագործություններն ակտիվորեն կենցաղավարել են, անցել են բերնե-բերան, համալրվել են նոր անուններով ու դեմքերով և, ինչպես վկայում է վիպասան Բաֆֆին. «...ժողովուրդն ունի իր լեզունդները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանք կատարած չէին կարող լինել: Օրինակ, ինձ շատ անագան պատահում էր նկատել, որ միևնույն պատմական իրողությունը ամեն մի գավառի ավանդությունների մեջ ընծայում էին նույն գավառի մի հայտնի հերոսի, քանի որ այդ անձնավորությունը չէր կարող այս գործը կատարած լինել, որովհետև կամ այն ժամանակ նա դեռ ծնված չէր, կամ վաղուց մեռած էր: Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»¹:

Վերոհիշյալ մեջբերումը ապացուցում է, որ անցյալում Արցախի բանահյուսությունը հարուստ է եղել տարբերակներով և տեղական նշանակության հերոսներով, այսինքն յուրաքանչյուր գյուղ ունեցել է իրեն ծանոթ ու հոգեհարազատ հերոսը, սակայն բանահյուսական ստեղծագործությունների մի զգալի մասը ժամանակի ընթացքում ոչնչացել կամ

¹ Բաֆֆի, Երկերի ժողովածու, 9 հ., «Խամսայի մեկիքությունները», էջ 611, Ե., «Սովետական գրող», 1987:

մոռացվել է՝ պայմանավորված այսպես կոչված «հասարակական պահանջարկով»: Փոխվել են ժամանակները, փոխվել են իրադարձությունները, փոփոխվել է հասարակության վերաբերմունքը բանահյուսության նկատմամբ, արդյունքում անվերադարձ կորսվել են բազում բանահյուսական սյուժեներ:

19-րդ դարի 60-ական թվականներին ժողովրդական բանահյուսության նկատմամբ ռոմանտիկ հետաքրքրության ալիքը հասավ նաև Արցախ աշխարհը: Արցախյան բանահյուսության ամենահին բնագիրը Առաքել Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանների ձեռագիր ժողովածուն է: 1860 թվականին Բահաթրյանները գրի առան Շուշի և նրա շրջակա գյուղերի հեքիաթարվեստի նմուշները, որոնցից Առաքել Բահաթրյանի գրառած հեքիաթներն առաջին անգամ լույս տեսան 1894, 1902 և 1903 թվականներին Տիգրան Նավասարդյանի «Յայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի պրակներում¹: Այդ հավաքչական ու հրատարակչական աշխատանքը շարունակվել է մինչև մեր օրերը՝ հայ մտավորականների, բանահավաքների ու բանագետների եռանդուն ջանքերի շնորհիվ:

19-րդ դարի կեսերից մինչև դարավերջը այդ գործում իրենց լուծանքները բերեցին Առաքել, Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, Կոստ. Մելիք-Շահնազարյանը, Միք. Տեր-Յովհաննիսյանը, Խ. վրդ. Դադյանը: 20-րդ դարը, ներառյալ նախախորհրդային շրջանը, ներկայացրել են Ե. Լալայանը, Ս. Իսրայելյանը, Մ. Առաքելյանը, Մ. Գրիգորյան-Սպանդարյանը, Ա. և Բ. Ղազիյանները, Ս. Վարդանյանը, Մ. Մխիթարյանը, Մ. Օհանջանյանը, Վ. Սվազյանը, Լ. Յարությունյանը և ուրիշներ:

Արցախի վիպական բանահյուսության մեջ զգալի թիվ են կազմում պատմական անձանց ու դեպքերի մասին պատումները, որոնք գրավել են թե՛ բուն Արցախում և թե՛ հարակից շրջաններում, հիմնականում նկատի ունեն դաշտային Ղարաբաղը: Արցախի վիպական բանահյուսության մեջ ամենատարածված պատմավիպական կերպարներն են Շահ Աբասը, Լենկ Թեմուրը, Նադիր Շահը, Մելիք Շահնազարը, Պըլը Պուղին, Դանանդա Բահլուլը, Լոխմանը, Խիկար Իմաստունը, Դալի Թյունին, Ղաչաղ Արզումանը, Աշուղ Յաթանը, Ղալունց Սաքին, Պոլոլուն

¹ Յայ ժողովրդական հեքիաթներ, VIII գիրք, Թիֆլիս, 1894, IX գիրք, Թիֆլիս, 1902 և X գիրք, Թիֆլիս, 1903:

Բագը, Սիրգա Դային, Մուլա Նասրեդդինը (արցախցիները ասում են Մասրադդին): Այս կերպարները բանահյուսության մեջ հանդես են գալիս նորովի, պատմական անձի բնավորությունից ու նկարագրից տարբեր, արդեն ժողովրդի կողմից խմբագրված, ավելի սաստկացված ու ընդգծված բնավորության գծերով: Արցախի բանահյուսության մեջ հանդիպող պատմական անձինք պայմանականորեն ստորաբաժանվում են երկու խմբի.

ա) Պատմական դեմքեր, որոնք ժամանակագրորեն ավելի մոտ են մեզ, ու թեև վիպականացված, դեռևս զգալի են նրանց, որպես պատմական անձ ընկալելը: Նմանօրինակ բանահյուսական կերպարներից են Լենկ Թեմուրը, Շահ Աբասը, Նադիր Շահը, Պըլը Պուդին, Մելիք Շահնազարը:

բ) Պատմական դեմքեր, որոնց կերպարները փոխ են առնվել արևելյան բանահյուսական ավանդույթից: Այդպիսի վիպական կերպարների թվին են պատկանում Դամանդա Բահլուլը, Լոխման Չեքիմը, Խիկար Իմաստունը, Մուլա Նասրեդդինը:

Թվարկված կերպարներից Պըլը Պուդին, Մելիք Շահնազարը, Սիրգա Դային, Կամիի Դային, Չամբի Դային, Թյոննին և Մուլա Նասրեդդինը հիմնականում ներկայացված են զվարճախոսության ժանրում: Այս կերպարներից յուրաքանչյուրը մի վառ անհատականություն է՝ շատ սիրված ու տարածված: Ինչպես հավաստում է ժողովրդական իմաստությունը՝ «շիտակ խոսքը հանաքով կասեն»¹, հետևաբար բացահայտ ու սրտաբուխ ծաղրի ու ծիծաղի միջոցով արցախցին վեր է հանել այն բոլոր դառնություններն ու խոցելի իրողությունները, որոնք ծանր քարի պես կախված են ոտքից, և որոնցից պետք է ազատվել: Արցախյան զվարճախոսությունները հիրավի ժողովրդական բնավոր ստեղծագործության գլուխգործոցներ են: Նրանցից յուրաքանչյուրն առանձնանում է իր առանձնահատուկ գունագեղությամբ, լավատեսությամբ, կենսունակությամբ: Չվարճախոսության հերոսներից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր անհատական բնավորությամբ ու գործելակերպով, որը բնորոշ է տվյալ տարածաշրջանի մտածելակերպին: Բանահավաք Սարգիս Իսրայելյանը զվարճախոսությունների հայտնի հերոս Թյոննուն բնորոշում է այսպես. «Թյոննին՝ միամիտ, անճարակ մարդու սիմվոլն է

¹ Դանալանյան Ա. Տ., Առածանի, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1960, էջ 8:

Ղարաբաղում, ինչպես օրինակ, ռուսական Իվանուշկան»¹, իսկ Միրզա դայուն ներկայացնելիս գրում է. «Միրզա Դային շատ սրախոս և զվարճախոս մարդ է եղել, հայտնի չէ, թե որտեղացի է: Մեկն ասում է՝ խաչենցի է, մյուսը թե՛ վարանդեցի է»²:

Փաստորեն բանահավաքը հավաստում է, որ Միրզա Դային իրական անձնավորություն է և տիպիկ արցախյան հավաքական զվարճախոսի կերպար: Միրզա Դայու զվարճախոսությունների շարքն իր մեջ ներառում է բազմաբնույթ պատումներ, որոնցում նա ներկայանում է բարի, համբերատար, անհանդուրժող, զգուշավոր, ծաղրաբան, միամիտ, խորամանկ, երբեմն նաև բանբառակ խոսող, և, ինչպես հաղորդում է բանահավաքը. «Նրա մասին կան նաև անվայել բառերով անեկդոտներ»³: Իհարկե պետք է ասել, որ հայիոյանքները և անվայել խոսքերը ժողովրդական զվարճախոսությունների համեմունքն են և ավելի են սաստկացնում այն միտքը, այն գաղափարը, որ դրված է տվյալ ստեղծագործության հիմքում:

Արցախյան հայտնի զվարճախոս Պըլը Պուղին իր կենսասիրությամբ, սրամտությամբ, հնարամտությամբ, բառախաղերով գրեթե միշտ հակադրվում է Մելիք Շահնազարին, ծաղրում է նրան և ի հայտ է բերում սոցիալական անհավասարությունը, ինչպես օրինակ այն հանրահայտ զվարճախոսության մեջ՝ երբ մի անգամ Պուղին մի քանի տեղից կարկատված չուխայով գնում է Մելիք Շահնազարի մոտ: Մելիքը ձեռք է առնում Պուղուն. «Տեղ-տեղ շնհավեր ինի չուխան»: Յնարամիտ Պուղին անմիջապես պատասխանում է. «Ուրը մաչ ապրիս, Մելիք»⁴:

Զվարճախոսություններում Մելիք Շահնազարը բացասական կերպար է, նրա բնավորության գծերը խտացված ու ընդգծված են, և նրա հակոտնյա Պըլը Պուղին իր վարքագծով իրավամբ նպաստում է նրա բռնակալ ու հիմար էությունը ցույց տալու համար: Մելիք Շահնազարն արցախցիների կողմից սիրված չէր և, ինչպես բացատրում է Ս.

¹ ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ, FFII:8829,02-8829,02, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, I մաս, 1945:

² FFVI:5553,01-5553,01, **Իսրայելյան Ս.**, Միրզա Դայու և զանազան անեկդոտներ, ձեռագիր ժողովածու: ՀԱԻԲԱ:

³ FFVI:5553,02-5553,02, **Իսրայելյան Ս.**, նույն տեղում, ՀԱԻԲԱ:

⁴ FFII:9030,02-9030,02, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, II մաս, 1945, ՀԱԻԲԱ:

Իսրայելյանը, «Մելիք Շահնազարը մելիքությունը ստացել էր ոչ օրինական ճանապարհով: Ըստ այն ժամանակվա (XVII դար) օրենքի՝ հոր մահից հետո մելիքությունն անցնում էր մեծ որդուն, իսկ մնացած որդիները ստանում էին բեկի տիտղոս: Մելիք Շահնազարը մելիքության տիտղոսը յուրացնելու համար սպանել է տալիս իր մեծ եղբորը: Ժողովուրդը շատ վրդովված էր և այս բանի համար չէր սիրում Մելիք Շահնազարին»¹:

Ժողովուրդը գեղարվեստական հնարանքների միջոցով իր բացասական վերաբերմունքն է արտահայտել այն պատմական դեմքի նկատմամբ, որը բացասական բախտորոշ դեր է խաղացել Արցախի ճակատագրում և որին Բաֆֆին անվանել է «Ղարաբաղի կործանիչ»²: Պըլը Պուղին ծառայում էր Մելիք Շահնազարի մոտ և փաստորեն նրա պալատական ծաղրածուն էր, սակայն տիրոջ և ծառայի փոխհարաբերություններում վերջին հաշվով առավելությունն ու հաղթությունը միշտ Պուղու կողմն էր:

Չվարճախոսությունների մի մասում առաջին պլանն է մղվում սոցիալական սուր երգիծանքը, ինչպես օրինակ՝ «Պըլը Պուղու ղզղանը», «Պըլը Պուղու օխտը պեռնը ցորենը»³ պատումներում Մելիք Շահնազարը, օգտվելով իր բարձր դիրքից, խաբում է Պըլը Պուղուն, բայց վերջինս ավելի խորամանկ է գտնվում և մի լավ դաս է տալիս դաժան ու մեծամիտ մելիքին:

Հարկ է նշել, որ Պըլը Պուղու մասին զվարճախոսությունները մեծ մասսայականություն են վայելում թե՛ Արցախում և թե՛ Հայաստանի մյուս շրջաններում:

Ինչպես տեսնում ենք, պատմական դեմքերը բանահյուսության մեջ հանդես են գալիս նոր նկարագրով: Բայց ոչ բոլոր պատմական դեմքերն են, որ հերոսականացվում են: Լենկ Թեմուրը՝ իր սարսափազդու ավերածություններով, կոտորածներով, գերեվարություններով սոսկալի հետք է թողել ժողովրդի պատմական հիշողության վրա: Արցախի բանահյուսությունը պահպանել է բազմաթիվ ավանդություններ՝ կապված Լենկ Թեմուրի արշավանքների հետ: Այդ փաստը հավաստում է

¹ FFII:9041,03-9042,00, **Իսրայելյան Ս.**, ՀԱԻԲԱ:

² **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, IX հ., Խամսայի մելիքությունները, «Սովետական գրող», Ե., 1987, էջ 452:

³ ՀԱԲ, **Ղազիյան Ա.**, Արցախ, հ. 15, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1983, էջ 140-141:

Ման Լեոն. «Լանկթամուր և Լանկթամուր ամեն տեղ. ուր որ գնում եք, ուր երկու խոսք եք հարցնում մի հին ավերակի մասին, Լանկթամուրի անունն եք լսում: Ո՞վ գիտե, գուցե կաղ հրեշը այս բոլոր տեղերը չի էլ տեսել, ավերել: Բայց նրա արշավանքը այնպիսի սոսկալի հիշատակ է թողել, որ ամեն մի ավերմունք նրան են վերագրում»¹: Արցախյան տեղանունների ստուգաբանության մասին ավանդություններում հիմնականում պատմվում են Լենկ Թեմուրի ասպատակությունների և նրանց դեմ դուրս եկած ու հերոսաբար կռված ու նահատակված եղբայրների մասին, որոնց նահատակության վայրերում կառուցվել են սրբատեղիներ (օրինակ՝ «Երեք մանկունք» ուխտատեղի մասին»², «Ինն մաս» ուխտատեղի մասին»³, «Ճոխտակ խաչ»⁴):

Մի այլ արցախյան ավանդություն պատմում է, որ «մահաշունչ վիշապ» Թեմուրը, ինչպես նրան անվանում է պատմիչ Թովմա Մեծփեցին, իր գորքերը շարում է Ամարասից մինչև Արաքս և հրամայում Ամարասի վանքի քարերը միմյանց տալով թափել Արաքսը⁵: Բռնակալը ոչնչացնում էր ոչ միայն մարդկանց, այլև՝ նրանց ստեղծած ճարտարապետական հուշարձանները:

Այս ավանդության մեկ այլ տարբերակ հաղորդում է Ղ. Ինճիճյանը, ըստ որի՝ Լենկ Թեմուրը Եփրատի քանդված կամուրջը վերականգնելու համար որոշում է քանդել Տարոնի Աշտիշատ գյուղի Սուրբ Սահակ եկեղեցին, որի համար իր զինվորներին շարում է կողք-կողքի, որպեսզի քարերը ձեռքից ձեռք փոխանցելով տեղ հասցեն⁶:

Այս երկու ավանդությունները գալիս են հաստատելու, որ միմյանցից այդքան հեռու գտնվող Տարոնի և Արցախի բնակիչները նույն բռնություններին են ենթարկվել, և ժողովուրդը միատեսակ է արձագանքել պատմական դեպքերին:

¹ Լեո, Երկերի ժողովածու, VIII հ., Իմ հիշատակարանը, «Սովետական գրող», Ե., 1985, էջ 110:

² FFV:8107,01-8107,01, **Առաքելյան Մ.**, ԼՂԻՄ բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, ՀԱԻԲԱ:

³ FFV:8107,03-8109,00, **Առաքելյան Մ.**, նշվ. աշխ., ՀԱԻԲԱ:

⁴ FFV:7753,01-7753,01, **Առաքելյան Մ.**, նշվ. աշխ. ՀԱԻԲԱ:

⁵ FAV:8940,02-8940,02, Ազգագրական հանդես, Բ գիրք, էջ 7, **(Բարախանյան Ա. Լեո)** ուխտավորի հիշատակարանը, Շուշի, 1885, էջ 9) ՀԱԻԲԱ, **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1969, էջ 233:

⁶ **Ղանալանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 253:

Լենկ Թեմուրի ժամտ կերպարն է բացահայտում բանահյուսական հետևյալ սյուժեն՝ Լենկ Թեմուրը, առաջին անգամ իր զգվելի կերպարանքը տեսնելով հայելու մեջ, մի ամբողջ օր լաց է լինում: Մյուս օրը նա տեսնում է, որ իր վեզիրն էլ է լաց լինում, և այդ լացը շարունակվում է մի ամբողջ շաբաթ, երբ Լենկ Թեմուրը հարցնում է նրա լացի պատճառը, վեզիրն ասում է. «Դու մի անգամ ես քո երեսը հայելու մեջ տեսել, լաց ես լինում, բա ես ի՞նչ անեմ, որ ամեն օր եմ երեսդ տեսնում»¹:

Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրված նյութը, Լենկ Թեմուրի անձը ներկայացնող ավանդությունները բոլորը տեղական ծագում ունեն և կապված են որոշակի տեղավայրերի ու պատմական դեպքերի հետ, իսկ այն ստեղծող ժողովուրդը բանահյուսական բոլոր միջոցները օգտագործել է՝ ընդգծելու բռնակալի դաժան կերպարը:

Արցախի պատմական ավանդությունների մեջ մեծ թիվ են կազմում Խամսայի մելիքությունների ժամանակաշրջանի (17-18-րդ դդ.) քաղաքական անցքերը, պատերազմները, ասպատակությունները, ազատագրական շարժումները, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև գործիչների, մելիքների, հոգևորականների, հասարակ ժողովրդի հերոսական վարքը:

Արցախի բանահյուսության պատմավիպական կերպարներից մեկն էլ Շահ Աբասն է, որի մասին պատումները մեծ տարածում ու ժողովրդականություն են վայելել: Իրանի և հարևան երկրների պատմության մեջ նշանակալից հետք թողած Շահ Աբասը իր գործունեության շնորհիվ դեռևս իր կենդանության օրոք դարձել է ժողովրդական գրույցների ու հեքիաթների վիպական գծերով օժտված հերոս և իդեալականացվել ժողովրդի կողմից: Շահ Աբասի՝ վիպական անձ լինելու հանգամանքի մասին վկայում են բազմաթիվ ուսումնասիրողներ և բանահավաքներ: Բանահավաք Աղամալ Քալանթարյանը հաղորդում է, որ Իրանում Շահ Աբասի մասին գրույցները տարածված են թե հայերի և թե պարսիկների միջավայրում, իսկ իրանագետ Է. Շվարցը վկայում է, որ «պարսկական հեքիաթ-լեգենդները սովորաբար պատմում են միանգամայն իրական անձանց, օրինակ՝ Շահ Աբասի, Աբու Ալի իբն Սինայի և

¹ FFX:4509,02-4510,00, Մ. Գրիգորյան-Սպանդարյան Մ., Արցախի բանահյուսություն, մեքենագիր ժողովածու, ԶԱԻՔԱ:

ուրիշների մասին»¹: Պատմական Շահ Աբասը հաջողությամբ յուրացրել է ավանդական բանահյուսության հեքիաթային հերոսների ֆունկցիաները և դարձել է վիպական կերպար, որոշ դեպքերում բանահյուսական ստեղծագործությունների հորինվածքում պահպանելով պատմական իրողության տարրեր, ինչպես օրինակ, նրա աշխարհատեսությունը, ծպտված շրջագայելու սովորությունը: Վերջինս բանահյուսական սյուժեներում դարձել է Շահ Աբասի կերպարին ուղեկցող պարտադիր տարրերից մեկը: Պատմագրությունը Շահ Աբասի աշխարհատեսությունը դիտել է որպես նրա քաղաքական գործունեությանը նպաստող և հպատակների տրամադրությունները շոշափող միջոց. «Եւ որպես յառաջդ ասացուք, այլակերպ էր զինքն շահը, և շրջեր ի փողոցս և ի պողոտայս ի լսել թե զինչ ասեն»², նույն նպատակը առկա է ժողովրդական հեքիաթներում. «Շահաբասը սովորություն օներ դերվիշու շորեր ար հագնում, տյուս կյամ քաղաքը ման կյամ, վըեր տըսնա՝ ժողովուրթը ուրան անա գոհ ը՞ն, անգոհ ը՞ն, հո՞ւվ ա իրանից կյենգատ անում, հո՞ւվ ա թարիփ անում»³:

Թեև կարող ենք ասել, որ ծպտված շրջագայելու սովորությամբ ընդհանուր վիպական մոտիվներում ու համանման ավանդական սյուժեներում բանահյուսական ավանդույթի համաձայն կարող է այլևայլ ժամանակներում ու տեղում վերագրվել ուրիշ պատմական դեմքերի (ինչպես օրինակ, Չարուն ալ Ռաշիդին) կամ ընդհանրապես որևէ շահի, թագավորի, փառիշահի, սուլթանի և այլն: Սակայն հիմնականում, եթե հեքիաթում խոսք է գնում ծպտված դերվիշի կամ չարչու մասին, ապա ենթատեքստում ըմբռնվում է Շահ Աբասը: Այդպիսի շահաբասյան սյուժեներում առկա են թե պատմական հիմք ունեցող մոտիվները և թե ընդհանուր վիպական բնույթ ունեցողները, օրինակ.

ա) Շահը ունկնդրում և հաշվի է նստում ծերունու, խելացի աղջկա կամ կնոջ, երիտասարդ տղայի իմաստուն խոսքին («Չինչ փռնիս-անիս, վերջը մտածե ետնան ըրա»⁴, «Շահաբասը նեղն

¹ Шварц Э., К истории изучения фольклора Ирана, Душанбе, 1974, с. 47.

² Առաքել Դավիթեցի, Պատմութիւն, Էջմիածին, 1896, էջ 199:

³ FFXII:3159-3171, Դագիյան Բ., ԼԴԻՄ բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1974, ՀԱԻԲԱ:

⁴ Օհանջանյան Մ., Լեռնային Ղարաբաղի զվարճախոսություններ, ձեռագիր ժողովածու, № 1012, 1981, ՀԱԻԲԱ:

ա ընգալ»¹, «Իմաստուն կնեգյը»²:

- բ) Շահն իրագործում է միայն իրեն հատուկ անգութ հարկահանություն («Աբաս թագավորի պարտք առնելը»)³:
- գ) ժողովրդի ցածր խավերից պետական պաշտոնյա ընտրումը («Շահ Աբասն ու Պըլը Պուղին»)⁴:
- դ) Մի կնոջ անհավատարմության պատճառով շահը կարգադրում է ողջ կանացի ցեղը ոչնչացնել («Շահաբասը հրամայում ա ռւրան երկրի օլլուշաղը կուտորին»⁵, «Ամեն կնիկ մի չիմիլ»)⁶:
- ե) Վիպական հերոսը (Շահ Աբաս) ակամա վկա է դառնում նորածնի ճակատագրի որոշմանը և փորձում է դեմ կանգնել ճակատագրին («Ճկատեն կյիրածը ճինջվիլ չի») ⁷:
- զ) Շահ Աբասը կապվում է ցածր խավի աղջկա (գյուղացու) հետ և, ապագա որդու համար մի նշան թողնելով (ապարանջան, մեղալ), հեռանում է:

Այս մոտիվներից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրման տարողունակ թեմա է:

Շահաբասյան սյուժեների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շահ Աբասի վիպական կերպարը իր բնույթով հակասական ու երկակի է: Հրաշապատում հեքիաթներում Շահ Աբասը ստացել է ընդհանուր վիպական գծեր և որպես պատմական դեմք չի ընկալվում, մինչդեռ ավանդություններում և պատմավիպական զրույցներում Շահ Աբասի սյուժետային գիծը հարազատ է մնացել պատմական իրադարձություններին:

Արևելյան բանահյուսական ավանդույթից Արցախի բանահյուսու-

¹ **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, № 5 տետր էջ, 38-40, ՀԱԻԲԱ:

² FFV:8291,01-8230,00, **Առաքելյան Ս.**, Ղարաբաղի բանահյուսություն, ՀԱԻԲԱ:

³ ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Շահունյանի շրջկենտրոնի և Հայ Պարիս գյուղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1975, № 2 տ., էջ 13:

⁴ ՀԱԻԲԱ, **Կարապետյան Ա.**, Գանձակի ժող. բանահյուսություն, 1974:

⁵ ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, № 5 տ., 1973, էջ 9:

⁶ FFIII:1535,01-1540,00, **Իսրայելյան Ս.**, ձեռագիր ժողովածու, 1945, ՀԱԻԲԱ:

⁷ ՀԱԻԲԱ, **Ղազիյան Բ.**, Ղարաբաղի բանահյուսություն, ձեռագիր ժողովածու, 1983,

թյանն են անցել մի շարք սյուժեներ Լոխման Յեքիմի մասին: Լոխման Յեքիմն արաբական միջավայրի ծնունդ է և հայերին անցել է արաբների հետ դարավոր շփումների ընթացքում¹: Լոխման Յեքիմը հնագույն իմաստուն հերոս է, որը, ըստ ավանդության, ապրել է հազար տարի: Նրա մասին պատումների շարքը մինչիսլամական արաբական բանահյուսական ավանդույթն է²: Ըստ արաբական հնագույն աղբյուրների՝ արաբների մոտ լայն տարածում են ունեցել առած-ասացվածքները, աֆորիզմներն ու առակները, որոնց հեղինակը համարվում է առասպելական իմաստուն Լոխմանը³: Լոխմանը, որպես իմաստուն և խրատաբան, իր անհավատ որդի Տարանիմ⁴ ուղղված իր ասույթներով ու խորհուրդներով մտել է մուսուլմանների սուրբ գիրքը⁵: Արաբ հեղինակների մոտ Լոխմանի մասին պահպանվել են մի շարք ավանդություններ, որոնք հավաստում են, որ նա իրական-պատմական դեմք է: Ըստ իբն Կասիրի՝ Լոխմանը եթովպացի ստրուկ է եղել, որին ազատություն և հարստություն է տվել Բանի Իսրայիլի մարդկանցից մեկը, որովհետև նա մեծ իմաստությամբ օժտված սուրբ մարդ է եղել⁶: Յենց «հաքիմ» բառն էլ արաբերեն նշանակում է խելացի, կրթված, խորհող, գիտուն, իմաստուն, իսկ «լոխման» բառը նշանակում է հոգատար, հսկող, սնուցող⁷: Յայերենում «լոխման» կամ «լողման» բառը բացատրվում է որպես առասպելական բժիշկ կամ չափազանց հմուտ բժիշկ⁸, իսկ հեքիմ բառը բացատրվում է որպես սնոտիապաշտական միջոցներով բուժող մարդ⁹ կամ բժշկական կրթություն չստացած, տնային միջոցներ-

¹ Պանալանյան Ա., Ավանդապատում, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1969, էջ 68:

² Мифы народов мира, II том, М. 1988, с. 77.

³ История всемирной литературы, т. 2, М., Наука, 1984, с. 215 (Фильштинский И. М., Арабская литература).

⁴ Юсуф Хаттар Мухаммад, Мудрости Лукмана Хакима, Уруссу Татарстан, Иман, 2002, с. 4.

⁵ Коран, т. 2, М. 1990, гл. 27 (Муравьи), с. 701.

⁶ Юсуф Хаттар Мухаммад, նշվ. աշխ.:

⁷ Толковый словарь татарских личных имен (на рус. языке), Казань, 1998, <http://www.tatar.kz/isenn-ra.htm>.

⁸ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Ե., 1972, էջ 424, Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Ե., «Հայաստան», 1976, էջ 534:

⁹ Աղայան Էդ., նշվ. աշխ. էջ 868:

րով բուժող անձ¹: Այս պարագայում մենք գործ ունենք արաբական միջավայրից փոխառված հատուկ անվան իմաստափոխության և որպես հասարակ անուն հանդես գալու հանգամանքի հետ: Լոխման Յեքիմ անհատի գործառույթը հենց բժշկությունն էր, ուստի հայկական և արցախյան բանահյուսական ավանդություն մա հանդես է գալիս որպես թռչունների ու բույսերի լեզուն հասկացող հռչակավոր բժշկապետ: Արցախի լոխմանյան իրապատում հեքիաթներում Լոխման Յեքիմը հիմնականում զբաղվում է բժշկությամբ և «հիշտեղ տիժեր հիվանդ կա»², առողջացնում է: Լոխմանը նաև իմաստուն է և կարողանում է գուշակություններ անել³, սակայն բարոյախոսական զրույցը եզրահանգում է, որ Լոխմանն էլ կարող է սխալվել և իմաստունից իմաստունն էլ կա: Ինչպես Շահաբասյան սյուժեները, լոխմանյան սյուժեները նույնպես հատուկ քննության առարկա են:

Արցախյան բանահյուսության պրպտումները ցույց տվեցին, որ այն պատմական անձինք, ովքեր այս կամ այն կերպ կապված են եղել Արցախի պատմության հետ և խոր հետք են թողել, իրենց կատարած լավ ու վատ գործերով, արժանացել են ժողովրդի ուշադրությանը, մուտք են գործել բանահյուսական միջավայր, ենթարկվել են կերպարանափոխության և դարձել վիպական կերպարներ: Արցախի վիպական բանահյուսությունը իր սյուժեներով, թեմատիկայով, ընդհանուր նկարագրով հար և մման է համահայկական բանահյուսությանը և կազմում է նրա մի մասը: Այն կարիք ունի խոր ուսումնասիրման ու ընդհանրացումների:

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հտ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Ե., 1972, էջ 348:

² FFVI:5240,01-5251,00, **Իսրայելյան Ս.**, Ղարաբաղի հեքիաթներ, 1968:

³ FFV:839,01-8344,00, **Առաքելյան Մ.**, ԼԴԻՄ բանահյուսություն, 1962, ձեռագիր ժողովածու, ՀԱԻԲԱ:

ԳՈՐԵԼԵՆԻ ԱՐՎԵՍՏԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գործվածքի այն տեսակը, որն այսօր մեր զեկուցման նյութն է կազմում, արվեստի պատմության մեջ կոչվում է գորելեն: Անունը գալիս է Փարիզի Սեն-Մարսել արվարձանում 1662 թ. հիմնված մանուֆակտուրային գլխավոր մասնաշենքից: XV դարում այն պատկանել է հայտնի արդյունաբերող Ժիլլ Գորելենին: Այդ գործվածքները հյուսվել են փայտե պարզ հաստոցի վրա բրդից, երբեմն էլ՝ թավշյա թելերից, որտեղ հատուկ կարտոնների օգնությամբ վերարտադրել են քիչ թե շատ նշանավոր նկարիչների գործերը:

Գորելենի արվեստը սկզբնավորվել է Եվրոպայում՝ միջնադարյան գորգագործական արհեստանոցների հիմքի վրա: XIV դարում այն որոշակի զարգացում ապրեց Ֆլամանդիայի Արասեյա քաղաքում. հայտնի են «Արասեյան գորգեր» անվանմամբ: XV դ. վերջերին գորելենի արհեստագործությունն անցնում է Բրյուսել, ավելի ուշ՝ բարձր ծաղկում ապրում Ֆրանսիայում: Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-ը ձեռք է բերում մի հարմարավետ շենք, որտեղ և հիմնադրում «Գորելենի թագավորական մանուֆակտուրան»: Գորելենները պատրաստվում էին միայն պալատների ու բարձրաստիճան մարդկանց (թագավորական ընտանիքի անդամներ, ազնվականներ) նվիրելու համար: Այդ գործվածքը ենթակա չի եղել վաճառքի. դա պալատական գույք էր, այն էլ՝ բարձր արժողությամբ՝ թանկ հաճույք:

Ֆրանսիայում գտնում էին, որ գորելենով զբաղվել կարող են միայն մասնագիտական բարձր որակավորում ունեցող մարդիկ, որոնք միանշանակ օժտված են լինելու գեղանկարչի բացառիկ շնորհքով ու ճաշակով: Փաստորեն գորելենիստը տաղանդավոր գեղանկարիչ էր, միայն թե պալատրայի փոխարեն օգտագործում էր գունավոր թելեր, իսկ վրձինը նրա ճկուն մատերն էին:

Այս խորքի վրա մեզ հետաքրքրում է քրիստոնեական գորելեն-վարագույրների պատմությունը. ասել է, թե Քրիստոսի եկեղեցու բովանդակության ու ծիսական արարողակարգի կարևոր մասերից մեկը:

Իրենց խորհրդանշական իմաստավորմամբ դրանք ծածկել են եկեղեցու ավագ խորանի բեմը (իհարկե, մոռացության չենք տալիս հելլենիստական ժամանակներից գործածվող վարագույրները: Դրանք եղել են բեմի ձևավորման տարր, ընդմիջումների ժամանակ բեմը փակող միջոց՝ ընդմիջումային կամ ինտերմեդիական վարագույր: Վերջիններս սակայն կապ չեն ունեցել գորելենային արվեստների մեզ հետաքրքրող տեսակի հետ):

Քրիստոնեական վարագույրը, նրա սեմաստիկան, պատկերային և գունային համակարգը հնից է գալիս, ինչպես եկեղեցին: Աստվածաշնչում նշվում է վարագույրի խորհրդաբանական իմաստը. «Եւ արասցես վարագոյր ի կապուտակէ եւ ծիրանւոյն եւ ի կարմրոյ մանելոյ եւ ի բեհեզոյ նիւթելոյ, գործ անկուածոյ գործեսցես զմատերոք» (Գիրք Ելից, Իգ. 31): Այնուհետև՝ «Եւ արասցես սրահակ դրան խորանին ի կապուտակէ եւ ի ծիրանւոյ եւ ի կարմրոյ մանելոյ ի բեհեզոյ (մետաքս - Ա. 3.) նիւթելոյ գործ նկարակերպ» (Գիրք Ելից, Իգ. 37): Խոսքն այստեղ մետաքսից պատրաստված վարագույրների մասին է, որոնց վրա նկարիչներն աստվածաշնչական տեսարաններ էին պատկերում:

Վերոհիշյալ կրոնապաշտամունքային բանաձևերն իրենց մեկնաբանությունն են ստացել նաև հայ միջնադարյան գործիչների կողմից՝ հավաստելով ընդհանրական եկեղեցու մասը կազմող հայոց դավանաբանական կարգի ընդհանրությունը: VII դարի հեղինակ Վրթանես Քերթոզը պատկերամարտության դեմ ուղղած իր թղթում փաստում է Հին կտակարանից սկիզբ առնող պատկերահարգության գաղափարները՝ վկայակոչելով Մովսես Մարգարեի հորդորած «հրամանաւն Աստծո խորանի նկարեն պատկերը»:

Հովհաննես Իմաստասեր Օձնեցին (VIII դար) անդրադառնալով եկեղեցական նկարազարդ վարագույրներին՝ հանգամանորեն բացատրում է դրանց գունապատկերային ներքին բովանդակությունը. առաջին վարագույրը հրեղեն (կարմիր) աստծո գաղափարի կրողն է, աստծո էության դրսևորումը, որը և աստծուն բաժանում է հրեշտակներից: Երկրորդ վարագույրը ջրեղենն է, կապույտը. այստեղ հրեշտակներն են՝ աստծո նկատմամբ ցածր կարգույթի էակները (Մատենագրութիւնք,

Վենետիկ, 1833, էջ 143): Այս վարագույրն էլ հրեշտակներին բաժանում է ժողովրդից: Այսպիսին է գույների նվիրապետական իմաստը: Գունապատկերային այս մեկնաբանությունները կրկնում է նաև Հովհան Մայրավանեցին (XVII դար):

Եկեղեցու վարագույրների սրբազան պատկերներն ու գույները կոչված են ոչ միայն եկեղեցու համար ցանկալի ձևով հունի մեջ պահելու հավատացյալի մտածողությունն ու աշխարհըմբռնումը, այլև՝ դաստիարակելու նրան՝ «սրբացնելով» ամենաազնիվ զգայարանը՝ տեսողականը, ինչպես Հովհան Դամասկացին է գրում «ոգեկանության ծիրի մեջ ամփոփել նրա ամծը»:

Այսպես ուրեմն, թե՛ համընդհանուր և թե՛ հայ եկեղեցու համար ընդունված կարգ է եղել գլխավոր ու երկրորդ խորաններում նկարեն վարագույրներ ունենալը: Դրա անվերապահ ապացույցն է Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարանի» (Անթիլիաս, 1956 թ.) հետևյալ կարգաբանությունը. «Հայ եկեղեցուն հատուկ է վարագույր կտավե կամ կերպասե շինել, որ կծածկե խորանի բերանը. խորանը փակող պատկերազարդ որմնափակը: Այդ պատկերազարդ ու նկարեն վարագույրները կշինվեին խորհրդավոր հրեշտակներով» (էջ 189):

Այս ամենն անվերապահորեն հաստատում են, որ և՛ ընդհանրական, և՛ հայոց եկեղեցիներում վաղ ժամանակներից օգտագործվել են վարագույրները, միայն թե ինչպես թատերական արվեստում, այստեղ էլ վերջիններս եղել են կտավից կամ կերպասից՝ վրան կատարված սրբազան նկարներով:

Մեզ հետաքրքրող հաջորդ հարցն է. իսկ ե՞րբ են ստեղծվել բրդից հյուսված եկեղեցական պատկերներով վարագույրները հայոց աշխարհում: Սկզբում ասվեց, որ Եվրոպայում դա ձևավորվել է միջնադարյան գորգագործական արհեստանոցներից, հավանաբար XIII կամ XIV դարերում:

Մեր պատմագրության մեջ, բարեբախտաբար, կա բացառիկ մի տեղեկություն, որը լույս է սփռում հետաքրքրություն ներկայացնող խնդրի վրա: XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին խոսելով Արցախի իշխան Վախթանգ Հաթերքցու կնոջ՝ Արզու խաթունի մասին, գրում է. «Սա բազում ինչ օժանդակ եղել արար և վարագույր գեղեցիկ՝ դստերոք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղազունաց՝ ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակա-

կերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինակա-
նօք Փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն: Եւ որք
տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն
ոստայնանկութեան և համճար նկարակերտութեան, որպէս առ Յորն
ասացաւ, որ ոչինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին, զոր արարին
Բեսելիէ և...

... եւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղե-
ցեաց՝ Հաղբատայ և Մակարայ վանից և Դադի վանից, քանզի յոյժ
սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կիցնն» (էջ 209-210):

Գորելենի վերաբերյալ Կիրակոս Գանձակեցու հաղորդած սույն
նկարագրութիւնը բացարձակապէս նույնութեամբ կրկնում է դրա պատ-
րաստման այն եղանակները, որոնք գործածվում են մինչև օրս և շարա-
դրված են մասնագիտական գրականութեան մեջ և համապատասխան
հանրագիտարաններում: Նման ճշգրիտ տվյալներ որևէ այլ բնագավա-
ռում չեն հանդիպի:

Այսպէս, «Հայկական Սովետական Հանրագիտարանում» կարդում
ենք. «Գորելենը գործվել է բրոյա և մետաքսյա (երբեմն նաև ոսկյա և
արծաթյա) գունավոր թելերով: Գորելենը գործվել է ձեռքի հատուկ
դազգահների վրա: Գորելենին բնորոշ հատկանիշն է հիմնաթելերով
ստեղծված մակաշերտավոր երեսկողմի և կարերով ստեղծված հակա-
ռակ երեսի անհարթութիւնը» (ըստ Գանձակեցու «գործ քանդակա-
կերպ» - Ա. Հ., հատոր 3, 1977, էջ 141):

Տեխնիկական նույն առանձնահատկութիւնների մասին կարդում
ենք «Սովետական մեծ հանրագիտարանում», հ. 6, 1971, էջ 620. Բրոկ-
հաուզի ու Եֆրոնի «Հանրագիտական բառարանում», Ս. Պետերբուրգ,
1893, էջ 4-5:

Ուրեմն Հայաստանում ևս գորելենի գործվածքային տեսակը գալիս
է միջմադարից. բայց ի տարբերութիւն ժամանակի առումով եվրոպա-
կան որոշ անորոշութեան, Հայաստանում, ըստ մեզ հասած տվյալների,
դա պատրաստվել է ոչ ուշ, քան XIII դ. կեսերին: Հետաքրքրական է, որ
ինչպէս Ֆրանսիայում, այստեղ ևս դա եղել է «պալատական-
ազնվական մասնագիտութիւն»: Գորելենով զբաղվել են Արցախի իշ-
խանական տան անդամները՝ Վախթանգ Հաթերքցու կինը՝ իշխանուհի
Արզու խաթունը և նրա դուստրերը: Այս հիանալի կանայք անտարա-
կոյս նկարելու շնորհքով օժտված արվեստագետներ էին, որոնց աշ-

խատանքները տեսնելով՝ մարդիկ օրհնում են Աստծուն՝ ասելով. «որ ետ կանանց իմաստութիւն ուտայնանկութեան և հանճար նկարակերտութեան»: «Տաղանդավոր արվեստագետուհին քանքարաթագույց մեկը չէ,- գրում է Լեոն,- և մենք տեսնում ենք այդ վարագույրները հրաշակերտելիս իր աղջիկների հետ, որոնց ինքն էր դաստիարակել, գուցե ուրիշ աշակերտների հետ միասին»: Պետք է ենթադրել, որ նման վարագույներ ունեցել են ոչ միայն Նոր Գետիկի, Յաղպատի, Դադի ու Մակարա վանքերը, այլև ուրիշ եկեղեցիներ: Դեռևս 1897-ին Գարեգին Յովսեփյանը Էջմիածնի ճեմարանի ուսանողների հետ շրջագայելիս՝ Նոր Բայազետի Նորադուզ գյուղի եկեղեցում տեսնում է բրդից գործված մի հին վարագույր, հավանաբար 16-17-րդ դարերից, որը մաշված համարելով գցել էին խոնավ մի անկյուն, դրա փոխարեն բեմի վրա կախելով դաջված նկարներով կտավե նոր վարագույր:

Ինչ խոսք, եթե նույնիսկ XIX դարում կատարվեին հին հուշարձանների գիտական հավաքչական աշխատանքները, ապա շատ բան կարելի էր փրկել:

Մեր զեկուցումը ավարտում ենք մեծ հայագետ Գարեգին Յովսեփյանի տպավորիչ խոսքերով. «... Եգիպտոսի արվեստն ու մշակույթը պատմության մեջ իրենց բազմատեսակ երևույթներով հոգու անմահության հետ կապված հասկացողությունների մարմնացումն է: Յունական արվեստն ու գրականությունը իրենց բոլոր ճյուղերով հագեցված են հույն ժողովրդի կրոնադիցաբանական ընթռնումներով: Յայոց արցախական աշխարհի արվեստում կա թե՛ հոգու անմահություն, թե՛ կրոնական ու, թերևս, ամենակարևորը՝ կյանքի պահպանման ու հարատևության գաղափարը»:

**ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ՍԵԼԻՔ – ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ (ՏՄԲԼԱԶԻ ԽԱԶԱՆ)
ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

XIX դարի վերջին քառորդին, եվրոպական առաջավոր երկրների բանագիտական մտքի ազդեցությամբ, հայ հասարակական միտքը սկսում է կարևորել մեր ժողովրդի բանավոր ստեղծագործությունների գրառման, հրապարակման և հետազոտման պատմամշակութաբանական անհրաժեշտությունը: Մ. Միանսարյանցի, Գ. Սրվանձտյանցի, Գ. Շերեմցի, Հ. Ճանիկյանի, Տ. Նավասարդյանի, Մ. Բարխուդարյանի, Գ. Տեր-Ալեքսանդրյանի և ուրիշների բանահյուսական ժողովածուները, մեր ազգային հերոսավեպի՝ «Սասնա ծռերի» պատումների հայտնաբերումն ու տպագրությունը և Վենետիկի Մխիթարյանների կողմից մեր բանահյուսական ավանդության գիտական ու մշակութային արժեքավորումը խթանում են նոր սկզբնավորվող հայ բանագիտության զարգացումը: Ինքնարտահայտման այդ գործընթացի մեջ իր ուրույն տեղն ունենում են Արցախի պատմազգագրական շրջանը: Արցախի բանահյուսության գրառման պատմությունը պետք է սկսել 1860 թվականից¹: Խոսքը հայ մշակույթի պատմության մեջ որոշակի դեր խաղացած հայտնի Բահաթրյան ընտանիքի², Պըլը Պուղու մասին ստեղծված երգիծական զրույցների և մանրապատումների առաջին հավաքող և հրատարակող Գ. Շերմազանյանի³, Արցախի բանահյուսության հավաքման

¹ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, Երևան, 1985, էջ 11:

² ՀՀ ԳԱՍ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ԲԱ), FBI: 0808-0961, 3683-3765:

³ Գ. Շերմազանյան, Անեկոտներ, զվարճալի զրույցներ, համառոտ դեպքեր և առակներ մեծ մասամբ ազգային կյանքից առած, Թիֆլիս, 1878:

և հրատարակման գործի երախտավոր Մ. Բարխուդարյանի¹ և այլոց մասին է: Այս ամենը վկայում է Արցախում բանահյուսության նկատմամբ ստեղծված շահագրգիռ ու համակրական վերաբերմունքի մասին: Ժողովրդագիտական ուսումնասիրությունների և հրատարակությունների այս նպաստավոր մթնոլորտում, ուր ներգրավված էին հայ հասարակության լայն շրջանները, XIX դարի վերջին քառորդին ժողովրդական բառ ու բանով հագեցված ֆելիետոններով սկսեց իր գործունեությունը Կ. Մելիք-Շահնազարյանը (1857-1940):

Տմբլաչի Խաչանը Կ. Մելիք-Շահնազարյանի խոսափող հերոսն է, ով վայելում էր Արցախ պատմաագագրական շրջանի աշխատավոր ժողովրդի սերն ու համակրանքը, որովհետև բնիկ շուշեցի լինելով՝ քաջատեղյակ էր Շուշիի իրական-հրապարակային կյանքին, ժողովրդի նիստուկացին, ապրումներին, ազգային տենչերին ու իղծերին:

Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը, գրական, մանկավարժական, գյուղատնտեսական, հասարակական գործունեությունը հնարավոր չէ զատել նրա ժողովրդագիտական գործունեությունից, որովհետև քառասուն տարիների ընթացքում շրջելով Անդրկովկասի գրեթե բոլոր շրջանները՝ նա ոչ միայն նպաստել է գյուղատնտեսական նորագույն ճյուղերի արմատավորմանը, այլև հընթացս զբաղվել է բանահյուսական-ազգագրական նյութերի հավաքչությամբ:

Կ. Մելիք-Շահնազարյանին ճանաչում է բերել 1900-1901 թթ. Բաքվում լույս տեսած երգիծական ֆելիետոնների «Ձուռնա - Տմբլա» երեք գրքից բաղկացած ժողովածուն, որը լրացվում և վերահրատարակվում է 1907-1908 թթ. Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին): Վերոհիշյալ ժողովածուի Ա և Բ գրքերում Շուշիի կյանքը հրապարակային քննարկման է ենթարկվում արցախահայերի մտավոր ու տնտեսական կյանքի կենտրոն համարվող «Թոփխանա» հրապարակում, որտեղ հարգվում էր ժողովրդական դիպուկ խոսքը, հումորը և հաջող սրախտությունն արդեն իսկ պատռում էր նեղ - թոնրատնային մտածողության սահմաններն ու տեղական շրջանակները, բերնեբերան շրջում Արցախում:

¹ «Բարոյական առածներ», հավաքագրեց ուստա Գևորգ Բարխուդարյանց, Տփլիս, 1898 (Մակար Բարխուդարյանը և ուստա Գևորգ Բարխուդարյանը նույն անձնավորությունն է):

Խաչանը ունի մականուն՝ Տմբլաչի, որը նախ նրա զբաղմունքն է մատնանշում և ապա՝ բանահյուսական էությունը: Խաչանը գուսան է, զուռնաչի, տմբլաչի, մունետիկ, ազդարար: Ուրեմն, զուռնան ու տմբլան Խաչանի՝ Ղարաբաղի բարբառով գրած երգիծական ստեղծագործությունների պատկերավորման հիմնական միջոցներն են: Հանրահայտ է, որ զուռնան ու տմբլան արցախահայերի հարսանեկան համակարգի հիմնական նվագարաններն են, որոնց ընտրությունը պետք է բացատրել ոչ թե 4. Մելիք-Շահնազարյանի նախասիրությամբ կամ պատահական շարժառիթներով, այլ մեր ժողովրդի երաժշտակատարողական մտածողության յուրահատկությամբ, այդ նվագարանների գործառույթներով և խորհրդանշային ընկալումներով:

Դատելով 4. Մելիք-Շահնազարյանի անձնական ֆոնդում պահպանված ձեռագրերից՝ վերջինիս ժողովրդագիտական ժառանգությունը բազմաժանր ու բազմաբնույթ է. հեքիաթներ, գրույցներ, անեծք-օրհնանքներ, առածներ, հանելուկներ, շուտասելուկներ, բարբառային բառերի բացատրական բառարան, ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութեր և այլն: Ժողովրդագետի գրի առած նյութերի մի մասը անտիպ¹ է, մասամբ տպագրվել են առավելապես առանձին ժանրային համահավաք ժողովածուներում² և «Հանդես ամսօրայի» էջերում: Ավելորդ չենք համարում նշել, որ նույն հեղինակի ազգագրական բնույթի նյութերը ևս տեղ են գտել հանդեսում³: 4. Մելիք-Շահնազարյանի հավաքածուի մի մասը վիպական բանահյուսության նմուշներ են՝ հեքիաթներ և գրույցներ, որոնք ներկայացված են կենդանական, իրապատում կամ կենցաղային երգիծական դիպաշարերի տեսքով և հիմնականում

¹ ԲԱ, ԲԲ II 2904-3175; Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), 4. Մելիք-Շահնազարյանի ֆոնդ, գգ. 70, 96:

² Ղարաբաղի բարբառներ, «Հանդես ամսօրայ» (այսուհետև՝ ՀԱ), 1928, էջ 552-559, ՀԱ, 1928, էջ 475-478, Հանելուկներ Ղարաբաղի լեզվով, ՀԱ, 1930, էջ 596-601, Առակներ Ղարաբաղի բարբառով, ՀԱ, 1930, էջ 359-362, ՀԱ, 1931, էջ 246-252, Նյութեր Ղարաբաղի ազգագրության համար, ՀԱ, 1932, էջ 331-338, Ա. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960; Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Երևան, 1973:

³ Բուրդ զգելը և գորգ գործելը Ղարաբաղում, Ազգագրական ծանոթագրություններ, ՀԱ, 1928, էջ 475-478:

Ասրնե Թոմփսոնի¹ հեքիաթային տիպերի միջազգային համացույցի AT 2032 A տիպին պատկանող կոմուլյատիվ (կուտակային) հեքիաթներ են:

Բանահավաքչական գործունեությունից զատ Կ. Մելիք-Շահնազարյանը գերմաներենից թարգմանել է կենդանական հեքիաթներ² (Գրիմ եղբայրներ, Ա. Շվաբե, Պ. Շմիդտ)՝ կարևորելով չարի դեմ մղված տևական պայքարում բարու հաղթանակը, ինչն էլ տարբեր նրբերանգներով դրսևորված է գրեթե բոլոր ժողովուրդների հեքիաթներում: Նույնը կարելի է ասել «Սկներն ու դավաճան կատուն», «Ընծառյուծն ու ոչխարը», «Սներգուրդչկան և աղվեսը», «Աղքատ աղվեսը» ռուսերենից կատարած թարգմանությունների մասին³: Թարգմանելով և փոխադրելով ֆրանսիացի մեծ բանաստեղծ, երգիծարան Լաֆոնտենի առակներից մի քանիսը⁴, որոնցում գործող անձինք հանդես են գալիս այս կամ այն կենդանու կերպարանքով, Կ. Մելիք-Շահնազարյանը դարձյալ օգտագործում է Ղարաբաղի բարբառի արտահայտչական հնարավորությունները:

Բանահավաք Կ. Մելիք-Շահնազարյանի ֆոնդում պահպանվում են նաև Ղարաբաղյան օրհնանքի⁵ (118) և անեծքի⁶ (214) մուշներ: Անեծքի ձեռագիր մուշները գրի են առնված 1870-1880 թթ. «Ղարաբաղցիների հայիոյանքը» վերնագրի տակ⁷: 1928 թ. հրատարակվում է Կ. Մելիք-Շահնազարյանի բանահյուսական հավաքածուի մի մասը «Ղարաբաղի բարբերեն» վերնագրով, որը ներկայացնում է օրհնության և անեծքի մուշների մի փունջ⁸:

Քաջածանոթ լինելով մայր ժողովրդի լեզվամտածողությանը, հոգևոր մշակույթին՝ նա բարբառով գրած իր երգիծապատումներում հմտորեն է կիրառում ժողովրդական բառ ու բանը, անգամ ծիսական

¹ Ասրնե Թոմփսոն, «Ժողովրդական հեքիաթների տիպերը»: Ձեռագիրը՝ ԳԳ ԳԱԱ Զնագիտության և ազգագրության ինստիտուտում (գործավարական թարգմանություն):

² ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 61, 70:

³ ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գգ. 58, 70:

⁴ Տմբլաչի Խաչան, Զուռնա-Տմբլա, գ. Բ, Վաղարշապատ, 1908, էջ 148, 182:

⁵ ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 94:

⁶ Անդ, գ. 93:

⁷ Ժանրի այսօրվա ըմբռնմամբ հավաքածուի մուշները հայիոյանք չեն, այլ անեծքներ:

⁸ Ղարաբաղի բարբերեն. Ղարաբաղցիների օրհնությունը, Ղարաբաղցիների անեծքը, ժողովրդական ասույթներ, ԳԱ, 1928, էջ 552-559:

բանահյուսության նմուշները, զորօրինակ՝ «Ճուլին»¹, ինչը ջրի աստվածության հնագույն պաշտամունքի հիշողությունն է՝ պահպանված բնաշխարհի հայոց կենցաղում²:

Ժողովրդագիտական որոշակի արժեք ունեն Կ. Մելիք-Շահնազարյանի հավաքած նյութերը՝ Արցախում գործադրված կախարհության և գուշակության ձևերի մասին՝ «կոռնը չափել», «վախը եր քաղել», «սրտըմնա փռնել», «ջամի մեջ ճյուր լցնել», «կյարի քցել», «տենակ քցել» և այլն³:

Պակաս ուշագրավ չեն բանահավաքի գրառած ժողովրդական բժշկության վերաբերյալ նյութերը՝ «Տնային բժշկությունը Ղարաբաղում»⁴ (1870 թ., 18 թերթ), «Առտնին բժշկությունն»⁵ (1874-1880 թթ., 20 թերթ), «Հիվանդությունների դեմ Ղարաբաղում ժողովրդական ճարեր»⁶ (1879-1906 թթ., 8 թերթ): Այս ձեռագիր նյութերում տեղեկություններ կան բուժման ֆիզիկական եղանակների մասին (բուժում ոսկրացավի և ատամնացավի դեմ, քթի արյունը կանգնեցնելու, այրվածքը բուժելու, գլխացավը կանխելու և այլն):

Կ. Մելիք-Շահնազարյանը կազմել է բարբառային բառերի բացատրական բառարաններ՝ «Հավելված Ղարաբաղի լեզվի բառերի»⁷ (1880 թ., 26 թերթ), «Ղարաբաղի բառարանի հավելյալ թերթեր»⁸ (14 թերթ), ուր բարբառային բառերին տրվել է գրական հայերենով բացատրություններ:

Ժողովրդագետը ռուսերենից թարգմանել է Ավստրալիայի Նոր Գվինեա կղզում նախնադարյան համայնական կարգերով ապրող մարդկանց՝ պապուասների կրոնական հավատալիքների, ծիսապաշտամունքային արարողությունների, հմայության ու տոտեմիզմի մասին պատմող «Վայրենիները»⁹ հոդվածը, ինչպես նաև քաղվածքներ է

¹ **Տնրլաչի Խաչան**, Զուռնա-Տնրլա, գ. Բ, էջ 66:

² **Г. Капанця**, Историко-лингвистические труды, т. II, Ереван, 1975, с. 321-322.

³ **Տնրլաչի Խաչան**, Զուռնա-Տնրլա, գ. Ա, Վաղարշապատ, 1907, էջ 98-99:

⁴ ԳԱԹ, Կ. Մելիք-Շահնազարյանի ֆ., գ. 98:

⁵ Անդ, գ. 99:

⁶ Անդ, գ. 100:

⁷ Անդ, գ. 89:

⁸ Անդ, գ. 90:

⁹ Անդ, գ. 59:

թարգմանել «Ղուրանի»¹ օրենսգրքից ամուսնական խնդիրների, դրախտի, դժոխքում մեղավորների պատժի մասին:

Վարպետորեն օգտագործելով բանահյուսական տարբեր ժանրերի գեղարվեստական հնարանքները, արտահայտչական, լեզվաոճական միջոցների առանձնահատկությունները՝ Կ. Մելիք-Շահնազարյանը Ղարաբաղի բարբառով գրած իր ֆելիետոններում կատարում է կենցաղային, հասարակական-քաղաքական, կյանքի հրատապ խնդիրներին վերաբերող այնպիսի ընդհանրացումներ, որոնք կարևորվում են մեր ժամանակների հետ ունեցած աղերսներով. «Էլ օզըն չըմ ըրզընցնիմ, իմ աչքի լուս, ըշխարքավս մին փռված մամուս ղեյրաթավ ղարաբաղցիք, իմ հույսը ծեզ երա ա, ծեր աբուռը օլմիա թա չուլը քցիք, դուդի-բուդի պեներու հետա կենաք, ծեր վաթանը մուռանաք, ծեր վառ ուջաղին երա ճուր ածիք, Ղարաբաղին անընը կոտրիք...

Ծեր պարի կուրծերին աչքը թիքմիշ ըրած Տմբլաչի խաչան»²:

¹ Անդ, գ. 69:

² **Տմբլաչի խաչան**, Ջուռնա-Տմբլա, գ. Բ, էջ 241:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՆՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՑԱԽՅԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԴՐՈՑԸ**

Արցախը, ինչպես և պատմական Հայաստանի առանց բացառության մյուս բոլոր նահանգները, չափազանց հարուստ է պատմության և մշակույթի տարբեր դարաշրջանների հուշարձաններով: Մի քանի հազարի է հասնում պաշտամունքային, աշխարհիկ, մեմորիալ ճարտարապետական կառույցների թիվը, որոնք թվագրվում են 4-րդ դարից մինչև 19-րդ դարը: Արցախի ճարտարապետությունը վաղ միջնադարից սկսած զարգացել է այն ընդհանուր օրինաչափությունների հիման վրա, որոնք բնորոշ են եղել ողջ հայկական շինարարական արվեստի համար:




Նկար 1. Գանձասարի վանքի Ա.Դովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթը

Արցախի 4-7-րդ դդ. հուշարձաններից արժեքավոր են Գրիգորիսի դամբարանը Ամարասի վանքում, Մոխրենիսի և Վանքասարի եկեղեցիները: ԼՂՀ Մարտունու շրջանում գտնվող Ամարասի վանքի եկեղեցին, ըստ պատմիչ Փավստոս Բուզանդի, 4-րդ դ. սկզբում հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը: Ամարասը նշանավոր է դառնում, երբ այստեղ են թաղում Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ Գրիգորիսին, որը նահատակվել էր 338 թ., Աղվանքում քրիստոնեություն տարածելու ժամանակ: Նրա գերեզմանի վրա 489 թ. դամբարան է կառուցվել, որն անփոփոխ պահպանվել է Ամարասի վանքի եկեղեցու բեմի տակ: Այն արևելքից-արևմուտք ձգվող ուղղանկյուն (1,90 x 3,75 մ) թաղածածկ խուց է, արևելքում խորշով, երկայնական պատերում մեկական մուտքով: Նախամուտքերի պատերին քանդակված են ոճավորված արմավենիներ: Գրիգորիսի դամբարանը արժեքավոր է վաղքրիստոնեական Հայաստանի մեմորիալ կառուցվածքների ճարտարապետության ձևավորման պատմության համար, որպես այդ տիպի որոշակի թվագրված և ամենալավ պահպանված հուշարձան:

ԼՂՀ Հադրութի շրջանի Մոխրենիս գյուղից հյուսիս-արևմուտք, լեռան վրա կիսավեր վիճակում պահպանվել է քառաբսիդ, կենտրոնագմբեթ, անկյունային 3/4 խորշերով «Օխտոդնիվանք» կոչվող եկեղեցին, որը հայկական ճարտարապետության ստեղծած «հռիփսիմեատիպ» եկեղեցիների հնագույն օրինակն է:

Մարտակերտից Ստեփանակերտ տանող խճուղու մոտ, բլրի գագաթին, կանգուն է եռաբսիդ, խաչաձև գմբեթավոր, Վանքասարի 7-րդ դ. եկեղեցին, որի պատերին կան շինարար վարպետների նշանները՝ հայոց այբուբենի տառերով:

Արցախի ճարտարապետությունը վերելք ապրեց 12-13 դդ., երբ այստեղ հզորացավ Խաչենի հայկական իշխանությունը, որը հաջողությամբ դիմակայում էր քոչվոր թշնամիների ներխուժումներին: Այդ ժամանակաշրջանում ձևավորվեց հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, և կառուցվեցին այնպիսի ստեղծագործություններ, որոնք մտան հայ ժողովրդի գեղարվեստական ժառանգության ոսկե ֆոնդը: Դրանք հիմնականում կենտրոնացված են վանական համալիրներում՝ Գանձասարում, Դադիվանքում, Գտչավանքում, Խաթրավանքում և ուրիշներում:



Նկար 2. Գանձասարի վանքի գավթի ներսը

Գանձասարի վանքը գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղից արևմուտք, լեռան վրա: Համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավթից, 17-րդ դ. կառուցված պարսպից ու բնակելի և տնտեսական շենքերից, դպրոցի 19-րդ դ. երկհարկանի շենքից: Վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (1216-1238 թթ., օծվել է 1240 թ.) ունի ներքուստ խաչաձև, չորս անկյուններում կրկնափակ ավանդատներով գմբեթավոր հորինվածք և հարուստ հարդարանք: Ներսում, առագաստների տակ կան երկրաչափական զարդաքանդակներ, նրանցից վերև՝ չորս ավետարանիչների խորհրդանշանների բարձրաքանդակներն են: Նուրբ և ճոխ մշակում ունի բեմի ճակատամասը: Արտաքին ճակատներն ունեն գույգ խորշեր և զարդարված են դեկորատիվ կամարաշարով: Հայկական արվեստում իր ձևավորումով բացառիկ է եկեղեցու գմբեթը, որի թմբուկի նիստերին կան Հին և Նոր կտակարանների թեմաներով պատ-

կերաքանդակներ, երկրաչափական և բուսական մոտիվներով զարդաքանդակներ: Գմբեթի քանդակները ոչ միայն ճարտարապետական հարդարանքի բարձրարվեստ ու եզակի նմուշներ են, այլ նաև ունեն իմաստավորված բովանդակություն:

Արևմտյան միստերին քանդակված են ծալապատիկ նստած մեկենաս իշխանները՝ գլխներից վեր պահած եկեղեցիների մանրակերտներով: Եկեղեցիներից մեկը Գանձասարի վանքինն է, մյուսը՝ Վաճառինը, շրջանաձև, կենտրոնագմբեթ հորինվածքով (վերջինիս բնօրինակը չի պահպանվել, և այս մանրակերտը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել նրա արտաքին կերպարի մասին):

Այս բարձրաքանդակների միջև ընկած միստին գտնվում են Քրիստոսի ու նրանից ներքև՝ Ադամի ու Եվայի հարթաքանդակները: Բոլորը միասին կազմում են մի ընդհանուր հորինվածք, որը միավորում է և որի առանցքն է հանդիսանում Քրիստոսի քանդակը:

Եկեղեցու արևմտյան ճակատին կա մի այլ բարձրարվեստ պատկերաքանդակ՝ Խաչելության տեսարանը: Հյուսածո զարդաքանդակներով մշակված լայն խաչի երկու կողմերում պատկերված են դեպի Քրիստոսն ուղղված զույգ, ծնկաչոք մարդիկ, որոնք մնան են թմբուկի վրայի մեկենաս կառուցողներին:

1261 թ. կառուցվել է վանքի գավիթը, որն ունի խաչվող կամարներով ծածկ և հատակագծային ու ծավալատարածական հորինվածքով կրկնում է Հաղբատի վանքի ժամատան և Մշկավանքի գավթի ձևերը (հավանաբար, երեքն էլ նույն ճարտարապետի կառուցածն են): Գանձասարի գավթի արևմտյան շքամուտքը բավական ճոխ է ձևավորված, դռան ճակատակալ քարում օգտագործված է բազմագունության հնարք: Գանձասարի վանքի եկեղեցին և գավիթն իրենց գեղարվեստական բարձր հատկանիշների շնորհիվ իրավամբ անվանվում են 13-րդ դարի հայկական ճարտարապետության «հանրագիտարան»:

Նշանավոր կրոնական կենտրոն Դադիվանքը գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի և Քարվաճառի սահմանագլխին, Թարթառ գետի ձախ ափին, լեռան անտառապատ լանջին: Ըստ ավանդության՝ վանքը հիմնադրվել է Թադեոս առաքյալի աշակերտներից մեկի՝ 1-ին դ. Արցախում քրիստոնեություն քարոզած Դադիի գերեզմանի վրա: Համալիրը բաղկացած է շինությունների երկու խոշոր խմբերից. հյուսիսում եկեղեցիներն են, գավիթը, ժամատունը, զանգակատունը, հարավում՝ աշ-

խարհիկ շենքերը: Պահպանված հնագույն՝ Ս. Դադի միանավ բազիլիկան իր չափերով ամենախոշորն է հայկական նույնատիպ եկեղեցիների շարքում: Նրան հարավից կից են ուղղանկյուն արսիդով միանավ եկեղեցին և գավիթը:

1211 թ. համալիրի հարավում պալատական դահլիճ է կառուցվել՝ քառասյուն, կենտրոնակազմ հորինվածքով, երդիկից լուսավորվող: 1214 թ. Խաչենի Վախթանգ իշխանի կինը՝ Արզուխաթունը կառուցել է Դադիվանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին, որը ներքուստ խաչածև է, անկյուններում երկհարկ ավանդատներով: Հարավային պատին ողջ հասակով քանդակված են Արզուխաթունի երկու իշխանագուն որդիները՝ եկեղեցու մանրակերտով, իսկ արևելյան ճակատին՝ ս. Դադիի և Վախթանգ իշխանի պատկերաքանդակներն են: Կաթողիկեի հարդարանքում կարևոր տեղ են գրավում որմնանկարները (1214–1251 թթ.): Ներսում, հարավային պատին պատկերված է Քրիստոսի կողմից ս. Նիկողայոս Հրաշագործին խույրի և Աստվածածնի կողմից՝ թիկնոցի հանձնումը, իսկ հյուսիսայինին՝ ս. Ստեփանոսի քարկոծվելով նահատակության և ծննդի տեսարաններն են:

Կաթողիկեին արևմուտքից կից է սյունասրահը, որն ավարտվում է գանգակատնով: Վերջինիս ստորին հարկում տեղադրված են վանահայր Աթանասի՝ 1283 թ. պատրաստել տված, նրբագեղ զարդաքանդակներով երկու մեծ խաչքարեր: Ս. Դադի եկեղեցուն արևմուտքից կից է քառամույթ գմբեթավոր ժամատունը (1224 թ.): Հարավում կանգուն է վանքի չորրորդ՝ գմբեթավոր դահլիճ տիպի եկեղեցին, որի գմբեթը կառուցված է աղյուսից: Պալատական դահլիճին կից են թաղածածկ սեղանատունը խոշոր խոհանոցով և գրատան գմբեթածածկ շենքը:

Համալիրի հարավարևմտյան կողմում գտնվում են 13-րդ դ. հյուրատան երկհարկանի շենքը և վանքի մառանն ու հնձանը: Դադիվանքը հայկական միջնադարյան լավագույն ճարտարապետական համալիրներից է, հատկապես արժեքավոր եկեղեցական և աշխարհիկ շենքերի բազմազանությամբ, կառույցների ու հարդարանքի ինքնատիպությամբ:

ԼՂՀ Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ, Գտիչ լեռան լանջին կանգուն Գտչավանքի գլխավոր եկեղեցին (1241-1246 թթ.) մեկ զույգ մույթերով գմբեթավոր դահլիճ է, վերծիգ համաչափություններով, հովանոցածև վեղարով գմբեթով: Նրան արևմուտքից կից է թաղածածկ գավիթը, հյուսիսից՝ ուղղանկյուն արսիդով երկրորդ եկեղեցին, որի

ավանդատները գտնվում են բեմի տակ:



Նկար 3. Դադիվանքն արևմուտքից

ԼՂՀ Մարտունու շրջանի Վաղուհաս գյուղի մոտ, անտառածածկ լեռան վրա կառուցված խաթրավանքը հիմնադրվել է վաղ միջնադա-

րում, 12-րդ դ. եղել է Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը: Ավերվել է 1139 թ. երկրաշարժից և 1143 թ.՝ սելջուկների ասպատակությունից: Վերականգնվել է 13-րդ դ. սկզբում, երբ Հովհաննես Խաչենեցի եպիսկոպոսը, որը մինչ այդ եղել էր Հաղպատ և Սանահին վանքերի վանահայր, կառուցել է Խաթրավանքի Ս. Աստվածածին եկեղեցին ու շինարարական արձանագրության մեջ նշել, որ վանքում հավաքել է իշխանության ձեռագիր մատյանները և քանդակազարդ խաչքարերը: Սրա շնորհիվ Խաթրավանքը դարձել է ինքնատիպ միջնադարյան քարեդարան ու մատենադարան (արձանագրության քարն այժմ գտնվում է Երևանի Մատենադարանի ցուցասրահում): Ս. Աստվածածին եկեղեցին քառասյուն գմբեթավոր շենք է, սյուների պատվանդաններին պահպանիչ խորհրդանշանների հարթաքանդակներով (եզան, խոյի, առյուծի գլուխներ, օձեր): Եկեղեցին միակն է հայկական ճարտարապետության մեջ, որը գմբեթակիր մույթերի փոխարեն սյուներ ունի: Հյուսիսային կողմում կանգուն է երկհարկ զանգակատունը, պատին ազուցված երկու զեղաքանդակ խաչքարերով (1219 և 1220 թթ.): Վանական համալիրի կազմում են վանահոր բնակարանը և գրատուն–մատենադարանի շենքը:

ԼՂՀ Մարտունու շրջանի Հացի գյուղի մոտ, բլրի գագաթին գտնվում է «Բռի եղջի» վանքը (13-րդ դ.): Համալիրը բաղկացած է միմյանց կից երկու միանավ եկեղեցիներից, նրանց արևմուտքից կից, խաչվող կամարներով ծածկով ընդհանուր գավթից, արևմտյան կողմում, առանձին կանգնած, ճարտարապետ Խաչենիկ Անեցու կառուցած եկեղեցուց, բավական հեռու, դեպի արևմուտք, բլրի ստորոտում, ճարտարապետ Շահենի կառուցած համանման եկեղեցուց և երեք խոշոր խաչքարերից, որոնցից մեկը Խաչենիկ Անեցու կերտածն է: Անիից հրավիրված ճարտարապետի մասնակցությունը արցախյան եկեղեցու և խաչքարի կառուցմանը իր հետ բերել է վանքի շենքերի ճակատների մեջ «զեղատեսիլ ոճի» կիրառմանը, որի առաջացումը կապված էր Անիի մշակույթի զարգացման նոր փուլի հետ:

Արցախի նշանավոր կրոնական կենտրոններից է Եղիշե առաքյալի վանքը, որը հիմնադրվել է 1-ին դարում, Թադեոս առաքյալի աշակերտ ս. Եղիշեի մասունքների վրա: 5-րդ դ. այստեղ է թաղվել Վաչագան Բարեպաշտ թագավորը, վանքը եղել է եպիսկոպոսանիստ: Մարտակերտի շրջանում, Մռավ լեռան լանջին տեղադրված վանքի ներկայիս համալիրի թաղածածկ դահլիճ տիպի եկեղեցիները և մատուռները


կառուցված են 12-13-րդ դդ. և շարված են մեկ գծով՝ հյուսիսից հարավ ուղղությամբ: Ուշագրավ են Եղիշե առաքյալի վանքի եկեղեցիների խորանների ձևերը: Նրանցից երեքն ունեն կիսաշրջանաձև, երեքը՝ ուղղանկյուն, իսկ երկուսը՝ կրկնակի խորաններ: Ձևերի այսպիսի բազմազանությունը մեկ վանքում բացառիկ է հայկական ճարտարապետության մեջ:

Արցախի միջնադարյան ճարտարապետությունն ունի իրեն բնորոշ մի շարք առանձնահատկություններ: Հիմնական հատկանիշներից են շատ վանքերի եկեղեցիները թաղածածկ դահլիճի տիպով կառուցումը և նրանց խորանների համար ներսից ուղղանկյուն ձևի զանգվածային կիրառումը: Այդպիսին են՝ միանավ հորինվածքով, Եղիշե առաքյալ և «Բռի եղցի» վանքերի, ԼՂՀ Ասկերանի շրջանում «Օխտը եղցի» վանքի, Մարտակերտի շրջանում՝ Կոշիկ անապատի, Կարմիր վանքի, Հակոբավանքի, Կիչանի անապատի բոլոր եկեղեցիները, ընդ որում նրանցից մի քանիսը ուղղանկյուն խորանով են:

Արցախում կառուցվեց ուղղանկյուն բեմով նաև գմբեթավոր եկեղեցի՝ Պտկես բերդը (1283 թ.), որի գմբեթն իրականացված է երկու զույգ խաչվող կամարներով և նստում է երկու մույթերի ու բեմի անկյունների միջև զցված կամարների վրա:

Արցախի ճարտարապետությունը հարուստ է ոչ միայն վանական համալիրներով ու եկեղեցիներով, այլև պաշտպանական կառույցներով. դարավոր պայքարն օտար նվաճողների դեմ պատճառ է հանդիսացել երկրամասում վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար բազմաթիվ ամրոցների կառուցմանը: Առավել հայտնի են Գտիչը, Խոխանաբերդը, Կաչաղակաբերդը, Հանդաբերդը: Արցախի ամրոցներն իրենց ճարտարապետությամբ և շինարարական տեխնիկայով սերտորեն կապվում են հարևան Սյունիքի նույն ժամանակաշրջանի բերդերի հետ:

Հետաքրքրական և ուշագրավ է Խաչենի իշխանական դղյակը (13-րդ դ.), որը գտնվում է Գանձասարի վանքի դիմաց և ունի անկյուններում կիսաշրջանաձև բուրգերով ուժեղացված ուղղանկյուն, լայն պարիսպներով: Ընդարձակ բակից մուտք կա դեպի ընդունելությունների թաղածածկ դահլիճը մեծ խորշ-բենահարթակով, որտեղ դրվել է իշխանական գահավորակը:



Նկար 4. Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու հարավային ճակատը

Արցախում և նրան հարևան Սյունիքում 16-18-րդ դդ. ձևավորվեց պաշտպանական մի կառույց, որը նորույթ էր հայկական ճարտարապետության մեջ: Մելիքական իշխանական բնակելի տան և ամրոցի ճար-

տարապետության զուգակցումով ստեղծվեց մի նոր տիպի համալիր՝ «ապարանքը»: Արցախի այս համալիրներից հայտնի են Գյուլիստանի, Մոխրաթաղի, Թուխնկալի, Մաղավուզի, Ավետարանոցի ապարանքները:

17-18-րդ դդ. Արցախում զանգվածաբար կառուցվեցին ողջ հայկական ճարտարապետության մեջ տարածված եռանավ բազիլիկայի և քառանույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածքով եկեղեցիներ: Երկու զույգ նույթերով եռանավ բազիլիկաների հետ (Տողի Ս. Դովհաննես, Թաղասեռի անապատ, Ավետարանոցի Ս. Աստվածածին) կառուցվեցին Դայաստանում 17-րդ դ. մշակված այն ենթատիպը, որն ունի միայն մեկ զույգ նույթեր (Ծարի Ս. Աստվածածին վանք, Եղիշակուսի անապատ, Դակակու Ս. Աստվածածին, Ավետարանոցի Կուսանաց անապատ, Ծամծորի Ս. Աստվածածին և ուրիշներ): Քառանույթ գմբեթավոր բազիլիկայի ինքնատիպ օրինակ է Դերիերի Ս. Գրիգորիս եկեղեցին (1667–1676 թթ.)՝ նրա ցածրադիր գմբեթը շենքի ծավալում համարյա չի արտահայտվում:

Արցախի ուշ միջնադարի համալիրներից է Երից մանկանց վանքը, որը եղել է Գանձասարին հակաթոռ կաթողիկոսության կենտրոն: Վանքի եկեղեցին (1691 թ., ճարտարապետ՝ Սարգիս) քառանույթ գմբեթավոր բազիլիկա է, բազմագույն քարերի կիրառումով մշակված ճակատներով:

17-18-րդ դդ. Արցախի պաշտպանական կառույցներից իրենց անառիկությամբ առանձնանում են Մայրաբերդը (Ասկերան), Շուշի քաղաքի պարիսպները: Մայրաբերդը կառուցվել է 1788-1789 թթ. որպես Շուշիի պաշտպանության առաջին աստիճանը: Պարիսպների երկարությունը մոտ 1,5 կմ է, լայնությունը՝ 2 մ, բարձրությունը՝ 9 մ:

Շուշին կառուցված է սարահարթի վրա և շրջապատված է 6-8մ բարձրությամբ պարիսպներով: Առաջին բերդապարիսպները 1724 թ. հիմնել է Ավան հարյուրապետը (վերակառուցել են Մելիք-Շահնազարը և Փանահ խանը 1750-ական թթ.): Պահպանվել են հյուսիսային պարսպի մի մասը աշտարակով դարպասի հետ:

17-րդ դ. վանք-ամրոց դարձավ Ամարասը: Այն 5-րդ դարից սկսած խոշոր կրոնական կենտրոն էր, եպիսկոպոսանիստ: 821 թ. վանքն ասպատակել են Պարտավի արաբները, 13-րդ դ. կողոպտել են մոնղոլները, 1387 թ. ավերվել է Լենկթեմուրի արշավանքից: Բայց ամենա-

Ժանր պայմաններում անգամ վանքն 5-րդ դարից անընդմեջ գործող դպրոցով շարունակել է մնալ որպես կրոնական և մշակութային կենտրոն, 15-16-րդ դդ. այստեղ բազմաթիվ ձեռագրեր են գրվել և ընդօրինակվել: 17-րդ դ. երրորդ քառորդում Գանձասարի Պետրոս կաթողիկոսը վերակառուցել է Ամարասի վանքը, կառուցել պարիսպները, խցերը, տնտեսական շինությունները: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Ամարասի վանքը, որն ուներ բավական ուժեղ պաշտպանական համակարգ, օգտագործվել է որպես ամրոց, իսկ 1832-1847 թթ. եղել է ռուս-պարսկական սահմանի մաքսատունը: 1858 թ. Գրիգորիսի գերեզմանի վրա նոր՝ եռանավ բազիլիկ եկեղեցի է կառուցվել, իսկ 1898 թ. շուշեցի ճարտարապետ Մ. Տեր-Իսրայելյանցը պատրաստել է Գրիգորիսի տապանաքարը:



Նկար 5. Գտչավանքը հարավից

Հարթ տեղանքում կառուցված վանքն ունի կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ (59 x 85 մ.), չորս անկյուններում շրջանաձև բուրգերով ուժեղացված, հրակնատներով բարձր պարիսպներով, որոնց ներսից ողջ պարագծով կից են բնակելի և օժանդակ շինությունները: Ունի բնակելի խցերի շարքով անջատվող երկու ներքին բակ, որոնցից

արևելյանը տնտեսական նշանակության է, իսկ արևմտյանի՝ ավելի ընդարձակ բալի կենտրոնում, բարձրանում է Ս. Գրիգորիս եկեղեցին:

Շուշի քաղաքը 19-րդ դ. բուռն զարգացավ Ղարաբաղը Ռուսաստանին միացվելուց հետո, երբ հայկական թաղամասերը կառուցապատվեցին քաղաքատիպ բնակելի ու հասարակական շենքերով: Շուշիի բնակելի տները 2-3 հարկանի էին, առաջին հարկում խանութներով, վերին հարկերում՝ փայտե գեղեցիկ խոշոր պատշգամբներով բնակարաններով: Այս շենքերը 19-րդ դ. հայկական ժողովրդական ճարտարապետության արժեքավոր նմուշներն են:

Շուշիի բազմաթիվ հասարակական շենքերից ուշագրավ է հայկական Խանդամիրյան թատրոնի շենքը՝ 350 տեղանոց դահլիճով: Եկեղեցիները հինգն էին՝ Կուսամաց անապատի միանավ, թաղածածկ, եռահարկ զանգակատնով Ս. Աստվածածինը (1816 թ., չի պահպանվել), Վերին թաղի խաչածև գմբեթավոր, արևմտյան կողմում զանգակատնով Ս. Յովհաննես Մկրտիչը («Կամաչ ժամ», 1818 թ.), Ագուլեցոց Ս. Աստվածածին (1822 թ.) և Մեղրեցոց Ս. Աստվածածին (1838 թ.) եռանավ բազիլիկաները (չեն պահպանվել):

Շուշի քաղաքի կենտրոնում կանգուն է Արցախի 19-րդ դարի ամենաաչքի ընկնող կառույցը՝ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին (1868-1887 թթ., ճարտարապետ՝ Ս. Տեր-Յակոբյան): Այն հայկական եկեղեցիների շարքում ամենախոշորներից է (մոտ 35 մ երկարությամբ, 23 մ լայնությամբ և 35 մ բարձրությամբ): Եկեղեցու արտաքուստ խաչածև, չորս մույթերի վրա դրված բարձր գմբեթով ծավալատարածական հորինվածքում ակնհայտ է այն Էջմիածնի Մայր տաճարին նմանեցնելու ձգտումը: Արևմտյան կողմում 1858 թ. կառուցված եռահարկ, սլացիկ զանգակատունն է: Անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծումից հետո Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին վերանորոգվել է, մեծ հանդիսությամբ վերածովել 1988 թ. հուլիսի 19-ին և դարձել Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդանիստ եկեղեցին:

Արցախի ճարտարապետությունը շենքերի հարդարանքի, քանդակագործության, եկեղեցական, աշխարհիկ, մեմորիալ կառույցների ինքնատիպ լուծումներով մեծապես հարստացրել է հայկական միջնադարյան արվեստի գանձարանը:

**ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈՐՅԱՆ, ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՂՅԱՆ
ԴԴ ԳԱԱ ՀԱԻ**

ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ՄՊԱՍՔԻ ԵԶԱԿԻ ՆՄՈՒՇՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԻՑ

Միջնադարյան Հայաստանի հոգևոր կենցաղում լայն գործածություն է ունեցել արարողական սպասքը, որի եզակի մնուշներից են բրոնզաձուլ բուրվառներն ու խնկանոցները: Միջնադարյան մշակույթի այդ ինքնատիպ մնուշների վրա, որպես ժամանակի ծիսական և գեղագիտական ըմբռնումների դրսևորում, սկսեցին պատշաճ ուշադրություն դարձնել միայն անցյալ դարի 20-30-ական թվականներից¹:

Քրիստոնեությունը մի շարք ավանդույթների և արարողությունների հետ միաժամանակ նախորդ շրջանից ժառանգեց բուրավետ յուղերի, խեժերի ու անուշահոտ բույսերի (մարեմա, կնդրուկ, հալվե, մուշկ) խնկարկունը: Վերջիններս կոչվում էին անուշ խունկ և ծխարկվում էին հատուկ անոթներում. «զվնօթ սրբոյ պատարագին զունակ բուրման անույշ խընկին»²:

Խնկարկման նպատակը ոչ միայն եկեղեցիների ու տաճարների, բեմերի, խորանների և եկեղեցական սպասքի օծումն է մեռոնով³, այլև օդի հեղումն ու մաքրագործումը խնկի անուշահոտ բուրմունքով, որը կրոնական ծիսակատարությունների ամենահարգի և ազդեցիկ միջոցներից է:

Խնկարկման անոթները կիսագնդաձև իրանով թասեր են, մստած ոտքապատվանդանի («կառույց») վրա: Գնդաձև իրանը շուրթի մասում ավարտվում է լայն ժապավենազարդով: Ուղիղ կտրված շուրթի վրա

¹ Գ. Հովսեփյան, Հնության նշխարներ, Տարագ, 1909, № 1:

² Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Երևան, 1963:

³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 253, Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ, Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 92:

տեղադրված են երեքական դեկորատիվ և իրական ունկեր: Սրանցից յուրաքանչյուրը «կախ ունէր մեկական անբառնալի»¹ կամ շղթա, «ագուցված վերին ագույցին («շուշանն») կամ կափարիչին. «շուշանն կամ վերին ագույցն, որո վերև կար «ըմբռնելիքն ի վերին ծայրին»²: Կափարիչն ունէր փոքրիկ բռնակ («ըմբռնելիք») ձեռքում պահելու համար:

Խնկարկման ժամանակ խնկանոցները կախվում էին առաստաղից կամ դրվում սբ. սեղանի վրա, իսկ բուրվառները պահվում էին ձեռքում: Բուրվառ կրելու իրավունք, ըստ հայոց եկեղեցական կարգի, ունեին սարկավազները. «նախ սարկաւազքն ունիցին զաւետարանն և զբուրվառն... առնու զբուրվառն և ինքնին խնկարկէ շուրջ զսրբով սեղանովն»³: Սարկավազներին ձեռնադրության ժամանակ հանդիսավորապես հանձնվում էր բուրվառը, ապա սկսվում էր խնկարկումը: Նրանք ծախով պահում էին ավետարանը, աջով բուրվառը⁴:

Բուրման բրոնզե անոթներ, պատրաստված հատուկ կաղապարներում, ձուլման եղանակով, գտնված Հայաստանի տարբեր շրջաններում (1. 5 տասնյակ), պահվում են Հայաստանի պատմության, Եղեգնաձորի և Ղափանի երկրագիտական թանգարաններում:

Խնկարկման անոթները Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս տակավին հնագույն ժամանակներից. Մեծանոր, Թեյշեբախնի (Կարմիր բլուր)⁵: Մեծանորյան բուրանոթն ունի համարյա նույն կերտվածքը, ինչ միջնադարյան օրինակները, բացառյալ ոտք հենակների և Քրիստոսի վարքագրական դրվագների (նկար 1,1):

Ձևով այն գնդաձև, խոր իրանով, դեպի դուրս ուռուցիկ նստուկով բրոնզե ձուլածո անոթ է: Շուրթին չորս տեղով կրում է հիմքում թռչնազարդ (լայն, խաչաձև բացված թևերով, վերադիր) բռնակներ, որոնց ագուցած են մանրահատիկ շղթաները, իսկ շղթաները ագուցված են ի վերին շուշանն (կափարիչը): Շղթաներն իբրև զարդ, ծիսական նշանակ կրում են ցանցկեն բոժոժներ թվով հինգը - (Կուրգան 2-րդ, XII-XI դ. մ.թ.ա.): Ուրարտական խնկամանը սկահակատիպ է և գտնվել է Կարմիր

¹ Սրբազան Պատարագամատոյցք հայոց, Վիեննա, 1879, էջ 98:

² Վ. Հացունի, Պատմութիւն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 141:

³ Ն. Լամբրոնացի, Խորհրդածությունք, էջ 92:

⁴ Վ. Հացունի, Նշվ. աշխ., էջ 354-355:

⁵ **Б. Б. Пяотровский**. Кармир блур, т. 1, Ереван, 1952, с. 23, рис. 8, с. 34, рис. 17.

բլուրի մառաններից մեկում, կավե զոհասեղանի մոտ, աստվածների արձանների հարևանությամբ:

ՀՊԹ մետաղադարանում պահվող միջնադարյան բուրման անոթներից երեքը ծագում են Արցախ աշխարհի նշանավոր վանքերից: Դրանք իրենց գեղարվեստական հարդարանքով և հարուստ պատկերազրույթամբ բացառիկ արժեք են ներկայացնում:

Առաջինը (ՀՊԹ, № 653), գտնված Արցախում Ջրաբերդի եղիշե Առաքյալ կամ Ջրվշտիկ վանքի մոտ, 1899 թ. առաջին անգամ հրատարակել է Գ. Հովսեփյանը¹: Բուրվառն ուռուցիկ իրանով, բարձր նստուկով անոթ է: Պահպանվել են երեք ունկերից երկուսը, որոնցից մեկն ավելացվել է հետագայում: Այն երկաթե օղածն մի բեկոր է և խիստ տարբերվում է իրական եռատերև ձևավորում ունեցող ունկից: Ունկերից ներքև անոթի իրանը գոտևորում են երկու լայն ժապավեններ, որոնցից առաջինը հարդարված է ուղիղ գծի վրա գալարվող ցողունագարդով, իսկ երկրորդը՝ փորագիր, գծաքաշ կիսաշրջաններով (նկար 2,1):

Իրանը հարդարող վարքագրական-ավետարանական պատկերներն են. Ավետունը, Ծնունդը, Սկրտությունը, Խաչելությունը, Խաչից իջեցնելը, Թաղումն ու Հարությունը:

Դրվագները մեկը մյուսից անջատված են թփերով և փոքրիկ դեկորատիվ սյուներով:

Նստուկի հատակին պատկերված է մեկական գնդիկներով ավարտվող քառաթև երկարավուն խաչապատկեր: Չափերն են. բարձրությունը՝ 10.8 սմ, բերանի տրամագիծը՝ 10.2 սմ, նստուկի տրամագիծը՝ 5.2 սմ, իրանի շրջագիծը՝ 35.5 սմ:

Բուրվառներից երկրորդը (ՀՊԹ 766/178) Արցախի Մեծիրանց ա. Հակոբ վանքից է: Մեծիրանցն Արցախի հեղինակավոր ուխտատեղիներից է: Եղել է եպիսկոպոսանիստ, երբեմն էլ կաթողիկոսանիստ, ուսման և դպրության ճանաչված ու համբավավոր կենտրոն²:

Բուրվառի իրանին պատկերված են. Ավետունը, Մարիամի այցը եղիսաբեթին, Ծնունդը, Սկրտությունը, Տեառնընդառաջը, Խաչելությունը:

¹ Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, Երևան, 1982, էջ 11:

² Անատոլի Յակոբյան, Գանձասար, Երևան, 1987, էջ 3:

նը, Խաչից իջեցնելը և Թաղումը: Տեառնընդառաջի պատում-դրվագն առաջին անգամ է հանդիպում մեզ հայտնի նմանօրինակ անոթների վարքագրական պատկերագրական քանդակներում (նկար 2, 3-4):

Անոթն ամենայն հավանականությամբ ունի անիական ծագում, այդ են փաստում բազում աղբյուրները զուտ անիական օրինակների հետ:

Բուրվառներից վերջինը Գանձասարի վանքից է:

Բուրվառն անթերի է կերտվածքում, անխաթար պահպանված և կարող է լիարժեք պատկերացում տալ խնկարկման անոթների ձևաբանական կերտվածքի վերաբերյալ: Պահվում է Ասիրյանների ընտանիքում:

Բուրանոթն ունի կիսազնդածև իրան, շուրթին՝ երեքական իրական եռատերև և դեկորատիվ բլթակավոր ունկեր: Շուրթից ներքև անցնում է լայն ժապավենածև գոտի՝ հարդարված գալարվող ցողունագարդով (բացված խոշոր տերևներ, սահուն շիվեր):

Իրանը նստած է բուրջի ոտքապատվանդանի վրա, որն արտաքուստ ծածկված է փորագիր գծաքաշ խաչապատկերներով:

Նստուկին կրում է փորագիր բազմաթերթ վարդակ: Ուրույն հորինվածք ունեն շղթաները, վերին ազույցներն ու ըմբռնելիքները: Շղթաներն օղակով ազույցված են աստղածև (վեցթևանի) կափարիչին: Կափարիչը զարդարում են աղավնիների քանդակները (երեքը): Ազույցի կենտրոնում տեղադրված օղին ամրացված է գեղաքանդակ օծապատկեր բռնակը, նման վարդապետական օծազուխ գավազաններին: Բռնակի կերպը հավաստում է, որ բուրվառ-խնկանոցը կախվել է սբ. սեղանների վրա, խորանների ճակատային հատվածներում, հատուկ կախիչ-օղերից:

Չափերն են. բարձրությունը՝ 8.5 սմ, ժապավենի լայնությունը՝ 18 սմ, իրանի շրջանագիծը՝ 28 սմ, նստուկի տրամագիծը՝ 4.5 սմ, բերանի տրամագիծը՝ 8.5 սմ (աղյուսակ 1, 2-5):

Արցախյան բուրանոթներից վերջինը գեղակերտ մի խնկաման է (ՀՊԹ, 1265), գտնված 1890-ական թվականներին Վարանդայում¹:

Հետագայում խնկանոցն անցել է մեծամուն բանաստեղծ Հովհան-

¹ **O. Pelka.** Ein Syro-Palätinnesches Räuchergefäß Mitteilungen aus dem Germanischen National Museum. Nürnberg, 1905, s. 85-92, **Ն. Գ. Հակոբյան,** Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ., Գ. հ. հ. 10, պր. III, Երևան, 1981, էջ 39-42, **Ն. Գ. Հակոբյան, Ի. Գ. Ղարիբյան, Գ. Ա. Մելքոնյան,** Միջնադարյան Հայաստանի խնկամանները, Բանբեր Երևանի Համալսարանի, Երևան, 1988, էջ 117-118:

Մես Չովհաննիսյանին: Իրականում խնկանոցը ծագում է Անիից և իրավամբ համարվում է Անիի արհեստագործական դպրոցի փայլուն ստեղծագործություններից, բազում թելերով կապվելով այդ կենտրոնի գեղարվեստական ավանդույթների և գեղագիտական ըմբռնումների հետ: Ճիշտ նույնպիսի մի խնկանոց այժմ պահվում է Գյումրիի քաղաքային թանգարանում (№ 369): Թանգարան է տարվել Մարմաշենի վանքից:

Խնկանոցների շարքում Վարանդայի օրինակը մյուսներից առանձնանում է կերտման կատարելությամբ, զարդածների նրբությամբ, պատկերների արտահայտչականությամբ, թեթև ու սահուն անցումներով, մեղմ զարդածներով: Պահպանված է ունկերից միայն մեկը: Ունկերից ներքև անցնում է իրանը շուրջանակի գրկող զարդագոտին, ծածկված փորագիր բուսական նուրբ գալարներով:

Ուռուցիկ իրանը գեղազարդող տեսարաններն են. Ավետունը, Մարիամի այցը Եղիսաբեթին, Էջքը դժոխք (կամ դժոխքի ավերակունը), «Թովմասի թերհավատությունը», Ծնունդը, երկու տեսարանով՝ Երկրպագություն և Չամբարձուն: Խախտված է վարքագրության հաջորդականությունը: Ըստ Չովհաննեսի ավետարանի այն պետք է զետեղված լիներ խաչելությունից և թաղունից հետո (գլուխ Ի. – 19-29): Ն. Ստեփանյանն այստեղ տեսնում է էջքը և Թովմասի թերհավատությունը, իսկ Ա. Միրզոյանը տեսնում է միայն Թովմասի թերհավատությունը: Երկու դեպքում էլ խախտված է Քրիստոսի վարքագրության դրվագների հաջորդականությունը¹:

Դրվագները մեկը մյուսից բաժանվում են տերևազարդ փարթամ շիվերով: Նստուկը ցածր է, զարդարուն: Այն պատում են փորագիր կետգծերն ու գալարվող ծաղկեշղթան: Արտաքուստ հատակին պատկերված է գահին բազմած Քրիստոսը, ձեռքին՝ գավազան, գլխին՝ լուսապսակ: Անոթի չափերն են՝ բարձրությունը՝ 10 սմ, բերանի տրամագիծը՝ 11 սմ, 5 սմ, նստուկի տրամագիծը՝ 5.7 սմ, իրանի շրջագիծը՝ 30 սմ (նկար 2,2, նկար 3):

Չամանման բուրվառներ և խնկամաններ կան աշխարհի գրեթե բոլոր թանգարաններում (Բեռլին, Նյուրնբերգ, Դրեզդեն, Վիեննա, Լոն-

¹ Alvida Mirzoyan, *Datation en Localisation des encenseurs en Bronze conserve dans les collections Armenienc*, REArm, 23 (1992), 609.

դոն, Կահիրե, Ռիչմոնդ, Նյու Յորք, Սանկտ-Պետերբուրգ, Թբիլիսի և այլն): Այդ թանգարաններում հանգրվանող բոլոր անոթներն էլ բրոնզից են, պատրաստված կաղապարով ձուլելու եղանակով: Ունեն նույն ձևը և կրում են Քրիստոսի վարքը պատկերող նույն դրվագները, որը և հետաքրքրություն է հարուցել: Նրանց ուսումնասիրությամբ զբաղվել են շատերը (Պելկա, դե Ժերֆանիոն, Վուլֆ, Դալտոն, Էլբեռն, Լեկլերկ, Կրամեր, Կոնդակով, Ուվարովա, Ջալեսկայա, մեզանում՝ Գ. Հովսեփյան, Բ. Առաքելյան, Հ. Քյուրոյան, Վ. Աբրահամյան և ուրիշներ):

Ուսումնասիրողների մի մասը (Պելկա, Վուլֆ, Դալտոն, Գ. Հովսեփյան) այդ իրերի հայրենիքը համարում են Ասորիքը, Պաղեստինը և վերագրում են VI-VII դարերին: Օտտո Պելկան բուրվառներից մի քանիսի համար առաջարկում է ավելի ուշ թվագրություն՝ VIII դար, ելնելով այն իրողությունից, որ ժամերգության մեջ դրանց գործածությունը սկսվել է ավելի ուշ:

Վերջինիս համար հիմք է ծառայել վաղ քրիստոնեական (IV-VII դարեր) պատկերագրության ասորա-պաղեստինյան թևի հատուկ մշակած ոճի հարազատությունը քննության ենթակա բուրման անոթների պատկերաքանդակների հետ: Ըստ այդ ոճի՝ Քրիստոսի վարքը պատկերվում է հետևյալ կանոնականացված ձևով.

Ավետում - ձախ կողմում Մարիամն՝ դիմացը՝ արարչի պատգամաբերը՝ ձախ ձեռքին՝ գավազանը, աջը՝ մեկնած դեպի կույսը: Գավազանի գործածությունը քրիստոնեական արվեստում հանդես է գալիս շատ հին ժամանակներից, սկսած IV դարից: Անոթների վրա այն պատկերված է արխայիկ ոճով, առանց խաչի և կլոր գնդի: Երկրորդ տեսարանը Մարիամի այցն է Եղիսաբեթին:

Ծնունդ - Վաղ քրիստոնեական պատկերագրությունը մշակել է ծննդյան տեսարանում Տիրամոր դիրքի երկու տարբերակ: Մեր անոթների վրա նա պատկերված է դեմքով շուռ եկած դեպի դիտողը, գլուխը հեռացած ձեռքին, մյուս ձեռքը հպած կրծքին: Ծննդյան երկրորդ տեսարանը երկրպագությունն է:



1



2



3



4



5

Նկար 1



1



2



3



4

Նկար 2



1



2



3



4

Նկար 3

Սկրտություն - Գետի ալիքների մեջ նստած է Քրիստոսը, կողքին Հովհաննես Սկրտիչն է, որը փոփ ջուր է լցնում Քրիստոսի գլխին: Գլխավերևում աղավնու կերպարանքն է՝ Աստծո լույսն ու ավետաբերը:

Խաչելություն- Քրիստոնեական արվեստում Քրիստոսի պատկերագրության վաղ շրջանում մշակվել էր Հիսուսի խաչելությունը պատկերող երկու ոճ: Առաջինը Մոնցայի յուղաշերտի ոճն է: Դրանք կապարե գնդաձև իրանով, կարճ վզով անոթներ են՝ տարված Երուսաղեմից: Պահվում են Մոնցայի թանգարանում: Պատկանում են VI դարի կեսերին:

Երկրորդ և ավելի տիրապետող ոճը ավետարանականն է, որտեղ Քրիստոսը պատկերված է փայտի վրա խաչված, բաց աչքերով, խաղաղ դեմքով, առանց ցավի արտահայտության, շրջապատին անհաղորդ: Քրիստոսի աջ և ձախ կողմերում նրա հետ խաչված երկու ավազակների գլուխներն են:

Խաչելությանը հաջորդում է Խաչից իջեցնելու և թաղելու տեսարանը: Վերջինը Քրիստոսի համբարձման տեսարանն է, որը խնդրո առարկա անոթներից միայն երկուսի վրա է հանդիպում (ՀՊԹ՝ 1265 և Գլաժոր):

Արխայիկ ձևերը նկատի ունենալով՝ ուսումնասիրողները անտեսել են մի շարք կարևոր մանրամասներ: Բուրվառներն ու խնկամաններն իրենց ձևով հեռանում են VI-VII դարերից: Այդ դարերի կիրառական՝ աշխարհիկ, թե հոգևոր սպասքում բացակայում են նման օրինակները: Մինչդեռ XI-XII-րդ դարերում զանգվածաբար հանդես են գալիս նույն ձևի և ոճի հախճապակե և ջնարակած քրեղաններ, թասեր (Դվին, Փայտակարան-Օրան-կալա, Վրաստան, Իրան): Կրամերը Գլոստերից (Սպիտակ վանք, Եգիպտոս) գտնված օրինակից (պահպանվում է Կահիրեի Ղպտական արվեստի թանգարանում) ելնելով՝ այդ բուրվառները վերագրում է XII-րդ դարին: Էսսենի և Ցյուրիխի կատալոգներում Կահիրեի նմուշները թվագրված են IX-րդ դարով, իսկ փարիզյան զուգահեռները՝ XIII դարով: Այս թվագրումը չի հիմնավորվում:

Ինչ վերաբերում է խնկանոթների կենտրոններին, ուսումնասիրողների մի մասը ընդունում է դրանց զուտ ասորա-պաղեստինյան ծագումը, մյուս մասը տեսնում է արևմտա-ռոմանական աղբյուրներ, և առաջարկում նոր կենտրոններ: Նրանք համամիտ են միայն մի հարցում, որ այդ անոթները զուտ քրիստոնեական աշխարհի արգասիք են:

խնկանոթները տարբեր են և պատրաստման տեխնիկական հնարներով: Չուլածո են, ձուլվել են հատուկ կաղապարներում, ապա փորագրվել են բուսական և երկրաչափական զարդերը՝ գալարագծերով և կետ գծերով ծածկված հենքի¹ վրա: Վերջինս մետաղե իրերի փորագրության մեջ կիրառություն է գտել հետասասանյան շրջանում և VI-VII դդ. ոչ բյուզանդական, ոչ սիրիական ու սասանյան հուշարձաններում չի հանդիպում:

Անոթների վերին զարդաժապավեններն ու ոտք-պատվանդանները հարդարված են գալարներով կամ գալարվող ցողունազարդով, որոնք արևելյան զարդարվեստում (ղպտական, արաբական, պարսկական, հայկական, վրացական և այլն) հանդես են գալիս սկսած IX-րդ դարից²:

Երկրորդ կարևոր խնդիրը Հայաստանում գտնված խնկամանների պատրաստման կենտրոնի հարցն է: Ուսումնասիրողներից Գ. Հովսեփյանը և Յ. Քյուրտյանը, հենվելով նրանց պատկերագրական ոճի, ռելիեֆ պատկերների (դրվագների) հաջորդականության ու բովանդակության վրա, հայտնում են այն տեսակետը, թե այդ անոթներն ունեն ստորապաղեստինյան ծագում և Հայաստան են բերվել Ասորիքից ու Պաղեստինից:

Ի մի բերելով անոթները հարդարող Քրիստոսի վարքագրական դրվագները կարելի է եզրակացնել, թե Հայաստանում (Արցախում) գտնված խնկարկման անոթները հարդարող դրվագների թիվը երբեք չի անցնում յոթից, միայն երկու դեպքում է այն վեց, մի դեպքում էլ ինը: Մինչդեռ Ասորիքից, Պաղեստինից, Եգիպտոսից, Կիպրոսից, Կ. Պոլսից, Դրիմից, Վրաստանից (Սվանեթիա), Միջին Ասիայից և այլ վայրերից հայտնաբերվածների վրա (հիմնականում պատահական) դրանց թիվը վեցից տասնմեկն է: Այս իրողությունը կարևոր է այն առումով, որ հնարավորություն է տալիս որոշելու բուրման անոթների ծագման կենտրոնի հարցը:

Սակայն ինչպես վերը նշեցինք, հայաստանյան օրինակներում այդ դրվագների թիվն ու հաջորդականությունն այնքան կանոնիկ և պահպանողական է, որ դուրս է գալիս վերը նշած երկրների շրջանակներից:

¹ **Б. И. Маршак.** Бронзовый кувшин из Самарканда, вып. Средняя Азия и Иран. Ленинград, 1972, с. 65.

² **В. И. Залеская,** К вопросу о датировке некоторых групп сирийских культовых предметов. Палестинский сборник вып. 23, Ленинград, 1971, с. 86.

Հայաստանյան հավաքածուն ոչ միայն մեծաքանակ է, այլև ունի լայն աշխարհագրություն, Անի, Աղթամար, Եղեգնաձոր, Ղափան (Սյունիք), Արցախ և այլն:

Անոթները ծուլվել են Հայաստանում և կրում են զանգվածային արտադրության դրոշմ: Պատկերները (հատկապես Տիրամոր, Յուդաբեր կանանց և հրեշտակների) պատկերագրական ոճով անմիջականորեն առնչվում են X-XIII-րդ դարերի հայ քրիստոնեական արվեստի այնպիսի մոուլդների հետ, ինչպիսիք են Սուղնիի, Տրապիզոնի, Վասպուրականի (1045 թ., XII դ., ձեռ. 4753, գրիչ Վարդան), Թարգմանչաց (Գանձակ, Թարգմանչաց վանք, 1232 թ.) ավետարանները Սկևռայի և Խոտակերաց ս. Նշանի մասանց պահարանները, Բղենո Նորավանքի (IX-XI դդ.) եկեղեցու զարդաքանդակները:

Խնկամանները ու բուրվամներն իբրև զարդ կրում են խաչպատկերներ, որոնք ոճով և ձևով չեն աղերսվում ոչ բուզանդական և ոչ էլ ասորա-պաղեստինյան խաչերի ձևերին: Խաչպատկերները ինքնատիպ են XI-XIII-րդ դարերին բնորոշ ներգծված ոճով և ունեն իրենց բազմաթիվ զուգահեռները Հայաստանի ճարտարապետական հուշարձաններում (Սանահին, Հաղպատ, Անբերդ և այլն): Թեև մարդկային պատկերները անոթների վրա կանոնիկ են, բայց նրանցից յուրաքանչյուրում մարմնավորված է կոնկրետ անձը՝ իր ապրած միջավայրով ու ազգային դիմապատկերով, հարդարմամբ՝ երկար դարձածալեր ունեցող զգեստներով, զարդարված եղևնազարդով, կարճ, մինչև ծնկերը հասնող հյուսածո բարակ գոտիներով գոտևորվող հանդերձներով, փակեղով ու գլխանոցով, որոնք իր տարբերություն սիրականի և բյուզանդականի, ճակատների վրա հարդարված են մանր ծալքերով, սրածայր վեղար հիշեցնող գլխարկներով: Գիշտ է նմանօրինակ զգեստները ծագում են Սիրիայից և ղպտական աշխարհից, սակայն դարավոր հարևանության ընթացքում դրանք տեղայնացվել, փոփոխվել են, լրացվել նոր տարրերով, հարդարման նոր միջոցներով, բնորոշ հայկական միջավայրին: Այդ են հավաստում նաև X-XI-րդ դարերի ձեռագիր մատյաններից շատերը, որոնց մանրանկարներում հաճախ կարելի է նման հանդերձներ տեսնել¹: Վերջապես այդ անոթները հայտնի են այնպիսի հուշարձաններից, որոնց գոյությունը V-VII դդ. բացառվում է (Ախթամար, Անի, Արցախ,

¹ Լ. Բ. Չուգասյան, Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986, էջ 49:

Գանձասար, Սյունիք, Վայոց ձոր) և դրանք չէին կարող ավելի վաղ լինել (անգամ հարյուրամյակներ) քան իրենք կոնկրետ հուշարձանները:

Արցախյան բուրվառների և խնկանոցի քննությունից հետևում է, որ այդ անոթներն ունեն հայկական ծագում և վերաբերում են X-XIII դարերին: Կարծում ենք, որ վերոհիշյալ անոթները պատրաստվել են Անիում և Տաթևում:

ՀՐԱՎԱՐԴ ՀԱԿՈՐՅԱՆ
Մաշտոցի անվան Մատենադարան

ԱՐՑԱՆԻ ՁԵՆԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

Որքան էլ տարօրինակ թվա, իրողությունն է այն, որ Արցախի մանրանկարչության մասին, որպես ուրույն մի դպրոցի, մինչև 1980-ականների վերջը լրիվ պատկերացում չի եղել: Գրականության մեջ շրջանառվել է ընդամենը մեկ-երկու ձեռագիր. «Վախթանգ Տանգիկի ավետարանը» 1212 թվականից, ապա՝ «Խորանաշատի 1224 թ. ավետարանը» և, վերջապես Մատ. № 155 Նոր կտակարանի մասունքից ուշադրություն է գրավել պատանի իշխան Վախթանգի հետաքրքրական դիմանկարը: Այսքանը:

1980-ականների կեսերին մեզ հանձնարարվեց զբաղվել հայոց հնամենի այդ երկրամասի մատենական մշակույթով ու նկարչությամբ: Արդյունքներն անսպասելի էին. լույս աշխարհ եկան մի մեծ խումբ առաջնակարգ մատյաններ: Այսօր չես ուզում համակերպվել այն մտքի հետ, թե ինչպես երկար ժամանակ խոսվել է հայկական մանրանկարչության ամբողջականության մասին, առանց այդ կոթողներին ծանոթ լինելու:

Ուսումնասիրությունների շնորհիվ հայտնի դարձան մեկ տասնյակից ավելի գրչության խոշոր կենտրոններ, որտեղ ընդօրինակված ձեռագրերի թիվը հարյուրների է հասնում. մշամավոր կենտրոններից մեկը Հայոց Արևելից կողմանց կաթողիկոսանիստ Գանձասարն էր: XIII դ. կեսերին Վանական վարդապետի ջանքերով հիմնադրվում է Խորանաշատի գրչության կենտրոնը: Այնուհետև՝ Թարգմանչաց վանքը, Երից Մանկանց վանքը, Ծարի սուրբ Աստվածածինը կամ Գետամիջի վանքը, Գանձակը, Ամարասը, Գոչավանքը, Թեղասեր և այլն:

Այդ նույն շրջանում էլ ձևավորվում է Արցախի մանրանկարչության ուրույն դպրոցը՝ իր գործունեությունը շարունակելով մինչև XV դարի կեսը: Ըստ էության, արդեն Կիլիկիայի, Սյունիքի (Գլածոր և Տաթև),

Բարձր Հայքի, Վասպուրականի, Պոլսի և Ղրիմի հետ միասին գիտական շրջանառության մեջ մտավ նաև մի նոր կենտրոն՝ Արցախի մանրակարգական դպրոցը:

Արցախի նկարագարդ ձեռագրերը բաժանվում են երկու շրջանի. XII դ. վերջ և XIII դ. սկիզբ, ապա՝ XIII դ. վերջ և XIV դ. առաջին կես: Ժամանակի գործոնից բացի դրանք զանազանվում են ոճապատկերային առանձնահատկություններով:

Անկեղծորեն ասած համամիտ չեն եղել մեր մի քանի երախտավորների հետ (Դուրնովո, Դրամբյան, Իզմայլովա), որոնք, հատկապես Կիլիկիայի մանրանկարչության կապակցությամբ, օգտագործել են «պալատական-արիստոկրատական» տերմինը: Սակայն Վախթանգ Տանգիլի, Ջաջուռ Խաղբակյանի դուստր Վանենու պատվիրած Խորանաշատի, Ունեկի որդի Վախթանգին պատկանող վերոհիշյալ մատյանները, իրոք, արքայական են ամեն ինչով՝ պատվիրատուների իշխանական դասը, բարձրորակ մագաղաթը, գունապնակի հարստությունը, ոսկու շռայլ օգտագործումը, արտակարգ ճոխ ձևավորումը և, իհարկե, կատարման անթերի վարպետությունը: Հազվադեպ կարելի է հանդիպել միջնադարյան քրիստոնեական մտածողության և դրան համահունչ գեղագիտական պատկերացումների մարմնավորման նման դաշնության: Ի դեպ, իրավացի են եղել մեր արվեստագիտության մեծերը, երբ, հայկական մանրանկարչության բովանդակ դաշտում արվեստի վերոհիշյալ արժեքների ցուցադրման համար որպես լավագույն նմուշներ, առաջարկել են արցախյան վերոհիշյալ ձեռագրերը: Լիդյա Դուրնովոն գրել է. ««Խորանաշատի» ավետարանի նկարիչը բացառիկ ճաշակի ու նախասիրությունների տեր անհատականություն է. նայելով նրա աշխատանքներն զգում ես և՛ Կիլիկյան ձեռագրերի կատարյալ վարպետությունը, նրբացված գույները և՛, միաժամանակ, բուն արևելյան Հայաստանի արվեստի կուռ ու մոնումենտալ բնույթը: Հոգեկան խոր ապրումների, ասկետիզմի ու ապաշխարանքի, միաժամանակ բարության տրամադրությամբ ես ներշնչվում՝ ծանոթանալով Մատ. № 378 ձեռագրի թեմատիկ պատկերներին: «Աստվածամայրը մանկան հետ» և առաքյալների դիմանկարները գամում են դիտողին՝ նրան մտովի տեղափոխելով հայկական վաղ միջնադարյան կերպարվեստի գլուխգործոցները - Լմբատավանքի VII դ. որմնանկարներն ու «Շուղրութի 979 թ. ավետարանի» նկարները: Այդպես հազվադեպ է լինում»:

Հայկական մանրանկարչության և ոչ մի դպրոցում չես հանդիպի այնպիսի անսպասելի մտահղացումներ, պատկերագրական միանգամայն ուրույն ձևեր և դրանց հետ մեկտեղ՝ աչք շոյող կատարողական հմայք, գրավչություն, ինչպիսիք կան XIII դ. վերջի և XIV դարի սկզբի արցախյան մատյաններում: Այստեղ մեզանում առաջին անգամ ավետաբեր հրեշտակը աստվածային լուրը կույսին հաղորդում է սրինգ հնչեցնելով: «Տյամընդառաջում» 40 օրական Հիսուսը իր ոտքով է մոտենում Սիմեոն ծերունուն. աստվածային հրաշք: Ղազարոսի հարության տեսարանում կադրերի հաջորդականությամբ է ներկայացվում գերեզմանից հանգուցյալի դուրս գալու և Քրիստոսին մոտենալու պահը: Իսկ № 316 ձեռագրի «Խորհրդավոր ընթրիք»-ի հորինվածքը, որքան մեզ հայտնի է, եզակի նմուշ է ողջ քրիստոնեական միջնադարում: Ընթրիքի լրիվ շրջանաձև խաչագարդ սեղանի շուրջ տեղավորված են 12 լուսապսակներ, որոնց ներսում առաքյալների միայն գլուխներն են: Նրանց միանման զարմացած հայացքներն ուղղված են ձախում մատած Հիսուսին: Ի պատասխան Տիրոջ «Ձեզնից մեկը մատնելու է ինձ» գուշակությանը, առաքյալների ռիթմիկ հայացքները կարծես հարցնում են. «Ո՞վ է Տեր»:

Երբ 1988-ին այդ սքանչելի մատյանը ցուցադրվում էր Վենետիկի Դոժեի պալատում, և՛ իտալացիները և՛ թե եվրոպական երկրներից եկած հազարավոր այցելուներ նայելով դրան՝ ապշած ու զարմացած խորհում էին, թե ինչպես է հեռավոր Հայաստանում ստեղծվել նման հանճարեղ գործ:

XIII-XIV դարերի մանրանկարների գրավչությունը մեծապես պայմանավորվում է իրար լրացնող մեղմ տոների ակնահաճո գունաշարով: Կերպարներն ասես պարուրված են արծաթավարդագույն թափանցիկ քողով, որի տակից վայելչորեն շողում են զմրուխտյա կանաչը, երկնագույնը ու ոսկեգօծ մարնջամանուշակագույնը: Դրանք ունեն հոգի լուսավորող ազնիվ մի փայլ, որը մեղմում, կարծես հաշտեցնում է հավատացյալ մարդու և աշխարհի միջև եղած հակադրությունը, լավատեսական երանգ մտցնում:

Արցախյան գրչության և մատենական նկարչության նման աննախադեպ վերելքը բնականոն երևույթ էր: Տեղական մշակութային հարուստ ավանդույթներին ավելանում էր Արցախի իշխանական և հոգևոր դասի անսահման սերն ու նվիրումը արվեստի և, առաջին հերթին,

ծեռագիր մատյանների նկատմամբ: Դրանք բարձր ճաշակի և լայն իմացությունների արդյունք էին: Հայոց Արևելից կողմանք քաջ իշխաններն ու զորականները տարբեր առիթներով, երբեմն նույնիսկ իշխողների ռազմական խմբերի կազմում, լինելով Հայաստանի և կից երկրների հեռավոր անկյուններում պատերազմի թոհ ու բոհի մեջ ամեն կերպ, երբեմն ուժով, երբեմն փրկագնով ազատում էին հայկական ծեռագրերը գերությունից և բերում իրենց պատմական հայրենիքը:

Ահա այդպես, նաև այլ պարագաների բերումով, Արցախում հավաքվեցին մի մեծ խումբ մշակավոր մատյաններ: Դրանք, տեղում ստեղծված հուշարձանների հետ միասին, կազմեցին հայկական նկարագրի մատյանների եզակի ու աննման մի բույլ. հիշենք առավել կարևորները.

1. Մեծ Շեն գյուղի 909 թ. ավետարանը
2. Բանանցի Ծեր ավետարանը (X դ.)
3. Վեհափառի IX-X դդ. ավետարանը
4. Դիզակ գավառի Ցոր գյուղի 1040 թ. ավետարանը
5. «Բեգյունց» կոչվող ավետարանը (X - XI դ.)
6. Գանձակի ս. Յովհաննես եկեղեցու XI դ. ավետարանը
7. «Գյուլխտանի» կարմիր ավետարանը (XI դ.)
8. Հռոմկլայում 1166 թ. ընդօրինակված ավետարանը:

Ի դեպ, այստեղ չափազանց հետաքրքրական հիշատակագրություն կա, որը հավաստում է Արցախի իշխանների մշակութամասատ գործունեությունը. «... ես՝ Գրիգոր, որդի Հասանայ և Դովին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց՝ Ջաքարիայի և Իւանեի... զաւետարանն և զաջն սրբոյն Ստեփանոս, զոր ի քաղաքէն Կարնու բերաք ի և տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս»: Ահա այդ ընտիր ծեռագիրը ևս, «Բենգյանց» ավետարանի նման, բերվել է Արևմտյան Հայաստանից:

9. Հայկական մանրանկարչության գլուխգործոցներից մեկը՝ Հաղպատի 1211 թ. ընդօրինակված ավետարանը՝ հայ մատենական նկարչության մեջ աշխարհիկ հետաքրքրությունների արտահայտման երախայրիքը. նկարագարողումից 12 տարի անց տեղափոխվել է պատմական Արցախ և դարձել Գետաշեն գյուղի եկեղեցու սեփականությունը:

10. Բարձր Հայքից դեռևս XIII դարում Արցախ է բերվել «Թարգմանչաց» աշխարհահռչակ ավետարանը (1232 թ.), դառնալով Խաղարի

կամ Խաթրա վանքի սեփականությունը: Ենթադրվում է, որ այս ձեռագիրն էլ Դուփի որդի Գրիգորը 1243 թ. բերած լինի Արցախ:

11. Արցախ-Ուտիքի մշակութային միաջավայրում է հանգրվանել Չիկագոյի (ԱՄՆ) համալսարանի մատենադարանի № 949 (XIII դ.) հոյակապ ավետարանը, որի հիշատակարանում կարդում ենք. «Մեք՝ Գրիգոր և Վարդան հարազատք տրուպ և նուաստ քահանայք, ըստ ձեւ տեսակի կրանաւորք գոլով, ստացաք զընդիրս առաւել քան զամենայն ինչս պատուականս ձեռաց մարդկան ձգտելոց՝ զսուրբ Աւետարանս, բազում խերելեշիւք ըստ կարեաց մերում, յորս ենք տեղեակալ ի գլուխ սահմանց Խաչենոյ, ի սուրբ ուխտէն գանձասար մենաստանէ... »:

Կարելի է ձեռագրերի այս թիվը շարունակել, սակայն բերված օրինակներն էլ բավական են համոզվելու, որ XII-XIII դարերից սկսած քաղաքական ծանր պայմանների հետևանքով աշխարհով մեկ սփռված հայկական ձեռագրերի մի մասը փրկվել են արցախցիների շնորհիվ:

Իրոք, Հայաստանի ոչ մի կենտրոնում, ոչ մի ժամանակաշրջանում մնան արժեքների կուտակում չի եղել: Մեր ազգային հպարտությունը կազմող այդ հուշարձանների գոյատևումը մեծապես պայմանավորվել է Արցախի հավատացյալ ժողովրդի, խիզախ իշխանների ու հոգևոր դասի ազգանվեր ջանքերի շնորհիվ:

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՆԱԴՅՈՒՄՈՒԹՅԱՆ ԳՐԱՌՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

19-րդ դարը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց ազգային ինքնագիտակցության ու ինքնահաստատման զարթոնքով, որն իր հերթին պայմանավորված էր Եվրոպայում ընթացող տնտեսական, քաղաքական-հասարակական կյանքի նոր զարգացումներով: Այդ նոր պայմաններում ժողովուրդները ձգտում էին հրապարակի վրա դնել իրենց հոգևոր ու մտավոր արժեքները, հաստատությունները, ապացուցելու, հաստատելու իրենց ինքնությունը, ազատ ապրելու իրավունքը: Ժողովրդական բանահյուսությունը այդ արժեքների շարքում կարևոր նշանակություն ուներ և իմաստավորվում էր այդ առումով:

Հայ իրականության մեջ, մասնավորապես Արևելյան Հայաստանում, ժողովրդական բանահյուսության հանդեպ գիտակցված վերաբերմունքը սկսվել է Խ. Աբովյանից: 19-րդ դարի երկրորդ կեսին հետաքրքրությունը ժողովրդական հոգևոր արժեքների, բանարվեստի նկատմամբ ընդունում է համազգային բնույթ: Հասարակական լայն շրջանները սկսում են հետամուտ լինել, գրի առնել ու լույս աշխարհի հանել բանարվեստի տարբեր ժանրերի ստեղծագործություններ: Համազգային հոսանքի մեջ էր նաև այնպիսի մի ինքնատիպ ազգագրական շրջան, ինչպիսին Ղարաբաղն է:

Նախապես փորձել ենք որոշ փուլեր սահմանել գրառման և հրատարակման պատմության մեջ: Սակայն այդ սահմանումը միանգամայն պայմանական է, պարզապես հնարավորինս պահպանել ենք ժամանակագրական հաջորդականությունը:

Ղարաբաղի բանահյուսության գրառման պատմությունը սկսվում է 1860 թ.: 1860-ի մայիս-օգոստոս ամիսներին Ղարաբաղի վարչական ու հոգևոր կենտրոն Շուշիում Ալեքսան, Առաքել և Գրիգոր Բահաթրյան-

ները քաղաքի և մերձակա գյուղերի բնակիչներից գրի են առնում հեքիաթներ, գրույցներ, զվարճախոսություններ, ջանգյուլունի երգեր՝ խաղիկներ, ազգագրական նյութեր, ինչպես օրինակ՝ վիճակահանության ծիսական արարողությունը, որը տեղացիներն անվանում են «խնդունի տալ» և այլն: Բահաթրյանների գրառումները ոչ միայն ամենահին են Ղարաբաղում, այլև հայ ժողովրդական հեքիաթների ամենավաղ հայտնի գրառումներն են ընդհանրապես: Այդ առումով նրանք ունեն բացառիկ արժեք ու կարևորություն, թեև ասացողների և գրառման հանգամանքների վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են:

1881 - 1882 թթ. արդեն նշանավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանը Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս, արձագանքելով բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի՝ հայ ժողովրդի հոգևոր արժեքները փրկելու կոչին, նրան է հանձնում Բահաթրյանների ձեռագիր հավաքածուն: Տ. Նավասարդյանը Բահաթրյանների գրառած հեքիաթների մի մասը լույս է ընծայում¹: Հեքիաթները լրիվ, թվով 61 միավոր, հրատարակվում են Հայ ժովրդական հեքիաթների գիտական հրատարակության VI հատորում²: Նույն հատորում զետեղված են նաև նրանց գրառած զվարճախոսությունները:

Բահաթրյանների ձեռագիր հավաքածուն³, այդ թվում նաև 1869 թ. նոյեմբերին Մոսկվայից ուղարկած երկու հեքիաթներ, գրի առած Շուշիի խոսվածքով, Հարություն Թավրիզյանի կողմից, գտնվում է Հայաստանի ազգային արխիվում⁴:

Տ. Նավասարդյանի կոչին արձագանքում է նաև գյուղական ուսուցիչ Միքայել Տեր-Յովհաննիսյանը: Իր հայրենի Վարանդայի Նորշեն գյուղում 1881 թ. փետրվար-մայիս ամիսներին նա գրի է առնում և ուղարկում հրատարակիչ Տ. Նազարյանին ավանդական բանահյուսության մի գողտրիկ փունջ՝ երգեր, մանկական խաղիկներ, հեքիաթ, վիպական մանր ժանրերի նմուշներ, բարբառային բառերի բացատրական բառարան (ազգագրական բովանդակությամբ): Նրա հավաքածուն լույս

¹ Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիտ. հրատ., պր. IX, Թիֆլիս, 1902, պր. X, Թիֆլիս, 1903:

² Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, գիտական հրատ., Երևան, 1973:

³ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 484:

⁴ ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 1, թթ. 298, 308:

է տեսել մասամբ¹, պահվում է Հայաստանի ազգային արխիվի Տ. Նավասարդյանի ֆոնդում²:

1883 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Սակար եպիսկոպոս Բարխուդարյանի Պըլը Պուղի ժողովածուն: Այն կազմված է նրա կողմից գրառած Ղարաբաղի հայության բանահյուսական կենցաղում ամենասիրված ու լայն տարածում գտած ժողովրդական զվարճախոս Պըլը Պուղու վերաբերյալ ստեղծված բանահյուսության նմուշներից: Մ. Բարխուդարյանը ծնունդով Ղարաբաղի Խանածախ գյուղից էր: Հետամուտ իր պատմագիտական նախասիրություններին, նա շրջել է Ղարաբաղում՝ պատմական Արցախում և գրի առել կիսավիպական, կիսապատմական հերոսին առնչվող բազմաթիվ զրույցներ և ապա լույս ընծայել նրա մասին կենսագրական տեղեկություններով, բարբառի մասին քերականական գիտելիքներով հանդերձ: Այդ ժողովածուով Մ. Բարխուդարյանի բանահավաքչական գործունեությունը չի ավարտվում: 1898 թ. լույս է տեսնում նրա «Բարոյական առածներ» ժողովածուն³, իսկ նրա պատմագիտական աշխատությունների էջերում բազմաթիվ զրույցներ ու ավանդություններ են սփռված, որ նա գրի է առել իր շրջագայությունների ընթացքում⁴:

Ղարաբաղի բանահյուսության մի շարք նյութեր են տեղ գտել Ռուսաստանի ժողովրդական կրթության նախարարության հանդեսում⁵: Թեև ռուսերեն թարգմանված, բայց նրանք վկայում են մի շարք բանահյուսական իրողությունների գոյությունը ազգագրական շրջանում:

19 -րդ դարի 80 -ականներին Շուշիի հասարակական կյանքը համակված էր ազգային ինքնագիտակցության գաղափարներով, կրթական, մշակութային մթնոլորտի դրական զարգացումներով: Պատահական չէր անվանի հայագետ, այն ժամանակ Շուշիի թեմականի ուսուցիչ Մանուկ Աբեղյանի գրի առած ազգային հերոսավեպի երկրորդ պատումի

¹ Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, պր. VI, էջ 32 - 33, Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, էջ 175 - 176:

² ՀԱԱ, ֆ. 484, ց. 1, գ. 7, թթ. 27 - 61:

³ Բարոյական առածներ, Հավաքագրեց ուստա Վևորգ Բարխուտարյանց, Տիֆլիս, 1898:

⁴ Մ. Բարխուտարյան, Արցախ, Բագու, 1898:

⁵ Сборник материалов для описания местностей и племен Кавказа, кн. кн. VI, VII, XIII, XIX, XXIV, Тифлис, 1888 - 1898.

հրատարակությունը Շուշիում¹: Մինչ տպագրությունը Աբեղյանը վեպն ընթերցել էր Շուշվա հասարակության կազմակերպած գրական երեկոներին²:

Չափազանց ուշագրավ և ոչ պատահական փաստ է հայ ժողովրդագիտական առաջին հանդեսի հիմնադրումը Շուշիում: Եվրոպայում բարձրագույն կրթություն ստացած, ծագումով ղարաբաղցի երվանդ Լալայանի ջանքերով 1896 թ. լույս է տեսնում «Ազգագրական հանդեսի» առաջին համարը: Այնուհետև հանդեսի հրատարակությունը փոխադրվում է Թիֆլիս, սակայն Ղարաբաղը մնում է «Հանդեսի» ուշադրության կենտրոնում: «Հանդեսի» Բ գրքում հրատարակվում է Ղարաբաղի Վարանդա գավառին մվիրված ազգագրական-բանահյուսական աշխատությունը, որի որոշ բաժինների վերաբերյալ նյութերը գրի է առել Երվ. Լալայանը, առանձին բաժինների համար խմբագրին նյութեր են տրամադրել նաև Լ. Աթաբեկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Յ. Տեր-Հովհաննիսյանը³ և այլք: Հետագայում «Վարանդան» վերահրատարակվում է Երվ. Լալայանի երկերի երկրորդ հատորում (1988 թ.)⁴:

Ղարաբաղի ժողովրդական բանահյուսության գրառման և տպագրության գործում իրենց լուծման են ներդրել Խաչիկ Ժայրագույն վարդապետ և Արամ Դադյանները: Դադյան եղբայրները սերում են Վարանդայի Թաղավարո գյուղից: Խաչիկ վարդապետը հոգևոր պաշտոններ է վարել Ղարաբաղում: Այնուհետև 19-րդ դարի 90-ականներին Դադյանները տեղափոխվել են Եջմիածին: Խաչիկ վարդապետը հայտնի է իբրև Ջվարթնոց տաճարի առաջին պեղող և այդ ասպարեզում նրա ծառայությունն անգնահատելի է: Դադյան եղբայրները Ղարաբաղում գրառել են բանահյուսական տարբեր ժանրերի՝ երգերի, հեքիաթների, ջանգյուլումի՝ խաղիկների հետաքրքիր նմուշներ, որոնք տպագրվել են մասամբ: Խ. Դադյանի ծիսական երգերի մի փունջ տպագրվել է «Արարատ» ամսագրում⁵, իսկ Արամ Դադյանի գրառած ջանգյուլումի՝ վիճակի երգերի ստվարաթիվ հավաքածուն, ուշագրավ բառարանով հանդերձ՝ «Ազգա-

¹ Դավիթ և Միեր (ժողովրդական դյուցազնական վեպ), Շուշի, 1889:

² Ս. Դարությունյան, Մանուկ Աբեղյան, Երևան, 1970, էջ 30:

³ Ազգագրական հանդես, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 5 - 243:

⁴ Ե. Լալայան, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, 1988:

⁵ «Արարատ» ամսագիր, 1895, № 12, էջ 469 - 471:

գրական հանդեսում»¹: Խ. Դադյանի ձեռագիր ժառանգությունը, այլ ազգագրական շրջաններից հավաքած նյութերի հետ պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 319), իսկ Արամ Դադյանի գրի առած ղարաբաղյան հեքիաթները՝ ձեռագիր վիճակում՝ Հայաստանի ժողատեղծագործության գիտամեթոդական կենտրոնում:

Ղարաբաղի բանահյուսության գրառաման ու հրատարակման պատմության հաջորդ փուլը առնչվում է Կոստանդին Մելիք-Շահնազարյանի, առավելապես ծանոթ Տմբլաչի Խաչան կեղծանունով, Սարգիս Իսրայելյանի և Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի գործունեության հետ:

4. Մելիք-Շահնազարյանը բնիկ շուշեցի է: Նրա հայացքների ձևավորումն ու գործունեությունը ընթանում է այն ժամանակաշրջանում, երբ հայկական հասարակական կյանքի կենտրոնում հայ ժողովրդական հոգևոր մշակույթի արժեքների կորստից փրկելու մտահոգությունն էր: 80-ականին իր գրառած նյութերը նա վարպետորեն օգտագործում է իր իսկ հեղինակած բարբառագիր ֆելիետոններում²: Այնուհետև եվրոպայում բարձրագույն գյուղատնտեսական կրթություն ստանալով և վերադառնալով հայրենի երկիր, նա շարունակում է բանահավաքչությունը: Նրա ձեռագիր հավաքածոն գտնվում է ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում և մասամբ՝ երկու հեքիաթ և վիպական մանր ժանրերի նմուշներ հրատարակվել են³:

Բանահավաքչական բեղուն գործունեություն է ունեցել Սարգիս Իսրայելյանը: Նա ծնվել ու մեծացել է Վարանդայի Նախիջևանիկ գյուղում, նահապետական, ազգային ավանդներին խստորեն հետամուտ գյուղացու ընտանիքում: Նրանց գերդաստանը գյուղում հայտնի էր Պիծի Ասրունց անվամբ: Ս. Իսրայելյանը ողջ կյանքը նվիրել է մանկավարժությանը, մի հանգամանք, որը նպաստել է նրա անմիջական շփումներին ժողովրդի հետ, զուգահեռաբար բանահավաքչությամբ

¹ Վարանդայի ժողովրդական բանահյուսությունից, «Ազգագրական հանդես», գգ. XVII - XIX, Թիֆլիս, 1908 - 1910:

² Կ. Մելիք-Շահնազարյան, «Ձուռնա Տմբլա», Ղըլըցի կնանոց պենը փեշակը, Շուշի, 1882:

³ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, էջ 91 - 94, 613 - 618, «Համդես ամսօրյա», Վիեննա, 1928, էջ 552 - 559, 1930, էջ 359 - 362:

զբաղվելուն: Ս. Իսրայելյանը թողել է բանահյուսական բազմաժանր հավաքածո՝ հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ, ավանդու-թյուններ և այլն: Նրա գրառումներն ընդգրկում են մոտ կեսդարյա ժա-մանակաշրջան՝ 20-րդ դարի 10-40-ական թթ.: Նրա գրառած հեքիաթ-ները՝ 23 սյուժե, լույս են տեսել Հայ ժողովրդական հեքիաթների գիտա-կան հրատարակչության VI հատորում¹, իսկ Պըլը Պուղուն նվիրված զվարճախոսություններն՝ առանձին գրքով, որոնք՝ ժողովրդական ճար-տարապետ, մեծանուն Ռաֆայել Իսրայելյանի նկարներով²: Ս. Իսրայել-յանի ձեռագիր հավաքածոն նույնպես գտնվում է Հնագիտության և ազ-գագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում:

Բազմարդյուն է եղել Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի բա-նահավաքչական գործունեությունը: Այն ընդգրկում է անցյալ դարի 20 - 40 -ական թվականները և ներկայացնում է գլխավորապես Շուշին, Վարանդայի, Հադրութի, Ասկերանի գյուղերը:

Մ. Գրիգորյան-Սպանդարյանը ծնվել և սկզբնական կրթությունն ստացել է Շուշիում: Հայ մշակույթի պանոթյանը ծանոթ «Նոր Դարի» խմբագիր Սպանդար Սպանդարյանը բանահավաքի հորեղբայրն է: Այնուհետև նա տեղափոխվել է Բաքու, ավարտել Բաքվի մանկավար-ժական ինստիտուտը, թեկնածուական թեզ պաշտպանել և երկար տա-րիներ դասախոսել նույն ինստիտուտում: Բնակվելով Բաքվում, նա պարբերաբար այցելել է հայրենի երկրամաս: Այցելությունների ընթաց-քում, իր նախկին ուսանողների, ծանոթ-բարեկամների միջոցով ու օգ-նությամբ նրան հաջողվել է գրի առնել լեռնաշխարհի ժողովրդի բառու-բանին, ազգագրությանը, բարբառին, Շուշիի հայության ողբերգու-թյանը վերաբերող արժեքավոր նյութերի մի պատկառելի քանակու-թյուն: Մ. Գրիգորյան-Սպանդարյանի բանահյուսական հավաքածոն բազմաժանր է. հեքիաթներ, զրույցներ, առակներ, ավանդություններ, զվարճախոսություններ, երգեր, վիպական մանր ժանրերի հարյուրա-վոր նմուշներ և այլն: Հատուկ հետաքրքրություն ունեն բանասացների վերաբերյալ նրա կազմած կենսագրականները:

Բանահավաքի հարուստ ձեռագիր հավաքածոն գտնվում է Հնագի-տության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի ար-

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, Երևան, 1973:

² Պըլը Պուղի, հավաքեց և մշակեց Ս. Իսրայելյանը, Երևան, 1956:

խիվում, գերակշիռ մասը տպագրվել է: Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության V հատորը կազմված է բացառապես նրա գրառումներից¹: Հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զրույցներ, վիպական մանր ժանրերի բանաձևային բանահյուսության նմուշներ և 1804 միավոր է պարունակում «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» ժողովածուն²: Մ. Գրիգորյան-Սպանդարյանի հավաքածոյի մի մասը տակավին անտիպ է:

Անցյալ դարի երկրորդ կեսին հայ ժողովրդական հոգևոր արժեքների գրառումն ու տպագրությունը, նաև հետազոտությունը մեծապես աշխուժանում է, ինչը պայմանավորված էր ազգային կյանքում տեղի ունեցած նշանակալից տեղաշարժերով: Երկիրը ձերբագատվել էր գաղափարական կապանքներից, հայ հասարակությունը փորձում էր լուծումներ գտնել ավելի քան կես դար տևող ազգային հոգեմաշխնդիրներին (գերյալ Կարս, Սուրմալու, Նախիջևան, Ղարաբաղ):

1958 թ. Հայկական ԽՍՀ ԳԱ ստեղծվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, որի կազմում հայ ժողովրդական բանահյուսության բաժինը: Ղարաբաղի բանահյուսության գործը կենտրոնանում է այդ բաժնում: Բանահավաքչությունը դառնում է առաջնահերթ խնդիր՝ փրկել կորստից ինչ հնարավոր է: Ի պաշտոնե բանահավաքչությամբ են զբաղվում բաժնի աշխատակիցներ Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը, Մ. Առաքելյանը: Բնօրրանում ևս հանդես են գալիս ձեռնհաս, բանարվեստի համն ու հոտը ընկալող նվիրյալներ Մաքսիմ Մխիթարյան, Բարխուդար Ղազիյան, Լևոն Հարությունյան, Միքայել Օհանջանյան: Ստեփանակերտում 1960 թ. բացված ժողովրդական ստեղծագործության մարզային տունը նույնպես իր սիրող-թղթակիցների միջոցով աշխատանքներ է տանում այդ ուղղությամբ: Բանահավաքչությանը զուգահեռ ընթանում է տպագրության գործը:

Ստեփանակերտի ժողստեղծագործության տունը 1978 թ. լույս է ընծայում ժողովրդական բառուբանի մի ընտրանի, բաղկացած հեքիաթներից, առակներից, ավանդություններից, վիճակի երգերից և վիպական մանր ժանրերի նմուշներից: Ցավոք, բանահյուսական նյութը

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. V, կազմեցին Մ. Գրիգորյան և Ա. Նազինյան, Երևան, 1966:

² Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, գրառումը, բնագրի պատրաստումը և ծանոթագրությունները Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, Երևան, 1971:

անհրաժեշտ ժանոթագրություններ չունի: Հայ ժողովրդական հեքիաթների գիտական հրատարակության VI հատորում զետեղված են 1961 թ. Շուշիի, Մարտակերտի, Ստեփանակերտի գյուղերի բնակիչներից գրառած բանահավաք Մ. Մխիթարյանի 11 հեքիաթները: Նույն հրատարակության VII հատորը գերազանցապես ընդգրկում է Մ. Առաքելյանի 1960-ական թվականներին Ստեփանակերտի, Հաղրուփի, Մարտակերտի, Մարտունու շրջաններում գրի առած արձակ պատմողական բանահյուսության նյութերը¹: Ա. և Բ. Ղազիյանների բանահավաքչական գործունեությունը սկսվել է 1960-ական թվականներին: Նրանց հավաքածուն ընդգրկում է Ղարաբաղի բոլոր շրջանները, նաև Կուրի ձախափնյակի որոշ հայկական գյուղեր և Բաքու քաղաքը: Գրառումները կատարվել են ձայնագրիչով: Ծավալուն հավաքածուն պահվում է Հնագիտության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում: Այն մասամբ տպագրվել է «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15 -րդ պրակով² և որոշ նյութեր, իսկ Բ. Ղազիյանինը՝ Հայ ժողովրդական հեքիաթների VII հատորում³: Ս. Վարդանյանը բանահավաքչական գործունեությունն սկսել է 1970-ից: Նա գրառումներ է արել ոչ միայն Ղարաբաղում, այլ նաև Երևանում՝ ղարաբաղցիներից, նախկին բաքվեցիներից: Նրա գրառած տարբեր ժանրերի նյութերի հավաքածուն նույնպես գտնվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի արխիվում: Ս. Վարդանյանի և Ա. Ղազիյանի գրառումների մի գողտրիկ ընտրանի հրատարակվել է⁴: Ըստ որում Բ. Ղազիյանը գրառումները կատարել է Բաքվում, 1970-ական, իսկ Ս. Վարդանյանը՝ Երևանում 90-ական թվականներին, նախկին բաքվեցիներից:

Ղարաբաղի բանահյուսությունը կորստից, մոռացումից փրկելու գործում մեծ վաստակ ունի հայոց լեզվի և գրականության գյուղական բազմամյա ուսուցիչ Լևոն Հարությունյանը: Նա բնիկ աշանցի է (ԼԴՀ, Մարտունու շրջ.), մեծացել և՛ ապրել, և՛ հոգեկան սնունդ է ստացել ազգային, նահապետական ավանդներով հագեցված միջավայրում: Այժմ էլ

¹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, Երևան, 1979:

² Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), պր. 15, Երևան, 1983:

³ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VII, էջ 379 - 392:

⁴ Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմ.՝ Ս. Վարդանյան, Ա. Ղազիյան, Երևան, 2004:

ապրում է Աշանում: Քաջածանոթ լինելով իր բնօրրանի բառուբանին, ժողովրդի կյանքին ու կենցաղին, սովորություններին ու բարբառին, Լ. Հարությունյանը տարիների ընթացքում կարողացել է նրբորեն պեղել ժողովրդի հիշողության ծալքերը, լույս աշխարհի հանել իրողություններ, որ հասու չեն նույնիսկ ամեն մի բանահավաքի: Նրա երկու ծավալուն ժողովածուները «Նշխարներ Արցախի բանահյուսության» խորագրով բազմաժանր բանահյուսական նյութերի հետ ընդգրկում են նաև ազգագրական, բարբառագիտական, պատմական, աշխարհագրական ուշագրավ տեղեկություններ¹:

Ավելորդ չենք համարում նշել, որ Ղարաբաղի բանահյուսության տարբեր ժանրերի նյութերն ընդգրկվել են հայ ժողովրդական բանահյուսության ժանրային համահավաք բնագրերի տպագրություններում, այլևայլ ուսումնասիրությունների էջերում:

Բանահավաքչական աշխատանքները Ղարաբաղում շարունակվում են նաև մեր օրերում, թեև ոչ նախկին ոգևորությամբ ու ծավալով: Ա. Ղազիյանը, Ս. Վարդանյանը գրառումներ են անում ինչպես Երևանում, այնպես էլ բնաշխարհում: Ավանդականը մղվել է երկրորդ պլան, մեր օրերում կենցաղավարում են առավելապես ազատագրական պայքարի երգեր (նաև՝ ռուսալեզու) գրույցներ, զվարճախոսություններ, հուշեր:

Մոտ 150 տարվա ընթացքում կուտակված բանահյուսական հարուստ ու բազմաժանր նյութը ամբողջական հետազոտության չի արժանացել, թեև դրա անհրաժեշտությունն առկա է: Գրվել ու տպագրվել են մի շարք հոդվածներ բանահյուսության այս կամ այն ժանրի, բանահավաքների գործունեության և այլ հարցերի վերաբերյալ²:

¹ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գ. 1, Երևան, 1991, գ. 2, Ստեփանակերտ, 2004:

² Ս. Վարդանյան, Բանահյուսական նյութեր Լեռնային Ղարաբաղից, Լրաբեր հաս. գիտ., 1971, № 8, Պաշտամունքային տարրերը «Ալեվուաների» տարբերակների համակարգում, ՊԲՀ, 2002, № 2, Թ. Հայրապետյան, Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքը և գործը, Երևան, 2001, (ծեռագիր, թեկնած. թեզ), գլուխ «Կ. Մելիք-Շահնազարյանի ժողովրդագիտական գործունեությունը», էջ 98-123, Ա. Ղազիյան, Ղարաբաղի բանահյուսությունը 1970-1973 թթ. գրառումների հիման վրա, ՊԲՀ, 1974, № 4, Ա. Ղազիյան, Ղարաբաղի զվարճախոս Պլըլ Պուղին, Լրաբեր հաս. գիտ., 1978, № 9, Ա. Ղազիյան, Հայ ժողովրդական սնահավատական գրույցների դասակարգման հարցի շուրջ, Լրաբեր հաս. գիտ., 1983, № 8, Ա. Ղազիյան, Ազատամարտի արտացոլումը Ղարաբաղի ժողովրդական

Բահաթրյանների հավաքածոյի հեքիաթների տիպերն ու սյուժեների տարբերակները մեկ-երկու տասնամյակ անց հայտնի դարձան Հայաստանի այլ ազգագրական շրջաններից: Ըստ որում տարբերակները համեմատելի են նույնիսկ պերսոնաժների անվանումների մակարդակով՝ Արևամանուկ, Օձամանուկ և այլն, մի հանգամանք, որը հաստատում է մի ընդհանուր ազգային սուբստրատի, երկացանկի գոյության մասին: Մյուս կողմից՝ այդ հանգամանքը հաստատում է տարբեր ազգագրական շրջանների և Ղարաբաղի հեքիաթների սյուժեների ամենավաղ և ամենաուշ գրառումների համադրումը, որը ի հայտ է բերում որոշակի կայունություն: Այդ յուրահատկությունը հստակ դրսևորվում է նաև այլ ժանրերի համեմատության պարագայում:

Ղարաբաղի բանահյուսությունը հայ ժողովրդական հոգևոր մշակույթի անքակտելի օղակն է, նրա տեղական դրսևորումը և ունի կարևոր կուլտուր-պատմական, ճանաչողական նշանակություն ու արժեք:

բանահյուսության մեջ, Լրաբեր հաս. գիտ., № 3, 1996, **Ա. Ղազիյան**, Устное народно-поэтическое творчество Арцаха, Լրաբեր հաս. գիտ., № 7, 1990, **Ա. Ղազիյան**, Խ. ծ. վրդպ. Դադյանի ժողովրդագիտական-բանահավաքչական գործունեությունը, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1999, № 1-12, Ազատագրական պայքարի արտացոլումը Արցախի ժողովրդական երգերում, Պայքար ամսագիր, 1996, №№ 5-6 և այլն:

**ԱՐՑԱԽ-ՈՒՏԻՔԻ ՆՊԱՍՏԸ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏԻ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՍ,
«ԽՈՐԱՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

1. Առաջին եկեղեցիների հիմնադրման հետ առաջացավ **պատկերահարգության և պատկերամարտության** պայքարը, որը շարունակվեց մինչև Արաբական խալիֆաթի նվաճումները: Դա համաշխարհային մեծ պայքար էր, որի թեժացումը ցնցեց Բյուզանդական Կայսրությունը, վիթխարի մշակութային և գեղարվեստական կորուստներ հասցրեց նաև հայ ժողովրդին, հատկապես կրակապաշտ և մահմեդական պատկերամարտիկների գերիշխանության և ազդեցությունների շրջաններում (Սասանյաններ, արաբներ, թուրք-սելջուկներ, Լենկթեմուր և այլն):

Այդ վիթխարի շարժման ավերածությունները հսկայական էին հատկապես Պավլիկյանների շարժման, արաբական էքսպանսիայի և Բյուզանդիայում 7-8-րդ դդ. հայ, ասորի և հույն միմյանց հաջորդող պատկերամարտիկ կայսրերի (Փիլիպպիկոս Վարդան, Լևոն Գայ և այլն) ժամանակ: Եվրոպայում պատկերամարտի շարժումը չընդունեց նման ցավագին բնույթ: Այնտեղ էլ Կարոլինգյան Կայսրության տրոհումից հետո սկսվեց եվրոպական ազգերի ձևավորման ընթացքը, որն ուղեկցվում էր արաբների, նորմանների, հունգարների և սլավոնների արշավանքներով, և միայն խաչակրաց արշավանքների և ուխտավորների համար նոր ռոմանական պատկերազարդ եկեղեցիների կառուցման և ճանապարհների գծման շնորհիվ սկսեցին ձևավորվել եվրոպական ազգերը: Բայց այդ պայքարը շատ տարբեր էր պատկերամարտի դեմ պայքարից:

Իսկ ի՞նչ կորցրեցին հայերը և հույները այդ կործանարար շարժումների ընթացքում: Հայերը Եզիդ խալիֆի (720-724) հրամանով (Ղևոնդ Երեց) կորցրեցին որմնանկարները, քարե քառակող կոթողները և

թևավոր խաչերը, ամբողջ գրքարվեստը¹։ այդ ամենից հետո հայերը չվայրենացան Հովհան Օծնեցու և Ստեփանոս Սյունեցու նման հոգևորական գործիչների շնորհիվ և 9-10-րդ դարերից ստեղծեցին վանքեր, վանական դպրոցներ, վիթխարի գրքարվեստ, խաչքարեր, դեկորատիվ կիրառական ծիսական առարկաներ և այլն։ Այսինքն հայ հոգևորականները հիմնականում իշխանների նման չլքեցին երկիրը և պահպանեցին ու բորբոքեցին հայրենաշունչ ոգին ու բարեպաշտությունը։

Իսկ հույները կորցրին անտիկ փիլիսոփայության, գիտության, պոեզիայի գրեթե ողջ պաշարը, դրա հետ կիրթ և ուսյալ հոգևորականներին ու չինովնիկներին, որոնք կամ սպանվեցին, կամ անդարձ աքսորվեցին, կամ ուղղակի փախան արաբների մոտ, կորցրին անտիկ հելլենիստական շատ հուշարձաններ, որմնանկարներ, տաճարներ, եկեղեցիներ, այդ թվում վաղ բյուզանդական մշակութային ժառանգությունը, բացի Իտալիայում եղածների մի մասից²։ Ահա այդ մեծ շարժման վնասները, որոնք ո՞վ կարող է հաշվել, և այդ դարաշրջանից Հայաստանում, թե նախկին Բյուզանդիայում գտնված ամեն մի բեկոր թանկ է, որ պետք է գուրգուրել։

Պատկերամարտի այդ համաշխարհային շարժումներից դուրս չի մնացել նաև Արցախը։ Արցախում այդ շարժման մասին թանկարժեք վկայությունների վրա հատուկ կանգ է առել խոշորագույն հայագետ և բյուզանդագետ Ս. Տեր-Ներսեսյանը³։ Նա հղում է Հովհան Օծնեցի կաթողիկոսի (717-728) «Ընդդեմ Պաղիկեանց» ճառին, ըստ որի Ներսես կաթողիկոսի վախճանվելուց հետո Հայաստանում պատկերամարտիկները «թաքնվեցին մեր աշխարհի տարբեր վայրերում։ Եվ որոշ պատկերամարտներ, կշտամբվելով Աղվանից կաթողիկոսներից, բաժանվելով եկան և հարեցին նրանց, որովհետև ճշմարտությունից հեռա-

¹ «Իսկ նրանից (Օմարից) հետո տիրեց ոմն եգիտ, որը... պիղծ դևի կատաղությանը բռնված հրաման տվեց փշրել և խորտակել մեր Տիրոջ ու Փրկչի ճշմարիտ մարդեղության և նրա աշակերտների կենդանագիր պատկերները. խորտակեց և Քրիստոսի տերունական խաչի նշանը, որը շատ տեղերում կանգնեցված էր հանուն համազոտ Երրորդության և նրա երկրպագության համար» (Ղևոնդ, Պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 88, էջ 155, ծան. 87)։

² Տե՛ս **В. Н. Лазарев** История византийской живописи, Москва, 1986, т. I (гл. "Эпоха иконоборчества", с. 53-60).

³ **Ս. Տեր-Ներսեսյան**, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 7-30, էջ 16-19։

ցածը սիրում է հանդիպել իր նմաններին»¹:

Քանի որ խոսքը վերաբերում է պավլիկյաններին, Ս. Տեր-Ներսեսյանը կարծում է, թե այդ դեպքը եղել է Ներսես Բ-ի (548-557) օրոք²:

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» 46-րդ գլուխը ներկայացնում է «Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսի խնդրանքը Հովհան Մայրագոմեցուց արծանների և նկարների վերաբերյալ»: Ըստ Ս. Տեր-Ներսեսյանի, այս նամակը գրված է 682-683 թթ., քանի որ Դավթին հաջորդած Իսրայել եպիսկոպոսը իբրև քարոզիչ և հովվապետ 684 թ. գնում է հոների մոտ, հսկելով իր հոտին նաև Մեծկողմանքում³: Խոսքը Հետու, Թորոս և Գրիգոր պատկերամարտիկների մասին է, որոնք Հովհան հակաթոռ կաթողիկոսի ընտրությունից հետո Դվինից գնում են Սյունիքի Սոթք գավառը քարոզելու, և ապա Մովսես կաթողիկոսի պատվերին հակառակ անցնում են Արցախ և խռովություն սերմանում, այնուհետև հայտնվում են Ուտիքում, և Գարդմանա իշխանը նրանց շղթայակապ ուղարկում է ետ⁴: Այստեղ կարևոր ակտը Մեծկողմանց Դավիթ եպիսկոպոսի խնդրանքն է բացատրելու, թե ովքե՞ր են այդ մարդիկ, որ պատկերներ չեն ընդունում, մկրտություն չեն անում, աղ չեն օրհնում, պսակադրություն չեն կատարում, և այդ պատճառով է, որ քահանայությունը վերանում է երկրից⁵ Հովհան Մայրագոմեցու բացատրությունները կապվում են եկեղեցու մեծ խորհուրդների հետ, որոնցից մեկը պատկերներն են: Մայրագոմեցին նույնիսկ այսօր ընդունված տեսակետից տարբեր բացատրություն է տալիս պատկերամարտության մասին, որ պատկերամարտությունը նախ հռոմեների (հույների) մեջ երևաց, որի պատճառով Կեսարիայում մեծ ժողով կայացավ. հրամայեցին Աստծո տանը (եկեղեցում) պատկերներ նկարել⁶:

2. Արցախի հետ է կապված նաև «Խորանների մեկնություններից»

¹ Հովհան Օծնեցի, Երկեր, Գրաբարից փոխադրումը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Երևան, 1999, էջ 133-134:

² Տեր-Ներսեսյան, Նշվ. աշխ., էջ 16:

³ Նույն տեղում, էջ 18:

⁴ Նույն տեղում: Տես նաև՝ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քնն. բնագիրը և ներածությունը Վարազ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 267:

⁵ Մովսես Կաղանկատուացի, էջ 267:

⁶ Նույն տեղում:

մեկը, որ գտնում ենք Վանական Վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ժողովածուում¹: Խորանների մեկնությունները ձեռագիր ավետարանների խորանապատկերներում գույների, սյունների, խոյակների, կամարների, թռչունների, բույսերի խորհուրդների և գեղագիտական նշանակության մասին միջնադարյան բացատրություններ են:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը Մատենադարանի 2273 ժողովածու է², ընդօրինակված 1252 թ. Խորանաշատում «ի հայրապետութեան Ներսիսի Աղուանից կաթողիկոսի»: Ձեռագրում հիմնականում Վանական Վարդապետի երկերն են: Սատյանն ընդօրինակված է Մխիթար Գոշի աշակերտ Վանական Վարդապետի մահից մեկ տարի անց: Վանականի գործունեությունը բարձր է գնահատված և ունեցել է համահայկական նշանակություն. ա) հիմնել է Տավուշի Խորանաշատի վանքը. բ) նրա աշակերտների՝ Վարդան Արևելցու, Կիրակոս Գանձակեցու և իր իսկ ծառայությունները այնքան մեծ են, որ մոնղոլների աշխարհակալության և Խաչակրած արշավանքների շրջանում հայերը թե Կիլիկիայում, թե Մեծ Հայքում ոչ միայն չուժացան, այլև ծաղկեցրին իրենց ինքնավարությունը և պետությունը, վանքերը և դպրությունը, ստեղծեցին համալսարաններ: Հետսելջուկյան շրջանում, Մխիթար Գոշից և Ներսես Լամբրոնացուց հետո Վանականը դարձավ ամենամեծ ուսուցիչը և սկիզբ դրեց հանրագիտական աստվածաբանական մեկնությունների նոր ժանրի, որը զարգացրեցին Վարդան Արևելցին և հատկապես Գրիգոր Տաթևացին: Վանական Վարդապետը զրել է նաև «Խորանների մեկնություն», հետևելով Ստեփանոս Սյունեցուն և Ներսես Շնորհալուն, ունենալով իր մեծ ներդրումը միջնադարյան զարդարվեստի պատկերագրության համար այդ խիստ կարևոր ժանրում: Խորանների մեկնությունների այդ ժանրը թերևս զալիս է եվսեբիոս Կեսարացու ժամանակներից, քանի որ վերջինս կազմեց տասը համաբարբառներ, այսինքն չորս Ավետարանների իր իսկ գլխաբաժանումների համապատասխանությունը և դրանք ձևավորեց ըստ սուրբ վայրերում Կոստանդին կայսեր կառուցած եկեղեցիների սիմվոլիկայի, մասամբ օգտվելով

¹ Տես, Մեկնությունք խորանաց (արվեստի տեսության միջնադարյան հայկական բնագրեր), աշխ. **Վ. Գ. Ղազարյանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 300-306, 387-390:

² Նույն տեղում, էջ 127:

անտիկ օրացույցների ու սարկոֆագների կամարաշարքերից¹: Այդ համաբարբառ ցանկերի կամարածև ձևավորման համակարգը բացատրում են միայն հայ եկեղեցու հայրերը՝ Ստեփանոս Սյունեցին, Ներսես Շնորհալին, Վանական Վարդապետը, Գրիգոր Խլաթեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ, անուններ, որոնց դերը անփոխարինելի է հայ եկեղեցու պատմության մեջ: Իսկ այդ մեկնությունների նշանակությունը անփոխարինելի է ոչ միայն հայկական, բյուզանդական, լատինական, վրացական, ասորական քառավետարանների խորանների, այլև խաչքարերի ու ճարտարապետական զարդարվեստի շատ գաղտնիքներ գիտականորեն հասկանալու համար:

3. Հնուց ի վեր Արցախը արդյունահանել է ոսկի և մետաղներ: Համապատասխանաբար մետաղի արդյունահանման հետ զարգացել է մետաղագործությունը իր արհեստներով՝ դարբնություն, ոսկերչություն, պղնձագործություն: Ջվանշիր արքան (7-րդ դար) իր «ապավինության օթևանը» (տաճարը) զարդարելու համար «մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց և պաստառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը... արծաթապատեց և հրաման տվեց քանդակագարդել»²:

Սա խոսում է տեղի վարպետների մասին: Պատմիչը, թվարկելով Ջվանշիր արքայի շքեղ նվերները, դրանց թվում նշում է. «գեղեցկաշար մարգարիտներով ընդելուզված պատմունճաններ, ոսկեհուռ կերպասներ, ողիբերոն (ըստ Աճառյանի, ասեղի ծայրով հյուսված) դիպակներ, վառ գույնի ծիրանիներ..., որոնք չէին տեսնված թե՛ առաջներում և թե՛ այժմ...»³:

Պատմիչը իր հերոս Ջվանշիրին համեմատում է Հռոմի օգոստոս Տիբերիոսի և հատկապես երանելի Կոստանդիանոս կայսեր հետ: Էլ ավելի հատկանշական է, որ Բյուզանդիայի հայազգի Փիլիպպիկոս Վարդան կայսրը զնդաններից հանում է Աղվանքի իշխան Վարագ-Տրդատի որդիներ Գագիկին ու Վարդանին և Հիսուսի «կենսատու» խաչից մի մաս է նվիրում նրանց, որոնք այն բերում են Աղվանքի Միքայել

¹ Տե՛ս, **Ք. Ամիրխանյան**, Происхождение и символика декоративного мотива хоранов. - ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2004, 1 (165), էջ 175-195:

² **Սովետս Կաղանկատվացի**, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ., առաջաբանը և ծանոթ. **Վ. Առաքելյանի**, Երևան, 1969, էջ 153:

³ Նույն տեղում, էջ 155:

կաթողիկոսին: Վերջինս կանգնեցնում է Տերունական խաչ, որի արծա-
նագրության մեջ նշում է «մեծ ոսկերիչ Վարազդի» անունը, որը հավա-
նաբար մասնատուփ է պատրաստել այդ գերագույն մասունքի համար¹:

Այս թանկարժեք վկայությունը մեզ բացահայտում է ավանդույթ, որ
կապված է եկեղեցին՝ «Աստօռ տունը» որմնանկարներով ու ասեղնա-
հյուս կերպասներով զարդարելու հետ: Այն Արցախում շարունակվում է
մաև հետագա դարերում: Կիրակոս Գանձակեցին «Չայոց պատմու-
թյան» մեջ վկայում է Վախթանգ Չաթերքցի իշխանի կին Արզու Խա-
թունի մասին, որը Նոր Գետիկի շինարարությանը նպաստ բերած իր եղ-
բայրներ Դավթին և Սաղունին և իր ամուսնուն է միանում՝ գործելով գե-
ղեցիկ վարագույր իր դուստրերի հետ «զարմանալի տեսնողների հա-
մար, այժի փափկագույն մազից, ներկված պես-պես և զանազան գույ-
ներով, քանդակակերպ և նկարված պատկերներով, Փրկչի տնօրինա-
կան և այլ սրբերի ճշմարիտ պատկերահանումներով, որոնք հիացնում
էին տեսնողներին: Եվ տեսնողները Աստօռն օրհնություն էին տալիս, որ
կանանց տվել է ջուլիակության իմաստություն և նկարչության հանճար,
ինչպես ասված է Դավթի մոտ (Յովք ԼԸ, 36, Ելք ԼԶ, 1 և այլն), ոչինչ չէր
պակասում խորանի կազմությունից, որ պատրաստեցին Բեսելիելը և
Եղիաբը, թող հանդգնություն չլինի՝ ասել, որ նույն Սուրբ Դոզին էր շար-
ժում թե նրանց, և թե սրանց: Եվ մա ոչ միայն ծածկույթ պատրաստեց
այս եկեղեցու, այլև Չաղբատավանքի և Մակարավանքի և Դադիվանքի
համար...»²: Նույնքան շնորհալի էր մաև Վախթանգ Տանգիկի կին
Խորիշահը³: Չետաքրքիր է, որ պատմիչը ազնիվ կանանց շարժված է
համարում Սուրբ Դոզու շնորհներով, ինչպես Մովսեսի խորանի ճար-
տարապետներ Բեսելիելին և Եղիաբին, որոնց անունները տրված են
«Խորանների մեկնություններում» հենց նույն իմաստով⁴:

Մեր նպատակն էր ցույց տալ Արցախի և նրան կից մարզերի համա-
հայկական նշանակությունը հայ որմնանկարչության մեջ և պատկերա-
մարտի դեմ մղված պայքարում ըստ 7-13-րդ դարերի հեղինակների,
ինչպես և Վանական Վարդապետի կարևոր դերը «Խորանների մեկնու-

¹ Նույն տեղում, էջ 244:

² **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, աշխ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի,
Երևան, 1961, էջ 215-216:

³ Նույն տեղում, էջ 268:

⁴ Տես Մեկնութիւնք խորանաց, էջ 229, 231, 248, 284, 329, 356, 368 և այլն:

թյունների» շարքը լրացնելու հարցում, որոնց միջնադարագիտական մեծ արժեքը ակնհայտ է:

ՏՈՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԿԵՆՑԱՂՈՒՄ

Մինչև XX դ. սկզբները ղարաբաղցիների ավանդական տոնածխական համալիրն ուներ այն նույն կառուցվածքը, ինչպիսին՝ հայ էթնոսի մյուս բոլոր հատվածներինը:

Հայ էթնոսի այդ խմբի ավանդական կենցաղում առավել տարածված տոներն էին՝ **Նոր Տարին, Քրիստոսի Ծնունդը, Սուրբ Սարգիսը, Վարդանանցը, Տեառնընդառաջը (Դըռդոռունջ, Դռդռաջ, Դոնդոռոնջ), Բարեկենդանը, Մեծ Պասը, Ծաղկազարդը (Ջրզարդար, Ջըրըզարթար, Ջըրզարդար), Ջատիկը, Համբարձունը, Վարդավառը (Վարդեվոր, Վրդեվոր, Վըրթեվոր, Վըրթեվոր), Սուրբ Աստվածածնի Վերափոխումը, Խաչվերացը և մասնավորապես՝ Նավասարդը**¹:

¹ Ե. Լալայան., Վարանդա, ԱՀ, Թիֆլիս, 1898, գիրք Գ, 1, էջ 338-349:

Ե. Լալայան., Գանձակի գավառ, ԱՀ, Թիֆլիս, 1900, գիրք Զ, էջ 232-382:

Ստ. Լիսիցյան., Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), ՀԱԲ, № 12, Երևան, 1981, էջ 67-73:

Դադյան, Ջան-գիլուններ. Վարանդայի բանավոր գրականությունից, ԱՀ, Թիֆլիս, 1908, գիրք XVIII, էջ 25-32:

Ս. Իսրայելյան., Լեռնային Ղարաբաղի Փիրջամալ, Նախիջևանիկ և Շուշի քաղաքի ազգագրական նյութեր, 1970, ՀՀ ԳԱՍ ՀԱԻ ԱԲԱ, մաս I և II (№ 355-356), 48:

Գ. Գրիգորյան, Ղարաբաղի ազգագրական նյութեր (գ. Սպանդարյան), 1970-1971, Երևան, ՀՀ ԳԱՍ ՀԱԻ ԱԲԱ, 19, մասեր՝ I և II, տետրեր՝ I, II, III, IV:

Ս. Վարդանյան, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Շուշիի շրջան, 1970 թ. հունիս-հուլիս, ՀՀ ԳԱՍ ՀԱԻ ԲԲԱ, տետր №№ FF VII, էջ 6189:

Բ. Ղազիյան, Ղարաբաղ, Տարբեր ժամանակներ, 1973-ից սկսած, ՀՀ ԳԱՍ ՀԱԻ ԲԲԱ, տետր 1:

Ս. Բեգյան., Լեռնային Ջազիր գյուղի ավանդական սովորություններ, արիեստներ և ծեսեր, Երևան, 1985, ՀՀ ԳԱՍ ՀԱԻ ԱԲԱ, մաս III, IV, 11/150:

Ն. Ղազարյան, Գանձակի գավառի (Ելիզավետպոլի) հայկական բնակավայրերը և

Հայոց քրիստոնեական տոնացույցի հենքը կազմող հիշյալ տոները, ծագումնաբանորեն, ունեն հեթանոսական արմատներ, որոնք առանձնանում են տնտեսության, ընտանիքի և անձի բախտն ու ճակատագիրը կանխագուշակող հմայական բնույթի ծեսերով, սովորույթներով ու հավատալիքներով: Դրանցում հիմնականում արտացոլվել է երկրագործական-ժողովրդական տոնացույցը¹, որը՝ համահայկական համատեքստում, բնորոշ էր նաև դարաբաղցիների ավանդական տոնածիսական համալիրին:

Տոների այս շարքում ուշագրավ է ավանդական Նավասարդի կենցաղավարումը, որն առավելություն ուներ հունվարյան Ամանորի (հունվարի 1) նկատմամբ: Վերջինս հիմնականում տարածված էր Ղարաբաղի քաղաքային բնակավայրերում: Թեպետ գյուղ ներթափանցող քաղաքային սովորույթները թուլացրել էին ավանդական Նավասարդը, սակայն վերջինիս փոխարեն դեռևս կենցաղ չէր մտել հունվարյան Նոր Տարին (հունվարի 1), որը, ի տարբերություն Շուշի քաղաքի՝ գյուղերում աննկատ էր անցնում²: Դարաբաղում Նավասարդը նշվում էր ոչ թե

պատմական ճարտարապետական հուշարձանները. **Գյուլումներ** (Քարսում, Ջագիր, Խաչակապ), Երևան, 1984, ԳԳ ԱԱ ԴԱԻ ԱԲԱ, 5/116, թղթ. 4: Նաև՝ **Փանծակի գավառ**, Երևան, 1985 թ., 2/124, թղթ. 1:

Թ. Հայրապետյան, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2004, 3, (167), էջ 217-227:

¹ Որոշ հետազոտողներ՝ այս տեսանկյունով տիպաբանորեն դասակարգելով քրիստոնեական տոնացույցի հենքը հանդիսացող ավանդության տոները, փորձել են դրանցում պահպանված մինչքրիստոնեական տարրերի միջոցով բացահայտել առանձին տոների կամ տոնախմբերի կապը տնտեսական գործունեության ավանդական փուլերի հետ (**ցանքի նախապատրաստում**, **ցանք**, **խնամք**, **բերքահավաք** և այլն): Այս առումով ուշագրավ է Վարդ Բդոյանի աշխատությունն (տե՛ս՝ **Վ. Բդոյան**, «Երկրագործական մշակույթը Հայաստանում», Երևան, 1972, էջ 433-501), որտեղ ավանդության տոները դասակարգվել են ըստ երկրագործական աշխատանքային փուլերի: Ավանդության տոները այստեղ ներկայացվել են հետևյալ դասակարգմամբ. 1. Տոներ, որոնք կապված են գարնանացանի նախապատրաստական աշխատանքների հետ (Նոր Տարի-Ամանոր, Քրիստոսի Ծնունդ-Ջրօրհնք, Սուրբ Սարգիս, Տեառնընդառաջ, Բարեկենդան, Մեծ Պաս, Ծաղկազարդ, Ջատիկ և Համբարձում): 2. Տոներ, որոնք կապված են դաշտերի խնամքի և բերքահավաքի հետ (Վարդավառ, Նավասարդ, Ս. Աստվածածին): Երկրագործական տոնացույցի գրեթե մնանատիպ տիպաբանություն է տվել նաև Ասյա Օդաբաշյանը (տե՛ս՝ **Ա. Օդաբաշյան**, Հայոց ժողովրդական հավատալիքները» (դոկտորական հայցման ատենախոսության սեղմագիր), Երևան, 1995, էջ 10-11):

² **Ստ. Լիսիցյան**, նշվ. աշխ., էջ 67:

օգոստոս ամսին, այլ՝ նոյեմբերին¹, որը խորհրդանշուն էր տնտեսական տարվա ավարտը²:

Քաղաքային միջավայրը, որպես օրինաչափություն, հիմնային գործոն է՝ ավանդական ծեսերի ձևափոխման կամ համալրման տեսակետից: Այս առումով հատկանշական են այնպիսի նորությամբ երևույթներ, ինչպիսիք են՝ Նոր Տարվա առիթով շնորհավորական բացիկները կամ այցետոմսերը² և զատկական Ախառ-մատաղին՝ մասնակցության հրավիրատոմսային ձևերը³, որոնք եվրոպական ազդեցության արդյունք էին և աստիճանաբար տարածվում էին նաև Ղարաբաղի քաղաքատիպ բնակավայրերում:

Ուշագրավ էր նաև եվրոպական ծագում ունեցող **Ապրիլի1-ի** կամ **խաբելու տոնի**⁴ տարածվածությունը XIX դ. վերջերին՝ Գանձակ քաղաքում և շրջակա գյուղերում, որն այդ ժամանակի հայ իրականության մեջ եզակի երևույթ էր:

Առանձնահատուկ երևույթ էր նաև Վարդավառ տոնի ծիսահամալիրում **Համբարձման-վիճակի** և մասամբ՝ **Նուրիճի** առկայությունը, չնայած դրանցից յուրաքանչյուրը կենցաղում դեռևս պահպանում էր ժամկետային և արարողակարգային ինքնուրույն դիմագիծը⁵: Նշենք նաև,

¹ Անդ:

² Հայոց ավանդական այդ տոնը, ընդհուպ մինչև XX դ. սկզբները, ձևափոխումներով հանդերձ, Գանձակի և Վարանդայի բնակավայրերի հետ միասին առավելապես պահպանվել էին նաև Սյունիքում, Գողթնում և Պարսկահայքում, ուր Նավասարդի ժամկետները տատանվում էին ամռան վերջերից մինչև ուշ աշուն: Չնայած մասնակի առանձնահատկություններին, մավասարդյան ծիսաշարն ուներ ընդհանրական գծեր: Դրանք հիմնականում նշվում էին աշնանը՝ համընկնելով բերքահավաքին, այգեկութին, մախրաթողին, և մինևույն դեպքում, իրենցից ներկայացնում էին գյուղատնտեսական աշխատանքային պայմանագրությունների յուրօրինակ ծիսական սահմանագիծ: Վերջինս հատկապես նկատվում էր Տավուշի և Արմավիրի գյուղական բնակավայրերում, ուր արդեն գրեթե մոռացվել էր **Նավասարդի**՝ տոն լինելու հանգամանքը:

³ Նշենք նաև, որ Ղարաբաղցիների տոնածիսական վարքագծային մասնությունները, մասնավորապես՝ **Լռու**, **Տավուշի**, **Սյունիքի** ու **Գողթնի** հետ, հիմնականում պայմանավորված էր աշխարհագրական դիրքով և միգրացիոն ինտենսիվ գործընթացներով, որի արդյունքում ձևավորվեցին գրեթե մասնատիպ կենցաղամշակութային համալիրներ:

² **Ե. Լալայան.**, Գանձակի գավառ, էջ 363:

³ **Ե. Լալայան.**, Վարանդա, էջ 347:

⁴ **Ե. Լալայան.**, Գանձակի գավառ, էջ 370:

⁵ Հայաստանում կային այլ բնակավայրեր ևս, ուր Վարդավառին գրեթե կրկնվում էին Համբարձման վիճակախաղերը: Տավուշում, Համշենում, Պոնտոսում և շատ այլ

որ դարաբաղյան ժխական **Նուրինը** («Գողի», «Ճուլի»), կատարում էր ինչպես անձրևաբեր, այնպես էլ վնասաբեր տեղումները կանխարգելող կամ անձրևախափան գործառույթ¹:

Տարածված էին առանձին տոներին և սրբերին նվիրված ուխտագնացությունները: Դարաբաղյան ուխտավայրերից մասնավորապես իրենց մասսայականությամբ և հատուկ նշանակությամբ կարելի է առանձնացնել **Շուշիի՝ Քանու խաչը**², **Գանձակի՝ Մկնատամի խաչը**³, **Ամարասը**, **Նինգի՝ Ս. Լուսավորիչը**, **Սարիբեկը**, **Սարուշենի՝ Ավետարանը**⁴, **Նախիջևանիկի՝ Նահատակը**⁵, **Պարկեսա-Պերքը**^{6 ***} և այլն:

Ավանդական կենցաղում տոների մասնակիցները սոցիալական

տեղերում, Վարդավառը ևս համարվում էր **վիճակ բացելու** օր, որը երբեմն ավելի հանդիսավորությամբ էր կատարվում, քան՝ Համբարձման տոնին: Հայաստանի առանձին գավառներում Վարդավառին նաև խարույկներ էին վառում, որոնց շուրջը կատարվող արարողությունները նման էին Տերընդեզի կրակավառության հանդիսություններին (տե՛ս՝ **Բ. Թուլայքյան**, Ազգագրական նյութեր համշենահայերի և պոնտահայերի սոցիալական հարաբերությունների մասին, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 6-րդ, 230, տետր 3/30, էջ 438: Նաև՝ **Գ. Հալաջյան**, Դերսիմի ազգագրական նյութերը, 1960, Երևան, ՀԱԻ ԱԲԱ, մաս 5, 399, № 5 ր, էջ 1525):

¹ **Բ. Ղազիյան**, նշվ. աշխ., էջ 73-74: Նաև՝ **Ս. Վարդանյան**, նշվ. աշխ., էջ 6189: Նաև՝ **Թ. Հայրապետյան**, նշվ. աշխ., էջ 220:

² Այդ սրբավայրում զանգվածային ուխտագնացություններ էին կազմակերպվում մասնավորապես՝ Մեծ Պասի **Զարչարանաց շարաթի Ավագ Զորեքշարթի (Զիք Զորեքշարթի)** օրը (տե՛ս՝ **Ե. Լալայան**, Վարանդա, էջ 345):

³ «Ուխտավորները մոմեր էին վառում, աղոթում և այդ սրբավայրի հողից ջրով մի փոքր շաղախելուց հետո քսում մկնատամ ունեցողների վերքերին, որ շուտ ապաքինվեն: Վերադարձի պահին քարեր էին գլորում կամ նետում, որպեսզի իրենց հիվանդություններն էլ այդ քարերի հետ հեռանան: Ուխտավայրերում գտնվող ծառերից շորեր էին կապում, որպեսզի հիվանդություններն այնտեղ կապված մնան: Սրբավայրերից բերված հողը լուծում էին ջրի մեջ և խմեցնում աղջիկներին՝ շուտ ամուսնանալու ակնկալիքով» (տե՛ս՝ **Ե. Լալայան**, Գանձակի գավառ, էջ 368):

⁴ Ամարասը, Նինգի գյուղի Ս. Լուսավորիչը, Սարիբեկը և Սարուշենի Ավետարանը, մասնավորապես՝ Վարդավառյան գլխավոր ուխտավայրեր էին (տե՛ս՝ **Ե. Լալայան**, Վարանդա, էջ 348):

⁵ **Ս. Իսրայելյան**., նշվ. աշխ., մաս II, էջ 30-33:

⁶ Անդ, էջ 169-170:

*** Ժողովուրդը շատ խոր հավատ ուներ Նախիջևանիկի Սուրբ **Նահատակի** զորության նկատմամբ: Այդ իսկ պատճառով ուխտի էին գալիս նույնիսկ հեռավոր բնակավայրերից (մեծ մասամբ՝ ոտքով և ոտաբորիկ), որտեղ մատաղի ծեսերը և փախկանների ելույթները համատարած բնույթ ունեին: **Պարկեսա-Պերքը** ուխտավայր այցելության գլխավոր նպատակը՝ այդ սրբի զորությամբ զավակ ունենալու հավատն էր:

գրեթե բոլոր խավերն էին՝ իզական սեռի որոշակի գերակայությամբ: «Հայ կինը,- գրում է Լեոն,- ընտանեկան կյանքի մեջ ներկայացնում է ինչպես մի առանձին մարմին, որը պահպանում է նախնական սովորություններն ամենայն սրբությամբ և միշտ հարազատ է մնացել հայության լեզվին և բոլորովին պահպանել է հայ կնոջ պատմական առանձնահատկությունները՝ չենթարկվելով ոչ մի տեսակ արտաքին ազդեցության: Այդ խոստովանում են տղամարդիկ: Եթե մեր ժամանակ մնացել է սիրտ, հոգի, բարեպաշտություն, դա միայն կանանց մեջ է,- ասում են նրանք: Մեզ հայտնի է, որ ուսման ազդեցությունն անզամ չի կարողացել առայժմ խլել հայ կնոջից նրա պապական սովորությունները, ուսում առածներն էլ ջերմեռանդ պաշտպան են նախապաշարմունքների»¹:

Նույնիսկ խորհրդային շրջանում ազգային տոնի կամ ծեսի հիմնական կրողը՝ կինն էր (հատկապես՝ տարեց կինը), որը ավանդաբար դեռևս պահպանում էր ներընտանեկան տոնածիսական միջոցառումների գլխավոր կազմակերպչի կարգավիճակը:

Չնայած դարաբաղցիների ավանդական տոնածիսական համալիրում հիմնականում տարածված էին Հայ Առաքելական եկեղեցու կողմից հատուկ կանոնարկված քրիստոնեական տոները, սակայն կենցաղում նախընտրությունը տրվում էր առավել հնագույն՝ բնապաշտական հենքեր ունեցող ժողովրդական խաղային և զվարճալի բնույթի արարողություններին²:

XX դ. սկզբներին, դարաբաղցիների կենցաղում ավանդական տոների կտրուկ անկումը գլխավորապես պայմանավորված էր խորհրդա-

¹ Լեո, Ուղեգրություններ, Հուլիեր, հ. 8, Երևան, 1985, էջ 16:

² «Ինչպես հայկական մյուս մարզերում, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում հեթանոսական տոների ժառանգորդ քրիստոնեական տոները սերտորեն ձուլվել են հենց հեթանոսական ծեսերի հետ: Ժողովրդի գիտակցության մեջ վերջիններս հաճախ շատ ավելի ցայտուն ու ընդգծված են համդես գալիս, քան եկեղեցական քրիստոնեական բարեպաշտության այս կամ այն կողմերը: Բոլորովին պատահական չէ, որ քրիստոնեության խորհրդանիշ խաչն ու սրբապատկերը մասնավոր տներում չէին դրվում: Ոչ մի տեղ դրանք չէին գտնի, բացի սուրբ օջախներից, այն էլ՝ շատ հազվադեպ: Այստեղ ոչ այնքան եկեղեցին էր ներխուժում համաժողովրդական անձնական կյանքի մեջ, որքան ավելի շատ՝ վերջինս եկեղեցու մեջ: Նույնիսկ գոհակենդանու մորթելը միշտ չէ, որ պահանջում էր հոգևորականի ներկայությունը» (տես՝ Ստ. Լիսիցյան, մշվ. աշխ., էջ 67):

յին համակարգի հակակրոնական ուղղվածությամբ¹: Հայոց էթնիկ ինքնությունը արտացոլող էթնոմշակութային այդ կարևոր բաղադրիչի անկման գործընթացն առավել խորացավ, քանի որ նորաստեղծ քաղաքական համակարգը բոլոր պայմանները ստեղծել էր՝ այլէթնիկ և այլակրոն ընդգծված բնութագիր ունեցող ադրբեջանական պետական կառույցների կողմից բացահայտ ու քողարկված հակահայկական քաղաքականություն իրականացնելու համար: Դրա փաստացի վկայությունն էր՝ ադրբեջանական ազգային-կրոնական տոների ու ծեսերի նկատմամբ որոշակի հանդուրժողական քաղաքականությունը:

Արդյունքը եղավ այն, որ արդեն XX դ. վերջերին, տեղաբնիկ հայ էթնոսի շրջանում ազգային-ավանդական տոներն ամբողջությամբ տեղի տվեցին խորհրդային ապազգային տոնածիսական միջոցառումներին: Դա մեծ չափով պայմանավորված էր սերունդների աթեիստական դաստիարակությամբ ստեղծված պայմաններում՝ սոցիալ-մասնագիտական առաջընթացի և խորհրդային պետական-քաղաքական կառույցներին ինտեգրվելու օբյեկտիվ իրողությամբ:

Պատմությունը ցույց տվեց, որ ադրբեջանական պետական կանկիսապետական ենթակայության ոչ մի կառույց (լինի դա՝ խանական, ցարական, խորհրդային, մուսաֆաթական և այլն), օբյեկտիվորեն չի կարող ապահովել իր պատմական բնօրրանում բնակվող էթնոսի գոյապահպանումը, առավել ևս՝ ներդաշնակ զարգացումը: Դա հիմնականում պայմանավորված է՝ հազարամյա ավանդույթներ ունեցող հայ էթնոսի նկատմամբ ադրբեջանական պետական և ոչ պետական կառույցների մերժողական, անհանդուրժողական դիրքորոշմամբ, անկախ դրանց՝ քողարկված և բացահայտ դրսևորումներին²:

¹ «Ունյուցիայից հետո, Սովետական շրջանում փակվում էին բոլոր եկեղեցիները, որոնք օգտագործում էին որպես պահեստներ: Եկեղեցիներից խաչերը հանում էին: Կրոնական զգացմունքները միայն ծերերի մոտ էր մնացել, որը քիչ-քիչ վերանում էր: Առանձին գյուղերում որոշ ամծանց մոտ դեռևս պահպանվում էին սրբերին հավատալու և մատաղ մորթելու սովորույթները» (տե՛ս՝ **Գ. Գրիգորյան**, Եզվ. աշխ., մաս I, տետր I, էջ 8-9):

² Հայոց ավանդական տոնածիսական միջավայրը ձևավորող ազգային մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականությունը պարբերաբար շարունակվում էր նույնիսկ խորհրդային վերջին շրջանում: Միայն Գանձակի գավառում, 1980-ական թթ. սկզբներին Ադրբեջանի սովետական և կուսակցական կառույցների կողմից իրականացված այդ քաղաքականությունը բավական է՝ ամբողջական պատկերացում կազմելու նշված երևույթի մասշտաբների վերաբերյալ: Ն. Ղազարյանի փաստացի վկայությամբ՝ «Գեղաբեկի

Ղարաբաղցիների ֆիզիկական գոյատևումը, ազգային մշակութային և այդ համատեքստում՝ ավանդական տոնածիսական արժեքների պաշտպանվածությունը և ժառանգորդությունը օբյեկտիվորեն հնարավոր է միայն հայկական անկախ պետական կառույցի պայմաններում: Հակառակ դեպքում՝ կլինեն պարբերաբար կրկնվող բռնի տեղահանումներ, ֆիզիկական և մշակութային ջարդեր, որի ակնհայտ դրսևորումներից է արդեն իսկ հայաթափված հայկական բնակավայրերում ազգային տոնածիսական սրբավայրերի ու մասունքների ավերումները:

շրջանի Փոլաթլու գյուղի հանդում էր գտվում 5-րդ դարի հուշարձան՝ «Վիշապ» սյունը, որը 1983 թ. տարվել է Բաքու: Բարում գյուղի **Երեք Հրեշտակապետաց վանքում** էր գտնվում «Սահմանաքար», որը վերաբերում էր Արցախին և Ուտիքին ու դարձյալ տարվել է Բաքու: Սակայն Բաքվի պետական պատմության թանգարանում այս պատմական արժեքները չեն պաշտպանվում: Միայն վերջին շրջանում պայթեցվել և ավերվել է **Սվրեցիք գյուղի եկեղեցին, Խաչքուլաղ գյուղի եկեղեցին, Դասան (Հռոմաշեն) վանքը** և տասնյակ այլ վանքեր, եկեղեցիներ, հուշարձաններ» (տե՛ս՝ Ն. Ղազարյան, նշվ. աշխ., Երևան, 1984 թ., 2/124, թղթ. 1, էջ 1-2):

**ԱՐՑԱԽՑԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ԱՎԱՆՂԸ XI-XIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ
ՀԻՄՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

XI-XIII դարերի արցախցի երաժիշտների գործունեությունը որպես առանձին երևույթ ուսումնասիրված չէ: Այն գիտական հետաքրքրություն չի էլ կարող ներկայացնել, եթե չդիտարկվի որպես ինքնուրույն դպրոց, եթե այդպիսին կա, կամ էլ հայ միջնադարյան մշակույթի ընդհանուր համատեքստում:

Անդրադառնալով Հովհաննես Սարկավազի գործունեության որոշ կողմերին մենք արդեն իսկ կարող ենք խոսել արցախցի մի շարք միջնադարյան հեղինակների մասին:

Նրանցից առաջինը Սարկավազ Վարդապետի հայրն է, ով մանուկ հասակում կրթել է նրան, ապա և քեռին, ով, իրավամբ, նրա առաջին ուսուցիչն էր: Հովհաննես Սարկավազի կենսագրության մեջ երևակվում է ևս մեկ վարդապետ, ում անձի խնդիրը վիճահարույց է համարվում: Սակայն, ըստ Ն. Թահմիզյանի, հիշատակվող Սարգիս Փառիսոսցին ևս կարող է նույնացվել հայ միջնադարյան մշամավոր հեղինակներից մեկի հետ¹:

Հովհաննես Սարկավազի կյանքն ու գործը, որքան էլ որ ավանդվել է հատվածաբար, այնուամենայնիվ թե՛ միջնադարյան և թե՛ նոր ժամանակներում գործող հեղինակների և հայագետների կողմից հույժ բավարար չափով քննված երևույթ է մեզանում: Նրա կենսագրությանն ու բազմակողմանի վաստակին անդրադարձած միջնադարյան պատմիչների թվում են իր աշակերտ Սամուել Անեցին, Վարդան Արևելցին,

¹ Ն. Կ. Թահմիզյան, Յովհաննես Սարկավազ Իմաստասերը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, արտատպում «Բազմավէպ» հանդէսէն, 1978/ 3-4, էջ 328-356, Վեներտիկ – Ս. Ղազար, 1979, էջ 19-20 (ծանոթ. 55):

Կիրակոս Գանձակեցիին, Անանուհի Կենսագիրը, հայագետներից են Ս. Չամչյանը, Ս. Սոմայանը, Կ. Կոստանյանը, Ե. Տեր-Մինասյանը, Դ. Ոսկյանը, Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը, Ն. Թահմիզյանը, Կ. Միրումյանը և այլոք:

Հովհաննես Սարկավագի երաժշտական, երաժշտատեսական վաստակի ուսումնասիրման տեսանկյունից առանձնանում են հատկապես Ն. Թահմիզյանի¹ և Կ. Միրումյանի աշխատությունները²:

Մի կողմ թողնելով Սարկավագ Վարդապետի տարասեռ ժառանգության աստվածաբանական, դավանաբանական, մեկնողական, տոմարագիտական, բնագիտական և այլ բնույթի արտահայտությունները՝ երաժշտական դաշտի մեջ նախ նշենք, որ շարականագիր է, տաղերի, մերթոզների և այլ երաժշտաբանաստեղծական երկերի հեղինակ, երաժիշտ-տեսաբան:

Մեր խնդիրն, ինչպես նշեցինք, XI-XIII դարերի հայ հիմներգության մեջ Սարկավագ Վարդապետի և նրան հաջորդած հեղինակների ներդրումն ուսումնասիրելն է կամ նրա երաժշտական ժառանգության որոշ կողմեր այս լույսի տակ դիտարկելը:

Ն. Թահմիզյանն, իրավացիորեն, Հովհաննես Սարկավագին համարում է որոշ ժամանակով ընդհատված շարականագրության ավանդույթը վերականգնող և մյուս կողմից, այդ ավանդույթը Կիլիկիա փոխանցող հզոր հեղինակներից մեկը³:

Եվ իսկապես, շարականագրության ավանդույթը վերականգնող X-XI դարերի շարականագիրների թվում են Ս. Գրիգոր Նարեկացին, Սարգիս Ա Սևանցին, Ստեփանոս Ապարանցին, Պետրոս Ա Գետադարձը, Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Հակոբ Սանահնեցին⁴: Հովհաննես Սարկավագը դրանց մեջ ժամանակագրությամբ վերջիններից է: Մյուս կողմից, մինչև Գրիգոր Գ Փոքր Վկայասերը և Ս. Ներսես Շնորհալու ժամանակները, թերևս, ամենախոշոր երաժիշտ հեղինակն է հայկական իրականության մեջ:

¹ Ն. Կ. Թահմիզյան, նշվ. աշխ.:

² Կ. Ա. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

³ Ն. Կ. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 21:

⁴ Ա. Արևշատան, Անիի երաժշտական մշակույթը եւ նրա հետ կապուած շարականագիրները, «Բազմավէպ» հանդես, առանձնատիպ, Վենետիկ- Ս.Ղազար, 1995:

Հայ հիմներգության զարգացման պատմության տեսանկյունից Յուլիանոսի Սարկավագի վաստակն արժևորելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել հայ հիմներգության ժանրային որոշ իրողությունների:

Ձևավորման փուլից մինչև այդ արվեստի զարգացման դասական շրջանի ավարտը, հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստը ստեղծել է շուրջ հազար տարվա մշակութային շերտ՝ իր ժանրային բարդ ու բաղադրյալ հարստությամբ: Այդ ամբողջությունը որպես մեկ հոծ զանգված դիտարկելը փակում է ժանրային խնդիրների լուսաբանման հնարավորությունները, քողարկում միջնադարյան արվեստի զարգացման ներքին տրամաբանությունը:

Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի, իմա՝ հոգևոր երգարվեստի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները նախ թելադրում են խնդիրը դիտարկել մի շարք, այսպես կոչված, «արտարվեստային» գործոնների հաշվարկով, որոնք արվեստի արդի փուլի համար նշանակություն չունեն, սակայն միջնադարյան մշակութային իրողության տեսանկյունից անշրջանցելի և վճռորոշ բնույթ ունեն: Դրանք թվում են ծեսը և ծիսական ֆունկցիան, դավանաբանական-գաղափարական հիմքը, կրոնափիլիսոփայական ետնախորքը և այլն: Դրանցից յուրաքանչյուրն էլ կարող է դիտվել որպես ժանրակերտիչ գործոն, թեև արտարվեստային բնույթ ունի: Թերևս խնդրին ծանրանալ չարժե, քանի որ երևույթը նկատելի է ոչ միայն հայ մշակույթի պատմության մեջ:

Նշված արտարվեստային և զուտ տվյալ արվեստի ներքին գործոնների համադրությամբ հայ հիմներգության ժանրերը քննելիս՝ նկատում ենք, որ դրանք ոչ թե պատմական ընթացքի կամայականությամբ մեկ հոծ ամբողջություն ձևավորած միավորներ են, այլ որոշակի պատմափուլում ծիսական շատ կոնկրետ պահանջմունքների բավարարման համար առաջացած երևույթներ, որոնք իրենց ժամանակի մեջ վավերացվել և կանոնացվել են՝ դավանաբանության, եկեղեցու վարդապետության դիրքերից քննվելով: Ուստի, արդյունքում ձևավորվել են հայ հոգևոր երգարվեստի զարգացման տարբեր ժամանակափուլերին հատուկ ժանրային համակարգեր, որոնք վերոհիշյալ գործոններով պայմանավորվելուց զատ, բնութագրվում են նաև ներարվեստային հատկա-

միշտ երաժշտական մտածողության տիպ, ստեղծագործական-կատարողական սկզբունք և մեթոդ, լեզվաոճ և այլն:

Հայ հոգևոր երգարվեստի ժանրային ենթահամակարգերն են սաղմոսերգությունը, շարականերգությունը, որ կարելի է կոչել «Մեծ հիմներգություն», և «Փոքր հիմներգություն» կոչվածը, որի առանցքը կազմում են «տաղային արվեստ» հասկացության բաղադրիչ ժանրային միավորները¹: Այս համակարգերը միմյանցից անկախ, անջրպետված չեն: Դրանք, պատմական զարգացմանը զուգընթաց, ոչ միայն միահյուսվել են, այլև ներկառուցվել են միմյանց՝ վերջնահաշվում ձևավորելով մեկ ամբողջական ժանրային համակարգ՝ երեք ենթահամակարգերով:

Երևույթը, որքան որ պայմանավորված է եղել մշակույթի այս ճյուղի օրինաչափություններով, նույնքան էլ եղել է գիտակցված և երբեմն ծրագրային բնույթի: Օրինակ՝ Ս. Ստեփանոս Սյունեցին, սաղմոսերգական հնավանդ սովորությամբ, ինչպես նշում է Օրմանյանը, իրար ետևից դասակարգում է տասը Օրհնություն-կցուրդները՝ որպես տասը մարգարեական օրհնությունները մեկ շարքով երգելու տոնական ավանդույթի նշանակ²: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ սաղմոսերգական սկզբունքներից մեկի ներթափանցումը Մեծ հիմներգության մեջ, որի արդյունքում ձևավորվում է հիմներգական նոր ժանր՝ Ավագ օրհնություն: Այն, որ Ավագ օրհնությունները Ս. Ստեփանոս Սյունեցու կողմից ձևավորվել են հին, սաղմոսերգական ավանդույթների վերականգնման տրամաբանությամբ³, փաստվում է նաև զուտ երաժշտական գործոնով:

¹ Մ. Նավոյան, Հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի ժանրային համակարգերը, «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները», հայագիտական միջազգային համաժողովի զեկուցումների թեզեր, Երևան, 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 198-199:

Մ. Նավոյան, Գրիգոր Նարեկացին որպես հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտաբանաստեղծական արվեստի ժանրային նոր համակարգի հիմնադիր, «Երաժշտական Հայաստան» ամսագիր, Երևան, 2004, ք.1(12), էջ 9-12:

² Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1006: Ծիսագիտութիւն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1977, էջ 21:

³ Մաղաքիա արք. Օրմանյանը հստակ գրում է. «Օրհնութեան» շարականին ծագումը, Սաղմոսին ութ կանոններէն իւրաքանչիւրին ծայրը աւելացուած մարգարեական օրհնութիւններէն է, որոնք կանոնը քաղելէ ետքը եղանակով կ'երգուեին»: Տե՛ս. Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 1006:

խոսքն այս դեպքում, կանոն – սաղմոսների պես¹, զուտ ութ ծայնեղանակներով երգաշարեր կազմելու մասին է, մինչդեռ VIII դարում Ութձայն համակարգը հարստացել էր այլ ծայնեղանակներով ևս²:

Այս տեսակի առաջացումն այլ կերպ բացատրելը, մանավանդ որպես ազդեցության հետևանք դիտարկելը, քննություն չի բռնում³:

Վերջապես մեր երաժշտական իրականության մեջ առաջին բազմաժանր հեղինակներից մեկը Ս. Գրիգոր Նարեկացին է, ում ժառանգությունը մեզ է ներկայանում իրեն վերագրված միակ շարականով՝ Հարության Տեր Հերկնիցով, երաժշտությամբ պահպանված մեկ տասնյակի չհասնող տաղերով և իր հանճարեղ աղոթագրքի «Ընկալ քաղցրությամբ» սաղմոսերգական նկարագիր ունեցող հատվածով: Այլ խոսքով՝ նրա ժառանգության մեջ համադրվում են մեր նշած բոլոր ժանրային ենթահամակարգերն՝ իրենց հատուկ երաժշտական մտածողության տիպերով:

Տարբեր ժանրերի նման համադրումը մեկ հեղինակի ստեղծագործության մեջ կարող է պայմանավորված լինել և՛ մշակույթի զարգացման տրամաբանությամբ, և՛ հեղինակի կոնկրետ մոտեցումներով: Երկու դեպքում էլ այն վկայում է ժանրային տարբեր շերտերի գիտակցված և անհրաժեշտ (այս դեպքում առաջին հերթին՝ արտարվեստային անհրաժեշտություններ), ստեղծագործական կամ ծրագրային մոտեցումներով պայմանավորված ինտեգրացիոն երևույթի մասին:

Թերևս սխալված չենք լինի, եթե նշենք, որ նման բազմաժանր երկրորդ խոշոր հեղինակը մեզանում Հովհաննես Սարկավազն է: Նախ նշենք, որ կապը պատահական չէ: Առհասարակ Նարեկյան տաղային

¹ **Սաղաքիա արք. Օրմանյան**, Ծիսական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1992, էջ 143 – 144: Ավելացնենք, որ Ավագ օրհնություններից ԳԿ օրհնությունը վերագրվում է Ս. Ներսես Շնորհալուն, ինչը Սաղաքիա արք. Օրմանյանը համարում է Ս. Ներսես Շնորհալու կողմից Ստեփանոս Սյունեցու երկը իր ստեղծագործությամբ փոխարինելու արդյունք: Տե՛ս, **Սաղաքիա արք. Օրմանեան**, նշվ. աշխ., էջ 1007:

² **Н. К. Тагмизян**. Теория музыки в древней Армении, изд. АН Арм. ССР, Ереван, 1977, с. 168.

³ **Ս. Նավոյան**, Մեսրոպ Մաշտոցը և հայ հիմներգության ձևավորման հարցերը, միջազգային գիտաժողով՝ նվիրված հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, զեկուցումների դրույթներ, «Գիտութիւն» հրատ., 2005, էջ 157-158:

ավանդույթների և Աճիի դպրոցի միջև կապը նկատված երևույթ է¹: Հովհաննես Սարկավազը, Աճիի երաժշտաբանաստեղծական ավանդույթի ամենախոշոր կրողներից մեկը լինելով, չէր կարող չամբողջաբանալ իր նախորդին՝ Ս. Գրիգոր Նարեկացուն: Դրա մասին են վկայում ոչ միայն Սարկավազ Վարդապետի շարականներն ու եղանակով ցավոք չպահպանված տաղերը, այլ նաև աղոթագիրքը, որը թե՛ Ալիշանը և թե՛ Թահմիզյանը ակամա զուգորդել են Նարեկի հետ²: Այս երկն, անշուշտ, նույն սաղմոսերգական ավանդույթի արտացոլանք կարող է համարվել: Նման դրսևորում է նաև Հովհաննես Սարկավազի «Նորին [Յոհաննու] առ Սարգիս ողբքը»: Այստեղ առկա է ոչ միայն աղոթական տեքստ, այլև ԲԿ ձայնեղանակային ցուցումը, ինչն ուղղակի վկայություն է, որ երկը երաժշտական կատարման համար է նախատեսվել³:

Նշված երեք ենթահամակարգերից յուրաքանչյուրն, ինչպես նշվեց, ներկայացնում է ոչ միայն հայ հոգևոր երգարվեստի զարգացման տարբեր փուլեր, այլև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ծեսի պատմական զարգացման տրամաբանությունն է մատնանշում: Ջուտ երաժշտական մտածողության և ընդհանուր բնութագրերի իմաստով՝ Սաղմոսերգությունը ձայնեղանակային մտածողությամբ է արտահայտվում, թեև խոսքի և երաժշտության համադրումն այստեղ առավել ճկուն կերպով է կազմակերպվում՝ հիմք ունենալով հայոց լեզվի շեշտական, առոգանական հատկանիշներն ու տրոհական առանձնահատկությունները:

Զնայած, որ խիստ դժվար է այս կամ այն ժանրային ենթահամակարգը որևէ լեզվաոճով բնութագրել, սակայն կարելի է նշել, թե որ լեզվաոճն է առավել կիրառական կամ հատուկ կոնկրետ ենթահամակարգի համար: Սաղմոսերգությունն ընդգրկում է նաև երգային զարգացած նկարագիր ունեցող օրինակներ ևս, սակայն այդ ենթահամակարգին առավել հատուկ է առոգանված եղանակավոր խոսքը, կամ ասերգը՝ որպես վանկային լեզվաոճի արտահայտություն:

Նույն կերպ ընդունելի համարելով մյուս լեզվաոճերի կիրառության հնարավորությունը՝ Մեծ հիմներգությանն առավել հատուկ է նմատիկ

¹ Ն. Կ. Թահմիզյան, Գրիգոր Նորեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1985, էջ 231:

² Ն. Կ. Թահմիզյան, Յովհաննես Սարկավազ Իմաստասերը, էջ 16-17:

³ Ն. Կ. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 19:

կամ ներվանկային լեզվաոճը: Երաժշտական մտածողությունը նույն ծայնեղանակայինն է, սակայն դրա բաղադրիչ տարրերի առավել նորմավորված կաղապարումներով:

Փոքր հիմներգության մեջ ծայնեղանակային մտածողությունը հիմնականում հաղթահարվում է: Այն փոխարինվում է այսպես կոչված ազատ մեղեդիական մտածողությամբ: Բոլոր լեզվաոճերի կիրառությունն այստեղ հնարավոր է թե՛ առանձին վերցրած և թե՛ համադրումներով:

Հայ հիմներգության զարգացումը ցույց է տալիս, որ այս ենթահամակարգերն ազատ ներթափանցել են միմյանց մեջ, հիմք հանդիսացել մեկը մյուսի համար՝ հաջորդը նախորդի մեջ ներկառուցվելով: Այդ փոխներթափանցումները կատարվել են ոչ միայն կոնկրետ ժանրերի մեկ ենթահամակարգից մյուսն անցնելու, բազմաժանր ստեղծագործություն ձևավորելու ճանապարհով, այլ նաև այս կամ այն ենթահամակարգին հատուկ երաժշտական մտածողության տարրերի ներգրավմամբ մյուսի մեջ կամ էլ տարբեր ենթահամակարգերին հատուկ երաժշտական մտածողության տարբեր ձևերի միջև ձևավորված տեսական ընդհանրության միջոցով:

Եթե «Սաղմոսերգություն» և «Մեծ հիմներգություն» ժանրային համակարգին հատուկ է նույն ծայնեղանակային մտածողությունը, թեև եականորեն տարբեր արտահայտությամբ, ապա «Փոքր հիմներգությունը» հիմնականում բնորոշվում է ազատ մեղեդիական մտածողությամբ, որն ուղղակի հակոտնյան է ծայնեղանակայինի: Սակայն, մյուս կողմից, որպես նույն երաժշտական մշակույթի դրսևորումներ, դրանք միևնույն մշակութային և առավել կոնկրետ՝ նույն տեսական հիմքերի վրա են կառուցվում:

Այս տեսանկյունից առավել մեծ «հարազատություն» կա «Սաղմոսերգության» և «Փոքր հիմներգության» միջև, քան՝ «Մեծ» և «Փոքր» հիմներգական ենթահամակարգերի, չնայած, վերջինները պատմականորեն հաջորդաբար են ձևավորվել: Դիտարկումը հաստատվում է նաև Հովհաննես Սարկավազի և նրան հաջորդած այլ հեղինակների ստեղծագործության քննությամբ:

Նախ, Սաղմոսերգության մասին:

Սարկավազ Վարդապետի կյանքն ու գործն ուսումնասիրողները նշել են, որ այս խոշոր հեղինակի մեծագույն ծառայություններից մեկը

սաղմոսներգական հին ավանդույթի վերականգնումն էր: Նրա կողմից ճշգրտվել, ապա օրինակվել ու տարածվել է Սաղմոսարանը՝ ըստ պատմական աղբյուրների վկայության: Հ. Ոսկյանն առհասարակ շեշտում է Սարկավազ Վարդապետի կողմից ամբողջ Սուրբ Գրքի տեքստերի ճշգրտման փաստը¹: Դա նշանակում է, բուն սաղմոսներից բացի, սաղմոսներգական բազմաթիվ այլ հատվածներ ևս, որպիսիք են թե՛ հին կտակարանային և թե՛ ավետարանային ծիսական ընթերցվածները:

Մյուս կողմից, Սարկավազ Վարդապետը նաև դասավանդել է քերականություն, ուրեմն և առոգանություն, ինչը հիմքն է սաղմոսերգության: Անանուն կենսագիրը, նրա դասավանդած առարկաների մասին գրելիս, նշում է. «Նախ զքերականութիւն՝ զբանալին գիտութեան և զդաստիարակն վերծանութեան և զաղբերն տասնեակ առոգանութեանց...»²: Այստեղ ուղղակի շեշտվում են առոգանության ենթաբաժինները՝ տասը նշաններով: Իհարկե, վերծանությունը քերականության անբաժան մասն էր միջնադարում և ժամանակի կրթական համակարգում ուներ անշրջանցելի բնույթ: Այն, որ Հովհաննես Սարկավազի գործունեության մեջ այն նաև կապված էր սաղմոսներգական խնդիրներին, ինչպես նշեցինք, հաստատվում է նրա կողմից Սաղմոսարանի և սաղմոսներգական ավանդույթի նորոգմամբ: Մյուս կողմից, քերականական այդ ոլորտի և սաղմոսերգության գործնական շաղկապվածության մասին է վկայում Կոմիտասի ուսումնասիրությունը³:

Այլ խոսքով՝ Հովհաննես Սարկավազը ծրագրային, նպատակասլաց կերպով վերականգնել է սաղմոսերգության հին և իր ժամանակներում աղճատված ավանդույթը՝ ճշգրտելով Սուրբ գրային տեքստերը, ընտիր օրինակներ կազմելով և տարածելով երկրի տարբեր կենտրոններում, ինչպես նաև վերականգնելով ճիշտ մատուցման եղանակները: Դրա հետ մեկտեղ, սաղմոսներգական երկերը համադրել է հիմներգական մյուս դրսևորումներին՝ իր ժառանգությամբ ձևավորելով տարբեր տեսակային արտահայտություններ ընդգրկող ամբողջություն:

¹ Նշվ. աշխ., էջ 14:

² Հանդես Բանի վասն երանել առնն Աստուծոյ Սարկաւազին կենաց եւ մահու, եւ այլոց հուպ յայն ժամանակս, **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 337:

³ **Կոմիտաս**, Հայ Յեկեղեցական յերաժշտություն, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Պետ. հրատ., Երևան, 1941, էջ 153-165:

Յովհաննես Սարկավազի գործունեության քննարկված դրսևորումները կարելի է դիտարկել հայ միջնադարյան մշակույթի առավել լայն շրջանակներում՝ խնդիրը դնելով «Յայոց արևելից» կամ «հյուսիսային կողմանց» վարդապետների ժառանգության դաշտի մեջ: Այստեղ, մեկ կողմից հաստատվում է մեր կողմից արդեն նշված հիմներգական ժանրերի ներհյուսման վերաբերյալ մոտեցումը, մյուս կողմից փաստվում է այդ կամ նաև այդ ավանդույթները Կիլիկիայի հայկական մշակույթի զարգացման հուն տեղափոխելու գործընթացում Յովհաննես Սարկավազի և այլ արևելյան վարդապետների անշրջանցելի դերը: Ընդսմին, նրանց թվում Սարկավազ Վարդապետն առաջինն է, եթե նկատի ունենանք Վանական Վարդապետի, Վարդան Արևելցու, Յովհաննես Երզնկացի Պլուզի, Ս. Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու և այլոց գործունեությունը, մյուս կողմից՝ Կիլիկիայի խոշոր հեղինակներ Ս. Ներսես Շնորհալու, Ս. Ներսես Լամբրոնացու, Գևորգ Սկևռացու ժառանգությունը:

Եթե մեր նշած հեղինակներից շատերն իրենց հիմներգական ժառանգությունը ստեղծել են ժանրային բազմազանությամբ, ապա, դրա հետ մեկտեղ նրանցից ոմանք հատուկ ուշադրությամբ անդրադարձել են հենց սաղմոսներին և սաղմոսերգությանը: Կարծում ենք Մի դարից սկիզբ առնող երգաստեղծական ժանրերի նորոգչական և ինտեգրացիոն շարժման դրսևորում կարելի է համարել այն, որ Յովհաննես Սարկավազից հետո Վանական Վարդապետը, Վարդան Արևելցին (ի դեպ՝ երկուսն էլ Գանձակեցի) և այլ հեղինակներ ստեղծում են սաղմոսների մեկնություններ: Մինևույն ժամանակ, վերջինի հիմներգական ժառանգությունը, սոսկ տեսակային և ենթատեսակային առումներով, արդեն մի շարք խմբեր է ընդգրկում¹:

Իհարկե, կարելի է պնդել, որ այդ մեկնությունները հիմնականում աստվածաբանական, կրթական նպատակ հետապնդող մեկնողական երկեր են, ուստի և կապ կարող էին չունենալ սաղմոսերգության գործնական խնդիրների հետ: Սակայն, հենց միջնադարյան աղբյուրները վկայում են, որ դրանք ունեին բազմակողմանի գործնական կիրառություն: Ի դեպ, դրանցից մեկը հիշատակում է, որ Վարդան Արևելցու

¹ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործը, հ. Բ, ՅՍՄ ԳԱԱ հրատ., Երևան, 1989, էջ 216-ից:

սաղմոսների մեկնությունը կիրառվում էր նաև «դաս» կամ «դասի» ասելու համար: Փ. Անթապյանը դրանից եզրակացնում է, որ այստեղ խոսվում է ուսումնական գործընթացի մասին¹: Հնարավոր համարելով անվանի բանասերի մեկնությունը նկատենք նաև, որ «դասի» ասելու առավել հստակ բացատրությունը սաղմոսերգության դաս առ դաս կատարելն է և խոսքն այն մասին է, որ այդ մեկնությունները գործնականում նպաստում էին սաղմոսների բովանդակային ճիշտ մեկնաբանման, որն արդեն նույն քերականական «վերծանության» «ենթադատությունն» էր լրացնում: Դրա մասին խոսվում է Վարդան Արևելցու սաղմոսների վերաբերյալ Ս. Գրիգոր Տաթևացու դիտողության մեջ, որ բերում է Փ. Անթապյանը. «Եւ է պիտանութիւն սորա Վարդանայ դասի ընթերցմանց՝ պայծառ տեսութեանց, այլ և ի բանս խրատու և քարոզութեանց և լուծման խնդրոյ հարցողաց, նաև՝ ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսողաց»²: Այսինքն՝ մեկնաբանությունը հստակեցնում էր բովանդակությունը, ըստ որի որոշարկվում է «ենթադատական եղանակը», առոգանությունը՝ իր չորս ենթաբաժիններով և տասը նշաններով, տրոհությունը՝ երեք նշաններով³. այն ինչի մասին սաղմոսերգության կապակցությամբ նշեցինք վերևում, ըստ Կոմիտասի: Ավելացնենք, որ Վարդան Արևելցին հայ միջնադարյան ամենախոշոր քերականներից մեկն էր⁴:

Այսինքն, այս դեպքում, ինչպես և Հովհաննես Սարկավազի կապակցությամբ, քերականական մեկնություններն ու գործունեությունը չէր կարող առանձին դիտվել սաղմոսերգությունից: Դրանց համադրությունը մեկ հեղինակի ժառանգության մեջ պատահական չէ այս դեպքում, մանավանդ, որ երբեմն հատուկ շեշտվում է քերականական արվեստի «վերծանություն» բաժինը, որի գործնական դրսևորումներից մեկը, ըստ էության, սաղմոսերգությունն է:

¹ Փ. Անթապյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, հ. Ա, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1987, էջ 137:

² Նույն տեղում:

³ Տե՛ս, Մ. Նավոյան, Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեդիական մտածողությունը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, «Արճեշ» հրատ., Երևան, 2001, էջ 96-123:

⁴ Տե՛ս, Վարդան Արևելցի, Մեկնութիւն քերականի, աշխատասիրությամբ՝ Լ. Գ. Խաչերյանի, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1972:

Մյուս կողմից, նույն այս հիմքի վրա՝ ենթադատելով, առողջանելով և տրոհելով, ըստ համապատասխան նշանների և օրինաչափությունների ձևավորվում է ազատ մեղեդիական մտածողությունը: Այլ խոսքով՝ լեզվի օրինաչափությունների հիման վրա, տեքստի գեղարվեստական հատկանիշներին և կառուցվածքին համապատասխան և շնորհիվ բովանդակային, հուզական, զգացմունքային ինքնատիպության ու դրանից բխող եղանակային ու հնչական յուրատիպության համաձայն խախտվում է ձայնեղանակային մոդելավորված և տիպականացված մտածողության կերպը¹:

Ստացվում է, որ նույն տեսական հիմքի վրա կարելի է կազմակերպել թե՛ «Սաղմոսերգության» ձայնեղանակային երաժշտական մտածողությունը, թե՛ «Փոքր հիմներգության» ազատ մեղեդիական մտածողությունը:

Այս ընդհանրությունն էլ, իր հերթին հնարավորություն էր ընձեռում քերական – մեկնիչ հեղինակներին, որպիսիք էին և՛ Յովհաննես Սարկավազը, և՛ Վարդան Արևելցին, առողջանական հիմքի վրա անդրադառնալ տարբեր երաժշտական մտածողությամբ ստեղծվող ժանրերի:

Վերը քննարկված երևույթները թե՛ բազմաժանր ստեղծագործության, թե՛ հիմներգական տարբեր ժանրային համակարգերի և, մասնավորաբար, սաղմոսերգության գիտակցված փոխներհյուսման և թե՛ սաղմոսների մեկնությունների արտահայտություններ կարելի է հանդիպել նաև Կիլիկիայի միջնադարյան հայկական մշակույթում:

Հայտնի է, որ մշակութային մի շարք գործընթացների դեպքում կարելի է խոսել Մայր Հայաստանից Կիլիկիա մշակութային հոսքերի մասին: Մեր քննարկած խնդիրների կապակցությամբ նույնպես նման կապն ակնհայտ է: Հայաստանի և Կիլիկիայի երաժշտական զարգացումների շարունակականությունը և ընդհանրականությունն ապահովված հեղինակների թվում են Ս. Ներսես Շնորհալին, Վարդան Արևելցին, Յովհաննես Երզնկացի Պլուզը և այլոք: Սակայն Մայր Հայաստանի հիմներգական ավանդույթները, հատկապես տեսակային ենթահամակարգերի ներհյուսման սկզբունքների տեսանկյունից, Կիլիկիայի մշակութային կենտրոններ փոխանցած առաջին խոշոր հեղինակներից է Յովհաննես Սարկավազը:

¹ Նույն տեղում:

Կիլիկյան իրականության մեջ մեր նշած ծրագրային ինտեգրացիոն գործունեությունն ընդգծված կերպով իրականացրած հեղինակներից է Գևորգ Սկևռացի վարդապետը: Նրա և Մայր Հայաստանի մշակութային կապերի կամ ուղղակիորեն դրանք ժառանգելու մասին կարող ենք խոսել այն բավարար հիմքով, որ Գևորգ Սկևռացին, թեկուզ կարճ մի շրջան, աշակերտել է հենց Վարդան Արևելցուն¹: Մյուս կողմից, Հովհաննես Սարկավազի, վաստակին նրա ժառանգության զուգորդմանը կամայական երանգ չհաղորդելու համար բերենք հ. Ղևոնդ Ալիշանի հետևյալ դատողությունները Գևորգ Սկևռացու մասին. «Այս յիշատակ բանք Մովսիսի եւ այլք ևս՝ ցուցանեն, զի ոչ միայն քերականական շարակարգութեան բանից և վայելուչ գրութեան, այլև ուղղագրութեան և պատշաճ տրոհութեան նոցին և կետադրութեանց՝ քաջ հմուտ և հմտացուցիչ էր Գևորգ, մանաւանդ յընդօրինակութիւնս Ս. գրոց, որպէս թէ ոչ այլ ոք՝ ՚ի բազմայանճարն Սարկաւազ Վարդապետէ»²: Այստեղ մեծանուն հայագետը ոչ միայն շեշտում է առողջանության իմացության և դասավանդման ոլորտում Գևորգ Սկևռացու անզուգական լինելը, այլև Աստվածաշնչի կետադրման գործում նրա հսկա ներդրումը: Այս իմաստներով Ալիշանը Գևորգ Սկևռացուն կարող է համեմատել միայն «բազմահանճար» Սարկավազ Վարդապետի հետ: Դարձյալ նույն ոլորտներն են շեշտված, որոնք աներկբայորեն մատնանշում են Սաղմոսերգությունն ու դրան հատուկ մոտեցման եղանակները: Դրանից բացի, մեր նշած տեսակային ենթահամակարգերի, դրանց հատուկ բնութագրերի փոխներթափանցման մասին Գևորգ Սկևռացու դեպքում վկայում է մեկ այլ հանգամանք ևս:

Բանն այն է, որ XIII դարի նշանավոր երաժիշտ Գրիգոր Խուլը խմբագրում է Շարակնոցը՝ հավանաբար հիմք ընդունելով Կիլիկիայում կենցաղավարող ընտիր երաժշտաբանաստեղծական օրինակները: Առաքել Սյունեցին հիշատակում է, որ Գևորգ Սկևռացին առողջանության արվեստը խառնեց այդ երգերին: Դրա մասին Ալիշանը գրում է. «Որպէս

¹ «Գնաց յԱրևելս՝ առ երջանիկ ռաբունին Վարդան և աշխատասիրաբար ելից գբերին իւրում գիտութեան»: **Էդ. Բաղդասարյան**, Գևորգ Սկևռացու «Վարքը», «Բանբեր Մատենադարանի», Երևան, 1964, հ. 7, էջ 416:

² **Ղևոնդ Ալիշան**, Սիսուան, Վեներիկ-Ս. Ղազար, 1885, էջ 106:

գուշակի խուլն զեղանակս ճշգրտեաց, իսկ Գեորգ զբանսն և զեղանակսն...»¹:

Յետագա ուսումնասիրությունները գուցե և հնարավոր դարձնեն առավել հստակ ձևակերպումներն այն մասին, թե ի՞նչ է արել Գեորգ Սկևռացին ըստ էության: Այսօր կարելի է ենթադրել, որ պարզ երգերում տեղ էին գտել սխալներ, կամ Կիլիկիայի ընտիր շարականները, ինչպես Չայաստանում այս ժամանակափուլում, տաղային արվեստի ազդեցությամբ կարող էին դուրս գալ ձայնեղանակային մտածողության դաշտից, կամ էլ կարող էին դրսևորել ձայնեղանակային մտածողության ամենազարգացած արտահայտությունները՝ դրանով իսկ խախտելով վաղ միջնադարյան նորմատիվային ձևակերպումները ձայնեղանակներում և նրանցով երգվող շարականներում:

Յետևապես Գեորգ Սկևռացու նախածեռնությամբ պետք է որ ստեղծագործական գործընթացը կարգավորող այլ սկզբունքներ ներմուծված լինեին շարականերգության մեջ: Այսինքն, եթե ձայնեղանակային սկզբունքն անհարթ էր գործում կամ չէր գործում առհասարակ, ապա խոսքի եղանակավորման գործընթացն անվթար պահելու և ճշգրիտ իրագործելու միակ այլընտրանքը հայոց լեզվի առոգանական նորմերի գերակայության վերահաստատումը պետք է լիներ ստեղծագործական սկզբունքի մեջ: Նշվածը, մեկ կողմից, սաղմոսերգական սկզբունք կարող էր համարվել, մյուս կողմից փոքր հիմներգությանը հատուկ ազատ մեղեդիական մտածողության հիմքը կարող էր մատնանշել: Ուրեմն, Գեորգ Սկևռացին ներհյուսել է մեր կողմից բերված բոլոր երեք տեսակային ենթահամակարգերին հատուկ երաժշտական մտածողության տիպերը: Նույնիսկ, եթե մեր ենթադրությունն իր մանրամասներում ստուգելի համարվի, ապա այդ դեպքում էլ իր հիմնական ձևակերպմամբ կարող է հիմնավոր դիտվել: Արդի խազաբանության մեջ Գեորգ Սկևռացու ներդրումն իմաստավորվում է որպես հիմնական խազերի միակցություն, ինչը խազարվեստի մեջ խազագրման նոր մակարդակ է² և մեր ենթադրությանը համահունչ մեկնաբանություն կարող է ունենալ:

¹ Նշվ. աշխ., էջ 105-106:

² Ն. Թահմիզեան, Արդի խազաբանություն, «Դրագարկ» հրատ., 2003, էջ 135-136:

Եթե հետևելու լինենք խազարվեստի մաս կազմող նշանային ենթահամակարգերի կիրառության ոլորտների որոշակի կոնկրետությանը և, ըստ այդմ նրանց ստացած անուններին՝ երաժշտա-առողջամական¹, շարականի², մանրուսման³ խազեր և այլն, ապա կնկատենք, որ դրանք, որոշ ընդհանուր մոտեցման դեպքում, համընկնում են մեր նշած հիմներգական ենթահամակարգերին, ինչը օրինաչափ է: Շեշտենք, որ այդ ենթահամակարգերը բնութագրվում են երաժշտական մտածողության որոշակի տիպերով: Խազարվեստն, իր հերթին, երաժշտական մտածողության այդ տիպերի ուղղակի նշանային արտացոլանքն է⁴ հիմներգական կոնկրետ իրողություններ գրանցելու անհրաժեշտությամբ առաջացած (չենք մոռանում, որ նշվածին զուգահեռ, խազարվեստն ուներ աշխարհայեցողական, փիլիսոփայական և այլ ոլորտներ ընդգրկող խիստ ընդլայն և տարասեռ ետնախորք): Հետևապես, առողջամական նշանների զուգորդումը շարականի խազերին կարող է նաև նշանակել մեզ հետաքրքրող ժանրային ենթահամակարգերից առաջինի և երրորդի համադրում, դրանց երաժշտական մտածողության ձևերի վերոհիշյալ ընդհանուր հիմքի վրա՝ այս դեպքում դրսևորված գրառման արվեստի տարբեր ոլորտների միահյուսմամբ: Չենք կարող չավելացնել, որ խնդրի վերջնական հստակեցումն, այս տեսանկյունով, իհարկե, կախված է խազագիտական հետազոտությունների հետագա հաջող ընթացքից:

Ինչևէ, իմի բերելով՝ կարելի է նշել, որ հայ հիմներգությունը մեկ ընդհանուր տրամաբանությամբ զարգացնելու, նրա տարբեր ենթահամակարգերն ու երաժշտական մտածողության ձևերը, իրենց պայմանավորված դրսևորումներով հանդերձ, միասնական տրամաբանության ենթարկելու և դրանով հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական արվեստի տեսակային հարստությունը կուռ ամբողջություն դարձնելու ճանապարհին Հովհաննես Սարկավազի և իրեն հաջորդած մի շարք

¹ Տե՛ս, **Ռ. Աթայան**, Հայկական խազային նոտագրությունը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1959, էջ 11:

² Տե՛ս, **Կոմիտաս**, Շարականի խազերի նշանակությունը, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Պետ. հրատ., Երևան, 1941, էջ 166-171, նաև՝ **Ռ. Աթայան**, նշվ. աշխ., էջ 88, 156:

³ Տե՛ս, **Ռ. Աթայան**, նշվ. աշխ., էջ 89:

⁴ Հմմտ. **Ռ. Աթայան**, նշվ. աշխ., էջ 88-89:

հեղինակների ներդրումն անշրջանցելիորեն կարևոր է: Նրա վաստակը կապող օղակ է Մայր Հայաստանում և Կիլիկիայում համանման գործընթացներ իրականացրած հեղինակների միջև: Նրա ստեղծագործությամբ են ապահովվում հիմներգության մի շարք տրամաբանական զարգացումներ X դարից մինչև XIII դարի վերջ՝ ներառյալ Նարեկավանքի, Անիի, Հաղպատի, Կարմիր վանքի, Հռոմկլայի և Սկևռայի դպրոցների ավանդույթը և մյուս կողմից՝ Ս. Գրիգոր Նարեկացու, Ս. Ներսես Շնորհալու, Ս. Ներսես Լամբրոնացու, Գևորգ Սկևռացու և այլոց ժառանգությունը:

**ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒԴԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ԴԴ ԳԱԱ ՀԱԻ**

**ԱՅՈՒՆԻՔ - ԱՐՑԱԽԻ ԱՎԱՆՂԱԿԱՆ ՏԱՐԱԶԱԽՈՒՄԲԸ ՀԱՅՈՑ
ՏԱՐԱԶԻ ՀԱՍԱԿԱՐԳՈՒՄ**

Ժողովրդական տարազը ավանդական նյութական մշակույթի կարևորագույն տարրերից է, որը լավագույնս կարող է կատարել էթնիկական ցուցիչի դեր: Հայկական ավանդական տարազն իր բոլոր տարազախմբերով հանդերձ, ինչպես մեր բազմաբարբառ լեզուն, անցել է զարգացման երկարատև ուղի՝ սերտորեն կապված լինելով մեր ժողովրդի պատմության ու մշակույթի, ազգային ինքնատիպ խառնվածքի, գեղագիտական նախասիրությունների ու ընկալումների հետ:

Հայկական տարազի համալիրում առանձնացվում են մի շարք յուրօրինակ խմբեր, որոնք տեղական առանձնահատկություններով ու տարբերակներով հանդերձ, բնութագրվում են համահայկական գծերով:

Արցախի հայերի տարազը նույնպես կազմում է հայկական բազմախումբ տարազի անբաժանելի մասը, որն անբակտելի կապերով շաղկապված լինելով հայկական մի շարք տարազային համալիրներին, մեզ է ներկայանում համահայկական բնութագիր ունեցող բազմաթիվ ընդհանրական գծերով, ինչպես տարազի կառուցվածքի, առանձին տարրերի ձևվածքի ընդհանրության, այնպես էլ դրանց պատրաստման ու կրելու եղանակների մեջ:

Արցախի տարազն ունի տարածման լայն արեալ: Մի կողմից այդ համալիրը բացահայտ նմանություն է ցուցաբերում, գրեթե ամբողջությամբ համընկնելով Ջանգեզուրի պատմազգագրական շրջանի (Գորիս, Սիսան, Ղափան) ավանդական տարազի (այդիսպ պատճառով տարազախումբը կոչվում է Սյունիք-արցախյան) հետ: Բացի այդ, ակնհայտ զուգահեռներ կան Գողթնի և Մեղրիի տարազի հետ, մյուս կողմից

արցախցիների՝ Հայաստանի հյուսիս-արևելք, Տավուշի պատմազգագրական շրջան (ներկայիս Նոյեմբերյանի, Իջևանի, Կարմիրի շրջաններ) կատարած տեղաշարժերի հետևանքով արցախյան տարազի տարբերակը տարածվում է այդտեղ և լուրջ ազդեցություն գործում տեղական տարազի վրա:

Արցախի տարազի կանանց համալիրն առանձնանում է ձևվածքի կատարելությամբ և գունային ներդաշնակ լուծումներով: Հաճախ է հագուստում դիտվում կարմիր և կանաչ, կարմիր և կապույտ կամ մանուշակագույն երանգների գուգորդում: Գույների նմանօրինակ ընտրությունը պատահական չէ. նախ՝ կարմրի, կապույտի, կանաչի ներդաշնակ համադրումները բնորոշ են մեր ավանդական զարդարվեստին և գունարվեստին. դա են հավաստում մեր թանգարաններում պահպանվող և ցուցադրվող հայկական գեղարվեստական գործվածքի՝ գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության հրաշալի նմուշները: Ըստ Գ. Օսիպովի, Շուշիի գավառի Քարատակ գյուղում, հայուհիների հագուստն ամբողջովին կարմիր գույն ուներ¹:

Բացի այդ, հայտնի է, որ վաղ անցյալում յուրաքանչյուր գույն ունեցել է որոշակի իմաստ ու ծիսական խորհուրդ: Կարմիր գույնին վերագրվել է մաքրագործող, չարխափան մոգական զորություն, կանաչ-կարմիրը դիտվել է որպես կյանքի, կենսունակության, արգասավորության խորհրդանիշ (հայոց մեջ, ինչպես հայտնի է, որդուն ամուսնացնելիս հաճախ ասել են. «կանաչ-կարմիր պիտի կապենք»): Ժողովրդական երգերում ևս հաճախ գովերգում են այդ գույները. «Կանաչ-կարմիր հագնիս, Ձինչ նռան հատըն մմանիս...»²:

Կարմիր գույնի կտավե կամ սատինե շապիկի և կարմրագույն վարտիքի վրայից կանայք հագնում էին այժնավոր պարեգոտ՝ «իրեքփշկանի», «խըլըղ», «ղաբա» (վերջինս միջնադարյան հայրեններում հաճախ հանդիպող կապան է) տարանուններով, որոնցից առավել բնութագրականը «իրեքփշկանի» (երեք փեշկանի) տարբերակն է, քանզի զգեստն իսկապես ունի երեք փեշ՝ կողքերից արված կտրվածքների շնորհիվ: Պարեգոտի թևերը գեղազարդվում էին արծաթյա զարդակա-

¹ Գ. Օսիպով, Селение Даш-Алты Шушинского уезда Елизаветпольской губернии, СМОМПК, Тифлис.

² Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Եր., 1940, էջ 106:

խիկներով: Շուշիում գործածվում էր կրկնակի զարդաթևերով զգեստ, որը թևերի ձևվածքով հիշեցնում էր Գողթնի կանանց արխալուղը, ինչպես և համակովկասյան տարածում ունեցող տղամարդկանց վերնազգեստ-չուխան¹:

Լեռնային Ղարաբաղում բնակված ադրբեջանցիների տարազի մասին խոսելով տարազագետ Ե. Բաբայանը,² կնոջ վերնազգեստ-արխալուղի մասին մեջբերել է Ն. Գրիգորովի տեղեկությունն այն մասին, որ Սարով գյուղի հայուհիները թողնելով իրենց ազգային հագուստը, սկսել են հագնվել հարևան թաթարուհիների նման: Ամմիջապես շարունակելով իր միտքը նշում է՝ կարճ վերնազգեստ հագնում էին նաև Զադրութի, Արծվանիկի հայուհիները: Զեղինակը նկատի է ունեցել ադրբեջանական արխալուղը և իր տեսակետը հիմնավորելու համար հղել է երկու աշխատություն: Ծանոթանալով և վերլուծելով այդ երկու հեղինակների՝ Ի. Դավիթբեկովի³ և Ե. Մելիք-Շահնազարովի⁴ աշխատությունների հայկական տարազին վերաբերող հատվածները մեզ թույլ ենք տալիս չհամաձայնել Ե. Բաբայանի այն տեսակետին, որ Զադրութում և Արծվանիկում հագնում էին «ադրբեջանական արխալուղ» հետևյալ հիմնավորումներով.

Ի. Դավիթբեկովը հղված աշխատության մեջ բացարձակապես ոչինչ չի ասել կնոջ կարճ վերնազգեստ-արխալուղի մասին, այլ խոսելով կնոջ հանդերձների մասին, նշել է միայն Սյունիք-արցախյան համալիրի բաղկացուցիչ մասերը կազմող հետևյալ տարրերը 1) վարտիք, 2) շապիկ, 3) արխալուղ, 4) թավշյա վերնազգեստ-մուշտակ, 5) մետաքսե կամ բամբակե գոտի (կյոտի):

Իսկ Մելիք-Շահնազարովը տալով Արծվանիկ գյուղի հագուստի

¹ **Ս. Պողոսյան**, Արցախի տարազը և նրա էվոլյուցիան, Կուլտուրաավորական աշխատանք, 1988, 5-6, էջ 37-44: **Ս. Պողոսյան**, Արցախի ավանդաբայի տարազը (XIX դ. վերջ - XX դ. սկիզբ), Զայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր, Ջեկ. հիմնադրույթներ, Եր., 1992, էջ 32-33:

² **Ե. Բաբայան**, Изменение в народной одежде азербайджанцев Карабаха в конце 19- в начале 20 вв. Ученые записки, Баку, 1967, с. 86. **Ե. Բաբայան**, О женской одежде Карабаха (конец 19 - нач. 20 веков) - Ученые записки, Баку, 1966, с. 88.

³ **Ի. Դավիթբեկով**, Селение Гадрута Джебраильского уезда Елизаветпольской губернии, СМОМПК, вып. 6, Тифлис, 1898, с. 184-185.

⁴ **Мелик-Шахназаров Е.**, Селение Арцваник Зангезурского уезда Елизаветпольской губернии, СМОМПК, вып. 25, Тифлис, 1898, с. 17-19.

ընդհանուր բնութագիրը, նշել է, որ *«տեղաբնիկների հագուստը գրեթե չի տարբերվում Ջանգեզուրի գավառի մնացած գյուղերում գործածվող հագուստից»* և շարունակելով կնոջ հագուստի մասին գրում է, որ երիտասարդները *«հագնում էին կարճ, իսկ տարեցները՝ մի քիչ երկար արխալուղ»*: Այստեղ, փաստորեն, ոչինչ չի ասված այսպես կոչված «աղբբեջանական արխալուղ»-ի մասին, որն էապես տարբերվում է հայկականից: Խոսքը սոսկ զգեստի տարիքային տարբերությունների մասին է՝ աղջիկների վերնագզեստն ավելի կարճ էր մեծերի արխալուղից. հանգամանք, որ շատ բնական է և կապված կրողների ընտանեկան, սոցիալական կարգավիճակի հետ: Ն. Գրիգորովը նշել է, որ *«թաթարների հետ հարևանությունը վշտալի ազդեցություն ունի սարովցիների վրա»*: Այնուհետև. *«Թաթարների ազդեցությունը դրսևորվում է թաթար կնոջ հագուստի նմանակման մեջ»*¹: Ավարտելով իր միտքը հեղինակը գրել է. *«Սարովում կանայք առանձնանում են գեղեցկությամբ ու կառուցվածքի նրբագեղությամբ, սակայն թաթարական հագուստը, որը փոքր ինչ ձևափոխվելով հարմարեցվելով հայկական լադիին, նրանց տալիս է անբնական տեսք... Ներկայումս երիտասարդ աղջիկներն իրենց հագուստով սկսում են նմանակել քաղաքացի հայուհիներին»*: Այստեղից պարզ է մի բան, որ նույնիսկ ժամանակավոր փոխառության դեպքում էլ ժողովուրդը կուրորեն չի ընդօրինակել օտարինը և անպայման այն հարմարեցրել է ազգային համակարգին:

Վերնագզեստի վրայից երիտասարդ կանայք կապում էին արծաթե, տարեցները՝ հիմնականում կտորե գոտիներ: Չմռանը հագուստը համալրվում էր մուգ կարմիր թավշյա կամ բրոյա կտորից տաք վերնագզեստ մուշտակ-քուրքով, որը կրկնում էր պարեգոտի ձևվածքի ավանդական տարբերակները, այն առանձնահատկությամբ, որ նախորդից բավականաչափ կարճ էր թե՛ փեշերի և թե՛ թևերի հատվածում: Այն եզրագարդվում էր կանաչ գույնի մետաքսե երիզով և աղվեսի մորթուց եզրաշերտով:

Կանանց գլխի հարդարանքը բարդ էր ու բազմատարր, որը տարբերվում էր աղջիկների հարդարանքից և արտացոլում կնոջ կյանքում կատարված սոցիալական, ընտանեկան փոփոխությունները: Գլխի

¹ Н. Григоров, Село Саров Джеванширского уезда Елизаветпольской губернии, СМОМПК, вып. 6, Тифлис, 1888, с. 129-130.

հարդարանքը կոշտ հիմնամաս ուներ և հիշեցնում էր արարատյան ու տավուշյան տարբերակները: Գործածվում էր դրամաշարաններով ճակտնոցը, որն ի տարբերություն Բարձր Յայքի կնոջ գլխի հարդարանքի դրամաշարանի, միաշարք էր: Վասպուրականի, Բարձր Յայքի կանանց գլխի հարդարանքի բաղկացուցիչ տարր հանդիսացող երեսնոց-մարգարտաշար քունքակախիկների դերն այստեղ կատարում էին արծաթե գնդաձև կախիկների շարանները, որոնք ամրացվում էին եռանկյունաձև ականջակալի վրա: Յայաստանի արևմտյան գավառների ճոխ ասեղնագործությունների փոխարեն Սյունիք-արցախյան տիպի գլխի հարդարանքում գործածվում էին զուգաթել, հատիկաշար տեխնիկայով արված արծաթե կեռաձև գլխազարդերը, որոնք ունեցել են նույն ծիսահմայական գործառույթը՝ կրողին գերծ պահելով չարի վնասաբեր ազդեցությունից:

Այս պատմագագադրական շրջանում, ինչպես և Այրարատում ու Վասպուրականում, առկա էր բերանը ծածկելու սովորույթը: Յավանաբար դա կապված էր չխոսկանության սովորույթի հետ: Ուշագրավ է այն վկայությունը, որ Ղարաբաղում նախկինում բնակված ադրբեջանցի կնոջ գլխի հարդարանքում ի տարբերություն ադրբեջանական շրջանների բացակայել է չադրան՝ փոխարինվելով **«դենքի ներքնամասը ծածկող բերանկապի յաշմաղով»**¹: Ակնհայտ է միջէթնիկական փոխառության և հայերի էթնոշակութային ազդեցության դրսևորումը տարազի համակարգում, քանի որ ինչպես հայտնի է մուսուլմանական օրենքները կնոջն արգելել են առանց չադրայի դուրս գալ փողոց:

Սյունիք-Արցախյան տարազախմբում գոգնոցը տարազի համալիրից բացակայում էր, սակայն կանայք այն կրում էին աշխատանքի պահին: Այդ մասին Ս. Թաղիադյանը մասնավորապես վկայում է. **«Կանայքն զնոցա ունին զգոգնոց յառաջոյ իւրեանց ի պահպանութիւն զգեստոցնի կեղտոյ: Պառավունք զգենեն և զմխաշապիկ ի վերայ ամենայն»**²: Ուշագրավ է, որ նորահարսի հագուստում կիրառվել է լանջամասը ծածկող երկարափեշ գոգնոց, որը տարբերվել է առօրյայում գործածվածից:

¹ **Է. Բաբայև**, Изменение в народной одежде азербайджанцев Карабаха в конце 19- в начале 20 вв. - Ученые записки, Баку, 1967, с. 86.

² **Ս. Թաղիադյան**, Ճանապարհորդություն ի Յայս, Եր., 1979, էջ 157-158:

Արցախի տղամարդկանց հազուստը արևելահայ մյուս տարազածների հետ մեկտեղ ուներ համահայկական, ավելին՝ ընդհանուր կովկասյան գծեր, բայց համակովկասյան ընդհանրություններին զուգահեռ, անշուշտ, դրսևորում էր իր տեղական առանձնահատկությունները՝ մյուսի ընտրության, գունային համակարգի, գլխի հարդարանքի և հազուստի առանձին տարրերը կրելու եղանակի մեջ:

Տղամարդու «կովկասյան» տարազածնի բաղկացուցիչ տարրերն էին՝ շապիկ-վարտիքը, լայնափողք շալվարն ու կարճ վերնազգեստ-արխալուղը և վերարկու-չուխան (մուգ շագանակագույն, կապույտ, սև գույներին):

Զմռանը տղամարդիկ, հատկապես հովիվները, գործածում էին թաղիքե այծենակաճը՝ յափունջի: Դրա մասին Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերեն Կովկասի շուրջը կատարած ճամփորդական ուղեգրության մեջ համեմատելով հին այրերի քղամիդի հետ և համարելով թաղիքե թիկնոց, գրել է. «...*Այդ թիկնոցը գործածվում էր նաև կովկասյան մյուս ցեղերի, ինչպես նաև հայկական միջավայրում*»¹:

Արցախի այրերի գլխի հարդարանքը՝ գառան մորթուց կոնաձև գլխարկը, հար և մման էր Արևելյան Հայաստանի մյուս պատմազգագրական շրջանների տղամարդկանց գլխի հարդարանքին: Հարուստների գլխարկն ավելի բարձր էր և կարվում էր որակյալ մորթուց. այն կարում էին Շուշիում, Բուխարայի, Շիրազի, ինչպես նաև տեղական ոչխարների մորթուց: Տարեց տղամարդիկ կրում էին կոնաձև երկար գլխարկ, երիտասարդներինը՝ շրջանաձև գագաթով էր և կոչվում էր «ղարաբադյան»:

Հին տեղական ոտնամանի օրինակ էին տնայնագործ երեք քթանի տրեխ-չարոխները: Տղամարդ թե կին հագնում էին սրածայր ոտնաման-չնոշկներ (կանանցը՝ կարմիր, կանաչ, տղամարդկանցը՝ սև գույնի): Նախշազարդ գուլպաներն ու սոնապանները (տոլադ) ամբողջացնում էին տղամարդու ազանելիքը: Ի դեպ, XX դ. սկզբին չնոշկը փոխարինվեց սև կամ շագանակագույն ոտնաման-չստերով:

Ըստ ազգագրական մյութերի XIX դարի վերջին Արցախում կենցաղավարել է կնոջ տարազի երկու համալիր՝

ա) տեղական-ավանդուսային

¹ **Д. Ф. Де Монпере**, Путешествие вокруг Кавказа, Сухуми, 1977, с. 46.

բ) քաղաքային, որը ձևավորվել է թիֆլիսահայերի տարազի ազդեցությամբ¹:

Արցախի և Ջանգեզուրի կնոջ տարազը հայկական ավանդութային տարազի համակարգում միակն է, որը պահպանվել է մինչև մեր ժամանակները: Մեր անդրանիկ այցը Արցախ՝ 1993 թ., նպատակ ունեւ պարզելու ավանդութային մշակույթի միջսերնդային փոխանցման, ժառանգորդման, էթնիկ ավանդույթների, մասնավորապես ազգային տարազի պահպանվածության աստիճանը, դրանց վերարտադրության հնարավորությունները: Ավանդական տարազը մարդու ցեղային, դասային, սեռատարիքային, պատկանելությունը ցուցահանող անձնագիր է, կրողի հասարակական նշանակությունը բնութագրող խորհրդանիշ: Այն յուրահատուկ էթնիկ ցուցիչ է, կապված լինելով ժողովրդի ծագման, մշակույթի զարգացման, որոշակի բնակլիմայական միջավայրի հետ, արտացոլում է տվյալ էթնոսի մշակութային ինքնատիպությունը և ազգային խառնվածքի որոշ առանձնահատկություններ: Արցախահայության արդի մշակութուն կնոջ տարազն էթնիկ ավանդույթի գլխավոր դրսևորումներից է: Արցախ աշխարհում հայկական տարազով կանանց «այա» մայրիկ, տատիկ են ասում կամ էլ՝ «խըլեղով» (արխալուղ, եռափեշ պարեգոտ հագած) կին:

Տարազով՝ խըլեղով կինն Արցախում համընդանուր հարգանքի, ակնածության է հանդիպում, բոլորը նրան ճանաչում և հիշում են: Ավանդական տարազով կնոջ յուրաքանչյուր հուշիկ քայլը ուղեկցվում է նրա զարդերի ախորժալուր ձայնով և արծազանքում շրջապատի մարդկանց սրտերում²:

Այն ձևավորվել և հարատեւել է մի այնպիսի էթնիկ միջավայրում, որտեղ չի եղել մշակութային ժառանգորդման խզում՝ հանգամանք, որը նպաստել է ավանդութային տարազի պահպանմանը: Արցախյան տարազում ակնհայտ է նաև էթնիկ ընդհանրության հոգևոր կերտվածքի ազդեցությունը: Ըստ էության ավանդական տարազ կրելն ընկալվում էր նաև իբրև ազգային պատկանելիության շեշտված արտահայտման ձև:

¹ Ն. Ավագյան, Հայկական ժողովրդական տարազը XIX-XX դդ. սկիզբ, Եր., 1983, էջ 43: Նույնի՝ Народная одежда армян Арцаха в XIX-XX вв. - Хозяйство и материальная культура народов Кавказа XIX-XX вв., М., 1971, с. 209-222:

² Տես Ս. Պողոսյան, Ազգային մշակույթ և ժառանգորդում. Արցախ աշխարհի տիկնայք, «Գարուն», 1993:

Արցախի տղամարդու տարազը՝ նյութի ընտրության, գունային համակարգի, գլխի հարդարանքի ձևվածքի, հագուստի առանձին տարրերը կրելու եղանակի տեղական առանձնահատկություններով հանդերձ, բնութագրվում է արևելահայկական՝ ավելին՝ ընդհանուր համակովկասյան գծերով: Այն, կապված կրողի սոցիալական, ընտանեկան իրավիճակի հետ, անցյալ դարի սկզբներին դուրս է եկել գործածությունից:

Ս. Ջավարյանը, անդրադառնալով XX դարի սկզբներին Լեռնային Ղարաբաղի մշակութային առանձնահատկություններին, նշել է. *«Ճշմարիտ է, որ գոյություն ունի հայտնի ներդաշնակություն տղամարդու և կնոջ հագուստների միջև, պահպանվում է հայտնի ինքնատիպ մոդան, սակայն դա նկատվում է ոչ ամեն տեղ, այլ լոկ մի քանի «հետամնաց» գյուղերում, ավելի «զարգացած» գյուղերում տրեխները հարմարեցվում են բաճկոնների, երկարափեշ չուխան՝ ֆուրաշկայի հետ»¹: Ի տարբերություն տղամարդու հագուստում նկատված նման փոփոխությունների արցախուհու ավանդական տարազը, ինչպես ասացինք, ցարդ պահպանվում և կենցաղավարում է ծեր կանանց միջավայրում:*

Հրապարակի վրա եղած նյութերի ու փաստերի ազգագրական դիտարկումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Արցախի տարազը ձևավորվել է իր էթնիկ հայրենիքում, հայկական միջավայրում, այդ իսկ պատճառով ցուցաբերում է նման ակնհայտ ընդհանրություն հայկական տարազի մյուս խմբերի հետ ինչպես ձևվածքի, նյութի և գույնի ընտրության, գեղազարդման միջոցների, այնպես էլ տարազի առանձին տարրերի առումով: Ցանկալի կլիներ, որ մեր թանգարաններն ու գեղարվեստական սրահները նախաձեռնություն ցուցաբերելով սերտ կապեր հաստատեին Արցախի ժողովրդական վարպետների հետ ու կազմակերպեին նրանց ավանդականի օրինակով պատրաստած մշակութային արժեքների, այդ թվում և տարազի առանձին մասունքների պատվիրման և ցուցահանդես-վաճառքների հետ կապված աշխատանքները:

¹ С. Заварян, Экономические условия Карабаха и голод 1906-1907 гг., СПб, 1907, с. 6.

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի հին և միջնադարյան մշակույթի և պատմության տեսակետից հնագիտական հետազոտություններն առանձնակի արժեք ունեն։ Պատմագիտական, լեզվաբանական, մարդաբանական մի շարք վերականգնումներ հաճախ հնարավոր է հիմնավորել կամ բացառել հնագիտական-մշակութաբանական տվյալների դաշտում։ Դա առավել չափով կարևոր է, երբ խոսք է գնում որևէ մշակույթի էթնիկական կերպարի պարզաբանման մասին։ Գաղտնիք չէ, որ Արցախի պատմության և մշակույթի ուսումնասիրությունն ընթացել, ընթանում է և, ցավոք, տեսանելի ապագայում էլ ընթանալու է քաղաքական նպատակներ հետապնդող «ընդդիմախոսների» աչալուրջ հսկողության և պատեհ-անպատեհ հարձակումների ներքո։ Նման պայմաններում հնագիտական նյութը, որպես հին ժամանակներին վերաբերող չեզոք աղբյուր, արտակարգ նշանակություն է ձեռք բերում։ Մինչև արցախյան շարժումը հայագիտությունը զրկված էր Արցախում հնագիտական ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից։ Այս ասպարեզում տերն ու տնօրենը ադրբեջանցի հետազոտողներն էին, որոնք հուշարձանի թե՛ ընտրությունը և թե՛ նյութի հրատարակությունը կատարում էին խիստ «ընտրողաբար»՝ թաքցվում կամ ավերվում էր այն, ինչը ձեռնտու չէր, հուշարձանը պեղողի «իրավունքով» արվում էին անհիմն հայտարարություններ, առաջադրվում կեղծ թվագրություններ ևն։ Պատահական չէ, որ 60-ական թթ. սկսած՝ Արցախում զգալի ծավալ ստացած պեղումների արդյունքները հրատարակվում էին բացառապես մեկ-երկու էջանոց հաղորդումների տեսքով՝ գիտնականներին զրկելով նյութի աղբյուրագիտական հավաստիության մեջ համոզվելու կամ կողմնորոշվելու հնարավորությունից։ Հայագիտությունը տասնամյակներ շարունակ զրկված էր Արցախում հնագիտական հետազոտություններ կատարելու

հնարավորությունից և ստիպված էր ավելի հաճախ հերքել ադրբեջանցի հնագետների միտումնավոր մեկնաբանությունները, քան թե առաջադրել և լուծել սեփական զարգացումից բխող պրոբլեմներ: Թվում էր Արցախի ազատագրումը լիակատար հիմք էր օբյեկտիվ այս պակասը լրացնելու համար:

Սակայն այսօր էլ Արցախի պատմության և մշակույթի ուսումնասիրության ասպարեզում ակնհայտորեն զգացվում է հնագիտական հուշարձանների և լայն առումով հնագիտական մշակույթի ներգրավման խիստ ցածր մակարդակը:

Արցախի հնագիտական հետազոտություններն այսօր կարելի է բնութագրել որպես անհատական նախաձեռնությունների վրա հենվող, մասնավոր անձանց ու ոչ պետական կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ու այդ իսկ պատճառով էլ բավականին սահմանափակ ծավալներ և թեմաներ ներառող բնագավառ:

Խիստ բնութագրական պիտի համարել, որ Արցախի հուշարձանների ցանկացած հետազոտություն առաջ է բերում ադրբեջանական իշխանությունների բողոքը՝ ընդհուպ մինչև միջազգային կազմակերպություններ նոտաների հղումը: Ի տարբերություն ադրբեջանական խանդոտ կեցվածքի, թե՛ Հայաստանի և թե՛ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները, ցավոք, որդեգրել են չեզոք կեցվածք: Վերջին տարիների հնագիտական պեղումները ձեռնարկվում, ֆինանսավորվում և իրականացվում են բացառապես անհատ մարդկանց և հասարակական կազմակերպությունների կողմից (Հարությունյանների ընտանիքը ԱՄՆ Նյու-Ջերսի նահանգից, «Ժամ Պողոսյան և որդիներ» հիմնադրամ, Հիմնավորման և վերաբնակեցման Երկիր միություն, «Շուշի» հիմնադրամ, Մշակութային հետազոտությունների «Կենսա ծառ» կենտրոն):

Մերօրյա առաջին հնագիտական հետազոտություններն Արցախում ձեռնարկվել են հենց 1988 թ., երբ ուսումնասիրվել է Նոր Արմենավանի վաղքրիստոնեական դամբարանադաշտը¹: Դամբարանը բացվել էր պատահաբար, շինարարական աշխատանքների ժամանակ: Մեր կողմից պեղվել են 13 դամբարաններ, որոնց քննության արդյունքում

¹ **Պետրոսյան Գ.**, Նոր Արմենավանի դամբարանադաշտը - Մշակույթ, 1989, թիվ 1: **Նույնի**, Նոր Արմենավանի վաղմիջնադարյան դամբարանադաշտը - Հանրապետական հնագիտական մատաչրջան, Ջեկուցումների հիմնարկույթներ, Երևան, 1989, էջ 76-78:

եզակացվեց, որ այն վաղըրիստոնեական դամբարանադաշտ է և վերաբերում է 6-8-րդ դարերին:

1990 թ. հետախուզական պեղումներ են կատարվել Մեղրագետի բնակատեղում և Շոշի դամբարանադաշտում¹: Բնակատեղին հայտնաբերվել է պատահաբար, մենք միայն հետախուզական պեղումներ ենք իրականացրել, բացվել է կավակերտ մի հարթակ, գտնվել են եռանկյունանձև քարե կոթողներ, սև-դարչնագույն փայլեցունով և մատնեքներով հարդարված կարաս, սև-դարչնագույն փայլեցունով և անփայլ կարասների, ձևավոր կանթերով սափորների և չպրոֆիլավորված շրթով թասերի բեկորներ, սարդիոնից և մածուկից պատրաստած ուլունքներ, որոնք հնարավորություն են տալիս բնակատեղին թվագրել 9-6-րդ դարերով:

Շոշի դամբարանադաշտում, որը գտնվում է համանուն գյուղի մերձակայքում, մեր կողմից վավերացվել են 62 դամբարան-բլուրներ. դրանք 10-40 մ պարագծով, մինչև 2 մ բարձրությամբ արհեստական թմբեր են՝ ճեղքված քարով շարված օղակաձև զրահներով և կենտրոնում արհեստական լիցքի մեջ տեղադրված մեկական սալարկղերով: Մեր կողմից պեղվել են երկու դամբարաններ, որոնք թալանված էին: Խիստ աղքատիկ գտածոներն այնուամենայնիվ հիմք տվեցին դրանք թվագրել 2 մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջով և առաջին հազարամյակի սկզբով: Ինչպես ցույց են տալիս Շուշիի և շրջակայքի հնագիտական քարտեզը և 2005 թ. պեղումները՝ Կարկառի հոսանքը ներկայանում է մ. թ. ա. առաջին հազարամյակի առաջին կեսի դամբարանային հզոր մշակույթով: Ուստի կարծում են այդ մշակույթի ընդհանրական կերպարի ստեղծումը շատ բանով կնպաստի, որ հայ ժողովրդի վերջնական ձևավորման խնդիրները լեռնաշխարհի այս անկյունում դրվեն գիտական հիմքերի վրա:

1988-1990 թթ.. պեղումները կատարել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը և ֆինանսավորվել է հենց ինստիտուտի կողմից: Հատուկ պետք է ընդգծել ինստիտուտի այն ժամանակվա տնօրեն Գևորգ Տիրացյանի առանձնահատուկ վերաբեր-

¹ Պետրոսյան Դ., Սաֆարյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախում, Հանրապետական հնագիտական նստաշրջան, Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1991, էջ 53-54:

մունքն ու աջակցությունը: Սակայն մի կողմից Ադրբեջանի պարտադրած պատերազմը, մյուս կողմից՝ միջոցների բացակայությունը հնարավորություն չտվեցին հետագա պեղումներ ձեռնարկել:

1995 թ. ին և Արցախի պետական համալսարանի ռեկտոր, մարդաբանության դոկտոր Լևոն Եպիսկոպոսյանի ջանքերով ստեղծվեց ԳԳ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի միացյալ հնագիտական արշավախումբը, որի կազմում ընդգրկվեցին նաև Արցախի համալսարանի դասախոսներ Յու. Ասրյանը, Վ. Սաֆարյանը (հնագետներ), Վ. Բալայանը (Արցախի համալսարանին կից Հայագիտական կենտրոնի տնօրեն), Վ. Հովսեփյանը (ճարտարապետ): Արշավախումբը 1995 թ. հետախուզեց մի շարք բազմաշերտ հուշարձաններ և այդ տվյալների հիման վրա 1996 թ. Արցախի պետական համալսարանի ֆինանսական աջակցությամբ սկսեց դրանցից առավել հեռանկարային թվացող մեկի՝ Քարաբլուր հնավայրի հետախուզական պեղումները: Բնակատեղին, որն ունի բրոնզից մինչև ուշ միջնադարը ներառող մշակութային շերտեր, և գտնվում է վաղ բրոնզից սկսած խիստ մշակութայնացված մի միջավայրում՝ Կարկառի և Բադարայի միջագետքում և տեղանքի ամենաիշխող բարձունքն է: Բնակատեղուն կից վավերացվել են նաև երկու դամբարանադաշտեր՝ տեղադրված նրանից դեպի արևելք և արևմուտք: Արևմտյան դամբարանադաշտը վերաբերում է Ք. ա. IX-VIII դդ., իսկ արևելյանը, որը բաղկացած է բազմաթիվ խոշոր ու մանր հողաթմբերից, կրոմեխներից և քարարկերից պատկանում է Ք. ա. XI-IX դդ.: Մասնավորապես այդ ժամանակ պեղվել են երկու ավերված դամբարաններ: Այն Խոջալուի հանրահայտ դամբարանադաշտից հեռու է ընդամենը մեկ կիլոմետր և այս առումով վաղուց արդեն լավ հրատարակված, թվագրված և մեկնաբանված նյութերի հետ լայն զուգահեռների հնարավորություն է ընձեռում: Պեղումներով բացվել է նաև միջնադարյան մի հետաքրքիր կառույց, որը քրիստոնեական մատուռի և օջախ-սրբարանի մի բացառիկ համադրություն է ներկայացնում: Պեղումների նյութերը և պատահական գտածոները հանձնվել են Արցախի պետական համալսարանի Հայագիտական կենտրոն և կազմել են նորաստեղծ թանգարանի հիմքը¹:

¹ Պետրոսյան Զ., Եպիսկոպոսյան Լ., Ասրյան Յու., Սաֆարյան Վ., Բալայան Վ., Հովսեփյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախի Քարաբլուր հնավայրում - Հին Հայաստան 428

Ցավոք, պեղումները, որոնք գիտական մեծ արժեք ունեին և աշխույժ հետաքրքրություն էին առաջացրել Արցախում (դրանք ներկայացվեցին ԼՂՀ և ՀՀ հեռուստատեսությամբ, թերթերում), ֆինանսների բացակայության պատճառով ընդհատվեցին: Միայն 2002 թ. հնարավոր դարձավ՝ նորից Արցախ համալսարանի համեստ միջոցներով հետազոտել ևս մեկ դամբարանաբլուր, որը գտնվում է արևելյան դամբարանադաշտի հարավ-արևելյան մասում:

1996 թ. աշնանը առանց որևէ ֆինանսավորման Վ. Սաֆարյանի կողմից ուսումնասիրվել են Աղղամի մոտակայքում շինարարական աշխատանքների ժամանակ բացված կարասային թաղումները, 1997 թ. արշավախմբի անդամների ջանքերով իրագործվել է Ստեփանակերտի մերձակայքում գտնվող՝ տարիներ առաջ սկսած, բայց կիսատ մնացած կուրգանի պեղումները: Հնագիտական հետազոտությունները վերսկսելու հարցով 1997-1998 թթ. դիմումներ ենք հղել ՀՀ համապատասխան նախարարություններ, ԼՂՀ իշխանություններին, սակայն դրանք կամ մերժվել են կամ մնացել անպատասխան:

Պեղումների նոր ալիքն սկսվել է վերջին տարիներին: Երեք տարի է արդեն, որ Լևոն Եպիսկոպոսյանի և մասամբ իմ նախաձեռնությամբ արտասահմանցի մի շարք հնէամարդաբաններ և հնագետներ սկսել են Ազոխի քարանձավի ուսումնասիրությունները: Արդյունքներն ուղղակի ապշեցուցիչ են: Մնում է ավստսալ, որ հայաստանյան հայագիտությունն այդպես էլ անմասն է մնում թե հետազոտություններին, և թե գոնե արդյունքների մասին տեղյակ լինելուն¹:

2004 թ. Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության և Մշակութային հետազոտությունների «Կենաց ծառ» կենտրոնի նախաձեռնությամբ ստեղծվեց հնագիտական արշավախումբ, որը ղեկավարում են ես, և որի կազմում են ՀՀ և ԼՂՀ մի շարք մասնագետներ: Վերջին տարիների հետազոտությունները մենք որպես սկզբունք կենտրոնացնում ենք այն տարածքներ-

տանի մշակույթը, Հնագիտական 11-րդ հանրապետական մատաչրջան, Երևան, 1998, էջ 53-54: **Պետրոսյան Հ.**, Արցախի նորագյուտ սրբարանը և նրա ազգագրական զուգահեռները - Հանրապետական ազգագրական գիտաժողով, Ջեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1997, էջ 47-48: **Նույմի, Քարաբլուրի** նորագյուտ սրբարանը և «սուրբ օջախների» պաշտամունքն Արցախում – Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, 2001, էջ 347-356:

¹ Ազոխի քարանձավի պեղումների մասին տես այս ժողովածուի էջերում:

րում, որոնք նոր են ազատագրվել: Սա ոչ միայն նպատակ ունի վեր հանել հենց ազատագրված տարածքների հայկականությունը, այլև, որ պակաս կարևոր չէ, հազարավոր հայ վերաբնակիչների մոտ ամրապնդել իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները, դյուրացնել նրանց կողմից նոր տարածքի հոգևոր-մշակութային յուրացումը:

2004-2005 թթ. իրականացվել են Քարվաճառում գտնվող Հանդաբերդի վանքի պեղումները (Հ. Պետրոսյան, Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան, Տ. Վրթանեսովա)¹: Պեղումների հիմնական արդյունքներից առաջնային կարելի է համարել 12-14-րդ դարերի մի շարք նոր արձանագրությունների, խաչքարերի և տապանաքարերի գյուտը: Խիստ ուշագրավ է, որ գտնվել են նաև հայերեն արձանագրություններ կրող կղմինդրների և թասերի մի շարք բեկորներ, հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում փաստել հայերեն գրի օգտագործման տարածվածությունը նաև զուտ կենցաղային մակարդակով, որն իր հերթին էթնիկության ամենաբարձր ցուցանիշներից մեկն է:

2004 թ. մայիսին դաշտային հնագիտական դիտումների միջոցով կազմվել է Շուշիի և նրա անմիջական շրջակայքի հնագիտական հուշարձանների թվայնացված ցուցակն ու դրանց տեղաբաշխման քարտեզը: Ցուցակը ներառում է պալեոլիթից մինչև 20-րդ դարի սկիզբն ընդգրկող մոտ 500 հուշարձան, ինչն էլ հնարավորություն է տալիս կանխանշել բնակավայրի և նրա շրջապատի հնագիտական հետազոտության հիմնախնդիրները²:

2005 թ. լայնածավալ պեղումներ են իրականացվել Շուշիում և շրջակայքում (Հ. Պետրոսյան, Վ. Սաֆարյան, Ն. Ենգիբարյան, Ս. Տիտանյան, Ա. Հարությունյան), որի հետևանքով հայտնաբերվել և մասնակի պեղվել են Կարկառ ամրոցն ու Շոշվա սղնախը, հուշարձաններ, որոնք լավագույնս վկայում են Շուշիի սարահարթի հայ մշակութային ինքնությունը Փամահի այստեղ հայտնվելուց առնվազն 500 տարի առաջ և ընդհուպ մինչև 18-րդ դ. կեսերը:

¹ Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքի 2004 թ. պեղումների հիմնական արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը 13, Երևան, 2005, էջ 240-246:

² Պետրոսյան Հ., Շուշիի հնագիտական հետազոտության հիմնական նպատակները և խնդիրները, Հին Հայաստանի մշակույթը 13, Երևան, 2005, էջ 247-254:

2005 թ. ԳԳ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Արցախի համալսարանի աշխատակիցներից կազմված ինստիտուտի հետազոտական խումբը (Յ. Պետրոսյան, Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան) ուսումնասիրվել է Խաչենագետի ներքնահովտի պատմահնագիտական միջավայրը, կազմել տարածքի հնագիտական քարտեզը և հուշարձանների բնութագրական ցուցակը՝ մանրամասն թվային լուսանկարահանմամբ¹: Այժմ պատրաստ է Արցախի Տիգրանակերտի պեղումների ծրագիրը և բոլոր հիմքերը կան հավաստելու, որ այս տարի մենք ականատես կլինենք հայկական ինքնությունը դաշտային Արցախում հավաստող ընդարձակածավալ պեղումների²:

Վերջին տարիների հետազոտությունները ներկայացվել են մի շարք գիտաժողովներում, ներառյալ անցած տարվա սեպտեմբերին Իսպանիայի Վիկտորիա քաղաքում կայացած Հայկական հետազոտությունների միջազգային ընկերակցության 10-րդ համաժողովը: Արցախի հնագիտական հետազոտությունները կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան ծառայությունների գիտությանը և թույլտվությամբ: Կատարված աշխատանքների մասին շահագրգիռ կողմերին հանձնվել են համապատասխան հաշվետվություններ, երևանում կազմակերպվել են երկու ընդարձակ ցուցահանդեսներ: 2006 թ. հուլիսի սկզբներին Ստեփանակերտում կազմակերպվեց Շուշիի պեղումների արդյունքները ներկայացնող ցուցահանդես և գիտաժողով՝ նվիրված Շուշիի պատմության և մշակույթի խնդիրներին: Իրականացված բոլոր հետազոտությունները զեկուցվել, քննվել և մանրամասնվել են ավելի քան 20 հրատարակություններում:

¹ Պետրոսյան Յ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ., Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:

² Եվ իրոք 2006 թ. օգոստոսին Տիգրանակերտի պեղումները տվեցին սենսացիոն արդյունքներ. բացվել է միջնաբերդի ծիծեռնակապոչ շարվածքով պարսպապատի մի հատվածը, քաղաքի դարավանդներից մեկի հենապատը, կենտրոնական թաղամասի վաղբրիստոնեական բազիլիկայի մի մասը: Պեղումներով հայտնաբերված կառույցներն ու հնագիտական նյութերը հիմք են տալիս հավաստել, որ գտնվել են մ. թ. ա. առաջին դարում Տիգրան Մեծի կողմից Արցախում հիմնված Տիգրանակերտ քաղաքի ավերակները: Խաչենագետի ափին, Տիգրանակերտի մատույցներում պեղվել-մաքրվել են քարայրային-պաշտամունքային համալիրը և ժայռափոր ջրանցքը, որն ամենայն հավանականությամբ ջուր է մատակարարել քաղաքին:

Այժմ հրատարակության են պատրաստվում «Արցախի խաչքարերը», «Հանդաբերդի վանքը. պատմամշակութային միջավայրը և հնագիտական պեղումները» (համահեղինակներ՝ Լ. Կիրակոսյան, Վ. Սաֆարյան) գրքերը, «Վաղմիջնադարյան եզակի հուշարձաններ Խաչենագետի ներքնահովտում» և «Շուշիի ու շրջակայքի խաչքարային մշակույթը» հոդվածները:

Առաջիկա 5 տարիներին Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպության և մշակութային հետազոտությունների «Կենսաց ծառ» կենտրոնի համագործակցությամբ նախատեսվում է ընդարձակ հետազոտություններ անցկացնել Լևոնագետի հովտում (Քարվաճառ), Խաչենագետի ներքնահովտում և Շուշիում (մշակութային հուշարձանների թվային շտեմարանի կազմում, պաշտպանական և պաշտամունքային համակարգերի համալիր հետազոտություն, ներառյալ հնագիտական պեղումները, հրատարակությունների և ինտերնետային կայքերի իրականացում):

Ափսոսանքով կարելի է նշել, որ այս ամենն առայժմ արվում է առանց համապատասխան մարմինների աջակցության և գնահատանքի, հաճախ դժկամ վերաբերմունքի պայմաններում: Ես վստահ եմ, որ միջոցներ են գտնվելու և աշխատանքները շարունակվելու են: Բայց սա այն չէ, ինչի մեք ընդունակ ենք, սա այն չէ, ինչ պարտավոր է անել մեր պետությունը, և ի վերջո սա ամենևին էլ այն չէ, ինչին արժանի է մեր հաղթանակած ժողովուրդն ու նրա մշակույթը:

Նախ մենք կարիք ունենք տեսական լուրջ հետազոտությունների, որոնք հնարավորություն կտան մատենագրական տեղեկությունը, արձանագրությունը կամ հնագիտական գտածոն արժեքավորել հենց էթնիկ ինքնության տեսանկյունից: Սա թերևս մեր ամենալուրջ խնդիրն է: Երբ բացակայում է մանրամասն մշակված մեթոդաբանությունը, սկսում են իշխել հայտարարություններն ու կամայական մեկնությունները:

Երկրորդ, մենք կարիք ունենք պետական մշտական, պլանավորված ֆինանսավորման: Այն անհրաժեշտ է նախ տեխնիկական հագեցվածության համար: Ժամանակակից հնագիտությունը հայտնի չափով մահ նորագույն տեխնիկական նվաճումներ օգտագործող գիտություն է, եթե ուզում ենք, որ աշխարհը լսի մեզ, պիտի նրա հետ խոսենք կիրթ լեզվով: Արցախի հնագիտական արշավախումբը, շնորհիվ մեր հովանավորների, այսօր Հայաստանի տեխնիկապես ամենալավ հագեցված

արշվախմբերից մեկն է, եթե ոչ առաջինը: Ֆինանսներն անհրաժեշտ են բուն պեղման գործընթացի համար, նյութերի լաբորատոր մշակումների, վերականգնումների, հրատարակությունների համար: Բայց ամենից առաջ պետությունը պիտի հարգի գիտնականին և դրա առաջին նշանը նրա վարձատրությունն է: Նախնադարից ի վեր գիտությունը եղել է ամենաազատ մասնագիտությունը: Մտքի ի՞նչ ճախրանք ու սխրագործություն կարող են ակնկալել մեր պետությունն ու հասարակությունը ամիսը քսան հազար դրամ աշխատավարձ ստացող, տարրական գոյատևման համար մաքառող գիտնականից:

Երրորդ, պիտի ցավով ընդունենք, որ հայագիտությունն այսօր կազմակերպվելու և ինքնակազմակերպվելու մեծ խնդիր ունի: Գիտության ներկա կառավարումը տառապում է նախ և առաջ անգունությամբ ու միջակությամբ: Մի կողմից միջակությունը խեղդում է ցանկացած հեռանկարային միտք, ամտեսում գիտական լիդերներին, մյուս կողմից պարարտ հող է ստեղծում զանազան սնապարծ, անգրագետ ու հավակնոտ տեսությունների ու անձանց համար, որոնք էլ վերջին հաշվով սպառնում են հայագիտությունը վերածել գավառական ինքնագոհության մի տարբերակի: Սա ես վավերացնում եմ լրջորեն, ցավով, շտկվելու և ուղիղ քայլելու ակնկալիքով ու համոզվածությամբ:

Կարծում եմ, որ հասարակական կազմակերպությունների և անհատների ձեռնարկած ակտիվությունն արդեն իր արդյունքներն է տալիս, վերջերս ավելի մեծ տեղ են հատկացնում մեր հետազոտություններին, առաջարկում են աջակցություն, խորհրդակցում են որոշումներ ընդունելիս: Կարծում, որ սա կարող է դառնալ հայագիտության զարգացման ուղղություններից մեկը, երբ հետազոտական պահանջը ձևավորվում է հասարակայնորեն՝ անհատների ու ԴԿ-ների նախաձեռնությամբ, և պետությունն այս կամ ծրագիրը ֆինանսավորելու ավելի մեծ հիմնավորումներ է ունենում:

**ՀԱՍԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ (ՀԱԻ)
ՎԱՐԴՁԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ (ԱՊԴ)**

**ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՎ ՇՐՁԱՎԱՅՔԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ամփոփում: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախաձեռնությամբ ու ֆինանսավորմամբ (նախագահ Սևակ Արծրունի) 2005 թ. ճշգրտել է Արցախի Տիգրանակերտի կոնկրետ տեղադրությունը, իսկ 2006 թ. կարճատև պեղումներ է իրագործել քաղաքի և նրա մերձակայքի տարբեր հատվածներում¹:

2005 թ. հետազոտական խումբը՝ կիրառելով աղբյուրագիտական, տեղագրական ու հնագիտական հետազոտությունների համալիր մեթոդաբանություն՝ ուսումնասիրել է Խաչենագետի ներքնահովտի պատ-

¹ Արշավախումբը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Համլետ Պետրոսյանը: 2005 թ. արշավախմբի աշխատանքներին մասնակցել են նույն ինստիտուտի հին հնագիտության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Ժորես Խաչատրյանը, ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր Աշոտ Փիլիպոսյանը, Արցախի պետական համալսարանի դասախոս Վարդգես Սաֆարյանը: 2006 թ. պեղումներին մասնակցել են Ժորես Խաչատրյանը, Վարդգես Սաֆարյանը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի դոցենտ, ճարտարապետության թեկնածու Լյուբա Կիրակոսյանը, Երևանի պետական համալսարանի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Հայկ Հակոբյանը: Քարայրային-պաշտամունքային համալիրի և ջրանցքի պեղումներն իրականացրել են Համլետ Պետրոսյանն ու Լյուբա Կիրակոսյանը: Համալիրի հունարեն արձանագրություններն ուսումնասիրելու նպատակով արշավախմբի աշխատանքներին կարճատև մասնակցություն է ունեցել Լեչեի համալսարանի (Իտալիա) Հռոմի պատմության պրոֆեսոր, հայագետ Զուստո Տրախնան:

մահնագիտական միջավայրը և հանգել այն եզրակացության, որ Արցախի Տիգրանակերտ քաղաքի ավերակները՝ բաղկացած ամրակայված հատվածից, քաղաքային ընդարձակ թաղամասից և երկու դամբարանադաշտերից՝ գտնվում են ներկայիս Շահբուլաղ կոչվող աղբյուրի շրջակայքում (նկ. 1):



Նկար 1. Տիգրանակերտի ընդհանուր տեսքը

Արդիականության հիմնավորում: Համրահայտ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մեջ կարևոր դերակատարում ունեն և պատմամշակութային բնույթի փաստարկները: Արցախի՝ բնիկ պատմական հայկական տարածք լինելու և մինչև 18-րդ դ. համարյա միատարր էթնիկ բնակչություն ունենալու հանգամանքները մի անգամ չէ, որ կարևորվել են ղարաբաղյան խնդրի զանազան մակարդակի քննարկումներում և այդ խնդրի լուծմանը միտված մոտեցումներում: Խիստ բնութագրական պիտի համարել, որ Արցախի հուշարձանների ցանկացած հետազոտություն առաջ է բերում աղբյուրագրական իշխանությունների բողոքը՝ ընդհուպ մինչև միջազգային կազմակերպությունների բողոքների ու նոտաների հղումը: Այս առումով հայաստանյան արդի հայագիտության կարևոր խնդիրներից մեկն էլ Արցախի ընդգծված էթնամշակութային կերպար ունեցող հուշարձանների և պատմական

իրողությունների հայտնաբերումը, ուսումնասիրությունը և ներկայացումն է պետական մարմիններին, հասարակությանն ու քաղաքական գործիչներին:

Նմանաբնույթ երևույթների շարքում առաջնային կարևորություն ունի Արցախի Տիգրանակերտի ֆենոմենի բացահայտումը, քաղաք, որը լավագույն կերպով կարող է վկայել Արցախի էթնամշակութային նույնականությունը ողջ Հայաստանի հետ սկսած առնվազն մ. թ. ա. վերջին դարերից մինչև մ. թ. 13-14-րդ դարերը: Այն ենթադրում է այդ բնակավայրի հիմնադրման հանգամանքների պարզաբանում, նրա կոնկրետ տեղադրության հստակեցում և ի վերջո նրա հնագիտական հետազոտության կազմակերպում:

Հետազոտված տարածքի ընդհանուր հնագիտական բնութագիրը:

Արցախի Տիգրանակերտի մասին առկա աղբյուրագիտական, տեղագրական ու պատմագիտական քննությունը հիմք էր տալիս հավանական համարել, որ բնակավայրի ավերակները պետք է փնտրել Խաչենագետի ներքնահովտում, այնտեղ, ուր Արցախյան լեռնաշղթան շեշտակի անկումներով ձուլվում է տափաստանի հետ, և որտեղով հնում հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգվող մոտավոր գծով իրարից բաժանվում էին Մեծ Հայքի Արցախ և Ուտիք նահանգները: Հենց այս գծի վրա էին ըստ 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի գտնվում մյուս Տիգրանակերտը, որը պատկանում էր Ուտիքին, և Տիգրանակերտ ավանը, որը պատկանում էր Արցախին¹: Հստակորեն տեղայնացնելու համար Արցախի Տիգրանակերտը, հետազոտական խումբը որպես պայմանական կենտրոն ընդունեց Խաչենագետը հարթավայր դուրս գալու կետը, և ուսումնասիրեց մոտ 10 կմ շառավղով ընդարձակ մի տարածքի հուշարձանները: Հետազոտության առաջին փուլը ներառում էր տարածքի ճարտարապետական ու հնագիտական դրսևորումների լուսանկարչական վավերացումը, քարտեզագրումը, թվագրումը և բնութագրումը, վերգետնյա հնագիտական նյութերի հավաքումը, լուսանկարչական վավերացումը, թվագրումը և բնութագրումը: Երկրորդ փուլը ենթադրում էր ստացված արդյունքների համադրում առկա աղբյուրագիտական-տեղագրական քննության հետ և այս հիման վրա Տիգրանակերտի տեղադրության հստակեցում:

¹ Պատմություն Սեբեոսի /Աշխ. Գ. Վ. Արգաթյանի, Երևան, 1979, էջ 125:

Դաշտային հետազոտությունները հիմք են տալիս խոսելու Խաչեն-ազետի ներքնահովտում առնվազն չորս խոշոր պատմամշակութային ժամանակների մնացորդների առկայություն՝ բրոնզ-երկաթեդարյան, հելլենիստական-անտիկ, միջնադարյան, 18-20-րդ դդ.:



Նկար 2. Կուրգաններ Խաչենազետի ներքնահովտում

Բրոնզեդարյան-երկաթեդարյան մշակույթը հիմնականում ներկայացված է դամբարանային համալիրների (նկ. 2) և առանձին քարակոթողների տեսքով: Դիտարկումները ցույց տվեցին, որ դրանք տեղորոշված են Հայկաջուր (նախկին՝ Սոֆուլու) - Նոր Մարաղա գյուղերի միջնատարածքում, սկսվում են Հայկաջրի արևելյան արվարձանից և ձգվելով դեպի հարավ մոտ 3-4 կմ, ավարտվում են Նոր Մարաղայից հյուսիս-արևելք: Դամբարանային համալիրներից առավել առանձնանում են իրարից գրեթե նույն հեռավորության վրա տեղավորված, կոնաձև 14 խոշոր դամբանաբլուրները (կուրգաններ)՝ մոտ 6-12 մ բարձրությամբ և 40-70 մ տրամագծով: Չվնասազերծված ականների հնարավոր գոյությունը թույլ չտվեց դամբանաբլուրներից յուրաքանչյուրը հետազոտել հիմնավորապես: Դրանց շրջակայքում և անմիջապես ստորոտին արված զննումները խեցանոթների բեկորների և հնագիտական այլ արտեֆակտների մնացորդներ չարձանագրեցին: Միայն Նոր Մարաղա գյուղի մերձակայքում գտնվող դամբանաբլուրներից մեկը հնարավոր եղավ

հետագոտել համեմատաբար մանրամասն: Արցախյան պատերազմի ժամանակ ադրբեջանցիներն այն վեր էին ածել մարտական խրամատի և գրեթե 1,5 – 2,0 մ խորացել էին բլրի գագաթային հատվածում: Այդ փորվածքի մեջ նկատելի են դամբանաքմբի զրահը կազմող ոչ մեծ քարերի ու ծածկասալերի մնացորդներ: Հնագիտական նյութի բեկորները բացակայում էին: Ամենայն հավանականությամբ դամբանախուցը գտնվում է դամբանաբլրի ստորոտին և վերոհիշյալ աշխատանքները չեն վնասել այն: Չի բացառվում, որ այս դամբանաբլուրների վրայից են տարվել այն երկու ֆալլատիպ կոթողները, որոնք ներկայումս ընկած են Նոր Մարաղայից մոտ 1,0 կմ հյուսիս գտնվող մուսուլմանական գերեզմանոցի տարածքում: Նույն ձևով էլ 19-20-րդ դդ. Սոֆուլու գյուղում մուսուլմանական տապանաքարի են վերածվել մ. թ. ա. 7-6-րդ դդ. վերաբերող մարդակերպ քարակոթողները:

Առայժմ բաց է մնում նշված դամբանաբլուրների թվագրման խնդիրը: Նմանօրինակ դամբանաբլուրներ Արցախի տարածքում պեղվել են 1960-ական թթ. Ստեփանակերտից ոչ հեռու՝ Խոջալու բնակավայրի մերձակայքում, հնագետ Կարինե Քուշնարյովայի կողմից, վերջին երկու տասնամյակներում՝ Շոշում և Քարաբլուրում՝ Համլետ Պետրոսյանի և Վարդգես Սաֆարյանի կողմից¹: Հայտնաբերված հարուստ հնագիտական գտածոները հիմնականում վերաբերում են Վաղ երկաթի շրջափուլին, մույնական են «լճաշեն-մեծամորյան» մշակույթի նյութերին և տեղավորվում են մ. թ. ա. XI-IX դդ. ժամանակային սահմաններում:

Արշավախումբը 2 ոչ մեծ դամբանաբլուրներ է վավերացրել մաև Նոր Հովտաշեն (Նոր Չայլու) գյուղից մոտ 1,0–1,5 կմ հարավարևմուտք: Սրանք ի տարբերություն վերը ներկայացվածների անհամեմատ փոքր չափեր ունեն (տրամագիծը՝ 8-10 մ, թմբի բարձրությունը՝ 1,0-1,5 մ) և ծածկված էին գետաքարերով: Նման ծածկ առավել հաճախ ունենում են միջինբրոնզեդարյան «սևան-արցախյան» մշակութային

¹ Պետրոսյան Հ., Սաֆարյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախում, Հանրապետական հնագիտական ընտանիք, Ձեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1991, էջ 53-54: Հետախուզական Պետրոսյան Հ., Եպիսկոպոսյան Լ., Ասրյան Յու., Սաֆարյան Վ., Բալայան Վ., Հովսեփյան Վ., Հետախուզական պեղումներ Արցախի Քարաբլուր հնավայրում - Հին Հայաստանի մշակույթը, Հնագիտական 11-րդ հանրապետական ընտանիք, Երևան, 1998, էջ 53-54:

խմբին պատկանող հնագիտական համալիրները:

Խաչենագետի հովտում փաստված դամբանաբլուրների մշակութային և ժամանակային պատկանելությունը ստույգ պարզելու հարցում կարևոր են դրանցից գոնե 2-3-ի պեղումները: Կուրգամային մշակույթը, ըստ մի շարք ուսումնասիրողների, կապվում է հնդեվրոպական հիմնախնդրի և հնդեվրոպացիների հնարավոր տեղաշարժի հետ: Ուստի պեղումների արդյունքում փաստագրված թաղման ծեսի մանրամասների վերլուծությունը, ինչպես նաև ձեռք բերված համարդաբանական նյութերի համակողմանի ուսումնասիրությունը կարող են նոր տվյալներ տալ այս մասին:

Տիգրանակերտ քաղաքի տեղադրության հստակեցումը: Տիգրանակերտի ընդհանուր հնագիտական բնութագիրը: Տիգրանակերտի տեղադրության առումով շատ ավելի կարևոր են մ. թ. ա. վերջին դարերի և մ. թ. առաջին դարերի հուշարձանների և հնագիտական մնացորդների վավերացումը: Այս տեսակետից Խաչենագետի ներքնահովտում վավերացված հուշարձանների շարքում ամենաուշագրավն, անշուշտ, երկու մեծ բնակատեղիներն են՝ տեղադրված Խաչենագետի աջ և ձախ ափերից համարյա հավասար հեռավորության վրա՝ մեկը Սոֆուլու գյուղի, իսկ մյուսը՝ Շահբուլաղ կոչվող աղբյուրների մերձակայքում: Ընդորում, հայագիտական գրականության մեջ հենց այս երկու վայրերն էին համարվում Տիգրանակերտի հնարավոր տեղադրության վայրեր:

Սոֆուլուի մոտի ընդարձակ բնակատեղին, որը հայտնի է Գյավուրկալա (բառացի՝ անհավատների բերդ) անունով, 60-70-ական թթ. մասնակի ուսումնասիրվել է ադրբեջանցի հնագետների կողմից¹: Այստեղ այսօր էլ դիտելի են վաղմիջնադարյան եկեղեցու ավերակները, սարկոֆագային դամբարանադաշտը, վաղմիջնադարյան խաչակիր կոթողի պատվանդանը: Եկեղեցին իր հատակագծումով, հյուսիսային ավանդատան պատին փորագրված խաչային հորինվածքով և կղմինդրների հավաքածոյով կարելի է թվագրել 5-6-րդ դդ.:

Տեղանքից հավաքած խեցեղենը ներկայանում է նաև վաղ ջնարակի ուշագրավ օրինակներով, որի հիման վրա կարելի է բնակավայրի

¹ Ամփոփ արդյունքերը տես, **Վահիդով Ռ. Մ.**, Հնագիտական պեղումները Գյավուրկալայում - Ադրբեջանի նյութական մշակույթը, հ. 4, Բաքու, 1965, էջ 167-181 (ադրբեջաներեն):

գոյության վերին սահման համարել 9-րդ դարը: Այս տարածքում, ինչպես ժամանակին կատարված պեղումների ժամանակ, այնպես էլ մեր տեղազնության ընթացքում, ավելի վաղ շրջանի, այդ թվում և Տիգրան Մեծի ժամանակին վերաբերող, նյութեր չհայտնաբերվեցին: Սա բավարար հիմք է հավաստելու, որ Տիգրանակերտը Գյավուրկալայի տեղում տեղադրելը խիստ անհավանական է:

Արշավախումբը մանրամասնորեն հետազոտեց նաև Շահբուլաղ կոչվող աղբյուրների շրջակայքը, որը 19-րդ դ. տեղագիրների մոտ հայտնի է նաև Թնգրնակերտ, Թառնակերտ, Թառանյուրտ կամ Թառնագյուրտ¹ անուններով՝ հնչողությամբ շատ մոտ Մովսես Կաղանկատվացու օգտագործած Տկռակերտին² և ի վերջո Տիգրանակերտին: Այս հետազոտության արդյունքները կարելի է ուղղակի սենսացիոն համարել, քանի որ հնարավոր դարձավ դեպի Վանքասար ձգվող լեռան լանջերին վավերացնել բնակավայրի ընդարձակ ամրակառույցների ձգվող հետքերը (նկ. 3), իսկ հարթավայրային հատվածում՝ քաղաքային թաղամասը՝ եկեղեցական շինության հաստահեղույս քարուկիր պատերով, կարասային ու քարարկղային թաղումներից բաղկացած երկու գերեզմանոցները: Եվ ինչը որ ամենակարևորն է, ամրակառույցների հատվածում հնարավոր եղավ վավերացնել մ. թ. ա. առաջին դարի խեցեղենի բազմաթիվ նմուշներ:

Նախ հետախուզվեց աղբյուրներից դեպի վեր ձգվող լեռան ժայռերիզը: Վավերացվեց, որ այն մոտ 200 մ երկարությամբ պատված է երկայնական ժապավենատեսք, աստիճանաձև բարձրացող հարթակներով: Նման ձևով են մշակված նաև Արմավիր և Արտաշատ մայրաքաղաքների մարմարե և բազալտե ժայռերը: Ակնհայտ է, որ մենք գործ ունենք պարսպապատերի ժայռեղեն հիմքերի հետ: Այս ամրապատի երկայնակի ձգվող հիմքերը երկու տեղերում էլ լրացվում են կիսաշրջան փորածո հատվածներով (նկ. 4), որոնք էլ վկայում են, որ պարիսպները ուժեղացված են եղել կիսակլոր աշտարակներով:

¹ Պատմութիւն Սեբեոսի, էջ 292, 299: **Ջալալեանց Ս.**, ճանապարհորդութիւն ի Սեծն Դայաստան, 1858, մասն Բ, Տփխիս, էջ 344-345: **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 28:

² **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300:



Նկար 3. Տիգրանակերտի պարիսպների ժայռափոր հիմքերը



Նկար 4. Տիգրանակերտի պարիսպների կլոր աշտարակներից մեկի ժայռափոր հիմքը



Նկար 5. Գունազարդ խեցեղեն Տիգրանակերտից

Ամրապատի հատվածում մակերեսից հավաքած խեցեղենի մեջ առկա են գունազարդ տարբեր անոթների բեկորներ (նկ. 5): Դրանք հարդարված են բաց գույնի մակերեսին կարմիրով արված ժապավեններով, եռանկյունիներով, ճառագայթաձև և այլ տիպի զարդերով, որոնք բնորոշ են մ. թ. ա. 1-ին դարի առաջին կեսի խեցեղենին և աղերսվում են Հայաստանի հելլենիստական մյուս հնավայրերի մյուսների հետ: Քիչ չեն նաև ոչ գունազարդ անոթների և կարասների բեկորները:

Ըստ երևույթին ամրակայված մասը կազմել է քաղաքի միջնաբերդը, իսկ ստորոտի հարթ մասը՝ քաղաքային թաղամասը, որին կից էլ վավերացվել են մ. թ. ա. 1-ին – մ. թ. 1-ին դարերի կարասային թաղումներով և վաղմիջնադարյան քարարկղային թաղումներով դամբարանադաշտերը: Քաղաքային թաղամասում վաղմիջնադարյան եկեղեցու ավերակները, վերգետնյա համաժամանակյա խեցեղենի մնացորդները վկայում են, որ բնակավայրը գործել է նաև վաղ միջնադարում:

Ի վերջո, տեղի ընտրության գործում կարևոր դեր է խաղացել և աղբյուրների առկայությունը, որոնց շնորհիվ լուծվել է և քաղաքի ջրամատակարարման խնդիրը:

Արշավախմբի կողմից վավերացրած հնագիտական տվյալները

լիովին բավարար էին, որպեսզի, մատենագրական ու տեղագրական տվյալների հաշվառմամբ, Արցախի Տիգրանակերտը տեղադրվի Շահ-բուլաղի աղբյուրներից դեպի Վանքասար ձգվող լեռան ներքնամասում և նրան հարավից կից հարթությունում:

Հետազոտության արդյունքները վկայում էին նաև, որ Խաչենագետի ներքնահովիտը հանդիսանում է մշակութային և բնական մի յուրօրինակ տարածք, որը ցուցադրում է հայ էթնամշակութային մշտական ներկայությունը ընդհուպ մինչև նոր ժամանակները:



Նկար 6. Տիգրանակերտի դարավանդներից մեկի հենապատը

Այս տվյալների հիմամբ էլ որոշվեց 2006 թ. կարճատև պեղումներ կատարել Տիգրանակերտի ենթադրյալ տարածքում: Արդյունքները գերազանցեցին բոլոր սպասելիքները: Ընդամենը 15 օր տևած պեղումների արդյունքում բացվել է քաղաքի դարավանդներից մեկի հենապատը (նկ. 6), միջնաբերդի ծիծեռնակապոչ շարվածքով պարսպապատի մի հատվածը (նկ. 7), կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական բազիլիկայի մի մասը: Պեղումներով հայտնաբերված կառույցներն ու հնագիտական նյութերը հիմք են տալիս հավաստել, որ գտնվել են մ. թ. ա. առաջին դարում Տիգրան Մեծի կողմից Արցախում հիմնված Տիգրանակերտ քաղաքի ավերակները: Հնագիտական նյութը վկայում է նաև, որ

քաղաքը՝ հիմնադրվելով մ. թ. ա. առաջին դարում, գոյատևել է առնվազն մինչև 13-14-րդ դարերը:



Նկար 7. Տիգրանակերտի միջնաբերդի ծիծեռնակապոչ շարվածքով պարսպից մի հատված

Նախատեսվում է 2007 թ. ընդարձակ և երկարատև պեղումներով վերհանել Տիգրանակերտի կառուցապատման հիմնական օրինաչափությունները և մանրամասնել քաղաքի գոյատևման պատմամշակութային հիմնական փուլերն ու նկարագիրը:

Տիգրանակերտի հետազոտության բաղկացուցիչներից է նաև Խաչենագետի քարայրային-տաճարային կառույցը, որն իրենից ներկայացնում է գետի ժայռեղեն ավի մեջ փորված եկեղեցուց, նախասրահից և տապանաբակից կազմված մի համալիր, դեպի ուր առաջնորդում է ժայռափոր ճանապարհը, և որի պատերը պատված են բազմաթիվ խաչային հորինվածքներով, հայերեն և հունարեն մի քանի արձանագրություններով:

2006 թ. հունիս ամսին համալիրն ամբողջությամբ պեղվել-մաքրվել է, հայտնաբերվել և պեղվել է նաև նրա ստորոտով երբեմն հոսած ժայռափոր ջրանցքը (նկ. 8), որն ամենայն հավանականությամբ ջուր է մատակարարել քաղաքին:



Նկար 8. Ժայռակիր ջրանցք Տիգրանակերտի մատույցներում

Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ Խաչենագետի ներքնահովիտը հանդիսանում է մշակութային և բնական մի յուրօրինակ տարածք, որը ցուցադրում է հայ էթնամշակութային մշտական ներկայությունը ընդհուպ մինչև նոր ժամանակները: Ուստի, ինչպես Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը, այնպես էլ Խաչենի ողջ ներքնահովտի համալիր հետազոտությունը, որը սկսվել է այս տարի, հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է:

**ՀԱՍԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՀԱԻ),
ԼՅՈՒԲԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (ԵՃԵՊՅ),
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ (ԱՊՅ)**

ՀԱՆԴԱԲԵՐՂԻ ՎԱՆՔԻ 2004-2005 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Գործադիր ամփոփում: 2004 և 2005 թթ. հուլիս-օգոստոս ամիսներին՝ Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միության նախաձեռնությամբ (նախագահ Սևակ Արծրունի) և Հարությունյանների ընտանիքի (Նյու Ջերսի, ԱՄՆ) ֆինանսական աջակցությամբ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը՝ գլխավորությամբ պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանի (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ), ամուսնությամբ ճարտարապետության թեկնածու, դոցենտ Լյուբա Կիրակոսյանի (Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան) և հնագետներ Վարդգես Սաֆարյանի (Արցախի պետական համալսարան) ու Տատյանա Վրթանեսովայի (ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոն) հնագիտական պեղումներ է իրականացրել ԼՂՀ Նոր Շահումյանի շրջանի Հանդաբերդի վանքում:

Ընդհանրապես ազատագրված տարածքներում ձեռնարկվող պեղումները ոչ միայն նպատակ ունեն վերհանել հենց ազատագրված տարածքների հայկականությունը, այլև, որ պակաս կարևոր չէ, հազարավոր հայ վերաբնակիչների մոտ ամրապնդել իրենց ապրած տարածքների հայկականության մասին պատկերացումները, դյուրացնել նրանց կողմից նոր տարածքի հոգևոր-մշակութային յուրացումը: Պեղումների հիմնական գիտական նպատակն էր աղբյուրագիտական բավարար հիմք ստեղծել՝ Վերին Խաչենի նորահայտ այս վանքային համալիրի բազմակողմանի պատմամշակութային հետազոտության համար: Հանդաբերդի վանքի պեղումների առաջնային նպատակներից մեկն էլ նրանից ոչ հեռու հիմնադրված Քնարավան գյուղի բնակիչների հոգևոր պա-

հանջմունքները բավարարող կենտրոնի ստեղծումն էր: Գործնական նպատակն էր մաքրել համալիրի ավերակները դարերի ընթացքում աճած առատ բուսականությունից (ներառյալ ավելի քան երկու տասնյակ հաստաբուն ծառերը), փլուզման հետևանքով առաջացած հողի և քարի հզոր լիցքից, վավերացնել ճարտարապետորեն կարևոր բոլոր մանրամասները և հիմք ստեղծել համալիրի մասնակի վերականգնման ու ամրակայման համար:


Պաշտպանի տեղագրությունը: Վանքը տեղադրված է Լևոնագետի աջ ափի երկարությամբ ձգվող անտառապատ լեռնաբազկի մի գոգավորության կենտրոնով դեպի գետը ձգվող հովտի բարձրադիր ափի եզրին, ընդարձակ բացատի հարավ-արևելյան կողմում, Հանդաբերդ ամրոցից մոտ մեկ կիլոմետր հյուսիս-արևելք: Վանքից արևելք ընկած ձորակում կա մի աղբյուր, որն ամենայն հավանականությամբ գործել է և միջնադարում, համալիրից արևմուտք և հյուսիս փռվում է ընդարձակ գերեզմանոցը, արևելք և հարավ՝ լեռնալանջն ի վեր դիտելի են շինությունների և առանձին պատերի հետքեր: Խորհրդային տարիներին աղբբեջանցիները վանքային համալիրի համարյա մեջտեղով անց են կացրել մոտ 4 մ լայնությամբ և 2 մ խորությամբ ավտոճանապարհ, որը լիովին բացել է հիմնական խմբի կառույցների հյուսիսային հիմքերը: Նույն կերպ էլ դեպի մոտակա անտառները տանող ավտոճանապարհը անց է կացվել պատմական գերեզմանոցի մեջտեղով, որի հետևանքով ավերվել է մի ընդարձակ հատված, իսկ որոշ խաչքարեր ու տապանաքարեր էլ տեղահանվել-գլորվել են ձորը: Սակայն ամենամեծ հանցագործությունը նրանք կատարել են 80-ական թթ. վերջին, երբ երկաթյա ծանր գործիքներով ջարդուփշուր են արել բոլոր երևացող խաչքարերն ու արձանագրությունները¹:

Պեղումները: Մինչև պեղումներն սկսելը համալիրի ողջ տարածքը, ներառյալ և շինությունները, նախ մաքրվել է ծառերից ու թփերից: Պեղումները ընթացել են ըստ շինությունների ծավալային-հատակագծային ուրվագծերի, իսկ ցանցային համակարգն օգտագործվել է

¹ Հանդաբերդի վանքի մասին մինչև պեղումները տե՛ս, Սիմոնյան Հ., Սանամյան Հ., Հանդաբերդի վանական համալիրը ԳԳ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Երևան, 1996, էջ 71-73: **Կարապետյան Ա.**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղբբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 24-30:

հնագիտական գտածոների վավերացման համար:

Պեղումներն ընթացել են 2004 և 2005 թթ.՝ տարեկան մեկական ամիս ժամանակով: Այժմ համալիրն ամբողջությամբ պեղված է 2005-2006 թթ., իրականացվել են նաև ամրակայման աշխատանքներ, մախատեսվում են իրագործել նաև մասնակի վերականգնման աշխատանքներ:



Նկար 1. Համալիրի գլխավոր հատակագիծը

Ճարտարապետական բնութագիրը: Վանքային համալիրի առաջին կառույցները ստեղծվել են 12-րդ դարի վերջերին, ըստ հնագիտական նյութերի և արձանագրությունների վանքը գործել է մինչև 14-րդ դարի վերջերը: Այսօր այն իր կազմում ներառում է շինությունների երկու խումբ (նկ. 1): Դրանցից առաջին կամ հիմնական խումբը բաղկացած է կենտրոնական եկեղեցուց և նրան կից երկու մատուռներից, ժամատանից, զանգակատնից, տապանաբակից (նկ. 2, 3): Երկրորդ խումբը, որ տեղադրված առաջինից մոտ 10 մ հյուսիս, բաղկացած է մատուռից, ամրապատից և տապանաբակից:

Ըստ շինարարական արձանագրության համալիրի շինությունների հիմնական մասը կառուցվել է 1276 թ.՝ Դավիթ վարդապետի կողմից: Ճարտարապետական քննությունը հիմք է տալիս եզրակացնել, որ վանքը ստեղծվել է տեղում գոյություն ունեցող հին եկեղեցու շուրջը՝ հաջորդաբար մատուռների (նկ. 4), ժամատան և ի վերջո՝ զանգակատան հավելման միջոցով:



Նկար 2. Կառույցների հիմնական խումբը բուսականությունից մաքրելուց հետո



Նկար 3. Կառույցների հիմնական խումբը պեղումներից հետո



*Նկար 4. Գլխավոր եկեղեցին և նրան կից հարավային մատուռը՝
դիտված ժամատնից*

Փաստորեն ժամատունը նաև մի յուրօրինակ միջանկյալ ծավալ է, որն իրար է կապում իր շուրջը տեղադրված տարբեր կառույցները: Այն ընդհանուր գծերով կրկնում է հայկական ժամատուն-գավիթների բնորոշ «կեղծ գմբեթային» ծածկի երդիկ հիշեցնող հորինվածքը:


Հյուսիսային՝ առանձնակի կանգնած մատուռ-եկեղեցին իր եռախորան ծավալով եզակի մի կառույց է ողջ միջնադարի ճարտարապետության համար: Ակնհայտ է զանգվածեղ պատերի, թաղածածկի և ներքին սահմանափակ տարածության անհամապատասխանությունը: Յուրօրինակ են հյուսիսային և հարավային խաչաթևերի մեջ ստեղծված ուղղանկյունաձև փոքրիկ ավանդատուն-եկեղեցիները, որոնք իրագործվել են հին, շքեղ պատկերաքանդակներ կրող խաչքարերի օգտագործումով:

Եթե գլխավոր եկեղեցու և նրա երկու ավանդատների բեմերին հավելեմք նաև այս մատուռի և ժամատանը հյուսիսից կից մատուռի բեմերը, ապա կստացվի, որ վանքում կարող էին պատարագ մատուցել միանգամից հինգ տեղում, ինչը պատկառելի թիվ է նման մի փոքր և ակնհայտորեն առանձնացված վանքի համար: Հայտնի է, որ 12-րդ դ.

վերջերից սկսած և, հատկապես, 13-14-րդ դդ., ինչպես Արցախում, այնպես էլ ողջ Հայաստանում նկատելի է հանգուցյալի հոգու համար մատուցվող պատարագների թվի խիստ բարձրացում: Ըստ երևույթին հենց այդ իրողությունն էլ խթանել է Հանդաբերդի վանքում նման քանակի մատուցների ստեղծումը:

Վանքային համալիրը կառուցապատման նման ընթացքով ու հորինվածքով, ճեղքված և անտաշ քարերի ու կրաշաղախի օգտագործմամբ իրագործված շարվածքով, առանձին կառույցների հորինվածքում և շարվածքում պարզ և ժողովրդական ձևերի լայն կիրառումով առանձնանում է միջնադարի վանքային դասական համալիրներից և առատ նյութ է տալիս մանրամասնելու 13-րդ դարի երկրորդ կեսում և 14-րդ դարի առաջին կեսում՝ Հայաստանի համար խիստ ծանր քաղաքական-տնտեսական պայմաններում մշակութային-կառուցողական կյանքի որոշ առանձնահատուկ կողմերը:

Գտածոները: Պեղումների հիմնական արդյունքներից առաջնային կարելի համարել 12-14-րդ դարերի մի շարք նոր արձանագրությունների, խաչքարերի և տապանաքարերի գյուտը: Արձանագրությունները ոչ միայն ներկայացնում են վանքի կառուցման որոշ մանրամասներ, այլև կարևոր աղբյուր են Վերին Խաչենի քաղաքական, տնտեսական և հոգևոր պատմության համար:




Նկար 5. Արձանագրակիր կղմինդրների բեկորներ

Համալիրի ողջ տարածքից հավաքվել են կղմինդրների հազարից ավելի բեկորներ, որոնք օգտագործվել են տանիքների ծածկի մեջ: Խիստ ուշագրավ է, որ գտնվել են նաև հայերեն արձանագրություններ կրող կղմինդրների (Նկ. 5) և թասերի մի շարք բեկորներ, հանգամանք, ինչը հնարավոր է դարձնում փաստել հայերեն գրի օգտագործման տարածվածությունը նաև զուտ կենցաղային մակարդակով, որն իր հերթին էթնիկության ամենաբարձր ցուցանիշներից մեկն է: Արձանագրական որոշ նորագյուտ նյութեր էլ թույլ են տալիս էլ ավելի ընդարձակել լեռնագավառի անձնամվանական համակարգը:



Նկար 6. Ջինյալ ռազմիկի պատկերաքանդակ, խաչքար, 12-րդ դ. վերջ

Հատուկ նշելի է ավելի քան հարյուր հիսուն խաչքարերի և խաչակիր սալերի գյուտը, որոնց մեջ քիչ չեն արվեստի իսկական գլուխգործոցները: Խաչքարերից երկուսի պատկերաքանդակները ներկայացնում են հեծյալ ռազմիկների: Ռազմիկը մի դեպքում զինված է թրով և գուրզով, երկրորդ դեպքում նա մի ձեռքում բռնել է նիզակը, իսկ մյուսով՝ գինու գավաթը (Նկ. 6): Արցախյան խաչքարերի մի շարք քննություններով արդեն իսկ վեր է հանվել հայրենիքի համար կռվող զինյալի



Նկար 7. *Խաչքար՝ «դրախտային» հորինվածքով, 12-13-րդ դդ.*

լայն պաշտամունքը, և ահա այս գյուտերը զալիս են վկայելու, որ այն լայն տարածում է ունեցել մաս Կերին Խաչենում: Հանդաբերդի վանքի խաչքարային եզակի մի հորինվածք պատկերում է ստոտու մորը՝ մանկանը կուրծք տալիս: Այն ոչ միայն խիստ ուշագորավ է երեխաների խնամքի, կերակրող մոր ու մանկան տարազի առումով, այլև մայրերին պատկերող արցախյան մի շարք քանդակների հետ մոր հնարավո-

րություններ է ստեղծում նաև Աստվածածնի պաշտամունքի ժողովրդական ակունքներն ու դրսևորումները պարզաբանելու համար: Մի այլ խաչքար ներկայացնում է այսպես կոչված «դրախտային հորինվածքի» տեղական մի տարբերակ (նկ. 7), ուր զույգ արմավազարդերից յուրաքանչյուրն ավարտվում է խոշորապտուղ, բայց իրարից տարբերվող ծառերով (թերևս տանձենի և խնձորենի) ու դրանց վրա թառած թռչուններով: Նշելի է ընդհանրապես խաչքարերի հորինվածքային բազմազանությունը: Ուշագրավ է, որ հին խաչքարերը լայնորեն օգտագործվել են որպես հարմար շինաքար՝ նրանցով շարվել կամ ամրացվել են կառուցվածքային առունով պատասխանատու հատվածները, ստեղծել պատերն ամրակայող հորիզոնական գոտիներ: Արդյունքում որոշ պատեր ասեք հատուկ կերտված լինեն միայն խաչքարերով: Հայ մշակույթում առանձնակի է կանգնած մարմարից պատրաստված նրբին խաչասալը՝ 1276 թ. արձանագրությամբ:

Պեղումները տվել են մետաղից և կավից պատրաստված մի շարք գտածոներ, որոնք զգալի չափով հարստացնում են Արցախի նյութական մշակույթի մասին պատկերացումները: Գլխավոր եկեղեցու պեղումներից գտնվել է մկրտության արձանագրակիր ավազանը: Մետաղյա իրերի շարքում կարելի է առանձնացնել տարատեսակ բևեռները, կողպեքի բանալին, ճարձանդը, ձիու պայտը, դարբնոցային զանազան նախապատրաստուկները, կացինը, ցախհատը, դանակը: Եկեղեցական ծիսակատարության հետ են կապվում պղնձե զանգակն ու խաչի կոթառը: Խեցեղենի իրերի մեջ մեծ թիվ են կազմում կարասների, խոհանոցային կճուճների և թասերի բեկորները: Գտնվել են նաև կայծքար հիշեցնող քարի մի քանի բեկորներ, որոնց ինքնությունը դեռ որոշման ընթացքում է:

Համալիրի ամրակայումն ավարտված է: Այժմ աշխատանքներ են տարվում վերականգնման նախագծերի վրա: Նախատեսվում է, որ եկող տարի կնախածեռնվեն հյուսիսային մատուռի և զանգակատան վերականգնման աշխատանքները, և Քնարավան գյուղն ու շրջակա բնակավայրերը հոգևոր պահանջումները բավարարելու համար եկեղեցի ու աղոթատեղի կունենան: Պեղումներից հայտնաբերված իրերը հետազոտելուց և վերականգնելուց հետո կհանձնվեն պատվիրատուի կողմից ստեղծվելիք և ԼՂՀ կառավարության կողմից համապատասխան հաստատագրում ստացած թանգարանային կազմակերպությանը: Ընթացքի մեջ է պատկերազարդ գրքի ստեղծումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՎՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԿԻ ԵՎ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԻ
ՇԱՐԺՆԹԱՅՆ XIX ԴԱՐՈՒՄ**

Գրառված **աշխատանքային երգերը** ևս հիմնականում ավանդական բնույթ ունեն. «Ձիգ տուր, քաշիր, ա՛յ եզո»², «Հով արա, ջեյրան ջա՛ն»³ և կամ՝ «Մոթալ, մոթալ, ջա՛ն մոթալ»⁴:

Նրանց երգացանկում կային նաև նորոյա կոլտնտեսային կյանքին նվիրված գրական լեզվով ժողովրդականացած երգեր, ինչպիսին էր.

«Ծլել է արտս, ծփում է արտս,
Կորել է դարդս, ջա՛ն,
Եկել է նորը, խնդության օրը,
Գյոզալ տրակտորը, ջա՛ն»⁵:

Խորհրդային ժամանակների նորոյա ինքնատիպ երգերից են Կանանց միջազգային տոնին՝ մարտի 8-ին նվիրված երգը.

«Լաչակդ բաց, ա՛յ նանի,
Քիթկալդ բաց, ա՛յ նանի,
Թող արև տա, չորանա
Արցունք ու լաց, այ նանի:

Ինչքան չանադ կապ մնաց,
Տափակել ա, ա՛յ նանի,
Քիթ ու բերանդ ծռնովել,
Տես վիճակդ, ա՛յ նանի:

Հոկտեմբերը քեզ համար
Նոր կյանք բերավ, ա՛յ նանի,
Ցուրտ ձմեռը վերացավ,
Գարուն դարձավ, ա՛յ նանի,

Ականջներիդ բաց արա,
Էսօր մարտի 8-ն ա,

¹ Անդ:

² ՀԱԻ, FS: 3566-3567:

³ ՀԱԻ, FS: 3498, 1, 2:

⁴ ՀԱԻ, FS: 3530-3531:

⁵ ՀԱԻ, FS: 3576-3577:

Շարաշ կանչի, ծափ արա,
Կանանց տոնն ա, ա՛յ նանի»¹:

Առաջին հայացքից նոր իմաստ ու բովանդակություն արտահայտող այս երգում, գարնան զարթոնքի, ծնունդի դեմ տարած հաղթանակի, իրական աշխարհի զգացողության խորհուրդն է ամփոփված: Ավանդական բանահյուսության մեջ բազում գործառույթներով օժտված Նանեին ոգեկոչելով ազատելու բնական, կանացի հմայքները խաթարող հանդերձանքից, երգ ու պարով, խրախճանքով վերահաստատվում է գարնան զարթոնքը և կանանց տոնը դիմավորելու նրա պատրաստակամությունը: Այստեղ միաժամանակ նկատելի է մայր բնության և նահապետական հայ կնոջ ինքնագիտակցության զարթոնքի անխզելի կապն ու մերձեցումը:

Տարածված **երգիծական երգերից է.**

«Քույրիկիս՝ տուփլի, գալոշ,
Մայրիկիս՝ կոշիկներ,
Իսկ հայրիկիս՝ մի զույգ տրեխ
Էն էլ փոկեր չունենա»²:

Արևմտահայոց (հիմնականում պոլսահայոց) շրջանում տարածված գավեշտական բազմաթիվ պատկերներով շարահյուսված այս երգերը երգում էին հատկապես երիտասարդները:

Պյատիգորսկում իրենց ավանդական ապրելակերպին խորթ և անհարիր երևույթներն արցախահայերն անվարան երգիծում էին.

«Կիսլավոդսկի օրիորդները
Ժամը տասին են զարթնում,
Մաշքը (մեջք) կտորած կատվի նման,
Ման են կյալի բուլվարում»³:

Ռուսական նոր միջավայրը, մարդկային նոր հարաբերությունները ևս լեզվական նորամուծությունների պատճառ են դարձել.

¹ ՀԱԻ, FS: 3578:

² ՀԱԻ, FS: 3506-3509:

³ ՀԱԻ, FS: 3568:

«Ծիտը ծառին տիտիկ արավ,
Ախտոնիկը (որսորդ) ուբիտ արավ (սպանեց),
Ոտնան բռնավ դամոյ (տուն) տարավ,
Ժառովնիկուն (տապակ) ժառիտ արավ (տապակեց),
Նստեց մի լավ կուշիտ արավ (կերավ),
Ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ, ա՛խ»¹:

Սակայն իրենք՝ Պյատիգորսկ գաղթած արցախահայերը, չէին ընդունում, որ իրենք ակամայից տուրք են տալիս լեզվական փոխառություններին և ասում էին. «Նաաբարոտ (ընդհակառակը) մունք չիստի (մաքուր) արմյանսկի (հայերեն) ենք խոսում»²:

Թեպետ Պյատիգորսկ գաղթած արցախահայերի բառային ֆոնդը ռուսերենից զգալի ազդեցություններ էր կրել, սակայն նրանք իրենց ազգային ինքնությունն ու արցախահայի արժանապատվությունը շարունակում էին բարձր պահել: Այդ հանգամանքն իր գեղարվեստական արտացոլումն է գտել հատկապես նրանց զինվորի և հայրենասիրական երգերի մեջ³:

Ձինվորի երգի մի մուռչ են գրառել նաև Ասկյարանի մասին, որտեղ հիշատակվում է Հայաստանի հերոսական անցյալը և արցախահայ երիտասարդի պատրաստականությունն ազգի համար զոհվելու.

«Ասկյարանի բերդի միջին
Կոտորում են թշնամուն,
Ինչպե՞ս կորավ քաջ Վարդանը,
Համազասպի քաջ անուն...
Սուրերս տուր, մայրի՛կ,
Մոսենս տուր, քույրի՛կ,
Թե որ ազգիս չզոհվեմ,
Ինչու՞ հապա ծնվեցի ես»⁴:

Հայրենական պատերազմի տարիներին ստեղծված որոշ երգեր իրենց ուրույն տեղն են գտել նաև նրանց երգացանկում.

¹ ՀԱԻ, FS: 3618, 1:

² ՀԱԻ, FS: 3618, 2:

³ ՀԱԻ, FS: 3586-3587, 3604-3611:

⁴ ՀԱԻ, FS: 3606, 1:

«Առավոտյան ժամը ութին,
Ինձ վայենկոմատ (զինկոմիսարիատ) կանչեցին,
Վեշ մեշոկս (ուսապարկ) շալակս տվին,
Դեպի Կերչը ուղարկեցին»¹:

Երկարաշունչ այս երգի վերջում, անօգնական ու անհույս ընկած մահամերձ զինվորը վերջին շնչում խնդրում է.

«Ընկերներ ջան, հավաքվեցեք,
Դուդուկները փչիլ տվեք,
Գերեզմանիս քարին վրեն
Սայաթ-Նովեն երգել տվեք»²:
Եվ շունչը փչում է հազիվ ասելով.
«Չե՛մ մոռանա Մայր Հայաստան»³:

Մայր Հայաստանի կարոտը մշտապես ուղեկցել է օտարության մեջ ապրող հայերին այդ թվում նաև Պյատիգորսկ գաղթած արցախահայերին: Նրանց մեջ կային նաև ինքնուս ստեղծագործողներ, ինչպիսին էր 58-ամյա Աշխեն Մուսայելի Վանիլովը: Նա իր մտորումներն արտահայտում էր չափածո հանգավորումով և երգային կատարումով: Նրա երգած **եղերերգի** սեղմ տողերի մեջ խտացված էր արցախահայոց կրած անլուր տառապանքները, նրանց հարկադրված գաղթը բնօրրանից և անխախտ հավատքն ապագայի նկատմամբ: Ժողովրդական այս ստեղծագործության լավատեսական ավարտը, թվում է, աղոթք լինի առ Աստված: Այն մաղթանք է նաև ուղղված համայն մարդկությանը.

«Դարդոտ, կարոտ կյանքերի մեջ,
Տանջվեցինք մունք անհանգիստ,
Դաղված, էրված ջիգյարներով,
Մնացինք մունք անհանգիստ,
Մունք շատ մեծ ցեղ ունեինք,
Բոլորին էլ կուրցրեցինք.
Եկենք, հասենք Պըտիղորսկ,

¹ ՀԱԻ, FS: 3604:

² ՀԱԻ, FS: 3606:

³ ՀԱԻ, FS: 3610:

Նիուժե՞լի (մի՞թե) մուսք կարել չընք
Հանգիստ մնանք էս տանջանքից.
Թող մեր Հայոց ազգին.
Էն ուժ ու պատիվը տան,
Որ իլալ ա հին-հին վախտից,
Թող փրկի տերը սաղ աշխարքին,
Լոխ էլ հանգիստ ապրին, երջանիկ»¹:

Արցախցի կնոջ մարգարեական խոսքերն արդեն 15 տարի է, որ իրականություն են դարձել: Հայաստանն ու դուրսում գտնվող հայերն աշխարհը նվաճել են ազատ ու անկախ ապրելու իրենց պատմական իրավունքը:

1988 թ. արցախյան շարժման վերելքի տարիներին արևմտահայերից իմ գրառած բանահյուսական նյութերում, Կիլիկիայից գաղթած հայերը ևս իրենց հստակ վերաբերմունքն արտահայտել են հետևյալ տողերով.

«Ղարաբաղը մեր փոքրիկ
Մասն է Հայոց աշխարհի,
Ինչո՞ւ թողնենք օտարին,
Երբ հայերն են հոն բնիկ»²:

Եվ ժողովրդական երգը հնչում է որպես միասնական պայքարի համազգային պատգամ.

«Մեր հայ եղբայրներ, մենք շատ լռեցինք,
Բավական է մեզ այսչափ համբերենք,
Մեր Ղարաբաղը մեզնից խլեցին,
Հիմա ուժ ունենք ետ առնենք նորից»³:

Արցախահայոց պատմական այդ մեծ խիզախումը դարձել է նաև արևմտահայերի ստեղծագործական ներշնչանքի աղբյուր, քանզի արցախյան ազատամարտը մարմնավորում է նաև իրենց կորցրած Երկրի ազատագրման չիրականացած երազը...

¹ ՀԱԻ, FS: 3580:

² Սվազյան Վ., մշվ. աշխ., էջ 204:

³ Անդ:

Ավելի ուշ Ստամբուլի (1996 թ.) և Լոս Անջելեսի (2001 թ.) ծերանոցներում Հայոց ցեղասպանության ականատեսների հուշերն ու վկայությունները գրառելիս, վերապրողներից շատերն անընդհատ հետաքրքրվում էին Արցախի հիմնահարցի վերաբերյալ՝ դրսևորելով իրենց որոշակի վերաբերմունքն իրենց իսկ հաղորդած բանավոր խոսքի մեջ¹:

Առավել հուզիչ են Դեր-Էլ-Ջորում (2005 թ.) եղեռնից վերապրածների երրորդ և չորրորդ սերունդների ներկայացուցիչների հետ իմ հանդիպումները: Նրանցից շատերն արդեն կես-արաբ, կես-քուրդ ընտանիքներից էին, որոնք կորցրել էին իրենց մայրենի հայերեն լեզուն և քրիստոնեական հավատքը, սակայն մախնիների արյան կանչով, դեռևս շարունակում էին իրենց հայ զգալ: Լսելով, որ Արցախն ազատագրված է և այնտեղ գնացող-հաստատվողին կառավարությունը հող է տալիս, որ վարի, փող է տալիս, որ տուն կառուցի: Ուստի նրանք պատրաստակամ էին փոխադրվել Արցախ և այնտեղ սկսել հայեցի նոր կյանք²:

Արևմտահայության շրջանում կատարած իմ ժողովրդագիտական գրառումներն ու դիտարկումները վկայում են.

- ա. Արցախահայոց բանահյուսությունն իր արմատներով նույնական է Հայաստանի և Կիլիկիայի մշակութային ավանդներին: Հանգամանք, որը վկայում է նրանց ազգային-ավանդական ակունքների համանմանությունը:
- բ. Պյատիգորսկում՝ նոր, ռուսական միջավայրի ազդեցությունը 1960-ական թվականներից արդեն իսկ իրեն զգացնել է տվել գաղթական արցախահայերի բանավոր խոսքում:
- գ. Համայն աշխարհի հայության էթնոհոգեբանության մեջ կատարվում են որոշակի տեղաշարժեր. ազատագրված Արցախի գաղափարի շուրջ համախմբվում են աշխարհասփյուռ հայ ժողովրդի տարբեր հատվածները: Արցախը Մայր Հայաստանի հետ դառնում է նոր ժամանակների նոր հայրենադարձության սրբազան տեսլականը:

¹ **Սվազյան Վ.**, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000:

² Դերգորյան գրառումներ (2005 թ.). Հակոբ Մութաֆյանի (ծնվ. Դեր-Էլ-Ջոր, 1980 թ.) գրույցը: Վ. Սվազյանի անձնական արխիվ (ծեռագիր):

**ИЗ ИСТОРИИ ЭТНОГРАФИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ
НАГОРНОГО КАРАБАХА (КОНЕЦ XIX- НАЧАЛО XX ВВ.)**

Материалы и различные сведения о жизни и быте отдельных селений Нагорного Карабаха, отличавшихся своей самобытностью и своеобразием, нашли отражение уже в обширной дореволюционной кавказоведческой литературе, и с конца XIX в. печатались в издаваемом Кавказским учебным округом «Сборнике материалов для описания местностей и племен Кавказа» (СМОМПК), а также других изданиях. Они составлялись в основном смотрителями и учителями местных училищ и были посвящены описанию ряда селений (Гадрута, Кусапата, Сарова, Геташена (Чайкенда) Каринтака (Даш-Алты) и др., древностям с. Аветараноц (Чанахчи)¹, отдельным сторонам внутрисемейной жизни², промысловым занятиям в Закавказье, в том числе, в Елисаветпольской губ. (в Шуши, Кусапате, Гадруте и др.)³.

¹ **И. Давидбеков**, Село Гадрут Елисаветпольской губ., Джеванширского уезда» - СМОМПК, Тифлис, вып. VI, 1888, с. 153-192; **Н. Григоров**, Село Саров, Елисаветпольской губ., Джеванширского уезда - Там же, с. 123-132; **Г. Израелов**, Село Касапет - Там же, вып. XIII, 1892, с. 42-58; **Г. Осипов**, Селение Барда, Джеванширского уезда, Елисаветпольской губ. - Там же, вып. XVII, 1893, с. 119-137; **Ф. Джейранов**, Селение Чайкенд, Елисаветпольского уезда той же губ. - Там же, вып. XXV, 1898, с. 59-100; **Г. Осипов**, Селение Даш-Алты Шушинского уезда Елисаветпольской губ. - Там же, с. 101-136; **Е. Мелик-Шахназаров**, Из древностей селения Ченахчи - Там же, вып. XIX, 1894, с. 78-83.

² **Г. Израелов**, Домашнее воспитание армян Джеванширского уезда Елисаветпольской губ. - СМОМПК, вып. VII, 1889, с. 73-76; **А. Калашев**, Вардавар [сел. Чайкенд Елисаветпольской губ] - Там же, вып. XVII, 1893, с. 1-36.

³ Промысловые занятия в некоторых населенных пунктах Закавказья - СМОМПК, вып. XI, 1891, с. 1-79, 87-89 и др.

Попытка первого этнографического изучения этого региона принадлежит Ер. Лалаяну. Том 2-й своего журнала «Азгагракан һандэс» (Ազգագրական հանդես) он посвятил исторической Варанде, причем к участию в составлении этого сборника привлек также других авторов. В разделе Л. Атабекияна «Статистические сведения» содержатся интересные данные о численности и плотности населения всего Шушинского уезда, его распределении по национальному составу и вероисповеданию, а также демографические показатели брачности, рождаемости, смертности, естественного прироста. Значительная часть материалов представлена в виде таблиц, причем в десятилетнем интервале 1886-1895 гг.

Раздел Г. Тер-Казаряна «Экономическое состояние» представляет краткую сводку главных направлений сельского хозяйства. Отмечены основные культуры, возделываемые в полеводстве, садоводстве, а также количество и виды скота; упоминаются занятия шелководством, пчеловодством, рыболовством, охотой. Приведены данные (в виде таблицы) о ремеслах, в том числе, о количестве мастеров, учеников и рабочих в Шуши и Шушинском уезде за 1895 г., а также фабричном производстве и торговле.

Ер. Лалаяном в сжатой форме представлены исторический очерк, топография, флора и фауна региона, изложены краткие сведения о г. Шуши, ряде известных селений, монастырей, святынь и крепостей. Весьма интересны сведения о состоянии просвещения (количество школ в г. Шуши и в целом в Варанде, библиотек, театров, типографий), а также почтового дела в 90-е гг. XIX в. Как и в других томах журнала «Азгагракан һандэс», здесь также значительное внимание отведено семейной жизни и верованиям. Эти два наиболее больших раздела собственно и составляют этнографическую часть работы. Довольно обстоятельно описаны брак и свадьба, рождение ребенка, внутрисемейные отношения, похоронная обрядность, а также верования (включая многочисленные культы) и календарные праздники¹. К сожалению, в этой ценной работе отсутствуют такие важные сферы традиционного народного быта армян как хозяйство и материальная

¹ Ե. Լալայան, Վարանդա, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1898:

культура, а также ряд разделов духовной культуры. Подчеркнем, что сам Ер. Лалаян рассматривал этот труд как «материалы для будущих исследований», что и обозначено в подзаголовке книги. Несмотря на описательный характер этих материалов, значение их с позиций сегодняшнего дня переоценить невозможно: они отражают жизнь и быт традиционного армянского общества в дореволюционный период конца XIX- начала XX вв.

Первое всестороннее этнографическое исследование армян Нагорного Карабаха принадлежит С. Д. Лисициану. В основу его положен обширный полевой материал, собранный ученым в различных районах данного региона во время экспедиции, организованной Закавказской Научной Ассоциацией при ЦИК Закавказья. Эта Научная Ассоциация была создана летом 1923 г. в Тифлисе «с целью всестороннего изучения стран Закавказской федерации (республик Грузии, Армении и Азербайджана) и Ближнего Востока, а также распространения знаний о них». За недолгий, но плодотворный срок своего существования она оставила заметный след в истории этнологического кавказоведения в бурный период первого постреволюционного десятилетия 1920-х годов. Вслед за всесторонним обследованием Осетии (1923 г.), в 1924 г. Ассоциацией была организована научная экспедиция для комплексного экономического, этнографического и археологического изучения Зангезура, Нагорного Карабаха и Нагорного Курдистана¹. Широкий масштаб экспедиции, включавшей специалистов разного профиля: этнографов (С. Д. Лисициан, Г. Ф. Чурсин), экономистов (Т. Атабеков, Г. Кочарян), археологов (С. Тер-Аветисян, Е. Пчелина), знатока курдского языка и быта Лазо (А. Газарян) и фотографа (Н. Степанян) позволил собрать обширный материал, впервые в обобщающем виде отражающий целостную картину жизни и быта указанного региона. Экспедиция стала важной вехой в развитии не только кавказоведения, но и армянской этнографии, поскольку, по определению С. Д. Лисициана, явилась «первой попыткой охвата этнографическим описа-

¹ Имеется ввиду Курдистанский у. Азербайджанской ССР.

нием широкого района после советизации Закавказья»¹. Для самого С. Д. Лисициана, уже признанного к этому времени арменоведа, это был первый, притом весьма успешный опыт полевой работы.

В Нагорном Карабахе он собрал огромный и разносторонний материал, уточнил и расширил данные, ранее собранные Ер. Лалаяном. С. Д. Лисициан учитывал, что, хотя со времени сбора материала Ер. Лалаяном прошло около трех десятилетий, но слишком различными для армянской действительности были эпохи дореволюционной Армении рубежа XIX-XX вв. во время фиксации материала Ер. Лалаяном и первого десятилетия Советской Армении в годы его (Лисициана) собирательско-полевой деятельности. Позже, в 1937 г. он провел в этом регионе дополнительное обследование, акцентируя внимание в основном на достижениях культурного строительства за десятилетний период, прошедший после его предыдущей (1924 г.) экспедиции. Проанализировав и обобщив собранные материалы, ученый написал (на русском языке) историко-этнографическое исследование, посвященное армянам Нагорного Карабаха, в котором вскрыл его местную специфику и одновременно показал историко-культурную общность с армянским этносом в целом.

В небольшом предисловии «От автора» С. Д. Лисициан представил маршрут экспедиции, а также кратко изложил степень изученности данного региона. В монографии, снабженной в вводной части географическим очерком, подробно освещены этнический состав населения, основные аспекты хозяйства и материальной культуры (занятия жителей, поселения, жилища, интерьер, утварь, пища, одежда), семьи и семейно-обрядовой сферы (свадебная, родильная, похоронная обрядность), внутрисемейные и соседские отношения, формы взаимопомощи, различные стороны духовной культуры, в частности верования и связанные с ними многочисленные формы культов, праздники годового календарного цикла. Все аспекты традиционной материальной и

¹ С. Д. Лисициан. Армянская этнография за 15 лет — Советская этнография, 1936, № 4-5, с. 271.

духовной культуры армян рассмотрены в двух контекстах: исторической ретроспективы и преобразований социалистического строительства. Подобный методологический подход в изучении данного региона был для него не случаен. С. Д. Лисициан подчеркивал, что «Нагорный Карабах принадлежит к тем редким армянским провинциям, население которых раз сложившись в раннюю историческую эпоху, в дальнейшем в своей массе сохранило свой этнический состав на протяжении долгих веков, хотя и здесь оно не носит уже того целостного характера, который ему был свойственен до XVII-XVIII вв.». По сравнению с другими армянскими провинциями «Нагорный Карабах удержал сравнительно большую культурно-бытовую преемственность»¹. Работа С. Д. Лисициана явилась первым в армянской этнографии монографическим исследованием отдельного историко-этнографического региона Армении. По актуальности поставленных проблем она не утратила своей значимости и в настоящее время.

К сожалению, рукопись ждала трудная и необычная судьба. Сохранившиеся в личном фонде ученого архивные документы свидетельствуют о сложных многолетних перипетиях, связанных с ее изданием². На протяжении 1930-х гг. готовность ее опубликования поочередно выражали целый ряд заинтересованных ведомств: Закавказская Научная Ассоциация (Тифлис), организовавшая экспедицию; отдел народного образования Автономной области Нагорного Карабаха (Степанакерт); Институт кавказоведения им. Марра (Тифлис); Институт этнографии АН СССР (Ленинград), заключивший в 1936 г. договор с автором на ее издание, но не сумевший за 1936-1940 гг. его осуществить; Институт истории, археологии и этнографии Азербайджанского филиала АН (в дальнейшем Институт истории АН Аз. ССР, Баку). В 1940 г. в силу ряда обстоятельств готовая рукопись была из Ленинграда передана для издания в Баку. Однако там она не

¹ Степан Лисициан, Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк. Ер., 1992, с. 41.

² Национальный архив Армении, ф. 428: семейный фонд Лисицианов, оп. 2, д. 126, 307; оп. 3, д. 103, оп. 4, д. 300, 306, 307, 336, 341, 345.

только не была опубликована, но и не возвращена автору, а после его смерти (в 1947 г.) - его законным наследникам: их многочисленные настойчивые требования на протяжении более двадцати пяти лет остались безрезультатны¹. Монография увидела свет десятилетия спустя, после того, как в архиве ученого в Ереване нами конце 1970-х гг. был случайно обнаружен черновик рукописи, многие страницы которой за давностью лет прочитывались уже с трудом. Учитывая ее большую научную ценность и уникальность представленных в ней полевых материалов, ставших в настоящее время достоянием истории, а также неослабевающий интерес к работе, в особенности в связи с событиями последних лет в Нагорном Карабахе, Институт археологии и этнографии АН Арм. ССР счел необходимым и актуальным издание этого труда. При редактировании работы, написанной более полувека тому назад, потребовались тщательная текстологическая проверка текста, составление необходимых комментариев и научно-справочного аппарата. Монография С. Д. Лисициана (ред. Д. С. Вардунян, Л. М. Варданян) была опубликована сначала в армянском переводе, с обширным иллюстративным материалом (1981), вскоре став библиографической редкостью, а затем в русском оригинале (1992)². Она сразу привлекла научной общественности и получила высокую оценку специалистов.

По полевым материалам указанной экспедиции С. Д. Лисициан тогда же написал и работу о традиционном карабахском жилище. В ней скрупулезно описаны все основные части и детали жилого дома и хозяйственных построек и их

¹ Документы частично опубликованы в работе: Степан Лисициан, Армяне Нагорного Карабаха. Приложение, с. 191-206. Подробности см. также: **Л. М. Варданян**, Степан Лисициан и истоки армянской этнографии, Ер., 2005, с. 287-292.

² **Ս. Դ. Լիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը (Ազգագրական ակնարկ), Հայ ազգաբնիկների և բնակիչների մասին, 12, Եր., 1981, էջ 7-84: **Степан Лисициан**, Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк. Ер., 1992. Для русского издания нами составлены Глоссарий этнографических терминов и Указатель встречающихся в тексте географических названий, исторических памятников и местных святынь, а также написано предисловие «От редактора», в котором охарактеризована научная биография С. Д. Лисициана.

функциональное назначение, причем с пояснением терминов на армянском и русском языках¹. Впервые традиционное жилище рассматривалось не только как одна из основных сфер материальной культуры армян, но и как важный источник для решения проблемы их этногенеза. В этой работе С. Д. Лисициан впервые в армянской этнографии предпринял попытку изучения традиционного армянского жилища с позиций его типологической классификации, чему в дальнейшем посвятил целый ряд своих исследований. Другим весомым вкладом ученого явилось выявление им - также впервые на карабахском материале - определенной генетической связи «так называемых простонародных крестьянских построек» с армянскими культовыми сооружениями. По его мнению, изучение уже одного только карабахского жилища «дает полное основание ставить в непосредственную связь с его планом план жаматунов». Данная работа С. Д. Лисициана положила начало его многолетнему обширному исследованию по армянскому народному жилищу, завершить которое в объеме монографии ученый не успел.

Практически одновременно с исследованиями С. Д. Лисициана И. Петрушевский опубликовал работу о дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха². В основе ее лежит экспедиционный материал 1928 г., отражающий различные формы широко распространенного здесь культа местных святых. Приведенный в работе обширный фактический материал свидетельствует о том, что еще в конце 1920-х гг. здесь сохранялось поклонение горным вершинам, священным деревьям и родникам, могилам мучеников-ныхатаков. Оценивая работу И. Петрушевского, С. Д. Лисициан отмечал, что при сборе ими полевого материала в 1924 и 1928 гг., когда «еще не успело во всей широте развернуться колхозное движение», оба они еще «встречали хотя

¹ С. Д. Лисициан, К изучению армянских крестьянских жилищ (Карабахский карадам) — Известия Кавказского историко-археологического института, Тифлис, 1925, т. 3, с. 97-108.

² И. Петрушевский, О дохристианских верованиях крестьян Нагорного Карабаха, Баку, 1930.

бы уцелевшие в памяти стариков обрывки обычаев, столь важных как источник давно пройденных стадий общественного развития». Всего четыре года спустя после их поездки «исследователю приходится наталкиваться на чистое место», т. к. «стали более сбивчивыми, а во многих случаях - совсем сгладились воспоминания о старых обычаях, еще несколько десятков лет тому назад живо сохраняемых и соблюдаемых в народной массе»¹. Подчеркнем, что культ местных святынь, их типология и социально-общественное значение в жизни армян на обширном полевом материале, в том числе - и карабахской экспедиции, впервые был изучен С. Д. Лисицианом².

¹ **Степан Лисициан**, Армяне Нагорного Карабаха..., с. 26, 27.

² **С. Д. Лисициан**, Святыни у перевалов - Советская этнография, 1936, № 4-5, с. 200-212; подробнее см. **Л. М. Варданян**, Степан Лисициан и истоки армянской этнографии..., с. 277-285.

ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփան Աղաջանյանը այն հիանալի հայ վարպետների շարքում է, որոնց ստեղծագործական բարձր նվաճումները հայ կերպարվեստը ներգրավեցին Նոր ժամանակի համաեվրոպական գեղարվեստական ընթացքի մեջ: Այս գեղանկարչի ժառանգությունը նշանավորվում է գաղափարաբովանդակային հարուստ լուծումներով և գեղարվեստական լեզվի ամբողջականությամբ: Աղաջանյանը ինչպես նաև մի շարք այլ վարպետներ հետևեց այսպես կոչված ավանդական ռեալիստական գեղանկարչության սկզբունքներին, աշխատելով հիմնականում որպես դիմանկարիչ:



Նկար 1. Տեսարան Շուշիում

Ստեփան Աղաջանյանը ծնվել է 1963 թ. Շուշի քաղաքում, այն ժամանակվա հայ մշակույթի կենտրոններից մեկում, որը ինչպես հայտնի է, տվել է մի ամբողջ շարք ականավոր գործիչներ հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում, որոնց թվում է ամենախոշոր հայ քանդակագործ Հակոբ Գյուրջյանը: Սկզբնական կրթությունը Աղաջանյանը ստացել է հարազատ քաղաքի քառամյա ուսումնարանում: Նա նկարել է սկսել շատ վաղ հասակից, ընդ որում, ի տարբերություն իր հասակակից երեխաների, փոքրիկ Ստեփանը սիրում էր նկարել միայն բնությունից: Նկարչության նկատմամբ նրա հակումը նկատվել էր արդեն իսկ ուսումնարանում: Սակայն տղայի գեղարվեստական ծիրքը հետևողական զարգացում այդ ժամանակ չունեցավ: Եվ միայն Շուշիի ուսումնարանը ավարտելուց երկու տարի անց հնարավորություն ստեղծվեց շարունակել սիրելի զբաղմունքը: Ճակատագրի բերումով, իսկ ավելի ստույգ Աղաջանյանի մախաձեռնող, հոգատար և հեռատես քեռու՝ Ասլան Քոչարյանի շնորհիվ, որը նկատել էր զարմիկի բնատուր մեծ շնորհքը, պատանին 1884 թ. հայտնվում է Ֆրանսիայում, Մարսել քաղաքում, որտեղ նրա քեռին զբաղվում էր առևտրական գործունեությամբ: Բնական է, որ նրան մինչ այդ անծանոթ նոր միջավայրը ապշեցրեց մեր հերոսին: Սակայն շնորհալի պատանին արագորեն, համառությամբ և նպատակասլացությամբ (հատկություն, որը, ինչպես հայտնի է, բնորոշ է Հայաստանի այս տարածաշրջանի բնակիչներին) ընտելացավ միանգամայն անծանոթ կյանքին: Սկզբում քեռի Ասլանը նրան տեղավորեց մասնավոր պանսիոն, հետագայում տեխնիկական ուսումնական հաստատություն ընդունվելու նպատակով՝ լեզու և ընդհանուր հանրակրթական առարկաներ յուրացնելու համար: Շնորհալի և աշխատասեր պատանին մեծ հաջողությամբ է ավարտում ուսումը պանսիոնում: Բայց ամենակարևորն այն է, որ անկանխատեսելի ճակատագիրը Աղաջանյանին կրկին հնարավորություն շնորհեց պանսիոնում սովորելու տարիներին նվիրվել սիրելի զբաղմունքին՝ նկարչությանը, որի մասին նա չէր դադարել կրքոտ երազել: Պանսիոնի ուսումնական ծրագրում ընդգրկված էր նկարչություն առարկան: Ավելին՝ այն դասավանդում էր բարի, կարեկից, և գլխավորը՝ փորձառու ուսուցիչ Ամինը: Ուսուցիչը, առաջին իսկ դասերից նկատելով պատանի շուշեցու գեղարվեստական արտակարգ օժտվածությունը, ոչ միայն սկսեց լրջորեն զբաղվել շնորհալի աշակերտով, այլև

համառորեն համոզել Աղաջանյանի քեռուն հնարավորություն ստեղծել նրան հաճախելու Մարսելի գեղարվեստական ստուդիան, որը համարվում էր հեղինակավոր գեղարվեստական ուսումնական հաստատություն: Արագ հաջողությունները գեղարվեստում և ուսուցիչների մշտական հորդորները քեռի Ասլանին ստիպեցին համաձայնել, որ Աղաջանյանը ամբողջովին նվիրվի արվեստին: Սակայն այս անգամ ճակատագիրը երես շրջեց Աղաջանյանից: Դրա պատճառը Ասլան Քոչարյանի ֆինանսական ճգնաժամն էր և նրա հարկադրված մեկնումը Ֆրանսիայից: Քեռու մեկնումից հետո Աղաջանյանը հայտնվեց ծանր նյութական կացության մեջ, առանց որևէ ապրուստի միջոցների: Կամքն ու տոկունությունը օգնեցին նրան դուրս գալ այդ իրավիճակից: Ամենատարբեր աշխատանքներ կատարելով, երբեմն էլ շատ նվաստացուցիչ պայմաններում, նա նպատակասլաց համառությամբ աշխատում էր ապրուստի միջոցներ վաստակել և ամենակարևորը՝ շարունակում էր սովորել: Ընդ որում նրա հաջողությունները Մարսելի ուսումնարանում նշանակալի էին: Ամեն անգամ ուսումնական տարվա վերջում տաղանդավոր պատանին արժանանում էր ոսկե մեդալի: Բացի այդ ամառային արձակուրդի ամիսներին Աղաջանյանը ինքնաձուլաբար ու համառորեն շարունակում էր նկարել բնությունից քաղած պատկերներ Ֆրանսիայի ծովափնյա շրջան Բրետանում, որն իր տեսարաններով մշտապես արժանացել էր բազմաթիվ նկարիչների ուշադրությանը (ընդ որում նաև հայ՝ Փ. Թերլենեզյան, Ե. Թադևոսյան, Կ. Ադամյան և այլն): Այդ ընթացքում նրա ֆինանսական դրությունը փոքր ինչ լավանում էր շնորհիվ հարազատների ուղարկած ոչ մեծ գումարների: Մեծ հաջողությամբ ավարտելով Մարսելի գեղարվեստական ստուդիան՝ Աղաջանյանը տեղափոխվում է Փարիզ, և 1897 թ. ընդունվում ժյուլիենի գեղարվեստական ակադեմիան՝ շարունակելով աշխատել միևնույն եռանդով ու համառությամբ ֆրանսիացի հանրահայտ նկարիչներ, պրոֆեսորներ Ժան-Պոլ Լորանի և Բեն-ժամեն Կոնստանի ղեկավարությամբ: Ժյուլիենի ակադեմիայի եռամյա դասընթացը նույնպես ընթանում է անփոփոխ հաջողությամբ: Աղաջանյանը ավարտում է այն ոսկե մեդալով: Ակադեմիայի պրոֆեսորները, հատկապես Ժան-Պոլ Լորանը, նշելով երիտասարդ նկարչի արտակարգ տաղանդը, նրան կանխատեսում է գեղանկարչի փայլուն ապագա: Թե որքան բարձր մակարդակի էր հասել Աղաջանյանի մասնագիտական վարպետությունը, վկայում են այդ շրջանից մեզ հասած մի շարք

աշխատանքներ: Ֆիզուրների և գլուխների ուսանողական ածխանկարները խոսում էին գծանկարի տեխնիկայի կատարյալ տիրապետման մասին, իսկ մի քանի պահպանված յուղանկարներ ապշեցնում են իրենց գեղանկարչական վարպետությամբ և գեղարվեստական բարձր որակով հիշեցնում են հին վարպետների, մասնավորապես, ֆլամանդական դպրոցի վարպետների նկարները: Դրանց մեջ զգացվում է XIX դարի կեսին Ֆրանսիայում ձևավորված ռեալիստական արվեստի լավագույն գեղարվեստական սկզբունքները:

Ցավոք, իր ստեղծագործական ճանապարհի ամենասկզբում Աղաջանյանը ընտանեկան հանգամանքների պատճառով ստիպված է լինում թողնել Փարիզը՝ եվրոպական արվեստի հրաշալի կենտրոնը, և տեղափոխվել հայրենիք՝ Շուշի: Այստեղ նրա ստեղծագործական գործունեությունը բախվում է մի շարք ինչպես բարոյական այնպես էլ ֆիզիկական բնույթի անբարենպաստ հանգամանքների:

1900-1902 թթ. Շուշիում ստեղծված մի ամբողջ շարք նկարներից լավագույն երեքը՝ հոր և մոր դիմանկարները և «Դարաբաղյան բնապատկերը» (1900) ասես ծրագրավորել են Աղաջանյանի գեղանկարչության ամենաբնորոշ հատկությունները, ինչպես նաև նրա ժանրային հակումները: Դիմանկարն այսուհետ կդառնա նկարչի համար ստեղծագործելու ամենամախրնտրելի ձևը, որի կողքին վերջինիս զգալիորեն զիջելով տեղ կգրավի բնանկարը:

Բոլոր երեք հիշատակված կտավներն էլ հարկ է համարել նրա վաղ ստեղծագործության գլուխգործոցներից և նշանակալի ներդրում հայ կերպարվեստի գանձարանում:

Կարճ դիտարկենք նշված կտավների գեղարվեստական արժանիքները: Երկու դիմանկարներից որակի առումով առաջնությունը պետք է տրվի հոր դիմանկարին, որի գեղարվեստական արժանիքները ավելի բարձր են: Նրա կերպարաբովանդակային լուծումը խորն է և սուր: Հոր ծանրամարմին և բուրգածև ֆիզուրը պատկերային հարթության վրա ըստ չափի վարպետորեն տեղադրված, կարծես բացում է շրջանակի սահմանները առաջացնելով զսպված հզորության զգացում: Դրան նպաստում է խոշոր դաստակների պատկերումը, որոնք հարաբերականորեն չափազանցված են: Այս դիմանկարի խիտ, հագեցած գունային սանդղակը գրեթե միագույն է ընդհանուր երանգով, սակայն հարուստ է քրոմատիկ ելևէջումներով:

Ի տարբերություն հոր՝ մոր դիմանկարը լուծված է լուսավոր կերպարային երանգներով: Գույներն այստեղ ավելի շոշափելի են և աչքի են ընկնում թափանցիկ ջերմությամբ, իսկ հագուստի սև երանգը լիցքավորված է հազիվ մշմարելի քրոմատիկ ելևէջներով: Գլխի հմտորեն մշակված լուսաստվերային կերպավորումը հագեցած է անդրադարձումների ոսկեգույն երանգներով:

Գեղանկարչական տեսակետից «Ղարաբաղյան բնապատկերը» (1900 թ.), ի տարբերություն դիմանկարների, ունի ավելի մեծ կոլորիտակաճարժանիքներ: Պատկերային բաղադրիչների գուներանգային որոշակիությունը այստեղ ավելի շեշտված է. չնայած պատկերային տարրերի մեծաքանակությանը և գունային բազմազանությանը՝ գեղանկարչական հարթությունը օժտված է միասնականությամբ և ամբողջականությամբ: Նկարիչը դրան հասել է ոսկեգույն երանգի ընդհանուր գերիշխումով:

Այսպիսով, չնայած հայրենի Շուշիում ստեղծված մի շարք առաջնակարգ ստեղծագործությունների, գավառական քաղաքի սոցիալ հասարակական մթնոլորտը, նկարչության միջոցով գումար վաստակելու հնարավորության բացակայությունը Աղաջանյանի համար չափազանց անբարենպաստ եղավ և նա որոշեց մեկնել Մոսկայով Փարիզ: Այդ նպատակով նա գնում է Բաքու, հույս ունենալով այնտեղ ճանապարհի համար անհրաժեշտ գումարներ աշխատել: Սակայն Աղաջանյանի համար Բաքվում երկու տարի մնալը ոչ միայն անհաջող էր բոլոր առումներով, այլև ինչ-որ չափով դրամատիկ: 1904 թ. դեպի Մոսկվա ճանապարհին Աղաջանյանը կնոջ հետ հարկադրված կանգ է առնում Դոնի-Ռոստովում, որտեղ էլ ճակատագրի բերմամբ այնուհետև ապրում ու աշխատում է մոտ տասնյոթ տարի: Աստիճանաբար ստեղծագործական գործունեության համար պայմանների ստեղծվելը, որին նպաստեցին Ռուսաստանի գավառական քաղաքի գեղարվեստական մթնոլորտը, այստեղ պրոֆեսիոնալ գեղանկարիչների, ընդ որում մի քանի հայ նկարիչների գտնվելը, պարբերական ցուցահանդեսները և այլն, նպաստեցին ամբողջովին նվիրվելու արվեստին:

Աղաջանյանի ռոստովյան շրջանի կյանքը, չնայած մի շարք ծանր հանգամանքների, ընդհանուր առմամբ կարելի է բարենպաստ համարել նրա ստեղծագործական գործունեության համար: Հենց այս քաղաքում լիովին բացահայտվեց ականավոր հայ գեղանկարչի գեղարվես-

տական ներուժը, այստեղ ձևավորվեցին նրա հրաշալի գեղարվեստական լեզվի բնորոշ գծերը:

Այս բանին շատ առումներով նպաստեցին մեր վարպետի շուրջը ստեղծված բարյացակամ մթնոլորտը, ինչպես և Աղաջանյանի նման բացառիկ բարոյական հատկություններ կրող մարդու բնավորությունը, որը միշտ պատրաստական էր օգնության գալու մերձավորներին: Ռոստոփի արվեստասեր հասարակությունը բարձր գնահատեց գեղանկարչի նրա արտակարգ տաղանդը: Տեղական ցուցահանդեսներում նրա հաջողությունը անփոփոխ էր: Դա հաստատվում է նաև հետաքրքիր միջադեպով՝ ականավոր ռուս գեղանկարիչ Կ. Կորովինի հետ հանդիպմամբ, որի գեղանկարչական մեծ տաղանդը համաեվրոպական ճանաչում ուներ: 1916 թ. տարանցիկ կանգ առնելով Ռոստոփում և այցելելով տեղի նկարիչների ցուցահանդեսը և այստեղ տեսնելով Աղաջանյանի աշխատանքները՝ նա խնդրել է իրեն ծանոթացնել այդ կտավների հեղինակի հետ, իսկ Աղաջանյանի հետ հանդիպման ժամանակ իր հիացմունքն է հայտնել նրա կտավներից: Հաջորդ օրը ի պատիվ Աղաջանյանի նա կազմակերպում է ընթրիք-երեկո, որն անցնում է երկարատև մտերմական զրույցներով, բնականաբար, արվեստի, մասնավորապես, փարիզյան գեղարվեստական կյանքի մասին... Այս հանդիպումը սեփական ուժերի նկատմամբ հավատի ևս մի խթան էր մեր վարպետի համար:

Ռոստոփյան շրջանի բնութագրման համար, որն ընդգրկում է 1904-1921 թթ., դիտարկենք այդ ստեղծագործական փուլի միայն մի քանի առավել նշանակալի դիմանկարներ:

Այսպես, հիանալի գեղարվեստական արժանիքներով է օժտված «Զարմուհու դիմանկարը» (1908): Մեծ վարպետությամբ է տեղադրված կտավի հարթության վրա երիտասարդ աղջկա իրանը՝ միմյանց վրա դրված ձեռքերով: Արդեն իսկ կոմպոզիցիոն կառուցվածքի մեջ նկատվում է հանգիստ հավասարակշռված ներդաշնակության զգացում: Ինքնին կատարումը Աղաջանյանի գեղանկարչական փայլուն վարպետության օրինակ է: Նկարում գերիշխող գունային տարր է հանդիսանում հերոսուհու վարդագունա-կարմիր հագուստը: Ազատ, գրեթե վիրտուոզ դրված գունահարվածները բարդ և բազմաշերտ մշակված կտավի վրա այս աշխատանքի կոլորիտին տալիս են թանկարժեք կտորի ֆակտուրայի նմանություն: Այսպիսով գույնը տոգորում է ողջ պատ-

կերային հարթությունը, որի վրա պարզ ու հստակ ընկալվում է վարպետորեն նկարված գլուխը, համեստ դիմագծերով երեսը, արտահայտիչ տխուր աչքերով, կերտելով ընդհանուր առմամբ նուրբ բանաստեղծական կերպար:


Աղաջանյանի հանրաճանաչ «Մտորումներ» (1914) կտավը պետք է դասել նրա առավելագույն գեղարվեստական նվաճումների շարքը: Այս աշխատանքն ի տարբերություն նրա այլ դիմանկարների կարելի է դիտարկել որպես դիմանկար-պատկեր: Որոշ ուսումնասիրողներ այն դիտարկում են պատմողական ենթատեքստ կրող նկարի տեսանկյունից: Մինչդեռ մեզ թվում է, որ Աղաջանյանի կողմից այս նկարը մեկնաբանված է որպես որոշակի զգացմունքային-իմաստային բովանդակություն կրող կերպար, ինչպես և արվեստի ցանկացած ստեղծագործություն: Այդ բովանդակությունը կարելի է սահմանել որպես թախծի, մենության, հուսի, սպասումի և այլն արտահայտություն, բայց ոչ մի դեպքում որպես սուր դրամատիկ հիմք ունեցող, առավել ևս ողբերգական բնույթ կրող կտավ, ինչպես փորձում էին այն բացահայտել: Վերը նշված զգացմունքային մթնոլորտը, որն ունի նուրբ բանաստեղծական երանգավորում, արտացոլվել է պատկերված կնոջ դեմքին: Կնոջ մարմնով կազմված սահուն, ալիքաձև գծերը սկզբից ևեթ նկարին հաղորդում են այդ զգացումը: Խիտ, ինչ-որ չափով խավար, մուգ կոլորիտը նույնպես համապատասխանում է այդ ընդհանուր տրամադրությանը:

Աղաջանյանի ռոստովյան շրջանը, որը տևեց 17 տարի, չնայած բարդ վիճակներին, արգասաբեր գտնվեց: Այստեղ վերջնականապես ձևավորվեցին նրա ստեղծագործական սկզբունքների անհատական յուրահատկությունները:

1921 թ. սկսվում է Աղաջանյանի կյանքի և ստեղծագործության նոր փուլ: Նորաստեղծ Հայաստանի Խորհրդային հանրապետության հրավերով Աղաջանյանը տեղափոխվում է Երևան՝ մի շարք այլ հայ գործիչների նման ազգային մշակույթը վերածնելու նպատակով: Նա մեր մի շարք այլ վարպետների հետ համատեղ կազմակերպում է Երևանի Գեղարվեստական ուսումնարանը, հաջողությամբ դասավանդում է այնտեղ և զուգահեռաբար ստեղծագործում: Այն ժամանակվա Խորհրդային Միության ցանկացած մեծ քաղաք կարող էր նախանձել ուսումնարանի ուսուցչական կազմին, մասնավորապես, այնպիսի

հրաշալի վարպետի առկայությանը, ինչպիսին Աղաջանյանն էր, որը իր մեջ միավորում էր բարձրագույն մարդկային հատկանիշներ, որոնք միշտ անհրաժեշտ են ուսուցչին: Երևանում գրեթե 20-ամյա ստեղծագործական գործունեությունը առանձնանում է մի ամբողջ շարք գեղարվեստական նոր նվաճումներով: Հայտնվում են մեծ թվով ինչպես դիմանկարչական, այնպես էլ բնանկարչական կտավներ: Նշենք երևանյան կամ այլ կերպ՝ խորհրդային շրջանի մի շարք ստեղծագործություններ:

Ապշեցուցիչ գեղանկարչական որակով է առանձնանում «Արարատը և Արարատյան դաշտավայրը» նկարը: Այստեղ Աղաջանյանը ընդհուպ մոտեցել է պլեներային գեղանկարչության խնդիրներին: Ամբողջ նկարում զգացվում է լույսի առատությունը: Մեր ականավոր վարպետների՝ Արարատի բազմաթիվ պատկերների մեջ Աղաջանյանի նկարը ներկայացնում է այդ լայնորեն տարածված մոտիվի բացարձակ անհատական և անկրկնելի մեկնաբանում:



Նկար 2. Ինքնանկարը

Երևանյան շրջանի գործերում նշանակալից հաջողություն է վարպետի «Ինքնանկարը» (1926): Ինչպես կերպարի բացահայտման, այնպես էլ գեղանկարչական մարմնավորման մեջ Աղաջանյանն այստեղ հասնում է բացառիկ գեղարվեստական մակարդակի: Առաջին հերթին ապշեցնում է կատարման էքսպրեսիվ արտակարգ ուժը: Լայն վրձնահարվածները անսխալ կերտում են կամային, ուժեղ մարդու հետաքրքիր կերպարը: Այս ինքնադիմանկարը հայ արվեստում տվյալ ժանրի բարձրագույն նվաճումներից է:

Շուրջ 20 տարվա ընթացքում հայրենիքում Աղաջանյանի ստեղծած հրաշալի դիմանկարները բազմաթիվ են: Սակայն հարկ է կանգ առնել վարպետի մի գլուխգործոցի՝ «Երգչուհի Բորոնկինայի դիմանկարի» (1935) վրա: Ըստ կոմպոզիցիայի դիմանկարը լուծված է կրծքավանդակից վերև: Մեզ ներկայանում է բարեկազմ, բարձրահասակ, գեղեցիկ



Նկար 3. Բորոնկինա

մի կնոջ պատկեր: Պատկերն ամբողջովին ողողված է լուսային փայլքով: Բարձր գեղագիտական վարպետությամբ են նկարված կարմրաօխրագույն մազերը: Ջարմանալի ռիթմիկ-վիրտուոզ եղանակով է կատարված մազերի ազատ թափված վարսերը: Ծերացող վարպետի ձեռքը անբասիր ճաշակով և անսխալ վիրտուոզությամբ է վերարտադրել դրանք: Արտակարգ սուր է դիմագծերի առանձնահատկությունների վերարտադրումը՝ աչքերը, քիթը, բերանը, կզակը անջնջելի տպավորություն են թողնում:

Կատարելապես տիրապետելով եվրոպական ավանդական դասական գեղարվեստական արտահայտչալեզվին և բնությունից օժտված լինելով հայացքների որոշակի պահպանողականությամբ, Աղաջանյանը չխոտորեց իր հակումը դեպի XIX դ. կեսի ֆրանսիական ռեալիստական գեղանկարչության ավանդույթները, թարմացնելով դրանք սոսկ տարբեր արտահայտչական հնարավորություններով և անտարբեր մնալով իր ժամանակի արմատական գեղարվեստական որոնումների նկատմամբ:

Ս. Աղաջանյանի ստեղծագործական ժառանգությունը վիթխարի դեր է խաղացել կերպարվեստի հայ ազգային դպրոցին հատուկ, գեղանկարչական բարձր որակի ձևավորման գործում: Նրա ստեղծագործության բարերար ազդեցությունը լրացվել և զուգորդվել է անմիջական մանկավարժական գործունեությամբ: Աշակերտները մշտապես կիիշեն ուսուցչի անկրկնելի կերպարը՝ բարձրահասակ, ալեհեր առատ խռիվ մազերով, անչափ բարի, բաց հոգու տեր, իր զգացմունքներում երեխայի պես անմիջական: Եվ այս կերպարի մեջ կարծես արտացոլվել են հայկական Արցախ բնաշխարհի բնակիչների լավագույն գծերն ու հատկանիշերը:

Ստեփան Աղաջանյանի գեղանկարչությունը հարկ է դասել մեր ազգային մշակույթի անգնահատելի այն գանձերի թվին, որով մենք վստահորեն և հպարտությամբ կարող ենք հանդես գալ ցանկացած գեղարվեստական միջոցառման, ցանկացած երկրում:

**ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏՈՒՄ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՔԱՐՈՋՉՈՒԹՅԱՆ ԱՐԻՔԵԶԱՆԱԿԱՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում ստեղծվեց մի նոր երևույթ, որը մասնագիտական գրականության մեջ և զանգվածային լրատվական աղբյուրներում անվանվում է «տեղեկատվական պատերազմ»: Տեղեկատվական պատերազմը կարելի է բնութագրել որպես պայքար տեղեկատվական ազդեցության, տեղեկատվական-հաղորդակցական տարածությանը և միջոցներին տիրապետելու և դրանք սեփական շահերին ծառայեցնելու համար: Ընդ որում, տեղեկատվական պատերազմի դեպքում խոսքը գնում է սքոզված կամ բացահայտ կոնֆլիկտի մասին, քանզի տեղեկատվական ռեսուրսներին տիրապետելու անհրաժեշտությունը և ցանկությունը անպայմանորեն բխվում է հակախաղին՝ այլ սուբյեկտների կողմից, որոնք նույն նպատակներն ունեն: Բացի այդ, տեղեկատվական հնարավորությունները, մարդկանց լայն զանգվածների վրա ազդելու տեղեկատվական միջոցներն իշխանության, կառավարման իրականացման հիմնական և ամենաարդյունավետ լծակներից են, ուստի և դրանց տիրապետման շուրջ տարվող պայքարը սուր կոնֆլիկտային բնույթ է կրում:

Եթե պատերազմները ցեղերի, ապա՝ թագավորությունների միջև վարվում էին զենքի այն տեսակների միջոցով, որոնց կիրառումը ուղղված էր առանձին մարդկանց դեմ, այսինքն, երբ նման զենքի տեսակի մեկական կիրառումով մի մարդու կյանք էին խլում (օրինակ, սառը զենքը), ապա զենքի ժամանակակից տեսակները զանգվածային բնաջնջման զենք են (զենքի այդ տեսակներից մեկի մեկական կիրառումը հարյուր հազարավոր կամ նույնիսկ միլիոնավոր մարդկանց կյանք է խլում, օրինակ՝ ատոմային կամ միջուկային ռումբը, տարբեր տեսակի հրթիռներն ու ականները): Այս պայմաններում զենքի ժամանակակից

տեսակների կիրառումը մարդկությունը և կյանքը բնաջնջելու իրական սպառնալիք է ստեղծում:

Մյուս կողմից, ժամանակակից հասարակությունը պետք է կոնֆլիկտային համարել, քանի որ զանգվածային բնաջնջման զենքի ստեղծումն ու դրա հետևանքում առաջ եկած համամարդկային վտանգը ոչ միայն չվերացրեց միմյանց սպանելու վտանգը, այլ, ընդհակառակը, պատերազմները խոշոր տերությունների միջև այլափոխեց հակամարտությունների փոքր, ոչ ատոմային պետությունների և էթնիկ խմբերի միջև:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում տեղի ունեցած և շարունակվող տասնյակ էթնիկ հակամարտությունները և տարածաշրջանային մակարդակի պատերազմներ վկայում են այն մասին, որ կոնֆլիկտայնությունը հատուկ է մարդկությանը, իսկ կոնֆլիկտների լուծման ռազմական միջոցները դեռևս ընդունելի են և կիրառելի: Սակայն, ժամանակակից կոնֆլիկտների կողմերը, խուսափելով մարդկային զոհեր կրելուց կամ ինչ-ինչ պատժառներով չկարողանալով մարտական գործողություններ վարել, փորձում են շեշտադրումն անել հակառակորդի վրա ազդելու ոչ այնքան ռազմական, որքան՝ տեղեկատվական միջոցների վրա: Սա թույլ է տալիս ընկճել թշնամուն, խուճապի մատնել նրան, կամ էլ համոզել հակառակորդին, որ հնարավոր ռազմական գործողությունների դեպքում նա պարտություն է կրելու, ուստի և ցանկալի է հանձնվել կամ զիջումների գնալ առանց ռազմական միջամտության:

Այսպիսով, ավանդական պատերազմները զենքի կիրառությամբ և փոխադարձ ոչնչացմամբ դանդաղորեն տեղափոխվում են տեղեկատվական դաշտ, որտեղ ավելի է ժամ և արդյունավետ տեղեկատվական-հաղորդակցական միջոցների կիրառությունը թույլ է տալիս հաղթել տեղեկատվական պատերազմում՝ խուսափելով զանգվածային զոհերից: Ինչպես գրում է այդ կապակցությամբ Գ. Գ. Պոչեպցովը, «Ապագայի պատերազմը ձգտելու է այսպես կոչված «աննուղղակի գործողությունների» ռազմավարությանը, որն արտահայտվում է հետևյալ խոսքերում. հակառակորդին պետք է հաղթել մինչև ռազմական բախումը: Եվ այստեղ դարձյալ կարևորվում են տեղեկատվական հոսքերը»¹:

¹ Почецов, Г. Г. (2003). Информационно-политические технологии. М.: Центр, с. 120.
510

Ավելին, այսօր պետք է խոսել նաև մեկ այլ, նոր տիպի պատերազմի մասին, որն արևմտյան կոնֆլիկտաբան Կ. Բոուլդինգի կողմից մշակված տիպաբանության համաձայն կարելի է «կոնֆլիկտ անհավասար կողմերի միջև»¹ անվանել, քանզի այսօր նման պատերազմներ տեղի են ունենում անհավասար քաղաքական, ռեսուրսային, տեղեկատվական և իշխանական կարգավիճակներում գտնվող գերպետության (ԱՄՆ, Ռուսաստան) և տնտեսապես հետամնաց ու թույլ տարածաշրջանային պետությունների (Աֆղանստան, Իրաք) միջև: Եվ եթե նման դեպքերում ռազմական ուժի կիրառման տեսակետից հաղթանակը գերպետությանն է, ապա տեղեկատվական դաշտում ռազմական տեսակետից թույլ կողմը կարող է ռևանշ վերցնել՝ աշխարհին ցույց տալով իր արդարացի լինելը:

Այդ իսկ պատճառով ժամանակակից հակամարտությունների կողմերը պետք է ապահովեն հաղթանակի ոչ միայն և ոչ այնքան ռազմական, որքան՝ տեղեկատվական կողմը: Դրա մասին է վկայում մասնավորապես այն, որ 2003 թ. Բաղդադի ռմբակոծությունները սկսվել էին Իրաքի հեռուստակայանի հրթիռային պայթեցումից, որպեսզի զրկեն իրաքցիներին սեփական լրատվական միջոցից և իրադարձությունների սեփական լուսաբանումից: Փոխարենը ԱՄՆ ռազմական և քաղաքական ներկայացուցիչները պարբերաբար դիմում էին Իրաքի զինծառայողներին և քաղաքացիներին՝ կոչ անելով չհակառակվել և աջակցություն ցուցաբերել ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի զորքերին:

Ձեռքի կիրառմամբ պատերազմին զուգորդող տեղեկատվական պատերազմն իրականացվում է տարբեր տեխնիկական միջոցների և հնարների օգնությամբ՝ հեռուստատեսության (հիմնականում՝ միջազգային, լայն լսարան ունեցող հեռուստաալիքների), քարոզչության, թուղիկների տարածման միջոցով: Այս տեսակետից հետաքրքիր է Վիետնամական պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի կողմից իրականացրած տեղեկատվական պատերազմը՝ թուղիկների միջոցով: Ինչպես

¹ Այդ տիպաբանության համաձայն, կոնֆլիկտների կողմերի համեմատելիության տեսակետից կոնֆլիկտները տեղի են ունենում «հավասար» կողմերի միջև (օրինակ, երկու արդյունաբերական պետությունների կամ երկու գերպետությունների միջև) և անհավասար կողմերի միջև (օրինակ, գերպետության և արդյունաբերական պետության միջև)՝ տես՝ ըստ Дорони́на Н. И. (1981). *Международный конфликт*. М.: *Международные отношения*, сс. 61-67.

նշում են հեղինակները, «Բաց ձեռքեր» կոչված քարոզչական կոմպանիայի ընթացքում Վիետնամի տարածք է նետվել շուրջ 50 միլիարդ թռուցիկ (հաշվարկների համաձայն, յուրաքանչյուր վիետնամցի զինվորին միջինում հասնում էր մոտ 1500 թռուցիկ):

Թռուցիկներում արժարժված էին հետևյալ հինգ թեմաներ-կոչեր.

1. Վախ մահվան նկատմամբ: Տարածված թռուցիկներում պատկերված էին սպանված զինվորներ, իսկ զուգորդող տեքստերն ասում էին այն մասին, որ դիմադրության շարունակումը կրեթի նմանատիպ մահվան:
2. Դժվարություններ: Ջինվորներին հիշեցնում էին իրենց ծանր կացության, դժվար կյանքի մասին, ինչպես նաև իրենց ցանկության մասին ապրելու իրենց ընտանիքների հետ:
3. Հավատի կորուստ կոմունիստական հաղթանակի նկատմամբ: Թռուցիկներով տարածվում էին տեքստեր այն մասին, թե իբրև վիետնամցի զինվորներին դավաճանել է իրենց կառավարությունը՝ մատնելով նրանց սովի և մահվան:
4. Ընտանիքի դժվարություններն առանց տղամարդու (առանց հոր, որդու, եղբոր): Ջինվորներին հիշեցվում էր, թե որքան դժվար են ապրում իրենց ընտանիքներն առանց իրենց, այն, որ պետք է թողնել մարտի դաշտն ու վերադառնալ ընտանիք: Թռուցիկներում պատկերվում էին դրվագներ ընտանեկան կյանքից, երբ, օրինակ, հայրը խաղում է որդու հետ: Այս քարոզչությունն օգտագործում էր վիետնամցու հավատարմությունն ու սերն ընտանիքի, որպես բարձրագույն արժեքի, նկատմամբ:
5. Հիասթափություն պատերազմի նկատմամբ: Այս տիպի թռուցիկներով տարածվում էր հետևյալ հաղորդագրությունն՝ ուղղված վիետնամցի զինվորներին. «Ձեր առաջնորդներն ուղարկել են ձեզ միայնակ մահվան՝ հեռու հարազատներից, տնից, նախնիների գերեզմաններից»¹:

Ավանդական, զենքի կիրառմամբ պատերազմի և տեղեկատվական պատերազմի միջև հիմնական տարբերություններից են.

¹ Почепцов, Г. Г. (2003). Информационно-политические технологии. Москва: Изд-во Центр, с. 360.

1. Ավանդական պատերազմի զինանոցը, հարծակման և նահանջի ռազմավարությունները, տեխնիկական հնարները և վնասի պատճառման չափերը հայտնի, հաշվարկելի, կանխատեսելի քանակական մեծություններ են, մինչդեռ տեղեկատվական պատերազմն անկանխատեսելի է: Տեղեկատվական պատերազմի դեպքում դժվար է կանխատեսել թշնամու ներազդման աղբյուրները և այդ ազդեցության ինտենսիվությունը, ազդեցության հնարավոր ալիքները, ուղղությունները: Այդ պատճառով դժվար է կառուցել տեղեկատվական պաշտպանության համարժեք համակարգ: Սա հատկապես վերաբերում է փոփոխվող, փոխակերպվող անցումային հասարակություններին, որտեղ առկա է արժեքային անորոշությունն ու անկայունությունը, վարքի նախկին մոդելների կորուստն ու նոր մոդելների չմշակվածությունը, սոցիալական դերերի խախտվածությունն ու սոցիալական սպասումների անհուսալիությունը: Այսպիսի պայմաններում մարդիկ հատկապես զգայուն են ցանկացած ազդեցության նկատմամբ, հեշտությամբ են յուրացնում ցանկացած նորամուծություն: Նրանց մոտ բացակայում է սեփական արժեքային պաշտպանության մեխանիզմը, որն ըստ էության կարող էր արդյունավետորեն կանխարգելել ցանկացած վնասակար արժեքային ներխուժում:

Սեփական արժեքային համակարգի կորստի (վակուումի) կամ անորոշության ժամանակ տեղեկատվական պատերազմն առավել արդյունավետ է: Բերվող փաստարկների դիմաց մարդիկ չունեն հակափաստարկներ, ուստի և ընդունում են ցանկացած բան առանց հակառակվելու: Դրա մասին է վկայում, մասնավորապես, նախկին խորհրդային հանրապետություններում ստեղծված արժեքային ճզնաժամը, որի մասին է վկայում, մի կողմից, մարդկանց սոցիալ-քաղաքական մասնակցության ցածր մակարդակը, պասիվությունն ու հիասթափությունը և, մյուս կողմից, ահռելի չափերի հասնող արտագաղթն արտասահման, որտեղից անընդհատ գովազդվում են արժանավայել կյանքի արևմտյան արժեքներն ու դրանց կրողները (հարուստ կենսակերպը, սոցիալական պաշտպանվածությունը, բարձրակարգ բժշկական և իրավաբանական սպասարկումը, կարգուկանոնը, շուկայի մեծությունն ու լայն սպառման ապրանքների բազմազանությունը, և այլն): Փաստորեն, այսօր ձգտում ենք նրան, ինչին հակառակվում էինք Սառը պատերազմի ժամանակ, և սա ակնհայտորեն վկայում է ԽՍՀՄ - ԱՄՆ միջև Սառը

(տեղեկատվական) պատերազմում ԱՄՆ-ի միանշանակ հաղթանակի մասին:


2. Ի տարբերություն զանգվածային ոչնչացման զենքի, որը վերացնում է պայթյունի տարածքում գտնվող բոլոր մարդկանց առանց որևէ տարբերակման, տեղեկատվական հարձակումները հարվածում են ընտրողաբար, ուղղված են ոչ բոլորին, այլ առանձին խմբերի: Որպես կանոն, դա արժեքային տեսակետից առավել անկայուն, մարզինալ խմբերն են, որոնք ավելի հեշտ են ծայրահեղությունների դիմում և հեշտությամբ ազդեցության տակ ընկնում: Մյուս կողմից, նման խմբերից են իշխանություններից կամ պետությունից դժգոհները, տուժածները, որոնք զուրկ են պետական խնամակալությունից (կենսաթոշակառուներ, բյուջետային հիմնարկների աշխատողներ, հաշմանդամներ, և այլն): Ազդելով նման մարդկանց թույլ տեղերին՝ հնարավոր է հասարակության մեջ անկայունություն ստեղծել, ընդհուպ մինչև հեղափոխությունն ու իշխանափոխությունը: Այսպես, ԽՍՀՄ քաղաքատարկյալներն այն խումբն էին, որոնք դժգոհ էին իշխող վարչակարգից և պատրաստ էին հեղաշրջման: Այդ խումբն առավել զգայուն էր այն տեղեկատվության նկատմամբ, որը քննադատում էր Խորհրդային Միությունն ու կոմունիզմը, մինչդեռ կուսակցական ապարատի համար նման տեղեկատվությունը հանցալի էր:

Այս տեսակետից հատկանշական են Ե. Բոբրովայի խոսքերը. «Սոցիալական փոփոխությունների ազենտներ են դառնում այն սերնդի ներկայացուցիչները, որոնց համար պատմական իրավիճակն անբարենպաստ է: Այդ սերնդի պատմական վարքն ուղղված է դեպի սոցիալական համակարգի փոփոխումը, որն առավելապես կհամապատասխանի տվյալ սերնդի ներկայացուցիչների ինքնիրացմանը»¹:

Երկարատև տնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած աղքատների մեծամասնությունն այն խումբն է, որին ուղղված հակապետական, հակաիշխանական քարոզչությունը կարող է բերել ռեալ արդյունքների, նրանց կազմակերպել և դրդել հակաիշխանական գործողությունների, հեղափոխության: Դրա ակնառու օրինակներից է Յուկոտենբերյան հեղափոխությունը: Փաստորեն, տեղեկատվական պատերազմը կարող է նախորդել ռազմական գործողություններին՝ սրելով

¹ Боброва, Е. Ю. (1997). Основы исторической психологии. СПб., с. 97.

հասարակության մեջ առկա, լատենտ կոնֆլիկտը, այն հասցնելով ճգնաժամի և ուղղակի բախման: Տեղեկատվական պատերազմի ազդեցությունը կոնֆլիկտի զարգացման և պատերազմական գործողությունների ծավալման վրա կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով.



3. Ավանդական և տեղեկատվական պատերազմների միջև տարբերություններից մեկն այն է, որ ռազմական գործողությունների հետևանքներն ակնհայտ են (սպանվածներ և վիրավորներ, ավերված քաղաքներ, անօթևան մարդիկ, փախստականներ և այլն), մինչդեռ տեղեկատվական պատերազմի ազդեցության տակ հայտված մարդիկ կարող են նույնիսկ այդ մասին չիմանալ: Տեղեկատվական գրոհի ենթարկվողներին հաճախ թվում է, որ իրենց գաղափարական և գաղափարախոսական դիրքորոշումներն առաջացել են իրենց սեփական մտածողության մեջ՝ հիմնախնդիրների մասին խորհելու, միմյանց հետ հաղորդակցվելու ընթացքում, մինչդեռ իրականում դրանք բերվել և ներարկվել են արտաքին միջավայրից՝ տեղեկատվական-հաղորդակցական հնուտ, երկարատև և համբերատար ներազդման արդյունքում: Ինչպես գրում է այդ կապակցությամբ Գ. Գ. Պոչեպցովը, վտանգի զգացումը նման իրավիճակներում չի գործում, ուստի և հնարավոր չէ կանխարգելել տեղեկատվական հարձակումը¹:

Գ. Գ. Պոչեպցովն առանձնացնում է տեղեկատվական պատերազմի վարման հետևյալ սկզբունքները, կամ «աքսիոմները».

1. Տեղեկատվական պատերազմ կարելի է վարել և՛ մինչև սովորական պատերազմը, և՛ դրանից հետո, երկրորդ դեպքում

¹ Почепцов, Г. Г. (2001). Информационные войны. М.: "Рефл-бук", с. 77.

տեղեկատվական պատերազմը կարող է փոխարինել սովորական պատերազմին,

2. սովորական պատերազմի սկզբնական փուլը բնութագրվում է տեղեկատվական պատերազմի առավելագույն ինտենսիվությամբ, քանի որ այն ուղղված է տեղեկատվական-լրատվական օբյեկտների ոչնչացմանը,
3. տեղեկատվական պատերազմ սկսողը միշտ առավելություն է ստանում, քանի որ առաջինն է հարվածում, իսկ պատասխան հակահարվածը տեղի է ունենում միայն հարվածի բացահայտման դեպքում, այդ պատճառով այս կամ այն չափով ուշանում է,
4. տեղեկատվական պատերազմի ժամանակ զգայական, էմոցիոնալ ներազդմանը փորձում են բանական փաստարկի ուժ տալ, այն շնորհիվ ռացիոնալ իմաստով, հանդգել մարդկանց դրա ճշմարտացիության մեջ՝ օգտագործելով մարդկանց այն հանդգնումը, որ նրանք բանական էակներ են¹:

Տեղեկատվական պատերազմի ժամանակ հակառակորդին փորձում են տեղավորել մի անելանելի իրավիճակի մեջ, հանդգել և հավատացնել նրան, որ իր համար չկան այլընտրանքներ, բայց որ այդպես շարունակել հնարավոր չէ, պետք է ցանկացած գնով փոխել իրավիճակը, դուրս գալ հիմնախնդիրների և դժվարությունների լաբիրինթոսից, ճանապարհ գտնել տառապանքների փակուղուց: Նման հոգեվարք ձևավորելուց հետո մարդկանց առաջարկվում է խնդրի լուծման որևէ ճանապարհ, որը մատուցվում է որպես միակ հնարավորը: Բնականաբար, մարդիկ ընտրում են այդ ճանապարհը, մինչդեռ այն առաջին հերթին ձեռնառու է տեղեկատվական պատերազմը վարողներին, նրանց, ովքեր ձեռնարկել են տվյալ տեղեկատվական գրոհը:

Տեղեկատվական պատերազմի վարման տարբերակներից մեկն է այսպես կոչված «ուղեղների վլացումը» (brainwashing): Այս մեթոդը հիմնականում կիրառվել է Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների, ապա՝ դրանց հաջորդած ռազմական կոնֆլիկտների ժամանակ, երբ պահանջվում էր համապատասխան գաղափարահոգեբանական աշխատանք տանել գերիների հետ՝ նրանց հավատափոխ

¹ Почепцов, Г. Г. (2001). Информационные войны. М.: "Рефл-бук", сс. 386-387.

անելու և սեփական գործողություններին կողմնակից դարձնելու նպատակով: «Ուղեղների լվացման» մեթոդի կիրառումը, մասնագետների կարծիքով, բաղկացած է հետևյալ փուլերից.

1. Նույնականացման վերացումը. այս փուլում մարդուն փորձում են կտրել իր արժեքային համակարգից, սեփական պետության, ժողովրդի, պատմության, ընտանիքի հետ ունեցած կապից, համոզել նրանում, որ նա այլևս կապված չէ այդ արժեքների հետ (օրինակ՝ ասելով, որ պետությունը հրաժարվել է նրանից, գերիներին դավաճան և հանցագործ է համարում, այդ պատճառով նրանից հրաժարվել է նաև նրա ընտանիքը և այլն): Մարդուն փորձում են ցույց տալ կյանքի անդարձելիությունը, այն, որ նախկին կյանքն այլևս հնարավոր չէ վերադարձնել և կրկնել:
2. Մեղքի հաստատումը. երկրորդ փուլում մարդուն փորձում են համոզել, որ իր դժվարությունների և տառապանքների պատճառը ոչ թե պետությունն ու կառավարությունն է, այլ հենց ինքը, քանի որ հասուն մարդ է և կարող է ինքնուրույն խնդիրներ լուծել, ընտրություն կատարել:
3. Ինքնադավաճանում. այս փուլում մարդուն բերում են այն համոզման, որ անհրաժեշտ է հրաժարվել սեփական անցյալից և «սխալ կյանքից»:
4. Համապարփակ կոնֆլիկտն ու հիմնային վախ. այս փուլում մարդու մոտ ինքնության լիակատար կորստի վախ է առաջանում:
5. Մեղմություն և հնարավորություն. օգտագործելով մարդու մոտ ստեղծված ճգնաժամային հոգեվիճակը և ինքնությունը կորցնելու վախը՝ նրա հետ աշխատանք տանողներն իրենց ցուցադրական ջերմությամբ ու կարեկցանքով նրա վստահությունն են նվաճում՝ փոխարենը առաջարկելով օգնել հարմարվելու և վերականգնելու ինքնության հետ կապված արժեքային կողմնորոշումը (որպեսզի ներարկեն մոր արժեքներ):
6. Մեղքի խոստովանում. այս փուլում մարդուն առաջարկվում է խոստովանել մեղքերը՝ ինքնության վերածնման և նոր կյանքին պատրաստվելու նպատակով, ընդ որում, մեղք են հա-

մարվում մարդու կյանքի այն բոլոր դրվագները, որոնք հակասում են «ուղեղներ լվացողների» արժեքային համակարգին:

7. Մեղքի նպատակաուղղում. մարդ սկսում է մեղադրել իրեն ոչ միայն նրանում, ինչ գործել է, այլ նաև նրանում, որ ապրել է տվյալ պետությունում (օրինակ՝ կապիտալիստական ԱՄՆ-ում կամ տոտալիտար խՍՀՄ-ում), հանդիսացել է այդ «չարիքի» ներկայացուցիչը:
8. Տրամաբանական բացահայտում. մարդ քննադատում է իր յուրաքանչյուր արարքն ու քայլը, խոստովանում «մեղքերը»:
9. Առաջընթաց և ներդաշնակություն. խոստովանելով «մեղքերը»՝ մարդ հոգեկան խաղաղություն և հանգիստ է ձեռք բերում, նրան այլևս չի թվում, որ հանցագործ է և դավաճան, նա այսուհետև պատրաստ է պայքարել այն ամենի դեմ, որին ծառայել է նախկինում:
10. Վերջնական ընդունում և ամրապնդում. «ուղեղների լվացման» արդյունքում մարդ դառնում է անկեղծորեն համոզված և հավատող գործիք՝ իրեն «կյանքի վերադարձրածների» ձեռքերում¹:

Հետաքրքիր է նաև «ուղեղների լվացման» մեկ այլ տեխնիկան, ըստ որի տեղեկատվական-հաղորդակցական ներազդման օբյեկտ հանդիսացող մարդու (մարդկանց խմբի) համոզումներն ու գործողությունները պետք է փոխել՝ սկսելով փոքր, չնչին, աննկատ զիջումներից, որոնք ներազդման ընթացքում ընդունելի կդարձնեն նաև մեծ, եական փոփոխություններ և շեղումներ: Այս մեթոդն անվանում են «փոքրից դեպի մեծը»: Այսպես, կորեական պատերազմի ժամանակ² գերի ընկած ամերիկացի զինվորներին սկզբից խնդրում էին ընդամենը խոստովանել, որ «ԱՄՆ-ը ունեն որոշ թերություններ», իսկ «Սոցիալիստական երկրներում գործազրկություն չկա»: Այս չնչին, աննշան նկատառումներից հետո ամերիկացի գերիները կարող էին ավելի մեծ զիջումների

¹ Այդ մասին տես՝ **Brown J. A. C.** (1963). *Techniques of Persuasion. From Propaganda to Brainwashing.* Harmondsworth.; **Почепцов, Г. Г.** (2002). *Коммуникативные технологии двадцатого века.* М.: "Рефл-бук".

² Այս մասին տես, օրինակ՝ **Почепцов, Г. Г.** (2002). *Коммуникативные технологии двадцатого века.* М.: "Рефл-бук", сс. 128-134.

գմալ, օրինակ, մասնավորեցնել, թե որոնք են ԱՄՆ-ին հատուկ թերությունները: Դրանից հետո «ուղեղներ լվացողները» խնդրում էին նրանց միմյանց հետ քննարկել այդ թերությունները և դրանց պատճառները, որի արդյունքում այդ քննադատական վերաբերմունքն ամրապնդվում էր գերիների հիշողության մեջ: Բացի այդ, խմբային քննարկման արդյունքում գերիների մոտ տպավորություն էր ստեղծվում, թե իրենք ինքնուրույն եկան տվյալ եզրակացության: Դրանից հետո գերիներին խնդրում էին թղթի վրա շարադրել ԱՄՆ-ի՝ «իրենց կողմից նկատված» թերությունները, ապա այդ փաստաթղթի հետ ծանոթացնել մյուս գերիներին: Արդյունքում ամերիկացի գերիներն իրենց նամակներում հարազատներին նշում էին, թե որքանով են հիասթափվել իրենց «կապիտալիստական հայրենիքից»¹:

Փաստորեն, «փոքրից դեպի մեծը» մեթոդով կարելի է ցանկացած դրական և բացասական բան սովորեցնել: Այսպես, լողալ սովորեցնելու համար սկսում են ջուր մտնելուց և ջրում գտնվելու ժամանակահատվածի մեծացումից: Նմանատիպ մեթոդով են առաջանում նաև բացասական սովորություններ, օրինակ՝ ծխելը: «Ուղեղների լվացման» այս մեթոդը թույլ է տալիս որոշ ժամանակահատվածում ընդունելի դարձնել այն գաղափարներն ու սովորությունները, որոնք մինչ այդ, մեծ ծավալներով վերցրած, անընդունելի էին:

«Ուղեղների լվացման» մեթոդի հաջորդ սկզբունքն է «ինչպես բոլորը»²: Այս սկզբունքի համաձայն, խմբի վրա ներազդելու ժամանակ խմբի յուրաքանչյուր անդամ ավելի մեծ պատրաստակամությամբ է կատարում պահանջը, քանի որ «խմբում բոլորն են այդպես վարվում»: Օրինակ, երբ արևմտյան նորաձևությանը հետևելով՝ կուրսում ուսանողների մեծ մասը սկսում է ջինսեր հագնել, կուրսի մնացած ուսանողները ևս ձգտում են հետևել այդ ոճին: Նմանատիպ ձևով, այն, ինչ ընդունելի է դառնում ամերիկացի գերիների մեծ մասի համար (օրինակ՝ այն ներարկված միտքը, որ ԱՄՆ հրաժարվել են իրենց գերիներից), ընդունվում է նաև մնացածների կողմից: Այդ պատճառով տեղեկատվական կամ գաղափարախոսական պատերազմն ավելի արդյու-

¹ Նույն տեղում:

² Այս սկզբունքն առաջարկել է Գ. Գ. Պոչեպցովը՝ Почепцов, Г. Г. (2002). Коммуникативные технологии двадцатого века. М.: "Рефл-бук", с. 134:

նավետ է դառնում, երբ հաջողվում է որոշակի քանակությամբ համախոհներ ձեռք բերել, որոնք պատրաստ կլինեն ցուցադրաբար արտահայտել իրենց տեսակետն ու հիմնավորել սեփական ընտրությունը: Աղանդավորական շարժումների գործունեության սկզբունքներից մեկն է փողոցներով շրջելն ու մարդկանց հետ անմիջական շփման մեջ մտնելը: Սա թույլ է տալիս սեփական օրինակով ցույց տալ, թե այս կամ այն եկեղեցուն միանալը «միակ ճիշտ» քայլն է:

«Ուղեղների լվացման» սկզբունքներից է «միասնական գաղափարական խմբի ստեղծումը», որի համաձայն հասարակությունից առանձնացված ցանկացած սոցիալական խումբ սկսում է սեփական գաղափարախոսություն մշակել: Այսպես, առավել հեշտ են տարբեր ծայրահեղական, ֆաշիստական, ահաբեկչական կամ կրոնական կազմակերպությունների ազդեցության տակ ընկնում մարգինալ կամ խոցելի խմբեր, որոնք, հայտնվելով հասարակական գործընթացներից և կապերից դուրս, ինքնուրույն գործառնության համար անհրաժեշտ գաղափարական հիմքի կարիք են զգում: «Ուղեղների լվացման» դեպքում այդ գաղափարական հիմքը ձևավորվում է արտաքին միջամտության և նպատակաուղղված ներազդման արդյունքում:

«Ուղեղների լվացման» հաջորդ սկզբունքն է ժամանակի երկարատևության գործոնը. գաղափարական աշխատանքի ազդեցությունն ամրապնդվում է ժամանակի ընթացքում, յուրաքանչյուր նոր իրավիճակում, նոր շփումների շնորհիվ: Գաղափարական ազդեցության ենթարկվածը կարծես ապացույցներ և հաստատումներ է փնտրում շրջապատող միջավայրում և, գտնելով դրանք, ավելի ու ավելի է հաստատվում իր դիրքորոշման մեջ:

Այս տեսակետից առավել հետաքրքրական է «երեխային հանգեցման» սկզբունքը, որի համաձայն «ուղեղների լվացման» ժամանակ մարդուն ստիպում են ենթարկվել հրամաններին, գործել այլ մարդկանց թույլտվությամբ: Մարդու նման վարքը նման է երեխայի, որը նույնպես գործում է մեծերի թույլտվությամբ: Երբ հասուն մարդու հետ վարվում են ինչպես երեխայի, նա իր գիտակցությամբ ևս սկսում է երեխային նմանվել՝ պատրաստ լինելով ոչ միայն հետևել «մեծերի» հրամաններին և կարգադրություններին, այլ նաև սովորել, յուրացնել վարքի նոր մոդելներ, արժեքներ և նորմեր: Փաստորեն վերադարձը երեխայի կարգավիճակին թույլ է տալիս մարդու գիտակցության և վարքի մեջ գաղա-

փարական արժեքներ ներարկել «գրոյից սկսած», առանց խանգարող, կայուն արժեքային կողմնորոշումների¹:

Առանձին ուսումնասիրման կարիք է զգում այսօր տեղեկատվական պատերազմը Ինտերնետում: Ինտերնետային տեղեկատվության անսահմանափակությունն ու հասանելիությունը բոլորի համար իրական տեղեկատվական սպառնալիք է ստեղծում անհատի և հասարակության կայունության ու սոցիալական նորմերի գործառնության համար: Բանն այն է, որ Ինտերնետում տեղադրված տեղեկատվությունն ու քարոզչությունը հաճախ չեն վերահսկվում, ոչ ոք չի փորձում վերլուծել Ինտերնետային այս կամ այն էջն ու բացահայտել ուղղակի կամ թաքնված, սքողված փորձեր՝ ներազդել մարդկանց մտածողության, աշխարհայացքի, բարոյական ու սոցիալական նորմերի վրա, շահարկել և մանիպուլյացնել մարդկանց վարքն ու մտածողությունը, ապակողմնորոշել արտաքին աշխարհում և այլն: Բացի այդ, ոչ ոք չի փորձում ստուգել Ինտերնետում տեղադրված տեղեկատվության ճշմարտացիությունը:

Եթե ՁԼՄ-ներում, այդ թվում թերթերում, ռադիո- և հեռուստահաղորդումներում հնչեցված սուտը կարելի է պատժել՝ անմիջապես գտնելով դրա հեղինակներին ու մեղավորներին, ապա Ինտերնետում տեղադրված կեղծիքը պրակտիկորեն անպատժելի է, քանի որ հաճախ գործ ունենք հեղինակներ չունեցող տեղեկատվության հետ, որը ներկայացված է որպես չեզոք ինֆորմացիա:

Բացի այդ, եթե հեռուստա- կամ ռադիոհաղորդումների ցուցադրությունն ուղղված է բոլորին, ապա ինտերնետային տեղեկատվությունը պետք է հատուկ փնտրել, այցելել համապատասխան ինտերնետային էջեր, այսինքն, եթե այցելողն ինքն է ցանկացել ստանալ կեղծ տվյալներ, ապա այդ արել է գիտակցաբար, ուստի և միայն ինքն է մեղավոր: Այս պատրվակով Ինտերնետում տեղադրվում է ցանկացած տեղեկատվություն, այդ թվում ակնհայտ խաբեությունն ու կեղծիքը, որը պատահական այցելողների կողմից կարող է ընդունվել որպես ճշմարտություն:

Այսօր Ինտերնետը հասանելի է բոլորին, այդ թվում հասարակությանը ահաբեկող, ծայրահեղական, մարգինալ խմբերին, աղանդավորական շարժումների ներկայացուցիչներին, ֆանատիկներին և հոգե-

¹ Նույն տեղում, էջ 134-135:

կան հիվանդներին, որոնք փորձում են Ինտերնետի օգնությամբ քարոզել իրենց կեղծ արժեքները: Վերջիններս կործանիչ ազդեցություն են գործում առանձին, թույլ հոգեկան վիճակում գտնվող և կամք չունեցող մարդկանց վրա: Ինտերնետում կարելի է գտնել ահաբեկիչներին փառաբանող գովազդ, կոչեր միանալու «սուրբ պատերազմին» (ջիհադին), և այլն:

Սա հատկապես վերաբերում է Ինտերնետում տեղադրված տեղեկատվությանը այս կամ այն կոնֆլիկտի մասին: Այսօր բազմաթիվ միջէթնիկ կոնֆլիկտների լուսաբանումն Ինտերնետում արվում է ոչ թե նրա համար, որպեսզի մարդիկ տեղեկանան կոնֆլիկտի օբյեկտիվ կողմերի մասին, այլ հիմնականում քարոզչական նպատակներով: Նման տեղեկատվությունը հաճախ տրվում է ոչ թե բնադրյուրից, այլ այս կամ այն շահագրգիռ կողմի տեսակետից և ամբողջությամբ սև քարոզչություն է:

Ինտերնետային տեղեկատվությունն ունի բազմաթիվ առավելություններ հեռուստատեսության, ռադիոյի և մամուլի հանդեպ. մասնավորապես, Ինտերնետում տրվող տեղեկատվությունը միաժամանակ կարելի է ստանալ տարբեր, հաճախ միմյանց հակասող աղբյուրներից, հակառակ շեշտադրումներով, ուղղակի և սքողված քարոզչությամբ: Ինտերնետային կայքերում ներկայացվող տեղեկատվությունը համադրում է տեքստային և պատկերային միջոցների օգտագործումը՝ ստեղծելով ոչ միայն պատկերացում, այլ նաև էմոցիոնալ վերաբերմունք այս կամ այն երևույթի մասին, ինչը շատ կարևոր է տեղեկատվական պատերազմի վարման տեսանկյունից:

Ղարաբաղի և ղարաբաղյան կոնֆլիկտի մասին Ինտերնետում կարելի է տեղեկանալ մի քանի հիմնական և բազմաթիվ երկրորդական կայքերից, որոնք ըստ իրենց ծագման կարելի է բաժանել հայկական, արցախյան, ադրբեջանական, ինչպես նաև «չեզոք ծագման» տեսակների: Ղարաբաղյան հակամարտությանը նվիրված այդ տեսակի կայքերում առկա են տեղեկատվական պատերազմի իրականացման առանձնահատուկ միջոցներ, ռազմավարություններ, որոնք կարելի է բնութագրել որպես քիչ թե շատ արհեստավարժ և, համապատասխանաբար, քիչ թե շատ հաջողված:

Նկատելի է, որ հայկական և արցախյան Ինտերնետ-կայքերում տեղեկատվական պատերազմի մղման ձևերն ավելի սահմանափակ են,

քան՝ ադրբեջանականներում. մասնավորապես, ադրբեջանական կայքերում կիրառվում են տեղեկատվության մշտական մեկնաբանումներ, տեքստային տեղեկատվությունը մշտապես զուգորդվում է պատկերային միջոցներով՝ սարսափեցնող կամ մեղքի զգացման առաջացմանն ուղղված լուսանկարներով, պատկերավոր և զռեհիկ արտահայտություններով, որոնք ուժեղ ազդեցություն են գործում ունկնդրի վրա: Նկատվել է, որ հայկական և արցախյան կայքերում տրվող տեղեկատվությունն ու օգտագործվող քարոզչական մեթոդներն ուղղված են հիմնականում բանականությանը, տրամաբանական ընկալմանն ու վերլուծական ունակություններին, մինչդեռ ադրբեջանականները՝ զգայական-էմոցիոնալ արձագանքին, կրքերի առաջացմանն ու ակտիվ անտրամաբանական գործողությունների կատարմանը: Վերջինս ոչ մի դեպքում չի կարելի անտեսել, քանի որ հենց զգայական-էմոցիոնալ և անտրամաբանական գործողություններով են հաճախ բնութագրվում զանգվածային վարքն ու գործողությունները:

Նկատվել է, որ ադրբեջանական Ինտերնետ-կայքերում ակտիվորեն փորձում են յուրացնել և օգտագործել Արցախի հայկական սիմվոլները, պատկերանշանները: Հայտնի է, որ ադրբեջանական քարոզչության մեջ արցախյան խաչքարերն անվանվում են «ալբանական»: Հայկական սիմվոլների օգտագործման ադրբեջանական տարբերակներից է նաև քրիստոնեական խաչի պատկերի օգտագործումը ադրբեջանական <http://www.karabakh.gen.az> կայքում, որտեղ գլխավոր էջում պատկերված է խաչ՝ թրի տեսքով, որով երեխա է սպանված: Սրանով ադրբեջանցիներն արտահայտում են իրենց խորատելությունը ոչ միայն հայկականի, այլև ընդհանրապես քրիստոնեական արժեքների նկատմամբ:

Ադրբեջանական այդ կայքում տեղադրված տեղեկատվությունը անգլերեն լեզվով է, ինչը նշանակում է, որ կայքում տարվող տեղեկատվական պատերազմն ու քարոզչությունը ուղղված է դեպի «դուրս», դեպի արտաքին միջավայրն ու արտասահմանցի ունկնդրողը, որին փորձում են ադրբեջանցիների կողմնակիցը դարձնել: Դրան է ուղղված, մասնավորապես, այդ կայքում տեղադրված հաղորդագրության թեմաների անվանումների շարքը, որոնք իրենցից ներկայացնում են բառակապակցություններ՝ հակահայկական բացասական իմաստով, օրինակ՝ «Հայկական ահաբեկչություն», «խոջալիի ողբերգություն», և այլն:

Կայքի առաջին էջի մեծ մասը զբաղեցնում են լուսանկարներ, որոնք պատկերում են ադրբեջանական զինված ուժերի տարբեր զորատեսակներ: Այդ պատկերները ներկայացված են ոգևորվածությամբ և ուղղված են ցուցադրելու սեփական բանակի մարտունակությունն ու պատրաստվածությունը: Կայքի ընդհանուր ոճն ու ձևավորումը ռազմատենչ է, համադրում է հոռետեսական զնահատականներ, ագրեսիվ արտահայտություններ և մեկնաբանություններ. Հայաստանի պատմությունը կայքում ներկայացված է որպես «դավադիր և հակաթուրքական»: Կայքում օգտագործվում է Garabagh բառը: Կայքի պատկերավոր միջոցների շարքում առանձնահատուկ ուշադրություն է գրավում քարտեզը, որն ուղեկցվում է հետևյալ վերնագրով. «Ադրբեջանական տարածքը՝ օկուպացված հայերի կողմից»:

Պետք է նշել, որ հայկական տեղեկատվական պատերազմը տարվում է այլ միջոցներով՝ շեշտադրումն անելով պաշտոնական տեղեկատվության, օբյեկտիվ-ճշմարիտ լինելու, ապացույցներ բերելու և խաղաղության արժեքը մատնանշելու օգնությամբ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական ինտերնետային էջը (<http://www.nkr.am>) ներկայացնում է միայն պաշտոնական, ուստի և վստահելի տեղեկատվությունը Արցախի պատմության, այսօրվա վիճակի, հասարակական, քաղաքական, մշակութային կյանքի, ղարաբաղյան կոնֆլիկտի մասին, քաղաքական մարմինների, պաշտոնյաների մասին, տալիս է անհրաժեշտ հասցեներ և այլն: Նման տեղեկատվությունն ունի ինչպես հեղինակներ, այնպես էլ պատասխանատուներ, որոնք ներկայացնում են ԼՂՀ-ն պաշտոնական մարմիններն ու կազմակերպությունները: Այս տեղեկատվությունը ստուգելի է, ուստի և կարող է վստահելի համարվել:

Ի տարբերություն, <http://www.karabakh.org> ինտերնետային էջում ներկայացվող տեղեկատվությունը՝ պատրաստված ադրբեջանական մասնագետների կողմից, արտահայտում է ոչ թե պաշտոնական, այլ շահագրգիռ վերաբերմունք ղարաբաղյան կոնֆլիկտի նկատմամբ, ուստի և իրենից ներկայացնում է ոչ թե տեղեկատվություն, այլ անստուգելի, անպատասխանատու քարոզչություն: Այստեղ խոսվում է այնպիսի կեղծ քարոզչական գաղափարների մասին, ինչպիսիք են «հայկական ահաբեկչությունը», «ադրբեջանցիների ցեղասպանությունը հայերի կողմից», և այլն: Այս ինտերնետային էջի ձևավորումը, հատկապես

“Karabakh” անվանումն արված են մահմեդական տառատեսակով, համապատասխան մշակութային հնչերանգներով, որպեսզի պատկերացում ստեղծեն, թե իբր Ղարաբաղը պատկանում է աղբբեջանցիներին: Այստեղ տեղադրված նյութը մատուցվում է ինչպես անգլերեն, այնպես էլ ռուսերեն լեզուներով, որպեսզի հասանելի լինի շատերի համար:

Պետք է նշել, որ կայքի ձևավորման առանձնահատկություններից է այն, որ կայքի հասցեով հնարավոր չէ որոշել դրա ծագումը: Կայքի հասցեում ոչինչ չի խոսում աղբբեջանական պատկանելության մասին, իսկ հասցեի մի մասը կազմող karabakh բառը այդ կայքը հեշտ հասանելի է դարձնում Ղարաբաղի մասին անգլերեն լեզվով տեղեկատվություն փնտրողների համար, քանի որ հենց karabakh բառն է նշվում որոնող կայքերում, և մշտապես առաջին հերթին ի հայտ է գալիս տվյալ կայքը:

Գոյություն ունի մաև հայկական Ինտերնետ-կայք karabakh բառի առկայությամբ հասցեում (<http://www.karabakh.am>): Կայքը կոչվում է «Ղարաբաղը և տարածաշրջանը», ստեղծված է հայ մասնագետների կողմից և որպես հիմնական նպատակ նշում է հետևյալը՝ «Ներկայացնել գիտական-օբյեկտիվ տեղեկատվություն Լեռնային Ղարաբաղի մասին՝ տարածաշրջանային գործընթացների և հիմնախնդիրների համատեքստում, և դրա հիման վրա նպաստել հակամարտության խաղաղ լուծմանը, խաղաղության և կայունության հաստատմանը տարածաշրջանում»: Կայքը ներկայացված է Ինտերնետում անգլերեն և ռուսերեն լեզուներով: Պետք է նշել, որ կայքի ձևավորումը բոլորովին չի նպաստում տեղեկատվական պատերազմի մղման ռազմավարություններին և պահանջներին, այն հիմնականում ունի տեքստային բնույթ և աղքատիկ պատկերային ուղեկցում: Տեքստային տեղեկատվությունը ներկայացված է ըստ թեմատիկ վերնագրերի, որոնցից առավել հետաքրքրական են փաստագրական և պատմաժողովրդագրական տեղեկություններն ըստ Արցախի մարզերի:

Ինտերնետ-տարածության առանձնահատկությունը հանդիսացող անկառավարելի կայքերի և տեղեկատվության առկայությունը հաճախ ակնհայտ են դառնում հենց տեղեկատվական պատերազմի վարման ժամանակ, երբ մասնակիցներից ոմանք իրականացնում են կեղծ տեղեկատվության և ապակողմնորոշման ռազմավարություն: Նման ռազմավարության իրականացման փայլուն օրինակներից է Հեյդար Ալիևի

Հիմնադրամի կողմից ստեղծված Ինտերնետ-կայքը՝ նվիրված դարաբաղյան հակամարտությանը (<http://www.azerbaijan.az>): Կայքը ստեղծված է ադրբեջաներեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և ներկայացնում է տեղեկատվություն մի շարք թեմաներով, որոնց վերնագրերը, ինչպես արդեն նշված ադրբեջանական այլ կայքերում, իրենցից ներկայացնում են բացասական իմաստ ունեցող, ագրեսիվ կամ հոռետեսական բնույթի բառակապակցություններ և արտահայտություններ, մասնավորապես՝ «Հայկական ագրեսիա», «Հունանիտար ճգնաժամ», «Հայկական ահաբեկչություն», «Ղարաբաղի հիմնախնդիրը և հայկական հարցը», «Խոջալիի ցեղասպանությունը» և այլն: Կայքում տեղադրված յուրաքանչյուր տեքստ ուղեկցվում է հակահայկական մեկնաբանություններով, օրինակ. «Հայաստանի կողմից Ադրբեջանի նվաճման և բռնի ենթարկման պատմական արմատները անհրաժեշտություն են ստեղծում հաշվի առնելու հայերի պատմության որոշ հարցեր առհասարակ: Այդ պատճառով, հենց որ ներքին և միջազգային իրավիճակը ստեղծել է բարենպաստ պայմաններ, հայերն ամեն զնով փորձել են իրագործել իրենց դավադիր նպատակները...»:

Կայքում տեղադրված մեկնաբանությունները ուղեկցում են յուրաքանչյուր հոդված, կայքն ունի հոռետեսական-ագրեսիվ հնչերանգ, այն նվազագույնի է հասցնում ունկնդրի սեփական տրամաբանական-վերլուծական ջանքերը՝ մեկնաբանելով և պատրաստի մատուցելով յուրաքանչյուր տեղադրված նյութ, ունկնդրի փոխարեն իրեն մատուցելով պատրաստի հետևություններ: Սակայն, տեղեկատվական պատերազմի վարման նման ռազմավարությունը հազիվ թե արդյունավետ լինի այն դեպքերում, երբ կայքի ունկնդիր լինեն գիտաուսումնական նպատակներով տեղեկատվություն փնտրող անձինք, որոնց հարկավոր է ոչ թե մեկնաբանություն, այլ սկզբնաղբյուր և փաստեր՝ սեփական վերլուծություն և հետևություններ անելու համար:

Ինտերնետ-տարածության մեջ առկա են բազմաթիվ կայքեր, որոնցում դարաբաղյան հակամարտությանը նվիրված տեղեկատվությունը երկրորդական է այդ կայքերի համար: Նման կայքերում այդ տեղեկատվությունը հիմնականում չի ուղեկցվում քարոզչության ակտիվ մեթոդների օգտագործմամբ, հիմնականում տրվում են որոշակի դրույթներ և որոշակի սկզբունքով ընտրված փաստաթղթեր, որոնք արտահայտում են կայքը ներկայացնող կողմի տեսակետը: Այսպես, օրինակ,

Ադրբեջանական գենդերային տեղեկատվական կենտրոնի կայքում (<http://www.gender-az.org>) ղարաբաղյան հակամարտությանը նվիրված տեղեկատվությունը տեղակայված է «Գենդեր և բռնություն» թեմատիկ բաժնում. հետաքրքրական է, որ այդ բաժնում առկա է միայն ղարաբաղյան հակամարտությանը նվիրված՝ «Ղարաբաղյան հակամարտության լուծման տարբերակները. գաղափարներ և իրականություն» վերնագրով հոդվածը (հեղինակներ՝ Տոգրուլ Ջուվառլի և Ալի Աբասով): Սա նշանակում է, որ կայքի հեղինակները, չկարողանալով խուսափել Ադրբեջանում առկա համընդհանուր գաղափարախոսական քաղաքականությունից, իրենց կայքում այդ գաղափարախոսությանն իրենց տուրքը նատուցեցին, ինչը ակնհայտորեն արհեստական տպավորություն է ստեղծում: Հոդվածում ղարաբաղյան հակամարտությունը քննարկվում է՝ առանց ակներև գաղափարախոսական ճնշումների ընթերցողի հանդեպ, այստեղ պարզապես շարադրված է պաշտոնական ադրբեջանական տեսակետն ու դեպքերի ընթացքը:

Ղարաբաղյան հակամարտությանը անուղղակիորեն նվիրված հայկական կայքերից է այսպես կոչված, Հայկական տունը (<http://www.armenianhouse.org>): Կայքը նվիրված է հայոց պատմությանը, հայ գրականությանն ու արվեստին: Կայքի թեմատիկ բաժիններից մեկն է Արցախը (Ղարաբաղ): Կայքը նախատեսված է հիմնականում մասնագիտական լսարանի համար, այստեղ ներկայացված են հայ և արտասահմանցի գիտնականների և գրողների կողմից հրատարակված աշխատությունների ամբողջական տեքստերը՝ առանց հատուկ մեկնաբանությունների: Կայքում չեն օգտագործվում տեղեկատվական պատերազմին հատուկ ռազմավարություններ, օրինակ՝ պատկերային միջոցները, ինչը, սակայն, պատմությանը, գրականությանն ու արվեստին նվիրված կայքի համար կարելի է թերություն համարել:

Արցախի մասին դրական-կառուցողական բնույթի տեղեկատվությանը նվիրված կայքերից է <http://www.karabakh.biz> հասցեում տեղադրված Ինտերնետ-կայքը, որը գրանցված է Լիբանանում: Կայքի լեզուն է անգլերենը, կայքը հեշտ է գտնել, քանի որ karabakh բառով Ինտերնետում տեղեկատվություն փնտրելիս այդ բառի պարունակությամբ հասցեներն են առաջին հերթին ի հայտ գալիս: Այս կայքում, ի տարբերություն նախորդ օրինակների, Ղարաբաղը ներկայացված է ոչ թե որպես հակամարտության դաշտ, այլև որպես ձեռներեցության ու բիզ-

Մենսի իրականացման հարմար և հետաքրքիր տարածք, որտեղ ձեռք-բերված գինադադարն ու խաղաղությունը այն նախապայմաններն են, որոնք արդեն իսկ բիզնեսի իրականացման մեծ հնարավորություններ են ստեղծում: Կայքում տեղադրված «Ղարաբաղի բիզնես-տեղեկատուն» անչափ կարևոր տեղեկատվություն է հաղորդում այստեղ իրականացվող բիզնեսի, ձեռնարկատիրության համար առկա մեծ հնարավորությունների մասին: Այսպիսով, կայքի գաղափարախոսությունն ուղղված է քարոզելու Ղարաբաղում խաղաղության հաստատման անտեսական շահավետությունը:

Պետք է ասել, որ որոշ Ինտերնետ-կայքերում ղարաբաղյան հակամարտությունը ներկայացված է որպես գիտական հիմնախնդիր: Հայտնի է, որ ցանկացած քաղաքական հակամարտություն գիտական ուսումնասիրությունների առարկա է դառնում, և ղարաբաղյան հիմնահարցը բացառություն չէ: Սակայն, հետաքրքրական է, որ որոշ Ինտերնետ-կայքերում ղարաբաղյան հակամարտության քննարկումը գիտական ոճով նպատակ ունի օբյեկտիվության և գիտական ճշմարտության հովանու ներքո իրականացնել քաղաքական գաղափարախոսությանը հատուկ տեղեկատվական ազդեցությունն ու կողմնակալ քարոզչությունը: Գիտականության ոճի օգտագործումը քարոզչական նպատակները արտահայտվում են նրանում, որ կայքերում ներկայացվող տեղեկատվությունը մատուցվում է գիտական հասկացություններով և տերմիններով, այստեղ միախառնվում են չեզոք գիտական սահմանումներն ու առանձին անհատների սուբյեկտիվ դատողությունները, որոնք իբրև գիտական հետազոտության մի մասն են հանդիսանում: Բացի այդ, գիտականության ոճի ծառայեցումը քարոզչական նպատակներին, այդ քարոզչության զոհն է դարձնում նաև մասնագիտական լսարանը:

Այս տեսակետից հետաքրքիր է «Տարածաշրջանային հակամարտություններն ու զանգվածային լրատվության միջոցները» վերնագրով ադրբեջանական Ինտերնետ-կայքում իրականացվող տեղեկատվական պատերազմը (կայքի հասցեն է <http://conflicts.aznet.org>): Կայքը ռուսերեն լեզվով է, այստեղ ակտիվորեն օգտագործվում է գիտական տերմինաբանություն, որին միախառնված է «Անջատողականություն» (сепаратизм) բառը. դրա օգնությամբ կայքի հեղինակները «քաղաքագիտական» վերլուծության են ենթարկում Չեչնիայի, Վրաստանի և Ղարաբաղի հիմնախնդիրները:

Ադրբեջանական պաշտոնական քարոզչությունն այստեղ սքողված է գիտական վերլուծության շղարշով. տպավորություն է ստեղծվում, որ կայքի հեղինակները նպատակ չունեն քարոզելու սեփական դիրքորոշումը, այլև մասնագիտության առումով իրականացնում են համեմատական քաղաքագիտական վերլուծություն, որում Ղարաբաղյան հակամարտությունը լոկ օրինակ է: Մասնավորապես, կայքում տեղադրված են հակամարտությունների տարբեր տեսակների սահմանումներ, որոնք կայքի հեղինակների կողմից վերցվել են գիտական գրականությունից: Հակամարտությունների այդ տեսակների սահմանումներն իրենց բովանդակությամբ չեզոք են: Սակայն, հետաքրքրականն այն է, որ կայքում իրականացվող քարոզչության դրսևորումը նկատելի է նրանում, որ հեղինակները այդ չեզոք սահմանումների օգնությամբ փորձում են սահմանել Ղարաբաղյան հակամարտությունը՝ բնականաբար ընտրելով սահմանումներից այն, որը համապատասխանում է իրենց կողմնակալ ռազմավարությանն ու շահերին: Արդյունքում Ղարաբաղյան հակամարտությունն իբրև գիտական սահմանում է ստանում որպես «անջատողական շարժում», և թվում է, թե Ղարաբաղյան հակամարտության այդպիսի սահմանումը գիտության մեջ ընդունված սահմանման մի մասն է, ուստի և ճշմարիտ է:

Ընդհանրապես, ադրբեջանական քարոզչության մեթոդներից է սուբյեկտիվ կարծիքների հիմնավորումը օբյեկտիվ աղբյուրներով: Տեղեկատվական պատերազմի այս ռազմավարությունը դրսևորվում է, մասնավորապես, նրանում, որ հաճախ ադրբեջանական ՁԼՄ-ներում և Ինտերնետ-կայքերում արտահայտվում են հակահայկական կարծիքներ, որոնք իբրև ասվել են հայ հեղինակների՝ հայ քաղաքական գործիչների, գրողների, պատմաբանների, լրագրողների կողմից: Այսպես, օրինակ, քննարկելով Ղարաբաղյան հակամարտության փուլային լուծման ադրբեջանական տարբերակը, ադրբեջանցի հեղինակը նշում է հայ քաղաքական պաշտոնյայի ազգանունն ու նրա համաձայնությունն այդ տարբերակին: Տպավորություն է ստեղծվում, որ եթե հայ դիվանագետը համաձայն է ադրբեջանական տեսակետի հետ, ապա այդ տեսակետը, ըստ հայ ունկնդրի, իրոք նպատակահարմար է, կամ էլ նշվող հայ դիվանագետը դավաճան է, կամ էլ պարզապես անգրագետ: Ամեն դեպքում, քարոզչության այս մեթոդի օգտագործման դեպքում ադրբեջանական լսարանում անրապնդվում է այն հանդուժումը, որ «նույնիսկ հա-

յերն են ստիպված համաձայնվելու իրենց դիրքորոշման արդարացիության հետ:

Իրականում, մման տեղեկատվության մեջ նշվող հայ գործիչները կա՛մ առհասարակ գոյություն չունեն, կա՛մ էլ մման կարծիք երբևիցե չեն հայտնել:

Ինչպես տեսնում ենք, տեղեկատվական պատերազմի վարման ռազմավարությունների ուսումնասիրությունը ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական կարևոր նշանակություն, այն կարող է նպաստել հակամարտության կարգավորման և լուծման գործում տեղեկատվական առավելությունների ձեռքբերմանը:

РОЛЬ ОТРАСЛЕВОЙ ПОЛИТИКИ ГОСУДАРСТВА В ОБЕСПЕЧЕНИИ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ НКР

Проблема экономической безопасности особенно остро стоит в жизни современного общества, она стала неотъемлемой частью как внешней, так и внутренней политики многих стран и, следовательно, решение этой проблемы является важнейшей функцией государства. Она определяет систему приоритетов страны в процессе реализации национальных интересов. Экономическая безопасность традиционно рассматривается как важнейшая качественная характеристика экономической системы, которая определяет её способность поддерживать нормальные условия жизнедеятельности населения, устойчивое обеспечение ресурсами развития народного хозяйства, а также последовательную реализацию национально-государственных интересов.

Обеспечение экономической безопасности по своей сути подразумевает не только создание механизма рыночного саморегулирования, но и оптимальных условий для эффективного функционирования этого механизма путем проведения приемлемой для страны и адекватной экономической политики, исходя из особенностей ее экономики, то есть, экономическая безопасность выражается в совокупности тех мероприятий, которые проводятся в стране с точки зрения реализации экономических интересов.

Стратегия экономической безопасности реализуется посредством системы критериев и индикаторов. К основным показателям, отражающим уровень развития национальной экономики и результаты экономической

деятельности, относятся: объем и структура национального производства; доля импорта в производстве валового внутреннего производства; доля наукоемкой продукции в общем объеме выпущенной продукции; доля импорта во внутреннем обороте и т.д.

Из приведенной системы можно заключить, что одним из основных факторов, определяющих индикаторы развития национального производства и уровень экономической безопасности страны, является отраслевая структура экономики, которая должна иметь положительное влияние на предельные величины индикаторов экономической безопасности и обеспечить попадание всей системы показателей в допустимые пределы порогового значения и предотвращение экономической угрозы. В этих целях необходимо проведение структурной политики, соответствующей развитию экономики страны, и, в частности, выделение приоритетных отраслей экономики и оказание им государственной поддержки, развитие конкуренции с целью сокращения разрыва между рентабельностью разных отраслей (например, финансово-банковской деятельности и торговли, с одной стороны, и промышленности и сельского хозяйства, с другой), обеспечение продовольственной, транспортной, энергетической и других видов безопасности.

Отраслевая политика государства является важнейшим элементом обеспечения экономической безопасности, принимая во внимание, что понятие экономической безопасности подразумевает прежде всего обеспечение конкурентоспособности национальной экономики и, в первую очередь, ее ведущих отраслей на внешнем рынке.

Рассматривая модели структурных преобразований разных стран, выделяют два основных пути их развития. Первый путь (американский) – это путь, на котором преобладают стихийные силы, возникающие из чисто рыночных отношений. Структура в этом случае меняется сообразно изменениям нормы прибыли, она может разрушиться или перестать быть перспективной. Предприятия различных отраслей, капитал, рабочая сила, предпринимательская энергия стремятся туда, где они становятся наиболее выгодными. Другой путь (японский) – с точки зрения прогрес-

сивных структурных преобразований – это широкое использование государственных рычагов. В этом случае обычно используются необходимые прогностические оценки, которые содействуют решению вопроса, какие элементы структуры должны быть подвергнуты сокращению, а каким элементам следует оказать поддержку. Этот путь сопровождается меньшими социальными потерями и, с точки зрения обеспечения определенных темпов роста производства, наиболее эффективен. Исходя из этого, учитывая также его относительно ранний эффект, данный путь можно рекомендовать в качестве основного в процессе структурных преобразований на текущей стадии переходного периода в НКР.


В процессе разработки и реализации отраслевой политики, необходимо принять во внимание следующие факторы, воздействующие на экономическую безопасность:

- природные факторы (уровень обеспеченности страны собственными природными ресурсами, условиями их добычи и т.д.);
- структурные факторы, оказывающие влияние на развитие отраслей (объем и структура инвестиций, уровень развития горизонтальных связей, утечка капитала в разрезе отраслей и регионов, состояние транспорта и связи т.д.);
- научно-технологические факторы (уровень развития технологий, защита прав интеллектуальной собственности и т.д.);
- факторы использования трудовых ресурсов (структура использования рабочей силы, уровень квалификации рабочей силы и т.д.);
- факторы развития оптимальной структуры внешнеэкономических связей и т.д.

Экономическая политика государства должна быть направлена на выделение и стимулирование тех отраслей экономики, которые бы создавали оптимальное взаимодействие указанных факторов, что, в свою очередь, способствует укреплению экономической безопасности страны.

О развитости тех или иных отраслей в стране позволяет судить структура ВВП, более половины которого в НКР приходится на долю услуг. В структуре экономики страны в целом наблюдаются тенденции, сближающие ее с западной: за последнее десятилетие в структуре ВВП значительно сократилась доля производства товаров, при соответствующем увеличении доли услуг. Указанное сокращение произошло за счет отраслей сельского хозяйства и строительства.

Рисунок 1. Структура производства валового внутреннего продукта



В отраслевом разрезе ВВП доминирующее положение продолжает занимать сельское хозяйство, создающее пятую часть всего внутреннего продукта. Однако ограниченность природных ресурсов, влияние климатических факторов и низкая цена конечной продукции поставили сельское хозяйство в ряд наименее доходных отраслей экономики. Поэтому необходимо понимание того, что при современном уровне развития производительных сил, масштабах производства и сложности хозяйственных связей не обойтись без государственной поддержки производителей продовольствия. Причина необходимости поддержки сельского хозяйства со стороны государства состоит в том, что продовольственные товары являются основным фактором жизнеобеспечения населения. Если генеральной целью аграрной политики страны является продовольственная безопасность, то исходными критериями в принятии решений будут показатели “обеспечения” и “самообеспечения” продовольствием.

Таблица 1. Показатели самообеспечения НКР в 1987 г. и 2005 г. некоторыми видами продовольствия

Виды продовольствия	1987 г.			2005 г.		
	фактическое производство, т.	совокупная физиологическая потребность населения, т	уровень самообеспеченности, %	Фактическое производство, т	совокупная физиологическая потребность населения, т	уровень самообеспеченности, %
Мясо	11300	13659	83	2661	11112	24
Молоко	57500	53700	107	21254.5	43687	49
Яйца (тыс. штук)	32600	20903	156	7738.6	17006	46
Зерновые	48300	22147	218	88496.6	18017	491
Овощи и фрукты	91100	32454	281	24445.6	26403	93
Картофель	9500	16542	57	13235	13458	98

Если принять объемы сельскохозяйственного производства в 1987 г. как возможный потенциал данного сектора, то, согласно данным таблицы, страна способна полностью обеспечить себя почти по всем видам продовольствия, производство которых здесь технически возможно. Так, в сельхозпроизводстве молока, яиц, зерновых, овощей и фруктов достигнутые в 1987 г. объемы превышали физиологическую потребность населения соответственно на 7 и 56%%, в 2.1 и 2.8 раза. В данном контексте существовал недостаток в мясе и картофеле (83 и 57 %%).

В последние годы картина радикально изменилась. Ситуация с самообеспечением Нагорного Карабаха продукцией растениеводства более определенная, чем с животноводческой продукцией, дефицит которой составляет более половины. С точки зрения самообеспечения наблюдается дисбаланс в продуктовой структуре и, следовательно, распределении ресурсов сельского хозяйства. В 2005 г. страна могла почти полностью обеспечить себя картофелем, овощами и фруктами (на 98 и 93%%). Критическая ситуация в производстве продукции животного происхождения. Молока и яиц производится лишь наполовину необходимого, а мясом мы можем обеспечить себя лишь на четверть необходимого по медицинским нормам. При этом зерновых производится в 5 раз больше собственных

нужд (не беря в расчет потребности в алкоголе, куда направляется часть произведенных зерновых).

Подобная ситуация, конечно, необоснованна ни в вопросе обеспечения продовольственной безопасности, ни с экономической точки зрения. Нецелесообразно оставлять неиспользованными собственные рынки сбыта по тем видам продукции, производство которых для нас традиционно. Как показывает опыт стран с развитой рыночной экономикой, при выборе соответствующих приоритетов аграрной политики целенаправленная поддержка сельского хозяйства позволяет в среднем в 2 раза за 20 лет увеличить объемы сельскохозяйственного производства. Следовательно, при проведении соответствующей политики экономика способна в перспективе приблизиться к уровню самообеспечения по основным продуктам питания.

На протяжении всех последних лет наблюдалась положительная тенденция индустриализации ВВП. Уровень развития любой страны прежде всего определяется уровнем развития промышленности. Промышленность определяет самостоятельность любого государства, его экономическую и политическую независимость. Этим в основном определяются предпосылки дальнейшего приоритетного и динамичного развития промышленности. Несмотря на наблюдающийся в последние годы рост, уровень развития данной отрасли находится далеко позади необходимого и потенциального уровня. Доля промышленности в ВВП составляет всего 16.0%; численность занятых здесь – 4606 человек, или 12.2% всего занятого населения; на территории Карабаха зарегистрировано всего 183 промышленных предприятий, то есть 7.6% хозяйствующих субъектов всех отраслей экономики. Аналогично, в РА перечисленные показатели составляют 27.0% (доля в ВВП), 12.2% (доля в числе занятых), 10.1% (доля количества предприятий).

Наиболее кардинальные изменения произошли в структуре промышленности. Начиная с 2003 г. в стране функционирует горнодобывающая промышленность, набирающая высокие темпы роста и к 2005 году достигшая 35% объема продукции всей отрасли. В результате произошло

"утяжеление" структуры промышленности и усилился "тяжелый" экономический рост, который в концепциях структурной политики часто рассматривается как нежелательный. На фоне формирования и быстрого роста горнодобывающего сектора промышленности в последние годы намечается тенденция отставания обрабатывающей промышленности – за 2003-2005 гг. ее доля во всей промышленности сократилась с 66% до 47%, а среднегодовой индекс физического объема продукции составил 13.3%, тогда как по промышленности в целом он достигал 33.2%. В 2005 г. по отношению к предыдущему объем обрабатывающей промышленности сократился на 10%, обусловив спад по промышленности в целом. Отмеченное сокращение обрабатывающей и всей промышленности в целом свидетельствует о негибкости промышленной структуры и об отсутствии процессов реструктуризации отечественного бизнеса, направленных на формирование новых конкурентоспособных рынков отечественной продукции, проявляющимся в ориентации на экспорт сырья и отсутствии перспективной стратегии развития обрабатывающих отраслей экономики. Все больше вырисовывается тенденция превращения НКР в сырьевого экспортера. С позиций экономической безопасности сохранение такой тенденции способствует все большему усилению зависимости нашей страны от конъюнктуры мирового рынка, распылению природных ресурсов и, в конечном счете, углублению структурной несбалансированности экономики. Последняя проявляется в масштабном дисбалансе между потреблением и производством, который компенсируется за счет потребительского импорта.

О сырьевой ориентации нашей экономики свидетельствуют и данные внешнеторговой статистики: сырье и продукты его первичной обработки составляют до 70% стоимости экспорта. В то время как конкурентоспособность современных высокоразвитых стран основана главным образом на технологических преимуществах. Поэтому в числе ведущих факторов повышения национальной конкурентоспособности следует выделить прежде всего промышленную политику. Главной задачей должен стать постепенный переход от преимущественно ресурсной к преимущественно

